



Գաղիկ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԴԱՍԵՐԸ
ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ
ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԼՐԱՄՇԱԿՈՒՄՆԵՐՈՎ



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

Սայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք Սահմանադրական Դատարանի նախագահ տիար Գագիկ Զարությունյանի «Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները» գրքի երկրորդ հրատարակությունը:

Գնահատանքով ենք անդրադառնում, որ ուշագրավ այս ուսումնասիրությամբ ներկայացված է հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի ձևավորման ընթացքը՝ մեր ժողովրդի մտավոր ու մշակութային ժառանգության, ավանդույթների, հոգևոր արժեքների իմաստավորումով:

Արդարության և իրավունքի արժեքները աստվածադիր սկիզբ ունեն: Սուրբ Գիրքը, ուսուցանելով՝ ճանաչել իմաստություն ու խրատ, իմանալ հանճարի խոսքերը, թելադրում է նաև հասկանալ ճշմարիտ արդարությունը և ուղղել իրավունքը (Առակ. 1. 2-3): Հիմնված աստվածաշնչյան սկզբունքների վրա՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու ծոցում դարեր շարունակ ձևավորվել են իրավական կանոններ, օրենքներ ու սահմանումներ, որոնք մեծ կարևորություն են ունեցել հայ ժողովրդի իրավագիտակցության զորացման և օրենքի վրա հաստատված հասարակական կյանքի բնականոն զարգացման համար: Հեղինակը նախանձախնդիր կերպով ծավալում աշխատանք է իրականացրել՝ անդրադառնալով մեր Եկեղեցու Հայրերի կանոնական իրավունքի վերաբերյալ աշխատություններին, ազգային-եկեղեցական ժողովների որոշումներին և նրանց կողմից ընդունված կանոնական փաստաթղթերին: Սույն աշխատությունը նաև կարևոր ներդրում է սահմանադրական զարգացումների արդի հիմնահարցերի, ինչպես նաև ներկա սահմանադրական մշակույթի ներկայացման ու վերլուծության կարևոր գործում:

Հայրապետական Սեր օրհնությունն ու բարձր գնահատանքը բերելով հեղինակին՝ մաթոսն ենք Բարձրյալն Աստծո Սուրբ Աջի հովանին և նորանոր ձեռքբերումներ ու հաջողություններ հայրենամկեր, պատասխանատու իր բարձր պաշտոնում և գիտական գործունեության մեջ:

Օրհնությամբ՝

ՊԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գ.Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԴԱՍԵՐԸ
ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝
ԼՐԱՄՇԱԿՈՒՄՆԵՐՈՎ



ՆԺԱՐ

ԵՐԵՎԱՆ 2016

Г.Г. АРУТЮНЯН



**КОНСТИТУЦИОННАЯ
КУЛЬТУРА:**

**УРОКИ ИСТОРИИ
И ВЫЗОВЫ ВРЕМЕНИ**

ПЕРЕИЗДАНИЕ С ДОПОЛНЕНИЯМИ
Ереван - 2016

G.G. HARUTYUNYAN

**CONSTITUTIONAL
CULTURE:**

**THE LESSONS
OF THE HISTORY
AND THE CHALLENGES
OF THE TIME**

REPUBLISHED WITH ADDITIONS
Yerevan - 2016

Նվիրվում է
Հայաստանի Հանրապետության
անկախության 25-ամյակին

ՀՏԴ 342: 93/94
ԳՄԴ 67.400.1+63.3
Հ 422

Երաշխավորվել է հրատարակման ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի եւ ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնի խորհրդի որոշումներով

Խմբագիրներ՝ **Գ. Դանիելյան** - իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Ռ. Ավագյան - իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Կ. Միրումյան - փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Գ.Գ.- իրավաբանական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Հ 422 ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ. ՊԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՄԵՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ (խմբ. Գ. Դանիելյան, Ռ. Ավագյան, Կ. Միրումյան). - Վերահրատարակություն՝ (լրամշակումներով) - Եր.: Նժար, 2016, 672 էջ:

Ուսումնասիրության առարկան «սահմանադրական մշակույթ» երեւոյթն է՝ տեսափիլիսոփայական, պատմատրամաբանական, համակարգային-ճանաչողական, համեմատական-սահմանադրական, իրավակիրառական դրսեւորումների տեսանկյունից: Առաջին անգամ փորձ է արվում համակարգված ներկայացնել սահմանադրական մշակույթի ձեւավորման եւ դրսեւորման բնույթն ու առանձնահատկությունները հայ իրականության մեջ՝ սկսած վաղ քրիստոնէական շրջանից: Անդրադարձ է արվում սահմանադրական զարգացումների արդի հիմնահարցերին ու մարտահրավերներին: Բացահայտվում են եվրոպական սահմանադրական մշակույթի ու սահմանադրականության համակարգային զարգացումների միտումները: Առաջադրվում են ՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական մշակույթի արժեհամակարգային ամբողջականությունն ընկալելու, պատմության դասերը խորությամբ հաշվի առնելու, ժամանակի մարտահրավերները ճիշտ գնահատելու, սահմանադրահրավական զարգացումների անհրաժեշտ քաղաքականություն մշակելու ու իրականացնելու, երկրում սահմանադրականություն հաստատելու եւ իրավունքի գերակայությունը երաշխավորելու հայեցակարգային մոտեցումներ:

Նշված հիմնահարցերի վերաբերյալ հեղինակի տեսամեթոդաբանական եւ գիտագործնական բնույթի շատ հարցադրումներ լայն արձագանք են գտել միջազգային գիտական շրջանակներում եւ կարեւոր նշանակություն կարող են ունենալ սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարման հիմնախնդիրը լուծելիս:

ՀՏԴ 342: 93/94
ԳՄԴ 67.400.1+63.3

ISBN 978-99930-66-62-0

© Հարությունյան Գ., 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ	11
ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ	15

ԳԼՈՒԽ 1. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	22
--	----

- 1.1. «Սահմանադրական մշակույթ» հասկացության
իրավափիլիսոփայական ընկալումները 22
- 1.2. Սահմանադրությունից՝ սահմանադրականություն.
ցանկալի եւ իրականի դիալեկտիկան 46

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ	64
---	----

- 2.1. Հայաստանում քրիստոնեությունը պետական
կրոն հռչակելու իրավաքաղաքական
նշանակությունը 64
- 2.2. Ազգային-եկեղեցական ժողովների սահմանադիր
դերն ու նշանակությունը..... 74
- 2.3. Կանոնական սահմանադրությունների
իրավագիտական բնութագրիչները..... 89
- 2.4. Սահմանադրական մշակույթի բնորոշ
գծերը հայ իրավաքաղաքական
մտքի էջերում..... 98

ԳԼՈՒԽ 3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ԻՐԱՎԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ, ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ	130
---	-----

3.1. Սահմանադրական մշակույթը եվրոպական արդի իրավամտաժողովրդի համակարգում	130
3.2. Սահմանադրական մշակույթի դրսևորման բնույթն ու առանձնահատկությունները հայ նոր իրականության պայմաններում	148
3.3. Իրավական, ժողովրդավարական պետության Սահմանադրության ելակետային արժեքների մերօրյա ընկալումները.....	176
3.4. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական զարգացումների նոր փուլի հիմնախնդիրները	201

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

4.1. Պետականության եւ սահմանադրականության փոխառնչությունները	217
4.2. Վերագգային սահմանադրականության նոր դիմագիծը	222
4.3. Սահմանադրականության երաշխավորումը որպես իրավական պետության չափանիշ	225
4.4. Սահմանադրականության երաշխիքներն անգլո-ամերիկյան եւ մայրցամաքային իրավական համակարգերում	271
4.5. Սահմանադրականությունը քաղաքականության եւ իրավունքի խաչմերուկում.....	283
4.6. Հասարակական համաձայնության եւ հանդուրժողականության սահմանադրական ակունքները	287
4.7. Անձի սոցիալական վարքագծի եւ իշխանության քաղաքական ու հանրային վարքագծի սահմանադրականացման հիմնախնդիրը	290

4.8. Ազգային սահմանադրականության արժեքանական բնույթն ու առանձնահատկությունները	295
4.9. Սահմանադրականության հիմնական ձեռախեղումները վերափոխվող հասարակական համակարգերում	303
4.10. Սահմանադրական զարգացումների արժեքանական հիմնախնդիրներն արդի մարտահրավերների դիտանկյունից	320

ԳԼՈՒԽ 5. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅՆԿԱՆԸ..... 332

5.1. Սահմանադրական վերահսկողությանը ներկայացվող արդի պահանջները	332
5.2. Սահմանադրական արդարադատության համակարգերի զարգացման միտումները	369
5.3. Սահմանադրության մեկնաբանումը սահմանադրական դատարանի կողմից	383
5.4. Սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի լուծումը որպես սահմանադրականության երաշխիք	390
5.5. Սահմանադրական դատարանի որոշումների նախադեպային բնույթը	399
5.6. Սահմանադրական արդարադատության բնագավառում միջազգային համագործակցության նոր փուլը	412

ԳԼՈՒԽ 6. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՈՐԱԿ 415

6.1. «Սահմանադրություն», «սահմանադրական մշակույթ», «սահմանադրականություն», «սահմանադրական մշտադիտարկում» հասկացությունների օրգանական կապը կայուն զարգացման համատեքստում	415
6.2. Հայեցակարգային մոտեցումը համակարգային սահմանադրական մշտադիտարկման ներդրման հարցում	430
6.3. Սահմանադրական մշտադիտարկման հիմնական խնդիրները հասարակական վերափոխումների պայմաններում	434
6.4. «Սահմանադրական վերահսկողություն» եւ «սահմանադրական մշտադիտարկում» փոխհարաբերակցությունը եւ էության դրսեւորումը	436
6.5. Սահմանադրական ախտորոշումը որպես համակարգային սահմանադրական մշտադիտարկում իրականացնելու մեխանիզմ	441
6.6. Իրավունքի գերակայության երաշխավորման սահմանադրական մշտադիտարկումը	449
6.7. Իշխանությունների հավասարակշռության ապահովման սահմանադրական մշտադիտարկումը	467
6.8. Սահմանադրական մշտադիտարկումը եւ սահմանադրական պատասխանատվությունը	480

ՀԱՎԵԼՎԱԾ	487
PE3IOME	505
SUMMARY	589

ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Միջազգային պրակտիկայում վերջին տարիներին հաճախ է անդրադարձ կատարվում սահմանադրական զարգացումների փորձին ու սահմանադրական մշակույթի ձեւավորման ընդհանուր գծերին ու առանձնահատկություններին: Մասնավորապես, այդ հարցերը համակողմանի քննարկման առարկա դարձան 1999թ.¹ Ռոտերդամում, 2004թ.² Սանտյագոյում եւ 2007թ. Աթենքում հրավիրված՝ Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության զագաթնաժողովներում: 1999թ. սահմանադրական մշակույթի հիմնահարցերին նվիրված հատուկ միջազգային խորհրդաժողով հրավիրվեց Լեհաստանում³: 2004թ. Վարշավայում հրավիրվեց նոր խորհրդաժողով՝ քննության առնելու սահմանադրականության եւ սահմանադրական զարգացումների փորձն Արեւելյան Եվրոպայի երկրներում վերջին 15 տարիներին: Մասնակցելով այդ եւ մի շարք այլ գիտաժողովների, մոտիկից զգալով քննարկումների մթնոլորտը, հարցերի առաջադրման ու վերլուծության ընդհանուր տրամաբանությունը, ինչպես նաեւ հաշվի առնելով քննարկման առարկա հիմնախնդիրների այժմեականությունը հայ իրականության համար, նպատակահարմար համարեցինք համակողմանի անդրադառնալ սահմանադրական մշակույթի հիմնահարցին, որի մասնագիտական լուրջ քննարկման անհրաժեշտությունը չափազանց մեծ է նաեւ անցումագիտության (տրանզիտոլոգիայի) տեսանկյունից:

Վերոնշյալ գիտաժողովներում մասնավորապես մեր զեկույցները հիմնականում նվիրված են եղել ոչ միայն եվրոպական երկրներում սահմանադրականության զարգացման հիմնական միտումների բացահայտմանը, մեզանում դրանց դրսեւորման առանձնահատկություններին, այլեւ անցումային երկրներում սահմանադրականության ձեւախեղումներին ու դրանց պատճառներին: Այս հարցերին փորձել ենք հատուկ ուշադրություն հրավիրել սույն աշխատանքում:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաեւ հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի ձեւավորման պատմատրամաբանական, համեմատական վերլուծությունը՝ խոր արմատ-

1 Sten Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000.

ների, հարուստ ավանդույթների եւ ուսանելի դասերի տեսանկյունից: Նկատի ունենալով, որ այս թեման քիչ է ուսումնասիրված եւ ժամանակակից իրավամտաժողովրդյան չափանիշներին համապատասխան վերլուծության, իմաստավորման ու վերարժեվորման, ինչպես նաեւ պատշաճորեն օտարներին ներկայացնելու անհրաժեշտություն ունի, մեծապես կարեւորում ենք հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի ձեւավորմանը պատմական ընդհանուր անդրադարձը, որը նաեւ ուսանելի դասեր է բովանդակում ներկա զարգացումների տեսանկյունից:

Մենք չենք ցանկանում նաեւ տուրք տալ ծայրահեղ մոտեցումների եւ համոզված ենք, որ սահմանադրական մշակույթը համակարգային ամբողջականություն է ստանում քաղաքակրթության զարգացման որոշակի աստիճանում՝ երկրում սահմանադրականության հաստատման եւ Սահմանադրության գերակայության երաշխավորման պայմաններում: Այսուհանդերձ, որպես բանականորեն իմաստավորված արժեքային ամբողջականություն՝ այն պատմական խոր արմատներ ունի եւ որոշակիորեն դրսևորվում է «չգրված սահմանադրությունների», սովորույթների, ավանդույթների, հոգեւոր արժեքների, կանոնների, օրենքների, սահմանադիր բնույթ ունեցող նորմերի միջոցով: Սահմանադրությունը եւ սահմանադրականությունը չեն կարող դիտարկվել լոկ մեդ իրավական տրամաբանության շրջանակներում: Սահմանադրական մշակույթը սոցիալական հանրության մտավոր ու մշակութային ողջ ժառանգության ու նաեւ ժողովրդի պատմական հիշողության կարեւոր բաղադրատարրերից է, եւ դրա ճանաչողությունն ու իմաստավորումը յուրաքանչյուր ազգի ու ժողովրդի համար ինքնաճանաչման մեծ խորհուրդ ունի²:

2 Հավանաբար նաեւ դա նկատի ունենալով է, որ Շ. Շահամիրյանը դեռեւս XVIII դարում «Որոգայթ փառաց» վերտառությամբ հեղինակային Սահմանադրության ներածության մեջ գրում է. «Սրա ընթերցողից իմ խնդրանքը միմիայն այն է, որ այս գիրքը ձեռք բերելով՝ նախ թող երեք անգամ ընթերցի սկզբից մինչեւ վերջ, երկրորդ՝ եթե պատահի այնպես, որ ընթերցողը ծնված եւ սնված լինի աշխարհի այն կողմում, որը բարբարոս ցեղերի հսկողության տակ լինի, աղաչում եմ նրան, որ փնտրի ու գտնի ազատ քրիստոնյաների կառավարության ներքո բնակվող, աշխարհ տեսած որեւէ մեկին, իր բերանով հարցուփորձ անի այստեղ հանդիպող ամեն մի տարակուսելի կետի շուրջ ու նրա օժանդակությամբ գտնի բացատրությունը եւ օգտակար իմաստն իմ գրած յուրաքանչյուր հոդվածի» (Որոգայթ փառաց, Երեւան, 2002, էջ 16):

Միջազգային պրակտիկան վկայում է, որ սահմանադրական մշակույթին նվիրված հատուկ ուսումնասիրությունները բավականին սահմանափակ են: Այսուհանդերձ, դրանցից կարելի է առանձնացնել, օրինակ, 2001թ. ԱՄՆ-ում հրատարակված «Constitutional Culture and Democratic Rule» ժողովածուն (Stanford University, California), որում քննարկման առարկա են դարձել մեկ տասնյակից ավելի հիմնահարցեր: Դրանց թվում հատկապես ուշադրության են արժանի այնպիսի հարցադրումներ, ինչպիսիք են. «Սահմանադրական ժողովրդավարություն. ակունքներն ու ավանդույթները», «Սահմանադրական ավանդույթների ձեւավորումը», «Ժողովրդավարական Սահմանադրության լինելության տրամաբանությունը», «Սահմանադրության կառուցվածքն ու բովանդակությունը. համեմատական վերլուծություն», «Իրավասությունների տարանջատումը եւ դատական իշխանության անկախությունը», «Սահմանադրական փոփոխությունները եւ Սահմանադրության կայունությունը», «Սահմանադրական մեկնաբանությունների կառուցակարգումը» եւ այլն:

Միջազգային խորհրդածողովներում եւ գրականության մեջ հատուկ քննարկումների առարկա են դարձել հիմնահարցին վերաբերող այնպիսի կոնկրետ թեմաներ, ինչպիսիք են՝ «Եվրոպական սահմանադրական մշակույթի հիմնահարցերը», «Սահմանադրական մշակույթը եւ ավանդույթները», «Սահմանադրական մշակույթը տարբեր մայրցամաքներում», «Ժողովրդավարությունը եւ սահմանադրական մշակույթը», «Սահմանադրական մշակույթը եւ մարդու իրավունքները», «Կրոնը եւ սահմանադրական մշակույթը», «Սահմանադրական դատարանի դերը սահմանադրական մշակույթի ձեւավորման գործում» եւ այլն³:

Նշված ու համանման այլ քննարկումների ժամանակ եւ ուսումնասիրություններում մեծ ուշադրություն է դարձվում սահմանադրական մշակույթի արմատներին, դրսեւորման առանձնահատկություններին, սահմանադրական ավանդույթների ձեւավորմանը, գործող Սահմանադրության ու երկրում սահմանադրականության որակների համեմատական վերլուծությանը: Մենք նույնպես պահպանելով այդ ընդ-

³ Տե՛ս, օրինակ, Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000, էջեր 4-5, Constitutional Cultures: The Mentality and Consequences of Judicial Review. Robert F. Nagel. University of California Press, 1993.

հանուր սկզբունքը, բացահայտելով «սահմանադրական մշակույթ» հասկացության իմացաբանական բնույթն ու բովանդակությունը՝ փորձել ենք համակարգային վերլուծության առարկա դարձնել սահմանադրական մշակույթի ու սահմանադրական ավանդույթների ձեւավորման պատմական ընթացքը հայ իրականության մեջ, ընդհանրացնել ու արժեվորել դրա դասերը՝ ներկա ժամանակներում սոցիալական հանրությանը նետված եւ Հայաստանի նորանկախ Հանրապետության առջեւ ծառայած մարտահրավերներից ու սահմանադրական մտքի միջազգային զարգացման միտումներից ելնելով:

Ինչպես ժամանակին իմաստնաբար նշել է Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետը «Մեր ապագան» հոդվածում՝ «...ապագան գծելու համար առաջին եւ հիմնական պայմանն է մեկնակետ ունենալ ներկան. անցյալը կրնա մեր ուժերուն չափը միայն ցուցանել»⁴: Ուստի մենագրության մեջ առանձնահատուկ կարեւորություն է տրվում սահմանադրական մշակույթի ներկա դրսեւորումների, սահմանադրական զարգացումների արդի հիմնախնդիրների համակողմանի վերլուծությանը, անցումային երկրներում իրավական, ժողովրդավարական պետության կայացման հրամայականներին:

4 Ոգեղեն կյանք, Ս. Էջմիածին, 1998, էջ 68:

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԲԱՆԸ

Սահմանադրական մշակույթի ձեւավորման եւ սահմանադրականության հաստատման հիմնախնդիրը՝ իշխանության սահմանափակման եւ իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից, վերջին հարյուրամյակների ընթացքում մշտապես գտնվել է գիտական հետաքրքրությունների եւ պետականաշինության կիզակետում: Ազատական իրավամտաժողովության սաղմնավորումը Եվրոպայում առաջին պլան մղեց մարդկային իրավունքների ու ազատությունների երաշխավորման անհրաժեշտությունը, որը հեղափոխական մտածողության ալիքի վրա իր առաջին համակարգված գործնական արտահայտությունը գտավ 1689թ. Անգլիայում ընդունված իրավունքների Բիլլում: Այն հետագայում իր արտացոլումը գտավ Անկախության մասին 1776թ. ամերիկյան հռչակագրում, ինչպես նաեւ Մարդու եւ քաղաքացու իրավունքների մասին 1789թ. ֆրանսիական հռչակագրում: Վերջինս բովանդակում է սահմանադրականության հոյակապ բանաձեւում, շեշտելով, որ «**Այն հասարակությունը, որում ապահովված չեն իրավունքի երաշխիքները եւ չկա իշխանությունների բաժանում, չունի Սահմանադրություն**» /հոդվ.16/: Սահմանադրության գոյությունն ակնհայտորեն պայմանավորվեց իրական կյանքում դրանում ամրագրված արժեքների ու հիմնարար սկզբունքների առկայության փաստով:

Ձեւավորվում էր սահմանադրական մշակույթի ու պետական-հանրային կյանքի կազմավորման նոր տրամաբանություն, որի առանցքն իրավունքի կարելորումն ու իրավունքով իշխանության սահմանափակումն էր: ԱՄՆ Սահմանադրության հայրերն այս խնդրի լուծումը տեսան առաջին հերթին իշխանությունների բաժանման ու հավասարակշռման ճանապարհով: Ինչպես պնդում էր Ջեյմս Մեդիսոնը՝ փառամոլությանը պետք է հակադրել փառամոլություն՝ այն զսպելու համար: Նա գտնում էր, որ հակադիր եւ մրցակցային շահերի սահմանադրորեն հավասարակշռումը կարող է զսպել իշխանությանը եւ երաշխավորել ազատությունը⁵: Իսկ Հակոբ եւ Շահամիր Շահա-

5 Տե՛ս Րասսել Գ. Конституционализм: опыт Америки и других стран
— <http://www.infousa.ru/government/dmpaper2.htm> (09.03.2009).

միրյանները դեռևս 1773 թվականին ապագա անկախ Հայաստանի համար գրվող սահմանադրությունը պարզապես անվանեցին «Ռոբոզայք փառաց»՝ անվան մեջ ամփոփելով սահմանադրական կարգավորումների ողջ իմաստն ու տրամաբանությունը:

Մնվելով սահմանադրական իրավամտաժողովության այդ ակունքներից՝ ազատական-իրավական զարգացումներն աստիճանաբար կյանքի կոչեցին դեռևս վաղ միջնադարում ճանաչում գտած այն հանճարեղ ընդհանրացումը, որ **եթե մարդկային կյանքի օրենքները չեն բխում բնական իրավունքից, բնության օրենքներից, ապա դրանք օրենքներ չեն, այլ դրանց այլասերումը:**

Հատկապես XX դարի սահմանադրական զարգացումները համակարգային ամբողջականություն հաղորդեցին ազատական-իրավական արժեքանության հենքի վրա կառուցված սահմանադրական զարգացումներին: Դրանք իրենց դասական կատարելությանը հասան Գերմանիայի Դաշնության Հիմնական օրենքում՝ առաջին իսկ հոդվածում ամրագրելով, որ մարդու արժանապատվությունը, նրա իրավունքները ոչ միայն բարձրագույն արժեք են ու անօտարելի իրավունքներ, **այլև գործում են անմիջականորեն:** Սա արդեն սահմանադրական մշակույթի նոր որակ էր:

Նախորդ հազարամյակն իր հետ բերեց շրջադարձային բազում իրադարձություններ, այդ թվում՝ համակարգային աննախադեպ հսկամարտություններ ու փլուզումներ, որոնք տասնյակ երկրների համար սահմանադրական նոր լուծումների անհրաժեշտություն թելադրեցին: Դրա վերջին երկու մեծ ալիքները ծավալվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից եւ ապա՝ ԽՍՀՄ փլուզումից հետո: Երկու դեպքում էլ զարգացումները զնացին պատմականորեն քննություն բռնած եւ այլընտրանք չունեցող արժեհամակարգային միեւնույն ուղիով՝ սահմանադրական ժողովրդավարություն հաստատելու անհրաժեշտության ճանապարհով: **Դա առավել հեշտ տրվեց սահմանադրական տեքստային լուծումների մակարդակում:** Սակայն **շարունակում է հսկայական մնալ այդ լուծումների ու իրական կյանքի միջեւ եղած անջրպետը:**

Սահմանադրության առկայությունն ինքնին որեւէ խնդիր չի լուծում: Էականը համարժեք սահմանադրական կարգի առկայությունն

է, Սահմանադրությունը կյանքի կոչելը, սահմանադրական նորմատիվ բնույթի արժեքներն իրական կյանքի կանոն դարձնելը, որի պարագայում միայն հնարավոր կլինի երաշխավորել իրավունքի գերակայությունը: Գերխնդիրը եղել ու շարունակում է մնալ հանրային կյանքի իրողությունները սահմանադրական լուծումներին ներդաշնակելը:

Տարիներ առաջ հայերենով եւ ասլա ֆրանսերենով հրատարակված՝ «Սահմանադրությունից՝ սահմանադրականություն» մենագրության նախաքանում վկայակոչել էի, որ Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) 2004թ. նոյեմբերի 19-21-ը Վարշավայում հրավիրել էր միջազգային սեմինար՝ քննության առնելու Արեւելյան Եվրոպայի երկրներում սահմանադրական զարգացումների փորձը եւ հիմնական միտումները վերջին 15 տարիներին⁶: Դա փորձ էր ի մի բերելու սահմանադրականության բնագավառում եվրոպական զարգացումների ընդհանուր տրամաբանությունը նոր իրականության պայմաններում: Մեր ցանկությունն էր այդ սեմինարում ուշադրություն հրավիրել մի շարք առանցքային խնդիրների վրա, որոնք բնորոշ են վերափոխվող հասարակությունների սահմանադրաիրավական լուծումներին: Դրանով էր պայմանավորված նաեւ իմ զեկույցի թեմայի ընտրությունը՝ «Սահմանադրականություն. եվրոպական զարգացումների հիմնական միտումները եւ որոշ ձեւախեղումներ հետխորհրդային տարածքում»: Այս եւ բազմաթիվ այլ կոնկրետ հարցերի քննարկումը հանգեցրեց այն հետեւությանը, որ իրավագիտական լայն շրջանակների համար չափազանց կարեւոր են հետհամայնավարական ողջ տարածքում սահմանադրական զարգացումների առանձնահատկությունների համակարգային ուսումնասիրումը, առկա

⁶ Ուշադրության է արժանի նաեւ այն հանգամանքը, որ 2003թ. մայիսի 23-24-ին Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) Գերմանիայի Գյոտինգեն քաղաքում կազմակերպել էր սեմինար՝ «Եվրոպական եւ ամերիկյան սահմանադրականություն» թեմայով, որտեղ համակողմանի քննարկման առարկա դարձան հատկապես հիմնախնդրի արժեքանական առանձնահատկությունները (տե՛ս Collection Science and technique of democracy, N 37. European and US constitutionalism. G. Nolte (Editor). European Commission for Democracy through Law. Concil of Europe Publishing, 2005).

ձեռնախնդրումների բնույթի ու պատճառների բացահայտումը, Սահմանադրության եւ սահմանադրական իրականության միջև առաջացած խզումը մեղմելու, ինչպես նաեւ դրանց հետեւանքների հաղթահարման իրավական գործուն հայեցակարգի ու անհրաժեշտ մոտեցումների մշակումը: Այս խնդրի լուծումը, մեր խորին համոզմամբ, անցումագիտության համար ելակետային նշանակություն ունի:

Հիմնախնդրին ավելի ծավալուն անդրադարձ կատարվեց 2013թ. հուլիսին Երեւանում հրավիրված միջազգային խորհրդաժողովում (որին մասնակցեցին 33 երկրների պատվիրակություններ), ինչպես նաեւ այդ առիթով հրատարակված «Նոր հազարամյակի սահմանադրականությունը. իրականության պարադիգմները եւ մարտահրավերները» խորագրով ժողովածուում⁷: Վերջինս բովանդակեց 19 երկրներ ներկայացնող 23 սահմանադրագետների գիտական ընդհանրացումներն ու խոր մտահոգությունը սահմանադրականության զարգացման արդի հիմնախնդիրների, բազմաթիվ երկրներում սահմանադրականության դեֆիցիտի ահագնացող չափերի վերաբերյալ՝ առաջադրելով նաեւ դրանց լուծման հայեցակարգային նշանակության մոտեցումներ:

Նույն հիմնախնդիրներին էր նվիրված 2014թ. նոյեմբերի 24-25-ին Ալժիրում հրավիրված միջազգային խորհրդաժողովը, որում 30-ից ավելի երկրների սահմանադրագետներ քննարկման առարկա էին դարձրել աֆրիկյան մայրցամաքում սահմանադրական զարգացումների հիմնախնդիրները, սոցիալական պայթյունների եւ սահմանադրականության ձեռնախնդրումների հիմնական պատճառները:

2016թ. մարտի 12-ի լիագումար նիստում Եվրոպայի խորհրդի Վեներտիկի հանձնաժողովը հավանություն տվեց «Իրավունքի գերակայության հիմնական բնութագրիչների ցանկին» //CDL-AD(2016)007/, որով գործնական նոր հարթություն են բարձրացվում իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի իրացման համատեղակալան մոտեցումները:

Նույն նիստում լավեց նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի հաղորդումը սահմանադրական մշտադիտարկման

⁷ New Millenium Constitutionalism: Paradigms of Reality and Challenges (Published on the Initiative and with a Foreword of Dr. G.G. Harutyunyan), Yerevan, -2013.

ծին, սահմանադրական մշակույթի ու սահմանադրականության ձեռավորման ընդհանուր գծերին ու առանձնահատկություններին: Մասնավորապես, այդ հարցերը համակողմանի քննարկման առարկա դարձան 1999թ.՝ Ռոտերդամում, 2004թ.՝ Մանայագոյում, 2007թ.՝ Աթենքում, 2010թ.՝ Մեխիկոյում եւ 2014թ. հունիսին Օսլոյում հրավիրված՝ Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության զագաթնաժողովներում, 2009թ.՝ Կեյպտաունում, 2011թ.՝ Ռիո դե Ժանեյրոյում եւ 2014թ. սեպտեմբերին Մեուլում հրավիրված՝ Սահմանադրական արդարադատության մարմինների համաշխարհային կոնգրեսներում: Հասարակական-պետական համակարգերի կայուն ու ներդաշնակ զարգացման գործում սահմանադրական մշակույթի տեղի ու դերի գիտակցման, սահմանադրականության նշանակության ամնախադեպ աճով է պայմանավորված նաեւ այն հանգամանքը, որ վերջին տարիներին աշխարհի շատ համալսարաններում ու գիտական հաստատություններում բացվում են համեմատական սահմանադրական իրավունքի կենտրոններ, հրատարակվում են սահմանադրականության հիմնահարցերին նվիրված բազմաթիվ տեղեկագրեր:

Այդ հիմնահարցերը համակողմանի քննության առարկա են դարձել նաեւ «Եվրոպական սահմանադրական դատարանների կոնֆերանս» եւ «Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպությունների հերթական կոնգրեսներում:

Վերոնշյալ գիտաժողովներում մասնավորապես իմ զեկույցները հիմնականում նվիրված են եղել ոչ միայն եվրոպական երկրներում սահմանադրական մշակույթի ու սահմանադրականության զարգացման հիմնական միտումների բացահայտմանը, մեզանում դրանց դրսևորման առանձնահատկություններին, այլև անցումային երկրներում սահմանադրականության ձեռխտեղումներին ու դրանց պատճառներին: Այս հարցերը, որպես անցումագիտության առանցքային խնդիր, առաջին անգամ են նման համակարգային քննության առարկա դառնում:

Միջազգային ներկա գործընթացները նաեւ վկայում են բազմաթիվ երկրներում արժեհամակարգային ու սոցիալական խոր ճգնաժամի մասին: Դրանք արդեն ամենօրյա արյունահեղությունների ու

հազարավոր մարդկանց դժբախտության պատճառ են դառնում: **Սոցիալական հանրությունն ակնհայտորեն դրսևորում է իմունային անբավարարություն:** Մեր խորին համոզմամբ, ներկա հակամարտություններն ու սոցիալական կատակլիզմները նույնպես սահմանադրականության ձեռախեղումներով են պայմանավորված, **որոնց ժամանակին բացահայտումը, գնահատումը եւ հաղթահարումը չեն երաշխավորվել:**

Կարծում ենք, որ սույն աշխատանքում առաջադրվող հայեցակարգային նոր մոտեցումները /սահմանադրական մշակույթի համարժեք մակարդակի երաշխավորման, սահմանադրականության հաստատման, սահմանադրական մշտադիտարկման գործուն համակարգի արմատավորման վերաբերյալ/ միջազգային առումով կայուն ու դիմամիկ զարգացման կարևոր երաշխիք կարող են դառնալ:

Մենագրությունն առաջին հերթին հասցեագրված է մեր տաղանդաշատ նոր սերնդին, որպեսզի պատմության ու ժամանակի դասերով իմաստնացած նրանց ջանքերն իրողություն դարձնեն արժանապատիվ, ժողովրդավար, անվտանգ ու կայուն զարգացող մեր երազների Հայաստանի Հանրապետության կայացումը:

**ԳԼՈՒԽ 1. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ»
ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՑԱԲԱՆԱԿԱՆ
ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

**1.1. «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ**

«Սահմանադրական մշակույթ» հասկացությունն իրավական արդի զարգացումների հոլովություն մերարժեվորման ու գիտական լուրջ վերլուծության անհրաժեշտություն ունի: Առավել քան երբեւէ հրատապ է դառնում հասարակական համաձայնության հենքի վրա սոցիալական հանրության իմաստավորված գոյի շարունակականության երաշխավորումը, քաղաքակրթության ձեռքբերումները հանուն մարդու, այլ ոչ թե ընդդեմ նրա ծառայեցնելու հրամայականը:

Նոր հազարամյակում մարդկային հանրությանը նետված մարտահրավերների շարքում առանձնապես կարեւորվում են համակարգային կայունության երաշխավորումը եւ սոցիալական կատակլիզմների բացառումը, որոնք կարող են աննախադեպ կործանարար հետեւանքներ ունենալ: Այդ նկատառումներից ելնելով էր, որ 2007թ. հունիսի 11-16-ը Աթենքում հրավիրված Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության 7-րդ միջազգային կոնգրեսում առանձնահատուկ ուշադրություն դարձվեց այնպիսի հասկացությունների իմաստավորմանը, ինչպիսիք են «սահմանադրական կոնֆլիկտաբանությունը» (Սահմանադրությունը որպես տարաբնույթ հակասությունների ու հակադրությունների հաղթահարման միջոց ու հնարավորություն դիտարկելը) եւ «սահմանադրական ախտաբանությունը» (հասարակական հարաբերությունների իրական բնույթի զնահատումը սահմանադրական արժեքների տեսանկյունից - սահմանադրականության իրական պատկերի բացահայտումը):

Վերջին հարյուրամյակների ընթացքում համակարգային կայունության երաշխավորի դերը գերազանցապես վերապահվեց պետու-

թյան Հիմնական օրենքին՝ «գրված» Սահմանադրությանը, որը՝ ամրագրելով կոնկրետ հասարակության քաղաքակրթական արժեքների ամբողջականությունից բխող նպատակներն ու հասարակական կեցության հիմնարար սկզբունքները, սահմանում է հասարակական վարքագծի հիմնական կանոնները, անհատի ու պետության փոխհարաբերությունների բնույթը, իշխանության իրականացման կարգն ու սահմանները՝ հասարակական համաձայնությամբ անհրաժեշտ միջավայր ստեղծելով մարդու ստեղծարար էության լիարժեք դրսևորման ու առաջընթացի համար: **Ռա հնարավոր է դառնում քաղաքակրթության եւ հասարակական գիտակցության որոշակի մակարդակում:**

Մարդկային հանրությունը, որպես սոցիալական արժեվորում ունեցող համակարգ, գոյություն ունի շուրջ 10 հազար տարի, իսկ ժամանակակից հասկացությամբ **սահմանադրորեն կանոնակարգված նրա պետական գոյը գրեթե երկու հարյուր տարվա պատմություն ունի:** Այսուհանդերձ, «սահմանադրություն» երեսույթը պատմական խոր արմատներ ունի, եւ դրա ի հայտ գալով պայմանավորված՝ ձեւավորվում է նաեւ սահմանադրական որոշակի մշակույթ՝ կրելով ժամանակաշրջանի արժեքային կողմնորոշիչների ու իրավամտաժողովրդյան կնիքը: Դեռեւս աթենական ժողովրդավարության հայրը համարվող Սոլոնից է սկիզբ առել այն թեւավոր խոսքը, որ **Սահմանադրությունը պետք է գրվի նկատի ունենալով ժողովուրդը եւ ժամանակը:**

«Սահմանադրություն» հասկացությունը լատիներենում (constitutio) նշանակում է հիմնել, սահմանել: Սակայն ամեն մի «հիմնում» կամ «սահմանում» «սահմանադրում» կամ «սահմանադրություն» չէ: Վերջինս հիմնականում բնորոշվում է որպես պետության Հիմնական օրենք (օրենքների ամբողջություն), որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Տվյալ օրենքի հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են.

- պետական կարգի հիմունքները,
- մարդու եւ քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության երաշխիքները,
- պետական իշխանության համակարգը, դրա գործառույթները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,
- քաղաքական իշխանության իրականացման եւ անհատի քա-

դաքսական, տնտեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները:

«Սահմանադրություն» հասկացության բազմաթիվ մեկնաբանություններում շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ դա հիմնարար փաստաթուղթ է, որը սահմանում է պետական կառավարման կանոնները եւ ունի հատուկ պաշտպանության ենթակա իրավական վիճակ: Այն հաճախ նույնականացվում է «սահմանադրական իրավունք» հասկացության հետ, ընդգրկելով ոչ միայն պետության հիմնարար փաստաթղթում սահմանված կանոնները, այլեւ այլ կանոններ՝ նախատեսված օրենսդրի կողմից ընդունված օրենքներում կամ դատարանների որոշումներում: Կան նաեւ մեկնաբանություններ, երբ այդ հասկացությունն ընկալվում է որպես կոնկրետ պետությունում գոյություն ունեցող պետական կառավարման փաստացի համակարգ⁹:

«Սահմանադրություն» հասկացությունը հայերենում նույնպես առաջին հերթին ենթադրում է սահմանել: Ինչպես նշում է պրոֆ. Խ. Սամուելյանը՝ միջնադարում հայ ազգային-եկեղեցական ժողովները՝ իրենց վերապահելով «օրենսդիր գործոնի նշանակություն», օգտագործել են «սահմանք» եզրույթը, որը «...հաճախ կրում է «կանոնի», «օրենքի» հոմանիշ իմաստ. այստեղից էլ կանոնական որոշումներում հաճախ են պատահում **սահմանել, սահմանադրել** բայերը՝ օրինադրել, կանոնադրել առումով»¹⁰: Միաժամանակ, «սահմանադրություն» հասկացությունն ստուգաբանվել է նաեւ «սահման դնելու» առումով, իշխանության սահմանները հստակեցնելու եւ «...անճողոպրելի որոգայթ» ստեղծելու բոլոր նրանց համար, ովքեր կփորձեն դուրս գալ օրենքով սահմանված իրենց լիազորությունների շրջանակներից¹¹:

Նոր Հայկազյան բառարանը «սահմանադրություն» հասկացության չափազանց ուշագրավ մեկնաբանություն է ներկայացնում¹²: Նախ բերվում են տարալեզու հոմանիշներ, ինչպես, օրինակ՝ Determinatio, constitutio, statutum, dispositio: Այնուհետեւ տրվում է բացառիկ հետաքրքիր ու արժեքավոր մի բնորոշում. «**որոշումն սահմանաց եւ**

9 Տե՛ս. How Constitutions Change (A Comparative Study), edited by Dawn Oliver and Carlo Fusaro. Oxford and Portland, Oregon, 2011, p. 3.

10 Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 46:

11 Որոգայթ փառաց (Հակոբ եւ Շահամիր Շահամիրյաններ), Երեւան, 2002, էջ 15:

12 Տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 688:

Տեսչութիւն վերին»: Բերվում են առանձին օրինակներ «սահմանադրություն» հասկացության պատմական վկայություններից: Մասնավորապես, աղբյուրագիտական հղումներում հիշատակվում է Մովսես Խորենացու արտահայտությունն Աշտիշատի ժողովի առնչությամբ՝ «կանոնական սահմանադրությամբ հաստատեց զողորմածութիւն», կամ Արիստակես Լաստիվերտցու արտահայտությունը՝ «Քաղկեդոնական սահմանադրութիւն»: Այնհայտ է, որ այս բառարանում «սահմանադրություն» հասկացությունը լուրջ բովանդակային ընդգրկում ունի, որի հիմքում ընկած են մի շարք կարեւոր բնութագրիչներ.

1. դա որոշում է, վճիռ է, «օրինադրութիւն» է,
2. այն ունի սահմանային նշանակություն, իրենից այն
3. կողմ, իրենից վեր կամ գերակա «որոշում» լինել չի կարող,
4. «Տեսչութիւն վերին» արտահայտությունը՝ փոխլրացնելով նման «որոշման» սահմանային ու գերակա բնույթը, հատուկ ընդգծում է դրա հիմքում ընկած անփոփոխելի «ի վերուստ տրված» արժեքների առկայությունը¹³:

Մեր պատմական մատենագրությունն իր գրաբարյան տարբերակներում հետեւողական է եղել «սահմանադրություն» հասկացության իմաստավորման հարցում, ինչը չի պահպանվել աշխարհաբար թարգմանություններում: Տիպական օրինակ է, որին հետագայում դարձյալ կանդրադառնանք, Խորենացու «Հայոց պատմությունից» բերված միտքը, որում անառարկելիորեն խոսվում է սահմանադրություն երեւույթի մասին: Հետագա թարգմանություններում «սահմանադրությամբ»-ը դարձել է «սահմաններով» ամբողջությամբ իմաստագրկելով հասկացությունը¹⁴:

Նոր Հայկազյան բառարանը «սահմանադրություն» հասկացության հիմքում դնում է «սահմանադրել» հասկացությունը, որը մեկնաբանվում է որպես սահման դնել, որոշել, կարգավորել, կարգել, օրինադրել, սահմանել: Այս բոլորն ակնհայտորեն իրենց հիմքում կանոնակարգման, իրավակարգավորման իմաստ են պարունակում: Հետեւաբար, «սահմանադրություն» հասկացության թվարկված բնութագրիչներին, ըստ հիշյալ բառարանի, պետք է ավելացնել նաեւ, ներկայիս բնորոշմամբ, նորմատիվ բնույթը:

¹³ Այդ մասին տես նաեւ՝ «Քննական օրենք. գրաւական, տոհմային եւ ազգային իրավունք», աշխատասիրեալ ԻՅ. Եփրեմայ վարդապետէ Սէթ, Վենետիկ, 1851:

¹⁴ Տե՛ս Մովսես Խորենացի, Յայոց պատմություն, Ե դար, Երեւան, 1997, էջ 225:

Ըստ Հր. Աճառյանի՝ «սահմանադրություն» հասկացությունը կազմված է «սահման» (որոշեալ չափ, ծայր, վերջ, կանոն, օրենք)¹⁵ եւ «դիր»¹⁶ հասկացություններից: Էդ. Աղայանը տալիս է Սահմանադրության հետեւյալ բնորոշումը «1. Պետության հիմնական օրենք, որ սահմանում է նրա հասարակական ու պետական կառուցվածքը, ընտրական սիստեմը, պետական մարմինների կազմակերպման ու գործունեության սկզբունքները, քաղաքացիների հիմնական իրավունքներն ու պարտականությունները: 2. Սահմանված կարգ: 3. Սահմաններ դնելը՝ որոշելը»¹⁷:

Հայ մատենագրության մեջ եւ լեզվահամեմատական վերլուծություններում «սահմանադրություն» հասկացությունը հստակ բնութագրում է իրերի ու երեւոյթների որոշակի կարգ, կանոն, օրինաչափություն սահմանելու, ընդունելու հանգամանքը՝ ընդգծելով վերջինիս որոշակի, առանձնահատուկ բնույթը:

Այս համառոտ վերլուծությունից հետեւում է, որ **սահմանադրական մշակույթի առկայությունն առնվազն պայմանավորված է «սահմանային», «եզրագծային», «զերակա» որոշում կայացնելու հասարակական կարողունակությամբ ու նման որոշումը կյանքի կոչելու նախադրյալների առկայությամբ:**

Հայ իրականության մեջ «սահմանադրություն» հասկացությունը վերագրվել է նաեւ առանձին պայմանագրերի կամ տարաբնույթ կազմակերպությունների կանոնագրերի¹⁸:

Միջազգային պրակտիկայում «սահմանադրություն» հասկացությունն ստացել է նաեւ տարբեր հանրագիտարանային մեկնաբանություններ: Փիլիսոփայության դոկտոր Մ. Ֆիլիպովի խմբագրությամբ 1902թ. հրատարակված հանրագիտարանային բառարանում մասնավորապէս նշվում է, որ քիմիայում սահմանադրություն ասելով՝ հասկացվում է «մասնիկների, ատոմների խմբավորում», ֆիզիոլոգիայում եւ բժշկագիտության մեջ՝ «մարմնակազմություն», «վնասակար ազդեցությունների հանդեպ օրգանիզմի դիմադրելու կարողություն»

15 Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երեւան, 1979, էջ 162:

16 Նույն տեղում, հ. I, էջ 676:

17 Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Դ-Ֆ, Երեւան, 1976, էջ 1271:

18 Տե՛ս Եգիազարով Ս. А. Исследования по истории учреждений в Закавказье. Ч. II. Казань, 1891, էջ 361:

(ուշագրավ ձեւակերպում է եւ կարելի է զուգահեռներ անցկացնել հասարակական օրգանիզմի հետ), պետական իրավունքում՝ «պետական կազմավորում՝ հիմնված կամ սովորական իրավունքի ու միշարք ակտերի, կամ՝ որոշակի խարտիայի վրա»¹⁹:

Պրոֆ. Վ. Մակլակովի խմբագրությամբ հրատարակված՝ սահմանադրական իրավունքի հանրագիտարանային բառարանում²⁰ նախ տրվում են լատինական constitution հասկացության ռուսերեն համանիշները՝ установление, учреждение, организация: Այնուհետև բերվում են այդ հասկացության երկու խումբ պարզաբանումներ:

Առաջին. այն դիտվում է որպես բարձրագույն իրավաբանական ուժով օժտված, մարդու իրավունքներին ու ազատություններին, պետության հիմքերին, կառավարման ձեւին ու տարածքային կազմակերպմանը, իշխանության մարմինների ձեւավորմանն առնչվող կարեւորագույն հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերի համակարգ: Ի դեպ, այն կարող է հանդես գալ մեկ միասնական կամ մի քանի իրավական ակտերի տեսքով: Սահմանադրությունը գտնվում է իրավական ակտերի հիերարխիայի գագաթին, եւ մնացած բոլոր ակտերը պետք է համապատասխանեն դրան:

Երկրորդ. Ֆրանսիայի օրինակով ցույց է տրվում, որ սահմանադրություն են անվանվում նաեւ այլ բնույթի իրավական ակտեր, ինչպես, օրինակ՝ պառլամենտի կողմից ընդունված առանձնահատուկ բնույթ ունեցող հայտարարությունը կամ որոշումը, որը չփոփոխելով գործող Սահմանադրությունը, միաժամանակ կարեւոր խնդիր է լուծում: Օրինակ է բերվում, մասնավորապես, «Բրոյլի սահմանադրությունը», որը պատգամավոր հերցոգ Ա. դը Բրոյլի՝ 1873թ. մարտի 13-ի նախաձեռնության արդյունքում ընդունված օրենքն էր՝ Խորհրդի եւ Նախագահի միջև հարաբերությունների առնչությամբ:

Պրոֆ. Ս. Ավագյանի խմբագրությամբ հրատարակված՝ սահմանադրական իրավունքի հանրագիտարանային բառարանում շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ Սահմանադրությունը ներկա-

¹⁹ Энциклопедический словарь (составлен под ред. М.М. Филиппова), т. III, приложение к журн. «Природа и люди» за 1902, էջ 1741: Այս ապեկտներին անդրադարձ կա նաեւ մեկ այլ հանրագիտարանային բառարանում՝ Փ. Брокгауз, И.А. Ефрон: "Энциклопедический словарь". М., изд. "Русское слово", 1996 г.

²⁰ Конституционное право: Словарь /Отв. ред. В.В. Маклаков. М., 2001, էջեր 230-231:

յացվում է որպես **պետության** հիմնական օրենք (ընդգծումը մերն է - Գ.Հ.), որն արտահայտում է ժողովրդի կամքն ու շահերը, ունի համապարտադիր բարձրագույն իրավաբանական ուժ, ընդունվում է պառլամենտի, հատուկ սահմանադիր ասամբլեայի կամ անմիջականորեն ժողովրդի կողմից: Շեշտվում է նաև, որ Սահմանադրությունը **քե՛ պետության եւ քե՛ հասարակության** փաստաթուղթն է, որի հիման վրա հետեւություն է արվում, որ Սահմանադրությունը «քաղաքական փաստաթուղթ է»: Սահմանադրության հիմնական բնութագրիչների մեջ առանձնացվում են չորս կարևոր որակներ, համաձայն որոնց Սահմանադրությունը.

1. իրավական ակտ է,
2. ունի գերակա բնույթ, բարձրագույն իրավաբանական ուժ,
3. հիմք է հանդիսանում ընթացիկ օրենսդրության համար, պայմանավորում դրա բնույթը,
4. ունի ընդունման ու փոփոխման հատուկ կարգ²¹:

Հանրագիտարանային բառարաններում արվում է նաև այն կարևոր շեշտադրումը, որ Սահմանադրությունը հանդես է գալիս որպես սահմանադրական նպատակների, սկզբունքների եւ գերակա բնույթ ունեցող իրավակարգավորիչ նորմերի մի օրգանական ամբողջություն, որոնք կանոնակարգում են հիմնարար հասարակական հարաբերությունները դիմամիկ հավասարակշռության մեջ²²:

Բերված հիմնական բնութագրիչներն **անհրաժեշտ ու բավարար են** սահմանադրական իրողությունը հաստատելու, այս կամ այն իրավական ակտը սահմանադրական կարգին դասելու կամ չդասելու համար: Այս չափանիշները կարող են օգտակար լինել նաև պատմական իրողություններին անդրադառնալիս եւ սահմանադրական ավանդույթների ձեւավորման գոյաբանական առանձնահատկություններն ուսումնասիրելիս: Բովանդակային առումով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ տարբեր հեղինակներ «սահմանադրություն» հասկացությունը մեկնաբանելիս հատկապես կարեւորում են, որ այն բնորոշում է տվյալ երկրի պետական ու հասարակական

21 Конституционное право. Энциклопедический словарь /Отв. ред. д.ю.н., проф. С.А. Авакьян. М., 2000, էջեր 313-315:

22 Ст'и Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право. Энциклопедический словарь. М., НОРМА, 2006, էջեր 228-231:

կարգը, ընտրական համակարգը, իշխանության մարմինների կազմավորման ու գործունեության սկզբունքները, մարդկանց իրավունքներն ու ազատությունները:

Կարելու է նաև այն հանգամանքը, որ «սահմանադրություն» հասկացության հանրագիտարանային բնորոշումներում հանդիպում ենք այնպիսի ձեռակերպումների, համաձայն որոնց՝ այն նաև ներկայացվում է **որպես սահմանադրական սովորույթների ամբողջություն**²³: Այս իրողությունը միջազգային պրակտիկայում ընդունված է կոչել նաև **չգրված Սահմանադրություն**: Տվյալ պարագայում շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ սոցիալական հանրությունը կարողացել է իր գոյի որոշ հիմնական կանոնների շուրջ գալ ընդհանուր համաձայնության, եւ այդ կանոնները հարգվում, պաշտպանվում են, էական դերակատարություն ունեն տվյալ հասարակության բնականոն կյանքն ու զարգացումը երաշխավորելու գործում: Օրինակ, դեռեւս XVII դարից սկսած անգլիական քաղաքական միտքը «սահմանադրություն» հասկացությունը գերազանցապես ներկայացնում էր ոչ որպես հասարակության, պետության ու անհատի կենսագոյի հիմքը կազմող իրավաքաղաքական միասնական ակտ, այլ որպես պետության ու հասարակության հիմնային հարաբերությունների սկզբունքների ու մոտեցումների մի ամբողջություն, **որոնք ապահովում են մարդկանց ազատությունը, իրավունքի գերակայությունը, իշխանության սահմանափակումը**²⁴:

Ամերիկյան հանրագիտարանային բառարաններում Սահմանադրությունը ներկայացվում է որպես պետական համակարգում ստեղծված օրգանական օրենք՝ իրավունքի հիմնարար եւ առանձնահատուկ սկզբունքների ամբողջություն, որի միջոցով եւ որի հիման վրա կերտվում է պետական իշխանությունը: Այն ներկայացնում է պետական իշխանության տարբեր ճյուղերը, ժողովրդի սուվերեն իշխանությունը: Ամերիկյան իրավունքում «սահմանադրություն» հասկացությունը նշանակում է գրավոր փաստաթուղթ, որը հիմնական աղբյուր է պետական իշխանության իրականացման համար²⁵:

23 Տե՛ս Պողոսյան Վ.Վ., Սահմանադրական հասկացությունների համառոտ բառարան / խմբ. Գ. Հարությունյան, Երեւան, 2001, էջեր 208-209:

24 Այդ մասին տես նաև՝ Невинский В.В. Конституция Российской Федерации: испытание мировым опытом // Журнал российского права, 2003, N 11, էջ 65:

25 Steven H. Gifis. Law Dictionary. New York, 1984, էջ 92:

Մեկ այլ բառարանում Սահմանադրությունը դիտվում է որպես ազգի կամ պետության հիմնական օրենք՝ **գրված կամ չգրված**, որով սահմանվում են պետության կառավարման բնույթն ու հայեցակարգը, եւ որը հիմնված է բազային այնպիսի սկզբունքների վրա, որոնց միջոցով կառուցվում է տվյալ ազգի կամ պետության ներքին կյանքը, իրականացվում է պետության սուվերեն իշխանությունը, սահմանափակվում է իշխանությունների գործունեությունը²⁶:

Բերված օրինակները վկայում են, որ տվյալ պարագաներում հիմնական շեշտը դրվում է պետական իշխանության սահմանադրորեն կազմակերպման հիմունքների վրա:

Միանգամայն իրավացի է պրոֆեսոր Բ. Էրզեելը՝ շեշտելով, որ սոցիալական պրակտիկայի եւ իրավական մտքի աստիճանական զարգացումը հարստացրեց «սահմանադրություն» հասկացությունը՝ այն դիտարկելով որպես արժեհամակարգային երեւույթ, որպես ոչ միայն պետության, այլեւ հասարակության հիմնական օրենք²⁷:

Եթե անդրադարձ կատարենք Սահմանադրության իրավաբանական բնույթին, ապա այն, **որպես կենսագոյի հիմնական կանոնների շուրջ հասարակական համաձայնություն**, առաջին հերթին իրականացնում է **հիմնադիր գործառույթ**: Դրա ընդունումը ենթադրում է հասարակության իրավաբանական նոր կարգավիճակ՝ ելնելով որոշակի քաղաքակրթական արժեքներից, նպատակներից ու սկզբունքներից: Սահմանադրությունը հասարակական համաձայնությամբ ամրագրում է սոցիալական հանրության պատմական տվյալ փուլին բնորոշ համատեղ գոյի արդյունքները, առաջընթացի նպատակներն ու ուղղությունները, երաշխավորում է համակարգի կայունությունն ու դինամիկ զարգացումը: «Հիմնադիր» իրավական փաստաթղթեր ընդունվել են դեռեւս Հին Հռոմում, որոնք դիտվել են որպես փոխհամաձայնություն միապետական իշխանության եւ հողատերերի ու առանձին քաղաքների միջեւ: Արիստոտելը վկայակոչում է Իոնի, Թեսեսի, Դրակոնի, Մոլոնի, Պիսիստրատոսի, Կլիսթե-

26 Henry Campbell Black, *Black's Law Dictionary*, WESY Publishing CO. 1968, էջ 384:

27 Эбзеев Б. Прямое действие и непосредственное применение Конституции Российской Федерации — гарантия прав и свобод человека и гражданина // *Право и управление: XXI век. N1 (1), 2005, с. 72.*

նեսի, Արեուպագոսի, Արիստիդեսի եւ այլ սահմանադրություններ²⁸:

Սահմանադրությունը կոչված է նաեւ իրականացնելու լուրջ **կազմակերպական գործառույթ**, համաձայն որի՝ ոչ միայն ամբողջականացվում է ձեռք բերածը, այլեւ հասարակության առջեւ նոր խնդիրներ է դրվում՝ վերակազմակերպելու հանրային կյանքը սահմանադրական նորմերին ու սկզբունքներին համապատասխան, գտնելու դրան համապատասխան կառուցակարգային լուծումներ, ձեւավորելու սահմանադրականության երաշխավորման իրավաբանական նախադրյալներ:

Սահմանադրությունը, բովանդակելով աշխարհայացքային հստակ կողմնորոշիչներ, այնպիսի նորմ-նպատակներ ու նորմ-սկզբունքներ, որոնք ամրագրում են հասարակական որոշակի արժեքների համակարգ ու դրանց ձգտելու միջոցներն ու մոտեցումները, հստակեցնում է նաեւ համակարգի **գաղափարախոսական ուղղվածությունը**:

Սահմանադրությունն ունի որոշակի **արտաքին քաղաքական ուղղվածություն**՝ ոչ միայն հաշվի առնելով միջազգային սահմանադրաիրավական զարգացումների միտումները, այլեւ սահմանելով պետության արտաքին քաղաքականության իրականացման իրավական սկզբունքներն ու կարգը:

Պատմականորեն մշտապես կարեւորվել է ու ներկայումս առանձնահատուկ դեր ունի Սահմանադրության **իրավական գործառույթը**, համաձայն որի՝ Սահմանադրությունը ոչ միայն իրավական համակարգի ձեւավորման հիմքն է կամ դրա նորմերը գործում են անմիջականորեն, այլեւ պայմանավորում է օրենսդրության զարգացման ուղղվածությունն ու բնույթը:

Այս բոլորով հանդերձ, առավել կարեւորն այն է, որ **Սահմանադրությունն ամբողջական ու համակարգված ձեւով ի մի է բերում հասարակության կողմից սոցիալ-պատմական զարգացումների օբյեկտիվ օրենքների ճանաչողությունը**:

Հասարակական հարաբերությունների «սահմանադրումը», **ընդհանուր համաձայնությամբ համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը**՝ ելնելով դրա բնույթից, ձեւից, ընդգրկման շրջանակներից, կիրառման վիճակից, արժեհամակարգային կողմ-

28 Արիստոտել, Աթենական հասարակարգը, Երեւան, 2000թ., էջեր 12-82:

նորոշիչներից, սոցիալական իրականության իմաստավորման ու օրյեկտիվ օրենքների ճանաչման մակարդակից, ձեւավորում է համապատասխան ու համարժեք սահմանադրական մշակույթ:

Սահմանադրական մշակույթը սահմանադիր նորմերով ու սկզբունքներով, փոխհամաձայնությամբ ձեռք բերած հասարակական գոյի ընդհանուր կանոններով ստեղծագործաբար ապրելու մարդկային հանրության արժեքային որոշակի համակարգ է:

Սահմանադրական մշակույթը ոչ միայն ենթադրում է հասարակական համաձայնության ու մարդու սոցիալական արժեվորման որոշակի մակարդակ, բանականորեն իմաստավորված արժեքների ու սկզբունքների հիման վրա հասարակական գոյի կանոնակարգված զարգացումը երաշխավորելու հնարավորություն, այլև այդ հնարավորությունն իրականություն դարձնելու կարողունակություն:

Սահմանադրական մշակույթի հիմնական տարրերն են հասարակական համակեցության բանական իմաստավորումը, կենսագոյի հիմնարար արժեքների առկայությունը, դրանց շուրջ հասարակական համաձայնությունը, վերջինիս վերարտադրումն ապրելակերպի ու գործելակերպի կանոնների ու համապարտադիր վարքագծի նորմերի միջոցով, դրանց որոշակի համակարգված իրավական բնույթ հաղորդելն ու դրանց նկատմամբ հասարակական որոշակի վերաբերմունքը: Այդ տարրերը հասարակական պրակտիկայում պատմականորեն դրսևորվում են թե՛ համակարգային ամբողջականությամբ եւ թե՛ մասնակիորեն:

Գրականության մեջ սահմանադրական մշակույթը դիտարկվում է իբրև իրավական մշակույթի մասնավոր վիճակ եւ բնութագրվում որպես օրենքի, իրավունքի, իշխանության, պետության եւ ընդհանրապես իրավական արժեքների, իրավանորմերի ու սահմանադրական սկզբունքների հանդեպ հասարակության անդամների վերաբերմունքի դրսևորում²⁹: Պրոֆեսոր Ֆ. Սնայդերը նույնպես գտնում է, որ սահմանադրական մշակույթն ընդհանուր իրավական մշակույթի մաս է: Միաժամանակ, նրա կարծիքով՝ իրավական մշակույթի լավագույն ձեւակերպումը տրվել է Ֆրիդմանի կողմից 1969 թվականին³⁰: Հա-

²⁹ Մասնավորապես տե՛ս <http://www.eurozine.com/article/2004-02-19-snyder-en.html>.

³⁰ <http://www.eurozine.com/article/2004-02-19-snyder-en.html>.

մածայն այդ ձեռակերպման՝ **իրավական մշակույթը վերաբերում է արժեքների ու հարաբերությունների որոշակի համակարգի, որոնք միավորում են մարդկանց եւ որոշում իրավական համակարգի տեղը հասարակության ընդհանուր մշակույթի մեջ:**

Ուշադրության է արժանի պրոֆեսոր Ա. Լուկաշեայի դիտարկումն առ այն, որ ընդհանրապես մշակույթի կարեւոր բաղադրատարրը սոցիալ-նորմատիվային համակարգն ու արժեքներն են՝ ծնված մարդկանց սոցիալական փոխառնչություններից³¹: Պրոֆեսոր Գ. Վ. Մալցեն իր հերթին սկզբունքային եզրահանգում է կատարում, նշելով, որ իրավունքի հիմնարար հասկացությունները՝ սոցիալ-մշակութային զարգացմանը զուգահեռ, ձեռք են բերում նոր որակ ու բնույթ³²:

Սահմանադրական մշակույթը, իր հերթին, բնութագրում է իրավունքի (մասնավորապես՝ սահմանադրական իրավունքի) տեղը հասարակության ինքնաճանաչման, նրա մշակութային համակարգում:

Գրականության մեջ իրավացիորեն շեշտվում է, որ Սահմանադրության գոյության փաստը դեռեւս բավարար չէ սահմանադրական մշակույթի մասին խոսելու համար: Անհրաժեշտ է սահմանադրական մշակույթի գոյության փաստը գնահատել Սահմանադրության, դրա նորմերի ու սկզբունքների հանդեպ հասարակության անդամների ունեցած բանական վերաբերմունքից, **դրանցով ապրելու նրանց պատրաստակամությունից ու իրական հնարավորությունից ելնելով**³³:

Ուշագրավ է պրոֆեսոր Ն. Բոնդարի դիտարկումը, համաձայն որի՝ հասարակական գիտակցության մեջ Սահմանադրության վերաբերյալ տիրապետող գնահատականները, պետության եւ հասարակության մեջ սահմանադրական մշակույթի մակարդակը, սահմանադրականության գաղափարի գործունակությունը պայմանավորված չեն պարզապես պետության մեջ Հիմնական օրենքի՝ որպես իրավական ակտի առկայությամբ կամ նույնիսկ դրա «տարիքով», կա ավելի խորքային, կարեւոր, սոցիալ-մշակութային հանգամանք՝ սահմա-

31 Лукашева Е.А. Человек, право, цивилизации: нормативно-ценностное измерение. М.:Норма, 2011. - С. 12..

32 Мальцев Г.В. Социальные основания права. -М.: Норма: ИНФРА — М, 2011. - С. 38.

33 <http://www.claremont.org/writings/000901west.html>.

նադրականության ակունքները³⁴: Իսկ ակադեմիկոս Կուտաֆինը ֆիկտիվ է համարում սահմանադրականությունը, երբ դրա գաղափարների վրա կառուցված Սահմանադրությունը եւ իրականությունը միմյանցից շեղվում են³⁵:

ԱՄՆ Սահմանադրության 200-ամյակի կապակցությամբ հրատարակած իր ուսումնասիրության մեջ Գ. Լեյինն առանձնապես կարեւորում է այն հանգամանքը, որ Սահմանադրությունը տեքստ չէ, այն արժեքային համակարգ է, արժեքներ, որոնք ապրում են, վերարտադրվում, ուղղորդում հասարակական կյանքը³⁶: Իսկ Ռոջեր Գոլդմանը գտնում է, որ ամերիկյան սահմանադրական մշակույթն ունի երեք հիմնական առանձնահատկություն.

- իրավունքների շեշտադրումը՝ ի հաշիվ պարտականությունների,
- դատական իշխանության կենտրոնական դերը մարդու իրավունքների պաշտպանության հարցում,
- ամերիկյան Սահմանադրության ընկալումը որպես «կենդանի փաստաթղթի», զարգացող իրողության³⁷:

Իր հերթին, պրոֆեսոր Չ. Սանդերսը՝ համադրելով բրիտանական եւ ամերիկյան սահմանադրական մշակույթի առանձնահատուկ գծերը, շեշտում է, որ բրիտանական սահմանադրական ավանդույթն էվոլյուցիոն ավանդույթ է, այլ ոչ թե հեղափոխական, **խարսխված է աստիճանական, պատմականորեն ձևավորված սահմանադրական արժեքային համակարգի վրա**³⁸:

Մարդկային հասարակության արշալույսին սոցիալական հանրության կենսագոյի հիմքն էին կազմում սովորութային ու բարո-

34 Бондарь Н.С. Судебный конституционализм в России в свете конституционного правосудия. - М, : Норма; ИНФРА. — М, 2011. - С. 24. Бондарь Н.С. Конституционные ценности и политика: конституционализация политики, но не политизация конституционных ценностей // Журнал конституционного правосудия. 2016. N1(49). С. 23-30.

35 Кутафин О.Е. Российский конституционализм. - М.: Норма, 2008. С. 47.

36 Representing Popular Sovereignty: The Constitution in American Political Culture. By Daniel Lessard Levin. Albany: State University of New York Press, 1999. <http://www.bsos.umd.edu/gvpt/lpbr/subpages/reviews/levin99.html>.

37 Roger Goldman - The Protection of Individual Rights as the Fundamental Element of the United States Constitutional Culture // Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000, էջ 25:

38 Saunders Ch. A. Constitutional Culture in Tradition // Constitutional Cultures. Ed. by M. Wyrzykowski. Warsaw, ISP, 2000, էջ 41:

յական նորմերը, հոգեւոր արժեքներն ու կանոնները, որոնք հասարակական համակեցության մեջ գործադրվում եւ պահպանվում էին որպէս վարքագծի պարտադիր պայմաններ: Այնքանով, որքանով դրանք վերաբերում էին ողջ հանրությանը եւ համակարգային կանոնակարգող նշանակություն ունեին, դրանց նկատմամբ հասարակական վերաբերմունքի առումով իրենց մեջ ակնհայտ սահմանադրական մշակույթի դրսեւորման տարրեր էին պարունակում: Իրավական արժեքանության (աքսիոլոգիայի) տեսանկյունից³⁹ սահմանադրական մշակույթի ի հայտ գալը պայմանավորված է նրանով, **թե որքանով են «սահմանադիր» հարաբերություններն իրավականորեն արժեվորվում, դառնում վարքագծի համընդունելի կանոն**, անկախ նրանից՝ սովորութային դրսեւորում ունեն, թե՛ հանդես են գալիս որպէս համապարտադիր վարքագծի սահմանված կանոն: Գրականության մեջ հաճախ բուն սահմանադրությունը մշակութային երեւոյթ է համարվում միայն այն դեպքում, երբ այն կյանքի է կոչվում, գործող, ապրող իրողություն է, ընկալված է ու ճանաչված, այլ ոչ թե հաճելի ձեւակերպումների ու խելոք մտքերի ժողովածու է⁴⁰:

Սահմանադրական մշակույթը, այդուհանդերձ, առավել ամբողջական դրսեւորվում է քաղաքակրթության որոշակի աստիճանում, երբ գիտակցված պահանջ է առաջանում հասարակական համաձայնությամբ սահմանել վարքագծի հիմնական սկզբունքներ ու կանոններ՝ որպէս համապարտադիր իրավական նորմեր, ու հետեւել դրանց: Իրավական առումով այդ պահանջը հանգեցրեց սահմանադրությունների ի հայտ գալուն ու հանրային կյանքը սահմանադրորեն կանոնակարգելուն: Սակայն Սահմանադրության լոկ գոյությունը, ինչպէս նշեցինք, բավարար չէ երկիրը կամ պետությունը սահմանադրական համարելու համար: **Անհրաժեշտ է նաեւ, որպէսզի սահմանադրական նորմերը կյանքի կոչվեն, դրանց նկատմամբ դրսեւորվի հասարակական կայուն վերաբերմունք՝ ձեւավորելով հասարակության սահմանադրական մշակույթի իրական որակներ, այն դարձնելով ազգային մշակույթի օրգանական բաղադրատարրը:**

39 St' u Politiko-pravovye tsennosti: istoriya i sovremennoy /Под ред. В.С. Нерсисянца. М., 2000, էջեր 5-30:

40 St' u Book Review – Hoberle and the World of the Constitutional State, <http://www.germanlawjournal.com/print.php?id=227>.

Այս փուլում արդեն սահմանադրական մշակույթը նոր որակ է ստանում հասարակական-պետական այն համակարգերում, **ուր Սահմանադրության հետ մեկտեղ առկա է սահմանադրականությունը**, որտեղ սահմանադրական նորմերն ու սկզբունքներն ապրող իրողություն են, ձեռավորվել է սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ ու քավարար միջավայր, որտեղ սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն եւ կա սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ, որտեղ Սահմանադրությունը ոչ թե գործիք է պետական իշխանության ձեռքին, այլ **քաղաքացիական հասարակության հիմնական օրենք է**, միջոց է այդ հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխավորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլեւ սահման դնելով իշխանությանը, այն սահմանափակելով իրավունքով: Նման պարագայում խոսքը **«ժողովրդավարական սահմանադրական մշակույթ»** հասկացության մասին է, որը բնորոշ է ժողովրդավարական հասարակական համակարգերին, ուր ներդաշնակված են նաեւ ազգային ու համամարդկային մշակույթի որակները: Ընդ որում, Սահմանադրությունը եւ սահմանադրականությունը չեն կարող դիտարկվել միայն մեկ իրավական առումով, պրագմատիկ իրավահարաբերությունների կամ վերացական հասկացությունների համատեքստում: Թե՛ մեկը եւ թե՛ մյուսը խոր մշակութային երեւույթներ են, ունեն արժեհամակարգային փոխպայմանավորված ամուր արմատներ, դրանց իմաստավորման, ընկալման ու ճանաչողության քաղաքակրթական հստակ կողմնորոշիչներ ու մակարդակ: Այդ փոխլրացման շրջանակներում է, որ սահմանադրական մշակույթն իր հերթին պայմանավորում է սահմանադրական ժողովրդավարության մոդելի, դրա ռազմավարության ընտրությունը:

Սահմանադրական մշակույթի մակարդակը, սահմանադրականության դրսևորումները պայմանավորված են նաեւ սահմանադրական լուծումների մակարդակով, սահմանադրական սկզբունքների հստակությամբ ու առաջադիմական բնույթով, դրանց իրացման ներսահմանադրական լուծումներով, այսպես կոչված, սահմանադրական «հասունությամբ» ու «ճաշակով»:

Վերջին հարյուրամյակների ընթացքում շատ է խոսվել իրավական, ժողովրդավարական պետության «կատարյալ» սահմանադրության մոդելի մասին: Դեռեւս 1928թ. հրատարակած «Գիտնականները սահմանադրության մասին» մենագրության մեջ Կ. Շմիդտը խոսում

էր «քաղաքացիական իրավական պետության սահմանադրության իդեալական հայեցակարգի» մասին: Իսկ ահա 2004թ. Սահմայագրում հրավիրված Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության զագաթնաժողովում քննարկումների առանցքն էր դարձել «Սահմանադրականություն՝ նոր աշխարհ, հին դոկտրինաներ» քեման: Արված կարելու հետևություններից մեկն այն էր, որ չի կարող համապարփակ ու իդեալական Սահմանադրություն լինել: Այն յուրաքանչյուր հասարակության արժեհամակարգային ընդհանրացումն է, որի հիմքում անհրաժեշտաբար պետք է դրվեն նաև միջազգային սահմանադրագիտության կողմից ճանաչման արժանացած որոշակի ընդհանուր սկզբունքներ ու մոտեցումներ: Այն համակարգերում, որտեղ սահմանադրական ժողովրդավարությունը դեռևս գտնվում է սաղմնային վիճակում, սահմանադրական զարգացումների գլխավոր խնդիրը հիմնական սկզբունքների ու արժեքների ձևախեղումներից խուսափելն է, այն բանի գիտակցումը, որ սահմանադրական պետությունը ձևավորվում է հասարակության համարժեք սահմանադրական մշակույթով: Էական է եւ այն, որ սահմանադրական մշակույթն ավելի կայուն է, քան սահմանադրական համակարգերը, սակայն դրանց գոյաբանական ներքին կապն անխզելի է:

Քաղաքակրթության ներկա ձեռքբերումների հոլովությամբ սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչն այն է, որ երկրի Հիմնական օրենքը պետք է ներառի քաղաքացիական հասարակության խորքային, մնայուն արժեքների ողջ համակարգը եւ երաշխավորի դրանց կայուն ու հուսալի պաշտպանությունն ու վերարտադրումը: Այդ արժեքները, իրենց հերթին, ձևավորվում են դարերի ընթացքում. յուրաքանչյուր սերունդ վերաիմաստավորում է դրանք ու իր հավելումով երաշխավորում զարգացման շարունակականությունը: Հաջողությունն ուղեկցում է այն ազգերին ու ժողովուրդներին, որոնց մոտ այս շղթան չի ընդհատվում կամ լրջորեն խտտորվում: Հետևաբար, «սահմանադրական մշակույթ» հասկացությունը կարող է բնորոշվել որպես հասարակական համաձայնությամբ վարքագծի հիմնարար կանոնների սահմանման ու դրանց երաշխավորման առնչությամբ պատմականորեն ձևավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության փորձառությամբ հարստացած համոզմունքների, պատկե-

բացումների, իրավընկալման, իրավագիտակցության, սոցիալական հանրության հիմքերը կազմող արժեքային որոշակի համակարգի ամբողջականություն: Սահմանադրական մշակույթը բնութագրում է նաև սահմանադրական սուբյեկտների ու ինստիտուտների փոխհարաբերությունների որակն ու մակարդակը, միմյանց նկատմամբ իրավական վերաբերմունքի «հասունության» աստիճանը:

Սահմանադրագետների կողմից «սահմանադրական մշակույթ» հասկացությունը հաճախ օգտագործվում է հոգնակի թվով⁴¹: Սահմանադրական **մշակույթների** մասին խոսելիս շեշտը դրվում է դրանց ձևավորման համակարգային առանձնահատկությունների վրա: Օրինակ, «Հիմնական օրենք» հասկացությունը Գերմանիայում տարածում ստացավ XVII-XIX դարերում, եւ այդպես էին անվանվում հիմնարար նշանակություն ունեցող, կայուն եւ մեծ հեռանկարին միտված նորմեր պարունակող օրենքները: Այդպես էին կոչվում 1638թ. ընտրություններում Ֆերդինանդ III թագավորի «Կապիտուլյացիայի ակտը», 1648թ. Վեստֆալյան խաղաղությունը, 1803թ. Գլխավոր թագավորական մշտական հանձնաժողովի եզրափակիչ ակտը եւ այլն⁴²:

Իր հերթին, պրոֆ. Չ. Սանդերսն առանձնացնում է սահմանադրական այնպիսի համակարգեր, ինչպիսիք են Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի եւ ֆրանսիական համակարգերը⁴³: Ռոբերտ Գուդինը շեշտադրում է տարբեր երկրների սահմանադրությունների միջեւ եղած ընդհանրությունների հանգամանքը⁴⁴: Ընդհանրապես, սահմանադրական մշակույթը համեմատական սահմանադրագիտության համար բացառիկ կարեւոր նշանակություն ունի: «COMPARATIVE CONSTITUTIONAL TRADITIONS» աշխատության հեղինակը, շեշտելով, որ սահմանադրությունը քաղաքական, փիլիսոփայական, սոցիոլոգիական, տնտեսական եւ այլ գաղափարների էքստրապոլ-

41 Մասնավորապես, այս եզրակացությանը հանգեցին 1999թ. Վարշավայում հրավիրված միջազգային խորհրդաժողովի շատ մասնակիցներ // Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000:

42 Տե՛ս <http://university.tversu.ru/misc/pravo/pravo.html>.

43 Saunders Ch. A. Constitutional Culture in Tradition // Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000. P. 37-54.

44 Goodin R.E. Designing Constitutions: the Political Constitution of a Mixed Commonwealth // Constitutionalism and Transformation: European and Theoretical Perspectives / Ed. by R. Bellamy, D. Castiglione. Blackwell, 1996.

յացիա է՝ առավել բարձր կարգի նպատակների ու սկզբունքների մեջ, համեմատական սահմանադրական վերլուծության առարկա է դարձնում սահմանադրական 11 համակարգեր⁴⁵: Դրանց թվին են դասվում ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Չինաստանի, Կանադայի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Նիգերիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեքսիկայի եւ Սաուդյան Արաբիայի սահմանադրական համակարգերը: Նման դասակարգումը, անշուշտ, խիստ պայմանական է ու նաեւ վիճելի: Այդ համակարգերի շարքը կարելի է էապես ընդլայնել: Սակայն այս պարագայում կարելուրն այն հանգամանքի ընդգծումն է, որ սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական մշակույթը պատմական զարգացման իրենց ճանապարհն անցել են քաղաքակրթական արժեքների որոշակի համակարգում:

Անկախ վերոնշյալ շեշտադրումներից, պատմական իրողությունն այն է, որ յուրաքանչյուր երկիր ու ժողովուրդ սահմանադրական մշակույթի ձեւավորման ու սահմանադրական իրողության հաստատման իր ինքնուրույն ճանապարհն է անցել՝ առավել կամ պակաս փոխառելով այլոց փորձը, կատարելով իր արժեքային համակարգից բխող հավելումներն ու ամբողջականացումը: Հիմնականը, էականն այն է, որ **սահմանադրական մշակույթը եւ բուն Սահմանադրությունը** տվյալ հասարակության, սոցիալական կոնկրետ հանրության արժեքային համակարգի վրա ձեւավորված իրողություններ են: Հակառակ պարագայում, որքան էլ փորձառու պատվաստ կատարվի, դրանք չեն կարող կենսունակություն ձեռք բերել ու դառնալ ապրող իրողություն: Այս հարցին մենք դեռեւս կանդրադառնանք: Այստեղ, սակայն, ցանկանում ենք առանձնահատուկ շեշտել, որ հատկապես ազգային-պետական կազմավորումներում արժեքային այդ համակարգերը ձեւավորվում են դարերի ընթացքում, եւ դրանք են ընկած ինքնության որակների ու տեսակի պահպանման հիմքում: Ուստի **սահմանադրական մշակույթը չի կարող ապագային լինել**: Առաջին հերթին Սահմանադրությունն է կոչված ապահովելու վերազգայինի ու ազգայինի ներդաշնակությունը, համամարդկային արժեքների ու ազգային առանձնահատկությունների խելամիտ համատեղումը՝ նպա-

45 Comparative Constitutional Traditions, by James T. McHugh. New York: Peter Lang Publishing, 2002. <http://www.bsos.umd.edu/gvpt/lpbr/subpages/reviews/McHugh504.htm>.

տակ ունենալով ապահովել տեսակի պահպանման ու բարելավված որակներով վերարտադրման անհրաժեշտ միջավայր, մարդու ստեղծարար նախասկզբի իմաստավորման ու երաշխավորված իրացման անհրաժեշտ ու բավարար նախադրյալներ:

Սահմանադրական մշակույթը վերացական հասկացություն չէ, այն ընկած է Սահմանադրության արժեքանության հիմքում, դրսևորվում է սոցիալական հանրության կենսագոյի բոլոր ոլորտներում, արտահայտվում է դարերով մշակված, փորձարկված, ապրված արժեքների ու պատկերացումների միջոցով:

Մեր խորին համոզմամբ, **յուրաքանչյուր ազգի մշակույթը նրա իմաստավորված գոյությունն է, արժեվորված ներկայությունը ժամանակի մեջ**⁴⁶: Յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի սահմանադրականության արժեքային կողմնորոշիչները պայմանավորված են նրա սոցիալ-մշակութային դիմագծով եւ թելադրում են կոնկրետ սահմանադրական լուծումների առանձնահատկությունները:

Ամփոփելով՝ կարող ենք ընդհանրացնել, որ իրավական պետությունում «սահմանադրական մշակույթ» հասկացությունը մեր կողմից բանաձևվում է որպես **պատմականորեն ձևավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության փորձառությամբ հարստացած համոզմունքների, պատկերացումների, իրավընկալման, իրավագիտակցության՝ հանրային ճանաչողության առանցքը կազմող արժեքային որոշակի համակարգ, որը հիմք է հանդիսանում սոցիալական հանրության համար հասարակական համաձայնությամբ սահմանել եւ երաշխավորել իր ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնները:**

Տվյալ բանաձևման շրջանակներում «սահմանադրականությունը» հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունը, դրանց՝ որպես ապրող իրողության, գոյությունն է հանրային կյանքում, **յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պետաիշխանական լիազորությունների իրականացման գործընթացում:**

⁴⁶ Նման եզրահանգման ենք եկել անվանի գրող, դրամատուրգ Պերճ Ջեյթունցյանի հետ հիմնահարցի համակողմանի քննարկման արդյունքում:

Առավել ընդհանուր՝ «Սահմանադրականությունը» սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում: Այն հանդես է գալիս որպես հասարակության սոցիալական վարքագծի բնութագրման ընդհանուր իրավական սկզբունք:

Հետևությունը միանշանակ է՝ խնդիրը հանգում է ոչ թե Սահմանադրության պարզապես կիրառմանը, այլ **այն սոցիալական համակարգի ձևավորմանը, որում Սահմանադրությունն իրացվում է այդ համակարգի յուրաքանչյուր բջջի կողմից՝ որպես դրա գոյության կենսապայման:**

Այսուհանդերձ, «սահմանադրականություն» եզրույթը մասնագիտական գրականության մեջ դասվում է այն հասկացությունների շարքին, որոնց վերաբերյալ բազմաթիվ ու հաճախ նաեւ՝ իրարամերժ բանաձեւումներ կան: Սակայն մինչեւ դրանց բնույթին ու առանձնահատկություններին անդրադառնալն անհրաժեշտ ենք համարում ուշադրություն հրավիրել հասկացության ծագումնաբանական արմատներին: Առաջին անգամ այդ հասկացությունը կյանքի է կոչվել ամերիկյան Սահմանադրության Հայրերի կողմից, ովքեր սահմանադրականությունը դիտարկում էին որպես երկրի Հիմնական օրենքի գերակայության բնութագրիչ՝ այլ օրենքների ու իրավական ակտերի նկատմամբ: Գ. Բերմանն այն կարծիքին է, որ «սահմանադրականություն» հասկացությունը գիտական շրջանառության մեջ է դրվել XVIII դարի վերջերին եւ XIX դարի սկզբներին՝ գլխավորապես շեշտելու համար օրենքների նկատմամբ Սահմանադրության գերակայության ամերիկյան դոկտրինան: Սահմանադրականությունը Սահմանադրության գոյության վկայությունն էր, դրա դերի ու կարեւորության ընդգծումը: Սակայն, ինչպես նշում է նույն հեղինակը, այդ ֆենոմենի իրողությունն այլ իրավագետների կարծիքով ավելի հին արմատներ ունի եւ առնչվում է Արեւմտյան Եվրոպայի IX-XII դարերի քաղաքային իրավական համակարգերին⁴⁷:

«Սահմանադրականություն» հասկացությունը ներկայումս կապվում է մի շարք իրավական երեւույթների հետ, ինչպիսիք են.

- սկզբունքների, գործունեության կարգի եւ կառուցակարգային մեխանիզմների ընդհանրությունը, որոնք ավանդաբար օգտագործվում են պետական իշխանության սահմանափակման նպատակով⁴⁸,

47 Берман Г., Западная традиция права: эпоха формирования. - М., 1998.- С. 370.

48 Шайо А. Самоограничение власти (краткий курс конституционализма). - М., 1999.

- սահմանադրական միջոցները՝ պետական իշխանության սահմանափակումներ սահմանելու համար⁴⁹,

- համապետական, վերկուսակցական, միաբանող գաղափարախոսությունը⁵⁰,

- իրավաքաղաքական ռեժիմը, որի դերը հասարակության ներսում արդարության ու ներդաշնակության երաշխավորումն է⁵¹,

- կառավարման սահմանադրական կարգի առկայությունը, պետական կառավարումը՝ սահմանափակված Սահմանադրությամբ⁵²,

- պետության ինքնասահմանափակումը⁵³,

- իրավունքի տիրապետությունը հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում, որը ենթադրում է մարդու իրավունքների առաջնահերթություն եւ երաշխավորում է անհատի ու պետության փոխադարձ պատասխանատվությունը⁵⁴,

- Սահմանադրությանը համապատասխան պետական եւ հանրային կյանքի կազմակերպման տեսությունն ու պրակտիկան կամ Սահմանադրության վրա հիմնված քաղաքական համակարգը⁵⁵,

- իրավունքի գերիշխանության սկզբունքը, որը ենթադրում է երկրի իշխանությունների ու պետական մարմինների իշխանական լիազորությունների սահմանափակում⁵⁶,

- Սահմանադրության (գրված կամ չգրված) առկայությունը եւ դրա ակտիվ ներագդեցությունը երկրի քաղաքական կյանքի վրա, ...պետական համակարգի, քաղաքական ռեժիմի, անհատի իրավունքների ու ազատությունների ճանաչման եւ քաղաքացի-պետություն

49 Barendt E. Introduction to Constitutional Law. - Oxford Univ. Press, 1998.- P. 14

50 Нерсесянц В. С. Конституционализм как общегосударственная идеология // Конституционно-правовая реформа в Российской Федерации. Сб. ст. / Отв. ред. Ю. С. Пивоваров. М., 2000. С. 6-8..

51 Сони́на Л. В. Конституционализм в Российской Федерации как политико-правовой режим: Автореф. дис. канд. юрид. наук. Екатеринбург, 2001. С. 7-8.

52 Пуздрач Ю. В. История российского конституционализма IX-XX веков. СПб., 2004. С. 7.

53 Шайо А. Транснациональные сети и конституционализм // Сравнительное конституционное обозрение. 2008. N 5 (66). С. 123.

54 Ромашов Р.А. Современный конституционализм: теоретико-правовой анализ. <http://www.lawlibrary.ru/disser2000401.html> (09.03.2009).

55 <http://dic.academic.ru/dic.nsf/enc-law/1027/>.

56 Рассел Г. Конституционализм: опыт Америки и других стран – <http://www.infousa.ru/government/dmpaper2.htm> (09.03.2009).

փոխհարաբերությունների սահմանադրական կանոնակարգվածությունը, դրա իրավական բնույթը⁵⁷:

Սահմանադրականությունը բնութագրվում է նաև որպես իրավունքի գերակայության սկզբունքի իրացում, պետության ղեկավարների եւ իշխանության մարմինների իշխանական իրավասությունների սահմանափակում եւ վերջինիս իրականացում սահմանված ընթացակարգերով⁵⁸:

Բանաձեւումներն այսքանով չեն սպառվում, սակայն բերված օրինակները բավարար են երեսույթի տարբեր ընկալումները հիմնական գծերով ներկայացնելու համար:

Իրավագետներից շատերն են կարծում, որ «սահմանադրականություն» հասկացությունը բազմաշերտ ու բազմանիստ է, եւ այն որեւէ կոնկրետ հատկանիշով բնութագրելն անհնարին է: Դ-ա իրոք այդպես է: Օրինակ, պրոֆեսոր Բ. Ստրաշունը՝ կատարելով այդ հասկացության ու երեսույթի համառոտ պատմական վերլուծություն, մեր կարծիքով, անում է շատ կարեւոր հետեւություն, նշելով, որ այդ հասկացության էությունն անբաժանելի է գոյություն ունեցող պետական կարգից⁵⁹: Հնդկական համաձայնում է նաև մեր սկզբունքային մտտեցմանն առ այն, որ տվյալ ենթատեքստում էականը ոչ թե Սահմանադրության, այլ իրական սահմանադրականության ամկայությունն է⁶⁰:

Սահմանադրականության հիմնախնդրի առնչությամբ մասնագիտական մտտեցումները պայմանականորեն կարելի է դասել երկու խոշոր խմբերի.

1. երբ սահմանադրականություն երեսույթը կապվում է բուն Սահմանադրության գոյության փաստի եւ դրա միջոցով իրականացվող իրավակարգավորման հետ,
2. երբ սահմանադրականությունը դիտարկվում է արժեքանական տեսանկյունից՝ որպես հասարակական համակեցության որոշակի մշակույթի՝ սահմանադրական մշակույթի դրսևորում:

57 Տե՛ս Օ. Է. Կутафин, Российский конституционализм. М., 2008. С. 47.

58 Տե՛ս. Գրեգ Ռասսել, Սահմանադրականություն. Ամերիկայի եւ այլ երկրների փորձը, <http://www.infousa.ru/government/dmpaper2.htm> - 07.02.2012

59 Сравнительное конституционное обозрение, 2011, N5 (84). С.43-47.

60 Նույն տեղում, էջ 44:

Մենք գտնում ենք, որ առաջին մոտեցումը բխում է երկրորդից եւ ամանցյալ նշանակություն ունի: Գրականության մեջ հաճախ բուն Սահմանադրությունը դիտարկվում է որպես մշակութային երեւոյթ այն դեպքում, երբ այն իրացվում է, հանդիսանում է ապրող իրողութ- յուն, ընկալվում ու ճանաչվում է, այլ ոչ թե մնում է որպես խելոք մտքե- րի ժողովածու⁶¹:

Մեր կարծիքով, սահմանադրականության գոյությունն ամենից առաջ արժեքանական բնույթ ունի եւ, ինչպես նշեցինք, կապված է սահմանադրական մշակույթի իրողության հետ: Անրաժեշտ ենք հա- մարում կրկին փաստել, որ սահմանադրականությունը ոչ այնքան գրավոր Սահմանադրության վկայությունն է, որքան սահմանադ- րական մշակույթի դրսեւորման բնութագրիչը, սահմանադրական կարգի, դրա էական բաղադրատարրերի իմաստավորված գոյութ- յունն իրական կյանքում:

Միանգամայն համամիտ ենք նաեւ Վ. Ներսեսյանցի՝ վերը հիշա- տակված այն մտքին, որ սահմանադրականությունը համապետա- կան գաղափարախոսություն է, այն պետական համակեցության մշակույթ է, որ ձեւավորվում է հազարամյակների ու դարերի ընթաց- քում, ունի խոր սոցիալական արմատներ եւ առաջին հերթին պետք է դիտարկել որպես սահմանադրական մշակույթի դրսեւորման ձեւ, որը կարող է տարբեր լինել ոչ միայն տարբեր երկրներում, այլեւ զարգացման տարբեր փուլերում: Ուստի անհրաժեշտ ենք համարում հիմնախնդիրը դիտարկել հենց այս տեսանկյունից՝ նկատի ունենա- լով նաեւ Արիստոտելի «Աթենական հասարակարգը»՝ բնութագրելու պատմա-տրամաբանական եւ արժեքանական մոտեցումների մեթո- դաբանական կարեւոր նշանակությունը⁶²:

Սահմանադրականությունը, ինչպես եւ իրավունքը, օբյեկտիվ սոցիալական իրողություն են, սոցիալական հանրության քաղա- քակիրթ համակեցության աստիճանի վկայությունը՝ տվյալ հան- րության կայուն եւ դինամիկ զարգացման երաշխիքը⁶³:

61 Տե՛ս. *Book Review* – Hderle and the World of the Constitutional State, <http://www.germanlawjournal.com/print.php?id=227>.

62 Տե՛ս Արիստոտել, Աթենական հասարակարգը, Եր., «Հայաստան», 2000թ.:

63 Այս մասին տե՛ս. Գ. Арутюнян, Конституционализм как фундаментальный принцип права в правовом государстве // Конституционное правосудие, 2012, N 1. - С. 5-16. Н. Бондарь, Концепция судебного конституционализма: методология исследования в свете практики конституционного правосудия. Նույն տեղում, էջ 29:

Սահմանադրականությունը, որպես իրավական մատերիայի կերպ, բնութագրական է այնպիսի սոցիալական հանրություններին, որոնք սոցիալ-մշակութային համապատասխան արժեքների համակարգի հենքի վրա հասել են սոցիալական ազատությունների ու հասարակական փոխհամաձայնության ճանաչման ու կանոնակարգման որոշակի մակարդակի:

Ելնելով վերոշարադրյալից՝ մենք գտնում ենք, որ «սահմանադրականություն» հասկացությունը պետք է ընկալել ոչ թե որպես սահմանադրական իրավունքի կարեւոր սկզբունքներից մեկը, **այլ որպես իրավունքի համընդհանուր ու հիմնարար սկզբունք ընդհանրապես:** Կարող է հռոմեական հանրաճանաչ իրավական սկզբունքը՝ «**որտեղ հասարակություն, այնտեղ էլ իրավունք»**, վերածեակերպվել **հետեւյալ կերպ՝ «որտեղ սահմանադրականություն, այնտեղ էլ իրավական պետություն»:**

Սահմանադրականությունը սոցիալական հանրության փոխհամաձայնեցված գոյի էության բնութագրիչն է, ժամանակի մեջ նրա իմաստավորված գոյության վկայությունը, հասարակական հարաբերությունների ու դրանց իրավական կանոնակարգման հասունության աստիճանի բնութագրիչը: Սահմանադրականությունը քաղաքակիրթ համակեցության գերնպատակն է, որին հասարակությունը պետք է անընդհատ ձգտի:

1.2. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՑԱՆԿԱԼԻԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԻ ԳԻԱԼԵԿՏԻԿԱՆ

Յուրաքանչյուր իրավական համակարգում սահմանադրական մշակույթը, սահմանադրականությունն ամենից առաջ ամբողջականանում ու դրսևորվում են տվյալ համակարգին բնորոշ սահմանադրական դոկտրինայի միջոցով: Վերջինս իր հերթին ներառում է համակարգված գիտելիքների, սկզբունքների ու մոտեցումների ամբողջականություն՝ կենսագոյի հիմնարար հարաբերությունների, դրանց «ձեռականացումը» հանդիսացող Հիմնական օրենքի բովանդակության, իրավական բնույթի, սոցիալական դերի, քաղաքական նշանակության ու իրացման նախադրյալների վերաբերյալ: Սահմանադրական դոկտրինայի անբակտելի բաղադրատարբերն են նաև սոցիալական հանրության արժեհամակարգային կողմնորոշիչների հստակեցումը, պետության ու քաղաքացիական հասարակության հիմնարար արժեքներից ելնելով՝ անհատի վարքագծի կանոնների ու իշխանության սահմանների որոշակիացումը: Սահմանադրական դոկտրինան ներառում է Սահմանադրության տեսամեթոդաբանական հիմունքները, հասարակական պրակտիկայում դրանց իրացման, սահմանադրականության հաստատման չափանիշները, սահմանադրագիտության ու սահմանադրական մշակույթի զարգացման միտումները, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման բնույթն ու կոնկրետ առանձնահատկությունները: Սահմանադրական մշակույթը բովանդակություն է ստանում միայն այն դեպքում ու այնքանով, երբ ու որչափով Սահմանադրությունը կամ սահմանադիր նորմերը դառնում են սպրոդ իրողություն: Տեղին է հիշել Հեգելի դատողություններն իրավունքի բովանդակության առնչությամբ, երբ շեշտում էր, որ հասկացությունը եւ իրական հարաբերություններում դրա գոյությունը երկու տարբեր բաներ են՝ ինչպես հոգին եւ մարմինը, որոնք միմյանցից բաժան լինել չեն կարող⁶⁴: Ավելին՝ սահմանադրական ընկալումների ու հասարակական իրողությունների միջև որոշակի ներդաշնակություն պետք է լինի: **Ներդաշնակություն՝ ցանկալի ու իրականի միջև, հանրային ճանաչում գտած ու վարքագծի հիմնարար կանոն դարձած արժեքի ու իրական վարքագծի միջև:**

⁶⁴ Гегель Г. Философия права: Пер. с нем., М., 1990, էջ 59:

Սահմանադրականությունը, լինելով սահմանադրական մշակույթի արտահայտման ձեւ, սոցիալական հանրության արժեհամակարգային ճանաչողության որոշակի քաղաքակրթական մակարդակի արտահայտություն, պայմանավորված է մի շարք գործոններով.

1. հասարակական երեւոյթների ու օբյեկտիվ օրենքների իրավափիլիսոփայական ճանաչողության ու ընկալման մակարդակով,
2. հասարակության զարգացման միտումներով եւ մարդու սոցիալական արժեւորման աստիճանով,
3. մարդ-հասարակություն փոխհարաբերությունների բնույթով,
4. սոցիալական հանրության արժեհամակարգային առաջնահերթություններով,
5. արտադրական հարաբերությունների զարգացման մակարդակով,
6. մարդու սոցիալական պաշտպանվածության աստիճանով,
7. հասարակության քաղաքական մշակույթի ու իրավագիտակցության աստիճանով,
8. հասարակական համաձայնության կայացման սոցիալ-քաղաքական նախադրյալների առկայությամբ,
9. պետական իշխանության գաղափարաբանական կողմնորոշումով եւ հասարակության ճակատագրի համար պատասխանատվության գիտակցման աստիճանով,
10. համընդհանուր արժեքների ներազդեցության բնույթով եւ ազգային ինքնության որակների հետ դրանց ներդաշնակման աստիճանով ու հնարավորությամբ,
11. սահմանադրական արժեքանության ձեւավորման ավանդույթներով ու դրանց իրավական միջոցներով ամրագրման ու իրացման մակարդակով,
12. կոնկրետ սահմանադրական լուծումների բնույթով, դրանց համակարգվածության աստիճանով,
13. սահմանադրական զարգացումներին ներկայացվող մարտահրավերներով,
14. հասարակական հարաբերությունների սահմանադրականացման իրական աստիճանով ու որակով,
15. համակարգային կայունության էկզոգեն (արտաժին) եւ էնդոգեն (ներծին) գործոնների ազդեցության բնույթով եւ այլն:

Սահմանադրական ճարտարապետության կարեւորագույն խրնդիրն այն է, որ սահմանադրական կոնկրետ լուծումները լինեն այնպիսին, որպեսզի սահմանադրական մշակույթի անհրաժեշտ ու բավարար մակարդակի առկայության պայմաններում սահմանադրական նորմերը գործեն ինքնին, առանց «ձեռքով կառավարման», միանա, այսպես կոչված, ինքնակառավարիչը (ավտոպիլոտը): Նման մշակույթի բացակայությունը Սահմանադրությունը վեր է ածում կամ գեղեցիկ ձեւակերպումների ու բարի ցանկությունների ժողովածուի, կամ գործիքի, կառավարման լծակի, որը գործադրվում է իշխանության ցանկությամբ ու իրեն անհրաժեշտ խնդիրների լուծման շրջանակներում: Տվյալ պարագայում աղճատվում է Սահմանադրություն երեսույթի էությունը, այն չի կարող ընկալվել որպես «...որոշումն սահմանաց եւ Տեսչութիւն վերին»⁶⁵: Տեղի է ունենում երեսույթի ու դրա դրսեւորման, «մարմնի ու հոգու» միասնականության ձեւախեղում, ցանկալիի ու իրականի հակադրում, ինչը համակարգի համար անխուսափելի կործանարար հետեւանքներ կարող է ունենալ:

Սահմանադրական մշակույթի դրսեւորման կարեւոր բնութագրիչներից է **սահմանադրական իրավագիտակցությունը**: Վերջինս ամենաընդհանուր գծերով ենթադրում է հասարակական հարաբերություններում սահմանադիր նորմերի անհրաժեշտության գիտակցում, դրանց սահմանում, այդ նորմերով ապրելու եւ գործելու, դրանք հարգելու եւ պաշտպանելու պատրաստակամություն: Սահմանադրական իրավագիտակցության սուբյեկտ են հասարակության բոլոր անդամները, նրանց տարաբնույթ կազմավորումներն ու ինստիտուտները, այդ թվում պետությունը՝ ի դեմս պետական իշխանության ինստիտուտների:

Հասարակության անդամների ու պետական ինստիտուտների սահմանադրական իրավագիտակցության միջեւ եղած աններդաշնակությունը սոցիալական անհամաձայնությունների ու կատակլիզմների պատճառ կարող է հանդիսանալ: Քաղաքացիական հասարակության հիմնական բնութագրիչներից մեկն էլ այն է, որ պետությունն առաջնորդվում է հասարակության սահմանադրական իրավագիտակցությամբ, որի հիմքն իրավունքի գերակայության երաշխավո-

⁶⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի: Հատոր երկրորդ: Վենետիկ, 1837թ., էջ 688:

րումն է եւ իրավունքով իշխանության սահմանափակումը: Պետական իշխանության կարեւորագույն առաքելություններից է սահմանադրաիրավական հարաբերությունների յուրաքանչյուր սուբյեկտի մոտ սահմանադրական այնպիսի իրավագիտակցության ձեւավորումը, որի հիմքում պետք է ընկած լինեն սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների խոր, իմաստավորված ու միասնական ընկալումը, դրանց հետեւողական իրացումը:

Բնականաբար, քաղաքացին, պետական իշխանության տարբեր մարմինները, սահմանադրաիրավական հարաբերությունների տարբեր սուբյեկտներն օժտված են **սահմանադրական տարբեր իրավունակությամբ**: Վերջինս պայմանավորված է նրանց սահմանադրական գործառույթի բնույթով, իրավասությունների ծավալով, իրավունքներով ու պարտականություններով: Սահմանադրական մշակույթի կարեւոր բնութագրիչներից է, թե սահմանադրական իրավահարաբերությունների տարբեր սուբյեկտների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները որքանով են ներդաշնակված ու հակակշռված, որչափով է երաշխավորված այդ հավասարակշռության պահպանումը դինամիկայում:

Հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի ձեւավորման պատմական փորձը վկայում է, որ այն կառուցվածքային ձեւավորման ու համակարգային դրսեւորման լուրջ էվոլյուցիա է ապրել, ինչին առավել հանգամանորեն կանդրադառնանք ստորեւ: Այսուհանդերձ, ցանկանում ենք շեշտել, որ առաջին քայլերը պայմանավորված էին սովորութային հիմնարար նորմերին իրավական բնույթ հաղորդելով եւ հասարակության արժեհամակարգային կողմնորոշիչների հստակեցման անհրաժեշտությամբ: Պատահական չէ, որ Գրիգոր Լուսավորչին վերագրվող 30 կանոններից (301-325թթ.) 7-ը վերաբերում են ամուսնաընտանեկան հարաբերություններին: Սահմանվում են կանոններ «երկրորդ կնոջը թողնող եւ առաջինի մոտ դարձողի մասին», «կույսի եւ կրկնամուսնացողի մասին», «առեւանգված աղջիկների մասին», «իգացածների (արվամուլների) մասին», «լաց ու շիվան անողների մասին», «մահացածների կտակը աղավաղողների մասին» եւ այլն: Բոլոր կանոնները հայ հասարակության արժեհամակարգային մոտեցումների հստակեցում ու խտացում են բովանդակում, վարքագծի այնպիսի կանոններ են, որոնք բնորոշում են անձի, ընտանիքի ու հասարակության բարոյական կերպարը:

Տիպական է, որ հետագա դարերի ընթացքում նույնպես հայ իրականության մեջ ազգային-եկեղեցական ժողովների ընդունած սահմանադիր կանոնների մեջ մեծ տեղ է հատկացվել ամուսնաընտանեկան հարաբերություններին, բարոյական վարքագծի նորմերին: IV-VIII դարերի ընթացքում ընդունված կանոնների վերլուծությունից հետևում է, որ դրանք առաջին հերթին ուղղված են եղել աստվածային պատվիրանները կյանքի կոչելուն, մարդկանց ու հասարակության վարքագծի արժեքային համակարգի հիմքերի ամրապնդմանը: Այս խնդիրն ավելի է կարևորվել, քան երկրի կառավարման ձևին ու բնույթին առնչվող խնդիրները⁶⁶:

Կարևոր առանձնահատկություն է նաև այն, որ պետականության կորստի շարունակական վտանգը, արտաքին ճնշումները, ինքնության որակների պահպանման հրամայականը եւ մի շարք այլ գործոններ մշտապես առաջին պլան են մղել ընտանիքի ամրապնդման, ավանդույթների պահպանման, առողջ հասարակական միջավայրի ձևավորման, արժեհամակարգային հստակ կողմնորոշման անհրաժեշտությունը: Այս փուլում դեռևս սաղմնային ձևով սահմանադրական մշակույթի հիմնական դրսևորումներն առնչվում են հասարակական այդ առաջնահերթությունների իրականացմանը: Առավել կարևոր են դառնում հասարակության ու անհատի բարոյական վարքագծի խնդիրները, քան պետական մեքենային առնչվող հիմնահարցերը: Կանոնական սահմանադրությունների առանցքային խնդիրն են դառնում մարդու աստվածակերպության երաշխավորումը, նրա ստեղծարար էության անաղարտ որակների ապահովումը:

301թ. սկսած քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով՝ երկրում աշխարհիկ ու հոգևոր իշխանության գործակցության որակապես նոր իրողություն հաստատվեց, որը դարերի ընթացքում իր վճռական դերն ունեցավ հայ իրավական ու սահմանադրական մշակույթի ձևավորման եւ զարգացման գործում⁶⁷:

⁶⁶ Այս հանգամանքը պայմանավորվել է նաև պետականության կորստի պայմաններում ազգային-եկեղեցական ժողովների կողմից կանոնական սահմանադրությունների ընդունման փաստով:

⁶⁷ Բնականաբար, տարբեր երկրներում նախկինում եւ ներկայում լուրջ առանձնահատկություններ են արձանագրվել կրոնի ու սահմանադրական մշակույթի փոխառնչություններում: Այդ մասին, մասնավորապես, տե՛ս Penelope Foundethakis (*Panteion University, Athens*) - Religion and Constitutional Culture in Europe // Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000, էջեր 169-191:

Պետականության առկայության պայմաններում սահմանադրական մշակույթի հիմնական դրսեւորումներից են դառնում պետության սահմանադրական կարգի հիմունքների հստակեցումը, պետական իշխանության համակարգի ձեւավորումը, պետություն-քաղաքացի հարաբերությունների հիմնական սկզբունքների հաստատումը, պետության ներքին ու արտաքին գործառույթների կանոնակարգումը:

Պատմության դասերը վկայում են, որ սահմանադրությունների ծնունդը հաճախ թելադրված է հասարակության առջև ծառայած բարդագույն խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Իրականում 1787թ. ԱՄՆ Սահմանադրության ընդունումն ազդարարեց աշխարհում նոր տիպի պետության ստեղծման մասին: 1774թ. սեպտեմբերին անգլիական գաղութները Ֆիլադելֆիայում հրավիրեցին առաջին մայրցամաքային կոնգրեսը, որը բողոքի ձայն բարձրացրեց գաղութների իրավունքների ոտնահարման կապակցությամբ: Արդեն 1775թ. սկսվում է անկախության համար ուղղակի պայքարը: 1776թ. հունիսին հրավիրված երկրորդ մայրցամաքային կոնգրեսն առաջ է քաշում անկախության հռչակագրի ընդունման անհրաժեշտության հարցը: Այն ընդունվում է 1776թ. հունիսի 4-ին: Ամերիկյան նահանգների հետագա սերտ գործակցության եւ միասնական պետականության հաստատման ու ամրապնդման համար առանցքային նշանակություն ունեցավ 1787թ. Սահմանադիր ժողովի կողմից Սահմանադրության մշակումը եւ ընդունումը, որը հետագայում վավերացվեց նահանգների կողմից: Սահմանադրության ընդունման ու վավերացման, «ֆեդերալիստների» ու «հակաֆեդերալիստների» բուռն պայքարի ողջ պատմության ուսումնասիրությունը վկայում է⁶⁸, որ ամերիկյան սահմանադրական մշակույթի ձեւավորման համար ելակետային նշանակություն է ունեցել դաշնային տիպի պետականության կայացումը, որին բնորոշ են իշխանությունների բաժանումն ու զսպումների եւ հակակշիռների օգնությամբ հավասարակշռումը, անկախ դատական համակարգի առկայությունը եւ դատական սահմանադրական վերահսկողությունը: Այս հիմքի վրա աշխարհում առաջին անգամ ձեւավորվեց մախագահական հանրապետություն: Ամերիկյան սահմանադրական մշա-

68 Մասնավորապես տե՛ս Christopher Collier and James Lincoln Collier, *Decision in Philadelphia: The Constitutional Convention of 1787*, New York, 1987:

կույթի հետագա զարգացման առաջին դրսևորումները վերաբերում են 1791թ. ուժի մեջ մտած սահմանադրական փոփոխություններին, որոնց հիման վրա ամրագրվեցին մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները եւ դրանց ապահովման երաշխիքները (իրավունքների մասին Բիլլը): **Գ-ա որոշակիորեն անցում էր իշխանակենտրոն սահմանադրական մոդելից մարդակենտրոն մոդելի:** Փաստորեն **ամերիկյան փորձն սկիզբ դրեց սահմանադրական մշակույթի նոր որակի դրսևորմանը:** Վերջինիս բնորոշ է այնպիսի սահմանադրական համակարգի ձևավորումը, որը ներառում է ոչ միայն պետության սահմանադրական կարգի հիմունքներն ու պետական իշխանության կազմավորման կարգը, այլև անհատ-հասարակություն հարաբերությունների ողջ շրջանակը:

Ինչպես նշել ենք, սահմանադրական մշակույթը շարունակական զարգացող երևույթ է եւ իրավական, ժողովրդավարական պետության ու քաղաքացիական հասարակության պայմաններում ձեռք է բերում որակապես նոր բնույթ ու բովանդակություն: Վերջինս պայմանավորված է այդ հասարակության մեջ Սահմանադրության ունեցած դերով ու նշանակությամբ: **Հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը ժողովրդավարական քաղաքակրթության կարևոր ձեռքբերումներից է** այն առումով, որ նման հասարակությանը բնորոշ են անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, համերաշխությունը, հարգվում ու երաշխավորվում են մարդու իրավունքներն ու ազատությունները, հատկեցվում ու հուսալի պահպանվում են իշխանության սահմանները, տիրապետող է դառնում արդարադատությունը:

Նման հասարակության մեջ սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչներն են դառնում.

1. մարդու տեղն ու դերը հասարակական հարաբերություններում, նրա արժանապատվության ճանաչումն ու հարգումը, իրավունքների եւ ազատությունների երաշխավորումը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք,
2. իրավունքով իշխանության սահմանափակումը,
3. իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը, պետական իշխանության սահմանադրական համակարգում **գործառույթ-ինստիտուտ-իրավասություն** շղթայի դիմամիկ ներդաշնակության երաշխավորումը,

4. ժողովրդաիշխանության հաստատումը, իշխանությունների ընտրովիությունն ու վերահսկելիությունը,
5. քաղաքական, տնտեսական ու վարչական ուժի օպտիմալ ապակենտրոնացումը, ազատ տնտեսական մրցակցության երաշխավորումը,
6. գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախությամբ օժտված դատական համակարգի առկայությունը,
7. քաղաքացիական հասարակության կայացումը եւ վերջինիս ակտիվ դերը հասարակական հարաբերությունների սահմանադրականացման գործում,
8. ազգային իրավական համակարգի ներդաշնակությունը միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին,
9. Սահմանադրության գերակայության ու կայունության ապահովումը,
10. սահմանադրական մշտադիտարկման կենսունակ համակարգի առկայությունը, սահմանադրական հավասարակշռության յուրաքանչյուր խաթարման ժամանակին բացահայտման, զնահատման ու վերականգնման անընդհատության երաշխավորումը:

Այս հիմնական բնութագրիչները սահմանադրական տարբեր համակարգերում կարող են տարբեր կերպ դրսևտրվել: Ինչպես նշվեց, միանշանակ է, որ **Սահմանադրությունը ներմուծվող կամ արտահանվող «ապրանք» լինել չի կարող**: Այն ամեն մի կոնկրետ երկրի արժեքային համակարգի դինամիկ ընդհանրական մոդելն է՝ կոչված երաշխավորելու այդ համակարգի առաջընթացը, ներդաշնակ ու կայուն զարգացումը՝ հաշվի առնելով այս ոլորտում առաջադիմական մտքի ձեռքբերումները⁶⁹: Ուստի սահմանադրական լուծումների հիմ-

69 Տեղին է հիշել 2004թ. հունվարի 12-14-ը Սանտյագոյի (Չիլի) միջազգային վեհաժողովում («Սահմանադրականություն, հին դոկտրինաներ, նոր աշխարհ») Սենեգալի ներկայացուցչի արտահայտությունն այն մասին, որ աֆրիկյան բոլոր երկրներն ունեն սահմանադրություններ, սակայն սահմանադրականություն գոյություն չունի, քանի որ այդ սահմանադրություններն առավելապես կառուցված են ներմուծված արժեքների ու սկզբունքների վրա եւ հիմնականում կարգախոսային բնույթ են կրում:

քում դրվում են նաև ընդհանուր բնույթի հիմնարար սկզբունքներ, որոնցից շեղումը սահմանադրական համակարգին այլ որակ կհաղորդի: Օրինակ, իրավունքով իշխանության սահմանափակման բացառումը միարժեքորեն վկայում է, որ գործ ունենք ոչ իրավական պետության հետ, իսկ առանց իշխանությունների հստակ բաժանման ու հավասարակշռման անհնարին է սահմանադրական ժողովրդավարության հաստատումը: Իր հերթին, ժողովրդավարական իշխանության ձեռավորումն անհնարին է առանց պատշաճ սահմանադրական մշակույթի: Պատահական չէ, որ գրականության մեջ հանդիպում են նաև այնպիսի ձեռակերպումներ, ինչպիսիք են «հակասահմանադրական մշակույթ» կամ «սահմանադրական հակամշակույթ»⁷⁰: Դա վկայում է սահմանադրական արժեքներն ու սկզբունքները ձեռախեղելու եւ նման վիճակով դրանք պետական իշխանության ձեռքին գործիք դարձնելու իրողությունների մասին:

Հաշվի առնելով սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչները՝ սահմանադրական ճարտարապետության համար ելակետային է այն, որ նախ պետք է հստակեցվեն հասարակության սահմանադրական նպատակները: Այնուհետև որոշակիացվում են այն սկզբունքները, որոնք բխում են տվյալ սոցիալական հանրության արժեհամակարգային կողմնորոշումներից եւ դրվում երկրի սահմանադրական կարգի ձեռավորման հիմքում: Դրանց իրականացման աստիճանով են որոշվում երկրում սահմանադրական մշակույթի իրական դրսևորման բնույթն ու առանձնահատկությունները: Իր հերթին, սահմանադրական մշակույթի մակարդակով է պայմանավորված երկրում սահմանադրական ժողովրդավարության հաստատման հաջողությունը, որը մեր ժամանակներում երկրի ազգային անվտանգության ռազմավարության կարևոր բաղադրիչներից է: Մխիթար Գոշի Դատաստանագրքի առիթով ավելի քան մեկ դար առաջ Վ. Բաստամյանը գրել է, որ երբ բարձր է ազգի «իրավական կուլտուրան», այդ ազգը կարող է «...խելացի կերպով եւ մեծ օգուտով վայելել ազատամիտ օրէնքներ, աւելի ընդարձակ ինքնավարութիւն, եւ իւր կեանքի նոր երեւոյթների հետ միասին նա պահանջում է նոր օրէնքներ»⁷¹:

70 Տե՛ս <http://university.tversu.ru/misc/pravo/pravo.html>.

71 Բաստամյանց Վ., Դատաստանագիրք Մխիթար Գոշի. Իրաւաբանական հետազօտութիւն // «Փորձ», 1879, N6, էջ 66:

Ինչպես նշել ենք, սահմանադրական մշակույթը վերացական հասկացություն չէ, այն դրսևորվում է սոցիալական հանրության կենսակերպի բոլոր ոլորտներում: Դա առաջին հերթին բացահայտում է, թե ինչ արժեքային համակարգ է ընկած հասարակական հարաբերությունների եւ պետական իշխանության գործունեության հիմքում: Սահմանադրական մշակույթի մակարդակով են պայմանավորված բուն սահմանադրական լուծումները, որպես երկրի Հիմնական օրենք՝ դրա առաջադիմական բնույթը: Սահմանադրական մշակույթն իր առարկայական դրսևորումներն է գտնում ընդունված օրենքների ու այլ իրավական ակտերի, պետության քաղաքական համակարգի, քաղաքական ինստիտուտների ու իշխանության մարմինների գործունեության, դրանց փոխհարաբերությունների, անձի հասարակական կենսադիրքի, նրա իրավունակության մեջ: Պատմության դասերն անառարկելիորեն վկայում են, որ, այսուհանդերձ, սահմանադրական մշակույթի մակարդակի գնահատման գլխավոր չափանիշը երկրում սահմանադրական ժողովրդավարության աստիճանն է, իսկ դրա բարձրացումը՝ սահմանադրական զարգացումների գլխավոր պահանջը:

Սահմանադրությունից՝ սահմանադրականության, ցանկալիից իրականին հասնելու ճանապարհն անցնում է հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միջով:

Միջազգային սահմանադրաիրավական միտքը ներկայումս հատուկ կարեւորում է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի երաշխավորումը, այդ հարաբերությունների, այսպես կոչված, սահմանադրականացումը՝ որպես իրավական, ժողովրդավարական պետական համակարգերի կայացման նախադրյալ:

Եթե մինչև XVIII դարն իրավաքաղաքական մտքի զարգացումը հանգեցրեց սահմանադրությունների ընդունման, սոցիալական հանրության Հիմնական օրենքի միջոցով հասարակական համաձայնության կայացման գաղափարին, ապա **հետսահմանադրական շրջանի գլխավոր խնդիրը Սահմանադրության միջոցով երկրում սահմանադրականության երաշխավորումն է:**

Ինչպես տեսանք, սահմանադրականությունը բարդ հասարակական-քաղաքական եւ պետաիրավական հասկացություն է: Այն առաջին հերթին ենթադրում է սահմանադրական ժողովրդավարության հաստատում: Դա նպատակ է, որին ձգտում են սոցիալական առաջադիմության ուղի ընտրած երկրները: **Սակայն այդ նպատակի իրականացումը պահանջում է, մասնավորապես, այնպիսի պարտադիր երաշխիքներ, ինչպիսիք են սահմանադրական նպատակների ու հիմնարար սկզբունքների ճանաչումը եւ երաշխավորումը պետության ու ողջ հասարակության կողմից, սահմանադրական սկզբունքներին համապատասխանող պետական իշխանության առկայությունը, անհրաժեշտ իրավագիտակցությունը, իրավունքի գերակայության սկզբունքի վրա կառուցված իրավական համակարգի կայացումը, սահմանադրական կարգի ու Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանվածությունը եւ այլն:**

Սահմանադրական արդարադատության մարմինների համաշխարհային խորհրդատու խորհրդակցությունը⁷² առանձնահատուկ կարեւորվեց այն խնդիրը, որ շատ երկրներում սահմանադրականության հաստատումը նկատելիորեն հետ է մնում սահմանադրական փաստաթղթային այն լուծումներից, որոնք, որպես իրավական մտքի ու մարդկային քաղաքակրթության ձեռքբերումներ, հաճախ ընդօրինակվելով՝ չեն դառնում տվյալ կոնկրետ հասարակության արժեքային համակարգի օրգանական բաղադրատարրը: Սահմանադրականության հաստատման համար Սահմանադրության առկայությունը դեռեւս բավարար չէ: Ավելին, Մեծ Բրիտանիան՝ չունենալով մեկ առանձին Հիմնական օրենք, ներկայումս համարվում է Եվրոպայի իրավական, ժողովրդավարական կայացած պետություններից մեկը: **Խճողիքը սահմանադրական հիմնարար սկզբունքներն ազգային իրավական համակարգում եւ հասարակական պրակտիկայում կյանքի կոչելու մեջ է:**

Միաժամանակ, ազգային ու համամարդկային ներդաշնակման հիմնախնդիրը սահմանադրական լուծումների մակարդակում ոչ միայն հրատապ է, այլև ելակետային՝ միջազգային իրավական ներկա զարգացումների առումով: Հարցը միայն այն չէ, թե ինչպիսին

⁷² Տեղի է ունեցել 2009թ. հունվարի 22-25-ը Կեյպտաունում (Հարավաֆրիկյան Հանրապետություն):

է Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգը եւ ինչ սկզբունքներ են դրված իրավունքի ու իշխանության փոխառնչությունների հիմքում: Էական է այն, թե ինչպես է դրսևորվում տվյալ սահմանադրական կարգը հասարակական կյանքում, որքանով են միս ու արյուն ստանում Սահմանադրության հիմնարար սկզբունքները, ով է իշխանության իրական աղբյուրն ու կրողը, որքանով է երաշխավորված ու պաշտպանված մարդու արժանապատվությունը, որքանով են գործնականում տարանջատ, անկախ ու հավասարակշռված պետական իշխանության մարմինները: Վերջիններիս երաշխավորումն է այն հիմնական չափանիշը, որով հնարավոր է գնահատել սահմանադրականության իրական վիճակը, բացահայտել ցանկալիի ու իրականի ներդաշնակման աստիճանը:

Իրավական ժողովրդավարության ճանապարհ ընտրած երկրների համար ելակետային է այն իրողության գիտակցումը, որ Սահմանադրությունից մինչեւ սահմանադրականություն ճանապարհը չի ավարտվում երկրի Հիմնական օրենքի ընդունումով, անցումային դրույթներով նախատեսված ինչ-ինչ նախապատրաստական քայլերով, անհրաժեշտ ինստիտուտների ու կառույցների ձեւավորումով, մարդու իրավունքներն ու ազատությունները Սահմանադրության մեջ ամրագրելով: Այդ ճանապարհը յուրովի **արտացոլանքն է նախատեսվածի եւ իրականության**, որոնց փոխառնչությունները ելակետային նշանակություն ունեն հատկապես վերափոխվող հասարակական համակարգերի համար: **Այդ ճանապարհն անցնում է սոցիալական հանրության յուրաքանչյուր անդամի միջով, նրա արժեքնկալումների ողջ համակարգով:**

Միաժամանակ, նոր հազարամյակում լուրջ մարտահրավերներ են նետված հասարակության քաղաքական կազմավորման ու սահմանադրական զարգացման այն դոկտրինաներին, որոնք, սկիզբ առնելով հատկապես 16-18-րդ դարերի իրավափիլիսոփայական ակունքներից, 19-20-րդ դարերում դարձան ազգային պետական համակարգերի ու միջազգային իրավահարաբերությունների ձեւավորման տեսական հիմք ու անկյունաքար: Ինչպես նշել ենք, հատկանշական էր հենց Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության դեռեւս 6-րդ վեհաժողովի (2004թ. Սանտյագո) թեմայի

ընտրությունը՝ «Սահմանադրականություն, հին դոկտրինաներ, նոր աշխարհ»: Հինգ օր տեւած քննարկումները, 61 երկրների 450-ից ավելի մասնակիցներին ներկայացված 100-ից ավելի զեկույցները մեկ ընդհանուր եզրահանգում ունեին՝ նոր հազարամյակը նոր խնդիրներ է առաջադրում նախորդ դարերում ձեւավորված ու գործադրված սահմանադրաիրավական լուծումներին: Հին դոկտրինաները լուրջ վերաիմաստավորման անհրաժեշտություն ունեն: Նոր խնդիրները նորովի լուծումներ են պահանջում: Նույն ոգով արձանագրվեցին մոտեցումները 2007թ. Աթենքում հրավիրված՝ Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության զագաթնաժողովում: Արված հարցադրումները, թերեւս, հստակ են ու պարզ: Գլխավոր խնդիրը՝ դրանցից բխող մի շարք կոնկրետ հարցերի ճշգրիտ պատասխանը գտնելն է:

Նախ. որո՞նք են նոր հազարամյակում մարդկությանը նետված մարտահրավերները, որոնք կարող են սահմանադրաիրավական նորովի լուծումներ պահանջել:

Երկրորդ՝ ի՞նչ առանձնահատկություններ ունեն այդ մարտահրավերները վերափոխվող հասարակական համակարգերի համար եւ ինչպիսի յուրահատուկ լուծումներ են պահանջում:

Երրորդ՝ որո՞նք են սահմանադրաիրավական հետագա զարգացումների արժեհամակարգային հիմքերն ու հիմնական միտումները:

Միջազգային հանրային-իրավական զարգացումների տարբեր ծալքերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ հիմնական գործոնները, որոնք բնորոշ են նոր հազարամյակի հասարակական կարգին եւ, մեր կարծիքով, թելադրում են նորովի լուծումներ, ամենաընդհանուր գծերով հանգում են հետեւյալներին.

1. տեղի է ունենում հասարակական տարաբնույթ գործընթացների աննախադեպ միջազգայնացում, տնտեսական, սոցիալական, հոգեւոր-մշակութային հարաբերություններն զգալի չափով վերաբեռնական բնույթ են ստանում,
2. տնտեսական, տեղեկատվական, իրավական գլոբալացումն ու սոցիալական հանրությանը վերաբերող շատ արժեքների ունիվերսալացումը հասարակական ինտեգրման որակապես նոր իրավիճակ են ստեղծել, երբ կազմավորվում են նախադե-

պը չունեցող միջազգային համակցություններ, ինչպես, օրինակ, Եվրամիությունը, որի պարագայում անխուսափելիորեն առաջ եկավ ընդհուպ վերայետական Սահմանադրության գաղափարը,

3. նոր իրականության բնորոշ առանձնահատկություններից է այն, որ էապես խզվել են սահմանները ներպետական ժողովրդավարական համակարգերի եւ վերպետական տնտեսական հարաբերությունների միջեւ⁷³,
4. միջազգային առումով ժողովրդավարական զարգացումները, մի կողմից, պահանջում են գործակցության, իրավակարգի պաշտպանության, համակարգային ներդաշնակության ու կայունության նոր մակարդակ ու որակ, մյուս կողմից՝ առաջացել է լուրջ հակասություն ներպետական հարաբերություններում ժողովրդավարության արմատավորման եւ միջպետական հարաբերություններում ուժի թելադրանքի միջեւ⁷⁴,
5. նման իրավիճակում դժվարանում է նաեւ միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամերի հաղթահարումը, որը նոր հազարամյակի նախաշեմին համակարգային, խոր վերարտադրական ճգնաժամի բնույթ ստացավ: Ավելին, համակարգային ճգնաժամը սոցիալական կատակլիզմների նոր նախադրյալներ է ստեղծում, որոնք առանց արյունահեղությունների լուծում չեն գտնում,

73 Ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆեսոր Էռեստ Ուլրիխ ֆոն Վայցգեկերը՝ նման պայմաններում, երբ ժողովրդավարությունը ներփակվում է ազգայինպետական սահմաններում, իսկ տնտեսական հարաբերությունները վերպետական բնույթ ունեն, պետք է խոսել ժողովրդավարության զարգացման նոր փուլի՝ համաշխարհային ժողովրդավարության անհրաժեշտության մասին (Deutschland, 2002, թիվ 4, օգոստոս-սեպտեմբեր):

74 Հատկանշական է 2003թ. ապրիլի 12-ին Սանկտ Պետերբուրգում հրավիրված՝ «Խաղաղություն, անվտանգություն, միջազգային իրավունք. հայացք ապագային» թեմայով միջազգային կոնֆերանսում Ֆրանսիայի նախկին Նախագահ Ժակ Շիրակի արտահայտած միտքն առ այն, որ «Միջազգային քաղաքականությունը, որը կառուցված է ժողովրդավարական արժեքների վրա, պետք է խարսխվի անվիճելի կոլեկտիվ նորմերի վրա եւ, դրա հետ մեկտեղ, անհրաժեշտ է հիմնել միջազգային արդարադատական համակարգ, որը կոչված կլինի այդ իրավական նորմերին լիակատար ուժ հաղորդել: Ոչ մի միջազգային կարգ, որը միտված է շարունակական հեռանկարին, չի կարող հիմնված լինել ուժի տրամաբանության վրա»: (Տե՛ս // Правоведение, 2003, N 5, էջ 8):

6. որպես ընդհանուր միտում՝ հասարակական հարաբերություններում թուլանում է պետության կարգավորիչ դերը⁷⁵: Սակայն համաշխարհային ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամը, որն ավելի խոր արժեհամակարգային բնույթ ունի, թելադրեց մոտեցման նոր փիլիսոփայություն՝ էքստրեմալ իրավիճակներում անհնարին է հասնել կայունության առանց պետության ակտիվ միջամտության,
7. նախորդ դարավերջի հասարակական բացասական էներգիայի կուտակումներն ու համակարգային փլուզումներն առաջ են բերել հասարակական կեցության այնպիսի վիճակ, որին բնորոշ են անկայունությունը, անորոշությունը, արժեհամակարգային շփոթը, իռացիոնալի ու «միջակության» ակտիվացումը,
8. քաղաքացիական հասարակության կայացումը եւ իրավական, ժողովրդավարական պետության ստեղծումը դարձել են համընդհանուր իդեալ: Առավել հրատապ է դառնում ունիվերսալիզմի եւ ազգային առանձնահատկությունների հաշտեցման խնդիրը: Միաժամանակ, ներդաշնակման փոխարեն էլ ավելի են սրվում արժեհամակարգային հակասություններն ազգակենտրոն եւ անձնակենտրոն պետական-հասարակական համակարգերում, իսկ «էթնոս» եւ «դեմոս» հասկացությունները սահմանադրաիրավական հարաբերություններում վերաիմաստավորման խնդիր ունեն,
9. մարդկային հանրությունը, մի կողմից, հոգեւոր-մշակութային հանրությունից աստիճանաբար դառնում է մերկանտիլ սպառող հանրություն, մյուս կողմից՝ կրոնը, հոգեւոր ոլորտը մարդուն աստվածային արժեքներով ապրեցնելու էական դերակատարությունից հեռանալով՝ վեր են ածվում ձեւական, մարդուն խորթացած ինքնամփոփ ներկեղեցական երեւույ-

75 Դա վերաբերում է ինչպես տնտեսական ոլորտին, նույնպես եւ՝ հանրային կառավարման բազմաթիվ հարցերի: Ինչպես շեշտում է պրոֆ. Յու. Ա. Տիխոմիրովը՝ հանրային իշխանության ժողովրդավարական հիմքերի ամրապնդումն ու հասարակական ինքնակառավարման գործուն համակարգի արմատավորումն անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծում երկրի կառավարմանը քաղաքացիների մասնակցության իրավունքն առավել ամբողջական ու լիարժեք իրացնելու համար (տե՛ս Ю.А. Тихомиров - О модернизации государства // Журнал российского права. 2004, N 4, էջեր 3-16):

թի: Բացի դրանից, ազատ շուկայի ծավալման եւ տնտեսական գլոբալ մրցակցության պայմաններում բարոյական նորմերը կորցնում են հասարակական հարաբերությունների կարգավորչի ու խթանիչի իրենց նախկին դերը,

10. հարստության եւ աղքատության մկրատը հասել է բեւեռացման այնպիսի սահմանագծի, երբ դրանք պարզապես անհամատեղելի են դառնում⁷⁶: Համամարդկային չարիք են դարձել բմրանությունն ու ահաբեկչությունը: Վերջինիս աննախադեպ ծավալումն ունի տնտեսական, սոցիալական, քաղաքական դրդապատճառներ եւ հակադրվում է արժեքների այն համակարգին, որը ներկայումս ընկած է քաղաքացիական համաձայնությամբ ժողովրդավարական հարաբերությունների հաստատման հիմքում⁷⁷,
11. մարդու արժանապատվությունը, նրա իրավունքները դառնում են միջազգային իրավահարաբերությունների օբյեկտ: Մարդկությունը նոր հազարամյակ թեւակոխեց՝ «վշրելով» իրավունքի ընկալման ու դրա պաշտպանության ազգային կադապարները, եւ մարդու իրավունքների պաշտպանության հարցը դարձավ վերպետական երեւոյթ՝ այս հարցում էապես սահմանափակելով պետական ինքնիշխանությունը,

⁷⁶Նորբելյան մրցանակի դափնեկիր, ԱՄՆ Նախագահի նախկին խորհրդական, տնտեսագետ Ժոզեֆ Ստիգլիցը միանգամայն ճշմարտացի է՝ ընդհանրացնելով, որ նման բեւեռացման պատճառը տնտեսական գլոբալացման սխալ ընթացքը եւ ծայրահեղացված լիբերալիզմն է: Մարդկության զարգացման նպատակը չէ հարստությունը փոքրաթիվ անհատների ձեռքին կուտակելը՝ համատարած աղքատության պայմաններում: Յուրաքանչյուր տնտեսական ձեռնարկ պետք է գնահատվի նաեւ իր սոցիալական հետեւանքների տեսանկյունից («Գլոբալացման ստվերում», Deutschland, 2002, թիվ 4, օգոստոս-սեպտեմբեր):

⁷⁷ Ինչպես արդարացիորեն նշել են Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի նախկին անդամ, պրոֆեսոր Ժակ Ռոբերը, Իռլանդիայի գերագույն դատարանի անդամ Ֆրենսիս Մերֆին, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի իրավական հարցերի եւ մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ Միշել Յունոն, Ավստրիայի գերագույն դատարանի նախագահ Էվրին Ֆելցմանը եւ այլք՝ «Ահաբեկչության դեմ պայքարում նպատակահարմարության շահերի եւ մարդու իրավունքների միջեւ հաշվեկշռի պահպանումը» վերտառությամբ իրենց ելույթներում՝ ներկայացված Ստրասբուրգում 2002թ. մայիսին իրավիրված միջազգային դատական տասներորդ կոնֆերանսում, վերջին հաշվով, **ահաբեկչության դեմ պայքարը հանգում է այն իդեալների հաղթանակի ապահովմանը, որոնք ընկած են ողջ հանրության սոցիալական համաձայնության հիմքում:**

12. Էապես փոխվում են միջազգային իրավունքի տեղն ու դերը միջպետական իրավական համակարգում: Միաժամանակ, ավանդական իրավական համակարգերի տարբերություններն առավել հարաբերական են դառնում: Եվրոպական մայրցամաքային իրավական համակարգում նախադեպը դառնում է իրավունքի կարեւոր աղբյուր, իսկ մարդու իրավունքները, անկախ ազգային սահմաններից, միջազգային պաշտպանության օբյեկտ են դառնում: Հաճախ նաեւ փորձեր են արվում ժողովրդավարության «արտահանման» ուղղությամբ՝ առանց բավարար չափով հաշվի առնելու դրա գոյության համար անհրաժեշտ կենսամիջավայրի ստեղծման կարեւորությունը, կամ դա արվում է զուտ քաղաքական հաշվարկների հիման վրա,
13. սառը պատերազմի ավարտից հետո ու հետհամայնավարական տարածքում ժողովրդավարական զարգացումների պայմաններում փնտրվում են միջազգային հավասարակշռության նոր հենակետեր: Աշխարհը երկբեւեռ համակարգից դարձել է անկայուն միաբեւեռ համակարգ՝ բազմաբեւեռի վերածելու իրական միտումներով: Մի կողմից, միջազգային համակարգային կայունության հենակետերը դեռեւս հստակեցման գործընթացում են, մյուս կողմից՝ գոյություն ունեցող եւ այդ նպատակին ծառայող միջազգային ինստիտուտները կորցնում են իրենց նախկին տեղն ու դերը,
14. համամարդկային գործակցության նոր խնդիրներ են ի հայտ եկել: Մարդկությունը վաղուց ստեղծել է ինքնառջնչացման բավարար նախադրյալներ, եւ պատահականության գործոնը կամ բնական աղետները կարող են այդ հավանական հնարավորությունը դարձնել իրական: Առավել քան հրատապ է դարձել նաեւ համաձողորակային վտանգների դեմ գործակցաբար հանդես գալու անհրաժեշտությունը,
15. գիտատեխնիկական մտքի թռիչքը, տեղեկատվական ներկա հնարավորությունները, ընդհուպ տեխնիկական կամ օրգանական արհեստական մարդու ստեղծման փորձարկումները թելադրում են ընդհանուր արժեհամակարգային նոր մոտեցումներ:

Թվարկումների ցանկը, թերեւս, կարելի է շարունակել, սակայն նշվածն էլ բավական է համոզվելու համար, որ այս համատեքստում պետք է դիտարկվեն բոլոր այն հիմնահարցերը, որոնք ներազգային ու միջազգային հոլովությամբ առնչվում են հասարակության կայուն ու ներդաշնակ զարգացման խնդիրներին⁷⁸: Միաժամանակ, անհրաժեշտ է շեշտել, որ նշված երեւոյթները նոր չեն ու մեկեն չհայտնվեցին: Պարզապէս դրանք ծավալվելով՝ նոր որակ ու ազդեցության բնույթ են ձեռք բերել՝ հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը նետած նոր մարտահրավերներով հանդերձ:

78 Ի դեպ, միջազգային պրակտիկայում հաճախ են հանդիպում արդարացի քննադատություններ այն առումով, որ պատմական զարգացումների ներքին տրամաբանությունը, նոր իրողությունները, հազարամյակի մարտահրավերներն անհրաժեշտ ու բավարար խորությամբ չեն ուսումնասիրվում ու հաշվի առնվում: Դրանք ավելի շատ դարձել են մակերեսային շահարկումների կամ քաղաքական սակարկությունների առարկա: Մասնավորապէս տե՛ս Brands M. The Obsolescence of Almost All Theories Concerning International Relations // *European Review*. 1998. 6(3).

ԳԼՈՒԽ 2. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2.1. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ՀՈՉԱԿԵԼՈՒ ԻՐԱՎԱԲԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու հանգամանքը բազմաթիվ հեղինակների կողմից գիտական լուրջ վերլուծության առարկա է դարձել, ստեղծվել են պատմագիտական ստվարածավալ աշխատություններ: Մենք նպատակ չունենք դրանց հանգամանորեն անդրադարձ կատարել՝ հատկապես պատմական իրողություններին հղումներ անելու համար: Բնմարկվող թեմայի շրջանակներում առավել կարևոր ենք համարում գտնել հետևյալ հարցերի պատասխանները.

1. ինչու՞մն է կայանում Հայաստանում 301թ. քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու իրավաքաղաքական նշանակությունը,

2. իրավամտաժողովության համակարգային ի՞նչ մոտեցումներ առաջադրվեցին եւ պետաիրավական զարգացումների ի՞նչ նոր նախադրյալներ ստեղծվեցին:

Առաջին հարցադրումը նույնպես գրականության մեջ անդրադարձեր ունեցել է⁷⁹: Հետեությունները հիմնականում վերաբերում են.

- երկրի շուրջ ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակին (Հայաստանի հայտնվելը «մուրճի» ու «զնդանի» արանքում՝ Հռոմի եւ Պարսկաստանի մեծապետական շահերի խաչմերուկում),

- Պարսկաստանում զրադաշտականության հզորացման եւ այն պետական կրոն հռչակելու հետեւանքով առաջացող տագնապներին,

- Հայաստանում երկրի ներքին ամբողջականության պահպանման հրամայականներին ու կենտրոնացված թագավորական իշխանության ամրապնդման հիմնախնդիրներին,

⁷⁹ Մասնավորապես տե՛ս Միրունյան Կ., Հայ քաղաքական մտքի պատմությունից, Երեւան, 2002, էջեր 37-46:

- պետական միասնական, համակարգված գաղափարախոսության անհրաժեշտությանը՝ որպես ազգային ընդհանուր խնդիրների ու շահերի շուրջ բոլոր խավերի համախմբման եւ միասնության ամրապնդման երաշխիք:

Անկախ տարաբնույթ մեկնաբանություններից ու կարծիքներից, որոնց անդրադարձն այլ ուսումնասիրության նյութ է, ժամանակաշրջանի քաղաքագիտական իրական բնութագիրն այն էր, որ «**Հայաստանում զրադաշտականության բռնի ներմուծման քաղաքականությունը եւ Հայաստանի դիմակայությունը փաստորեն ոչ միայն կրոնական գաղափարախոսության տարբեր ձևերի, այլև աշխարհայացքի, մշակութային արժեհամակարգի եւ հոգեմտավոր կողմնորոշման երկու ձևերի բախման բնույթ ստացավ: Այս պայքարում Հայաստանը հանդես էր գալիս իբրև հելլենիստական ավանդույթների կրող ու պաշտպան, որպես հելլենիստական մշակութային աշխարհի ներկայացուցիչ**⁸⁰: Ավելին, Սասանյան Պարսկաստանի նվաճողական քաղաքականության հետեւանքով III դարի երկրորդ կեսին Հայաստանի մեծ մասը գտնվում էր օտարների հսկողության տակ: Հայկական պետականությունը կրկին հայտնվել էր կործանման եզրին, ինչն առաջադրեց պետական ինքնիշխանության եւ ազգային ինքնության պահպանման պատմական խնդիրը»⁸¹: Պատմական իրողությունն այն է, որ այդ խնդրի լուծման գործում բացառիկ դեր վերապահվեց 301թ. քրիստոնեությունն իբրև պետական կրոն հռչակելուն՝ որպես համախմբող, պետականությունը պահպանող ու ամրապնդող առաջադիմական կրոնագաղափարական գործունի: Նոր արժեհամակարգային կողմնորոշումը գաղափարախոսական անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց ազգային-պետական միասնական քաղաքականություն մշակելու եւ իրականացնելու, հոգեուր-գաղափարական գործունը սոցիալական տարբեր խավերի համախմբման գործը միջոց դարձնելու, երկրի ինքնիշխանությունն

80 Ինչպես գրում է Կ. Ամատունին՝ «Հայաստան՝ երկու ընդդիմադիր մեծ կայսրութեանց բախումէն կայծի մը նման ժայթքած՝ դժխեմ ճակատագիրն ունեցավ անոնց մրցակցության միջեւ արիանալու, Իրանական Արեւելքի եւ Զոռմէական Արեւմուտքի միջեւ» (Կ. Ամատունի, Աղդեցութիւն Յուստինեան-Զոռմէական օրինաց Հայկական իրաւունքին վրայ եւ աստիճան այդ ազդեցության // Բազմավէպ, 93 (1935) էջ 132):

81 Նույն տեղում, էջ 38:

ամրապնդելու, «Հայաստան աշխարհիս փրկության դարձը» երաշխավորելու համար: Անտարակույս է, որ Տրդատ թագավորը՝ ոչ միայն քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով, այլև մեծ ջանքեր գործադրելով դրա տարածման ու արմատավորման համար, առաջին հերթին հետապնդում էր ազգային պետականության ամրապնդման նպատակ: Ինչպես նշում է Նիկողայոս Ադոնցը՝ «Հայաստանը երեսը դարձրեց դեպի արեւմուտք այն օրից, երբ քրիստոնեացավ...: Չուլման եւ կորստյան վտանգը կախված էր Հայաստանի վրա: Ուրիշ հնար չկար փրկության, քան ապավինել քրիստոնեության»⁸²: Ուշադրության է արժանի նաեւ օտար հեղինակներից պրոֆ. Կոհլերի ընդհանրացումը. «Ահա մեր առջեւն ազգ մը՝ որ կալկասեան անկախութենէ քաղաքակրթեալ իրաւանց վիճակի անցավ, երբ վերջին աստիճանի զարգացեալ կրօն մը ընդունեցաւ հանդերձ իրաւամբք՝ որ անոր մեջ կային: Չափազանց չենք խօսիր, եթէ ըսենք, թէ միայն այս իրաւանց մոտ գտնելովն Հայը կրցաւ՝ օտար աշխարհի մեջ՝ իբր սեպհական քաղաքակրթութիւն ունեցող՝ աշխարհի դեր կատարել»⁸³: Իսկ Յ. Ասատուրեանը պրոֆ. Կարստի «Ուրվագիծ հայկական իրաւագիտութեան պատմութեան» աշխատության առնչությամբ նշում է, որ «Պատմութեան եւ իրաւագիտութեան համար շատ մեծ կարեւորութիւն ունեցաւ այն՝ որ երկրին ի քրիստոնեութիւն դարձը ազգային անգոր շրջանի մը մեջ կատարուեցավ»⁸⁴:

Իր ուսումնասիրությունների արդյունքում պրոֆեսոր Հ. Հովսեփյանը նույնպես եզրահանգում է, որ «Հայկական իրավա-քաղաքական մտքի զարգացման համար մեծ նշանակություն է ունեցել քրիստոնեության տարածումը եւ IV դարի սկզբում նրա՝ որպէս պետական կրոն ընդունումը»⁸⁵:

⁸² Նիկողայոս Ադոնց, Հայկական հարց, Երեւան, 1996, էջ 148 (Հարկ է նշել, որ արեւմուտքը քրիստոնեացավ ըստ էության ավելի ուշ):

⁸³ Գոլեր [Կոհլեր], Իրաւունք Հայոց, Վիեննա, 1890, էջ 14 (ընագրով 1888թ. համեմատական իրավաբանության հանդեսում տպագրված նյութը վերնագրվել է՝ Dr. I. Kohler. Das Recht der Armenier):

⁸⁴ Յ. Ասատուրեան, Պրոֆ. Կարստի Ուրվագիծ հայկական իրաւագիտութեան պատմութեան, // Բազմավեպ, 65 (1907), էջ 109:

⁸⁵ Овсеян О.А. и др.: Политико-правовая мысль Армении //История политических и правовых учений: средние века и Возрождение. М., 1986, էջ 109:

Ողջ Հայաստանի համար ծանր ու դժվարագույն խնդիր էր հին մտայնության հաղթահարումը եւ նոր արժեքային կողմնորոշիչներին անցումը: Փափստոս Բուզանդը նկարագրելով IV դարի առաջին կեսին վերափոխվող, քրիստոնեական արժեքներն արմատավորող, անցումային շրջանում գտնվող հայ իրականության ցավոտ կողմերը, վկայում է. «Ատելություն ու նախանձ իրար դեմ, չարակամություն, թշնամություն, դիսակալություն, իրար խաժատել, ընկերին եւ եղբորը նենգել, սիրելիները սիրելիներին, մերձավորները մերձավորներին, ընտանիքներն ընտանիքներին, ազգականներն ազգականներին, խնամիները խնամիներին դավեր էին սարքում: Այնտեղ մարդիկ ծարավ էին մեկը մյուսի արյունը խմելու, ճիգ էին թափում իրար վնասելու, անուղղա վարքի եւ անխելքության պատճառով»⁸⁶: Այս իրականության հաղթահարման, հույսի, հավատի ու համերաշխության հաստատման բեռը ծանրացել էր թե՛ պետության եւ թե՛ եկեղեցու ուսերին:

Նման իրողությունների պայմաններում չափազանց հետաքրքիր է Գրիգոր Լուսավորչին **համաժողովրդական հավանությամբ** հոգևոր առաջնորդ կարգելու հանգամանքը: Ինչպես վկայում է Ազաթանգեղոսը՝ «...Տրդատ թագավորը իր կին՝ Աշխեն տիկնոջ ու իր քույր Խոսրովիդուխտի համաձայնությամբ հրաման տվեց իր ամբողջ զորքերը միատեղ ժողովի կոչել: Ամեն կողմից, ըստ հրամանի, շուտափույթ հասան նշանակված վայրը՝ Վաղարշապատ քաղաքն Այրարատ գավառում: Թագավորն էլ ճամփա ընկավ այնտեղ հասնելու: Ամբողջ զորքը առհասարակ կուտակվեց՝ մեծամեծներ, կուսակալներ, գավառապետներ, պատվավորներ, պատվականներ, զորականներ, պետեր, իշխաններ, նախարարներ, ազատներ, դատավորներ ու զորագլուխներ հասան, ներկայացան թագավորին:

Թագավորը ամենքի հետ խորհուրդ արեց, որ փութան, հասնեն բարի գործերի ժառանգորդ դառնալու: Եկեք, ասում է, փութանք Աստծու կողմից մեզ տրված կյանքի առաջնորդին՝ Գրիգորին հովիվ դարձնել, որպեսզի մկրտությամբ լուսավորի եւ վերանորոգի մեր արարիչ Աստծու օրէնսուսոյց խորհրդով»⁸⁷:

Այս վկայության մեջ ուշադրության են արժանի հետևյալ հանգամանքները.

86 Փափստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 55:

87 Ազաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983թ., էջ 445:

- գրաքարյան «հրաման ետ ի ժողով կոչել միաբանութեամբ ամենայն զօրաց իրոց» արտահայտությունը, երբ բառացի թարգմանաբար ներկայացվում է «հրաման տվեց իր ամբողջ զորքերը միատեղ ժողովի կոչել» տեսքով, իմաստային լուրջ աղավաղում է բովանդակում: Տեքստի հետագա շարադրանքից էլ պարզ է դառնում, որ խոսքը թագավորին զորակցողներին ի մի բերելու եւ միաբանությամբ որոշում կայացնելու մասին է, այլ ոչ թե զորուժի հավաքի,

- թագավորն «ամենքի հետ խորհուրդ առնելով» է ցանկանում «Գրիգորին հովիվ դարձնել»՝ երաշխավորելու համար այս կարեւորագույն հարցում հասարակական համաձայնության կայացումը,

- ծնվում է նոր երեսույթ՝ ի դեմս ազգային-եկեղեցական ժողովների, որոնք հետագա հարյուրամյակների ընթացքում վճռական դերակատարություն են ունեցել մեր ինքնության որակների արժեհամակարգային հստակեցումների, հասարակական համաձայնությամբ կյանքի հիմնական կանոններն ու սկզբունքները սահմանելու, դրանց իրականացումը երաշխավորելու գործում:

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելով՝ պետականորեն ընդունվում էր ոչ միայն քրիստոնեության դավանաբանական դոկտրինը, այլև ողջ արժեքային համակարգը, որի մեջ առանձնահատուկ տեղ ունի **քրիստոնեական իրավամտաժողովույնը**: Վերջինիս մանրամասները նույնպես ինքնուրույն հետազոտության առարկա են⁸⁸: Կփորձենք քննության առարկա նյութի շրջանակներում ընդհանրական ձեռով ներկայացնել քրիստոնեական իրավընկալման հայեցակարգային հիմնական բնութագրիչները՝ հետագայում հայ իրականության մեջ դրանց իրացումը բացահայտելու նկատառումներով:

Աստվածաշնչյան ողջ նյութի՝ Հին ու Նոր կտակարանների «օրենսդրական», պատմական, խրատական, մարգարեական գրքերի, Կենաց Գրքից մինչև Հովհաննու Հայտնություն, «աստվածաշնչյան իրավունքի» հիմնարար սկզբունքների ուսումնասիրությունը վկայում է, որ.

1. Բոլոր տիպի հարաբերությունների առանցքը մարդն է, որին Աստված պարգևել է իր պատկերն ու նմանությունը՝ անանց ար-

⁸⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս Պապայան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները /գիտ. խմբ.՝ Գ.Գ. Հարությունյան/, Մ.Ա.Ս. Էջմիածին, 2002:

ժեքների մի համակարգ, որոնք անօտարելի են մարդուց, նրա գոյի բովանդակությունն են, եւ դրանց բռնանալը հակամարդկային, հակաիրավական ու Աստծուն հակառակ գործել է նշանակում: Քրիստոնեական իրավամտաճորության հայեցակարգային հիմքը մարդու աստվածակերպությունն է⁸⁹, որի համատեքստում են մեկնաբանվում նաեւ մարդու իրավունքներին, հասարակական համակեցությանը, պետության դերին, իշխանության բնույթին, քաղաքական համակարգին ու, ընդհանրապես, իրավական ցանկացած հարաբերությանը վերաբերող սկզբունքներն ու գործնական մոտեցումները:

2. Օրենքի հիմքն աստվածային իրավունքն է, այդ օրենքներն են իրավական օրենքներ⁹⁰: Քրիստոնեական իրավընկալման բանաձեւն այն է, որ իրավունքը գիտություն է բարու եւ արդարի մասին, որոնք իրենց հերթին աստվածային բնույթ ունեն, քանզի Աստված է իրավունքի աղբյուրը: Առաջ քաշելով օրենքի ու դրա իրավական բովանդակության համապատասխանության հիմնախնդիրը⁹¹, «օրենքների ոգին» համարելով պոզիտիվ օրենսդրության հիմք⁹², կարեւորելով «...մարդու բնությանը ներդաշնակ, ըստ մեր բանական հոգու հաճության» օրենքներ ունենալու անհրաժեշտությունը⁹³, իրավունքը դիտարկելով որպես «բացարձակ հասկացության, ինքնագիտակցված ազատության առկա եղելություն»⁹⁴, գտնելով, որ բնական իրավունքը բխում է հենց մարդու աստվածաստեղծ էությունից, որը եւ նրան մղում է փոխադարձ առնչությունների⁹⁵, իրավունքը բնորոշելով որպես «մարդկության համաշխարհային պատմության մեջ ազատության մաքնմատիկա»⁹⁶ իրավափիլիսոփայական միտքը դարերի

89 Ինչպես ժամանակին դիպուկ բանաձեւել է Դավիթ Անհաղթը՝ «**Փիլիսոփայությունը Աստծուն նմանվելն է ըստ մարդկային կարողության**» (Դավիթ Անհաղթ, երկեր: Երեւան, 1999թ., էջ 45):

90 «Ով պահանջում է, որ տիրի օրենքը, նա պահանջում է, որ տիրի միայն աստվածությունն ու բանականությունը» // Аристотель. Соч. в 4 тт. Т. 4, էջ 481:

91 Արիստոտել, Աթենական հասարակարգը: Երեւան, 2003, էջեր 26-27:

92 Монтескье Ш. О духе законов // Монтескье Ш. Избр. произведения. М., 1955, էջ 159:

93 Որոգայթ փառաց, Երեւան, 2002, էջ 71:

94 Гегель Г. Философия права. М., 1990, էջ 90:

95 Гроций Гуго Де Гроот. О праве войны и мира // Антология мировой правовой мысли. Т. III. М., 1999, էջեր 21-26:

96 Ներսեսյանց Վ.Ս., Ցիվիլիզմի մանիֆեստը, Երեւան, 2001, էջ 21:

ընթացքում աստիճանաբար հանգեց այն ընդհանրացմանը, որ իրավունքի գերակայության երաշխավորումն անկյունաքարային արժեք է քաղաքացիական հասարակության կայացման համար:

3. Քրիստոնեությունն առաջադրեց իրավունքի հաստատման, պետական իշխանության կառուցման, «միջմարդկային» հարաբերությունների կազմակերպման աստվածատուր սկզբունքները, որոնք չպետք է կտրվեն իրենց նախասկզբից, աստվածային էությունից՝ ինքնաժխտման ու այլակերպման չարժանանալու համար: Իսկ դա հնարավոր է, եթե մարդիկ իրենց արածն ու անելիքը չափում ու կշռում են մնայուն արժեքներով՝ հետևելով աստվածային պատվիրաններին («Ես եմ քո Տէր Աստվածը, [...] Ինձնից բացի այլ աստվածներ չպիտի լինեն քեզ համար» - Ելից 20:3, «Քեզ կուռքեր չպիտի կերտես: Չպիտի երկրպագես ու չպիտի պաշտես դրանց» - Ելից 20:4-5, «Քո տէր Աստծու անունն զուր տեղը չպիտի արտասանես» - Ելից 20:7, «Եօթներորդ օրը քո Տէր Աստծու շաբաթ օրն է: Այդ օրը դու ոչ մի գործ չպիտի անես...» - Ելից 20:10, «Պատուիր քո հօրն ու քո մօրը» - Ելից 20:12, «Մի՛ սպանիր» - Ելից 20:13, «Մի՛ շնացիր» - Ելից 20:14, «Մի՛ գողացիր» - Ելից 20:15, «Մուտ վկայություն մի՛ տուր» - Ելից 20:16, «Այն ամենի վրայ, ինչ քո մերձաորինն է, աչք մի՛ ունեցիր» - Ելից 20:17):

Իրավունքների դրսևորման սահմանների հստակեցումը, **չարգելվածի թույլատրելիության սկզբունքի սահմանումը՝** ազատության իրավական հիմք ստեղծելով հանդերձ, հասարակական հարաբերությունների ներդաշնակման առանցքն են դառնում: Մարդկային համակեցության աստվածային սկզբունքներից բխում է, որ պետությունը նույնպես պետք է կառուցված ու կազմակերպված լինի ըստ աստվածային իրավունքի («բնական իրավունքը ենթադրում է նաև բնական պետություն»⁹⁷): Քրիստոնեության անկյունաքարային արժեքների մեջ են ամրագրված բնականոն համակեցության եւ քաղաքացիական հասարակության կայացման հիմնարար սկզբունքները: Ինչպես նշում է Ռ. Պապայանը՝ «Տասը պատվիրանները, որոնք բիբլիական օրենսդրության հիմքն են, հաստատում են այն ճշմարտությունը, որ Աստծո հոչակած իրավունքները համընդհանուր են եւ վասարաչափ են վերաբերում բոլոր մարդկանց, քանի որ մատնանում

97 Ներսեսյանց Վ., Իրավունքի եւ պետության տեսություն, Երեւան, 2001, էջ 75:

են ոչ թե այն անձի իրավունքները, ում հասցեագրված են, այլ նրա շուրջ գտնվող բոլոր մարդկանց նույնանման իրավունքները⁹⁸» («Մի՛ սպանիր»՝ նշանակում է ոչ թե՛ «դու ապրելու իրավունք ունես», այլ՝ «բոլորն ունեն այդ իրավունքը», «Մի՛ շնացիր»՝ նշանակում է, որ բոլոր այլ մարդկանց ընտանիքներն են անձեռնմխելի, «Մի՛ գողացիր»՝ նշանակում է ուրիշների սեփականության իրավունքը ճանաչելու պահանջ)⁹⁹: **Այլոց իրավունքների երաշխավորումն է դառնում անհատի հասարակական վարքագծի կանոնակարգման սահմանը**: Միաժամանակ շեշտադրվում է օրինապահությանն անվերապահորեն հետևելու հրամայականը, որ վերաբերում է բոլորին ու, առաջին հերթին՝ իշխանությամբ օժտվածներին:

4. Պետական իշխանության պատմական զարգացման բոլոր փուլերում կարեւորագույն դեր է վերապահվել օրենքների ու կարգի սահմանմանը, դրանց իրագործմանը եւ օրինականության պահպանմանը: Իրավունքի արդի տեսությունն իշխանությունների բաժանումը եւ հավասարակշռումը դիտարկում է որպես պետական իշխանության իրականացման առանցքային խնդիր: Իշխանությունների երեք թերթի գաղափարը՝ գործառույթների այն նույն տարանջատմամբ, որն առկա է նաեւ մեր ժամանակների պետական տեսության ու պրակտիկայի մեջ, Աստվածաշնչում հստակ ուրվագծված է. «Մեր դատավորը Տէրն է, մեր օրէնսդիրը Տէրն է, մեր թագավորը Տէրն է» (Եսայի 33:22)¹⁰⁰:

5. Քրիստոնեության գաղափարաբանական արժեհամակարգի առանցքը մարդն է, որն իր կյանքը պետք է կառուցի աստվածահաճո իրավական նորմերի ու օրենքների հիման վրա: Այսուհանդերձ, կարեւոր տեղ է հատկացվում նաեւ ժողովրդի ձայնին ականջալուր լինելուն, նրա կարծիքը հաշվի առնելուն («Բոլոր իսրայելացի տղամարդիկ հավաքվեցին, եկան Սամուելի մօտ [...] եւ ասացին նրան «Դու, ահա, ծերացել ես, իսկ քո որդիները քո ճանապարհով չեն գնում: Արդ մեզ վրայ մի թագաւոր դիր, որ մեզ դատաւորութիւն անի...»: Սամուէլն աղօթեց Տիրոջը, եւ Տէրն ասաց Սամուէլին. «Լսիր ժողովրդի ձայնը, ինչ էլ որ նա ասի քեզ...» - Թագ. Ա 8:4): Սակայն

⁹⁸ Պապայան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Երեւան, 2002, էջ 272:

⁹⁹ Նույն տեղում:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 287:

ըստ աստվածաշնչյան մեկնությունների՝ «ներքեւից» ասելիքը չի կարող Աստծուն հակառակ լինել, շրջանցել աստվածային այն պատգամը, համաձայն որի՝ որպէս արդարության սկզբունք շեշտվում է. «Մեծամասնութեանը հետեւելով՝ չար գործերի յետեւից մի՛ ընկիր» (Եւրեւ. 23:2): **Հստակ է, որ ժողովրդավարությունը ժողովրդի կողմից իրականացվող այնպիսի գործողություն է, որի հիմքում ընկած են անփոփոխելի բարձրագույն արժեքները:** Ուշադրության է արժանի, որ ներկայումս մի շարք երկրների սահմանադրություններում ամբողջովա՞ծ է (օր., Գերմանիա, հոդվ. 1, Վրաստան, հոդվ. 7, ՌԴ, հոդվ. 2, 18 եւ այլն), որ մարդու իրավունքները բարձրագույն արժեք են, իսկ **ժողովուրդը** եւ պետությունն իրենց իշխանությունն իրականացնելիս **սահմանափակված են** մարդու իրավունքներով եւ հիմնարար ազատություններով՝ որպէս անմիջական գործող իրավունք:

6. Զրիստոնէությունը մարդու գործելակերպի հիմնական առաքելությունը համարելով դրախտի վերագտնումը՝ նրա գոյը չի տարանջատում հոգեւոր եւ աշխարհիկ ինքնադրսեւորումների: **Նման սեպանջատումն անաստվածության դրսեւորում է:** Զրիստոնէական զաղափարաբանությունն ընդունում է միայն հոգեւոր իշխանության եւ աշխարհիկ իշխանության գործառութային սահմանազատումը՝ **ընդհանուր նպատակ ունենալով մարդու համար աստվածային արժեքներով ապրելու նախապայմանների ապահովումը:**

Իրավամտաժողովրդային զաղափարաբանական բերված մոտեցումները վկայում են, որ քրիստոնէությունը մարդկային հանրության համահավաք գոյի գլխավոր առաքելությունը համարելով մարդու ստեղծարար ներուժի գործադրման անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, դրա համար համակարգային իրավական մոտեցումներ ու լուծումներ առաջադրեց: Զրիստոնէությունը մարդու ինքնաճանաչման որակապէս նոր աստիճան խորհրդանշեց: Այն մարդ-հասարակություն շղթան դիտարկելով միասնական օրգանական կապի մեջ՝ քաղաքացիական հասարակության կազմավորման արժեհամակարգային հիմնաքարը դրեց: «Եկեղեցին, - նշում է Ներսես Մելիք-Թանգյանը,- իբրեւ բարոյական-կրոնական ղեկավարիչ հիմնարկություն, կամայականությունների առաջն առնելու, անձնական քմահաճույք-

ներն արմատախիլ անելու եւ իր անդամներին որոշ ուղղությամբ առաջնորդելու համար, պարտականություն է համարում օրենքով, կանոններով որոշել ամեն մի անդամի հարաբերությունը դեպի եկեղեցին, դեպի միմյանց եւ դեպի այլ անհատներ ու շրջաններ, որոնք եկեղեցուց դուրս են: Այս կերպով սահմանում է ամեն մի անհատի եւ ամբողջությամբ **իրավունքների** սահմանները եւ պարտավորությունների կարգը»¹⁰¹: Հեղինակը շեշտում է նաեւ, որ իրավունքը, մի կողմից, սպաստում է մարդու ազատությունը՝ «թույլ չտալով ուրիշներին ոտնակոխ անելու այդ սրբազան կարգը», մյուս կողմից՝ զսպում է մարդու անհատական քնահաճույքը՝ ուղղված ընդհանուրի բարեկեցության դեմ, նրան պահում է սահմանված նորմերի շրջանակում:

Յանկանում ենք առանձնակի ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ **քրիստոնեությունը մարդկային համակեցության բոլոր կանոնների ու «միջմարդկային» հարաբերությունների հիմքում դրեց գերակա, անբեկանելի, մնայուն արժեքների ամբողջական համակարգ, որն իր իրավագիտական նշանակությամբ սահմանադիր բնույթ ունի**: Ինչպես նշում է Վահան վարդապետ Բաստամյանը Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց»-ի առաջաբանում՝ «Քրիստոնեությունը, ինչպես հայտնի է, մեծ հեղափոխություն է գործում Հայոց ազգի կրոնական, բարոյական, ընտանեկան, հասարակական եւ քաղաքական կյանքի մեջ: Ազգի պետական եւ ժողովրդական կյանքը ստանում են կրոնական ուղղություն. կրոնը եւ եկեղեցին դառնում են «Հիմն ազգութեան» [...]: Եվ ահա եկեղեցին ներգործելով ազգի կյանքի բարոյական, մտավորական, ընտանեկան եւ քաղաքական կողմերի վրա՝ անշուշտ մեծ ներգործություն պիտի ունենար նաեւ «նորա իրաւաբանական կողմի» վրա»¹⁰²: Այդ ազդեցություններն էական են եղել մեր ժողովրդի հետագա ողջ պատմության ընթացքում եւ դրանց ներգործության դաշտում են ձեւավորվել նաեւ հայ սահմանադրական մշակույթի սաղմերը:

101 Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 7:

102 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց /Իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան Ծ. Վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 68:

2.2. ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԳԻՐ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայ պատմագրությունը բազմաթիվ անդրադարձեր ունի ազգային-եկեղեցական ժողովների գումարման հանգամանքներին՝ հիմնական շեշտը դնելով փաստագրական նյութի ներկայացման, դրանց դերի ու նշանակության արժեվորման, պատմական ժամանակաշրջանի վերլուծության ու մի շարք այլ հանգամանքների վրա: Որոշ ուշադրություն է դարձվել նաև այդ ժողովների ընդունած կանոնների ընդհանուր իրավագիտական վերլուծությանը: Այսուհանդերձ, մեծ բաց ենք համարում, որ ազգային-եկեղեցական ժողովների սահմանադիր դերին պատշաճ ուշադրություն չի դարձվել: Բանն այն է, որ հենց այդ ժողովներն են դարձել հայ սահմանադրական մշակույթի ձևավորման հենքը:

Մենք կփորձենք անդրադառնալ տվյալ հարցին՝ կարևորելով վերջին հանգամանքն ու ելնելով հետևյալ չափանիշներից.

ա) որքանով է տվյալ ժողովը «սահմանադիր», հանրային ներկայացուցչական մարմին, ինչպե՞ս է երաշխավորված ժողովի «լեգիտիմությունը»՝ որպես ազգային համաձայնությամբ վարքագծի ընդհանուր կանոն ընդունող մարմին,

բ) որքանով են ընդունված նորմերն իրավական ու համապարտադիր բնույթի եւ ունե՞ն, արդյոք, գերակա, «սահմանագծային» նշանակություն:

Առաջին պաշտոնական ազգային-եկեղեցական ժողովը, ըստ պատմագիրների վկայության, Աշտիշատի ժողովն էր 365 թվականին՝ Ներսես Մեծի նախագահությամբ եւ հոգեւորականների ու աշխարհականների մասնակցությամբ¹⁰³: Վերջին հանգամանքը նկատի ունենալով՝ Մելիք-Թանգյանը շեշտում է, որ «...այս փառավոր սկզբունքը մնաց իբրեւ հիմնական կետ մեր պատմության մեջ հետագա դարերի բոլոր ժողովներում. մինչեւ անգամ ոչ թե կարգադրական, սպա դավանաբանական հարցեր որոշող բոլոր մեր ժողովներում մասնակցել են աշխարհականները: Շեշտելի է այս սկզբունքն այն տեսակետից, որ մյուս եկեղեցիները կարող են նախանձով նայել այս

¹⁰³ Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 313:

բանի վրա եւ ձգտել նույն դրությամբ հասնել, քանի որ եկեղեցի ասելով հասկանում ենք հավատացյալների ժողով, որը երկու դասակարգի մասնակցությամբ միայն կարող է վճռել բոլոր եկեղեցական հարցերը եւ խնդիրները»¹⁰⁴:

Պատմագրությունը վկայում է նաեւ, որ «Ժողովների միջոցով եկեղեցական հարցեր վճռելը սկսվեց առաքելականների ժամանակ. առաջին անգամ ժողովվեցին նրանք եւ որոշեցին թույլ չտալ քրիստոնյաներին կատարելու մովսիսական ծեսերը (թլպատություն...)»¹⁰⁵: Նման տիպի ժողովների ի հայտ գալը՝ որպէս ընդհանուր քրիստոնեական երեւույթ, **հայ իրականության մեջ դրսևորվեց այն էական առանձնահատկությամբ, որ քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը (կամ ինչպէս նշում է Մելիք-Թանգյանը՝ «Հայոց աշխարհը եղավ առաջինը, որ քրիստոնեությունը դարձրեց քաղաքացիական կրոն»¹⁰⁶) անհրաժեշտաբար պահանջ առաջադրեց. հոգևոր ու աշխարհիկ կանոններն ընդհանուր սկզբունքներից բխեցնել, քաղաքացիական օրենքներով նպաստել քրիստոնեության տարածմանը, իսկ եկեղեցական կանոնները պարտադիր դարձնել բոլոր քրիստոնյա հպատակների համար՝ իբրև քաղաքացիական օրենքներ**: Պատմագիրների վկայությամբ՝ Աշտիշատի ժողովի որոշումները նույնպէս ուղղված էին քրիստոնեության ամրապնդմանը եւ երկիրը քայքայումից վերկելուն:

«Աշտիշատի ժողովը պաշտոնական կանոններ սահմանող ժողովների հիմքն է դնում Հայաստանում»¹⁰⁷ (ընդգծումը մերն է - Գ. Հ.): Հետագա դարերի ընթացքում նույնպէս հրավիրվում են նման ժողովներ, որոնց մենք կանդրադառնանք: Սակայն ցանկանում ենք հատուկ շեշտել, որ «պաշտոնական կանոններ սահմանող» ժողովները հրավիրվել են բացառիկ, ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում եւ համազգային ներկայացուցչականություն են ունեցել:

Աշտիշատի ժողովի մասին առավել ամբողջական վկայություններ էլ Գավստոս Բուզանդը: Նա գրում է. «Ժողովվեցին Աշտիշատ

104 Նույն տեղում, էջ 314:

105 Նույն տեղում, էջ 307:

106 Նույն տեղում, էջ 308:

107 Տե՛ս նույն տեղում, էջ 313:

գյուղում, որտեղ առաջին անգամ եկեղեցի էր շինված [...]: Բոլորը հո-
 ժարությանը ժողովի եկան եւ օգտակար խորհրդակցություն ունեցան՝
**աշխարհական կարգերը բարեկարգելու, հավատի ընդհանուր կա-
 նոններ սահմանելու:** (Այս ժողովում) **կարգ ու կանոն սահմանեցին,
 կազմակերպեցին եւ Հայոց աշխարհի բոլոր ժողովուրդը դարձրին
 իբրեւ վանականների մի ընդհանուր միաբանություն, բացի ամուս-
 նությունից»**¹⁰⁸ (ընդգծումը մերն է - Գ. Հ.): Ուշադրության է արժանի
 «(Այս ժողովում) կարգ ու կանոն սահմանեցին, կազմակերպեցին եւ
 Հայոց աշխարհի բոլոր ժողովուրդը դարձրին իբրեւ վանականների
 մի ընդհանուր միաբանություն...» արտահայտության գրաբարյան
 բնագիր տարբերակը՝ «Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին
 կանոնեցին յարիկեցին, եւ արարին զամենայն ժողովուրդս երկրին
 Հայոց իբրեւ կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի...
 »¹⁰⁹: Այս ժողովի արդյունքները Փավստոս Բուզանդի բնորոշմամբ՝
«Կարգեցին, կազմեցին, կանոնեցին, օրինեցին»¹¹⁰, լավագույնս է
 ներկայացնում Աշտիշատի ժողովի օրինաստեղծ դերն ու սահմա-
 նադիր բնույթը, ինչն աշխարհաբար թարգմանության մեջ («կարգ ու
 կանոն սահմանեցին, կազմակերպեցին...») նեղացվելով ավելի շատ
 վարչա-կազմակերպչական գործառույթ է դառնում: Նշված հաս-
 կացությունները (կարգեցին, կազմեցին, կանոնեցին, օրինեցին) հայ
 միջնադարյան հուշամատյաններում բնորոշել են իրավաստեղծ գոր-
 ծունեության տեսակներ, հարաբերությունների կանոնակարգում,
 վարքագծի կանոնների սահմանում: Սակայն առանձնահատուկ դեր
 են ունեցել ազգային-եկեղեցական ժողովները, որոնց ընդունած կա-
 նոնները համընդգրկուն բնույթ ու գերակայող, «սահմանագծային»
 իրավական ուժ են ունեցել: Այդ առումով, ազգային-եկեղեցական ժո-

108 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն (թարգմանությունը եւ ծանոթագրությունները Ստ. Մալխասյանի), Երեւան, 1987, էջ 119:

109 Սույն տեղում, էջ 118:

110 «Օրինեցին» եւ «յարիկեցին» բառածեւերը՝ կարգ ու կանոն սահմանելու իմաստով, հանդիպում են հայ մատենագրության տարբեր հուշարձաններում: Մասնավորապես, Աբրահամ Կրետացու «Պատմութիւն» աշխատության մեջ ասվում է. «...երկու կարգ օրինեցին եղեգնեայ պարսպէն Խանին մինչեւ ցնետածիգ մի եւ այլ ակելի, զոր ալայ ասեն օսմանցիքն եւ ամենեցուն ձեռքն մեծամեծ թֆանկներն» (ըստ «Հայ դասական մատենագրություն» www.digilib.am, version 1.0 նյութերի):

ղովները համեմատելի են սահմանադիր ժողովների հետ, եւ առանց վարանելու կարելի է եզրակացնել, որ դրանց նախատիպն են հանդիսացել:

Մովսես Խորենացին Աշտիշատի ժողովի առնչությամբ վկայում է. «Յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց մեծն Ներսէս, որդի Աթանազիւնայ, որդոյ Յուսկան, որդոյ Վրթանայ, որդոյ սրբոյն Գրիգորի: Եւ ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, եւ եկեալ ի Հայս՝ զամենայն կարգս ուղղութեան հարցն իւրոց նորոգեաց, այլ եւ առաւել եւս. քանզի զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին, ի սմա նկարագրէ: Ժողով արարեալ եպիսկոպոսաց եւ համալրէն աշխարհականաւք, **կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց** զողորմածութիւն, խլելով եւ զանգթութեանն արմատ, որ բնաբար սովորութեամբ էր յերկրիս մերում»¹¹¹: Խորենացու այս ձեւակերպման հետագա աշխարհաբար թարգմանությամբ, ինչպես նշել ենք, «կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց» բառակապակցությունը ներկայացվել է «կանոնական սահմաններով հաստատեց» տեսքով¹¹², որը, իրավագիտական առումով, գրեթե իմաստագործկարտահայտություն է: Խորենացու բնագրին հավատարիմ վկայությունը՝ «Ժողով արարեալ եպիսկոպոսաց եւ համալրէն աշխարհականաւք, կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց...», անառարկելիորեն ապացուցում է, որ **ի դեմս Աշտիշատի ազգային-եկեղեցական ժողովի՝ մենք գործ ունենք սահմանադրական կանոններ ընդունած ներկայացուցչական բնույթ ունեցող սահմանադիր ժողովի հետ:**

Հակոբ Մանանդյանը, խոսելով Ներսես կաթողիկոսի ու նրա գործունեության մասին, նշում է, որ «Նրա նախագահությամբ տեղի ունեցավ Աշտիշատում առաջին եկեղեցական **օրենսդիր ժողովը** (ընդգծումը մերն է-Գ.Հ.), որի կանոնական որոշումները վերաբերում էին ոչ միայն կրոնական-եկեղեցական խնդիրներին, այլև աշխարհական կյանքին ու հասարակական-սոցիալական հարաբերություն-

¹¹¹ Տեքստի աշխարհաբար տարբերակը տե՛ս Մովսես Խորենացի. Գայոց պատմություն, Ե դար, Երևան, 1997, էջ 225:

¹¹² Նույն տեղում:

ներին»¹¹³: Այստեղ ուշադրությունը դարձվել է ժողովի իրավաստեղծ դերին, այլ ոչ թե նորմների սահմանադրական բնույթին, որը միարժեք բնորոշված է Խորենացու մոտ:

Աշտիշատի ժողովը՝ լինելով առաջինը, հայ իրականության մեջ կարելուր նախադեպ է հանդիսացել նույնիսկ պետականության բացակայության պայմաններում ազգային գործող օրենսդրություն ունենալու համար: Այդ ժողովի իրավիրման նախաձեռնությունն ամբողջությամբ Կաթողիկոսինն էր, որի բարձրագույն որակները՝ ընդհուպ մինչև կաթողիկոս դառնալը, ահա թե ինչպես է բնութագրում Փավստոս Բուզանդը. «Աստծու երկյուղը սրտում ունեն, խստիվ պահպանում էր նրա պատվիրանները, մարդասեր, սուրբ եւ պարկեշտ էր, շատ իմաստուն էր, անաչառ, իրավադատ, հեզ, քաղցր, խոնարհ, աղքատասեր, ամուսնական կյանքում օրինավոր, Աստծու սիրովը լցված»¹¹⁴:

Աշտիշատի ժողովի ավանդույթը լավագույնս զարգացրեց Շահապիվանի ժողովը, որի իրավիրման թվականներ են նշվում 444-447թթ.: Այս ժողովի առնչությամբ Ներսես Մելիք-Թանգյանը նշում է, որ «Շահապիվանի ժողովը հայոց ամենավառավոր ժողովներից մեկն է»¹¹⁵: Շահապիվանի ժողովի ներկայացուցչական կազմը նկարագրված է հետևյալ կերպ. «Եվ հավաքվեցին 40 եպիսկոպոսներ ու բազում քահանաներ, սարկավազներ, նախանձախնդիր ծառայողներ եւ սուրբ եկեղեցու ամբողջ հոգեւորականությունը, բոլոր իշխանները՝ գավառների կառավարիչներ, գավառների ղեկավարներ, զերագույն դատավորներ, գանձապետեր, զորապետեր, հազարապետեր, գեղջավազներ, տարբեր շրջանների ազատներ»¹¹⁶»¹¹⁷: Հստակ է եղել նաև ժողովի իրավիրման նպատակը. «Հայոց աշխարհի ավագ Նախարարները, որոնք օրենքների եւ սրբությունների նախանձախն-

113 Հակոբ Մանանդյան, Երկեր, գիրք Բ, Երեւան, 1978, էջ 164:

114 Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երեւան, 1987, էջ 109:

115 Ներսես Մելիք-Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 319:

116 «Ազատներ» հասկացության ներքո նկատի է առնվել ինչպես պետական հարկերից եւ պարհակներից ազատ խոշոր ֆեոդալ-հողատերերի խավը, այնպես էլ մանր ֆեոդալ-հողատերերինը:

117 Ավագյան Ռ. Հ., Հայ իրավական մտքի գանձարան, Երեւան, 2001, էջ 121:

դիր պաշտպաններն էին, այսպես էին ասում. «Վերականգնեք սուրբ Գրիգորի, Ներսեսի, Սահակի եւ Մաշտոցի սահմանած կարգ ու կանոնը, ինչպես նաեւ ձեր կամքով սահմանեք այլ բարօրություններ, եւ մենք կամավոր ու սիրով կընդունենք, քանի որ թուլացել են եկեղեցու կարգ ու կանոնները, եւ մարդիկ վերադարձել են անօրինություններին: Դուք սահմանեք Աստծուն ցանկալի եւ եկեղեցուն կյանքի կոչելու գործում պիտանի օրենքներ, իսկ մենք կինազանդենք եւ դրանք ամուր կպահենք: Իսկ եթե ինչ-որ մեկը՝ եպիսկոպոս, թե քահանա, ազատ, թե շինական, ճշտությամբ չպահպանի սահմանված օրենքները, թող պատիժ կրի եւ տուգանք մուծի»¹¹⁸: Ի դեպ, ըստ Ներսես Մելիք-Թանգյանի, այս ժողովին մասնակցել են նաեւ բոլոր նախարարները, Վասակ մարզպանը, Վահան հազարապետը, Վարդան Մամիկոնյանը: Շեշտվում է նաեւ, որ «Ամբողջ տիեզերական քրիստոնեայ ժողովների մէջ այսպիսի փառաւոր ժողով չի եղել, ուր մասնակցէին հոգեւորականները իրենց դասերով եւ իշխանները աշխարհական զանազան դասակարգերով»¹¹⁹: Հեղինակը նաեւ ժողովի հրավիրման ու կազմակերպման, դրա դերի ու բնույթի կարեւոր մանրամասների է անդրադառնում: Մասնավորապես, շեշտվում է, որ.

ա) այս ժողովը հրավիրեց եւ նախագահեց կաթողիկոսը,

բ) ինչպես բուն ժողովում, նույնպես եւ «նախընթացում» մասնակցել են հոգեւոր ու աշխարհական «տարբը» «ամեն տեսակ դասակարգերով»,

գ) այս ժողովը **հաստատել է** դրանից առաջ տեղի ունեցած «... բոլոր ժողովները եւ Հայրապետական կանոնները, որոնք մինչեւ այդ օրը ազգի կողմից թէւ ընդունված էին, բայց ժողովական Հաստատութեամբ չէին վաւերացրած» (ուշադրության է արժանի հատկապես այն հանգամանքը, որ այս ժողովը հաստատելով «Նիկայի, Պոլսոյ, Եփեսոսի ժողովների եւ Լուսաւորչի, Ներսէսի, Սահակի, Մեսրոպի եւ ապա Առաքելական կանոնները», երաշխավորում է դրանց լեզիտիմությունը, իսկ ժողովն իրականացնում է վավերացման գործառույթ),

դ) այս ժողովում «...եկեղեցական կանոնները ստանում են քա-

¹¹⁸ Նույն տեղում:

¹¹⁹ Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 320:

դաքացիական օրենքի պարտաւորական ոյժը, պատժի եւ տուգանքի տակ ձգելով օրինազանցներին»,

ե) «Այստեղ սահմանում են մարմնական պատիժներ ամենախիստ աստիճանի մինչեւ անգամ, որ բոլորովին համապատասխան չէ անտարանի ոգուն, եւ որոնք չեն երեսում նոյն ժամանակուայ օտարների կանոններում»¹²⁰:

Չափազանց հետաքրքիր անդրադարձ է կատարում Շահապիվանի ժողովին Հ.Ն. Ակինեանը, մասնավորապես շեշտելով, որ «Առաջին համազգային **Քարեկարգական Ժողովը** պիտի ըլլար այն» - (ընդգծումը մերն է-Գ.Հ.)¹²¹ : «Համազգային քարեկարգական ժողով» հասկացությունը լավագույնս է բնութագրում սահմանադիր ժողովների դերն ու նշանակությունը՝ հատուկ կարեւորելով կանոնակարգվող իրավահարաբերությունների առանձնահատուկ (համազգային) դերն ու նշանակությունը, ինչպես նաեւ շեշտադրելով գործընթացի «քարեկարգական» բնույթը: Հեղինակը հատուկ կարեւորում է նաեւ այն հանգամանքը, որ «Եկեղեցականք եւ Նախարարութիւնք, Ազատք եւ Ռամիկք ոտք կանգնած են խնդրելու Ժողովքէն բարոյական կարգերու վերահաստատութիւն, ի լրութիւն Առաքելական եւ Նիկիական կանոններու. **յանցավորներու դէմ անաչառ դատաստան եւ անողոր դատակնիք տուգանքով իսկ, առանց խտրութեան դասի եւ աստիճանի:**

Աւագ Նախարարաքք, Ազատք եւ Շինականք միաբերան յանձնառու կ'ըլլան Ժողովի բոլոր որոշումներուն»-(ընդգծումը մերն է-Գ.Հ.):¹²² Հեղինակն արտահայտում է նաեւ իր արդարացի հիացմունքը տվյալ ժամանակաշրջանի հայ իրավագիտակցության վերաբերյալ: Նշված ուսումնասիրությունից ավելի վաղ, 1946 թվականին, նույն հանդեսի տարեվերջյան համարում «Ս. Սահակին վերագրված կանոնները» մատենագիտական վերլուծության մեջ Հ. Ն. Ակինեանը համարում է, որ Շահապիվանի ժողովը «Առաջին եկեղեցական **սահմանադիր ժողովն էր**»-(ընդգծումը մերն է-Գ.Հ.), իսկ այդ ժողովի

120 Նույն տեղում, էջ 321:

121 Հ.Ն. Ակինեան, Շահապիվանի ժողովի կանոնները: Մատենագրական ուսումնասիրություն: Առթիւ 1500 ամեայ տարեդարձին (444-1944) // Հանդես ամսօրեայ (Հայագիտական ուսումնաթերթ), թիվ 4, 1949, Մխիթարեան տպարան, Վիեննա, էջ 79:

122 Նույն տեղում, էջ 81:

կողմից ընդունված փաստաթուղթն առանց երկմտելու անվանվում է **Սահմանադրություն**¹²³:

Մենք հետագայում կանդրադառնանք Շահապիվանի ժողովի կողմից ընդունված կանոններին, դրանց սահմանադրաիրավական բնույթին: Այստեղ ցանկանում ենք փաստել այն իրողությունը, որ Շահապիվանի ժողովը ոչ թե եկեղեցական, այլ ազգային-եկեղեցական ժողով էր եւ ուներ համազգային ներկայացուցչական բնույթ: Միաժամանակ, Աշտիշատի ժողովի համեմատ Շահապիվանի ժողովն իր ներկայացուցչական պարագայով ու սահմանադիր բնույթով նկատելիորեն քայլ առաջ էր, որով ավելի **ակնառու է դառնում սահմանադրական նշանակություն ունեցող նորմերի ընդունման, դրանց միջոցով հասարակական համաձայնության միջավայրի երաշխավորման որոշակի մշակույթի ձեւավորման իրողությունը միջնադարյան Հայաստանում:**

V դարի վերջերին հայ իրականության մեջ քննության առարկա հիմնահարցի տեսանկյունից տեղի է ունենում բացառիկ կարեւոր իրադարձություն: Եթե նախկինում ազգային-եկեղեցական ժողովների հրավիրման նախաձեռնողը եղել է եկեղեցին՝ նպատակ ունենալով հանրային կյանքի բոլոր ոլորտները «վերանորոգել», ապա V դարում այդպիսի նախաձեռնություն է դրսևորում Վաչագան քազավորը: Մովսես Կաղանկատվացին հիշատակում է. «Աղվանից արքա Վաչագանի տարիներին աշխարհականների ու եպիսկոպոսների, քահանաների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների միջեւ բազմաթիվ հակառակություններ էին լինում: Արքան կամեցավ մի բազմամարդ ժողով գումարել Աղվենում, որ կայացավ մարերի [մայիս] ամսի տասներեքին»¹²⁴:

Այդ ժողովի արդյունքը եղավ Կանոնական **սահմանադրության** ընդունումը:

123 Զ.Ն. Ակինեան, Ս. Սահակի վերագրված կանոնները: Սատենագրական ուսումնասիրություն // Հանդես ամսօրեայ (Հայագիտական ուսումնասերթ), 60 (1946), էջեր 48-70:

124 Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի /թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, երեւան, 1969, էջ 65:

Պատմագրության կողմից 21 հոդված բովանդակած այդ Սահմանադրության ընդունման ժամկետ է համարվում 488 թվականը¹²⁵:

Ուշադրության արժանի է նաև ընդունված փաստաթղթի վավերականության երաշխավորման ընթացակարգը, երբ Կանոնական սահմանադրությունը եզրափակվում է հետևյալ հոդվածով. «Այս պայմանները թագավորի ներկայությամբ դրեցին եպիսկոպոսներ, քահանաներ, ազնվականներ [...]։ Այս հրամանը մատանիներով կնքեցին արքայի հրամանատար Մուծիկը, պալատի վերակացու Միրհորիկը և տոհմապետեր Մարութը, Տիրազը, Սպարակոսը, Ղաման, Բակուրը, Ռատանը, Արչեսը, Գարդմանա տեր քաջ Վարդանը, Խուրսը, Գերմանոսանը, Խոսկենը, Փիրոզը, Նահապետը, Աղվանքի բոլոր ազնվականները և գրության ավելի վավերական լինելու համար կնքվեց նաև Աղվանքի թագավոր Վաչագանի մատանիով»¹²⁶: «Հրամանը մատանիներով կնքեցին» արտահայտությունը պարզապես վկայում է ընդունված նորմերի համապարտադիր լինելու հանգամանքի վավերացումը: Էական է նաև, որ հասարակական լայն համաձայնության արդյունք հանդիսացող և գերակա բնույթ ունեցող կանոնների վավերականության հարցին նույնպես առանձնահատուկ ուշադրություն է հրավիրվել:

Այս առնչությամբ կցանկանայինք առանձնացնել հետևյալ պարագաները.

1. Հինգերորդ դարի կեսերին հայ իրականության մեջ հասունացել էր այնպիսի միջավայր, երբ հասարակության տարբեր շերտերի միջև առաջացած «...հակառակությունները» փորձ էր արվում լուծել ոչ թե ուժի թելադրանքով կամ վարչարարությամբ (այդ թվում՝ Արքայի հրամանով կամ մահակներով), այլ իրավական ճանապարհով՝ սահմանադրական օրենքի ընդունման միջոցով: Այս հանգամանքն առաջին հերթին վկայում է նախաձեռնության հեղինակի բարձր մտավոր որակների ու իրավագիտակցության մասին, ինչպես նաև՝ այդ որակները հասարակության կողմից ընկալված լինելու և նման միջավայրի հասունացած լինելու մասին:

¹²⁵ Տե՛ս Ռ. Բ. Ավագյան. Հայ իրավական մտքի գանձարան, հ. 1, Երեւան, 2001, էջեր 132-137:

¹²⁶ Մովսես Կաղանկատվացի. Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 69:

2. Փաստորեն Սահմանադիր ժողովի կողմից Սահմանադրության ընդունման՝ իր ժամանակի համար զարմանալիորեն առաջադիմական այս իրողությունը վկայում է, որ հասարակական հարաբերությունների կանոնակարգման հիմքում դրվել են հասարակական համաձայնության սկզբունքները՝ վեր կանգնելով սոցիալական ու այլ բնույթի շերտավորումներից:

3. Կանոնները բնորոշվում են ոչ այլ կերպ, քան **սահմանադրական**՝ դրանց տալով հատուկ կարգավիճակ, ճանաչելով ազգային համաձայնությամբ սահմանված նորմերի գերակայությունը ցանկացած այլ նորմի ու կանոնի նկատմամբ:

Առաջին հերթին ուշադրության է արժանի «սահմանադրություն» հասկացության հաստատվելը հայ իրավական մշակույթում: Ինչպես իրավագիտորեն նշում են Կ. Ղահրամանյանը եւ Վ. Հովհաննիսյանը՝ «Հիշյալ իրավագիտական փաստաթուղթը ոչ միայն անվանումով, այլև իր ընդունման եղանակով ու բովանդակությամբ ընդհանուր եզրեր ունի Սահմանադրության՝ իբրև իրավաբանական փաստաթղթի հետ»¹²⁷:

Ուշագրավ է, որ Ս. Հովհաննիսյանն իր հոդվածներից մեկը վերնագրել է. «Աղվենի **սահմանադիր ժողովի** կանոնները եւ նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ» (ընդգծումը մերն է- Գ.Հ.): Հեղինակը քննարկելով Աշտիշատի, Շահապիվանի եւ Աղվենի ժողովներում ընդունված կանոնների ընդհանրությունն ու տարբերությունները, հիմնական ուշադրությունը դարձնելով Աղվենի ժողովի հրավիրման ժամանակի ճշգրտման վրա, չի անդրադարձել ժողովի սահմանադիր բնույթի հիմնավորումներին: Սակայն հատուկ շեշտելով արքայի կողմից ու նրա ամառանոցում ժողովի հրավիրման պարագան, ինչպես նաև ուշադրություն հրավիրելով «Աղվենի ժողովի հրավիրման մեթոդի» եւ հասարակության ներսում ի հայտ եկած հակասությունները հարթելու «ուրույն ճանապարհի» վրա, անվերապահորեն այդ ժողովը որակում է որպես սահմանադիր ժողով¹²⁸:

¹²⁷ Ղահրամանյան Կ., Հովհաննիսյան Վ., 1500-ամյա հայկական Սահմանադրությունը. ընդունման հանգամանքները եւ մշակակությունը, Երեւան, 1999, էջ 17:

¹²⁸ Հովհաննիսյան Ս., Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները եւ նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ // Պատմա-բանասիրական հանդես, 1967, N 4, էջ 274:

Հետաքրքիր է նաև, որ իրավագիտության դոկտոր Արսեն Գլտճ-
յանի խմբագրությամբ 1913թ. Թբիլիսիում հրատարակված «Կա-
նոնագիրք Հայոց» արժեքավոր ժողովածուում Աղվենի ժողովում
ընդունված կանոններին անդրադարձն սկսվում է հետևյալ վեր-
տառությամբ. «Կանոնք Աղուանից», այնուհետև գլխատառերով ու
ընդգծված ավելացվում է. «ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ»¹²⁹:

Նպատակ չունենալով անդրադառնալ հիշատակված ժողովների
հրավիրման ժամկետներին, մասնակից անձանց, տարաբնույթ հա-
րաբերություններին առնչվող պատմական մանրամասներին, ցան-
կանում ենք սահմանադրագիտական չափանիշների տեսակետից
կատարել հետևյալ ընդհանրացումները: Բերված պատմական վկա-
յություններից հետևում է.

1. թե՛ Աշտիշատի, թե՛ Շահապիվանի եւ թե՛ Աղվենի ժողովները
հրավիրվել են հասարակական հարաբերությունների կանո-
նակարգման, առաջացած «հակառակությունների» իրավա-
կան կարգավորման նպատակով,
2. այդ ժողովներն ունեցել են համազգային ներկայացուցչական
պարագա, եղել են հրապարակային,
3. որոշումներն ընդունվել են ազգային համաձայնությամբ՝ երկ-
րում փոխըմբռնման ու համաձայնության մթնոլորտ ստեղծե-
լու ակնկալիքով,
4. այդ որոշումներն իրենց «լեգիտիմության» աստիճանով ու
իրավական ուժով գերակա են եղել բոլոր այլ որոշումների
նկատմամբ,
5. ընդունված կանոններն իրենց բնույթով ու իրավական նշանա-
կությամբ ունեցել են հիմնադիր, իրավական, կազմակերպա-
կան գործառույթ, գաղափարաբանական հստակ ուղղվածույթ-
յուն՝ ինչը բնորոշ է սահմանադրական նորմերին, վերաբերել
են հանրային կյանքի՝ տվյալ ժամանակի համար առավել
կարևոր հիմնախնդիրներին ու հարաբերություններին:

¹²⁹ Կանոնագիրք Հայոց/ Դուկասեան մատենադարան, խմբեց Արսէն
Գլտճեան, Թիֆլիզ, 1913, էջ 192:

Հետետությունը միանշանակ է. ի դեմս հիշատակված ժողովների՝ գործ ունենք **սահմանադիր** ժողովների հետ:

Ցանկանում ենք ավելացնել նաև, որ սահմանադիր ժողովների հրավիրման ավանդույթը հայ իրականության մեջ շարունակական բնույթ է ունեցել: Այդպիսին են եղել նաև Դվինի (VI, VII դդ.), Պարտավի (VIII դ.), Սիսի (1243թ.), Չագավանի (1268թ.), Երուսաղեմի (1651թ.) ժողովները¹³⁰: Հետաքրքիր վկայություններ կան նաև 1204թ. Սիսի ժողովի մասին, որի որոշումները մերժվել են, քանի որ ժողովը «լեզհախմ» չի համարվել, չի ունեցել ազգային-եկեղեցական անհրաժեշտ ներկայացուցչական պարագա¹³¹: Իսկ ահա Սիսի 1243թ. ժողովի կանոնների վավերականությունը եւ համապարտադիր բնույթն ապահովելու համար ընդունված 25 կանոնները՝ Կաթողիկոսի կից գրությամբ, ուղարկվում են բոլոր հայ եպիսկոպոսներին ու իշխաններին՝ դրանց կատարումը երդմամբ երաշխավորելու եւ ստորագրությամբ վավերացնելու պահանջով: Բոլորի կողմից այն անվերապահորեն իրականացվում է¹³²:

130 Արսեն Ղլտճյանի դասակարգմամբ Հայոց կանոնախմբերը հետեյալներն են. «1. Ս. Գրիգորի առաքելոց Հայոց, 2. Աշտիշատի ժողովի (365թ.), 3. Ս. Սահակայ Հայոց Հայրապետի, 4. Շահապիվանի ժողովի (447թ.), 5. Յովհաննու Մանդակունույ (480-487թ.), 6. Կարնոյ ժողովի (510-515թ.), 7. Ներսեսի Հայրապետի եւ Մամիկոնեից Ներշապուհ եպիսկոպոսի (554թ.), 8. Ներսեսի Հայոց կաթողիկոսի (VI դար), 9. Դունայ ժողովի (649), 10. Վերջնոյ Սահակ կաթողիկոսի (677-703), 11. Յովհաննու Իմաստասերի (Դունի 719թ. ժողովի), 12. Մանազկերտի ժողովի (727), 13. Պարտավի ժողովի (768թ.), 14. Սիսի ժողովի (1243թ.), 15. Երուսաղեմի ժողովի (1651թ.)» (տե՛ս Կանոնագիրք Հայոց, Թիֆլիզ, 1913, առաջաբան, էջ Բ):

Իր հերթին, Լեւոն Մելիքսեթ-Բեկը նշում է. «Հարկ է նկատի ունենալ, որ իրավունքի պատմության տեսանկյունից հայկական հիշյալ բոլոր ժողովներից մեծ նշանակություն կարող են ունենալ միայն նրանք, որոնց հիման վրա մշակվել են կանոնական որոշումներ, մասնավորապես, եկեղեցա-իրավական բնույթի օրենքներ: Այդ մասին կարելի է դատել Աշտիշատի, Շահապիվանի, Դվինի, Կարինի, Մանազկերտի, Պարտավի եւ այլ ժողովների ընդունած նյութերից» (Меликсет-Бек Л. Об источниках древнеармянского права // Известия Кавказского историко-археологического института. Тифлис, 1917-1925, N 11, էջեր 156-157):

131 Տե՛ս Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 448, ինչպես նաև՝ Մխիթար Գոշ. Դատաստանագիրք Հայոց /Իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան ծ. Կարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջեր 87-89:

132 Տե՛ս Торосян Х., Суд и процесс в Армении в X-XIII вв., Ереван, 1985, էջ 33:

Ուշադրության արժանի վկայություններ կան Պարտավի (771թ.) ժողովի հրավիրմանն առնչվող նրբերանգների մասին. «Դուինում չկարողացանք ժողով անել բարբարոսների պատճառով, գնացինք Պարտաւ Աղուանից մայրաքաղաքը, ուր մասնակից եղան ժողովին Աղուանից կաթողիկոս Դաւիթը եւ նրանց իշխանները. **ժողովում միաձայնութեամբ կարգեցինք հետեյալ կանոնները առաջնորդների եւ նրանց ժողովրդի բարեկարգութեան համար**»¹³³ (ընդգծումը մերն է - Գ.Հ.):

Դվինի (648թ.) ժողովի առնչությամբ հիշատակվում է, որ «Ներսէս Գ. [...] ժողով գումարեց եպիսկոպոսների եւ նախարարների մասնակցութեամբ, մշակելու նախ՝ այն պատասխանը, որ պիտի ուղարկէին Պօլիս կայսրին եւ պատրիարքին¹³⁴, երկրորդ՝ կազմելու դաւանաբանական ձեռնարկ փաստական պատճառաբանութեամբ, եւ երրորդ՝ իբրեւ ուղեցույց՝ հաւատոյ ձեռնարկ սահմանելու բոլոր հայերի համար, որպէս զի բոլորի համար պարզ լինի հայոց դաւանութիւնը եւ նրա տարբերութիւնը յունականից»¹³⁵:

Պատմական որոշ զուգահեռներ անցկացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ շատ երկրներում «սահմանադրություն» ընդունելու իրավասությունը պարզապէս վերապահվում էր թագավորին, որն իր հրամանով սահմանում էր վարքագծի գերակա կանոններ: Տիպական է, օրինակ, Իտալիայի թագավոր Ֆրիդրիխ Երկրորդի 1231թ. Սահմանադրությունը, որի առնչությամբ թագավորը պարզապէս հրամայում է, որ իր կողմից սահմանված կանոններն անվերապահորեն կատարվեն բոլորի կողմից¹³⁶: Անկախ կանոնների բովանդակային ընդգրկումից, էական է այն հանգամանքը, որ գործ ունենք «վերեւից» դրանց հարկադրման, այլ ոչ թե հասարակական համաձայնության իրողության հետ:

¹³³ Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսէս Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 426:

¹³⁴ Խոսքը վերաբերում է Հունաց կայսրի եւ պատրիարքի նամակների՝ ուղղված Ներսէս կաթողիկոսին ու Թեոդորոս Ռշտունուն, որոնցով հորդորում են սիրով լինել հույների հետ, վերջ տալ թշնամական ցույցերին, որոնք դրսեւորվում էին հայերի կողմից՝ Դվինում գտնվող հունաց զորքերի նկատմամբ:

¹³⁵ Նույն տեղում, էջ 391:

¹³⁶ Տե՛ս Антология мировой правовой мысли, т. II, М., 1999, էջեր 492-495:

Անկախ այն բանից, թե պատմական ինչ իրողությունների պարագաներում են գումարվել ազգային-եկեղեցական ժողովները Հայաստանում, եւ ընդունված որոշումները որքանով են արտացոլել հանրային կյանքի առկա իրողությունները, ակնհայտ է այն ճշմարտությունը, որ **դրանք դարձել են հասարակական համաձայնության կայացման ամբիոն եւ բացառիկ են եղել այդ ժողովների համախմբող, կանոնակարգող, ազգային միաբանություն ու համերաշխություն ապահովող, օրենքի, կարգի ու կանոնների նկատմամբ հասարակական անհրաժեշտ վերաբերմունք ձևավորող դերն ու նշանակությունը:** Այդ որոշումներն ու կանոնները, սնվելով հանրային կյանքի կոնկրետ իրողություններից, իրենց հերթին արմատավորել են նաեւ սովորութային կայուն նորմեր ու ավանդույթներ, որոնք մեծ դեր ու նշանակություն են ունեցել մեր ժողովրդի պատմական ճակատագրում: Ավելին, պետականության կորստի պայմաններում նույնպես այդ ժողովների որոշումներն ունեցել են գործող Սահմանադրության՝ հանրային կյանքը կանոնակարգող գերակա **ազգային իրավական նորմերի նշանակություն:**

Եվրոպական իրավական միտքը ներկայումս փաստում է, որ Սահմանադրությունը ոչ այնքան պետության հիմնական օրենքն է, որքան քաղաքացիական հասարակության գերագույն իրավական փաստաթուղթը: Մենք այս հարցին հետազայում նույնպես կանդրադառնանք: Սակայն սահմանադիր ժողովների ու դրանց ընդունած որոշումների առնչությամբ տեղին է ընդգծել, որ մենք գործ ունենք այնպիսի իրողության հետ, որ նույնիսկ պետականության կորստի պայմաններում հայ հանրային կյանքը դարեր շարունակ առաջնորդվել է իր կանոնական սահմանադրություններով, որոնք քարացած նախապաշարումների ժողովածու չեն եղել, այլ **մշտապես, ազգային լայն համաձայնությամբ վերանորոգվել են ու դարձել ընդհանուր վարքագծի կանոններ բովանդակող գերակա փաստաթուղթ:** Հատկապես մեր ազգային-քաղաքական ապակենտրոն համակարգի պայմաններում, երբ համեմատաբար թույլ են գտնվել կենտրոնաձիգ ուժերը, իսկ երկպառակությունները մեր պատմության մշտական ուղեկիցն են եղել, առանձնահատուկ կարևորվում է ազգային-եկեղեցական ժողովների ազգային, քաղաքական, իրավական, ընդհուպ՝ պետականագիտա-

կան դերն ու նշանակությունը: Թերեւս, պետականության բացակայության պարագաներում մեր ինքնության որակների պահպանման ու ազգային լինելության հարցում նույնպէս զգալի չափով պարտական ենք նաեւ սահմանադիր ժողովներին ու դրանց կողմից ընդունված կանոններին:

Այսբանից հետո միայն զարմանալ կարելի է, որ XXI դարում նորանկախ Հայաստանի Հանրապետությունում «Հայոց մեծ դարձի 1700-ամյակին» նվիրված հրատարակվում է «Քրիստոնյա Հայաստան»¹³⁷ ավելի քան հազար էջանոց հանրագիտարան, որում ոչ մի խոսք չի ասվում ազգային-եկեղեցական ժողովների սահմանադիր դերի ու կանոնական **սահմանադրությունների** մասին: Դա այն դեպքում, երբ դեռեւս 1837թ. Վենետիկում հրատարակված «Հայկազեյան լեզուի նոր բառգրքում», հղումներ կատարելով քրիստոնեական շրջանի մեր պատմության ակունքներին, տրվում է Սահմանադրության անգերազանցելի բնորոշում:

Նույն ձեռագիրն է ու նույն անթույլատրելի մոտեցումը՝ անհրաժեշտ կարելություն չտալով գրաբարյան հասկացութային ձեւակերպումներին, դրանք պարզ բառային կամայական մեկնաբանման առարկա դարձնելով՝ մի ամբողջ մշակութային երեւոյթ ենք դուրս մղում մեր պատմությունից՝ ի դեմս սահմանադրական մշակույթի, երբ այն պատմական անուրանալի իրողություն է եւ խոր արմատներ ունի:

137 Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան, Երեւան, 2002:

2.3. ԿԱՆՈՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Սահմանադրության՝ որպես երկրի Հիմնական օրենքի, իրավագիտական ցանկացած վերլուծություն առաջին հերթին բացահայտում է դրա հիմնադիր, իրավական, կազմակերպական գործառույթների բնույթն ու դերը, գաղափարաքաղաքական ուղղվածությունը, դրանում ներառված նորմերի սահմանադիր բնույթը: Առանձնահատուկ ուշադրություն է հրավիրվում այն հանգամանքին, որ սահմանադրությունները կյանքի կոչվեցին երեք հիմնական առաքելություն իրականացնելու համար.

1. սահման դնելու պետության, իշխանության կառույցների ու պաշտոնատար անձանց գործառույթներին,
2. սահմանելու իշխանական գործառույթների իրականացման կարգն ու մեխանիզմները,
3. որոշելու մարդու քաղաքական, տնտեսական, սոցիալական ազատությունների սահմանները, երաշխավորելու նրա անօտարելի իրավունքները:

Սահմանադրությունը լինելով առանձնակի կարեւորության իրավաքաղաքական փաստաթուղթ, տվյալ հասարակական հարաբերությունների ամբողջականացված դինամիկ մոդելը, իր հիմքում ունենալով որոշակի սոցիալական հանրության արժեհամակարգային կողմնորոշիչները, բովանդակում է երեք կարգի իրավանդումներ՝ նորմնապատակ, նորմ-սկզբունք եւ առավել կարեւոր նշանակության իրավահարաբերություններ կանոնակարգող ու գերակա բնույթով օժտված նորմեր: Նորմը սահմանադրական կոչվելու համար ոչ միայն պետք է վերոնշյալ բնութագրիչներից որեւէ մեկն ունենա, այլև ընդունված լինի սահմանադրական նորմերի համար նախատեսված ընթացակարգով, հասարակական համաձայնության արտացոլումը լինի:

Ազգային-եկեղեցական ժողովների բնույթն ուսումնասիրելիս համոզվեցինք, որ դրանք իրենց էությամբ սահմանադիր ժողովներ են եւ ընդունել են հասարակական համաձայնության արդյունք հանդիսացող, համապարտադիր ու գերակա իրավաբանական ուժ ունեցող

վարքագծի կանոններ¹³⁸: Փորձենք դրանում համոզվել նաեւ այդ կանոնների բովանդակային որոշ վերլուծության միջոցով:

Այդ կանոններին, որպես սահմանադրական կանոններ, պատմագրության մեջ բազմաթիվ անդրադարձեր եղել են. օրինակ, Խորենացի՝ V դար, Հովհաննես Օսնեցի՝ VIII դար, Թովմա Արծրունի՝ X դար, Ուխտանես՝ XI դար, Վարդան Արեւելցի՝ XIII դար, Միքայել Չամչյանց՝ XVIII դար եւ այլն¹³⁹: Վերջին հարյուրամյակներում բազմաթիվ հեղինակներ են անդրադարձել ազգային-եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնների համեմատական ու բովանդակային վերլուծությանը, որոնց մասնակի մենք անդրադառնում ենք ու հիշատակում՝ մեր կողմից ուսումնասիրվող նյութի շրջանակներում: Այս պարագայում ցանկանում ենք մեկ հիմնական հարցի պատասխանը գտնել. որո՞նք են Կանոնական սահմանադրության իրավագիտական հիմնական բնութագրիչները՝ դրանում ներառված իրավանորմերի բնույթից ելնելով:

Ամենից առաջ ընդհանրականն այն է, որ **իրենց իրավաբանական ուժով այդ նորմերը համապարտադիր բնույթ են ունեցել** ու դրանցից շեղումը հասարակության կողմից մերժելի ու պարսավելի է համարվել: Ավելին, այդ նորմերից շեղումով է բացատրվել հանրային կյանքում ու երկրի համար էական ազդեցություն ունեցող բացասական ամեն մի երեւոյթ: Օրինակ, խոսելով Աշոտ Արծրունու՝ գերութունից վերադարձից հետո (868թ.) դրսևորած վարքի մասին, Թովմա

138 Գրականության մեջ հաճախ այդ կանոնները կոչվում են օրենքներ կամ վճիռներ: Այս առնչությամբ հստակ պարզաբանում է տվել Ներսես Մելիք-Թամազյանը, նշելով, որ «եկեղեցու մեջ կանոնն այն է, ինչ որ օրենքը պետության մեջ: Կանոնի եւ օրենքի տարբերությունը պարզ կերպով որոշվեց Յուստինիանոսի ժամանակներից Հռոմեական իրավագիտության մեջ...: Յուստինիանոսի իրավական գրքում կանոն եզրը հատկացվում էր միայն եկեղեցական սահմանադրություններին, զուգակշիռ դնելով դրան քաղաքացիական կարգադրությունները, որ կոչվում էին օրենք» (Հայոց եկեղեցական իրավունքը. Ներսես Մելիք-Թամազյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 12): Մեկնաբանելով «կանոնական» հասկացության իրավագիտական իմաստը՝ հեղինակը գտնում է, որ «կանոնական ածականը շատ անգամ յատկացւում է այն կաթուղիկոսական կոնդակներին, որոնք զուտ եկեղեցական հրահանգներ են ամփոփում եւ պարտադիր նշանակությւն ունեն, ինչպէս է օր. Գեորգ Դ-ի 1868 Կանոնական Կոնդակը» (նույն տեղում, էջ 13):

139 Այդ մասին տե՛ս սույն գրքի հավելվածում, ինչպես նաեւ՝ Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ, Երեւան, 2005, էջեր 75-83:

Արծրունին վկայում է. «Բայց զի՞նչ աստանօր ինձ ասելի է, զի թե-
պէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Քրիստոսի
Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական **սահմանադրութիւնսն** ոչ բերե-
լով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ եւ ամենայն իշխանքն Հայոց, որք
գերեդարձքն եղեն. զուրացութեանն ի բաց դնելով զվատաբարութիւն,
սակայն **կանոնական սահմանադրութեանն** արտաքոյ մնացեալ,
գայթ ի գայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք
եւ արբեցութեամբ, խառն անկողնօք եւ պղծութեամբք, աղտապիղծ
սարսափելի եւ գարշելի խառնակութեամբ արուապղծութեամբք,
որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երի-
քովեան եւ սողոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք
բորբոքեալ, դեզադէզ զիրացանն բերելով յերկնուստ զանգրաւ կի-
զումն, անցուցեալ զանցուցեալ զաստակչական կործանմանն ջրհե-
ղեղին»¹⁴⁰: Ինչպէս տեսնում ենք, Կանոնական սահմանադրությու-
նից «հեռու մնալով»՝ Աշոտը եւ «գերեդարձ» եղած բոլոր իշխանները
«քրիստոնյայի՝ իրենց անհաստատ վարքին խառնեցին անառակութ-
յունը, արբեցությունը...», որի համար հասարակական պարսավանքի
են արժանանում:

Կանոնական սահմանադրության նորմերը գործել են ոչ թե որպէս
սովորութային նորմեր, այլ **պարտադիր իրավական բովանդակու-
թյուն են ունեցել:**

Իրենց բնույթով **այդ նորմերն առաջին հերթին սահմանագծային
վարքագծի կանոններ են սահմանում:** Օրինակ, ամուսնա-ընտանե-
կան հարաբերությունների կանոնակարգման առումով Աշտիշատի
Ժողովի կողմից ընդունված առաջին կանոնը սահմանում է. «Ժողովը
հրահանգեց նախարարներին իրենց տոհմական ժառանգությունը
պահպանելու համար մերձավոր ազգականների միջեւ խնամիրթ-
յուն չանել»: Նույն խնդրին անդրադառնալով՝ Շահապիվանի Ժո-
ղովը ոչ թե նորմ-սկզբունք է ընդունում, այլ առավել հստակ կանո-
նակարգում է այս հարաբերությունները՝ սահմանելով. «Ոչ ոք չպետք
է համարձակվի ամուսնանալ քրոջ, քեռորդու, եղբորորդու կամ հո-
րաքրոջ, կամ ազգականի հետ մինչեւ չորրորդ ծնունդը: Ով հաղորդ
կլինի այսպիսի պսակին, պսակը կօրհնի կամ հարսանիքին կգնա,

¹⁴⁰ Ներկայացվում է Թովմա Արծրունի. «Արծրունաց տան պատմություն», «Հայ
դասական մատենագրություն» www.digilib.am, version 1.0 նյութերի հիման վրա:

եթե եպիսկոպոս է կամ երեց, աթոռից եւ քահանայությունից ընկնեն եւ պաշտոնյաների հետ չխառնվեն...»¹⁴¹: Հստակեցվում է ոչ միայն նորմը (ի՞նչ ասել է մերձավոր ազգական, երբ ազգականը կարող է մերձավոր շհամարվել եւ այլն), այլեւ հստակ սանկցիաներ են նախատեսվում եւ երաշխավորվում է կատարման համապարտադիր բնույթը: Այս հիմնախնդրին անդրադարձել է նաեւ Աղվենի Սահմանադիր ժողովը եւ Կանոնական սահմանադրության նորմ է ամրագրել. «Ոչ մի տղամարդ երրորդ պորտի ազգակցուհի կին չպետք է առնի եւ եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա»¹⁴²:

Կ. Յ. Բասմաջյանը դեռեւս 1901թ. անդրադառնալով հայ իրավունքի մասին օտար հեղինակների ուսումնասիրություններին, հիշատակելով դոկտոր Ֆերդինանդ Բիշոֆին, դոկտոր Կոնլերին, պրոֆ. Ռ. Գարեստին եւ այլոց, իր հերթին շեշտում է, որ «Հայկական իրավանց հիմնական տարրը, Վաղարշակէն մինչեւ Բագրատունեաց ժամանակ, ընտանիքի նահապետական կազմակերպութիւնըն էր, հաստատուած աւանդութիւններու եւ մանաւանդ Ս. Գրոց վրայ, **որ իր կարգին ծնունդ տուած է Կանոնագրոց**»¹⁴³ (ընդգծումը մերն է-Գ.Հ.): Ուշադրության արժանի ընդհանրացում է անում Ա. Դլտճյանը, ով, 1913 թ. Հայոց հին իրավունքին նվիրված ծավալուն ուսումնասիրության մեջ անդրադառնալով օտար հետազոտողներին, ըստ էության այն հետեւությունն է անում, որ անտեղի է հայ իրավունքի վրա օտար ազդեցությունների փնտրտուքը, քանի որ հայ իրավունքն իր արժեքային հենքով, բնույթով ու ամբողջականությամբ ինքնուրույն ձեռագիր ու զարգացում է ունեցել («Որ հայերը ունեցել են ազգային իրավունք [...] այդ մասին մեր հայրենի իրաւունքի աղբիւրները մատակարարում են բաւականին ապացոյցներ») ¹⁴⁴ :

Միանգամայն ճշմարտացի է Ս. Հովհաննիսյանը՝ նշելով, որ «Յուրաքանչյուր օրենք կամ կանոնախումբ իր դարաշրջանի ծնունդն է: Նրանք արտահայտում են տիրապետող աշխարհիկ եւ հոգեւոր դասերի նյութական եւ հոգեւոր շահերը, ուժերի փոխհարաբերությունը, նրանց կամքը: Նրանք իրենց վրա կրում են դարաշրջանի իրավա-

141 Տե՛ս Ավագյան Ռ. Դ., հիշյալ աշխատությունը, էջ 128:

142 Նույն տեղում, էջ 139:

143 Բասմաջեան Կ. Յ., Հայկական իրաւունք ի սկզբանէ մինչեւ մեր օրերը // Բանասէր, Փարիզ, 1901, պրակ Բ եւ Գ, էջ 68:

144 Արսէն Դլտճեան, Հայոց հին իրավունքը, Ալեքսանդրապօլ, 1913, էջեր 3-13:

գիտակցության կնիքը»¹⁴⁵: Միաժամանակ, համեմատելով տարբեր ազգային-եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնական սահմանադրությունների նորմերը, տեսնում ենք թե՛ կարգավորման առարկայի ընդհանրություններ (հատկապես բնորոշ է, որ բոլորում անդրադարձ կա ամուսնա-ընտանեկան հարաբերություններին¹⁴⁶, հոգևոր իշխանությունը կրողների վարքին եւ այլն) եւ թե՛ իրավամտաժողովյան արժեհամակարգային որոշակի ընդհանրականություն: Վերջինիս հիմքը քրիստոնեական ընդհանուր գաղափարաբանությունն է եւ աստվածային պատվիրանների կյանքի կոչման իրավական ու բարոյական անհրաժեշտ նախադրյալների ստեղծման հրամայականը: Ընդհանրականն այն է, որ կանոնական սահմանադրությունները կոչված են եղել, մի կողմից, քրիստոնեության ամրապնդմանը, մյուս կողմից՝ երկիրն անօրինություններից, կամայականություններից, քայքայումից փրկելուն:

Ընդունված կանոնների վերլուծությունը միաժամանակ վկայում է, որ մարդկային համակեցության բոլոր կանոնների ու «միջմարդկային» հարաբերությունների հիմքում դրվեց աստվածային իրավունքը, որի արժեհամակարգի առանցքը, ինչպես նշել ենք, մարդն է, որն իր կյանքը պետք է կառուցի աստվածահաճո իրավական նորմերի ու օրենքների հիման վրա:

Բնականաբար, կոնկրետ լուծումները թելադրվում էին պատմական տվյալ ժամանակաշրջանի հիմնախնդիրների հրատապության ու առաջնահերթության աստիճանից ելնելով: Օրինակ, Ներսես Մելիք-Թանգյանը Շահապիվանի կանոնների առնչությամբ վկայում է, որ այդ կանոնները պարզ հայելին են Հայաստանի ծանր դրության: Հայոց թագավորությունը վերացել էր, երկիրն ընկել էր Պարսից գերիշխանության տակ, պարսիկ կառավարիչները եւ ասորի անառակ կաթողիկոսները տակն ու վրա էին արել Հայաստանը, խախտել բազմերախտ

145 Հովհաննիսյան Ս., Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները եւ նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ // Պատմա-բանասիրական հանդես, 1967, N 4, էջ 270:

146 Առանձնակի կարեւորություն է այս խնդրին տալիս Շահապիվանի ժողովը, որը կանոնակարգել է ազգակցական ամուսնության, ամուսնական անհավատարմության, շնացողության, կնոջ անլուծյան պատճառով ամուսնալուծության, խորթ մոր հետ մեղք գործելու, ամուսնուց կնոջ հեռանալու, առեւանգմամբ ամուսնության հետ կապված հարաբերությունները:

հայրապետների կարգերը, մտցրել օտարը, վատը եւ անկարգը: Բազմացել էր, «ըստ պատմագրաց», կնահանների, պոռնիկների, գողերի, չարագործների, հավատորացների, ազատեսացների թիվը, ամենաթեթև ծառայություններով ստանում էին ահագին պատիվներ եւ պարսիկ դառնալով՝ կեղեքում էին ժողովրդին, քանդում եւ պղծում եկեղեցիները եւ հավատացյալ հայերին ստիպում փոխել կրոնը: Ահա այս պատճառները ստիպեցին բոլոր ժողովականներին միաձայն հաստատել այնպիսի կարգ ու կանոններ եւ պատիժներ, որոնք տեսնված չէին եւ չեն էլ տեսնվել հայոց եկեղեցական պատմության մեջ¹⁴⁷:

Այսուհանդերձ, կանոնական որոշումների համար ոչ պակաս կարևոր էր այն հանգամանքը, որ ընդունված **սահմանադրական կանոնները չպետք է վերացական, զուտ կողմնորոշիչ-բարոյական նշանակություն ունենային**: Սահմանադրական իրավանորմի բնորոշ գծերից է նաեւ դրա ոչ միայն համապարտադիր, այլև իրական իրավակարգավորիչ դերը: Այս առումով նույնպես պատմությունը վկայում է, որ կանոնական սահմանադրությունները չեն մնացել որպես բարի ցանկությունների ժողովածու, այլ ունեցել են չափազանց մեծ իրավակիրառական նշանակություն: Օրինակ, խոսելով Աշտիշատի ժողովի որոշումների գործնական արդյունքների մասին՝ Հակոբ Մանանդյանն արձանագրում է, որ «Համաձայն այդ ժողովի որոշումների, Հայաստանում բացվեցին ամենուրեք բարեգործական հիմնարկներ: Բորոտների, ընկնավորների ու ախտավորների համար կառուցվեցին հիվանդանոցներ եւ անկելանոցներ, հաշմանդամների, անաշխատունակների եւ աղքատների համար՝ ապաստարաններ ու աղքատանոցներ, հիմնվեցին նաեւ վանքեր, դպրոցներ ու իջեւաններ: Այս հաստատությունները պահվում էին եկեղեցական կալվածքների եկամուտներով ու նաեւ ժողովրդից զանձվող առանձին տուրքերով»¹⁴⁸: Հատուկ կարևորելով այդ ամենը, նաեւ մերձավորների միջև խնամիրության ու մեռելների վրա դառն լացուկոծի վերացումը, Հովհաննես Դրասխանակերտցին արձանագրում է, որ «դրանից հետո մեր ժողովրդին կարելի էր տեսնել ոչ թե որպես այլանդակ բարբարոսներ, այլ որպես համեստ քաղաքացիներ»¹⁴⁹:

147 Տե՛ս Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Սելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 321:

148 Հակոբ Մանանդյան, Երկեր, գիրք Բ, Երեւան, 1978, էջ 164:

149 Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն /աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Գ.Բ. Թոսունյանի, Երեւան, 1996, էջ 49:

Իր հերթին, Շահապիվանի ժողովի ընդունած կանոնների առնչությամբ Խաչիկ Սամուելյանն արձանագրում է, որ «Շահապիվանի ժողովի կանոնական որոշումները բնորոշ են նրանով, որ սահմանում են ոչ միայն եկեղեցական իրավունքի, այլև քաղաքացիական ու քրեական իրավունքի նորմեր, որոնց կիրառումը [...] պարտադիր է դառնում նաև աշխարհիկ ֆեոդալների համար»¹⁵⁰: Շահապիվանի ժողովի ընդունած 20 կանոնները վերաբերում են Հայաստանի ներքին կյանքի հրատապ ու կարևոր այնպիսի հարցերի, ինչպիսիք էին ամուսնա-ընտանեկան հարաբերությունների կարգավորումը, հոգեւորականների գործունեությունն ու վերջինիս վերահսկումը, աղանդավորության դեմ պայքարը, կուսակրոնությունը եւ այլն:

Այստեղ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ նույնիսկ քրեաքաղաքացիական իրավահարաբերություններ կանոնակարգող նորմերը սահմանադիր բնույթ ունեն՝ հստակեցվում են իրավունքը, դրա սահմանափակման եզրերը, եւ ապա այն խախտելու դեպքում նախատեսվում է սանկցիան (օրինակ, ամլության պատճառով կնոջն արձակելու մասին նորմով սահմանվում է. «Եթե մեկը կնոջն արձակի ամլության պատճառով, կինը կարող է վերցնել ամբողջ կարասին, որ հետը բերել էր, ինչպես նաև հանդերձը, արծաթը, աղախնուն, անասունը. եթե բացի ամլությունից կինը ուրիշ արատ չունի. մարդը թող տուգանք մուծի անարգանքի համար. եթե ազատ է՝ 1200 դրամ, եթե շինական է՝ 700 դրամ [...]»):

Խոսելով Աղվենի ժողովի ընդունած կանոնների մասին՝ Վարազ Առաքելյանն ընդգծում է, որ «Աղվենի ժողովի կանոնները ցույց են տալիս, որ Վաչագան Բարեպաշտը խորամիտ ու տաղանդավոր թագավոր է եղել, եւ ամենից առաջ նրան հետաքրքրել է երկրի մշակութային կյանքի զարգացումը, իրավական նորմերի ստեղծումը, հայ եկեղեցու հզորացումը...: Ըստ այդ կանոնների՝ արգելվում էին կնաթողությունը, մեռելների վրա հեթանոսական ողբն ու կոծը, կախարհների դիմելը եւ այլն, որոնք այն ժամանակվա համար հսկայական քաղաքակիրթ նշանակություն ունեին»¹⁵¹:

Ընդհանրացնելով՝ կարող ենք արձանագրել, որ Կանոնական

150 Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 122:

151 Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանաց աշխարհի, Երեւան, 1969, առաջաբան, էջ XI:

սահմանադրության իրավանորմերը որքան էլ իրենց իրավաբանական բնույթով ու բովանդակությամբ տարբեր են ժամանակակից սահմանադրական նորմերի համեմատությամբ, այսուհանդերձ, իրենց պատմական կոնկրետ ժամանակաշրջանում եւ կոնկրետ հասարակական իրողությունների պայմաններում ունեցել են հանրային կյանքի կանոնակարգված զարգացումը երաշխավորելու համար նույնքան ու, թերեւս, առավել կարեւոր դեր ու իրավակիրառական նշանակություն: Դրանք ժամանակի գաղափարաբանական արժեհամակարգի հիմնական սկզբունքներից բխող ու գերակա նշանակության իրավակարգավորիչ դեր են ունեցել հոգեւոր ու աշխարհիկ կյանքում: Տաճատ Արքեպիսկոպոսի ընդհանրացված բնութագրմամբ՝ «Դարերով զրկուած մնալով սեփական պետական կեանքէ, դարերով հարկատու մնալով ներխուժող թշնամի ժողովուրդներու տիրապետութեան տակ, կորսըցնելով հանդերձ աշխարհիկ իշխանութիւնը, որպէս սեփական Եկեղեցի եւ Մշակոյթ ունեցող պատմական ազգի մը զավակները, կառավարուած ենք մեր **Ազգային, Եկեղեցական եւ համայնքային օրէնքներով**»¹⁵² (ընդգծումը մերն է-Գ.Հ.): Դրանց ամբողջությունն է կազմել պատմական այդ ժամանակահատվածում մեր սահմանադրական մշակույթի բովանդակությունը: Վերջինիս էական առանձնահատկություններից է պետականության, «աշխարհիկ իշխանության» բացակայության պայմաններում «**ազգային օրենքների**» որպես իրավական իրողության, գոյությունը: Այս հանգամանքը ներկայումս կարող է դժվարընկալելի լինել: Սակայն պատմական իրողություն է, որ «ազգային օրենքները» ընդունվել, գործել, բարեփոխվել եւ շարունակական դերակատարություն են ունեցել հայ հասարակական հարաբերությունների իրավակարգավորման գործում նաեւ պետականության կորստի պայմաններում: Դրանք հանդես են եկել որպես «վերպետական» երեւույթ: Ոչ ուղղակի, սակայն փոխաբերական համեմատություն կարելի է անցկացնել արդի միջազգային իրավունքի հետ, երբ միջազգային պայմանագրերի նորմերը ոչ միայն ազգային իրավական համակարգի մաս են կազմում, այլեւ դրանք ներպետական օրենսդրության նկատմամբ գերակա բնույթ ունեն: Պատմակա-

¹⁵² Ազգային Սահմանադրութիւն Հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1968, էջեր 7-8:

նորեն մեր «ազգային օրենքները», ընդունված լինելով ոչ թե պետական իշխանության, այլ համազգային ներկայացուցչական մարմնի՝ ազգային-եկեղեցական ժողովի կողմից, ունեցել են գերակա բնույթ եւ, դարձյալ հարաբերական առումով, ոչ միայն ներկայացուցչական, այլ ինչ-որ տեղ նաեւ անմիջական ժողովրդավարության դրսեւորում են (բնորոշ է հատկապես Շահապիվանի ժողովի առնչությանը բերված վկայությունը): Այս հանգամանքը նույնպես սահմանադրական մշակույթի կարեւոր բնութագրիչ է:

2.4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԻՐԱՎԱՔԱՎԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԷՋԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի պատմությունը ոչ միայն ձեռքբերումների, այլև, ցավոք, մեծ կորուստների պատմություն է: Մեր կազմակերպված գոյի որակների վրա իր խոր կնիքն է թողել հատկապես պետականության դարավոր կորուստը: Այսուհանդերձ, թերևս նաև դժվարությունների թելադրանքով ու ինքնության պահպանության գերճիգերով է պայմանավորվել, որ հայ իրականության մեջ, ինչպես տեսանք, սահմանադրությունը մշտապես շարունակել է լինել ապրող իրողություն եւ սահմանադրական մշակույթի եզակի դրսևորումներ են արձանագրվել, որոնք այսօրվա համար ունեն մեծ խորհուրդ ու նաե՛լ իմաստավորման անհրաժեշտություն¹⁵³: Մենք կփորձենք շարունակել անդրադարձը մեր պատմության քրիստոնեական վաղ շրջանի որոշ իրողությունների՝ այսօրվա խնդիրների համատեքստում դրանց արժեվորման անհրաժեշտությունից ելնելով: Սակայն հարկ ենք համարում կրկին շեշտել, որ **սահմանադրական մշակույթի տարրերը, որպես բանականորեն իմաստավորված արժեհամակարգի մաս, որպես սոցիալական հանրության՝ փոխհամաձայնությամբ ապրելու իրողություն, գոյություն են ունեցել մարդկային հասարակության արշալույսին եւ գոյություն ունեն նաև պետության «չգրված» սահմանադրությունների պարագաներում:**

Մեր ժողովրդի պատմությունը (ոչ միայն քրիստոնեական շրջանի) նույնպես լավագույնս վկայում է այդ ճշմարտությունը: Դեռևս Բ. ա. 28-27-րդ դարերում Հայկական լեռնաշխարհի Արատտա երկիրը Հարավային Միջագետքի հնագույն ժողովրդին՝ շումերներին հայտնի էր որպես «սուրբ օրենքների երկիր» անունով: Ըստ սեպագիր ամենահին արձանագրությունների՝ շումերական վիպերգերի, Արատտայում ղեկավարումն իրականացնում էին «էն» (գերագույն քուրմ) տիտղոսը

153 Ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆեսոր Խ. Սամուելյանը՝ «Հայ իրավունքը մեզ չի հասել, ինչպես հռոմեական Corpus juris-ը կամ բաբելոնական օրենքների Համնուրաբիի ժողովածուն, կամ այլ հին ժողովուրդների իրավունքները՝ պետականորեն օրենսդրված, ազգային ամփոփ մի կողեքսի վերածված» (Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երևան, 1939, էջ 3): Այսուհանդերձ, «...հայ իրավունքն իր համապատասխան տեղն է գրավում իրավագիտության մեջ» (նույն տեղում, էջ 4):

կրող կառավարիչները¹⁵⁴: Առավել կարևոր պետական հարցերը՝ պատերազմ հայտարարել, հաշտություն կնքել եւ այլն, Արատտայի գերագույն քուրմը **որոշում էր ավագների ժողովի հետ խորհրդակցելով**:

Շումերական վիպերգերում ադոս հիշատակություն կա նաեւ այն մասին, որ այդ օրենքները գրի են առնված եղել պատկերագրերի տեսքով: Այսօր դժվար է ասել, թե այդ ինչ «սուրբ օրենքներ» են գործել Արատտայում, որոնք զարմացրել են հարեւան ժողովուրդներին, սակայն դյուրին է կռահել, որ խոսքը սովորութային իրավունքի ամենահին դրսեւորումների մասին է:

Հայ իրավունքի պատմության ճանաչված մասնագետ Խաչիկ Սամուելյանը գրել է. «Ամեն մի սովորույթ անխտիր չի կարող իրավունքի աղբյուր լինել, այլ միայն այն սովորույթները, որոնք հասարակական համակեցության մեջ գործադրվում եւ պահպանվում են իբրեւ պարտադիր նշանակություն ունեցող որոշ նորմեր»¹⁵⁵: Նախնադարյան մարդը, հազարամյակներ շարունակ խմբովին պայքար մղելով իր գոյության համար, մշակել էր համակենցադային կարգեր, որտեղ, որպէս մարդկանց միջեւ հարաբերությունների հիմնական կարգավորիչ, հանդես էր գալիս սերնդէ-սերունդ փոխանցվող սովորույթը: Պետական կազմավորումների ի հայտ գալով՝ վավերացվեցին եւ իրավական կանոններում ներառվեցին մի շարք սովորույթներ, որոնք, իբրեւ պարտադիր նշանակություն ունեցող նորմերի համակցություն, իրավունքի պատմության մեջ ստացել են սովորութային իրավունք անվանումը՝ ունենալով այն պահպանելու յուրահատուկ համակարգ:

Դժվար չէ ենթադրել, որ հին աշխարհի իրավունքի նշանավոր հուշարձանից՝ «Համնուրաբիի օրենքների» ստեղծումից շուրջ հազար տարի առաջ Արատտայում արդեն գործող օրենքներն ինչպիսի արձագանք պիտի գտնեին հարեւան երկրներում¹⁵⁶:

Հայկական ցեղերի մեկ այլ պետական կազմավորման՝ Հայասա-Ազգիի իրավական համակարգի մասին որոշ տեղեկություններ

154 Մովսիսյան Ա., «Ջնագույն պետությունը Հայաստանում», Երեւան, 1992, էջ 53:

155 Սամուելյան Խ., «Հին հայ իրավունքի պատմություն», հ. 1, Երեւան, 1939, էջ 26:

156 Մասնավորապէս տե՛ս Авакян Рубен, Авакян Рафаель: Истоки правовой мысли протоармян Древней Месопотамии и Армянского нагорья // ЕФ МНЮИ - XXI ВЕК, N 23, март, 2005, էջեր 51-62:

են պարունակում Ք. ա.14-րդ դարում խեթական պետության՝ Խաթթիի տիրակալ Սուպպիլուլիումասի (Ք. ա. 1380-1340 թթ.) եւ Հայասսայի թագավոր Խուկկանայի (Հականա) միջեւ կնքված միջպետական պայմանագիրը¹⁵⁷: Ըստ այդ պայմանագրի՝ Հայասսայի թագավորը, կնության առնելով խեթական արքայի քրոջը, պարտավորվում էր հավատարիմ լինել Սուպպիլուլիումասին, նրան տրամադրել ռազմական օգնություն, վերադարձնել Խաթթիից փախած անձանց (ստրուկներին, որոնց, հավանաբար, ազատ կարգավիճակ էր տրվում Հայասսայում, հակառակ դեպքում նրանք չէին փախչի Խաթթիից): Հետաքրքիր է, որ այդ պայմանագրով Սուպպիլուլիումասը դիմել է նաեւ «Հայասսայի մարդկանց», որի ներքո, հետազոտողների կարծիքով, պետք է հասկանալ «ժողովրդական հավաքը»: Հայասսա-Ազգիում հիշատակվում է նաեւ «ավագների խորհուրդը»: Այս երկու մարմինները հիշեցնում են հենց հարեւան խեթերի տուլիան (թագավորի մերձավորներից եւ պալատական իշխաններից կազմված խորհուրդը)¹⁵⁸ եւ պանկուսը (ժողովրդական հավաքը, որն աստիճանաբար փոխվեց զինվորական խորհրդի):

Յավոք, քիչ բան է հայտնի նաեւ Արարատի կամ Վանի թագավորության (Ուրարտու) պետաիրավական համակարգի մասին: Ուրարտագետ Հ. Կարագոյանի կարծիքով՝ ջրաշինական եւ այլ կառույցների, այգիների մոտ գտնված արքայական կոթող-արձանագրությունները՝ «անեծք-բանաձեւերի» տեսքով, պետության արքունական-տաճարային օրենսգրքի հատվածներ են: Բուն օրենսգրքի ամբողջական շարադրանքն առայժմ հայտնաբերված չէ: Կարծիք է հայտնվել նաեւ, որ Արարատյան թագավորության դիցարանում հասարակական կարգ ու կանոնի պահպան աստվածը Արդին էր, իսկ մարդկանց գրաված տեղն ու դիրքը սահմանում էր Բարձիա դիցուհին:

Մեր պատմության մեջ հետագա դարերի ընթացքում գործող իրավական նորմերի ժողովածուների բացակայությունը բնավ հիմք չէ ենթադրելու, թե Հայաստանում գոյություն չի ունեցել իրավական լայն գործունեության նախադրյալ: Հայաստանն իր հասարակական հարաբերությունները կարգավորել է իրավական որոշ նորմերով: Հայ մատենագրությունը վկայում է, թե ինչպես են հայ թագավորներն

157 История Древнего Востока; т. 2. М., 1988, էջ 146:

158 Войтех Замаровский, "Тайны хеттов". М., 1968, էջ 254:

օրենքներ ընդունել: Օրինակ, Խորենացին Վաղարշակ թագավորին (Ք. ա. 2-րդ դար) է վերագրում հայ նախարարությունների «հաստատումն ու կարգումը» (ճիշտ կլինի գրել վերահաստատումն ու վերակարգումը, որովհետև Հայոց նախարարական տներից շատերը հայտնի էին դեռ Արարատի թագավորության ժամանակներից): Նա նաև «իր թագավորական տանը օրենքներ է հաստատում», «սահմանում զինվորական կարգեր», «սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ՝ քաղաքներում եւ ավաններում»¹⁵⁹ :

Սակայն Հայաստանում շատ ավելի գործուն դեր են խաղացել սովորութային իրավունքի նորմերը: Ինչպես գրում է Խ. Սամուելյանը՝ «...սովորութական իրավունքի ավանդական դերը հասարակական հարաբերություններում այնքան ուժեղ եւ արմատացած է եղել, որ կարիք չի զգացվել այդ ամենը գրավոր ձևերի վերածել: Թերևս, սովորութական իրավունքի այդ ընդհանրացած բնույթին պետք է վերագրել հայ թագավորների օրենսդրական գործունեության սղությունը»¹⁶⁰:

Սովորութային իրավունքի իմաստ ունեն մեր հին մատենագրության մեջ գործածված «օրենք նախնյաց», «կարգ նախնյաց», «սահմանք» հասկացությունները, որոնք, սակայն, իրենցից քարացած օրենքների կանոնացված ամբողջություն չեն ներկայացրել, այլ սնվել ու մշակվել են ազգի բարոյական ու գեղագիտական չափանիշների դրական թանձրուքից, կրել են ժողովրդի՝ դարերի խորքից եկող իմաստության կնիքը: Եվ եթե այսօր զարմանում ու հիանում ենք Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» կամ Սմբատ Գունդստարլի «Դատաստանագրքի»՝ իրենց ժամանակի համար անսովոր «մարդասիրական» հողվածներով, շնորհիվ այն բանի, որ դրանք բովանդակում են հայ սովորութային իրավունքի բազմաթիվ նորմեր: Մխիթար Գոշի այն վկայությունը, «որ ոչ թուին ի կանոնաց, ի կենդանի առաք ձայնէ» (Դատաստանագիրք, 1, 68), հաստատում է, թե ինչ մեծ դեր էր կատարում սովորութային իրավունքը հայ իրականության մեջ:

Սովորութային իրավունքի անչափ հարուստ նյութ է բովանդակում հայ ազգագրությունը, որը, ցավոք, լայնորեն ուսումնասիրված չէ այդ տեսանկյունից: **Հենց միայն մեր էպոսի վերլուծությունը բավարար է սովորութային իրավունքի նորմերի թաքնված մի գանձարան բա-**

¹⁵⁹ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», գիրք 2, գլ. է, ը :

¹⁶⁰ Սամուելյան Խ., «Հին հայ իրավունքի պատմություն», հ. 1, Երեւան, 1939, էջեր 34-35:

ցելու եւ, թերեւս, պատասխանելու այն հարցին, թե ինչու «Սասնա ծռերը», ի տարբերություն այլ ժողովուրդների դուրսագնալեզների, այդչափ զերծ է սպանությունների ու պատերազմների սարսափագրու տեսարաններից, մարդկային դաժանությունից ու նենգությունից, հեղվող արյան գետերից:

Միջնադարյան հայ իրականության մեջ սովորութային իրավունքի համակարգում առանձնահատուկ տեղ է վերապահվել **Կանոնական (սահմանադրական) սովորույթին**, որին հետաքրքիր անդրադարձ է կատարել Ս. Տիգրանեանը¹⁶¹: Իսկ ինչպես շեշտում է Մ. Աղանեանը «...ամեն մի ազգ եւ հասարակութիւն թէ նախապատմական դարերում եւ թէ յետոյ ունեցան իրանց եթե ոչ գրաւոր, զոնէ բանավոր օրէնքները, որոնք որոշում էին մարդկանց փոխադարձ յարաբերութիւնը...»¹⁶²:

Այսուհանդերձ, իրավական որոշակի համակարգ ու սահմանադրականության տարրեր ձեւավորվել են պատմական տեսական ժամանակահատվածում եւ, ինչպես տեսանք, առանձնահատուկ հետետողականությամբ են դրսետորվել հայ իրականության մեջ՝ հատկապես քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո, աշխարհիկ ու հոգեւոր կյանքի միասնական կանոնների սահմանման անհրաժեշտության պայմաններում¹⁶³: Օրենքի, իրավունքի, արդարադատության, պատժի անխուսափելիության, գործած մեղքին համապատասխան հատուցման, «բանականություն» եւ «օրենք» հասկացությունների փոխկապվածության, ինչպես նաեւ պետության կառավարման գործում դրանց դերի ու հասարակության կայունության ապահովման հարցերին ուշագրավ անդրադարձեր են ունեցել Մեսրոպ Մաշտոցը (362-440), Եզնիկ Կողբացին (շուրջ 380-450), Եղիշեն (410-475), Մովսէս Խորենացին (շուրջ 410-495) եւ միջնադարի բազմաթիվ այլ ականավոր հայ մտածողներ: Ընդ որում, տարբերակելով աստվածային արդարադատությունը մարդկայինից,

¹⁶¹ Տե՛ս Սիրական Տիգրանեան, Կանոնական իրաւունքը եւ նրա աղբյուրները // Արարատ [Ararat] 35 (1902), թիվ 1, էջեր 18-24:

¹⁶² Մ. Աղանեանց, Հայաստանեայց եկեղեցու կանոնագիրք // Լոււմայ, 2 (1897), է

¹⁶³ «Կանոնադիր գործունեությունը եւ կանոնական որոշումները, որպես կանոնական իրավունքի աղբյուրներ, աչքի ընկնող նշանակություն ունեցան ընդհանրապես հայոց պատմության եւ մասնավորապես հայ իրավունքի պատմության մեջ» - Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 43:

շեշտով է, որ «թագավորների օրենքը հանցավորներին է պատժում, իսկ Աստված՝ հանցավորին եւ ազգը. հանցավորին որպէս օրենսդիր, իսկ ազգին՝ որպէս առաջագետ»¹⁶⁴: Այս ժամանակաշրջանի բնորոշ գծերից մեկն այն էր, որ մեծապէս **կարեւորվում էր օրենքի ու արդարադատության դերը հասարակական համերաշխության հաստատման, պետության կայուն զարգացումը երաշխավորելու գործում**¹⁶⁵:

Օրինակ, Ադվենի սահմանադիր ժողովի բուն նպատակը, ինչպէս նշել ենք, սահմանադրական կանոնների օգնությամբ հասարակության մեջ առկա «բազմաթիվ հակառակությունների» հաղթահարումն էր: Դրան հասնելու ճանապարհ է ընտրվում այնպիսի ընդհանուր կանոնների սահմանումը, որոնցից կրխեն հոգեւորականների ու աշխարհականների գործողությունները, որոնք այլեւս **սահմանափակվում են** սույն կանոններով: Վերջիններս Աստծու առաջ տիրոջն ու ծառային չեն տարբերակում («Կիրակի օրը տերն ու ծառան պետք է գնան մայր եկեղեցի, աղոթքներ ու հիշատակ կատարեն եկեղեցում...»), սահմանում են բարոյական համակեցության հստակ մոտեցումներ («Ոչ մի տղամարդ երրորդ պորտի ազգակցուհի կին չպետք է առնի եւ եղբոր կնոջ հետ չպետք է ամուսնանա»), հստակեցնում են լիազորությունների շրջանակները («Ազնվականները առանց եպիսկոպոսի իրավունք չունեն քահանային հեռացնել կամ նշանակել՝ չնայած որ իրենց դաստակերտն է. եպիսկոպոսն էլ չպետք է առանց նրանց ազատի կամ նշանակի...»): Մեկ տասնյակից ավելի նորմեր են սահմանվում աշխարհիկ ու հոգեւոր այլ հարաբերությունները կանոնակարգելու համար:

Սահմանել կանոններ եւ սահման դնել գործողություններին, այն իրականացնել ներկայացուցչական ժողովի միջոցով¹⁶⁶ եւ ձեռք բերված փոխհամաձայնությունը վավերացնել Ադվանքի բոլոր ազնվականների կողմից ու «...գրության ավելի վավերական լինելու համար» կնքել Արքայի մատանիով՝ սրանք լուկ վկայություններ չեն հայ եւ հա-

164 Եղիշե, Սրբոյ հօրն մերոյ Եղիշէի Վարդապետի մատենագրութիւնք, Վենետիկ, 1859, էջ 336:

165 Մասնավորապէս տե՛ս Սիրունյան Կ., Հայ քաղաքական մտքի պատմությունից, Երեւան, 2002, էջ 108:

166 Ինչպէս վկայում է Խ. Սամուելյանը, ընդհանրապէս հայ միջնադարյան իրականության մեջ «...Ազգային եկեղեցական ժողովներն իրենց վերապահուն էին օրենսդիր կամ իրավադիր ֆունկցիաներ» (Նշվ. աշխ., էջ 45):

մաշխարհային իրավունքի պատմության մեջ Սահմանադրություն երեւոյթի ու սահմանադրական մշակոյթի հիմնատարների ծնունդի մասին: Մենք գործ ունենք առանձնահատուկ ուշադրության արժանի իրավափիլիսոփայական այնպիսի իրողոյթյան հետ, երբ չափազանց հետաքրքիր ընդհանրոյթյուններ ենք տեսնում, օրինակ, 488թ. Աղվանքում Սահմանադրոյթյան ընդունման անհրաժեշտոյթյան հիմնավորումների ու կարգի եւ 1787թ. ԱՄՆ-ի, 1791թ. Լեհաստանի ու Ֆրանսիայի, հետագայում նաեւ այլ երկրների սահմանադրոյթյունների ընդունման միջեւ: Նույնն է ընդհանուր փիլիսոփայոյթյունը՝ սահմանել հասարակական գոյի հիմնական կանոնները, որոնք գերակա են այլ օրենքների ու կանոնների նկատմամբ, ինչպէս նաեւ սահման դնել իշխանավորների գործողոյթյուններին՝ դրանք պահելով սահմանադրական կանոնների շրջագծում, դա իրականացնել հրապարակայնորեն ու հասարակական լայն համաձայնոյթյան պայմաններում՝ ի դեմս պետոյթյան գլխի կողմից հրավիրված Սահմանադիր ժողովի գումարման:

Պատմականորեն կարելի է գուգահեռներ անցկացնել այս Սահմանադրոյթյան եւ Արիստոտելի կողմից ներկայացված «Աթենական հասարակարգի» (Աթենքի սահմանադրոյթյան) միջեւ¹⁶⁷: Հայտնի է նաեւ, որ Արիստոտելն իր տրամադրոյթյան տակ ունեցել է առնվազն 158 «հասարակարգ», որոնցում նկարագրված են եղել թե՛ հին հունական աշխարհի քաղաք-պետոյթյունների, թե՛ հին աշխարհի այլ պետոյթյունների հասարակարգերը՝ սկսած Կարթագենի պետական կառուցվածքից ու վերջացրած Հնդկաստանի «սահմանադրոյթյամբ»: Սակայն այս գործերից մեզ է հասել միայն Աթենքի սահմանադրոյթյունը, որը հայտնաբերվել է միայն 1890 թ., Եգիպտոսից Բրիտանական թանգարան բերված պապիրուսներում, որը 1891թ. հրատարակել է անգլիացի գիտնական Ֆ. Քենյոնը, իսկ վերջնականապէս վերծանվել է անցյալ դարի սկզբներին: Ամենայն հավանականոյթյամբ Արիստոտելը միայնակ ի վիճակի չէր լինի այդ վիթխարի գործն անելու: Թերեւս, այդ 158 սահմանադրոյթյուններն ուսումնասիրվել է Արիստոտելի հանձնարարոյթյամբ ու անմիջական ղեկավարոյթյամբ, իսկ դրանցից Աթենքինը գուցէ հենց ի՛նքն է գրել կամ խմբագրել: Համեմայնդեպս, հին հեղինակներն առանց տատանվելու այս գործը վերագրում են Արիստոտելին:

¹⁶⁷ Տե՛ս Արիստոտել, Աթենական հասարակարգը, Երեւան, 2000:

Արխատոտելն այս վիթխարի գործը ձեռնարկել է հատուկ նպատակով, այն է՝ որ հետագայում, դրանց վերլուծության հիման վրա, գրի իր “Politica” վերնագրով հիմնարար աշխատությունը: Ինչեւէ, մեզ հասած թեկուզ միայն այս «հասարակարգի» նշանակությունն անգնահատելի է թե՛ պատմական, թե՛ իրավագիտական, թե՛ իրավունքի պատմության, թե՛ բանասիրական ու այլ առումներով:

«Աթենական հասարակարգը» ինքնին բաժանվում է երկու մասի. առաջին քառասուն գլուխը նվիրված է Աթենքի Սահմանադրության պատմությանը, որն ամփոփված է 41-րդ գլխում (ցավոք, աշխատության սկիզբը չի պահպանվել): Երկրորդ մասում Արխատոտելը մանրամասն նկարագրում է Աթենքի՝ իր օրերի հասարակարգը կամ սահմանադրությունը: Արխատոտելը հիշատակում է աթենական Սահմանադրության տասնմեկ փոփոխություն, ընդ որում, Աթենքը բնակեցնող առասպելական Իոնի հասարակարգն այս տասնմեկի մեջ չի մտցնում՝ համարելով այն ելակետային, որի առաջին, թեթևակի փոխողը, ըստ Արխատոտելի՝ նույնպես առասպելական Թեսեսն էր: Դրանից հետո գալիս է Դրակոնի սահմանադրությունը, երբ կազմվեց օրենքների առաջին ժողովածուն: Երրորդը Սոլոնի հասարակարգն էր, որից էլ սկիզբ է առնում «դեմոկրատիան»: Չորրորդը Պիսիստրատոսի տիրանությունն էր, հինգերորդը՝ Կլիսթենեսի սահմանադրությունը, որն ավելի դեմոկրատական էր, քան Սոլոնինը: Վեցերորդը պարսկական պատերազմներից հետո հաստատված Արեոպագոսի խորհրդի իշխանությունն էր: Յոթերորդն Արիստիդեսի ուրվագծած սահմանադրությունն էր, որն Էփիալտեսը կատարելագործեց՝ տապալելով Արեոպագոսի բռնակալությունը: Ութերորդը չորս հարյուրի իշխանությունն էր, որին հետևեց իններորդ՝ վերականգնված դեմոկրատիան: Տասներորդը Երեսունի ու երկու տասի տիրանությունն էր: Տասնմեկերորդը վերջնականապես հաստատված դեմոկրատիան էր, որն արդեն տեր էր ամենայն ինչի ու ամենայն ինչ ղեկավարում էր քվեարկությամբ՝ թե՛ Հավաքում, թե՛ դատարաններում, ու այս անգամ արդեն գերագույն իշխանությունը մասնատված - փոխանցված էր բոլոր տեսակի դատարաններին, այսինքն՝ գերագույն ու կենտրոնացված իշխանության մենաշնորհի չկար: Գերագույն իշխանությունը, այնուամենայնիվ, **Ժողովրդական հավաքինն էր**, որը, փաստորեն, մշտական գործող մի հանրաքվե էր եւ, ինչպես

նշում է Արիստոտելը՝ «...երբ դեմոկրատիան քվեարկելու գործություն ունի, ապա ինքն է հասարակարգի տերը»¹⁶⁸:

Հայ իրականության մեջ, ի դեմս կանոնական սահմանադրությունների, ոչ միայն որոշակի զարգացում ստացավ հին հունական ժողովրդավարական-իրավական մշակույթը, **այլև այն լրացվեց «քվեարկելու գործություն» ունեցող եւ հասարակական համաձայնության դրսեւորում հանդիսացող նոր իրողությամբ՝ ի դեմս հատուկ հրավիրված Սահմանադիր ժողովի:**

XVIII դարի վերջին քաղաքակրթությունը պետության Հիմնական օրենքի ի հայտ գալը՝ Սահմանադրության անհրաժեշտությունը, կապեց հասարակական համաձայնության հենքի վրա երկրի կայուն եւ դինամիկ զարգացումը երաշխավորելու անհրաժեշտության հետ: Ըստ էության, նույն նպատակն է հետապնդվել նաև հայ իրականության մեջ վաղ միջնադարում: **Պատմությունը վկան է նաև այն իրողության, որ նման իրավական հենքի վրա, հասարակական համաձայնությամբ առաջնորդվելով, ձեռք են բերվել մեծ հաջողություններ, եւ երկիրը զարթոնք է ապրել, իսկ բռնության, «անհասկացողությունների», տարաբնույթ «հակառակությունների» տիրապետման պայմաններում ուղեկից են եղել անխուսափելի կորուստներն ու ավերածությունները:**

Մովսես Խորենացին Հայոց պատմությունն սկսում է «...մեր առաջին թագավորների եւ իշխանների անհիմաստասեր բարքերի մասին» կշտամբանքի խոսքերով եւ արժանին է հատուցում նրանց, որոնց «...շարադրած գրվածքները կարդալիս **աշխարհական կարգերի գիտություն ենք ձեռք բերում եւ քաղաքական կարգեր ենք սովորում**»¹⁶⁹ (ընդգծումը մերն է - Գ.Հ.): Անտարակույս, այդ արժանիներից էր նաև Վաչագան Թագավորը, որի իմաստությունից քաղվելիք դասերն այժմեական հնչեղություն ունեն:

Չափազանց արժեքավոր են նաև Մատթեոս Ուռուխյեցու վկայությունները, երբ խոսելով Աղվենի Կանոնական սահմանադրության ընդունման ժամանակաշրջանին առնչվող իրադարձությունների մասին, նշում է. «...Այն ժամանակներում էր, որ չորս մասի բաժանվեց սուրբ Գրիգորի Աթոռը ...Այն ժամանակներում էր, որ բանական

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 26:

¹⁶⁹ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1997, էջ 70:

ոչխարները շնաբարո դարձան, գազանները սիրտ ձեռք բերեցին եւ հանդգնեցին եւ սկսեցին հայրապետների երեսին հաչել: ...Սակայն նման տակնուվրայությունը եւ սրտմտությունը չկարողացավ մուտք գործել Ադվենից երկիրը, որ կոչվում է Խորին աշխարհ Հայոց...»¹⁷⁰:

Կրկին ու նոր տեսանկյունով անդրադարձ կատարելով սահմանադիր ժողովներին ու կանոնական սահմանադրություններին՝ կարող ենք ընդհանրացնել, որ հայ միջնադարյան իրականության մեջ գործ ունենք սահմանադրական մշակույթի կոնկրետ դրսևերումների, **սահմանադրականության կարելուր տարրերի դրսևորման իրողության հետ**՝ անկախ պետականության առկայությունից կամ կորստից:

Ուշադրության է արժանի նաեւ օտարազգի հետազոտողների տեսակետը միջնադարյան հայ հասարակական հարաբերությունների առնչությամբ: Ինչպես նշում է Ի. Կոհլերը՝ «Հայաստանի քաղաքական անյաջողությունն իւր քաղաքային եւ իրաւագիտական կազմութեան հետ սերտ յարաբերութիւն ունի: Արդէն հին ժամանակներէն՝ թագաւորութեան օրերէն, դեռ Հայկազեան Հարստութեան ժամանակն, որ մինչեւ առասպելական նախաժամանակն կը հասնի, կար բազմութիւն մը գրեթէ՝ ինքնիշխան ժառանգական իշխաններու՝ նախարարաց, որոնք իրենց երկրի մեջ կատարեալ անկախ էին: Բայց թագավորին հարկ տալու օրէնք մը կար, նաեւ պարտաւորութիւն մը պատերազմի երթալու անոր հետ, սակայն ասոր կը պակասէր ծանրագոյն նուիրականութիւն՝ աւատային ultima ratio -ն, կուգեմ ըսել՝ եթէ մէկն զանց առնէր պարտքը, աւատը չէր կորուսաներ»¹⁷¹: Այնհայտ է, որ հասարակական համակարգի խիստ ապակենտրոնացումն իր մեջ լուրջ վտանգներ է պարունակել եւ նման պարագաներում կենտրոնաձիգ արժեքների դերը բացառիկ կարելուրվել է: Հայ առաքելական եկեղեցու հետ մեկտեղ այդ հարցում բացառիկ են եղել նաեւ ազգային-եկեղեցական ժողովների ինքնուրույն դերն ու կանոնական սահմանադրությունների համախմբող նշանակությունը:

Միանշանակ է եւ այն, որ երբ հայ իրականության մեջ շեշտը դրվել է փոխհամաձայնությամբ ձեռք բերված կանոնների միջոցով ողջ հանրային կյանքը կարգավորելու վրա, ակնառու առաջընթաց է գրանցվել բոլոր ոլորտներում: Թեկուզ սաղմնային վիճակում, սա-

170 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, Երեւան, 1991, էջ 247:
171 Գոլեր [Ի. Կոհլեր], Իրաւունք Յայոց, Վիեննա, 1890, էջ 3:

կայն սահմանադրական մշակույթը մեր լինելության ու զարգացման համար առանցքային նշանակություն է ունեցել դեռևս մարդկային հանրության պատմության արշալույսին: Հակառակը, անհամաձայնությունները կամ դրանք բռնությամբ հաղթահարելու փորձերն են դարձել անհաջողությունների պատճառ: Դարերի կշիռ ունեն մեծ Քերթողահոր խոսքերն Արշակունյաց թագավորության կործանման առիթով հնչեցրած ողբում, ուր որպես հիմնական պատճառներ շեշտադրվում են. «...վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը»¹⁷²: Խորենացու ընդհանրացումները բացառիկ կարևոր նշանակություն ունեն եւ լուրջ դասեր են բովանդակում, քանի որ, ինչպես արդարացիորեն նշում է Ռ. Միրումյանը՝ «Ի տարբերություն Մետրոդորոս Սկեպսացու, որը մոդելավորում է հայերի ապագան նրանց ներկայի իմաստավորման հիման վրա, Խորենացին կանխորոշում է հայ ազգի ապագան նրա անցյալի արժեքներում, քանզի անցյալն է գտնում ազգի ապագայի նախագծի՝ ազգային պետականության վերականգնման անհրաժեշտության հիմնավորման հիմքը»¹⁷³:

Կրկին անդրադարձ կատարելով ազգային-եկեղեցական ժողովների կողմից կանոնական սահմանադրությունների ընդունման իրողություններին, անհրաժեշտ ենք համարում շեշտել, որ քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո, երբ հոգևոր ու աշխարհիկ կյանքի կանոնները հիմնականում համատեղ են սահմանվել, ամենաբնորոշ եւ ուշադրության արժանի հանգամանքներից է այն, որ **իրավական կարգավորումների հիմքում դրվել է հասարակական համաձայնության գործոնը**, որը սահմանադրական մշակույթի առանցքային դրսևորումներից է: Հասարակության ներսում հարաբերությունները կանոնակարգվել են ժողովական մակարդակում ձեռք բերված համաձայնությամբ եւ ոչ թե պարտադրանքի ու միանձնյա թելադրանքի ուժով: Այս իրողությունն ըմբռնելու բանալին մեզ առաջին հերթին տալիս է Մովսես Խորենացին՝ Աշտիշատի ժողովի առնչությամբ վերոնշյալ իր հիշատակությամբ (Մեծն Ներսեսը «...եպիս-

172 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե դար, Երևան, 1997, էջ 275:

173 Միրումյան Ռ.Ա., Պատմափիլիսոփայական հայեցակարգերը XIX դարի հայ փիլիսոփայության մեջ. Մեթոդաբանական վերլուծություն, Երևան, 2003, էջ 42:

կոպոսների եւ աշխարհականների ժողով գումարեց, կանոնական սահմանադրությամբ հաստատեց ողորմածությունը, արմատախիլ արեց անգթությունը...»¹⁷⁴): Արդեն նշել ենք, որ այս ժողովն արգելեց ամուսնությունը մերձավոր ազգականների միջեւ, դատապարտեց նենգությունը, քսությունը, ազահությունը, որկրամոլությունը, հափշտակությունը, արվամոլությունը, բամբասանքը, մոլի հարբեցողությունը, ստախտությունը, պոռնկությունը, արյունահեղ սպանությունը, ինչպես նաեւ պարտավորեցրեց նախարարներին գթասրտությամբ վարվել աշխատավորների հետ, իսկ ծառաներին՝ հնազանդ լինել իրենց տերերին: Որոշվեց տկարների համար կառուցել հիվանդանոցներ, որբերի ու այրիների համար՝ որբանոցներ ու այրիանոցներ, օտարների ու հյուրերի համար՝ հյուրանոցներ, դրանք պահելու համար սահմանվեցին տուրքեր ու հարկեր: Որոշվեց երկրում լուսավորություն տարածելու նպատակով Հայաստանում բացել հունարեն եւ ասորերեն լեզուներով դպրոցներ (նպատակը երկրի ներսում կրթություն տալը եւ այդ նպատակով երիտասարդների արտահոսքը կասեցնելն էր): Այս բոլորն իրենց հերթին ստեղծում էին նոր միջավայր ու խթան սահմանադրական մշակույթի հետագա զարգացման համար:

Տգիտությամբ չարափառությունը չիմնավորելու համար հայ միջնադարյան պատմությունն ունի նաեւ այլ ծանրակշիռ վկայություններ՝ հասարակական համաձայնության արդյունք հանդիսացող իրավական կանոններին հետևելու շեշտադրումներով: Այս առումով հատկապես առանձնանում է Հայոց Կաթողիկոս Հովհաննես Օճնեցու (Հովհան Իմաստասեր Օճնեցի) Կանոնագիրքը (հաստատվել է Դվինի Զ ժողովում 719 թ.): Ինչպես իրավագիտրեն վկայակոչում է Ռ. Ավագյանը, համարձակ կարելի է ասել, որ Հովհան Իմաստասեր Օճնեցին աշխարհում առաջիններից մեկն էր՝ բյուզանդական կայսր Փլավիոս Հուստինիանոսից (482-565 թթ.) հետո եւ առաջինը Հայաստանում, որ իրականացրեց հայկական «Corpus juris canonici»-ի համակարգումը, օրենքների մի ժողովածու, որ գոյություն է առնում հիերոկրատիան գլխավորող կաթողիկոսից եւ բովանդակում է հայ եկեղեցական ժողովներում վավերացրած եւ ընդունված կանոնադրությունները»¹⁷⁵: Հայոց Կանոնագիրքը բացառիկ երեւույթ է ամե-

174 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Ե դար, Եր., 1997, էջեր 224-225:

175 Ավագյան Ռ. Յ., Հայ իրավական մտքի գանձարան, հ. 1, Եր., 2001, էջ 144:

նից առաջ այն առումով, որ այն ամփոփեց սահմանադիր բնույթ ու նշանակություն ունեցող կանոններ եւ իր ժամանակի համար դարձավ IV-VIII դարերին բնորոշ հայ սահմանադրական մտքի յուրատեսակ խտացում: Կանոնագիրքը հավաստեց նաեւ, որ կանոնական սահմանադրությունները բովանդակել են հստակ արժեքային հենքի վրա խարսխված ու կենսունակ նորմեր, որոնք իրենց թե՛ իրավակիրառական նշանակությամբ եւ թե՛ որպէս հասարակական վարքագծի հիմնարար կանոններ, մեծ դեր են կատարել ազգի համահավաք գոյի կազմակերպված ընթացքը երաշխավորելու համար: Կանոնագիրքը, համատեղելով ու ներդաշնակելով արդեն իսկ եղած կանոնները, շեշտելով դրանց կարեւորությունը տվյալ ժամանակի ու ապագայի համար, լինելով առաջին համահավաք իրավական փաստաթուղթը մեր ժողովրդի պատմության մեջ՝ որակապէս նոր աստիճանի բարձրացրեց հայ սահմանադրաիրավական մշակույթը եւ գերակա իրավանորմների դերը հանրային կյանքում, հոգեւոր ու աշխարհիկ հարաբերություններում¹⁷⁶: Այն բացառիկ դեր կատարեց հայ իրավունքի ու իրավամտաժողովրդի հետագա զարգացման գործում:

Կանոնագրքի իրավափիլիսոփայական հիմնական առանձնահատկություններից է այն, որ շեշտը դրվում է մարդկային էության որակների վրա: Մարդն իր արժանապատվությամբ եւ սոցիալական դերով դիտվում է որպէս բարձր արժեք, եւ իրավակարգավորման գլխավոր խնդիրն է համարվում, ինչպէս նշում է Վ. Հակոբյանը՝ «խրատի, բարոյական դատապարտման եւ կամ ապաշխարության միջոցով կանխել մարդկանց համակեցության կանոնների հնարավոր խախտումները»¹⁷⁷: Նման իրավամտաժողովրդում, անտարակույս, վկայում է քաղաքակրթական բարձր որակների եւ իրավական մշակույթի հիմքում ընկած ծանրակշիռ արժեքների մասին: Միան-

176 Զովհան Իմաստասեր Օձնեցի կաթողիկոսը ոչ միայն մշակեց իրավական մեծ արժեք ներկայացնող 32 կանոնները, այլեւ մեկ ժողովածուի մեջ ամբողջացրեց 24 կանոնախումբ եւ կազմեց «Կանոնագիրք Յայոցը», որը հաստատեց Դվինի V ժողովը 719թ.: X դարի կեսից այն համալրվում է 26 նոր կանոնախմբերով, իսկ XVII դարում «Կանոնագիրք Յայոցը» արդեն ընդգրկում է 98 կանոնախումբ:

177 Տե՛ս Կանոնագիրք Յայոց / աշխատասիրությամբ՝ Վազգեն Յակոբյանի, Երեւան, 1964թ., հատոր Ա, էջ XII:

գամայն իրավացի է Վ. Վարդանյանը՝ շեշտելով, որ «Օձնեցու գորավոր միտքն ու իմաստնությունը կոփեցին հայոց օրենսդրությունը, համակարգելով դատավարական իրավունքը, ժողովրդի ներքին կյանքը կարգավորող իրավանորմերն ու կանոնական սահմանումները»¹⁷⁸:

Հայ ժողովրդի պատմությունը վկայում է, որ որքան էլ լի են եղել իր նկատմամբ գործադրված բռնություններն ու ավերածությունները, միեւնույն է, դրանք չեն կարողացել խաթարել ինքնության հիմնական որակները: Դրանց մեջ շարունակաբար գերակայել են մարդասիրությունը, երեսույթների խորքային խոհափիլիսոփայական ընկալումը, հավատարմությունը հոգեւոր արժեքներին ու օրինականությանը: Հայ իրականության համար անսասան արժեք է եղել այն իրողության գիտակցումը, որ «...հոգիների կորստյան դուռն առավել է, քան՝ մարմինների, երբ խտտորվում են Հոր, Որդու եւ Սուրբ Հոգու անբիծ, ուղիղ եւ առաքելաբարոզ հավատից»¹⁷⁹: Հազար տարի առաջ Գրիգոր Նարեկացին իր Մատյանում լավագույնս ներկայացրեց հայ ինքնության հոգեւոր ընկալումների խտացումը՝ «...նշավակելով ամենատարբեր կրքերն ամենքի» շեշտեց, որ մարդ արարածի գործած մեղքերը, որքան էլ բազում ու բազմաբնույթ լինեն, ոչ այնքան նրա հանցանքն են, որքան նրա դժբախտությունը: Եվ հայ ժողովրդի շուրթերից հնչեցնելով «...ամենաբարձր աղոթքն առ Աստված», Նարեկացին մարդուն դարձի բերելու հնարավորություն ու նրան մարդ ապրեցնելու միջոցն էր աղերսում Աստծուց: Իսկ դա հնարավոր էր համարում համերաշխության, արդարության, օրենքին հետևող ու «հոգով բժշկված» հասարակության պայմաններում, ուր արդարությունը չի կարող «...նվազելով իսպառ չքանա» կամ «...իրավունքների նժարը սաստիկ թեթևանա»՝ ծանրացնելով «...անիրավության կողմը»:

Պատմագրության փաստումով 1130 թվականին է ստեղծվել Դավիթ Ալավկա որդու՝ նախաբանից եւ 97 հոդվածներից կազմված «Կանո-

178 Վարդանյան Վ., Հայոց եկեղեցու պետաիրավական եւ գաղափարական շահերի պաշտպանությունը Հոփհաննես Օձնեցու կողմից // Սուրբ Հոփհաննես Օձնեցի Հայրապետը եւ իր ժամանակը (2003թ. հունիսի 3-5-ի գիտաժողովի նյութերը): Ս. Էջմիածին, 2004, էջեր 25-26:

179 Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երեւան, 1999, էջ 123:

նական օրինադրությունը»¹⁸⁰, որը, համարվելով հայկական ինքնուրույն դատաստանագրքի ստեղծման առաջին փորձ¹⁸¹, հենվելով հայ սովորությանը իրավունքի վրա, ստեղծում է հասարակության մեջ աննախադեպ խորացող արատավոր երեսույթների դեմ իրավական պայքարի լուրջ նախադրյալներ: Դ-ա Հայաստանի համար այնպիսի ժամանակաշրջան էր, որ, Մովսես Կաղանկատվացու խոսքերով ասված՝ «...երեք կատաղի գորապետերը՝ սովը, սուրը եւ մահը ծվատում էին անխնա»: Անհրաժեշտ էր խիստ օրենք եւ հստակ կարգ ու կանոն՝ առողջ բարքեր ու օրինավոր կենցաղ հաստատելու համար:

Հայ իրականության մեջ խորապես գիտակցվում էր նաեւ, որ միայն լավ օրենքն ու կարգը բավարար չեն, հարկավոր է, որ մարդիկ նույնպես հասկանան այդ օրենքներով ապրելու անհրաժեշտությունը, այդ գիտակցությունը լինի ոչ թե պարտադրանք, այլ համոզմունք, որը խարսխված լինի կայուն ու աստվածահաճո, մարդու բանական բնությունից թելադրվող արժեքների վրա: Ինչպես գեղեցիկ բանաձեւում է Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին. «Մարդու բարքը ներքուստ ուղղվում է խղճից եւ արտաքուստ՝ օրենքից: Որովհետեւ եթե խիղճը, թյուր կամքից թելադրվելով, կռվում է ընդդեմ ուղիղ բանականության, օրենքը հանդիմանելով սանձում է նրան ու հնազանդության բերում: Խիղճը՝ իբրեւ բնության կողմից հաստատված ներքին դատավոր, եւ օրենքը՝ իբրեւ Աստծուց հաստատված արտաքին իրավաբար¹⁸², կշեռքի երկու թաթի նման արդարության մետղ կենտրոնում են պահում»¹⁸³:

180 Տե՛ս Ավագյան Ռ. Դ., Դայ իրավական մտքի գանձարան (մ.թ.ա. IX դ.-մ.թ. XIX դ.), Երեւան, 2001, էջ 182:

181 Տե՛ս Ղազինյան Գ.Ս., Քրեական դատավարության պատմական եւ արդի հիմնախնդիրները Դայաստանում, Երեւան, 2001, էջ 21:

182 Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաեւ այս արտահայտությունը՝ «...եւ օրենքը՝ իբրեւ Աստծուց հաստատված արտաքին իրավաբար»: Փաստորեն 18-րդ դարի վերջին եւ 19-րդ դարի սկզբին Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցին խոսում է «բնական օրենքի» մասին, շեշտում է, որ մարդը միայն օրենքի պահպանությամբ կարող է «...Աստծո նման լինել՝ աստվածային մարդ»: Օրենքի հիմքը Աստվածային մնայուն արժեքներն են, «...ով ուղիղ մտքից ու օրենքի հրամանից խտտորվում է, Աստծուն ու իր բնությանը դեմ է դուրս գալիս» (Պողոս Պատրիարք Ադրիանուպոլսեցի. Խրատի թանգարան, Ս. Էջմիածին, 2002, էջ 163-164:

183 Նույն տեղում, էջ 163:

Նշված հանգամանքը դեռևս XII դարում հատուկ կարեւորելով էր, որ Ներսես Շնորհալիին (Ներսես Գ. Կլայեցի) իր խոսքն ուղղեց ոչ միայն առ Աստված, այլև «Թուղթ ընդհանրականով» (1166 թ.) իր պատվիրաններն ուղղեց հոգեւոր դասին, «Աշխարհի իշխաններին» ու ժողովրդին: «Թուղթ ընդհանրականը», լինելով Շնորհալու անդրանիկ կոնդակը եւ նրա արձակ գործերի պատկը, բացառիկ նշանակություն ունի նաև իրավական ու սահմանադրական մշակույթի ընդհանրացումների առումով: Այս փաստաթուղթը եզակի է հայեցակարգային-ծրագրային ընդգրկումով, արժեհամակարգային ընդհանրացմամբ, նորմ-նպատակների, նորմ-սկզբունքների ու «վարվեցողության» նորմերի փոխներդաշնակությամբ: Կազմելով հասարակական բոլոր շերտերին ուղղված («Առ կրօնաւորս», «Առ առաջնորդս սրբոց ուխտից վանականաց», «Առ առաջնօրդս եկեղեցւոյ», «Առ զինուորյաց դասս», «Առ երկրագործս», «Առ կանանց դասս» եւ այլն) հոգեւոր ու բարոյական բարձր արժեքների վրա խարսխված կանոններ ու խրատներ, Շնորհալին համոզված էր, որ այդ պարտավորությամբ ապրելով եւ գործելով միայն կարելի է հաջողություն ակնկալել, հաղթահարել «չարության ու բազմիշխանության» տագնապները, առաջնորդվել «արդարության շավիղներով»: Աշխարհականներին հորդորում էր «...չանիրաւել, չզրկել, չար գործակալներ չգործածել, անիրաւ դատաստան չկտրել, այրին ու աղքատը պաշտպանել, աշխատաւորին վարձքը չկտրել, ամենուն հաւասար աչքով վերաբերուիլ, մարմնաւորի համար հոգեւորը չմոռնալ...»¹⁸⁴: Առանց չափազանցելու կարելի է արձանագրել, որ «Թուղթ ընդհանրականը» բովանդակում է մարդու իրավունքներին ու իշխանությունների իրավասություններին վերաբերող բազում նորմեր: «Աշխարհի իշխաններին», մասնավորապես, պատվիրակվում է. «...անիրավութեամբ մի՛ վարուէք հպատակների հետ՝ ծանր եւ դժուարակիր հարկեր դնելով, որոնք չեն կարող կրել, **այլ իւրաքանչիւրին օրէնքով եւ ըստ իր կարողութեան չափի՛ դատէք**» (ընդգծումը մերն է - Գ.Հ.), «Ոչ ոքի մի՛ զրկէք եւ մի՛ նեղէք աղքատներին ու տնանկներին...», «Ձեր երկրի վրայ չար եւ անիրաւ գործավարներ եւ գաւառապետեր մի՛ նշանակէք...», «Անիրաւութեամբ մի՛ դատէք որեւէ մէկին, այլ ուղիղ դատաստան արէք...», «Մի անտեսէք

¹⁸⁴ Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», հատոր Ա, Ս. էջմիածին, 2001, էջեր 1647-1649:

այրու եւ աղքատի իրաւունքներ...» եւ այլն¹⁸⁵: Ուշադրության են արժանի Շնորհալու մոտեցումները միայն օրենքով դատելու, օրենքի հետադարձ ուժի, պատասխանատվության աստիճանի ու պատժի համաչափության եւ բազմաթիվ այլ իրավական հիմնահարցերի վերաբերյալ («...չլինի, որ բարկութիւնից դրրդուած եւ անարդար իրաւունքով որոշում տաք՝ կան մէկին պատժէք, կան մահուան վճիռ կայացնէք, քանզի Նոր օրենքը այս բանը չի թոյլատրում, իսկ Հին օրենքը թէւ թոյլատրում է իւրաքանչիւրին պատժով կան մահուամբ դատել, բայց ոչ՝ անտեղի, այլ՝ ըստ յանցանքների արժանի լինելու»¹⁸⁶): Ավելին, ողջ պատվիրանների հենքը մարդն է՝ իր բարոյական կերպի, հոգեւոր անաղարտության, բանական գոյի իմաստավորված կազմակերպման անհրաժեշտությամբ:

Բերված վկայություններից անառարկելիորեն հետեւում է, որ հայ միջնադարյան իրականության մեջ հասարակական համաձայնության արդյունք է եղել ոչ միայն օրենքի ու կանոնների ընդունումը, այլեւ ակնհայտ է, որ տարաբնույթ գործոններով պայմանավորված առանձնակի կարեւորվել է դրանց անհրաժեշտությունը եւ հասարակական նման պահանջն ու անհրաժեշտ գիտակցությունն է դրվել այդ կանոնների սահմանման հիմքում¹⁸⁷:

Իրավական մտքի բացառիկ օրինակներից մեկը հանդիսացող՝ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» (1184 թ.) ստեղծման հիմնական պատճառներից է եղել նաեւ այն, որ «... չարն ընդհանրապես գորացել է եւ նա հանգեցրել է «գրեւատրականն ի մեզ արեւն» կամ «զգիտութիւնն, որ ի բնութենէ ունէաք»: Նույն այդ չարը, որ վերածվել է հոգու անկատարության, վերացրել է կատարելությունը եւ վշտակցության, սիրո փոխարեն դրել ատելությունը: Դատաստանագիրքը

185 Ս. Ներսես Շնորհալի, Թուղթ ընդհանրական, «Գանձասար» հանդես, 1991, էջեր 103-123:

186 Մասնավորապես տե՛ս նույն տեղում, էջ 112:

187 Խոսելով կանոնական իրավունքի դերի ու որպես իրավունքի աղբյուր դրա մշակակության մասին՝ Ս. Զովհաննիսյանն իրավացիորեն շեշտում է, որ «...օտար եւ ազգային կանոնախմբերը հնարավորություն են ընձեռում ուրվագծելու հայ ընտանեկան, քրեական, քաղաքացիական իրավունքների կարեւոր իմաստիտուտները, պատկերացում կազմելու այն մասին, թե ինչպես էր հայ եկեղեցին իրականացնում «գործակալութեան մեծի դատավորութեանն» գործունեությունը, ինչպես թագավորության գոյության, նույնպես եւ պետականությունից զրկվելու ողջ շրջանում» (տե՛ս Զայ ժողովրդի պատմություն, 8 հատորով: Երեւան, 1967-1984, հ. 2, էջ 482):

պետք է նպաստի վերականգնելու բնական օրենքի զգացողությունը, կատարելությունը, եւ ատելությունը միմյանց նկատմամբ փոխարինի վշտակցությամբ ու սիրով»¹⁸⁸: Դրա հետ մեկտեղ, նա պահանջում է, որպէսզի դատավորը լինի «...չափահաս, հմուտ, քաջուսումն, հանճարեղ, գիտուն, օրէնսգետ, բարի, առաքինի, աննախանձ, ուշիմ, զգաստ, անաչառ, խիստ, անկաշառելի, համբերող»¹⁸⁹:

Մխիթար Գոշը, «Նախադրության» Բ գլխում Դատաստանագիրքը գրելու անհրաժեշտությունը բացատրում է հետեւյալ պատճառով.

Առաջին, մեզ՝ հայերիս, բազում անգամ պարսավել են թե այլադավանները եւ թե քրիստոնյաները, որ մենք գրավոր դատաստան-դատաստանագիրք չունենք:

Երկրորդ, չարությունը մարդկանց մեջ, չարն ընդհանրապէս զորացել եւ «զի զգիտութիւնն որ ի բութենէ ունէաք չարութիւնն շիջոյց, եւ զկատարեալ ստեղծումնն մեղքն անկատար գործեաց, եւ զսէրն եւ զվշտակցութիւնն ատելութիւն խափանեաց» /Դատ., էջ 10/:

Երրորդ, ծուլության պատճառով մարդիկ չեն վարժվում օրենսգիտության մեջ, անգիտակ են օրենքներից, հետևապէս նրանց որոշումներն էլ ճիշտ չեն կամ շեղվում են օրենքից, ուստի «վասն այնորիկ կամեցաք գրով դատաստանիս զնոսա իբրև ի քնոյ զարթուցանել» /նոյն տեղը/:

Չորրորդ, Մովսիսական օրենքը, մարգարեների խոսքը եւ Ավետարանը մեկ անգամ արդեն արված լինելով, այդպես էլ մնացել են անշարժ, քարացած, մինչդեռ մարդկանց վարքն ու բարքը տարբեր են եւ փոփոխվում են ըստ ժամանակի, ըստ ժողովրդի եւ ըստ աշխարհաց: Հետևաբար, այնպիսի դատաստանագիրք է պետք, որ արտահայտի այդ փոփոխությունները:

Հինգերորդ, առաջ Սուրբ Հոգին ներգործում էր մարդկանց վրա եւ նպաստում ճշմարիտ դատաստան կատարելուն, եւ Հոգին էր օրենք՝գրված մարդկանց սրտերի մեջ, ուստի գրավոր օրենքի կարիքը չկար: Այժմ, երբ Սուրբ Հոգին այն ազդեցությունը չունի եւ մարդիկ «վրիպել են» քրիստոնեական եղբայրասիրությունից, ուղղամտու-

¹⁸⁸ Մխիթար Գոշ, Գիրք Դատաստանի / աշխատասիրությամբ խոսրով Թոսյանի, Երեւան, 1975, էջ ԺԴ:

¹⁸⁹ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Յայոց /Իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեանքք Վահան Ծ. Վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 130:

թյունից եւ «վասն այնը պատճառի հարկեցաք գրել» Դատաստանագիրքը:

Վեցերորդ, դատական գործերը վճռական են նաև երդմամբ, բայց աճել է չարությունը մարդկանց մեջ, եւ նրանք, չնայած որ երդումն արգելվել է Աստծո կողմից, այդուհանդերձ, մարդիկ տեղի եւ անտեղի երդվում են եւ հաճախ՝ սուտ: Խախտված օրինական կարգը վերականգնելու նպատակով գրվեց Դատաստանագիրքը:

Յոթերորդ, Դատաստանագիրքը գրվում է, որպեսզի հայերն այլևս չդիմեն այլազգի դատարանին:

Ութերորդ եւ ամենակարևոր պատճառներից մեկը. «տեսանենք զի այժմ ոմանք յեպիսկոպոսաց եւ ի վարդապետաց եւ ի քահանայից եւ ի գլխաւոր աշխարհականաց եւ իշխանաց զի աչառանօք եւ կաշառօք եւ տգիտութեամբ թիրեմ զուղիղ դատաստանն: Վասն որոյ սակաւութիւն դրոշմել կամեցաք զգիրս դատաստանի, զի լիցի ի յանդիմանութիւն այնպիսեացն եւ յուղղութիւն» /Դատ., էջ 12/, այսինքն, դատաստանագիրքը պետք է օրինականություն եւ կարգուկանոն հաստատել, որպեսզի արդարադատությունը լինի անաչառ, անկաշառ եւ արդարացի:

Ուշագրավ են նաև մյուս պատճառները, սակայն վերը նշվածն ամերկբայորեն վկայում է, թե պատմական տվյալ ժամանակաշրջանը՝ 12-րդ դարը, որքան խորն է զգացել դատաստանագրքի անհրաժեշտությունը՝ հայոց պետականության վերականգնման եւ հասարակական կյանքում կանոնն ու կարգը հաստատելու համար:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Մխիթար Գոշի իրավաբաղաքական հայեցակարգը խարսխվել է բնական (աստվածային) իրավունքի տեսության վրա, որի հիմնական սկզբունքներն են՝ մարդկանց հավասարությունը (Աստծո առջեւ), ազատությունը, ապրելու իրավունքը, սեփականության անձեռնմխելիությունը եւ այլն: Հետեւաբար՝ **դրական իրավունքը պետք է բխեցնել բնական իրավունքի սկզբունքներից, որոնք մնայուն են ու անփոփոխ**¹⁹⁰, իսկ դրական իրավունքն ստեղծվում է մարդկանց կողմից եւ դրա վրա իրենց կնիքն են դնում ժամանակն ու կոնկրետ հասարակական պայմանները¹⁹¹: Իրավունքի եւ օրենքի հասկացութային

190 Ըստ Մխիթար Գոշի՝ բնական օրենքը «...յայտնի է ամեն մարդուն բնագործմամբ եւ չէ կարօտ գրաւոր սահմանադրութեան» (Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց /Իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան ծ. Վարդապետի Բաստանեանց, Վաղարշապատ, 1880, էջ 94:

191 Տե՛ս Միրումյան Կ., Հայ քաղաքական մտքի պատմությունից, Երեւան, 2002, էջեր 174-176:

տարբերությունների նման խոր ընկալումը նույնիսկ մեր օրերում է բացակայում: Բացառիկ կարևոր ընդհանրացումներից մեկն էլ այն է, որ ըստ Մխիթար Գոշի՝ յուրաքանչյուր ժողովուրդ է երկիր պետք է ունենա սեփական օրենսդրություն ու իրավական նորմեր, ընտրել դատաստանն «...ըստ ժամանակի, եւ ազգի, եւ աշխարհաց»¹⁹²: Ըստ Վ. Բաստամյանցի՝ Մխիթար Գոշը «...լաւ գիտէ որ՝ դատաստանագիրքը յօրինվում է ժողովրդի համար, որ՝ նա պիտի պարունակէ իւր մեջ ժողովրդի գաղափարը եւ հայեացքը իրաւաբանական յարաբերութեանց վերայ, որ՝ նա պիտի զարգանայ եւ կատարելագործուի ժողովրդի իրաւաբանական եւ առհասարակ մտաւոր զարգացման հետ միասին»¹⁹³:

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը հիմք հանդիսացավ 1518թ. լեհահայոց դատաստանագրքի կազմման համար, երբ լեհական կառավարության կողմից այստեղ բնակվող հայերին դատական ինքնավարություն արտոնվեց¹⁹⁴:

XII դարի հայ իրավական մտքի կարևոր որակներ են դրսևորվել նաև Ներսես Լամբրոնացու (1153-1198) մոտ: Ինչպես բնական աշխարհում, այնպես էլ սոցիալ-քաղաքական ու բարոյական ոլորտներում **ամեն ինչ համարելով հարաբերական՝** Լամբրոնացին միաժամանակ գտնում էր, որ մարդիկ ի վերուստ օժտված են ընտրության (կամքի) ազատությամբ, ուստի ամբողջությամբ պատասխանատու են իրենց բոլոր գործողությունների, արարքների ու դրանց հետևանքների համար: Նա չափազանց կարևորում էր դաստիարակության դերը հասարակության մեջ առկա անօրինականությունների եւ անարդարությունների հաղթահարման ու վերացման գործում: Գտնում էր նաև, որ հասարակության մեջ եղած թերությունների անտեսումն ու քողարկումը հանգեցնում են առկա սխալների եւ արատների խորացման:

192 Մխիթար Գոշ, նշվ. աշխ. (վերջին հղումը), նախադրութիւն գրոց դատաստանի, էջ 3:

193 Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց /իրաւաբանական հետազօտութիւնք հանդերձ ծանօթութեամբք Վահան Ծ. Վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 93:

194 Այդ դատաստանագիրքը լատիներեն թարգմանությամբ ներկայացվել է լեհաց Սիգիզմունդ I թագավորին եւ մի շարք փոփոխություններով ու լրացումներով հաստատվել նրա կողմից 1519թ. (տե՛ս Կամենեց-Պողոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.). աշխատասիրությանբ Վ. Գրիգորյանի, Երևան, 1963, էջեր 54-55):

Կամայականությունների ու օրինազանցությունների դեմ պայքարին էր կոչված նաև Սմբատ Սպարապետի Գատաստանագիրքը (1265 թ.), որը XIII-XIV դարերում գործնական խոշոր նշանակություն ունեցավ Կիլիկյան հայ պետականության ամրապնդման ու հզորացման գործում¹⁹⁵: Ընդ որում, հետազոտողներն իրավացիորեն նշում են, որ եթե Մխիթար Գոշի իրավական գիտակցությունն ու ստեղծած համակարգը ոչ միայն ելնում են բնական իրավունքի տեսությունից, այլև ներթափանցված են դրանով, ապա Սմբատ Սպարապետը, թեև ելնում է բնական իրավունքի սկզբունքներից, այդուհանդերձ, նրա ստեղծած համակարգը լիովին վերաբերում է դրական իրավունքի ոլորտին¹⁹⁶:

XIV դարի հայ իրավական միտքը՝ հանձին Գրիգոր Տաթևացու (1346-1409), առանձնահատուկ կարևորեց մարդ-հասարակություն փոխհարաբերության խնդիրը եւ առաջադրեց այն հայեցակարգային մոտեցումը, որ համապետական կարևորագույն խնդիրները (երկրի բարեկարգման, խաղաղության ու պատերազմի եւ այլն) պետք է լուծվեն **հավաքական բանականությամբ եւ հավաքական կամքով**: Ընդ որում, որպես իրավունքի սուբյեկտ հանդես է գալիս ոչ թե ինքնակալ միապետը, այլ ժողովուրդը, նրա միասնական կամքը: Միապետը, այս հայեցակարգի համաձայն, զրկվում է միահեծան իշխանությունից, համապետական խնդիրները միանձնյա լուծելու իրավունքից: Իրավացի են այն հեղինակները, որոնք գտնում են, որ տվյալ դեպքում գործ ունենք սահմանադրական միապետության որակների հետ¹⁹⁷: Տաթևացին նույնպես տարբերակում է «աստվածային իրավունքը» եւ դրական իրավունքը, որն ամրագրված է օրենսդրական զանազան փաստաթղթերում: Աստվածային օրենքներն անփոփոխ են ու բացարձակ, դրանց առջև բոլոր մարդիկ հավասար են: **Գրական իրավունքի նորմերը պետք է խարսխված լինեն եւ բխեն աստվածային օրենքներից**՝ ճշմարիտ արտացոլելով հասարակական-քաղաքական իրականությունը¹⁹⁸: Տաթևացու իրավափիլիսոփայական հայացքնե-

195 Տե՛ս Смбат Спарпет: Судебник /աշխատասիրությամբ Ա.Գ. Գալստյանի, Երևան, 1958, էջ 195:

196 Մասնավորապես տե՛ս Միրումյան Կ., նշվ. աշխ., էջ 240:

197 Նույն տեղում, էջ 215:

198 Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցման, Կ. Պոլիս, 1729, էջ 12:

րում ակնհայտ առանձնանում են այնպիսի եզրահանգումներ, որոնք ներկա չափանիշներով սահմանադրական սկզբունքների դեր ու նշանակություն ունեն:

Դարեր շարունակ մեր ինքնության կարևոր որակներից ու հայ իրավամտածողության էական հատկանիշներից է եղել այն, որ «անօրինությունների» դեմ պայքարի ու «սիրով սպրելու» հիմնական միջոցը «Աստծուն ցանկալի ու եկեղեցուն կյանքի կոչելու գործում պիտանի օրենքներն» են, «մարդու բանական բնությանը» հարիր կանոնները¹⁹⁹, որոնց «հնազանդելու» եւ դրանք ամուր պահելու հասարակական կամքն ու պատրաստակամությունը նույնպես կարևորվել են²⁰⁰: Այս իրավափիլիսոփայությունն է ընկած նաեւ Դվինի (VI, VII դդ.), Պարտավի (VIII դ.), Սիսի (1243 թ.), Չագավանի (1268 թ.), Երուսաղեմի (1651 թ.) ժողովների որոշումների հիմքում:

Պետականության դարավոր կորուստը, արտածին գործոնների շարունակական ազդեցությունը հնարավորություն չեն տվել իրավամտածողության այս հարուստ ժառանգությունը սահմանադիր ժողովի միջոցով մարմնավորել երկրի միասնական ու ամբողջական սահմանադրության մեջ: Պատմական անցած ողջ ժամանակաշրջանի համար բնորոշ են եղել սահմանադրական մշակույթի ներկա ընկալումների տեսանկյունից ոչ ամբողջականացված դրսևորումները: Սակայն հնարավոր չի եղել կաղապարել մտքի թռիչքը: 1773թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում հայր եւ որդի Շահամիրյանները նախածեռնում եւ 1788թ. ավարտին են հասցնում իրավունքի բացառիկ մի հուշարձան՝ իրենց երազած անկախ Հայաստանի՝ 521

199 Վերլուծաբանների ուշադրությանն է արժանացել այն հանգամանքը, որ միջնադարյան հայ իրավըմբռնման վրա հոգևոր արժեքների ազդեցությունը մեծ է եղել: Օրինակ, Խ. Սամուելյանը նշում է, որ «Մխիթար Գոշի հայացքով իրավունքը էթիկական մի հասկացություն է. իրավունք եւ բարոյականություն ասած բաներն անանջատ առումներ են. նրանք կազմում են մի ամբողջություն, իրար համակերպված միասնություն» (Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Երեւան, 1939, էջ 87):

200 Ի դեպ, ինչպես Մխիթար Գոշի Դատաստանագրքի, այնպես էլ հետագայում ծնված իրավական կոթողներից շատերի (այդ թվում՝ 1760-ականներին ստեղծված եւ 1135 հողված բովանդակող՝ Աստրախանի հայոց դատաստանագրքի) համար հիմնական աղբյուրներից մեկը հայ ժողովրդի սովորութային իրավունքն էր (տե՛ս Դատաստանագիրք Աստրախանի Հայոց / աշխատասիրությամբ Ֆ.Գ. Պողոսյանի, Երեւան, 1967, էջ ԾԴ):

հողվածից կազմված Սահմանադրությունը, որն անվանեցին «Որոգայթ փառաց»։ Այս աշխատասիրությունը հասարակական-իրավական մտքի պատմության եզակի ձեռքբերումներից է, որում որոշակի համակարգով առաջադրված գաղափարները, տեսական խոր ընդհանրացումների արդյունք լինելուց զատ, միջազգային սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեք են։ Աշխատության հենց անվանումը, սահմանադրական իրավունքի ճանաչված պրոֆեսոր Դոմինիկ Ռուսոյի գնահատմամբ, իրավական ամբողջ մի տեսություն է։ Այս Սահմանադրությունը կոչված էր երաշխավորելու «...ազատությունը պահպանելու հնարավորություն» եւ ստեղծելու «...անճողապրելի որոգայթ՝ բոլոր վատթար մարդկանց համար, որպեսզի հարկադրված լինեն մտնելու օգտաշատ գործողության լծի տակ»²⁰¹։ Այն պետք է անկյունաքարային նշանակություն ունենար արդար օրենքներով կառավարվելու, բնական իրավունքով ու արդարությանը առաջնորդվելու համար²⁰²։

Անհրաժեշտ ենք համարում առանձնահատուկ շեշտել այն կարեւոր իրողությունը, որ XVIII դարում հայ սահմանադրական մշակույթը հենվում էր իրավունքի գերակայության սկզբունքի, բնական իրավունքների առաջնայնության գիտակցության, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման, սահմանադրական գործառույթների, հակակշիռների ու զսպումների ներդաշնակության երաշխավորման վրա։ «Որոգայթ փառացը» ոչ թե եվրոպական իրավական մտքի ներագդեցության արձագանք էր, այլ այն իրավաճանաչողական եւ գիտամեթոդաբանական առումով յուրովի ընդհանրացում է Ադվենի, Աշտիշատի, Շահապիվանի, Դվինի, Պարտավի եւ այլ ժողովների, Հովհաննես Օձնեցու, Հովհաննես Մարկավազի, Դավիթ Ալավկա որդու²⁰³, Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի եւ հայ հասարակական-իրավական մտքի էլի շատ ու շատ այլ երախտավորների բեղմնավոր գործունեու-

201 Որոգայթ փառաց, Երեւան, 2002, էջ 15:

202 Նույն տեղում, էջ 16:

203 Դավիթ Ալավկա որդու «Կանոնական օրենսդրության» մասին Մանուկ Աբեղյանը նշում է, որ «... այդ երկն իր տեսակով մի նոր բան է եղել մեր հին գրականության պատմության մեջ, եւ այդ նորն էլ ծնունդ է նոր մտավոր հոսանքի» (տե՛ս Հայոց հին գրականության պատմություն // Աբեղյան Մ., երկեր, հ. Դ, Երեւան, 1970, էջ 85):

թյան արդյունքները: Մեծ ընդհանրացում է բովանդակում Շահամիր-
յանների Սահմանադրության 389 հոդվածը, որում ամրագրվում է.
«Օրենքի ամեն հոդված պարունակում է բազմաթիվ մանրամասներ,
որոնք կարող են բացատրվել իմաստուն մարդկանց կողմից: Օրեն-
քի մասին բոլոր բացատրությունները, եթե օգտակար նպատակ ունեն
եւ հաճո են Հայոց տան ցանկությանը»²⁰⁴, պետք է պատվի արժանա-
նան, բայց ոչ այն բացատրությունները, որոնք դեմ են մարդու բնույթ-
յանը»²⁰⁵: Այստեղ ոչ միայն օրենքի մեկնաբանման դասական կանոն
է սահմանվում, այլև շեշտվում է, որ դրա հիմքը մարդու բանական
բնությունն է: Ընդգծենք, որ ժամանակակից սահմանադրական իրա-
վունքի համար նույնպես ելակետայինը մարդու բնական իրավունք-
ներն ու ազատություններն են:

Անդրադարձ կատարելով ժողովրդի իշխանության, իրավունքի
գերակայության, ներկայացուցչական ժողովրդավարության, իշխա-
նությունների բաժանման ու հավասարակշռման, գործութային ան-
կախության, սոցիալական պաշտպանվածության, ընդհուպ՝ սահմա-
նադրական արդարադատության եւ սահմանադրական բազմաթիվ
այլ հիմնարար սկզբունքների, առաջին անգամ հայ իրականության
մեջ ներկայացվում է սահմանադրական իրավունքի նորմերի ամբող-
ջական ու կանոնակարգված համակարգ՝ ոչ միայն ընդհանրացնելով
հայ եւ համաշխարհային իրավական մտքի ձեռքբերումները, այլև
պետական նոր մտածողության սկիզբ դնելով: «Իրավունքի եւ արդա-
րադատության ծառի պտղաբերումները» միայն կարող են «արդար
կառավարությունների» բարեպաշտ գործելակերպի հիմքը դառնալ՝
արդարության ու օրինականության մեջ փնտրելով անհատի ու հա-
սարակության երջանկությունը, ելակետ ունենալով «...օրենքով ու
արդարությամբ մեր կյանքը վարելու» հրամայականը - սա է «Որո-
գայք փառացի» մեծագույն պատգամը: Որպեսզի «...մեր կյանքը
վարենք իբրև բանական եւ արժանապատիվ մարդ... մենք պետք
է մեզ համար ընտրենք վարք, կարգ ու օրենք»²⁰⁶, չառաջնորդվենք
«...անկարգությամբ ու անօրինությամբ», կարողանանք «...միա-

204 Հայոց տունը ներկայացուցչական օրենսդիր մարմին էր, ուստի օրենքի
մեկնաբանությունը չէր կարող հակասել օրինաստեղծ մարմնի կողմից դրա
հիմքում դրված իրավական բովանդակությանը:

205 Նույն տեղում, էջ 192:

206 Նույն տեղում, էջ 20:

խումբ հավաքվել՝ լսելու իրավունքի մասին, կազմելու օրենքներ...»²⁰⁷: Որքան դիպուկ ու հստակ է ասված, որքան ներդաշնակ է ընդհուպ XXI դարի առաջադիմական իրավամտածողությանը: Իրավական պետության կայացման միակ ճանապարհը օրենքը «կազմելուց» առաջ «իրավունքի մասին լսելու» խորհուրդը խորությամբ հասկանալն ու իրագործելն է: Հետետությունն այն է, որ «...ոչ մեզ մոտ եւ ոչ էլ մեր աշխարհում թող ո՛չ լինի եւ ո՛չ էլ հանդես գա որեւէ մեկը, ով իր արարքներով ինքնագլուխ ու կամայական մարդ լինելով՝ չպատժվի ըստ օրենքի, եւ թող մեր օրենքները լինեն մեր տերն ու թագավորը, մեր օրենքներից դուրս ուրիշ ոչ ոքի չընդունենք գերադաս, բացի միայն Արարիչ Աստծուց...»²⁰⁸:

Առավել քան այժմեական է նաեւ «Որոգայթ փառացի» ներածության մեկ այլ ընդհանրացումը. «...որքան ավելի **բարություն** է մեզ հարկավոր, **որ մեր կյանքը զապենք օրենքով ու ազատությամբ**, որպեսզի արժանի դառնանք Տիրոջ պաշտամունքին...»²⁰⁹ (ընդգծումը մերն է - Գ.Հ.): Իսկ այդ օրենքները պետք է շարադրվեն «...մարդու բնությանը ներդաշնակ, ըստ մեր բանական հոգու հաճության»²¹⁰:

Չափազանց ուշագրավ է նաեւ Շահամիրյանների անդրադարձը հռոմեական իրականությանը. «...քանի դեռ սիրով ու հավատարմությամբ արիացած ու գոտեպնդված՝ նրանք անշեղ ու հավատարիմ մնացին իրենց օրենքներին, աննշան վիճակից աճեցին, բազմացան եւ իրենց օրենքների շնորհիվ երջանկացան...», սակայն երբ Հռոմի ծերակուտակները թույլ տվեցին, որ կայսեր պաշտոնը «մտնի ժառանգականության կարգը», «դրանով նրանց լույսի մեջ մուտք գործեց մի մեծ խավար, նրանց բարության մեջ՝ չարը, նրանց միաբանության մեջ՝ ճեղքվածք, նրանց համահավասարության մեջ՝ քարածգություն, դար ու փոս, այսինքն՝ վերին ու ստորին: ...Դրանով ամբարշտությունը մտավ նրանց մեջ»²¹¹:

Լինելով խորհրդարանական կառավարման ձեւ ունեցող պետության Սահմանադրություն՝ «Որոգայթ փառացը» նախատեսում է Հա-

207 Նույն տեղում, էջ 35:

208 Նույն տեղում, էջ 48:

209 Նույն տեղում, էջ 38:

210 Նույն տեղում, էջ 71:

211 Նույն տեղում, էջ 47:

յոց տան (օրենսդիր մարմնի) ընտրությունների հստակ կարգ, եռամ-
 յա ժամկետ, որոշակիացված լիազորություններ, օրենքի ընդունման
 ու նշանակումների իրականացման ընթացակարգեր եւ այլն: Օրենս-
 դիր մարմինն է ձեւավորում գործադիր ու դատական իշխանություն-
 ները՝ օրենքով սահմանված կարգով: Իշխանության յուրաքանչյուր
 մարմին գործում է օրենսդրությամբ իրեն վերապահված իրավա-
 սության շրջանակներում՝ «Հայրապետը, նախարարը, եպիսկոպոսը,
 տանուտերը, քահանաները, իշխանավորները՝ ոչ որ ոչ մեկին իրենց
 դիրքին չվերաբերող հրաման չպետք է արձակեն եւ կամ ոչ ավելի,
 քան այն, որ ըստ յուրաքանչյուրի կարգի տրվել է նրանց թե՛ եկեղեցու
 եւ թե՛ Հայոց տան կողմից»²¹² (հոդվ. 364): Սահմանվում է իրավական
 ակտերի ենթադասության որոշակի սկզբունք՝ «Ամեն մի փաստա-
 թուղթ, թե՛ վաճառքի, թե՛ դաշնադրության եւ թե՛ այլ գործողություն-
 ների վերաբերյալ, ում կողմից էլ որ այն ստորագրված լինի՝ արժեք
 չի ունենա, եթե հակառակ է Հայոց օրենքին կամ **ընդդեմ է մարդու
 բանական բնությանը**»²¹³ (ընդգծումը մերն է - Գ.Հ.): Գերակայությու-
 նը տալով «մարդու բանական բնությանը» հստակ ու ամբողջական
 ձեւակերպում է տրվում **իրավահավասարության** սահմանադրական
 սկզբունքին (հոդվ. 3). «Յուրաքանչյուր մարդկային բնություն թե՛ հայ
 եւ թե՛ այլ ազգից՝ ծնված Հայաստան աշխարհում եւ կամ օտար երկ-
 րից պանդխտած Հայաստան, թե՛ արական եւ թե՛ իգական սեռին
 պատկանող, ամենքն էլ ապրելու են համահավասար ու ազատ են
 լինելու իրենց բոլոր գործերում. ոչ որ ոչ մեկի վրա իշխելու իրավունք
 չունի, իսկ նրանց ձեռքի գործերը պետք է վարձատրվեն համապա-
 տասխան ամեն մի աշխատանքի՝ ըստ Հայոց օրենքի»²¹⁴: Նույնիսկ
 դատապարտյալների իրավունքների պաշտպանության հարցերը
 չեն վրիպել Շահամիրյանների ուշադրությունից՝ «Պարտագանգե-
 րի բանտը պետք է մաքուր կացարան լինի, որպեսզի վնաս չհասցնի
 բանտարկյալ անձանց առողջությանը»²¹⁵ (հոդվ. 148): Նախատեսե-
 լով սեփականության իրավունքի իրացման, սոցիալական պաշտպա-
 նության խնդիրների սահմանադրական կանոնակարգման որոշակի

212 Նույն տեղում, էջ 180:
 213 Նույն տեղում, էջ 133:
 214 Նույն տեղում, էջ 75:
 215 Նույն տեղում, էջ 138:

նորմեր, միաժամանակ հատուկ կարեւորվում է ազգային-պետական առաջնահերթությունների խնդիրը: Հոդված 127-ով, մասնավորապես, սահմանվում է. «Հայոց տնից օժանդակություն պետք է լինի բոլոր մասնագետների, հատկապես փիլիսոփայության, աստղագիտության, բժշկության, երաժշտության, ճարտասանության եւ այլ [բնագավառների ներկայացուցիչների] նկատմամբ»²¹⁶:

Ամեն ինչից վեր դասելով օրենքի «համահավասար» դերն ու զայիչ ուժը, դրա հիմքում դնելով իրավունքն ու «մարդու բնությանը ներդաշնակ» արժեքները, **հիմնվելով բնական իրավունքի (աստվածային իրավունքի) եւ հասարակական դաշինքի հայեցակարգերի վրա**, Շահամիրյանները շարադրեցին «Հայաստանյայց աշխարհի կառավարման համար» իրենց սահմանադրական կանոնները, որոնք, սահմանադրական մշակույթի բացառիկ արժեք լինելուց զատ, հանրագիտարանային մնայուն նշանակություն ունեն անցյալի ու ներկայի իրավամտաժողովուրդը կամրջելու, անկախ պետականության կայացման ճանապարհն անխտոր անցնելու համար անցյալից ուսանելի դասեր քաղելու առումով:

XVIII դարի երկրորդ կեսում ռուսահայ հասարակական կյանքի կարեւորագույն երեսույթներից է 1135 հոդված բովանդակող՝ Աստրախանի Հայոց դատաստանագիրքը, որը Եղիազար Գրիգորյանի, Գրիգոր Կանպանյանի եւ Հովհաննեսի որդի Սարգսի կողմից ստեղծվեց 1747-1765թթ. ընթացքում²¹⁷: Ելնելով պատմական կոնկրետ իրողություններից, հաշվի առնելով Եկատերինա Երկրորդի կողմից հայերին ինքնավարություն տալու եւ 1765թ. «Ընդհանուր Հայ-Ասիական դատարանի», իսկ 1800 թվականից՝ մագիստրատի իրավունքով Հայկական դատարանի հիմնումը, ինչպես նաեւ այն գործնական դերը, որը վերապահվեց սույն դատաստանագրքին, կարելի է եզրակացնել.

1. այս դատաստանագիրքն ունեցավ իրավաքաղաքական մեծ նշանակություն,
2. այն հայ իրավական մտքի շարունակականության ու զարգացման դրսեւորում էր,

²¹⁶ Նույն տեղում, էջ 134:

²¹⁷ Տե՛ս Դատաստանագիրք Աստրախանի Հայոց, Երեւան, 1967, 359 էջ:

Ավագյան Ռ. Հ., Դատաստանագիրք Աստրախանի Հայոց // Իրավական գիտահանդես «Վասն արդարութեան», 2003, N38, էջեր 8-11:

3. ազգային արժեքները, ավանդույթներն ու սովորույթները հարգելու և հաշվի առնելու ճանապարհով սահմանվեցին վարքագծի թույլատրելի կանոններն ու դրանցից շեղվելու դեպքում նախատեսվող պատժամիջոցները,

4. իրավական կարգավորումները վերաբերում էին ազգային պետականությունը կորցրած էթնիկ հանրությանը,

5. այն կառուցված էր քրիստոնեական գաղափարաբանության ու իրավընկալման մնայուն սկզբունքների վրա և հումանիստական ու առաջադիմական էր իր իրավակարգավորիչ դերով և նշանակությամբ:

Ռուսական ու Օսմանյան կայսրությունների տիրապետության տակ ապրող հայերի համար կենսական նշանակություն է ստանում ազգային «Կանոնադրությունների» մշակումը: Հատկանշական է 1850-60 - ականներին Օսմանյան կայսրությունում հայերի սահմանադրական շարժումը և «Ազգային սահմանադրության» տարբերակների մշակումը: Հայերի համար Ազգային սահմանադրությունը դիտվում էր որպես հավաքական գոյի, ինքնության պահպանման երաշխիք: Իրավական առումով 1863թ. սուլթանի կողմից հաստատված ու գործողության մեջ դրված Ազգային սահմանադրությունը, «Սահմանադրություն» հասկացության՝ Գրիգոր Օտյանի բնորոշմամբ՝ «...ազգի կամ պետության մեջ ամեն անհատի իր բնական իրավունքի և այդ իրավունքի գործողության տերը լինելու» հնարավորությունը տալուն էր կոչված²¹⁸: Ներսես Մելիք-Թանգյանի ամփոփիչ գնահատմամբ՝ Ազգային սահմանադրությունն այն առավելությունն ունեցավ, որ մշակվեցին ընդհանուր սկզբունքներ, քաղաքական և կրոնական ժողովների գործունեությունը Պատրիարքի վերատեսչությամբ ենթարկվեց «երեսփոխանական ժողովի» հսկողությանը: Սակայն Սահմանադրությունը եկեղեցական-հասարակական գործերի կառավարմանը տվեց ոչ թե ոգի, այլ կմախք՝ առանց արյան և նյարդերի. «...այդ մեծաբռնքիւն բառի տակ չէք գտնիլ դատակազմական, դատավարական որոշ ձևեր և օրէնքներ, զանցառուների պատասխանատուութեան ենթարկելու և պատժելու հրահանգների կարգեր, չկան այնտեղ եկեղեցու վարչական, տնտեսական, քահանայական, ծխական, կալուածական խնդիրների վերաբերմամբ կարգ կանոն-

218 Отян Г. На смертном пути. Зограб и Вадкес // Газета "Наше время". - Баку, 1919, 27 апреля.

ներ, ամեն ինչ թողած է հին կարգով, միայն տալով ընդհանուրին սահմանադրական կերպարանք: Ահա եւ Սահմանադրությունը»²¹⁹:

Ազգային սահմանադրության վերաբերյալ եղել են տարբեր կարծիքներ, այն համեմատվել է քառակուսի անիվներով սայլի հետ, նրա դրույթները համարվել են անորոշ, խիստ վերացական, ընդհուպ վիճարկելի է եղել «Սահմանադրություն», թե՞ «Կանոնադրություն» կոչելու պարագան: Այսուհանդերձ, Ազգային սահմանադրությունը, ինչպես նշել է Նիկոլ Աղբալյանը (երկեր, հ. 4, էջ 400), «ճանաչված է իբրեւ Հայ համայնքի հիմնական օրենք»: Այն առաջադիմական, ժողովրդավարական զարգացումների արդյունք ու արտահայտիչ է եղել: Անհատի ու հասարակության (ազգի) փոխհարաբերությունների սկզբունքների սահմանումը, եկեղեցու սահմանադրական կարգավիճակի ու իրավասությունների հստակեցումը, Ազգային կրոնական ժողովի ու «Քաղաքական ժողովի», «Ուսումնական խորհրդի», «Տնտեսական խորհրդի», «Դատաստանական խորհրդի», «Վանօրէից խորհրդի», «Ելեւմտից հոգաբարձութեան», «Կտակաց հոգաբարձութեան», «Հիվանդանոցի հոգաբարձութեան», «Թաղական խորհուրդների», «Ազգային ընդհանուր ժողովի» կազմավորմանն ու իրավասությունների հստակեցմանը, ինչպես նաեւ Սահմանադրության փոփոխությունների կարգին առնչվող սահմանադրական նորմերը վկայում են, որ իրավագիտական առումով գործ ունենք սահմանադրական մշակույթի ամբողջական, առաջադիմական լուրջ դրսեւորումների հետ: Այս պարագայում, ի տարբերություն «Ռոբզայթ փառացի», սահմանադրական նորմերը հանդես չեն եկել որպէս անհատական ցանկություն, այլ ձեռք են բերել էական իրավակիրառական նշանակություն:

Ներկայացված բոլոր ժամանակներում մեր երկրի պատմությունը, ինչպես նշեցինք, շարունակաբար եղել է կորուստների, օտարների կողմից հալածանքի, առանց պետականության՝ հրաշքով գոյատեւած հավաքական տեսակի պատմություն: Պետականության ավելի քան յոթհարյուրամյա կորուստն իր կնիքն է դրել մարդկանց հասարակական գիտակցության վրա: Ակամայից ձեւախեղվել են քաղաքացիական շատ որակներ: Մշակելով ու գործադրելով համազգային

²¹⁹ Տե՛ս Հայոց եկեղեցական իրավունքը, Ներսես Մելիք-Թանգյան, գիրք Ա, Շուշի, 1903, էջ 735:

նշանակության կանոնական սահմանադիր նորմեր, այսուհանդերձ, պետության օրենքն ընկալվել է նաև որպես օտարի պարտադրանք ու արգելակ իր ինքնության դրսևորումների հանդեպ:

Այսօրյա պատմական անդրադարձը վկայում է, որ մեր ազգային արժեքները կամ մագաղաթյա տարեգրություն ունեն, կամ գլխավորապես ծնվել ու վերարտադրվել են օտար հանգրվաններում՝ բնականաբար, չունենալով պետական հոգածություն ու աջակցություն:

Իրողություն է եւ այն, որ մենք՝ որպես հայ տեսակ, որպես ժողովուրդ, երրորդ հազարամյակի նախաշեմին վերահաստատեցինք մեր անկախությունը, սակայն դեռևս չենք կրում անկախ պետության լիարժեք քաղաքացու համար անհրաժեշտ քաղաքացիական որակներ: Դրանք հեշտությամբ ձեռք չեն բերվում: Ոչ միայն լուրջ խնդիր է պետականության կորստի դարերի փոշին թոթափելը կամ մտայնության ու աշխարհըմբռնման վերաիմաստավորման գիտակցումը, այլև ծրագրանպատակային լրջագույն աշխատանք է անհրաժեշտ ծավալել պետության քաղաքացի կերտելու գործում:

Չխորանալով վերջինիս բաղադրատարրերի վերլուծության մեջ, քննարկվող նյութի առումով ցանկանում ենք առանձնացնել ու շեշտել հատկապես պետության իրավական մշակույթի կարևորությունը: Ինչպես տեսանք, սահմանադրականությունն ինքնին մշակութային երևույթ է²²⁰: Անառարկելի է նաև, որ իրավական մշակույթն ազգային-պետական մշակութային խորապատկերի անբաժանելի մասն է: Հանդգվեցինք նաև, որ պատմականորեն հայ իրավական մշակույթն ուշագրավ ու համամարդկային ընդգրկման հուշարձաններ է թողել: Սակայն իրավական մշակույթը, լինելով ազգային մշակույթի օրգանական մաս, հիմնականում **կտրված է եղել ազգային-պետական մշակութային միջավայրից**, որը պարզապես չենք ունեցել պետականության կորստի շրջանում:

Պետականության կայացման ներկա առաջնահերթություններին պետք է դասել սահմանադրաիրավական այնպիսի մշակույթի ձևավորումը, որը սնվելով դարերի կուտակած մնայուն արժեքներից, հասարակական համաձայնության ու համերաշխության միջավայրի

220 Sten Dik Ховард. К конституционной демократии во всем мире: американский взгляд. Вопросы демократии. Электронный журнал Государственного департамента США. Том 9, номер 1, март 2004 г., <http://usinfo.state.gov/journals/journalr.htm>.

ստեղծման, մարդու՝ աստվածային պատվիրաններով ապրելու կանոնական սկզբունքներից, հիմք կծառայի անհատի քաղաքացիական որակների կազմավորման ու ամրապնդման համար, կդառնա իրավական ժողովրդավարության հաստատման նախադրյալ: Ժողովրդավարության հաստատումն ինքնին բավարար ու ինքնանպատակ չէ: Այն **պետք է լինի իրավական, սահմանադրական ժողովրդավարություն՝ համակարգին հաղորդելով ամբողջականություն եւ ազատական անհրաժեշտ որակներ:**

Երկրում սահմանադրականության հաստատման համար անհրաժեշտ են նաեւ համարժեք քաղաքական մշակույթ, այն կրող քաղաքական կառուցակարգ, ինչպես նաեւ դրանց նկատմամբ հասարակական հստակ պահանջ: Սահմանադրականությունը ենթադրում է հասարակական այնպիսի միջավայր, որին բնորոշ են **անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, արդարադատությունը եւ համերաշխությունը:** Դրանց ապահովումը պետք է կրի համակարգային բնույթ, ներառի հասարակական հարաբերությունների բոլոր ծայքերը, դառնա հավատի ու լավատեսության գլխավոր երաշխիքը: Այս որակները քաղաքական համակարգի բնութագրման գլխավոր չափանիշներն են, իսկ դրանց արմատավորումը՝ պետության գերագույն խնդիրը: Դրանց բացակայությունը վկայությունն է երկրում սահմանադրականության բացակայության, դրանց աղճատումը խոսում է սահմանադրական մշակույթի ցածր մակարդակի ու սահմանադրական ժողովրդավարության անլիարժեքության մասին²²¹:

Այս նկատառումներն ու պատմության դասերը հաշվի առնելով, անհրաժեշտ ենք համարում հանգամանորեն կանգ առնել հայ նորագույն իրականության պայմաններում սահմանադրական մշակույթի տեղին ու դերին առնչվող հիմնահարցերին, որոնք, ցավոք, համակարգված վերլուծության առարկա դեռեւս չեն դարձել: Խոսքը գլխա-

221 Ինչպես արդարացիորեն նշում է պրոֆ. Յովարդը՝ «Որպեսզի սահմանադրական, ազատական ժողովրդավարությունն իրական կյանքում գործի, անհրաժեշտ է, որպեսզի մարդիկ ունենան միմյանց նկատմամբ հավատի որոշակի մակարդակ ու համագործակցության ընդունակություն, այլ ոչ թե տեսլության ու թշնամանքի ճամբարների բաժանվեն» (տե՛ս Дик Ховард, К конституционной демократии во всем мире: американский взгляд. Вопросы демократии. Электронный журнал Государственного департамента США. Том 9, номер 1, март 2004 г., <http://usinfo.state.gov/journals/journalr.htm>):

վորապես վերաբերում է XX դարում հայ իրականության մեջ տեղի ունեցած սահմանադրաիրավական զարգացումներին ու դրանց արդի միտումներին: Սակայն այս փուլում հայ իրականության մեջ սահմանադրական զարգացումների հիմնախնդիրների վերլուծությունը հիմնավոր ու առավել ամբողջական կարող է լինել, եթե այն համադրվի եվրոպական արժեհամակարգային զարգացումների հետ, քանի որ եվրոպական արդի գործընթացները մեր աշխարհաքաղաքական կողմնորոշումների համար վճռական գործոն են դարձել:

**ԳԼՈՒԽ 3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՆ ԻՐԱՎԱԿԱՆ,
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ,
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

**3.1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՐԳԻ
ԻՐԱՎԱՍՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

Եվրոպական սահմանադրական մշակույթը, խոր արմատներ ունենալով հանդերձ, զարգացման յուրօրինակ ուղի անցավ եվրոպական ինտեգրման խորացմանն ու իրավական գլոբալացմանը համընթաց: Դրա ներկա դրսեւորումների ու զարգացման միտումների ուսումնասիրումը չափազանց կարեւոր է ոչ միայն մեր երկրի արժեհամակարգային կողմնորոշումներից ելնելով, այլև այն պատճառով, որ եվրոպական սահմանադրական մշակույթը քաղաքակրթական մեծագույն արժեք է՝ միտված մարդկային հանրության ապագայի կողմնորոշիչներին:

Միջազգային առումով իրավական մտքի մերօրյա զարգացումները շարունակում են ընդհանուր գծերով պահպանել համակարգային երկու հիմնական ուղղվածությունը՝ պայմանավորված իրավունքի աղբյուրների բնույթի ու դասակարգման հանգամանքներով: Ընդհանուր առմամբ, դարերի ընթացքում են ձեւավորվել անգլո-սաքսոնական եւ մայրցամաքային (եվրոպական) իրավական համակարգերի հիմնական առանձնահատկությունները: Դրանք իրենց կնիքն են դրել նաեւ սահմանադրական լուծումների վրա: Այսուհանդերձ, ներկայիս իրավական գլոբալացման հիմնական միտումներից է այն, որ այդ տարբերություններն աստիճանաբար հարաբերական բնույթ են ստանում, գերակայող են դառնում սահմանադրական ընդհանուր սկզբունքներն ու արժեքները, դրանց արմատավորումը հասարակական պրակտիկայում:

Միջազգային սահմանադրաիրավական մտքի ամենաընդհանրական բնութագրիչն է այն, որ ներկայումս, առավել քան երբեւէ, կարելի է հասարակական հարաբերություններում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի երաշխավորումը, այդ հարաբերությունների, այսպես կոչված, սահմանադրականացումը՝ որպես իրավական, ժողովրդավարական պետական համակարգերի կայացման նախադրյալ: Եթե մինչև XVIII դարն իրավաբաղաքական մտքի զարգացումը հանգեցրեց սահմանադրությունների ընդունման, սոցիալական հանրության Հիմնական օրենքի միջոցով հասարակական համաձայնության կայացման գաղափարին, ապա հետսահմանադրական շրջանի գլխավոր խնդիրը՝ **Սահմանադրության միջոցով երկրում սահմանադրականության երաշխավորումն է**, որը որակապես նոր աստիճանի է բարձրացնում սահմանադրական մշակույթը. այն ստանում է իրական բովանդակություն, հասարակության անդամների համար դառնում է ճանաչողության կարելիոր բաղադրիչ, ապրող իրողություն:

Վերջին հարյուրամյակների ընթացքում այս խնդրի հետետողական լուծումը դարձել է եվրոպական իրավական զարգացումների առանցքային ուղղությունը: Դժբախտաբար, մեզանում այն իր որակական արդի դրսևորումների մեջ նոր է այժմեականություն ձեռք բերում, քանի որ, ըստ էության, իրագործելի է միայն անկախ պետականության եւ արժեհամակարգային որոշակի կողմնորոշումների պայմաններում:

Սահմանադրականության իրողությունն առաջին հերթին ենթադրում է պետական ողջ համակարգում, հասարակական հարաբերությունների բոլոր ծալքերում **սահմանադրական ժողովրդավարության հաստատում**: Դա նպատակ է, որին ձգտում են սոցիալական առաջադիմության ուղին ընտրած երկրները: Սակայն այդ նպատակի իրականացումը, մասնավորապես, պահանջում է այնպիսի պարտադիր երաշխիքներ, ինչպիսիք են սահմանադրական նպատակների ու հիմնարար սկզբունքների ճանաչումը եւ երաշխավորումը պետության ու ողջ հասարակության կողմից, սահմանադրական սկզբունքներին համապատասխանող պետական իշխանության առկայությունը, իրավունքի գերակայության սկզբունքի վրա կառուցված

իրավական համակարգի կայացումը, սահմանադրական կարգի ու Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանվածությունը եւ այլն:

Հարցը միայն այն չէ, թե ինչպիսին է Սահմանադրությամբ ամրագրված սահմանադրական կարգը եւ թե ինչ սկզբունքներ են դրված իրավունքի ու իշխանության փոխառնչությունների հիմքում: Էականն այն է, թե հասարակական կյանքում ինչպես է դրսևորվում տվյալ սահմանադրական կարգը, որքանով են միս ու արյուն ստանում Սահմանադրության հիմնարար սկզբունքները, ով է իշխանության իրական աղբյուրն ու կրողը, որքանով է երաշխավորված ու պաշտպանված մարդու արժանապատվությունը, գործնականում որքանով են տարանջատ, անկախ ու հավասարակշռված պետական իշխանության մարմինները: **Վերջիններիս երաշխավորումն է այն հիմնական չափանիշը, որով հնարավոր է գնահատել սահմանադրականության իրական վիճակը եւ սահմանադրական մշակույթի նկատմամբ հասարակության իմաստավորված վերաբերմունքը:**

Նոր հազարամյակում սահմանադրականությանն սպառնացող վտանգների վերլուծության առումով, մեր կարծիքով, ուշադրության են արժանի նաեւ ՌԴ ՄԳ նախագահ, պրոֆեսոր Վ. Ջորկինի ընդհանրացումները, համաձայն որոնց՝ նա այդ սպառնալիքների շարքում, մասնավորապես, առանձնացնում է²²².

1. աշխարհակարգի Վեստֆալյան համակարգի վրա հարձակումները²²³ եւ ցանցային կառավարման սկզբունքների արմատավորումը գլոբալ խնդիրների լուծման գործում,
2. նոր մարտահրավերների ու վտանգների պայմաններում՝ դրանց դեմ պայքարի համատեքստում մարդու սահմանադ-

222 В. Зорькин – Роль конституционного суда в обеспечении стабильности и развития Конституции // Конституционное правосудие, 2004, N2, էջեր 15-28, Зорькин В.Д. - Об угрозах конституционному строю в XXI веке и необходимости проведения правовой реформы в России // Журнал российского права, 2004, N6, էջեր 3-17, Зорькин В.Д., Современный мир, право и Конституция. – М.: Норма, 2010. – С. 54-68.

223 Խոսքը վերաբերում է 1648թ. ստորագրված Վեստֆալյան համաձայնագրերին, որոնք հանդիսացան այն քաղաքական ու իրավական հիմքը, համաձայն որի՝ պետությունն է սոցիալական հանրության կազմակերպման ու միջազգային հարաբերությունների հիմնական իմստիտուտը, իսկ այդ համակարգի հիմքը պետության ինքնիշխանության սկզբունքն է:

րական իրավունքների նկատմամբ ոտնձգությունները, այդ իրավունքների ոտնահարման «օրինականացումը»՝ ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում,

3. երրորդ սպառնալիքը կապված է «սոցիալական պետության» սահմանադրական սկզբունքի իրացման հիմնահարցի հետ²²⁴,
4. չորրորդ սպառնալիքը պայմանավորված է իրավական բարեփոխումների դանդաղ ընթացքով կամ դրանց բացակայությամբ, որը հատկապես վերաբերում է անցումային համակարգերին:

Հեղինակի այս դիտարկումները տիպական են նորանկախ երկրների համար եւ առավել հետաքրքրություն են ներկայացնում այս երկրների միջազգային ինտեգրման տեսանկյունից: Միաժամանակ, վերջին տասնամյակներում միջազգայնացման նոր երեւոյթներն առավել ակտիվ դրսեւորվեցին հատկապես Եվրոպայում, որտեղ միասնական շահերի վրա խարսխված տնտեսական, քաղաքական, հումանիտար եւ, ընդհանրապես, արժեհամակարգային համագործակցությունը բերեց վերպետական գործակցության այնպիսի որակի, երբ ստեղծված միասնական տնտեսական, իրավական, կառուցակարգային բազան միանգամայն օրինաչափորեն օրակարգային է դարձնում նաեւ վերպետական Սահմանադրության ստեղծման անհրաժեշտությունը: Սա արդեն իրավական գլոբալացման բոլորովին նոր որակ է, առայժմ բնորոշ միայն Եվրամիությանը: Այսուհանդերձ, **վերպետական իրավակարգը՝** իր բնորոշ գծերով ու ակտիվ ներագրեցության լիցքով, գնալով տիրապետող է դառնում ողջ աշխարհում:

Հասարակության արժեհամակարգային զարգացումներն ամենից առաջ իրենց արտացոլումն են գտնում երկրի Հիմնական օրենքում, **որն արդարացիորեն կարող ենք համարել տվյալ ազգի ու ժողովրդի հավաքական ինքնակենսագրությունը**²²⁵: Ուստի անցումային համա-

224 Հեղինակը նկատի ունի հասարակության մեջ սոցիալական հանդուրժողականության որոշակի միջավայրի ձեւավորման անհրաժեշտությունը՝ շեշտելով, որ սոցիալական պետության բացակայությունն իրավական պետության փլուզման պատճառ կարող է դառնալ:

225 Եվրոպական բոլոր երկրների սահմանադրությունների ամբողջական տեքստերը՝ համապատասխան փոփոխություններով, ներկայացված են Եվրախորհրդի Վեներտիկի հանձնաժողովի կողմից հրատարակված երկհատորյակում (տե՛ս Constitutions of Europe. Martinus Nijhoff Publishers. Leiden-Boston, 2004, Vol. I, II):

կարգերում սահմանադրական իրականության ծալքերին ամբողջական անդրադարձ կատարելու համար կարելու է ենթ համարում նաև որոշակի նպատակային համեմատական սահմանադրական վերլուծությունը՝ որոշ չափով շեղվելով ավանդական մոտեցումներից: Տվյալ պարագայում խնդիրն այն չէ, թե որ երկրում սահմանադրաիրավական ինչ լուծումներ են առկա: Առավել կարևոր է բացահայտել, թե վերջին մի քանի տասնամյակներում հատկապես եվրոպական տարբեր երկրներում հասարակական-պետական ինչ հիմնախնդիրներ են ծագել եւ դրանք իր ժամանակին սահմանադրական ինչ լուծումներ են ստացել: Այս պարագայում մենք կարելու ենք ոչ թե սահմանադրությունների, այլ սահմանադրական փոփոխությունների համեմատական վերլուծությունը:

Օրինակ, Ավստրիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Գերմանիայի, Դանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Հունաստանի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Ֆինլանդիայի եւ մի շարք այլ երկրների վերջին տասնամյակների սահմանադրական փոփոխությունների ու սահմանադրական օրենքների, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ մի շարք երկրների (Լեհաստան, Սլովենիա, Չեխիա, Սլովակիա, Բուլղարիա, Ռուսաստանի Դաշնություն, Լիտվա, Էստոնիա, Վրաստան, Գրդգուտան եւ այլն) սահմանադրությունների ուսումնասիրությունից հետևում է, որ սահմանադրական մշակույթի ձևավորման ու զարգացման տեսանկյունից առկա են մի շարք կայուն ու ընդհանուր միտումներ.

1. հասարակական-պետական հարաբերությունների **առանցքն է դառնում մարդը՝** իր անօտարելի արժանապատվությամբ եւ իրավունքներով: Վերջիններս սահմանադրորեն ամրագրվում ու ճանաչվում են որպես անմիջական գործող իրավունքներ, դառնում են ժողովրդի ու պետության կողմից իշխանության իրականացման սահմանափակիչներ, ստանում ներպետական ու միջազգային պաշտպանության հուսալի երաշխիքներ, հանդես գալիս որպես տվյալ հասարակական համակարգի գնահատման հիմնական չափանիշներ: Մարդկային հանրության արժեքների համակարգում **տիրապետող է դառնում իրավունքի գերակայության սկզբունքը:** Զաղաքացիական հասարակության կայացման գլխավոր չափանիշ է դառնում ոչ թե իշխանությամբ՝ իրավունքի, այլ իրավունքով իշխանության սահմանափակումը,

2. Ժողովրդավարական արժեքները հիմնավորապես դառնում են սահմանադրական կարգի հենքը եւ մարդկանց ազատությունների երաշխիքը, նկատվում է համընդհանուր միտում կենտրոնական իշխանության աստիճանական սահմանափակման, ուժի (քաղաքական, վարչական, տնտեսական) ապակենտրոնացման եւ ինքնակառավարման հնարավորությունների ընդլայնման ու երաշխիքների ամրապնդման հարցերում,
3. իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հետեւողական իրացումը, դրանց գործառույթային հավասարակշռումը, խելամիտ զսպումն ու հակակշռումը դառնում են համընդհանուր պահանջ: Ներկայացուցչական ժողովրդավարության զարգացումներն առանձնահատուկ կարեւորում են հասարակության քաղաքական կառուցակարգերի կատարելագործումն ու մարդկանց քաղաքական իրավունքների պաշտպանությունը,
4. հատուկ ուշադրության առարկա է դառնում դատական իշխանության անկախության, համակարգային լիարժեքության, ամբողջականության, գործունակության ապահովման խնդիրը,
5. մեծապես կարեւորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես հասարակության ժողովրդավարական ինքնավարության առանձնահատուկ ձեւ,
6. ամրապնդվում են ներսահմանադրական կայունության երաշխիքները, արմատավորվում է մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական կուռ համակարգ, սահմանադրական կարգն օժտվում է առավել կենսունակ «**իմունային համակարգով**», մարդու իրավունքների մեջ առանձնահատուկ կարեւորություն է ստանում նրա սահմանադրական արդարադատության իրավունքը,
7. հասարակական օրգանիզմի «իմունային բավարարության» ապահովման խնդիրների լուծումները նկատելիորեն փնտրվում են սահմանադրական դաշտում եւ, իր հերթին, ազգային սահմանադրությունների յուրաքանչյուր փոփոխություն միջազգային լայն արձագանք է ստանում,

8. գնալով է՛լ ավելի են կարելորվում միջազգային իրավունքի տեղն ու դերն ազգային իրավական համակարգերում: Նկատելի են սահմանադրական հիմնական հասկացությունների նույնականացման միտումներ: Ներդաշնակվում են մոտեցումներն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման եւ մարդու իրավունքների սահմանափակումների չափանիշների ընտրության հարցերում: Միաժամանակ, փնտրվում են ազգային առանձնահատկությունների եւ վերազգային մոտեցումների «հաշտեցման» եզրեր:

Նշված ընդհանուր միտումների կողքին մեծապես կարելորվում են նաեւ իշխանության թեւերի գործառույթներն իրականացնող ինստիտուտների զարգացման, դրանց գործառութային դերի հստակեցման եւ անհրաժեշտ ու բավարար լիազորություններով օժտելու հարցերը: Մյուս կողմից, իշխանությունների գործակցությունն առավել մեծ չափով է խարսխվում համագործակցության սկզբունքի եւ դինամիկ հավասարակշռություն ապահովող լուծումների վրա:

Նշված օրինաչափություններն առաջին հերթին համակարգային նոր որակ են ստացել եվրոպական իրավունքում: Ընդհանրապես Եվրոպական միությունը նույնպես ներկայումս գտնվում է տարբեր փոփոխությունների փնտրտուքում: Դրանք վերաբերում են հիմնարար փաստաթղթերում ամրագրված արժեքներին եւ մոտեցումներին, մասնավորապես, եվրոպական համայնքների պայմանագրին (որն էականորեն փոփոխվել էր միասնական եվրոպական ակտերով, Եվրոպական միության մասին պայմանագրով, Ամստերդամի եւ Նիսի պայմանագրերով) եւ Եվրոպական միության մասին պայմանագրին (որն էականորեն փոփոխվել է Ամստերդամի, Նիսի պայմանագրերով եւ Լիսաբոնյան համաձայնագրով):

Ներկա մոտեցումների արդյունքում, հաղթահարելով որոշ տարածայնություններ, փորձ արվեց Եվրոպական միության առաջին իրավական փաստաթուղթը դարձնել Միության Սահմանադրությունը: Իրավափիլիսոփայական մտքի ու հասարակական պրակտիկայի կարելուր ձեռքբերումներից էր հատկապես այն, որ առավել քան հստակեցվում էր սահմանադրական կարգի հիմքը կազմող արժեքների համակարգը: Սահմանադրության նախագծի 2-րդ հոդվա-

ծը պարզապես անվանվում էր «Միության արժեքները»: Այն սահմանադրական մակարդակով ամրագրում էր, որ **«Միությունը հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների հարգումը: Այս արժեքներն ընդհանուր են անդամ պետությունների համար, որոնցում հասարակությանը բնորոշ են անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, արդարադատությունը եւ համերաշխությունը»:** Սրանք լոկ բառեր չէին, այլ քաղաքակրթական մի ամբողջ համակարգի հիմքը կազմող արժեքներ, եւ եվրոպական ընտանիքին լիարժեք անդամակցելու մտադրություն ունեցող յուրաքանչյուր երկրում այս արժեքները՝ դրանց ամբողջության ու համակարգային փոխալայմանավորվածության մեջ, պետք է դառնան կենսունակ ու հիմնաքարային նշանակության կողմնորոշիչներ:

Չնայած այն բանին, որ սահմանադրական այդ պայմանագիրը վերջնական կյանքի չկոչվեց եւ իր տեղը «զիջեց» Լիսաբոնյան համաձայնագրին, այսուհանդերձ, արժեքանական առումով եվրոպական մոտեցումներում որեւէ փոփոխություն չարձանագրվեց: Ավելին, եվրոպական ներկա զարգացումներն արձանագրում են, որ եթե երկրում բացակայում է մարդու իրավունքների հարգման մշակույթը՝ ամեն ինչ իմաստագրվում է: **Մարդիկ պետք է սահմանադրական հարաբերությունների մեջ մտնեն որպես որոշակի մշակույթի կրողներ՝ համակեցության մշակույթի, ինքնաճանաչման մշակույթի, արժանապատվության մշակույթի:**

Իսկ որքանո՞վ են արժեքանական այդ մոտեցումները բնորոշ վերափոխվող հասարակական համակարգերին:

Նախկին համայնավար հասարակարգի փլուզումը որքան էլ վերափոխեց աշխարհակարգը, միլիոնավոր մարդկանց մեջ մտայնությունն ու հաճախ՝ նաեւ աշխարհըմբռնումը չփոխվեցին: Եվրոպան տվյալ պարագայում զուտ աշխարհագրական ընկալում չէ, այն քաղաքակրթական արժեքների մի համակարգ է, եւ այդ արժեքների կրողը պետք է դառնա իրավական, ժողովրդավարական զարգաց-

ման ճանապարհ ընտրած պետության քաղաքացին: Իսկ այդ արժեքները մեզ՝ հայերիս, խորթ չեն, խոր արմատներ ունեն հենց մեր պատմության ծալքերում եւ իրավափիլիսոփայական ընկալումների առումով լավագույնս դրսևորվել են, մասնավորապես, Հակոբ եւ Շահամիր Շահամիրյանների հեղինակած՝ «Որոգայթ փառաց»²²⁶ սահմանադրական աշխատասիրության մեջ: Սակայն որքանով են դրանք ապրող ու կենսունակ արժեքներ մեր օրերում, ինչ տեղ ու դեր ունեն մեր նորօրյա աշխարհընկալման ու պետականորեն հանրային կենսագոյի կազմակերպման հարցում՝ լուրջ վերլուծության ու իմաստավորման անհրաժեշտություն ունեն:

Իրավափիլիսոփայական մոտեցումների տեսանկյունից եվրոպական զարգացումների արդի տրամաբանությանը հաղորդակից լինելու եւ մեզ համար արժեհամակարգային հստակեցումներ կատարելու առումով անհրաժեշտ է թեկուզ ամենահիմնական գծերով բացահայտել ու ընկալել եվրոպական սահմանադրականության բնույթն ու հատկապես իրավունքի էության գիտական ընդհանրացումները վերջին հարյուրամյակների ընթացքում:

Անտարակույս է, որ պատմության մեջ իրավահասկացողությունը լուրջ էվոլյուցիա է ապրել: Լեգիստական իրավամտաձողությունը, որը Եվրոպայում տիրապետող էր ընդհուպ մինչև XIX դարասկիզբը²²⁷, ընդունում էր, որ մարդն իշխանությանը ենթակա օբյեկտ է եւ ոչ թե ազատ էակ: Համաձայն լեգիզմի՝ իրավունքը պետական իշխանության կամքի դրսևորումն է, նրա հրահանգը կամ հրամանը²²⁸: Այս դոկտրինան խարսխված էր ավատատիրական սեփականության հենքից բխող իրավահարաբերությունների վրա: Ավատատիրոջն էին պատկանում արտադրության բոլոր միջոցները, այդ թվում՝ ճորտը, եւ սեփականատիրոջ կամքը բարձրագույն օրենք էր:

XIX դարի զարգացումները, մասնավորապես՝ պայմանագրային

²²⁶ Գրվել է 1773թ. Մադրասում, նպատակ ունենալով «...իմաստուններին արթնացնելու անտարբերությունից եւ հորդորելու, որ իրենց խելքով ու իմաստությամբ կազմեն արդար օրենքներով ճամփա ընթացող գերագանց կառք՝ ներդաշնակ մեր բանական բնությանը» (Որոգայթ փառաց, Եր., «Հայաստան» հր., 2002, էջ 16):

²²⁷ Այս ուղղության կարեւոր դեմքերից էին Դ. Օստին, Շ. Ամոսը, Բ. Վինդշայդը, Ա. Ցիտելմանը, Կ. Հեբբերը, Ա. Յոլմստեն եւ այլքը:

²²⁸ Մասնավորապես տե՛ս Austin J. Lectures on Jurisprudence or the Philosophy of Positive Law. L., 1873. էջ 73:

հիմքի վրա վարձու աշխատանքի արմատավորումը, մարդու, որպես սոցիալական ֆենոմենի, որոշակի իրավունքների ճանաչումը, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման անհրաժեշտությունը, ժողովրդավարական արժեքների կարելուորումն ու արմատավորումը շտկումներ մտցրեցին իրավահասկացողության ընդհանուր փիլիսոփայության մեջ: Տիրապետող դարձավ իրավական պոզիտիվիզմը (կամասահման իրավունքը), որն իրավունքն առավելապես մեկնաբանեց որպես սուբյեկտիվ ընկալման արգասիք, իշխանության ստեղծագործություն, նրա կողմից տրվող շնորհ: Որպես իրավունք ճանաչվեց օրենքի տեսք ստացած իշխանության կամքը, քաղաքական փոխհամաձայնությունը, որն ուներ պետական հարկադրանքի բնույթ:

Սակայն Եվրոպան ստիպված էր լուրջ վերապահումներով մոտենալ պոզիտիվիստական իրավամտաժողովրդյանը՝ կանգնելով նաև ոչ իրավական օրենքների գոյության փաստի առջեւ: Չարչրկված արտահայտություն է, որ Հիտլերն իշխանության եկավ օրենքի միջոցով: Անառարկելի է, որ ֆաշիզմը հաստատվեց օրենքի օգնությամբ՝ իրավունքը բռնադատելով: Մայրցամաքային իրավական համակարգում, որտեղ դատական նախադեպն իրավունքի ամմիջական աղբյուր չէ, իսկ օրենքը պարզապես քաղաքական փոխհամաձայնության արդյունք է, որտեղ հաճախ չկան օրինաստեղծ գործընթացին համարժեք արդարադատական (այդ թվում՝ սահմանադրական) հակակշիռներ, ապա ոչ իրավական օրենքի առկայությունը գրեթե անխուսափելի է դառնում, իսկ նման օրենքի բացարձականացումը՝ հասարակական վտանգներով հղի:

Առաջադիմական լինելով հանդերձ, պոզիտիվիստական իրավամտաժողովրդությունը շարունակում էր հենվել ոչ թե օբյեկտիվ իրավունքի էության, այլ դրա հայեցական ընկալման ու իշխանության կամաարտահայտման վրա:

Սակայն ընդհանրականն այն էր, որ օրենքը եւ պետությունը պետք է լինեն իրավական, երաշխավորեն հավասարությունը, ազատությունը եւ արդարությունը, որոնց արժեհամակարգային հիմքը մարդու անօտարելի իրավունքների գերակայությունն է²²⁹: Ընդ որում, իրավական համակարգն ամբողջականանում եւ կենսունակ է դառնում, երբ այդ արժեքները դառնում են սահմանադրական արժեքներ, ստանում

229 Այդ մասին տես նաև. Политико-правовые ценности: история и современность (Под ред. В.С. Нерсисянца). М. 2000, էջեր 5-29:

են ճանաչման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքներ: Այդ առաքելության հաջողությունը, իր հերթին, պայմանավորված է նրանով, թե որքանով են սահմանադրական արժեքները հստակ արտահայտվում Սահմանադրության նորմ-սկզբունքներում եւ վերջիններս ինչ չափով են դառնում ապրող, հասարակական կյանքում իրացվող արժեքներ: Այս առնչությամբ շատ դիպուկ էր Մակեդոնիայի Նախագահ պ-ն Բրանկո Յովենկովսկու բնորոշումը 2004թ. հունիսի 3-ին Սկոպյեում հրավիրված միջազգային կոնֆերանսի բացման արարողության ժամանակ, շեշտելով, որ «Մեզ անհրաժեշտ է գործող Սահմանադրություն, այլ ոչ թե միրած»:

Անհրաժեշտ ենք համարում հատուկ անդրադարձ կատարել նաեւ այն իրողությանը, որ նույնիսկ մասնագիտական գրականության մեջ հաճախ խիստ նեղացվում է իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքի մեկնաբանությունը՝ այն ներկայացնելով հիմնականում դրանց պաշտպանության տեսանկյունից: Ուշագրավ է, որ այս հիմնահարցին վերաբերող առաջին համընդգրկուն փաստաթուղթը՝ 1789թ. Ֆրանսիայի կողմից ընդունված հռչակագիրը, անվանվեց «Մարդու եւ քաղաքացու իրավունքների հռչակագիր», որի հոդված 2-ում, մասնավորապես, ասվում է. «Յուրաքանչյուր քաղաքական միության նպատակը՝ մարդու բնական ու անօտարելի իրավունքների **ապահովումն է**»: 1948թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 217A(III) բանաձեռով ընդունված՝ միջազգային իրավական առումով հիմնարար նշանակություն ունեցող, համընդգրկուն փաստաթուղթն անվանվեց «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»: Դրանում ելակետային համարվեց այն, որ «...**մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության եւ հավասար ու անօտարելի իրավունքների ճանաչումն աշխարհում ազատության, արդարության եւ խաղաղության հիմքն է**»: Սահմանադրական հետագա զարգացումները, ելնելով Հռչակագրի իրավափիլիսոփայական ընդհանրացումներից, շեշտադրում կատարեցին չորս հիմնական բաղադրիչների վրա²³⁰.

230 Մասնավորապես տե՛ս. Գերմանիայի Դաշնության Զիմնական օրենքի հոդված 1-ը, Պորտուգալիայի Սահմանադրության՝ 18-րդ, Լեհաստանի Սահմանադրության՝ 30-րդ, Սլովակիայի Սահմանադրության՝ 12-րդ, Սլովենիայի Սահմանադրության՝ 15-րդ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 18-րդ հոդվածները եւ այլն:

- մարդու արժանապատվության եւ իրավունքների սահմանադրու-
րեն ճանաչումը՝ որպէս բարձրագույն ու անօտարելի արժեք, որպէս
անմիջական գործող իրավունք,

- այդ իրավունքների երաշխավորումը, որոնք պայմանավորում են
օրենքների իմաստը, բովանդակությունը, կիրառման բնույթը, ինչպէս նաեւ
օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեության բնույթը,

- մարդու իրավունքների հնարավոր սահմանափակումների սահ-
մանադրական չափանիշների սահմանումը՝ քաղաքացիական հա-
սարակության հիմնարար սկզբունքներից ելնելով,

- մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների համար ար-
դարադատական ու կառուցակարգային **երաշխիքների** ապահովումը:

Իրավունքի գերակայության սկզբունքի վրա խարսխված, իրավա-
կան պետության եւ քաղաքացիական հասարակության կայացման
երաշխիք հանդիսացող Սահմանադրության եւ դրան համարժեք
սահմանադրական ժողովրդավարության համատեղ ներդաշնակ
գոյությունը ենթադրում է որոշակի անհրաժեշտ ու բավարար նա-
խադրյալների առկայություն: **Պրանց մեջ ելակետային է ազատա-
կան իրավամտածողության կայացման ու դրա հասարակական
ընկալման եւ ընդգրկման աստիճանը:** Այդպիսի իրավամտածողութ-
յուն է ընկած արդի եվրոպական սահմանադրական զարգացումների
եւ սահմանադրական մշակույթի դրսեւորման հիմքում:

Իրավունքի տեսափիլիսոփայական ընկալման ու իրավագիտա-
կան մեկնաբանման կարեւոր փուլ է սկսվում ամբողջ Եվրոպայում
դեռեւս XVII դարի կեսերից: Այդ ժամանակաշրջանի բնորոշ առանձ-
նահատկություններից էր այն, որ ձեւավորվում էր բնական իրավունքի
մասին առավել ամբողջական աշխարհայացք եւ մերժվում էր, այս-
պէս կոչված, ավատատիրական իրավաբանական աշխարհայացքը:
Նոր հայացքների կրողների մեջ հատկապէս առանձնացան Ն. Մա-
քիավելին (1469-1527), Հ. Հրոցիուսը (1583-1645), Բ. Սպինոզան (1632-
1677), Թ. Հոբսը (1588-1679), Ջ. Լոկը (1632-1704), Շ.- Լ. Մոնտեսքյոն
(1689-1755), Ժ.-ժ. Ռուսոն (1712-1778), Թ. Ջեֆերսոնը (1743-1826), Թ.
Փեյերը (1737-1809), Ի. Կանտը (1724-1804), Գ. Հեգելը (1770-1831) եւ
այլք: Հ. Հրոցիուսը, մասնավորապէս, գտնում էր, որ բնական իրա-
վունքը բխում է հենց մարդու էությունից, որը եւ նրան մղում է փոխա-
դարձ առնչությունների: Բնական իրավունքի ճանաչումն **իրավագի-**

տությանը գիտական բնույթ հաղորդեց: Կամասահման իրավունքն ի վիճակի չգտնվեց հասնելու իր գիտական արմատներին²³¹:

Տնտեսական հարաբերությունների զարգացումը, ազատ ու մրցակցային դաշտի ստեղծումը, մարդու իրավունքները՝ **որպես իշխանության սահմանափակման չափանիշ ընդունելը**, ինչպես նաև ազատական արժեքային համակարգի այլ տարրերի աստիճանաբար արմատավորումը եվրոպական արժեքային համակարգում վերջին ավելի քան 300 տարիների ընթացքում բյուրեղացան սահմանադրական այնպիսի նորմերում ու սկզբունքներում, որոնք XX դարի երկրորդ կեսից արդեն ոչ թե լոկ կարգախոս են, այլ ապրող արժեքներ: Ինչպես իրավագիտորեն նշում է Յու. Ա. Տիխոմիրովը, XVII դարը բերեց բնական իրավունքի գաղափարները, XVIII դարն առաջ քաշեց ազատական պետության անհրաժեշտությունը՝ հանձին Ռուսոյի ժողովրդական ներկայացուցչության եւ Մոնտեսքյոյի՝ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հայեցակարգերի, XIX դարի առաջին երրորդում Գերմանիայում ծնվեց իրավական պետության տեսությունը, սակայն այդ դարերը նույնպես հագեցած էին պատերազմներով, պետական հեղաշրջումներով, դաժան կառավարողներով, իսկ հայեցակարգերը մնում էին գրքերում...²³²: **Քաղաքացիական հասարակությանը բնորոշ արժեքները, իրավական, ժողովրդավարական պետության որակները ձեւավորվեցին դարերի ընթացքում, սակայն դարձան հասարակական կյանքի համակարգային կարգավորիչներ հատկապես նախորդ հազարամյակի վերջին մի քանի տասնամյակներում:** Փաստորեն, 1950-ականներից սկսած, ժողովրդավարական ընդհանուր արժեքներն ու իրավական պետության սկզբունքներն իրենց առավել համակարգված ու կոնկրետ արտահայտությունը գտան եվրոպական երկրների սահմանադրական լուծումներում՝ տվյալ համակարգին բնորոշ բազմաթիվ առանձնահատկություններ հաշվի առնելով: Եվ ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Հովարդը, սահմանադրականությունը, ժողովրդավարությունը եւ օրենքի իշխանությունն Արեւմտյան Եվրոպայում այսպես թե այնպես

²³¹ Гроций Гуго Де Гроот. О праве войны и мира // Антология мировой правовой мысли. Т. III. М., 1999, էջեր 21-26:

²³² Тихомиров Ю.А. Теория компетенции. М., 2004, էջ 10:

տիրապետող դարձան երկրորդ աշխարհամարտից հետո²³³։

Եվրոպական սահմանադրական մշակույթի հենքն է կազմում հունա-հռոմեական, անգլիական, գերմանական, ֆրանսիական եւ եվրոպական մի շարք այլ երկրների հարուստ իրավական մշակույթը։ Այն նաեւ իր ծանրակշիռ ավանդն է ունեցել միջազգային սահմանադրագիտության մեջ, խոր հետք է թողել համաշխարհային սահմանադրական մշակույթի զարգացման գործում։ Եվրոպական արդի սահմանադրական մշակույթի ձեւավորման գործում լուրջ ներդրում է հանդիսացել 1791թ.՝ Լեհաստանի ու Ֆրանսիայի, 1814թ.՝ Նորվեգիայի, 1831թ.՝ Բելգիայի, 1866թ.՝ Շվեդիայի, 1868թ.՝ Լյուքսեմբուրգի, 1874թ.՝ Շվեյցարիայի, 1901թ.՝ Ավստրալիայի ու հետագայում այլ երկրների սահմանադրությունների ընդունումը, որոնց զգալի մասը մինչ օրս գործում են եւ ձեւավորել են կայուն սահմանադրական ավանդույթներ։

Այսուհանդերձ, XX դարի ընթացքում երկու աշխարհամարտեր տեսած, դրանցից որոշակի դասեր քաղած եւ ժողովրդավարությունն ու իրավունքի գերակայությունն անկյունաքարային արժեք դարձրած Եվրոպայի համար՝ որպես համընդհանուր սկզբունք, **սահմանադրական մշակույթի գլխավոր կարգախոսը դարձավ այն, որ օրենքը եւ պետությունը պետք է լինեն իրավական, երաշխավորեն հավասարությունը, ազատությունը եւ արդարությունը, որոնց արժեհամակարգային հիմքը մարդու անօտարելի իրավունքների գերակայությունն է**²³⁴։ Ընդ որում, իրավական համակարգն ամբողջականանում եւ կենսունակ է դառնում, երբ այդ արժեքները դառնում են սահմանադրական արժեքներ, ստանում են ճանաչման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքներ։

XX դարի Եվրոպայի համար քաղաքացիական հասարակության կայացումը եւ իրավական, ժողովրդավարական պետության ստեղծումը դարձան համընդհանուր իդեալ, մարդկային բարօրության եւ մարդու ստեղծարար նախասկզբի լավագույնս իրացման նախապայման։ Պատահական չէ, որ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո աշխարհում, հատկապես Եվրոպայում, ընդունված

233 Ховард Д. Конституционализм и развивающаяся демократия // Конституционное правосудие, 2004, N 3, էջ 20:

234 Այդ մասին տե՛ս նաեւ Политико-правовые ценности: история и современность / под ред. В.С. Нерсесянца. М., 2000, էջեր 5-29:

կամ էապես բարեփոխված գրեթե բոլոր սահմանադրությունները որպես նորմ-նպատակ եւ նորմ-սկզբունք ամրագրում են պետության իրավական եւ ժողովրդավարական լինելու հանգամանքը, ինչպես նաեւ ընդունում են միջազգային իրավունքի նորմերի գերակայությունը ներպետական օրենսդրական նորմերի նկատմամբ:

Եվրոպական սահմանադրական մշակույթին բնորոշ դարձան մարդու արժանապատվության, նրա սահմանադրական իրավունքների ու ազատությունների ճանաչումը որպես անմիջական գործող իրավունք, որոնք ներպետական ու համաեվրոպական պաշտպանության իրավական ու կառուցակարգային լուրջ երաշխիքներ ստացան: Սահմանադրական մշակույթի եվրոպական համակարգի կարելու օղակ դարձան դատական սահմանադրական վերահսկողության հատուկ մասնագիտացած ինստիտուտները՝ սահմանադրական դատարանները, որոնք հնարավոր դարձրին վերացական, նախնական, պարտադիր ու ֆակուլտատիվ /կամընտիր/ սահմանադրական վերահսկողությունը, ստանձնեցին Սահմանադրության գերակայության ու կայունության երաշխավորման պարտականությունը:

Ինչպես ամփոփ արձանագրվեց 2001թ. դեկտեմբերին Հնդկաստանում կազմակերպված միջազգային կլոր սեղանի ժամանակ, եվրոպական սահմանադրական մշակույթի գլխավոր բնորոշ գիծն այն է, որ **սահմանադրական արժեքների մեջ բարձրագույնը մարդն է՝ իր արժանապատվությամբ ու իրավունքներով**²³⁵:

Եվրոպական սահմանադրական մշակույթի պսակը դարձավ Եվրոպական միության Սահմանադրությունը՝ հանձին Լիսաբոնյան համաձայնագրի, որը ոչ միայն նոր խոսք է սահմանադրագիտության մեջ, այլև սահմանադրական մշակույթի որակապես նոր աստիճան է: Արժեհամակարգային ինտեգրումը, միասնական շահերի վրա խարսխված տնտեսական, քաղաքական, հումանիտար եւ, ընդհանրապես, համակարգային համագործակցությունը բերեց վերպետական գործակցության այնպիսի որակի, երբ ստեղծված միասնական տնտեսական, իրավական, կառուցակարգային բազան օրակարգային դարձրեց նաեւ վերպետական Սահմանադրության (Սահմանադրական համաձայնագրի) ստեղծման անհրաժեշտությունը: Նպա-

235 <http://www.nls.ac.in/ncrwc/justice-iyer-paper.htm>

տակ դրվեց խրախուսել խաղաղությունը, Միության արժեքները եւ մարդկանց բարեկեցությունը, իր քաղաքացիների համար երաշխավորել ազատության, անվտանգության եւ արդարադատության միջավայր, միասնական ազատ շուկա՝ առանց ներքին սահմանների եւ խեղաթյուրված մրցակցության, ապահովել հավասարակշռված տնտեսական աճ, կայուն զարգացում, սոցիալական շուկայական տնտեսություն, սոցիալական առաջընթաց ու բարեկեցություն, ներքին եւ արտաքին անվտանգության բարձր մակարդակ, միջազգային ասպարեզում ընդհանուր շահերի լավագույնս ապահովման հնարավորություն: Ինչպես նշում է Ֆրանսիս Սնայդերը՝ ներկայիս Եվրամիության սահմանադրական մշակույթը կազմված է երեք շերտից: Առաջինը ժամանակակից իրավական ընդհանուր մշակույթն է, երկրորդը՝ Արեւմտյան իրավական մշակույթը, երրորդը՝ Եվրոպական միության ռեգիոնալ ինտեգրումով պայմանավորված իրավական մշակույթը²³⁶:

Եվրոպական միությունը՝ իր ընդլայնված կազմով ու զարգացման միտումներով, հանդես է գալիս որպես սահմանադրական կարգի որակապես նոր տեսակ, որը միավորում է անդամ պետությունների ժողովուրդներին՝ չխախտելով քաղաքական ինստիտուտների, մշակութային եւ լեզվական սովորույթների առկա այն առանձնահատկությունները, որոնք եվրոպական քաղաքակրթության զարգացման արդյունք են: Առանձնահատուկը հատկապես այն է, որ եվրոպական ինտեգրման արդյունքում **Սահմանադրությունը, դառնալով վերպետական երեւույթ**, ընդգծում է այն իրողությունը, որ դա ոչ թե պետության, **այլ քաղաքացիական հասարակության Հիմնական օրենքն է**, Եվրոպական միության մեջ համախմբված քաղաքացիական հասարակության ընդհանուր համաձայնության արդյունք հանդիսացող վարքագծի ու գործելակերպի սկզբունքների ու կանոնների ամբողջություն: Սա այլևս իրողություն է եւ վկայում է հասարակական զարգացման նոր աստիճանի, սահմանադրաիրավական հարաբերությունների նոր որակի, համընդհանուրի եւ ազգայինի փոխհարաբերությունների նոր սկզբունքների մասին:

236 <http://www.eurozine.com/article/2004-02-19-snyder-en.html>

Քաղաքակրթական որակապես նոր մակարդակում դրսևորվող այս իրողությունը դեռևս խորությամբ պետք է ուսումնասիրվի ու արժեվորվի, ինչպես նաև հաշվի առնվի յուրաքանչյուր երկրի իրավական զարգացումների պրակտիկայում: Միաժամանակ, Եվրամիության ընդլայնումը շարունակում է դեռևս մնալ քննարկումների ու գիտական բանավեճերի առարկա: Կարելի է թեմաներից մեկը վերաբերում է իրավական, մասնավորապես՝ սահմանադրական մշակույթի ձևավորմանը: Այս հարցում հեղինակների հիմնական մտահոգությունն այն է, որ դեռևս տեսական ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի հնարավոր լինի համատեղել Անգլիայում, Արեւմտյան Եվրոպայի մյուս երկրներում ու նաև Արեւելյան Եվրոպայի երկրներում դարերով ձևավորված սահմանադրական մշակույթների առանձնահատկությունները²³⁷: Անտարակույս, այս խնդիրն առավել դյուրին կլուծվի Եվրոպական միության հարաբերականորեն միասնական իրավական համակարգի աստիճանական ձևավորմանը զուգընթաց՝ ձևավորելով եվրոպական սահմանադրական մշակույթի եւ առանձին երկրների սահմանադրական «ենթամշակույթների» մի միասնական ու ամբողջական համակարգ: Որքանով դա գործնականում կհաջողվի՝ դժվար է ասել, քանի որ քաղաքակրթական ու իրավամտաճողության տարբեր համակարգերի ինտեգրումը միայն քաղաքական կամ աշխարհաքաղաքական նկատառումներով բավարար չէ: Խնդիրն այստեղ տարբեր քաղաքակրթությունների ու մշակույթների ինտեգրմանն է վերաբերում, ինչը միայն բարի ցանկությամբ տեղի չի ունենում, այլ պահանջում է բնականոն զարգացում:

Ընդհանրացնելով, կարող ենք արձանագրել, որ եվրոպական ժողովրդավարական գործընթացները դեռևս XX դարասկզբին նախադրյալներ ստեղծեցին ազատական տնտեսական հարաբե-

²³⁷ Մասնավորապես տե՛ս [http://www.iue.it/LAW/Events/WSWorkshop-Nov2003/Dupre paper.pdf](http://www.iue.it/LAW/Events/WSWorkshop-Nov2003/Dupre%20paper.pdf), <http://www.eurozine.com/article/2004-02-19-snyder-en.html>, German Law Journal - ESSAY Postnationalism, (Dis)organised civil society and Democracy in the European Union Is Constitutionalism Part of the Solution or Part of the Problem?, http://www.germanlawjournal.com/past_issues.php?id=192.

րությունների ծավալման հետ մեկտեղ որդեգրել **իրավահասակացողության ազատական-իրավաբանական տիպը**²³⁸: Վերջինիս էությունը հանգում է մարդու բնական իրավունքների ճանաչմանը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք եւ պոզիտիվ իրավունքի հիմք²³⁹: Ժողովրդավարական զարգացումների անխուսափելի տրամաբանությունն էր, որ եվրոպական իրավական համակարգում **իրավունքի գերակայության երաշխավորումը դարձավ անկյունաքարային արժեք**: Եվրախորհրդի՝ 1949թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրության հոդված 3-ում, ինչպես նշել ենք, միանշանակ սահմանվեց, որ Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի **իրավունքի գերակայության** սկզբունքը: Նման մոտեցումը նոր որակ հաղորդեց նաեւ միջազգային հարաբերությունների հետագա ծավալմանը՝ դրանց հիմքում դնելով արժեքային հստակ կողմնորոշիչ: Իր հերթին, սահմանադրական մշակույթի արժեհամակարգային հենքը դարձան **մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների հարգումը**, արժեքներ, որոնք բնորոշ են **անխտրականության, բազմակարծության, հանդուրժողականության, արդարադատության եւ համերաշխության սկզբունքների վրա կառուցված հասարակությանը**, եւ որոնք դրվեցին XXI դարի կարեւոր ձեռքբերումներից համարվող՝ եվրոպական միասնական ընտանիքի ձեւավորման հիմքում:

Ներկա բոլոր անորոշություններով ու ներքին որոշակի տագնապներով հանդերձ, Եվրոպան նշված մոտեցումներին հասավ եւ իրավընկալման ներկա որակները դարձրեց հասարակական գոյի հիմք՝ աստիճանական, էվոլյուցիոն զարգացման ճանապարհով, որը հանգեցրեց, հեզելյան բնութագրմամբ, այնպիսի թռիչքի, երբ գործ ունենք նոր որակի հետ:

238 Ի դեպ, XX դարում ձեւավորված իրավաբաղաբական հայեցակարգերի ուշագրավ դասակարգում է առաջադրում Լ.Վ. Գոլոսկոկովը՝ հիմնական շեշտը դնելով բնական իրավունքի տեսության եւ իրավական պոզիտիվիզմի տարբեր դրսեւորումների վրա (տե՛ս Голоскоков Л.В. Правовые доктрины: от Древнего мира до информационной эпохи. М., 2003, էջեր 79-82):

239 Այդ մասին տե՛ս Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի եւ պետության տեսություն, Երեւան, 2001, էջեր 30-47:

3.2. ՍԱՀՄԱՆՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՆՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հայ իրականության մեջ սահմանադրական մշակույթի պատմական ձևավորման շրջան ամբողջականացնելու եւ եվրոպական իրավամտաժողովրդյան հոլովություն այն վերլուծելու նպատակով հարկ ենք համարում նախ համառոտ անդրադարձ կատարել վերջին հարյուրամյակում այդ երեսույթի դրսևորման բնույթին ու առանձնահատկություններին՝ Հայաստանի առաջին հանրապետությունում, խորհրդային Հայաստանում ու ապա նորանկախ Հայաստանի Հանրապետությունում: Դա պատմական այն ժամանակահատվածն է, երբ պետականության դարավոր կորստից հետո այն վերագտնելու եւ մեր ինքնության որակներն ազգային-պետական համակարգում զարգացնելու նոր հնարավորություններ ստեղծվեցին:

Այս թեմային հետաքրքիր ու արժեքավոր անդրադարձ է կատարել Ա. Վաղարշյանը՝ հատուկ ուսումնասիրության առարկա դարձնելով Հայաստանի սահմանադրական զարգացման պատմությունը՝ Հայաստանի առաջին, երկրորդ եւ երրորդ հանրապետություններում²⁴⁰: Հեղինակը շեշտելով, որ «...սրանք են այն աստիճանները, որոնցով անցել է Հայաստանի սահմանադրական զարգացումը», անում է նաեւ այն հետետությունը, որ «Այդ զարգացման մեջ չկա պատմական հաջորդականություն, որովհետեւ հաջորդող սահմանադրաիրավական երեսույթները եւ ինստիտուտները չեն աճում նախորդներից: Դրանց միջեւ կապի բացակայությունը թույլ չի տալիս Հայաստանի սահմանադրական զարգացումը դիտարկել միասնական պատմական գործընթացի շրջանակներում, որովհետեւ պատմաքաղաքական եւ զաղափարախոսական հանգամանքների բերումով, դրանում յուրաքանչյուր նոր էտապ հանդիսանում է նախորդի լրիվ բացասումը»²⁴¹:

Չանդրադառնալով «լրիվ բացասման» հարցադրմանը եւ կարելուրեղով հեղինակի եզրահանգումը, այսուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ նման պնդումների ժամանակ տեսադաշտից դուրս է մնում ընդհուպ միջազգայնորեն ճանաչված՝ «չգրված սահ-

²⁴⁰ Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երեւան, 2003:

²⁴¹ Նույն տեղում, էջ 13:

մանադրությունների» հանգամանքը, այն իրողությունը, որ Սահմանադրությունը լոկ փաստաթուղթ կամ նորմերի ժողովածու չէ, այն արժեքային համակարգ է, մտածողության ու կենսակերպի ձև, ազգի մշակութային համակարգի բաղադրատարրը: Իսկ դրա դրսևորումները հայ իրականության մեջ, ինչպես տեսանք, հազարամյակների տարեգրություն ունեն:

Ինչ վերաբերում է XX դարին, ապա իրոք գործ ունենք նոր իրողությունների եւ «սահմանադրություն» հասկացության նոր ընկալումների հետ:

Չնայած Հայաստանի առաջին հանրապետությունը չհասցրեց ունենալ իր Հիմնական օրենքը²⁴², այսուհանդերձ, 1918-20 թվականներին պատմական ծանր պայմանների մեջ հայտնված եւ գոյատևման մաքառումների մեջ գտնվող անկախ Հայաստանի Հանրապետության պառլամենտն (Հայաստանի խորհուրդը, իսկ 1919թ. օգոստոսի 1-ից՝ Խորհրդարանը) ընդունում է մի շարք օրենքներ, որոնք սահմանադիր նորմեր են բովանդակում եւ սահմանադրական մշակույթի դրսևորման ուշագրավ երեւոյթ են հանդիսանում: Դրանց մեջ հատկապես առանձնանում է 1919թ. մայիսի 26-ին ընդունված՝ «Միացյալ Հայաստանի անկախության ակտը հաստատելու մասին» օրենքը: Վերջինս ոչ միայն հստակեցնում է երկրում կառավարման ձևն ու պետական իշխանության բնույթը, այլեւ ամրագրում է պառլամենտի ու կառավարության իրավական կարգավիճակը՝ որպես «...միացյալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագույն օրենսդիր ու գործադիր իշխանություն»²⁴³: Հայ իրականության մեջ առաջին անգամ իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումն օրենսդրական կարգավորում է ստանում:

Սահմանադիր բնույթ ունեն նաեւ 1918թ. հունիսի 12-ին ընդունված՝ «Երդվյալ ատենակալների դատարանի ներմուծման մասին Հայաստանի Հանրապետության տերիտորիայի վրա», 1919թ. հունվարի 26-ին ընդունված՝ «Պետական լեզվի մասին» եւ «ՀՀ Պառլա-

242 Նման փորձ արվում է, երբ 1920 թ. սկզբներին արդարադատության նախարար Ա. Զիլինգարյանը նախաձեռնում է Սահմանադրության նախագծի մշակման գործը, որը, սակայն, ավարտին չի հասցվում:

243 Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Երեւան, 1998, էջ 212:

մենտի ընտրությունների մասին», 1920թ. մայիսի 8-ի՝ «Արտակարգ դատարանների եւ նրա դատին ենթակա գործերի մասին», 1920թ. մայիսի 25-ի՝ «Ներկա տերիտորիայի չորս նահանգների մասին», 1920թ. մայիսի 30-ի՝ «Դատական պաշտոնյաների անկախության իրավունքի ժամանակավոր վերացման մասին», 1920թ. հունիսի 5-ի՝ «Նախարարների որոշ ֆունկցիաները գավառական ինքնավարություններին հանձնելու մասին», 1920թ. հունիսի 7-ի՝ «Հպատակության մասին», 1920թ. հոկտեմբերի 2-ի՝ «Պաշտոնյաների հանցանքների մասին», 1920թ. հոկտեմբերի 26-ի՝ «Գլխավոր ռազմական դատարանի ֆունկցիաները Հայաստանի սենատին հանձնելու մասին» եւ մի շարք այլ օրենքներ: Առանձին օրենքներում ժողովրդավարական սկզբունքներից որոշ նահանջ արձանագրելով հանդերձ, սահմանվել են նաեւ այնպիսի դրույթներ, որոնք այսօր էլ ուշադրության արժանի են: Օրինակ կարող է ծառայել 1919թ. փետրվարի 7-ին ընդունված տոների մասին օրենքը, որում ընդհանուր տոների կողքին պետականորեն ընդունվում են նաեւ ազգային փոքրամասնություններին վերաբերող առանձնահատուկ տոները²⁴⁴:

Ժամանակի նետած մարտահրավերները, որոնք արտացոլված էին նաեւ Հ. Քաջազնունու՝ առաջին վարչապետի կաբինետի ծրագրի մեջ, մասնավորապես պահանջում էին ամենակարճ ժամանակամիջոցում հաղթահարել սովի ու համաճարակի վտանգը, 300 հազար գաղթականության համար նվազագույն պայմաններ ստեղծել, լուծել փոքրամասնություններին առնչվող պայթյունավտանգ խնդիրները, օգտագործելով ներքին ու արտաքին բոլոր հնարավորությունները՝ երկրի կայուն զարգացման նախադրյալներ ստեղծել: Առաջին Հանրապետության տարիներին ընդունված ավելի քան 1200 օրենքների վերլուծությունը վկայում է, որ դրանց գերակշիռ մեծամասնությունը վերաբերում է կառավարության իրավասություններին առնչվող ու հրատապ կենսականություն ունեցող հարցերի լուծմանը: Նման վիճակը պայմանավորված էր նախ՝ ստեղծված ճգնաժամային իրավիճակով (օրինակ, Հայաստանի խորհրդի 1918թ. սեպտեմբերի 10-ի առավոտյան նիստի օրակարգն այսպիսին էր. 1. Բժշկա-սանիտարական հանձնաժողովի շարաքական զեկուցումը: 2. Պարենավոր-

²⁴⁴ Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918-1919թթ., մաս 1, Երեւան, 1919, էջ 48:

ման հանձնաժողովի շաբաթական զեկուցումը: 3. Գաղթականական հանձնաժողովի շաբաթական զեկուցումը: 4. Գպրոցական հանձնաժողովի օրինագիծը դպրոցական վարչության կազմակերպման մասին: 5. Ընթացիկ հարցեր): Երկրորդ՝ դարձյալ իրավիճակի թելադրանքով, օրենսդիր մարմինն իր լիազորությունները տեսականորեն (Հայաստանի խորհուրդը՝ 1919թ. ապրիլի 27-ից մեկ ամսով, եւ 1919թ. հունիսի 5-ից մինչեւ օգոստոսի 1-ը, իսկ 1919թ. օգոստոսի 1-ից գործող համամասնական կարգով ընտրված Խորհրդարանը 1920թ. մայիսի 5-ից մինչեւ Առաջին Հանրապետության անկումը) վերալիազորել էր կառավարությանը: Երրորդ՝ փորձ էր արվում օրենսդրական բացը լրացնել նաեւ ընդօրինակման ճանապարհով: Օրինակ, օրենսդիր մարմնի 1918թ. դեկտեմբերի 6-ի նիստում օրենսդրական հանձնաժողովի առաջարկությամբ օրենք ընդունվեց, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության մեջ գործում են ռուսական օրենքներն այն լրացումներով ու հավելումներով, որ ընդունել են Ռուսաստանի Ժամանակավոր կառավարությունը, Անդրկովկասյան Սեյմն ու Կոմիսարիատը եւ Հայաստանի Խորհրդարանը»²⁴⁵:

Իրավիճակային խնդիրներին առաջնահերթ կարելություն տալով հանդերձ, երկրի իրավաքաղաքական կողմնորոշման առումով Հայաստանի Խորհրդարանը 1920թ. հունվարի 25-ի հանդիսավոր նիստում, մասնավորապես, արձանագրեց, որ «...հայ դեմոկրատիան հավասար մեկ անդամը կլինի համաշխարհային ազատ դեմոկրատիայի ընտանիքին: Հայաստանը կլինի իսկապես ազատ ու դեմոկրատիկ եւ նրա սահմաններում հավասար իրավունքներ կվայելեն նրա մեջ ապրող բոլոր ժողովուրդները»²⁴⁶: Այսուհանդերձ, ընդունված մի շարք օրենքներ՝ իրավիճակի թելադրանքի հիմնավորումներով, ինչպես նշվեց, բովանդակում էին շեղում այդ սկզբունքից:

Բնության առարկա նյութի համատեքստում այս ժամանակաշրջանի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ սահմանադրական մշակույթն առավել մեծ չափով դրսևորվում է ոչ թե իրավական ակտերում, այլ Խորհրդարանի վերահսկիչ դերում, նրա օպերատիվ

245 Հայաստանի Խորհրդարանի արձանագրությունները, 1918թ. (ՀՀ ՍԳ գրադարան), էջ 169:

246 Հայաստանի Խորհրդարանի արձանագրությունները, 1920թ. (ՀՀ ՍԳ գրադարան), էջ 48:

գործնական աշխատանքում ու դրա հիմքում դրված իրավական սկզբունքներում: Միաժամանակ իրավացի է Ա. Վաղարշյանը՝ նշելով, որ Հայաստանը լինելով խորհրդարանական հանրապետություն, այսուհանդերձ, գործել է «...պատասխանատու կառավարության սկզբունքը»²⁴⁷:

Տեղին է հիշատակել նաև Ս. Վրացյանի մեկնությունը տվյալ ժամանակաշրջանի առնչությամբ. «Անշուշտ, եթե այսօրվա մտայնությունն ու փորձառությունն ունենայինք այն ժամանակ, հավանական է, որ շատ բաներ չանեինք այնպես, ինչպես արինք: Բայց պատմական ամեն մի երեւոյթ պետք է դիտել ու դատել իր ժամանակի առարկայական ու ենթակայական մթնոլորտում: Ամենավատ պատմությունն այն պատմությունն է, որ արվում է հետին թվով, ուշացած մարգարեների կողմից»²⁴⁸:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո գործ ունենք բոլորովին այլ իրականության հետ, որը տրամագծորեն հեռանում է նախորդ հազարամյակների սահմանադրաիրավական մտածողության զարգացումների տրամաբանությունից: Նպատակ չունենալով համակարգային վերլուծության առարկա դարձնել խորհրդային Հայաստանի սահմանադրական զարգացումները²⁴⁹, հարկ ենք համարում ընդգծել, որ.

1. գաղափարախոսական իր հակասություններով ու վայրիվերումներով հանդերձ՝ խորհրդային ժամանակահատվածը հայ ժողովրդի ազգային կյանքում վերածնության նոր հնարավորություն ստեղծեց, ինչը պայմանավորված էր ոչ թե Սահմանադրության գոյությամբ կամ բացակայությամբ, այլ համակարգային հարաբերական կայունության, գոյատևման արտաժին վտանգների որոշակի հաղթահարման, խաղաղ աշխատանքի պայմանների ստեղծման հնարավորությամբ,

²⁴⁷ Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր, Երեւան, 2003, էջ 30:

²⁴⁸ Վրացյան Ս., «Հին թղթեր նոր պատմության համար», Բեյրութ, 1962, էջ 15:

²⁴⁹ Խոսքը վերաբերում է խորհրդային Հայաստանի 1922թ., 1937թ., 1978թ. սահմանադրություններին ու դրանց հենքի վրա տեղի ունեցող գործընթացներին, որոնք իրենց էությամբ, իրավափոխության կամ գաղափարաբանական բովանդակությամբ նույնական էին ողջ ԽՍՀՄ տարածքում:

2. եթե հարյուրամյակների պատմական իրողությունն այն էր, որ պետականության կորստի պայմաններում գործող իրողություն էին սահմանադրական կանոնները՝ ի դեմս ազգային-եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնական սահմանադրությունների, այսինքն՝ չկար պետականություն, բայց որոշակի առումով կար ու գործում էր ազգային Սահմանադրություն, ապա խորհրդային շրջանում ձեռավորվեց այլ իրողություն՝ կար գրավոր Սահմանադրություն, որն իրական կյանքի հետ շատ քիչ առնչություն ուներ, սակայն զգալի էր սովորութային իրավունքի ու ավանդույթների դերը միջանձնային հարաբերություններում,
3. սահմանադրական նորմերն ու սկզբունքները կարգախոսային բնույթ կրելուց զատ, այն աստիճան քաղաքականացվեցին, որ զգալի չափով կորցրեցին իրենց իրավակարգավորիչ նշանակությունը,
4. եթե վերջին հարյուրամյակների սահմանադրական զարգացումները խարսխվում էին իրավունքի գերակայության սկզբունքի, մարդու բնական (Աստվածային) իրավունքները ճանաչելու եւ սահմանադրորեն երաշխավորելու վրա, ապա խորհրդային սահմանադրակարգի հիմքում դրվեց պետության, իշխանության ու միակուսակցական քաղաքական ուժի դերի բացարձականացումը, իսկ մարդու իրավունքներն ընդամենը պետության կողմից նրանց տրվող շնորհի դերում հայտնվեցին,
5. Սահմանադրությունը, կտրվելով հասարակական պրակտիկայից, կորցնելով իշխանության սահմանափակման իր առաքելությունը՝ չէր կարող հանդես գալ որպես հասարակական համաձայնության միջոց ու արտահայտություն:

Իսկ ինչպիսի՞ն էր խորհրդային իրականությունն ընդհանրապես իրավահարաբերությունների բնույթի առումով: Առանձնացնենք մի քանի ընդհանրացումներ.

1. այդ տարածքում գտնվող շատ երկրներ չէին անցել ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացման այն ճանապարհը, որը Եվրոպայի համար տեսեց ավելի քան երկուհարյուրամյակ: Շատերը պարզապես ավատատիրական հա-

րաբերություններից անցում էին կատարել «սոցիալիզմի», ինչն իր կնիքը դրեց նաև հետագա զարգացման գործընթացների ու պետաիշխանական համակարգերի ձևավորման վրա,

2. ձևավորվեցին բոլորովին այլ բնույթի սեփականատիրական հարաբերություններ: Արտադրության միջոցների պետական սեփականության գերիշխման պայմաններում ժողովուրդն օտարվեց իշխանությունից եւ վերջինիս սուբյեկտ լինելուց վերածվեց իշխանության գործադրման օբյեկտի²⁵⁰: Սեփականության իրական տերը ոչ թե ժողովուրդը կամ նույնիսկ պետությունն էր, այլ իշխանությունը: Իսկ իրավունքը կոչված էր պաշտպանելու ոչ թե մարդուն ու նրա սեփականությունը, այլ իշխանությանը²⁵¹,
 3. դարերով ձևավորված իրավամտաժողովուրդն իր տեղը զիջեց արքիստական աշխարհընկալման վրա կառուցված ու ձևախեղված դոգմատիկ լեգիստա-պոզիտիվիստական իրավամտաժողովուրդին,
 4. միակուսակցականության պայմաններում իրավունքի աղբյուր դարձավ քաղաքական ուժի բացարձակ կամքը: Իրական նորմատեղծ մարմին դարձավ կուսակցության բարձրագույն մարմինը, որն ուներ անասհմանափակ ու չհակակշռված իշխանություն²⁵²:
- Բնականաբար, տասնամյակների ընթացքում կամասահման իրա-

250 Իրավափիլիսոփայական միտքը վաղուց փաստել է, որ Եվրոպայում, ինչպես նաև Յունիստային Ամերիկայում ժողովրդավարության զարգացումն օրգանապես կապված է մասնավոր սեփականության եւ շուկայական հարաբերությունների հաստատման հետ (մասնավորապես տե՛ս Страшун Б. Перспективы демократии и конституционное правосудие // Альманах - Конституционное правосудие в новом тысячелетии. Ереван, 2002, էջ 217):

251 Շատ վերլուծաբաններ իրավացի են այն հարցում, որ տվյալ պարագայում նույնական են դառնում իրավունքը եւ ուժը, իրավունքը մեկնաբանվում է որպես օրինականացված ուժի դրսեւորում (տե՛ս Четвернин В. Российская Конституция: концепция правопонимания // Конституционное право: Восточноевропейское обозрение, вып. 4, 2003, էջ 28):

252 Գործնականում մեկ մարմնի ձեռքում էր կենտրոնացված քաղաքական եւ տնտեսական ոլորտներում կառավարման գործառույթը, որի արդյունքում ձևավորված գերկենտրոնացած կորպորատիվ համակարգն ինքնավերարտադրվում էր իշխանության շահի թելադրանքով՝ խորացնելով հակասությունն իշխանության եւ հանրության շահերի միջեւ: Պատահական չէ, որ գրականության մեջ այդ համակարգը հաճախ բնորոշվում է նաև որպես բռնապետական սոցիալիզմ (մասնավորապես տե՛ս Чиркин В.Е. Общечеловеческие ценности и современное государство // Государство и право, 2002, N2, էջեր 5-13):

վամտածողությունը՝ իր քաղաքականացված ու ձեռախեղված դրսեւորումներով, խոր արմատներ ձգեց ողջ նախկին ԽՍՀՄ-ում ու նաեւ՝ Արեւելյան Եվրոպայում²⁵³: Այս բոլորն իրավական համակարգային ձեռախեղումների լուրջ պատճառ հանդիսացան նաեւ հետխորհրդային շրջանում:

ԽՍՀՄ փլուզումից հետո լուրջ գործոն դարձան նաեւ անցումային շրջանի իրողություններով պայմանավորված որոշակի առանձնահատկությունները:

Ընդհանրապէս մարդկության պատմության բոլոր ժամանակներում հասարակության համակարգային վերափոխումները համեմատվել են երկրաշարժերի հետ, որովհետեւ հիմնականում հանկարծահաս ձեւով ստեղծվում է որակական բոլորովին նոր վիճակ, որին բնորոշ են անորոշությունը, անկառավարելիությունը, ինստիտուցիոնալ համակարգերի կազմալուծումը կամ բացակայությունը, մտածողության ու արժեհամակարգի շփոթը, իրադրության անկանխատեսելի փոփոխությունները, անելիքի անհատակությունը, կարիքն ու սոցիալական գերլարվածությունը եւ այլն: Պարզապէս դա հասարակական համընդգրկուն ստրես է, որի առաջին շրջանը տիպիկ շոկային իրավիճակ է, այնուհետեւ տիրապետող են դառնում տագնապն ու անորոշությունը, որոնց հաղթահարմամբ են սկիզբ առնում կայունությունն ու զարգացումը:

Նման վիճակում հայտնվեցին հետհամայնավարական շրջանի գրեթէ բոլոր երկրները: Այն առանձնահատուկ ընդգծումներով դրսեւորվեց նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Բանն այն է, որ վերջիններս ապրեցին կրկնակի փլուզում, նախ՝ հասարակական հարաբերությունների համակարգի եւ ապա՝ պետական կառույցի: Եթէ առաջինը ենթադրում էր անցում շուկայական տնտեսական հարաբերությունների եւ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հիման վրա ժողովրդավարական, իրավական (որոշ նորանկախ երկրներում նաեւ սոցիալական) պետությանը բնորոշ

²⁵³ Միանգամայն արդարացի է Վ.Ս. Ներսեսյանցը, նշելով, որ իրենց ամբողջ արտաքին տարբերությամբ հանդերձ, խորհրդային իրավական տարբեր հայեցակարգերը ներքնապէս միասնական են «...իրավունքի, դրա օբյեկտիվ բնույթի եւ իմաստի բացասման առումով» (Ներսեսյանց Վ.Ս., Իրավագիտություն, Երեւան, 2002, էջ 220):

հասարակական հարաբերությունների արմատավորում, ապա երկրորդը պարտադրում էր անհետաձգելի քայլեր՝ մասից ամբողջ դառնալու, ինքնուրույն պետական - հասարակական համակարգ ստեղծելու, տարաբնույթ վտանգները հաղթահարելու ուղղությամբ:

Նշված խնդիրների լուծումը պահանջում էր գործադրել ճգնաժամային կառավարման ողջ զինանոցը՝ անցումը կառավարելի դարձնելու, համակարգային վերափոխումների անխուսափելի բացասական հետևանքները մեղմելու, քաղաքական, տնտեսական, հոգեբանական եւ ընդհանրապես արժեհամակարգային անորոշությունը հաղթահարելու, համակեցության նոր կանոնները հստակեցնելու, փլուզված կառույցների փոխարեն նորերը ձևավորելու եւ բազմաթիվ այլ անհետաձգելի խնդիրներ լուծելու համար: Պահանջվում էր ջանքերի գերագույն լարում՝ կյանքի ռիթմը պահպանելու եւ տարածության ու ժամանակի մեջ նորովի կողմնորոշվելու համար:

Այն, ինչ ընդհանուր էր բոլոր նորանկախ երկրներում, բազմապատիկ դժվարություններով էր դրսևորվում Հայաստանում՝ պայմանավորված երկրաշարժով, պատերազմով, շրջափակումով, նոր իրողությունների պայմաններում անկենսունակ դարձած տնտեսությամբ, աշխարհաքաղաքական նոր իրողություններով:

Նման իրավիճակում առաջին պլան են մղվում ճգնաժամային կառավարման մոտեցումները (որն, ի դեպ, բնորոշ էր նաեւ Հայաստանի առաջին հանրապետությանը)՝ առաջադրելով երկակի խնդրի լուծում: **Նախ**, թույլ չտալ քաոսի առաջացում եւ կազմակերպված ու կառավարելի ձևով դուրս գալ այդ իրավիճակից՝ նվազագույնի հասցնելով կորուստները: **Երկրորդ**՝ հնարավոր կարճ ժամկետներում ճշտել առաջնահերթությունները, նախապատրաստել պետական մեքենան աշխատելու ֆունկցիոնալ կառավարման պայմաններում, ստեղծել հասարակական նոր հարաբերություններին բնորոշ օրենսդրական դաշտ ու կառավարման ինստիտուցիոնալ համակարգ:

Այս խնդիրների լուծումը եվրոպական նախկին համայնավար երկրների համար, որոնք այդ կարգավիճակը ձեռք էին բերել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ուներ այն առանձնահատկությունը, որ, **մի կողմից**, ավելի հստակ էր անելիքը եւ պատկերացումն ապագայի նկատմամբ՝ հասարակական գիտակցությունից

դեռևս դուրս չէին մղվել այն արժեքները, որոնք պետք է վերականգնվեին, ու մեծ թիվ էին կազմում դրանք կրողները: **Մյուս կողմից՝** կային ազգային-պետական ամբողջական համակարգ, համեմատաբար ինքնուրույն կառուցվածքի վրա խարսխված տնտեսություն, եվրոպական առաջադիմական արժեհամակարգերին ինտեգրվելու ավելի մեծ հնարավորություն, աշխարհաքաղաքական առավել բարենպաստ իրավիճակ:

ԽՍՀՄ հանրապետությունների համար ոչ միայն մեծ էր ինտեգրիայի գործոնը եւ տարիներով քողարկված ու առավել սրությամբ ի հայտ եկած հիմնահարցերի ազդեցությունը, այլև անհամեմատ դժվար էր ինքնուրույն գործելու հնարավորությունը: Դա պայմանավորված էր, **մի կողմից,** նրանով, որ տնտեսական կապերը եւ դրանց ներազդեցությունը քաղաքական գործընթացների համեմատությամբ ունեն հարաբերական անկախություն ու մեծ ինտեգրիա: **Մյուս կողմից՝** առաջացել էր շահերի աններդաշնակություն մասն այն պատճառով, որ մինչև վերջ հստակ չէին անելիքները, նոր լուծումներն ու դրանց հասնելու ճանապարհները:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունն իր առաջին քայլերն սկսեց ազգային-պետական իրավական համակարգն ամուր ու կայուն հիմքերի վրա դնելու փորձով: Առաջին մասն փաստաթուղթը 1990թ. օգոստոսի 23-ին ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված՝ Հայաստանի անկախության մասին հռչակագիրն էր: Հռչակագրի նախապատրաստման ու տարբեր նախագծերի համադրման համար ստեղծվեց հատուկ խորհրդարանական հանձնաժողով: Վերջինիս աշխատանքի բնույթը, ներկայացված տարբեր նախագծերի քննարկման ընթացքը շատ ընդհանրություններ ունեին հայ իրականության մեջ հրավիրված սահմանադիր ժողովների հետ՝ առաջին հերթին հասարակական համաձայնության մթնոլորտի ապահովման առումով²⁵⁴: Պատահական չէր, որ Հռչակագիրն ընդունվեց մեծ խանդավառությամբ:

Բովանդակային առումով Անկախության հռչակագիրը հայ սահմանադրական մշակույթի պատմության մեջ որակապես նոր էջ բացեց:

254 Որպես առանձին նախագիծ ներկայացրած պատգամավոր, որպես Հռչակագրի նախապատրաստման հանձնաժողովի անդամ առանց վարանելու կարող եմ փաստել, որ Հայաստանի անկախության մասին հռչակագիրն ազգային համաձայնության աննախադեպ վկայություն է:

**Այն հիմնարար, հետեւողականորեն համակարգված, պատմա-
քամաքանական խոր ընդհանրացումներ բովանդակող, ազգային
ինքնության առաջնահերթությունները հաշվի առնող, միջազգային
սահմանադրաիրավական զարգացումների ընդհանուր տրամաբա-
նությունից ելնող նորմերի ու սկզբունքների համակարգային ամ-
բողջականություն է, որը երբեք չի կորցնի իր թե՛ պատմական եւ թե՛
գործնական իրավական նշանակությունը:**

Անհրաժեշտ ենք համարում առավել հանգամանորեն անդրա-
դառնալ Հռչակագրի մի շարք կոնկրետ դրույթների: Այն առաջին
հերթին հանդես եկավ որպէս «Հայաստանի ժողովրդի միասնական
կամքի» արտահայտություն: Անկախ պետականության հիմքում դնե-
լով միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերն ու սկզբունքները,
խնդիր ունենալով «ժողովրդավարական, իրավական հասարակար-
գի ստեղծումը», հռչակվեց, որ «Հայոց պետականության կրողը Հա-
յաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն
իրականացնում է անմիջականորեն եւ ներկայացուցչական մարմին-
ների միջոցով՝ ՀՀ Սահմանադրության եւ օրենքների հիման վրա»:

Սահմանադրաիրավական առումով բացառիկ կարեւորվում են
քաղաքացիության կարգավիճակի, անխտրականության սկզբունքի,
խոսքի, մամուլի, խղճի ազատության, քաղաքական ազատություն-
ների, երկրի ինքնիշխանության, միջազգային իրավասուբյեկտու-
յան, տնտեսական, սոցիալական, մշակութային հարաբերություն-
ների սահմանադրական հիմունքների եւ մի շարք այլ հիմնարար
արժեքների վերաբերյալ հռչակագրային մոտեցումները: Դրանք
սահմանադրական նոր զարգացումների համար սկզբունքային կողմ-
նորոշիչներ դարձան: Հռչակագրով պարտավորվելով Հայաստանի
Հանրապետությունում ապահովել «օրենսդիր, գործադիր եւ դատա-
կան իշխանությունների տարանջատում», հիմք դրվեց որակապես
նոր իրավական համակարգի, որը պետք է դառնար հռչակագրային
նպատակների իրականացման երաշխիքը:

Անկախության հռչակագրին բնորոշ են ոչ միայն հավատարմու-
թյունն ազգային ակունքներին, այլեւ սկզբունքների ու նորմերի ներքին
կուռ ամբողջականությունն ու փոխլրացումը, ներդաշնակությունն
առաջադիմական իրավական լուծումներին ու սահմանադրական
զարգացումների միջազգային միտումներին:

Հռչակագրային նորմերը, մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը, իրենց հետագա որոշակիացումը գտան «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքում, որն ընդունվեց Գերագույն խորհրդի կողմից 1991թ. սեպտեմբերի 25-ին (ուժը կորցրել է 1995թ. ՀՀ Սահմանադրության 116 հոդվածի հիման վրա): Սույն սահմանադրական օրենքով, ամրագրելով ՀՀ սահմանադրական կարգը՝ որպես անկախ ժողովրդավարական պետություն, հասարակական հարաբերությունների հիմքում դրվեցին ժողովրդաիշխանության, իշխանությունների տարանջատման, մարդկանց իրավահավասարության, անխտրականության, իրավունքների ու ազատությունների ճանաչման ու ապահովման սկզբունքները: Ամրագրվեց նաև սահմանադրական այն կարևոր սկզբունքը, որ իշխանության մարմինները կարող են իրականացնել միան օրենքով իրենց վերապահված լիազորություններ: Օրենքի հոդված 5-ը ամրագրեց, որ «Հայաստանի Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձը Հայաստանի Հանրապետության Նախագահն է, որը գլխավորում է ՀՀ գործադիր իշխանությունը եւ ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը երկրի ներսում եւ միջազգային հարաբերություններում»: Այս սահմանադրական օրենքը գործնականում պետական իշխանության նոր համակարգի ձեւավորման հիմքը դրեց եւ իրավական երաշխիք հանդիսացավ վերափոխելու խորհրդային օրենքներով ձեւավորված իշխանության միասնական բուրգը, որի գագաթին **Գերագույն** խորհուրդն էր՝ տարանջատելով օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները:

Թե՛ Հայաստանի եւ թե՛ նորանկախ շատ երկրների համար հետագա տարիները, մինչև նոր սահմանադրությունների ընդունումը, դարձան հատվածական վերափոխումների եւ իրադրության որոշ կայունացման տարիներ: Զգալի չափով ամրապնդվեց վերափոխվող հասարակական հարաբերությունների օրենսդրական բազան, հիմնականում կազմավորվեցին պետական կառավարման ինստիտուտները, նոր որակ ստացավ տնտեսական անկախությունը՝ հատկապես սեփական դրամանիշի եւ ֆինանսաբանկային ինքնուրույն հարաբերությունների արմատավորման շնորհիվ, ձեւավորվեցին միջազգային գործուն կապեր, որոնք կողմնորոշեցին նաև տնտեսական բարեփոխումների բնույթը:

Այս փուլն ուներ նաև ներքին վտանգներ ու խուճեր: Հայաստանի համար դա պայմանավորված չէր միայն դարաբաղյան պատերազմից ածանցյալ հետեւանքներով: Օրենսդրական բացերը, կառույցների անկատարությունը, կառավարման որոշ սխալներն ու մի շարք հարցերի անձեռնհաս լուծումները հասարակության մեջ պարարտ հող ստեղծեցին բացասական բազմաթիվ դրսեւորումների ու արժեհամակարգային ձեւախեղումների ի հայտ գալու համար, որոնք հետագայում ավելի խոր արմատներ ձգեցին:

1995թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը: Դրան նախորդել էին շուրջ չորս տարի տեւած բուռն քննարկումները, որոնք վերաբերում էին թե՛ պետության կառավարման ձեւին, թե՛ իշխանությունների բաժանմանն ու հավասարակշռմանը, դրանց լիազորություններին եւ թե՛ սահմանադրական կարգի հիմունքներին ու մարդու իրավունքներին առնչվող մի շարք սկզբունքային հարցերի: Չնայած նոր Սահմանադրության շուրջ չհաջողվեց հասարակական համաձայնության այնպիսի մթնոլորտ ապահովել, ինչ Անկախության հռչակագրի պարագայում, ինչպես նաև հաղթահարել կամասահման իրավամտաժողովրդային խորհրդային ինտեգրիան, այսուհանդերձ, կյանքը ցույց տվեց, որ ՀՀ Սահմանադրությունը վճռական դեր կատարեց երկրի հետագա կայուն զարգացումն ապահովելու եւ մի շարք ճգնաժամային իրավիճակներից սահմանադրական ելքեր գտնելու հարցերում:

Սահմանադրության նախաբանում ամրագրվեց. «Հայ ժողովուրդը, հիմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները եւ համազգային նպատակները, իրականացրած ինքնիշխան պետության վերականգնման իր ազատասեր նախնիների սուրբ պատգամը, նվիրված հայրենիքի հզորացմանը եւ բարգավաճմանը, ապահովելու համար սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական համերաշխությունը, հավաստելով հավատարմությունը համամարդկային արժեքներին, ընդունում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»: Չափազանց կարեւոր է, որ թե՛ 2005 եւ թե՛ 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ՀՀ Սահմանադրության նախաբանը մնաց անփոփոխ:

Միջազգային սահմանադրական պրակտիկան տարբեր մոտեցումներ է դրսևորում սահմանադրությունների նախաբանի իրավաբանական ուժի վերաբերյալ: Մեր համոզմունքն է, որ Սահմանադրության նախաբանում ամրագրված նորմ-նպատակները ելակետային են իրավակարգավորիչ նորմերի նկատմամբ եւ օժտված են Հիմնական օրենքին բնորոշ բարձրագույն իրավաբանական ուժով:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/՝ սահմանադրական կարգի հիմունքներում ներառված մի շարք դրույթներ: Դրանք, մասնավորապես, ամրագրեցին, որ.

- Հայաստանի Հանրապետությունը ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է (հոդված 1):

- Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին [...] (հոդված 2):

- Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են:

Պետությունն ապահովում է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան:

Պետությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք (հոդված 3):

- Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաեւ հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ (հոդված 4):

- Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման հիման վրա [...] (հոդված 5):

- Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ եւ նրա նորմերը գործում են անմիջականորեն [...] (հոդված 6):

- Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը եւ բազմակուսակցությունը [...] (հոդված 7):

- Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ պաշտպանվում է սեփականության իրավունքը:

- Հայաստանի Հանրապետությունում երաշխավորում են տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունը (հոդված 8):

- Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացվում է միջազգային իրավունքի սկզբունքներին եւ նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով (հոդված 9):

Մենք Սահմանադրության այս եւ մի շարք այլ դրույթների դեռեւս կանդիդատականք հետագա շարադրանքում: Այստեղ ցանկանում ենք ուշադրություն հրավիրել հետեւյալ հանգամանքների վրա.

1. Սահմանադրագիտության միջազգային չափանիշներից ու մեր երկրի զարգացման խնդիրներից ու առաջնահերթություններից ելնելով մեծ նվաճում պետք է համարել բերված դրույթները՝ հատկապես կարեւորելով անփոփոխելի առաջին ու երկրորդ հոդվածներն ու 3 - 5 հոդվածների իրավափիլիսոփայությունը:
2. Երկրորդ աշխարհամարտից հետո եվրոպական սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեքը համարվում է այն, որ Արեւմտյան ու Արեւելյան Եվրոպայի երկրների մեծ մասը 50-ականներին ու 90-ականների վերափոխումների նոր ալիքի շրջանում սահմանադրական լուծումների հիմքում դրեցին այնպիսի կարեւոր սկզբունքներ, ինչպիսիք են.

- մարդու արժանապատվությունն ու նրա իրավունքները բարձրագույն եւ անօտարելի արժեք են,

- այդ իրավունքներն անմիջական գործող իրավունքներ են,

- իրավունքների սահմանափակման գլխավոր չափանիշն այլոց իրավունքների երաշխավորումն է,

- իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը պետք է երաշխավորեն դինամիկ ներդաշնակություն **գործառույթ-ինստիտուտ-իրավասություն** համակարգում,

- երկրում սահմանադրականության սպառնալուծան, սահմանադրական ժողովրդավարության հաստատման գլխավոր պայմանը

Սահմանադրության գերակայության երաշխավորումն է:

Այս սկզբունքները, այնուամենայնիվ, ՀՀ Սահմանադրության մեջ անհրաժեշտ հստակությամբ, խորությամբ ու հայեցակարգային հետետողականությամբ չամրագրվեցին 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում:

3. Հետագա իրողությունները, մասնավորապես, վկայեցին, որ ժամանակին գերապատվությունը տալով պոզիտիվիստական իրավամտաժողովրդյանը, անհրաժեշտ սահմանադրական երաշխիքներ չէին ստեղծվել իրավունքի գերակայության երաշխավորման ու իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հետետողական իրացման համար:

Ուշագրավ է Լ. Ռեզնիչենկոյի դիտարկումն առ այն, որ նորանկախ երկրներից շատերի համար բնորոշ էր նաեւ, այսպես կոչված, «նեգատիվ կոնստիտուցիոնալիզմի» դրսեւորումը, համաձայն որի՝ Սահմանադրության ընդունման առաջնային խնդիրն էր բացասականի հաղթահարումը՝ բռնատիրության վերականգնման կանխումը, որի համար այդ երկրների սահմանադրություններում հիմնական ուշադրությունը դարձվում էր մարդու սահմանադրական իրավունքների հռչակմանը եւ դատական վերահսկողությանը, միաժամանակ երկրորդային նշանակություն տալով իշխանությունների իրական բաժանման ու հավասարակշռման երաշխավորմանը: Էական առանձնահատկություններից է համարվում եւ այն, որ նորանկախ երկրներում սահմանադրական հիմնահարցերը չափազանց քաղաքականացվում էին: Գրանք, ի մասնավորի, հանգեցրին նրան, որ այդ երկրներում շատ սահմանադրական արժեքներ ձեւախեղված ընկալվեցին եւ որոշ առումով կուսակցության [կոմունիստական] դիկտատուրան փոխարինվեց մեծամասնության դիկտատուրայով, իսկ մարդը մնաց նույնքան իրավագուրկ²⁵⁵: Այս ամենը բնորոշ էին անցման շրջանի այն երկրներին, որտեղ դեռ առաջին քայլերն էին անում սահմանադրաիրավական արժեքների համակարգի հստակեցման, հասարակության քաղաքական կազմավորման մասին պատկերացումների որոշակիացման, սահմանադրական նոր դոկտրինաների

²⁵⁵ Резниченко Л. Права человека и конституционное право (Обзор материалов журнала “Конституционное право: восточноевропейское обозрение”), <http://www.hrights.ru/text/b9/Chapter4.htm>.

ծեավորման համար: Սակայն այս երեւոյթները շարունակում են ունենալ նաեւ ինտեքցիոն դրսեւորումներ:

Հարկ է նաեւ արձանագրել, որ 2015թ. սահմանադրական փոփոխութիւններն արմատական բնոյթ չստացան Սահմանադրութեան սահմանադրական կարգի հիմունքների առումով, այլ սահմանադրագիտութեան վերջին զարգացումների հենքի վրա մասնակի հստակեցումներ մտցվեցին՝ առավել ամբողջական դարձնելու համար Սահմանադրութեան արժեքանական բնութագրիչների, նորմ-նպատակների ու նորմ-սկզբունքների համակարգը: Դրա վկայությունն են, մասնավորապէս, հետեւյալ դրոյթները.

- Հայաստանի Հանրապետութիւնն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետութիւն է /հոդվ. 1/:

- Հայաստանի Հանրապետութիւնում իշխանութիւնը պատկանում է ժողովրդին:

Ժողովուրդն իր իշխանութիւնն իրականացնում է ազատ ընտրութիւնների, հանրաքվեների, ինչպէս նաեւ Սահմանադրութեամբ նախատեսված պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Իշխանութեան յուրացումը որեւէ կազմակերպութեան կամ անհատի կողմից հանցագործութիւն է /հոդվ. 2/:

- Հայաստանի Հանրապետութիւնում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվութիւնն իր իրավունքների եւ ազատութիւնների անքակտելի հիմքն է /հոդվ. 3/:

- Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատութիւնների հարգումն ու պաշտպանութիւնը հանրային իշխանութեան պարտականութիւններն են /հոդվ. 3/:

- Հանրային իշխանութիւնը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատութիւններով՝ որպէս անմիջականորէն գործող իրավունք /հոդվ. 3/:

- Պետական իշխանութիւնն իրականացվում է Սահմանադրութեանն ու օրէնքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւնների բաժանման ու հավասարակշռման հիման վրա /հոդվ. 4/:

- Սահմանադրութիւնն ունի բարձրագույն իրավաբանական ուժ /հոդվ. 5/:

- Օրէնքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրէնքներին, իսկ ենթաօրէնսդրական նորմատիվ իրավական ակտե-

ըը՝ սահմանադրական օրենքներին եւ օրենքներին /հոդվ. 5/:

- Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի եւ օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը /հոդվ. 5/:

- Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով /հոդվ. 6/:

- Ազգային ժողովի եւ համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաեւ հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ եւ ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ /հոդվ. 7/ :

- Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում եւ հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը /հոդվ. 10/ եւ այլն:

Սահմանադրական մշակույթի համակարգային ամբողջականության տեսանկյունից այնքան էլ կարեւոր չէ, թե պետությունը կառավարման ինչ ձև է ընտրել՝ նախագահական, կիսանախագահական, թե՛ խորհրդարանական: Գա առաջին հերթին քաղաքական ընտրություն է: Սակայն չափազանց կարեւոր է, որպեսզի ցանկացած ձևի պարագայում հետևողականորեն իրացվեն սահմանադրական հիմնարար սկզբունքները, բացառվեն ներսահմանադրական հակասություններն ու փակուղային վիճակները, Սահմանադրությունը հանդես գա որպես դիմամիկ օրգանական ամբողջականություն:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական զարգացումները, թերեւս, դառնան առանձին ու հանգամանալի ուսումնասիրության առարկա: Այսուհանդերձ, լուրջ դասեր է անհրաժեշտ քաղել այն իրողությունից, որ թե՛ մեզանում եւ թե՛ մի շարք այլ երկրների անցումային հասարակական համակարգերում տեղ գտան սահմանադրաիրավական որոշ ձեւախեղումներ, որոնք պայմանավորվեցին երեք հիմնական խումբ գործոններով.

1. իրավամտաժողության եւ իրավակիրառական պրակտիկայի իներցիա,
2. սահմանադրաիրավական խեղված լուծումներ կամ թերացումներ,
3. առաջադիմական իրավական արժեքների մեխանիկական փոխառում կամ պատճենավորում՝ առանց դրանց իրացման անհրաժեշտ արժեքային համակարգի ու նախադրյալների ստեղծման եւ ազգային սահմանադրական մշակույթի հաշվառ-

ման, որն իրական կյանքում հանգեցնում է սահմանադրական հիմնական սկզբունքների տարաբնույթ ձեռախեղումների կամ գտնված լուծումները կտրվում են իրական կյանքից ու օժտված չեն լինում բավարար կենսունակությամբ: Նման պարագայում գործ ունենք ոչ թե ժողովրդավարության արմատավորման, այլ «ժողովրդավարական փորձարկումների (էքսպերիմենտի)» հետ, որի անհաջողությունն ի սկզբանե երաշխավորված է:

Ցավոք, անցումային հասարակություն ունեցող մի շարք երկրներում համակարգային փլուզումը դեռևս մտայնության վերափոխման չի հանգեցրել: Հսկայական է մտածողության եւ աշխարհըմբռնման իներցիան, իրավական ասպարեզում շարունակում է տիրապետել ձեռախեղված պոզիտիվիզմը, որը հաճախ հանդես է գալիս լեգիտակական ընդգծված դոսետորումներով: Հայեցական մակարդակով կարգախոսի վերածելով իրավական պետության հասկացությունը, լրջորեն չի ընկալվում իրավունքի գերակայության երաշխավորման, իրավունքով իշխանության սահմանափակման, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման անհրաժեշտությունը: Իշխանության մասին պատկերացումները շարունակում են մնալ ուժի ու ճնշում գործադրելու հնարավորության հարթությունում: Ժողովրդավարությունը դիտվում է որպես իշխանության բարեհաճ վերաբերմունք, մարդկանց՝ իշխանության կողմից թույլատրելի սահմաններում արտահայտվելու հնարավորություն: Սա ճանապարհ է ոչ թե դեպի վերափոխվող Եվրոպա, այլ միտված է միջնադարյան հետադիմական արժեքներին²⁵⁶: Եվրախորհրդի «ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 59-րդ լիազումար ցիստում (17-19.06.2004թ.) Խորհրդարանական վեհաժողովի ներկայացուցիչը դիպուկ նկատեց,

256 Անցումային հասարակության համար բավարար չէ միայն ժողովրդավարական ենթակառույցների ստեղծումը, որոնք իրենց հերթին հաճախ ձեռախեղված են կյանքի կոչվում: Առավել կարելու է քաղաքացիական անհրաժեշտ որակների արմատավորումը եւ «մենթալիտետի» վերափոխումը: Հակառակ պարագայում ժողովրդավարությունը կարելու արժեք, մարդկանց իրավունքների ու ազատությունների լիարժեք դոսետորման նախադրյալ լինելուց կարող է իշխանության ձեռքին զենք ու միջոց դառնալ՝ ուղղված այդ իրավունքների ու ազատությունների բռնադատմանը (այս մասին, մասնավորապես, տե՛ս Ежи Мачкув. Демократия и авторитаризм в посткоммунистических трансформационных системах // Конституционное право: Восточно-европейское обозрение. 2003, N2, էջեր 2-7):

որ «...անցումային երկրներում ամենամեծ հիմնահարցն այն է, որ չեն կարողանում տարբերել «իրավունքի գերակայություն» եւ «օրենքի գերակայություն» հասկացությունները: Առանց իրավունքի գերակայության երաշխավորման, ցանկացած երկրում, թեկուզ ամենաժողովրդավարական սկզբունքներով ձեւավորված իշխանությունները տանելու են բռնապետության հաստատման»:

Գժվար է չհամաձայնել նման հարցադրմանը: Ավելացնենք, սակայն, որ միջազգային պրակտիկան վկայում է նաեւ ժողովրդավարության հաստատման երեք տարբեր ճանապարհների մասին. 1. էվոլյուցիոն զարգացում (որը որդեգրեց եվրոպական երկրների մեծ մասը), 2. անցում քառսի ու անիշխանության միջով (հետհամայնավարական տարածքի մի շարք երկրներում), 3. անցում՝ բռնապետության հաստատումով (դասական օրինակներ են Պորտուգալիան, Իսպանիան, Չիլին): Խնդիրն այն է, որ դրանցից յուրաքանչյուրն իր գինն ու ժամանակն է պահանջում: Միշտ անհամեմատ թանկ են վճարում 2-րդ եւ 3-րդ ուղին ընտրած երկրների ժողովուրդները՝ հաճախ չհասնելով բաղձալի արդյունքի: Այսօրվա Եվրոպան միարժեքորեն մերժում է այդ ճանապարհները: Հիմնական մոտեցումն այն է, որ ժողովրդավարության կարելի է հասնել միայն ու միայն իրավական հենքի վրա: Այնտեղ, ուր բռնադատվում է իրավունքը, ժողովրդավարական կարգախոսները լոկ միջոց են դառնում բռնատիրության հաստատման համար:

Անցումային հասարակարգերին բնորոշ է այն, որ խորհրդային իրավամտաժողովուրդները հաճախ պարարտ հող է գտնում ինքնավերարտադրման համար: Դա մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչի է ձգտում իշխանությունը: Եթե նպատակն իրավունքի գերակայության հաստատումն է, ապա դյուրին է հաղթահարել իներցիան: Եթե խնդիրն իշխանության կամքի ուժային պարտադրումն է, ապա խորհրդային իրավական ինստիտուտներն այս հարցում անգերազանցելի են, իսկ հետխորհրդային փորձերը՝ պարզապես ֆարս:

Իրավիճակի բարդությունը եւ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ գործ ունենք ոչ միայն խոր արմատներ ունեցող իներցիայի հետ, այլ նաեւ նրանում, որ համակարգային փլուզումն առաջ բերեց սեփականության վերաբաշխման անհրաժեշտություն, ինչով էլ պայմանավորված նոր երեւույթներ ի հայտ եկան:

Մի կողմից՝ մասնավոր սեփականության հաստատումն օբյեկտիվորեն առաջադրում է ժողովրդավարության արմատավորման անհրաժեշտություն, մյուս կողմից՝ խորհրդային իրավակարգը, որը գլխավորապես ծառայում էր պետության եւ պետական սեփականության պաշտպանությանը, հիմնականում կորցրեց իր առարկան եւ իր հիմնական գծերով ու ինստիտուցիոնալ համակարգով պահպանվելով՝ դարձավ զենք սեփականությունը վերաբաշխող իշխանության ձեռքին²⁵⁷: Նման վիճակը ժողովրդավարական զարգացումների ամենամեծ արգելակն է²⁵⁸: Դրա հաղթահարման առաջնահերթ պայմանը եվրոպական իրավական չափորոշիչներին հասու դառնալն է, այն բանի գիտակցումը, որ իրավունքն իշխանության մենաշնորհը չէ, այլ պատկանում է յուրաքանչյուր մարդու՝ անկախ նրանից, թե ինչ առնչություններ ունի, կամ՝ չունի, իշխանության հետ: «Ինչպես վկայում է քաղաքակրթության ամբողջ պատմությունը, - գրում է ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը, - մարդկանց ազատությունը կարելի է ճանաչել եւ արտահայտել միայն իրավական ձեւով, սոսկ որպես փաստացի տարբեր անհատների իրավունքի եւ պետության՝ ձեւականորեն հավասար սուբյեկտներ ճանաչելու միջոցով: Իրավունքը, որպես ձեւական հավասարության արտահայտություն, հասարակական հարաբերություններում ազատության եւ արդարության համընդհանուր հավասար չափն է: Մարդկանց հասարակական կյանքում, բացի իրավական ձեւից, չկա եւ սկզբունքորեն չի կարող լինել հավասարության, ազատության ու արդարության արտահայտության եւ կեցության որեւէ այլ ձեւ: **Իրավունքը մարդկության համաշխարհային պատմության մեջ ազատության մաքեմատիկան է...**»²⁵⁹: Եթե պետության քաղաքացիները հասարակական հարաբերություններում

²⁵⁷ Տեղին է վերհիշել Արիստոտելի խորախորհուրդ ընդհանրացումը՝ **օրենքը չի կարող բռնությունը դարձնել իրավունք** կամ **ուժը ներկայացնել որպես իրավունքի աղբյուր**:

²⁵⁸ Ինչպես իրավագիտորեն նշում է Ա. Սալմինը, ժամանակակից ժողովրդավարության իրական գոյության հիմնախնդիրը կայանում է հենց նրանում, թե ինչպես են հարաբերակցվում պետական իշխանությունը, բյուրոկրատիան, քաղաքացիական հասարակությունը եւ քաղաքականությունը (տե՛ս Салмин А. Современная демократия. М., 1997. էջ 270):

²⁵⁹ Տե՛ս Ներսեսյանց Վ.Ա., Ցիվիլիզմի մանիֆեստը, Երեւան, 2001, էջ 21:

հանդես չեն գալիս որպես լիարժեք իրավունակ անհատներ, նրանք գործնականում իրավագուրկ են, ապա ազատական իրավամտածողության, իրավական պետության կամ իրավունքի գերակայության մասին խոսք լինել չի կարող, իսկ քաղաքացիական հասարակության մասին դատողությունները կմնան որպես դատարկ կարգախոսներ²⁶⁰: Միանգամայն անհեռանկար է նաև, երբ շեշտը դրվում է ժողովրդավարության «ներմուծման» ճանապարհով իրավական հեղափոխություն իրականացնելու վրա՝ առանց վերջինիս համար անհրաժեշտ արժեքային համակարգի ու նախադրյալների ստեղծման: Դա կարող է հանգեցնել միայն անհաջող նմանակման:

Ուստի «լավ» սահմանադրություն ունենալն անհրաժեշտ է, բայց ոչ բավարար իրավական, ժողովրդավարական երկիր դառնալու համար: Անհրաժեշտ է նաև համարժեք սահմանադրական ինքնագիտակցություն ու քաղաքական համակարգ:

Խնդիրը պետք է լուծվի ոչ միայն մտայնության կամ քաղաքական գիտակցության մակարդակում, այլև պետք է հաղթահարվեն իմացաբանական աղճատումները: Հետևաբար, իրավական, ժողովրդավարական պետության կայացման ամենակարճ ճանապարհը ոչ թե դարերի վրայից ցատկելու անպտուղ փորձն է կամ որոշակի արժեքներ ու սկզբունքներ հայեցական ընկալումներից ելնելով թղթային կարգախոսի ու ամկա իրողությունների քողարկման միջոց դարձնելը, այլ **քաղաքացիական հասարակության եվրոպական արժեքները սեփական արժեքային համակարգի ու ազգային սահմանադրական մշակույթի շրջանակներում ճանաչելն ու հետևողականորեն, հաստատակամ հասարակության անդամների իմաստավորված սեփականությունը դարձնելը**: Սա նորանկախ պետության ծրագրանպատակային քաղաքականության ու գործունեության հիմնական գերակայությունը պետք է լինի: Սահմանադրաիրավական լուծումները, իրենց հերթին, կարող են կառուցվել միայն այդ արժեքների վրա՝ իրենց մեջ պարունակելով նաև հասարակությանը որոշակի ուղղու-

260 Ուշադրության են արժանի ռուսական երկու հեղինակավոր ամսագրերի կողմից այս հիմնահարցերով կազմակերպված կլոր սեղանի նյութերը (տե՛ս Гражданское общество, правовое государство и право («Круглый стол» журналов «Государство и право» и «Вопросы философии») // Государство и право, 2002, N1, էջեր 12-50):

թյամբ համակարգային զարգացում հաղորդելու ու հասարակության կողմից ընկալված լինելու ներքին լիցք:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ ցանկացած երկրում լուրջ խնդիրներ են առաջանում, երբ շեշտը դրվում է սահմանադրական լուծումների մեխանիկական փոխառման վրա: Ցանկանում ենք կրկին շեշտել, որ Սահմանադրությունն արժեքային որոշակի համակարգ է, որը տվյալ սոցիալական հանրությանն է բնորոշ՝ իր կոնկրետ առանձնահատկությունների, առաջադրված խնդիրների, դրանց լուծման մոտեցումների ու ձևերի առումով: Սա չի նշանակում բացարձականացում եւ կադապարում: Անհնարին է ընդհանուր սկզբունքների, միջազգային փորձի, միջազգային իրավունքի պահանջների, միջազգային արդարադատական նախադեպային իրավունքի եւ ընդհանրապես միջազգային սահմանադրական մշակույթի անտեսումը: Սակայն խնդիրը դրանք մեխանիկորեն պատճենահանելու փոխարեն սեփական արժեքային համակարգին ներդաշնակելն ու համակարգային առաջընթացը երաշխավորելն է: Ինչպես իրավացիորեն նշում է պրոֆ. Վ. Օսյատինսկին, փոխառումն անխուսափելի է, քանի որ ընդհանուր սահմանադրական սկզբունքներ ու մեխանիզմներ կան, որոնք վաղուց հայտնի են, ընդհանուր ճանաչում են գտել եւ հանդես են գալիս որպես, այսպես կոչված, միջազգային չափորոշիչներ կամ միջազգային իրավունքի նորմեր ու սկզբունքներ²⁶¹: Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության նախկին նախագահ, պրոֆեսոր Չերիլ Սանդերսը, ընդգծելով տարբեր երկրների սահմանադրությունների լեզվական ու բովանդակային նմանությունները, շեշտում է, որ դրանց ստեղծման պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք միմյանցից են ածանցված՝ բացառությամբ, թերեւս, նախատիպ հանդիսացող այնպիսի սահմանադրական համակարգերի, ինչպիսիք են Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի եւ ֆրանսիական համակարգերը²⁶²: Բնականաբար, փոխառվում են առաջին հերթին սահմանադրական հասկացություններն ու ընդհանուր սկզբունքները: Այսուհանդերձ, գերխնդիրն այն է, որ դրանք

261 St' u Oсыт'иньскій В., Парадоксы конституционного заимствования // Сравнительное конституционное обозрение. 2004, N 3, էջ 53:

262 Ch. A. Saunders Constitutional Culture in Transition // Constitotional Cultures / Ed. by M. Wyrzykowski. Warsaw: ISP, 2000. P. 37.

պետք է ներդաշնակ լինեն այն հասարակության արժեքային համակարգին, որի համար դառնում են սահմանադրական սկզբունքներ ու նորմեր: Հակառակ պարագայում դրանք թղթի էջերում էլ կմնան եւ կյանք չեն մտնի ու չեն դառնա ապրող իրողություն: Ավելին, հակադրվելով իրականության արժեքային համակարգին՝ դրանք առաջադիմական վերափոխումների խթանից կարող են վերածել խոր սոցիալական հակասությունների խթանիչի կամ իշխանության ձեռքին պարտադրանքի գործիքի:

Առավել հաճախ սահմանադրական հիմնական սկզբունքներն ու դրույթները փոխառվում են աղճատված ձևով՝ հարմարեցնելով որոշ պայմանների ու պատկերացումների: Առաջին պլանում պետք է լինի սահմանադրական հիմնական սկզբունքների ճանաչումն ու ընկալումը միջազգային իրավական չափանիշների համատեքստում, եւ ապա՝ շեշտը դրվի այն մոտեցումների խորությամբ ուսումնասիրման վրա, որոնց օգնությամբ տարբեր երկրներ կարողացել են լուծել իրենց առջև ծառայած կոնկրետ սահմանադրական խնդիրներն ու ապահովել երկրի կայուն ժողովրդավարական զարգացումը: Այս առումով չափազանց կարեւոր է տարբեր երկրների սահմանադրական փոփոխությունների միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը: Օրինակ, Ավստրիայի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Գերմանիայի, Դանիայի, Իսպանիայի, Իտալիայի, Հունաստանի, Պորտուգալիայի, Ֆրանսիայի, Ֆինլանդիայի, Սլովակիայի եւ մի շարք այլ երկրների վերջին տասնամյակների սահմանադրական փոփոխությունների ու սահմանադրական օրենքների, ինչպես նաեւ Արեւելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ մի շարք երկրների (Լեհաստան, Սլովենիա, Չեխիա, Բուլղարիա, Ռուսաստանի Դաշնություն, Լիտվա, Էստոնիա, Վրաստան, Դրոգատան եւ այլն) սահմանադրությունների ուսումնասիրությունից հետեւում է, որ սահմանադրական մշակույթի ձեւավորման ու զարգացման տեսանկյունից առկա են մի շարք կայուն ու ընդհանուր միատումներ.

1. հասարակական-պետական հարաբերությունների առանցքն է դառնում մարդը՝ իր անօտարելի արժանապատվությամբ եւ իրավունքներով: Վերջիններս սահմանադրորեն ամրագրվում ու ճանաչվում են որպես անմիջական գործող իրավունքներ,

դառնում են ժողովրդի ու պետության կողմից իշխանության իրականացման սահմանափակիչներ, ստանում ներպետական ու միջազգային պաշտպանության հուսալի երաշխիքներ, հանդես գալիս որպես տվյալ հասարակական համակարգի գնահատման հիմնական չափանիշներ: Մարդկային հանրության արժեքների համակարգում **տիրապետող է դառնում իրավունքի գերակայության սկզբունքը:** Քաղաքացիական հասարակության կայացման գլխավոր չափանիշ է դառնում ոչ թե իշխանությամբ՝ իրավունքի, այլ իրավունքով իշխանության սահմանափակումը,

2. ժողովրդավարական արժեքները հիմնավորապես դառնում են սահմանադրական կարգի հենքը եւ մարդկանց ազատությունների երաշխիքը, նկատվում է համընդհանուր միտում կենտրոնական իշխանության աստիճանական սահմանափակման, ուժի (քաղաքական, վարչական, տնտեսական) ապակենտրոնացման եւ ինքնակառավարման հնարավորությունների ընդլայնման ու երաշխիքների ամրապնդման հարցերում,
3. իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հետետղական իրացումը, դրանց գործառութային հավասարակշռումը, խելամիտ գսպումն ու հակակշռումը դառնում են համընդհանուր պահանջ: Ներկայացուցչական ժողովրդավարության զարգացումներն առանձնահատուկ կարեւորում են հասարակության քաղաքական կառուցակարգերի կատարելագործումն ու մարդկանց քաղաքական իրավունքների պաշտպանությունը: Հատուկ ուշադրության առարկա է դառնում դատական իշխանության անկախության, համակարգային լիարժեքության, ամբողջականության, կենսունակության ապահովման խնդիրը: Մեծապես կարեւորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես հասարակության ժողովրդավարական ինքնավարության առանձնահատուկ ձեւ,
4. ամրապնդվում են ներսահմանադրական կայունության երաշխիքները, արմատավորվում է մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների

բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական կուռ համակարգ, սահմանադրական կարգն օժտվում է առավել կենսունակ «**իմունային համակարգով**», մարդու իրավունքների մեջ առանձնահատուկ կարեւորություն է ստանում նրա սահմանադրական արդարադատության իրավունքը,

5. հասարակական օրգանիզմի «իմունային բավարարության» ապահովման խնդիրների լուծումները նկատելիորեն փնտրվում են սահմանադրական դաշտում եւ, իր հերթին, ազգային սահմանադրությունների յուրաքանչյուր փոփոխություն միջազգային լայն արձագանք է ստանում,
6. գնալով էլ ավելի են կարեւորվում միջազգային իրավունքի տեղն ու դերն ազգային իրավական համակարգերում: Նկատելի են սահմանադրական հիմնական հասկացությունների նույնականացման միտումներ: Ներդաշնակվում են մոտեցումներն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման եւ մարդու իրավունքների սահմանափակումների չափանիշների ընտրության հարցերում: Միաժամանակ, փնտրվում են ազգային առանձնահատկությունների եւ վերազգային մոտեցումների «հաշտեցման» եզրեր:

Նշված ընդհանուր միտումների կողքին մեծապես կարեւորվում են նաեւ իշխանության թեւերի գործառույթներն իրականացնող ինստիտուտների զարգացման, դրանց գործառութային դերի հստակեցման եւ անհրաժեշտ ու բավարար լիազորություններով օժտելու հարցերը: Մյուս կողմից, իշխանությունների գործակցությունն առավել մեծ չափով է խարսխվում համագործակցության սկզբունքի եւ դինամիկ հավասարակշռություն ապահովող լուծումների վրա:

Հաշվի առնելով անցումային հասարակարգերում կայուն իշխանության բացառիկ դերը, կարելի է միարժեք ընդունել, որ նշված ընդհանուր միտումները չափազանց այժմեական են անցումային երկրների սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների եւ Սահմանադրության գերակայության երաշխավորման նախադրյալների ստեղծման առումով: Խնդիրը, սակայն, կայանում է նրանում, որ այդ լուծումները պետք է ներդաշնակվեն տվյալ կոնկրետ հասարակության արժեքային համակարգին ու դառնան հասարակական համաձայնության, այլ ոչ թե հասարակության հանդեպ կիրառվող պարտադրանքի արգասիք:

Այդ խնդիրն արդյունավետ լուծում կարող է ստանալ միայն այն դեպքում, եթե հասարակական համաձայնությամբ հստակեցված են երկրի զարգացման առաջնահերթությունները, դրանց հիմքում դրվող արժեքների համակարգը, երբ որոշակիացված են հայեցակարգային մոտեցումներն այդ առաջնահերթություններից բխող ծրագրերի հիման վրա հանրային կյանքի զարգացումն ապահովելու համար: Մա առանձնապես անհրաժեշտ է անցումային հասարակական համակարգերին, որտեղ գերակայող են անորոշության գործոնը եւ արժեհամակարգային շփոթը: Նման պարագան առավել եւս պահանջում է չափազանց լուրջ մոտեցում Սահմանադրության նորմ-նպատակներին ու նորմ-սկզբունքներին: Դրանք սահմանադրականության միջազգային ձեռքբերումներին համահունչ լինելուց զատ պետք է ծրագրանպատակային բնույթ հաղորդեն ողջ իրավական համակարգի ձեւավորմանն ու զարգացմանը, հետեւողականորեն իրացվեն նյութական իրավունքի նորմերում, դառնան իրավական պետության ու քաղաքացիական հասարակության կայացման հստակ ուղենիշներ: Բոլորովին պատահական չէ, երբ շատ երկրներում Սահմանադրության առաջին գլուխը կամ բաժինն անվանվում է «Սահմանադրական կարգի հիմունքներ»: Ինչպես տեսանք, այստեղ են ամրագրվում այն հիմնարար սկզբունքները, որոնք երկրի սահմանադրական կարգի հիմքն են կազմում եւ ելակետային են մնացած բոլոր բաժինների ու ցանկացած բնույթի իրավահարաբերությունների կանոնակարգման համար: Եթե անգամ ի հայտ են գալիս ներսահմանադրական բնույթի հակասություններ կամ անհամապատասխանություններ, անտարակույս, գերակայող են Սահմանադրության նորմ-սկզբունքները: Այս հանգամանքը հստակ ամրագրվում է նաեւ շատ երկրների սահմանադրություններում: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 16-րդ հոդվածը միանշանակ սահմանում է, որ Սահմանադրության որեւէ այլ դրույթ չի կարող հակասել Ռուսաստանի Դաշնության սահմանադրական կարգի հիմունքներին: Այս հանգամանքին հատուկ ուշադրություն է դարձվում նաեւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածում, որտեղ նախատեսվում է, որ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարան-

նը, ի թիվս այլ հանգամանքների, պետք է հաշվի առնի նաև մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց թույլատրելի սահմանափակումների շրջանակները եւ հիմքերը, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը, պետական մարմինների եւ պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները, Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

Վերոշարադրյալ շեշտադրումներն առանձնապես կարեւորություն ունեն մեր իրականության համար, քանզի սահմանադրական տեքստային զարգացումները եւ սահմանադրական իրավամտաձողությունը ներդաշնակ չեն, ինչը շատ վտանգավոր է պետության կայուն զարգացումը երաշխավորելու համար:

3.3. ԻՐԱՎԱԿԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՄԵՐՕՐՅԱ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրական զարգացումների եւ սահմանադրականության հաստատման առանցքային խնդիրներից են Հիմնական օրենքում ամրագրված հիմնարար սկզբունքների արժեհամակարգային ճիշտ ընկալումը, մեկնաբանումը եւ հետետողական իրացումը հասարակական պրակտիկայում: Առաջին հերթին խոսքը վերաբերում է պետության ժողովրդավարական, իրավական, սոցիալական բնույթին, ժողովրդահշխանությանը, իրավունքի գերակայության եւ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքներին, որոնք ներկայումս ելակետային նշանակություն ունեն հասարակական հարաբերությունների սահմանադրորեն կանոնակարգման համար: Սկզբունքային նշանակություն է ստանում ամենից առաջ բերված հասկացությունների սահմանադրաիրավական այնպիսի ընկալումն ու մեկնաբանությունը, որոնք բխում են միջազգային սահմանադրական զարգացումների արդի տրամաբանությունից ու դրան համարժեք նյութականանում են Սահմանադրության ու օրենսդրության կոնկրետ նորմերում:

Առանձնահատուկ կարեւորություն տալով սահմանադրությունների հասկացութային ապարատին, ցանկանում ենք նախ ընդգծել, որ ամեն մի հասկացության փիլիսոփայական իմաստն այն է, որ արտացոլում է տվյալ երեւոյթի (ուսումնասիրման առարկայի) այն հատկությունները, որոնցից յուրաքանչյուրն անհրաժեշտ է, իսկ միասին վերցրած՝ բավարար, որպեսզի տվյալ երեւոյթը (առարկան) որպես որակական որոշակի ամբողջականություն, տարբերակվի, ճանաչվի: Հասկացությունն ամենաբարձր աստիճանի ընդհանրացումն է, տվյալ երեւոյթի ամբողջական բնութագրման ամենալայն ու ծավալուն վերացարկումը: Մեր ուսումնասիրման առարկայի առումով այն արտահայտում է օբյեկտիվորեն գոյություն ունեցող հարաբերությունների ընդհանրական էությունը, որակը, բնույթը:

Անկախ մեր ճանաչողության աստիճանից, այդ հարաբերությունները, անհրաժեշտ նախադրյալների առկայության պարագաներում, առաջանում ու գործում են: Որքանո՞վ ենք դրանք ճանաչում, մոդելավորում ու դրանց տալիս կանոնակարգված ձեակերպում, պարունակում է այն հարցի պատասխանը, թե ինչպիսին է մեր ճանաչողությունը, գործելակերպի ազատությունը եւ օբյեկտիվ գործընթացների վրա ներազդելու հնարավորությունը: Դճանաչողության եւ հարաբերությունների կարգավորման տվյալ աստիճանից ելնելով՝ այն կարող է հասարակության կողմից ընդունվել որպես վարքագծի պարտադիր կանոն²⁶³: Այլ կերպ, իրավանորմը հասարակական հարաբերությունների կարգավորված, որոշակիորեն սահմանված վիճակի բնորոշումն է: Բայց, քանի որ այդ հարաբերությունները գոյություն ունեն դինամիկայի մեջ, իրավանորմը չի կարող հանդես գալ միայն որպես փաստագրում, այն արտահայտում է ճանաչողության, մտտեցման կերպ կամ սկզբունք, արտահայտում է շարժում կամ նպատակ, արձանագրում է տարափոփոխ իրավիճակում վարքագծի բնույթ, որին համապատասխան դրսեւորվում են սահմանադրական մշակույթի որակները:

Արդի սահմանադրական մշակույթի համակարգային վերլուծության համար անկյունաքարային նշանակություն ունեն պատկերացումներն առաջին հերթին սահմանադրական առանցքային հասկացությունների մասին: Անդրադառնաք դրանցից մի քանիսին:

«Ժողովրդավարություն» սահմանադրական հասկացությունը՝ որպես հասարակական հարաբերությունների բնութագրիչ եւ որպես կառավարման կերպ, ընկալվում եւ մեկնաբանվում է միանգամայն տարբեր ձեւերով ու հաճախ՝ ընդհուպ փոխակերպվում է պարզ ամբոխավարության ու նաեւ՝ ամենաթողության (խնդիրը ոչ միայն էության ըմբռնումը, այլեւ չափի ընկալումն է):

Ժողովրդավարությունը քաղաքակրթության մեծագույն նվաճումներից է, վկայում է այնպիսի քաղաքացիական հասարակության ձեւավորման մասին, որտեղ ամեն մի անհատ՝ որպես բանական էակ, որպես սոցիալական սուբյեկտ, որպես հասարակության իրավահա-

²⁶³ Այստեղ նկատի չունենք ավանդույթները կամ վարքագծի բարոյական նորմերը: Խոսքը վերաբերում է իրավահարաբերությունների հարթությանը:

վասար անդամ, արժեք է ստանում²⁶⁴, որտեղ հարաբերությունները հստակեցված ու կանոնակարգված են՝ սահմանված են կարգն ու այն պահպանելու կանոնները, մարդու քաղաքացիական ազատության ու ինքնավարության շրջանակները:

Այդպիսին է դառնում այն պետությունը, որի պետական կառավարման ձեւը, կառուցվածքը եւ գործունեությունը համապատասխանում են ժողովրդի կամքին, ինչպես նաեւ մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների հանրաճանաչ նորմերին, որտեղ իշխանության կրողը, իրականացնողն ու վերահսկողը ժողովուրդն է՝ ի դեմս նրա հավաքական կամքի ու ինքնակառավարման իրավունքի, որն իրականացվում է հասարակության անդամների իրավահավասարության սկզբունքի հիման վրա: Դա պետք է ամրագրված լինի Սահմանադրությամբ եւ երաշխավորված օրենքներով ու անհրաժեշտ կառուցակարգային համակարգերով:

Առանցքային նշանակություն ունի այն, որ ժողովրդի կողմից իշխանությունն իրականացվում է անընդհատության սկզբունքի հիման վրա, անմիջական ժողովրդավարության հիման վրա ու ներկայացուցչական մարմինների գործունեության վերահսկողության ու հետադարձ կապի պայմաններում:

Այդպիսի պետության հիմնական բնութագրիչներն են. անմիջական ժողովրդավարության երաշխավորումը, իրական ներկայացուցչական ժողովրդավարությունը (ժողովրդի կողմից ընտրովի ինստիտուտների միջոցով իշխանության իրականացման օրինականությունը, վերահսկելիությունն ու հետադարձ կապի ապահով-

²⁶⁴ Տեղին է հիշել, որ ներկայումս առաջադիմական ժողովրդավարական հասարակական հարաբերություններ ունեցող ու քաղաքակրթության մեծագույն նվաճումների հասած առանձին երկրներում, մասնավորապես, Ճապոնիայում, մինչեւ 16 - 17 – րդ դարերը մարդկային իրավունքներից օգտվում կամ սոցիալական արժեք էին միայն որոշ ընտրյալներ: Մարդկանց զգալի մասը նույնիսկ անուն ունենալու իրավունք չուներ, այլ կոչվում, ճանաչվում էր իր զբաղմունքի բնույթով, իր մասնագիտությամբ: Չնայած դրան, դեռեւս Պլատոնը գտնում էր, որ **պետությունը չպետք է կառուցվի այնպես, որ պետզի միայն ոմանք երջանիկ լինեն, այլ այնպես, որ բոլորը միասին երջանիկ լինեն** (Платон. Государство /Собр. соч., т. 3, М. 1994, էջ 189): Բացառիկ կարեւորություն ունի այն հանգամանքը, որ Պլատոնի եւ, առավել եւս, հետագայում Արիստոտելի կողմից պետությունը չէր տարանջատվում հասարակությունից, այլ դիտարկվում էր անբաժանելի ամբողջության մեջ:

ման իրական վիճակը), ժողովրդի կողմից իշխանության իրականացման անընդհատության երաշխավորվածությունը, ինչպես նաև մարդու (որպես սոցիալական արժեք) և քաղաքացու (որպես տվյալ հասարակական համակարգի իրավասուբյեկտ) իրավունքների երաշխավորված պաշտպանվածությունը: Ասվածից հետևում է, որ ժողովրդավարական կարող է համարվել այն պետությունը, որտեղ հասարակությունը կառուցված է կամ կառուցվում է իրավական օրենքներով կարգավորված փոխհարաբերությունների վրա, երաշխավորված են անհատի բնականոն ինքնաարտահայտման ու ինքնավարության շրջանակները և, առանց որեւէ ընտրանքի, յուրաքանչյուր անհատ՝ որպես սոցիալական սուբյեկտ, հասարակական արժեք է, ուր մարդկանց, նրանց խմբերի և ողջ հասարակության պետականորեն ներդաշնակված շահերն են ընկած հասարակական առաջընթացի հիմքում: Տվյալ հասարակության մեջ մարդու իրավունքներն ու ազատությունները ենթակա են սահմանափակման միայն այնտեղ ու այն չափով, որտեղ և որչափով դա անհրաժեշտ է այլոց իրավունքների ու ազատությունների երաշխավորման համար:

Նման հասարակական համակարգն անխուսափելիորեն պետք է լինի իրավական և ժողովրդավարական արժեքներն իրավական պաշտպանվածության երաշխիքներ պետք է ունենան:

Իրավական է բնորոշվում այն պետությունը, որի ամբողջ գործունեությունը խարսխված է իրավունքի վրա, և որի գլխավոր նպատակը մարդու և քաղաքացու իրավունքների ապահովումն ու երաշխավորված պաշտպանությունն է:

Ընդհանրապես «**իրավական պետություն**» հասկացությունը 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի ծնունդ է: Սակայն գաղափարը գոյություն է ունեցել շատ ավելի վաղ²⁶⁵:

Իրավական պետությունն ամենից առաջ ենթադրում է հասարակական հարաբերությունների որոշակի իրավական կարգավորվածություն և դրանց գործադրման համակարգերի հուսալի ու անխափան աշխատանք: Միայն այդ պարագայում իրավունքի սուբյեկտները կարող են լինել ազատ: Միայն օբյեկտիվ հասարակա-

²⁶⁵ Սահմանադրորեն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը որդեգրած գրեթե բոլոր երկրներում ուղղակի կամ անուղղակի ձևով Հիմնական օրենքը սահմանում է պետության իրավական բնույթը:

կան հարաբերությունների ճանաչումը, իրավական կարգավորումը եւ դրա իմացությունն է մարդուն ազատ գործելու հնարավորություն ու նախադրյալներ ընձեռում: **Իրավական պետության հիմնական սկզբունքն էլ հենց մարդկանց սուբյեկտիվ իրավունքների ու դրանց պետականորեն իրացման օբյեկտիվ նախադրյալների ներդաշնակումն է՝ մարդկանց ազատությունների ու իշխանության սահմանների հստակեցումը:**

Իրավական պետության բնորոշ գծերից է նաեւ այն, որ պետությունը պատասխանատու պետք է լինի պաշտոնատար անձանց գործողությունների համար, պետք է ստեղծվի պատասխանատվության ու նաեւ իրավունքների իրականացման վերահսկման երաշխավորված համակարգ:

Պետության թե՛ ժողովրդավարական, թե՛ իրավական եւ թե՛ սոցիալական գործառույթի բնութագրումը չի կարող պարփակվել որեւէ նորմի շրջանակներում կամ դիտարկվել որպես ինքնուրույն, անջատ ձեւով արտահայտվող որակ: Այդ որակները, որպես հիմնարար ու սկզբունքային, պետք է ներծծված լինեն հասարակական հարաբերությունների կարգավորման յուրաքանչյուր բջջի մեջ, արտացոլվեն պետության կողմից ձեռնարկված ամեն մի քայլում, դառնան հասարակության յուրաքանչյուր անդամի ապրելակերպի անքակտելի բաղադրիչը: Դա պետք է դառնա ազգային - պետական մտածելակերպ ու գործելակերպ: Այլ կերպ՝ դրանք իրենց արտացոլումը պետք է գտնեն նաեւ Սահմանադրության յուրաքանչյուր նորմի եւ դրա գործադրման մեխանիզմների մեջ:

Իրավական պետության համար որպես պարտադիր բնութագրիչներ են. իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը, կառավարման օրինականությունն ու իրավունքի գերակայությունը, դատարանի անկախությունը, մարդու իրավունքների պաշտպանության երաշխավորվածությունը, սահմանադրական վերահսկողության ամբողջական եւ գործուն համակարգի առկայությունը եւ այլն:

Սահմանադրորեն իրավական պետության հռչակումն ամենից առաջ պետության բնույթի եւ հասարակական հարաբերությունների յուրահատկության վկայությունն է, դա պետության կազմակերպական առանձնահատկության արտահայտությունն է, հաստատումն

այն բանի, որ տվյալ հասարակության մեջ փոխհարաբերությունների հիմքում դրվում են օրենքն ու իրավունքը: Նման պետության համար խնդիր է առաջադրվում՝ այդ սկզբունքին ծառայեցնել պետության ու հասարակության սոցիալական վարքագիծը, անհատի համար հստակեցնել քաղաքացիական հասարակության վարքի կանոններն ու իր ազատության շրջանակները, երաշխավորել այդ ազատությունը:

Անվիճելի է, որ ցանկացած երկրի Սահմանադրություն ամենից առաջ դիտվում է որպես համակեցության կանոնների շուրջ ձեռք բերված հասարակական համաձայնություն: Այն ցանկության, մոտեցման ձևի ու եղանակի, նպատակների, սկզբունքների, որոշակի ընդհանրացումների հաստատագրման ամբողջություն է: Սահմանադրությունը յուրաքանչյուր երկրի համար դառնում է օրինաստեղծման աղբյուր, այնտեղ ամրագրված սկզբունքները սոսկ փաստի արձանագրում չեն, այլ՝ գործելակերպի հիմնական կանոններ: Այդ կանոնները վերաբերում են ոչ միայն իշխանություններին, այլ նաև պետությունը ներկայացնող յուրաքանչյուր իրավասուբյեկտի՝ կլիմի անհատ, քաղաքացի, թե դրանց տարաբնույթ համակցություն, դառնալով նրանց հասարակական դիմագիծը, ինքնաարտահայտման կերպն ու բովանդակությունը:

Իրավական պետության մեջ սոցիալական հանրությունն ստանում է որոշակի կանոնակարգված դիմագիծ, որը բնորոշվում է որպես հասարակական կարգ, իսկ անհատը դառնում է իրավունքի սուբյեկտ, նրա հարաբերությունները հասարակության մյուս անդամների հետ որոշակիորեն կարգավորված իրավահարաբերությունների բնույթ են ստանում: Նման հասարակությունն անխուսափելիորեն պետք է ունենա նաև սահմանադրորեն կարգավորված իրավահարաբերությունների վերահսկման անընդհատությունն ապահովող ինստիտուցիոնալ համակարգ, որը հասարակական օրգանիզմի յուրատեսակ իմունոհամակարգի դեր է կատարում:

«**Սոցիալական պետություն**» հասկացությունը XIX դարի վերջի եւ XX դարի սկզբի ծնունդ է: Այն վկայում է պետության նոր որակի առաջացման մասին, համաձայն որի՝ պետությունը պարտավորություն է ստանձնում հոգ տանել իր քաղաքացիների սոցիալական

պաշտպանվածության համար: Նման որակը տիպական չէ ծայրահեղ լիբերալ իրավական պետությանը, որում առաջնայնությունը տրվում է արտադրությանն ու շուկայական ազատությանը: Սակայն ասվածից չի բխում, որ լիբերալ իրավական պետության մեջ սոցիալական հարցեր չեն առաջադրվում ու պետականորեն լուծվում: Մխալ է նման հակաթեզի առաջադրումը: Հարցն այն է, որ պետության սոցիալական բնույթի սահմանադրորեն ամրագրումը հասարակական ողջ համակարգին ծրագրավորված գործելակերպի այլ բովանդակություն է հաղորդում²⁶⁶:

Շատ կարելու է **սոցիալական** եզրույթի բովանդակային հստակ մեկնաբանումը: Այն օգտագործվում է միանգամայն տարբեր հասկացությունների հետ զուգորդված (սոցիալական միջավայր, սոցիալական կառուցվածք, սոցիալական հոգեբանություն, սոցիալական խնդիր եւ այլն): Գործնական հարաբերություններում մի դեպքում այն ընկալվում է որպես մարդկանց սպասարկմանն առնչվող որոշակի ոլորտ (կրթություն, առողջապահություն, գիտություն, սպորտ, մշակույթ եւ այլն), մյուս դեպքում՝ նկատի է առնվում որպես հասարակական խումբ կամ շերտ, երրորդ դեպքում՝ ընդհանրացնելով հասարակականի հետ, նկատի է առնվում որպես մարդկային հանրություն՝ միավորված ընդհանուր շահերով, արժեհամակարգերով, կեցության կանոններով, ընդհանուր նպատակներով եւ այլն:

Բոլոր դեպքերում ընդհանուրն այն է, որ շեշտվում են անհատ - խումբ - հասարակություն փոխհարաբերությունների տարբեր կողմերն ու շահերի խաչաձեւման տարբեր հարթությունները, ընդգծվում է այն հանգամանքը, որ խոսքը վերաբերում է բանական սուբյեկտներից կազմված հասարակության ու նրա անդամ-

²⁶⁶ Չպետք է մոռանալ այն հանգամանքը, որ երկրորդ աշխարհամարտից հետո ողջ մարդկությունն ապրեց խորքային սոցիալական վերափոխումների շրջան՝ պայմանավորված ոչ միայն ֆաշիզմի տապալումով, այլեւ գաղութատիրության փլուզմամբ եւ մարդկային համակեցության մասին նոր արժեհամակարգերի ձեւավորմամբ: Նման պարագաներում «սոցիալական պետություն» հասկացությունը պետք է դիտարկել ոչ թե լոկ որպես որոշ սոցիալական խնդիրների լուծման պարզ պարտականությունների ստանձնում, այլ որպես հասարակական հարաբերությունների էապես նոր որակ, որի առանցքը մարդկային արժանապատվության ճանաչումն է եւ դրա նկատմամբ սահմանադրորեն պետական նոր մոտեցման ապահովումը:

ների միջև եղած հարաբերություններին²⁶⁷:

Ելնելով **սոցիալական** եզրույթի տարբեր մեկնաբանություններից, շատ հաճախ **սոցիալական պետություն** ասելով հասկացվում է այն պետությունը, որը պատասխանատվություն է ստանձնում հասարակության գոյության համար (տվյալ դեպքում սոցիալականը նկատի է առնվում որպես հասարակական)²⁶⁸: Սակայն հիմնական մոտեցումն այն է, որ սոցիալական պետություն ասելով պետք է հասկանալ մարդկանց համակեցության մի այնպիսի համակարգ, որտեղ առկա են փոխհամաձայնեցված մարդկային հարաբերություններ, որտեղ փոխադարձ պարտավորություն է ստանձնվում օգնել կարիքավորին, ներագդել հասարակական տնտեսական բարիքների վերաբաշխման վրա՝ արդարության այնպիսի սկզբունքներից ելնելով, որպեսզի յուրաքանչյուրի համար արժանապատիվ ապրելու երաշխիքներ ստեղծվեն: Մեր կարծիքով, սահմանադրորեն իրեն սոցիալական կարող է հռչակել այն պետությունը, որը ոչ միայն ստանձնում է պարտավորություն ներդաշնակել անհատի, նրանց խմբերի ու ընդհանուր հասարակական շահերը, բացառել դրանց հակադրումն ու ենթակայումը մեկը մյուսին, այլև միջոցներ է ձեռնարկում հետետողականորեն այն իրականացնելու համար:

Պետության սոցիալական գործառույթի ճանաչումը եւ սահմանադրորեն ամրագրումն առավել բնորոշ է ազգակենտրոն պետական համակարգերին եւ, թերեւս, նրա ներդաշնակ զարգացման, անցյալի, ներկայի ու ապագայի օրգանական միասնությունն ապահովելու գլխավոր երաշխիքն է: Դա պայմանավորված է տեսակի, մարդկային ինքնության պահպանության ու ներդաշնակ

²⁶⁷ Ի դեպ, կա նաեւ կարծիք, որ հասարակություն կամ սոցիալական հանրություն կարելի է համարել նաեւ տերմիտների ու, առավել եւս, մեղուների ընտանիքները, որտեղ առկա է նաեւ աշխատանքի որոշակի բաժանում, իսկ կենսաբանական տարրը՝ միջատը, հանրությունից դուրս դադարում է վերարտադրական գործառույթ կատարելուց եւ գոյություն ունենալուց: Այսինքն, տեսակի պահպանության եւ բարելավված որակներով ներդաշնակ վերարտադրության բնության անբախտելի կանոնը գործում է հանրության համար:

²⁶⁸ Հրատարակիչներ Յ. Изензее, П. Кирххоф, Государственное право Германии., С.1, М.,1994, էջ 64:

գարգացման բնական օրինաչափությամբ²⁶⁹:

Հասարակական հումանիզմի դրսևորման եւ քաղաքակրթության առաջընթացի մեծագույն ձեռքբերում է սոցիալական պետության կազմավորումը, ուր հասարակության անդամները, սահմանադրական համաձայնության հիման վրա, որոշում են իրենց առաջընթացի նպատակը, հստակեցնում **նպատակ - նախադրյալ - միջոց** հարաբերակցությունը: Մա հասարակական համակեցության ավելի բարձր որակ է: Սոցիալական կարող է լինել այն պետությունը, ուր մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամբողջական եւ գործուն համակարգ է ստեղծվել, ուր պետության կառավարման ամբողջ համակարգը խարսխված է հասարակական շահերի ներդաշնակման սկզբունքի վրա:

Սոցիալական պետությունն անհատի եւ հասարակության, անհատի եւ պետության փոխհարաբերությունների ներդաշնակման ավելի բարձր աստիճան է ենթադրում: Այն պետք է ճանաչվի, ընկալվի ու պաշտպանվի հասարակության յուրաքանչյուր բջջի կողմից, վարքագծի պարտադիր կանոն պետք է դառնա, որ այն ամենը, ինչ անօրինական է՝ արդար չէ ու անհարիր է սոցիալական պետությանը:

Միջազգային տարբեր քննարկումների ժամանակ հնչում են տեսակետներ, թե սոցիալական պետության սկզբունքը ներքին հակասության մեջ է գտնվում իրավական եւ ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքների հետ: Մենք՝ մերժելով նման մեկնաբանությունները, գտնում ենք, որ խնդիրը «սոցիալական պետություն» հասկացության ընկալմանն ու մեկնաբանմանն է վերաբերում: Սահմանադրական տվյալ սկզբունքը ենթադրում է ոչ թե սոցիալիստական հավասարության երաշխավորում, այլ հասարակության արտադրական հարաբերությունների սոցիալական կողմնորոշվածություն, ոչ թե «արտադրություն՝ հանուն արտադրության», այլ «արտադրություն՝ հանուն հասարակական բարեկեցության» սկզբունքի արմատավորում: Դա ենթադրում է մասն, որ շուկայական տնտեսական հարաբերությունները ոչ թե նպատակ են, այլ միջոց՝

²⁶⁹ Գարկ է նշել, որ նույնիսկ միջնադարում հայ հասարակական մտքի կողմից էապես կարեւորվել է հասարակությանը վերաբերող նպատակների իրականացման գործուն «Ազգային ավանդական կարգ ու կանոնով» առաջնորդվելու անհրաժեշտությունը (մասնավորապես տե՛ս. «ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՅԱՅՈՑ», հ. Ա., Երեւան, 1964, էջ XV):

արդյունավետ տնտեսվարելու եւ ցանկալի սոցիալական հետեւանք-ներ երաշխավորելու համար: Ուստի մենք պատահական չենք համարում, որ Եվրոպական միության Սահմանադրության նախագծի 3-րդ հոդվածում ամրագրելով Միության նպատակները, շեշտվում էր նաեւ, որ «Միությունը պետք է հիմնվի Եվրոպայի հավասարակշռված տնտեսական աճի, կայուն զարգացման, **սոցիալական շուկայական տնտեսության**, բարձր մրցակցության եւ լրիվ աշխատանքային ու սոցիալական առաջընթացի եւ շրջակա միջավայրի պահպանության ու որակի բարձրացման բարձր մակարդակի վրա» (ընդգծումը մերն է - Գ.Հ.): **Սոցիալական շուկայական տնտեսությունն է սոցիալական պետության հիմքը: Սա է եվրոպական զարգացումների ներկայիս ընդհանրացումը:** Այս առումով 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրական բարեփոխումները նոր ազդակ հանդիսացան Հայաստանի Հանրապետությունում սոցիալական պետության կայացման համար: Առանձնապես կարեւորվում է Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված 11-րդ հոդվածը, համաձայն որի՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է...»:

Իրավամբ քաղաքացիական է համարվում այն հասարակությունը, որտեղ անհատն իր շահերով ոչ թե հակադրվում է հասարակությանը, այլ ինքնադրսեւորման առավելագույն հնարավորություն է ստանում՝ անհատի ու հասարակության շահերի ներդաշնակման պարագայում²⁷⁰:

Հաճախ պետության սոցիալական գործառույթը հակադրվում է հասարակության անդամների ազատության ապահովման գործառույթին, որը, մեր կարծիքով, արդարացված չէ: Ժողովրդավարական ազատությունը ենթադրում է նաեւ հասարակության անդամի երաշխավորված սոցիալական պաշտպանվածություն, որը մարդկային հասարակության հիմնական բնութագրիչներից է: Քաղաքացիական ազատությունը բնական ազատությունից տարբերվում է հենց նրանով, որ հասարակության մեջ անհատի գործունեությունը չպետք է հակադրվի հասարակության մյուս անդամների ազատության իրա-

270 Семигин Г. Ю. Социальное партнерство в современном мире. М., Мысль, 1996, էջ 35:

վունքին, եւ քաղաքացիական հասարակությունն իր անդամների ազատ ինքնադրսետորման ներդաշնակ համակարգ պետք է ունենա: Իսկ վերջինս անհնարին է առանց պետության կողմից հասարակության անդամների երաշխավորված սոցիալական պաշտպանվածության ապահովման: Դա իր հերթին նշանակում է, որ հասարակության մեջ անհատը չի կարող իրեն մեկուսացված տեսնել, նրա գոյության բնականոն վիճակը փոխկապվածությունն է, փոխգործակցությունը ու նաեւ՝ պատասխանատվությունը հասարակության ներկայի ու ապագայի հանդեպ: Դրա հետ մեկտեղ, իրավացի է իրավագիտության դոկտոր Ե. Ա. Լուկաշովան, երբ շեշտում է, որ տեսական մակարդակով նույնպես այսօր վակուում է առաջացել՝ բացակայում են հետխորհրդային հասարակության մեջ քաղաքացու եւ պետության փոխհարաբերությունների հիմնադրույթները²⁷¹: Նման իրավիճակը սովորաբար հանգեցնում է նրան, որ պետության համար չի հստակեցվում հասարակության անդամի նկատմամբ ոչ միայն վաղվա, այլեւ՝ այսօրվա պարտավորությունները, իսկ քաղաքացու համար, իր հերթին, պարզ չեն իր ակնկալիքների պետականորեն բավարարման հնարավորություններն ու պահանջմունքի կամ սպասելիքների հիմնավորվածությունն ու արդարացիությունը: Նման իրավիճակը սոցիալական անբավարարվածության մեծ ու վտանգավոր խթան է: Ուստի անցման շրջանի պետական քաղաքականության առաջնահերթությունների շարքում բացառիկ կարևոր տեղ պետք է հատկացվի քաղաքացի եւ պետություն փոխհարաբերությունների հստակ ու բոլորի համար մատչելի համակարգի մշակմանն ու գործադրմանը: Այս ամենի մեջ առանցքայինն այն է, որ սոցիալական պետության համար բոլոր լուծումների կենտրոնում մարդն է՝ պետականորեն ճանաչված, սահմանադրորեն ամրագրված, պաշտպանության անհրաժեշտ երաշխիքներ ունեցող իր իրավունքներով ու ազատություններով, ինչպես նաեւ հասարակության հանդեպ ունեցած իր պարտավորություններով:

Մեր կարծիքով, սոցիալական պետության հիմնական բնութագրիչներից անհրաժեշտ է առանձնացնել՝

ա) մարդկանց սոցիալական պաշտպանվածության եւ բարեկե-

271 Ст'ю Социальное государство и защита прав человека. М., 1994, էջ 9:

ցության բարձրացման օրենսդրական երաշխիքների ապահովումը,
բ) սոցիալական պաշտպանվածության պետական եւ ոչ պետական անհրաժեշտ ինստիտուցիոնալ համակարգերի ստեղծումն ու դրանց հստակ աշխատանքի ապահովումը (մասնավորապես, նկատի է առնվում նաեւ սոցիալական ապահովության համակարգը, որն առաջին հերթին առնչվում է խեղված ճակատագրերին՝ հաշմանդամություն, հիվանդություն, կերակրողի կորուստ, գործազրկություն, անապահով ծերություն եւ այլն, ինչպես նաեւ սոցիալական ապահովագրության գործուն համակարգի առկայությունը, որը կարգավորում է սոցիալական ռիսկը),

գ) կենսանվագագույնի երաշխավորումը,

դ) անհատի ազատ զարգացման, դավանանքի ու նախասիրությունների անկաշկանդ իրացման, ինչպես նաեւ բանական ինքնադրսեւորման երաշխիքների ապահովումը,

ե) այդ սկզբունքի իրականացման անշրջելիության երաշխավորումը,

զ) մարդու իրավունքների եւ ազատությունների արդարադատական ապահովումը,

է) շուկայական տնտեսական հարաբերությունների սոցիալական բնույթի երաշխավորումը եւ այլն:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ անցման շրջանում բացառիկ կարեւորություն է ստանում մարդկանց տնտեսական իրավունքների պաշտպանության խնդիրը՝ որպես սոցիալական պետության կարեւոր գործառույթ: Բանն այն է, որ անցումը շուկայական հարաբերություններին, երբ լիարժեք ձեւավորված չեն շուկայական ենթակառուցվածքները, չկա սոցիալական պաշտպանվածության հստակ համակարգ, ապա շատ ոլորտներում շարունակվում է մենաշնորհային թելադրանքը, տեղի են ունենում լուրջ խորքային կառուցվածքային վերափոխումներ, զգալի է հոգեբանական ու սովորույթի իներցիան եւ այլն, ինչպես նաեւ ոչ լիարժեք շուկայական հարաբերություններում բազմապատկվում են մարդկանց սոցիալական եւ տնտեսական իրավունքների ռոնահարման հնարավորությունները: Առավել մտահոգիչն աշխատողների սոցիալական պաշտպանվածության համակարգերի բացակայությունն է, որի պայմաններում աշխատող-գործատու հարաբերությունները հաճախ ավատատիրա-

կան հարաբերությունների բնույթ են ստանում: Ուստի պետությունը պարտավոր է իր ակտիվ մասնակցությունը բերել անցումային խնդիրների լուծմանը եւ ստեղծել երաշխիքների անհրաժեշտ համակարգ՝ ապահովելու համար մարդկանց իրավունքների պաշտպանությունը, հասնելու նրան, որ մարդիկ հավասար իրավունքներով դառնան նոր տնտեսական հարաբերությունների կրողը, պայմանագրային իրավահարաբերությունները կենսունակություն ստանան:

Անցման շրջանում ստեղծվում է նաեւ սոցիալ-հոգեբանական մի այնպիսի վիճակ, երբ պետության կողմից թույլատրված ցանկացած իրավասուբյեկտի գործունեություն նույնացվում է պետականին եւ նրանց նկատմամբ վերաբերմունքը դառնում է վերաբերմունք պետության նկատմամբ՝ իր բոլոր դրսեւորումներով: Սա վկայությունն է նաեւ այն բանի, որ պետությունները բավարար ուշադրություն չեն դարձնում անցումային հարաբերությունների կառավարելիությանը եւ չի ստեղծվում մարդկանց իրավունքների պաշտպանության եւ իրավասուբյեկտների գործունեության վերահսկման անհրաժեշտ համակարգ: Դժբախտությունն այն է, որ նման երեւոյթները ժամանակին չկանխելու դեպքում անխուսափելի են դառնում հասարակական մետաստազները: Պետության համար ավելի վտանգավոր են դառնում ոչ այնքան անցյալից եկող բացերը, որոնք իներցիոն բնույթ ունեն եւ աստիճանաբար մարում են, որքան նոր իրականության մեջ առաջացած եւ պարարտ միջավայր գտած անօրինականությունները, որոնք շատ արագ իռացիոնալ վերարտադրության հուն են մտնում, ու եթե հնարավոր է բուժել, ապա միայն վիրահատական միջամտությամբ: Ցավոք, այս հանգամանքը ժամանակին թերագնահատեցին շատ նորանկախ երկրներ, այդ թվում՝ Հայաստանը: Ելքն այն է, որ յուրաքանչյուր իրավիճակում պետությունն առաջին հերթին հոգ տանի հասարակության իմունոդեֆիցիտը կանխելու մասին, որի գլխավոր նախապայմանը կառավարման մեխանիզմների կայացմանը համակարգային մոտեցում ցուցաբերելն է:

Սոցիալական պետության հիմնական բնութագրիչներին անդրադառնալիս անհրաժեշտ է, թերեւս, առանձնացնել նաեւ սոցիալական հավասարության բնութագրիչը, որը վերջին երկու դարերի հեղափոխական պայքարի առանցքն է հանդիսացել: Այս որակն ընկալվել

ու մեկնաբանվել է տրամագծորեն տարբեր դիրքերից: Հաճախ սոցիալական հավասարության սկզբունքի պարզունակ ընկալումը եւ այն որպես սոցիալական արդարության գերագույն չափանիշ ներկայացնելը հանգեցնում է հասարակական հարաբերությունների բնույթի եւ զարգացման օրինաչափությունների տարաբնույթ գոեհիկ ու աղճատված մեկնաբանությունների: Անառարկելի ճշմարտություն կա այն բանում, որ սոցիալական հավասարություն ապահովելու համար սոցիալիստական պետությունը պայքարում է հարստության դեմ (ըստ 70-ամյա փորձի), սոցիալական պետությունը՝ աղքատության: Սոցիալական պետությունը չի կարող բացառել իր անդամների հավասարության սկզբունքը, սակայն այն ոչ թե պետք է բացարձականացվի, այլ դիտվի որպես հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունք, որի իրացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը պետության պարտավորությունն է: Այս սկզբունքը ենթադրում է նաեւ, որ պետության պարտքն է երաշխավորել, որպեսզի հասարակության առանձին անդամներ, սոցիալական կամ այլ խմբեր կողմնակալ վերաբերմունքի չարժանանան: Փաստորեն, սոցիալական պետությունը, մի կողմից, ապահովելով սոցիալական պաշտպանվածության որոշակի միջավայր, դնելով, այսպես կոչված, ներքին չափաճողը, մյուս կողմից՝ անհրաժեշտ միջավայր պետք է ստեղծի, որպեսզի հավասար իրավունքներ ունեցող ամեն մի անհատ իր բանական կարողություններին ու օրինական հնարավորություններին համապատասխան ինքնադրսեւորման դաշտ ստանա: Հենց դա է ապահովում ազատության եւ հավասարության ներդաշնակումը:

Եռամիասնության մեջ ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետությունն ամբողջական ձեւով **ներդաշնակում է անհատի կենսագոյի հիմնական սկզբունքները՝ ազատությունն ու հավասարությունը:** Այս որակներից յուրաքանչյուրի առանձնացումը եւ միակողմանի բացարձականացումը կամ հակադրումը մեթոդաբանական կոպիտ սխալ է եւ կարող է հանգեցնել (վկան՝ պատմության դառը փորձը) ծայրահեղ, աղճատված եւ, որպես կանոն, ոչ ճիշտ եզրահանգումների:

Սոցիալական պետությունը, ստանձնելով պատասխանատվություն անհատի սոցիալական պաշտպանվածության հարցում, առա-

ջին հերթին պետք է մտահոգված լինի բանական էակի ինքնաճանաչման ու ինքնադրսեւորման նախադրյալների ապահովմամբ: Սակայն ամենաբարդ խնդիրն այն է, թե որտեղ պետք է սահմանափակվի պետության միջամտությունը հասարակական-տնտեսական հարաբերություններին, որպեսզի, մի կողմից, ապահովվի պետության սոցիալական գործառույթի երաշխավորված իրականացումը, մյուս կողմից՝ այն չխոչընդոտի շուկայական հարաբերությունների բնականոն զարգացմանը: Այստեղ մեկընդմիջտ արված լուծումներ փնտրելն անպտուղ է: Յուրաքանչյուր երկրում եւ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակի համակողմանի զնահատման հիման վրա պետք է ապահովվի այդ հաշվեկշռվածությունը: Դրանում է հենց կառավարման արվեստը: Դա է կառավարության գործունեության զնահատման հիմնական չափանիշը: Սակայն ընդհանուրն այն է, որ սոցիալական պետությունը հասարակական վերարտադրության համակարգում իր ակտիվ ու ծրագրավորված մասնակցությունը պետք է ունենա: Դա վերաբերում է թե՛ արտադրությանը եւ թե՛ շրջանառությանն ու բաշխմանը: Այս հանգամանքը հատուկ կարեւորվեց նաեւ Գերմանիայի համար, երբ այս երկիրն իրեն հռչակեց սոցիալական, իրավական պետություն: Ինչպես նշում է Հեսսե Կոնրադը՝ սոցիալական պետությունը ոչ միայն հատուկ ծրագրավորված քաղաքականություն է իրականացնում առանձին սոցիալական խնդիրների լուծման բնագավառում, այլեւ նման պետությունն ընդհանրապես կառավարող, արտադրող եւ բաշխող պետություն է²⁷² :

Ինչ վերաբերում է անցման շրջանին, հատկապես՝ ճգնաժամային կառավարման իրավիճակներին, ապա սոցիալական պաշտպանվածության խնդիրը պետության համար ստանում է հատուկ առաջնահերթություն: Ավելին, եվրոպական երկրների փորձը վկայում է, որ պետության սոցիալական գործառույթը հատկապես ընդգծվեց եւ սահմանադրորեն ամրագրվեց համակարգային վերափոխումների ընթացքում, քանզի նման վերափոխումների գերագույն նպատակը մարդն է, նրա կարիքների բավարարումն ու, ինչպես պատկերավոր նշվում է՝ «...հասարակության մարդկայնացումը»: Հետեւաբար, անցման շրջանում պետության հիմնական խնդիրն է շուկայական հա-

272 Хессе Конрад. Основы конституционного права ФРГ. М., 1981. էջեր 111-112:

րաբերություններին անցնելու թափը հավասարակշռել սոցիալական պաշտպանվածության հուսալի համակարգով: Հակառակ պարագայում կադճատվի, ընդհուպ՝ կվտանգվի տնտեսական ամեն մի բարեփոխում, առավել եւս, եթե վերջինիս նպատակն առողջ մրցակցային հիմքի վրա գործող շուկայական տնտեսության ստեղծումն է:

Այս առումով նույնպես հետաքրքիր է Գերմանիայի փորձի ուսումնասիրումը: Սահմանադրորեն առաջինն ամրագրելով, որ Գերմանիան ժողովրդավարական եւ **սոցիալական** դաշնային պետություն է (հոդվ. 20), որպես այդպիսին իր պետականության զարգացման առաջին փուլի խնդիրը համարեց յուրաքանչյուր քաղաքացու կենսանվագագույնի երաշխավորվածությունը: Ընդ որում, ենթադրվում է, որ յուրաքանչյուր չափահաս անձ պարտավոր է աշխատել եւ հոգալ իր կարիքները: Եթե դա հնարավոր չէ նրա անգործունակ լինելու պատճառով, ապա պետությունը պետք է հոգածության իր բաժինն ստանձնի: Միաժամանակ պետությունը պետք է նախադրյալներ ապահովի անհատի ինքնադրսետրման, միմյանց օգնելու, միավորվելու եւ համատեղ գործելու համար:

Աշխարհի դեռ ոչ մի պետություն չափ ու կշեռք չի դրել ասելու՝ թե ինքն այս կամ այն չափով սոցիալական է: Այդ ճանապարհով գնում են կամ չեն գնում, պետականորեն այդպիսի գործառույթ ստանձնում են կամ չեն ստանձնում: Եթե ստանձնում են, ապա պետության խնդիրն է դառնում պետականորեն ապահովել, մի կողմից՝ սոցիալական պաշտպանվածության երաշխավորված համակարգի ստեղծումը, մյուս կողմից՝ բանական էակի, որպես սոցիալական սուբյեկտի, բնականոն ինքնադրսետրման միջավայրի ստեղծումը: Բնականաբար, դա պահանջում է յուրահատուկ մոտեցում թե՛ արտադրական եւ թե՛ բաշխման հարաբերությունների նկատմամբ:

Եթե պետությունն իրեն չի համարում սոցիալական, ապա նշված խնդիրները հասարակությունը փորձում է լուծել այլ ձեւերով ու ճանապարհներով: Հիմնականում դրանք դառնում են ինքնակարգավորվող հարաբերությունների հետեւանք:

Այլ կերպ, հիմնականը, գլխավորն այն է, որ հասարակական հարաբերությունների բնույթի որոշարկումը՝ որպես սահմանադրական նորմ, ամենից առաջ բնութագրում է այդ հարաբերությունների որակական առանձնահատկությունները, բացահայտում դրանց էությունը

նը, զարգացման ներքին տրամաբանությունը: Եվ, գլխավորը՝ իրեն սոցիալական համարող պետությունը չի կարող ծրագրավորված մոտեցում չցուցաբերել հասարակական զարգացմանը, չի կարող ինքնակառավարվող հարաբերությունների հետեւանքները գրանցողի պասիվ դերն ստանձնել՝ ամեն ինչ թողնելով ամենագոր շուկայի տնօրինությանը²⁷³:

Սոցիալական պետության կայացումը ենթադրում է նաեւ խելամիտ սպասելիքների ու պահանջմունքների խնդրի առաջադրում: Հասարակության անդամների սպասելիքների իմացությունը, ռացիոնալ սպասելիքների ձեւավորումը, դրան համապատասխան՝ համակեցության նոր արժեհամակարգերի անհրաժեշտությունը ոչ միայն համակարգված ու ծրագրավորված տնտեսական, այլև քաղաքական ու, առավել եւս՝ բարոյական նոր մոտեցումներ են պահանջում: Բանն այն է, որ անցման շրջանին բնորոշ այնպիսի վիճակներ, ինչպիսիք են խաթարված վերարտադրական համակարգը, արմատական վերակազմակերպման անհրաժեշտություն ունեցող եւ սեփական կառուցվածքային հիմք չունեցող տնտեսությունը, անորոշության գործոնը, աղճատված հասարակական գիտակցությունը, փլուզված արժեհամակարգերը եւ այլն, թելադրում են անհատի ու հասարակության փոխհարաբերությունների նոր սկզբունքների ակտիվ ու համակարգված ձեւավորում: Առանց դրա անհնարին է հաղթահարել մոտեցումների ծայրահեղ բեռնացումն ու անհանդուրժողական հակադրությունը, մեղմել հասարակական լարվածությունը, սպառնալից ներդաշնակ զարգացում: Ավելին, մեծանում են ամբողջ հասարակությանը սթրեսային վիճակի մեջ զցելու եւ տեսականորեն նման իրավիճակում պահելու քաղաքական եւ այլ շարժառիթները, որի բանիմաց հաղթահարման դեղատոմսը չգտնելու դեպքում անխուսափելի են ավերիչ հետեւանքները, մասնավորապես՝ հասարակական իմունոնաբավարարության առաջացումը:

273 Հարկ է նշել, որ ազատական տնտեսական հարաբերություններ ունեցող գրեթե ոչ մի երկրում այս պարագան այնքան չի բացարձակացվել, որքան նորանկախ որոշ երկրներում: ԱՄՆ-ում, դեռեւս Նախագահ Ջեֆերսոնի ժամանակներից, այդ թվում նաեւ հետպատերազմյան շրջանի տնտեսագիտական միտքը, ոչ թե մերժել, այլ որոշակի կարգավորված չափի մեջ է տեսել պետության միջամտությունը տնտեսական հարաբերություններին: Իսկ վերջին տարիների տնտեսական ճգնաժամն այդ միջամտությունը կենսական անհրաժեշտություն դարձրեց:

Բժշկագիտության կողմից վաղուց ապացուցվել է, որ մարդու գլխուղեղի նորմալ գործունեության համար հույզերի 60 %-ը պետք է լինի չեզոք, 35-ը՝ դրական եւ միայն 5%-ը՝ բացասական: Եթե այս համամասնությունը խախտվում է ու հատկապես բացասական հույզերի բաժինն ավելանում է, ապա անխուսափելիորեն զարգանում են տարբեր հիվանդություններ: Իրեն սոցիալական համարող պետությունը նման խնդիրն անուշադրության մատնել չի կարող: Առավել եւս քաղաքացիական հասարակության մեջ իր անդամի սպասելիքների ու հույզերի կառավարման խնդիրը դառնում է պետության հիմնական գործառույթներից մեկը: Պատահական չէ, որ այս հիմնահարցը համարվում է հասարակագիտության առանցքային հարցերից մեկը, եւ 1995 թվականին ԱՄՆ ճանաչված տնտեսագետ Ռոբերտ Լուկասն արժանացավ Նոբելյան մրցանակի՝ հենց ռացիոնալ սպասելիքների տեսության մեջ կատարած իր ներդրման համար:

Պետության սոցիալական բնութագրի ամբողջականությունը պայմանավորված է նրա յուրաքանչյուր անդամի, ամեն մի օղակի, ողջ հասարակության որդեգրած արժեքներով ու գործելակերպով:

Հատկապես անցումային փուլում պետության կարեւորագույն գործառույթներից մեկն է դառնում կառավարելի անցումը շուկայական տնտեսական հարաբերությունների: Այլ կերպ չի էլ լինում՝ ընդունում ենք այն, թե՛ ոչ, գիտակցում ենք դրա անհրաժեշտությունը, թե՛ ոչ, իրական կյանքը գնում է հենց այդ ճանապարհով միայն, անհարկի հակադրվելով՝ ստիպված ենք լինում հաղթահարել մեր իսկ ստեղծած ավելորդ խոչընդոտները: Ընդհակառակը, պետության հոգածության խնդիրը պետք է դառնա հասարակական սթրեսների թուլացման ու հաղթահարման հարցը, իսկ դրա արհեստական հրահրումը, անկախ այն բանից, թե ում եւ ինչ ուժերի կողմից ու ինչ ձեւերով է արվում, պետք է հանգեցնի ընդհուպ որոշակի իրավական հետեւանքների:

Պետության իրավական, սոցիալական, ժողովրդավարական բնորոշիչներն առանձին-առանձին հասարակական հարաբերությունների բնույթի որոշակի որակական գծերն արտահայտելուց զատ իրենց միասնության մեջ տալիս են նաեւ նոր որակ: Այն ենթադրում է, որ սովյալ պետության համար տիպական է.

1. վերարտադրական համակարգը գործում է շուկայական օրենքներով, որտեղ գործարար միջավայրի բարելավումը եւ ձեռնարկատիրության խթանումը դառնում են պետական քաղաքականության հիմնական նպատակ, ինչպես նաեւ հաղթահարված է մենաշնորհային ցանկացած թելադրանք,
2. բաշխման հարաբերությունների վրա անհրաժեշտ է դառնում պետության կարգավորված օրինական ներագդեցությունը,
3. ենթադրվում է երկրի մասշտաբով տնտեսական լուծումների արդյունավետության զուգորդում սոցիալական հետեւանքների հետ (առաջնորդվելով հասարակական արտադրության սոցիալ-տնտեսական արդյունավետության չափանիշներով),
4. դրվում է տնտեսական, վարչական, քաղաքական ուժի օպտիմալ ապակենտրոնացման խնդիր,
5. անհրաժեշտություն է առաջանում պետականորեն հստակեցնել զարգացման առաջնահերթությունները,
6. մշակվում եւ գործադրվում են Մահմանադրության գերակայությունը եւ կայունությունն ապահովող մեխանիզմներ եւ այլն:

Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության տնտեսական համակարգի հիմնական առաջնահերթություններն են՝ կենսամակարդակ (բարօրություն), ազատություն, անվտանգություն, հավասարություն եւ կարիքավորին օգնություն:

Բնականաբար, թե՛ նշված առաջնահերթությունները եւ թե՛ դրանց հաջորդականությունը յուրաքանչյուր երկրի համար ունեն իրենց դրսեւորման առանձնահատկությունները՝ պայմանավորված անցյալով, ներկայով ու ապագայով:

Եթե փորձենք հարցին մոտենալ ավելի լայն ընդգրկումով՝ ներառելով հասարակական-պետական ողջ համակարգը, ապա Հայաստանի Հանրապետության ներկա պարագայում պետականության ամրապնդման ու ազգային ինքնահաստատման ճանապարհով զարգանալու առաջնահերթությունների թվին, թերեւս, կդասվեն հե-

տելյալները. միասնություն²⁷⁴, ազգային անվտանգություն, ազատություն, հավասարություն, բարօրություն, օգնություն կարիքավորին:

Դրանց ամբողջությունը դառնում է ազգային-հասարակական-պետական գործելակերպի նպատակ, իսկ դրանց իրականացման ուղղությամբ կոնկրետ ծրագրերն ու քայլերը մարմնավորում են տվյալ ժամանակին համապատասխանող քաղաքականությունն ու սահմանադրաիրավական լուծումները:

Հայաստանի պարագայում չափազանց կարեւոր է ներդաշնակության ու եռամիասնության, դեռ ավելին՝ մեկ ամբողջականության մեջ տեսնել ազգային, հասարակական, պետական նպատակներն ու շահերը: Դրանց տարանջատումը, առավել եւս՝ հակադրումը, ճակատագրական կարող է լինել:

Ընդհանրացնելով ասվածը, հանգում ենք այն եզրակացությանը, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրելով, որ «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է», կատարվել է առաջին վճռական ու, բարեբախտաբար, ճիշտ բնորոշումն այն հասարակական հարաբերությունների, որի նախադրյալները ցանկանում ենք ստեղծել, եւ որը մեր ազգային ու պետական առաջընթացի երաշխիքն է լինելու: Այս մոտեցումը մեր սահմանադրական մշակույթի լավագույն դրսևորումներից է: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր գործնական քայլ արվի այդ ուղղությամբ, բխի այդ հասկացությունների էությունից, ապահովի այդ ուղղությամբ հասարակության զարգացումը: Դրան պետք է ուղղված լինեն օրենսդրական աշխատանքը, համակարգային կառուցվածքային ու կազմակերպական վերափոխումները, գործնական մեխանիզմներն ու դրանց գործադրման եղա-

274 Միասնությունը գլխավոր առաջնահերթություն համարելու հարցում գուցե գտնվեն ընդդիմախոսներ, միամտորեն կարծելով նաեւ, որ դա բարոյախոսական կարգախոս է: Ամենեւի՛ն՝ ոչ: Հարցին մոտեցումը շատ ավելի լուրջ ու խորքային է: Մեր համոզմունքն է, որ մեր ազգային գոյի բախտը, մեր ինքնության ապագան, տեսակի բնականոն վերարտադրության խնդիրը, զարգացումն ապրելու համար անհրաժեշտ «կրիտիկական զանգված», ներուժ ապահովելու անհրաժեշտությունը պայմանավորված են մեր ազգային միասնությամբ, կարողունակության միաբանմամբ, առավել եւս՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք օրգանական կապով: Դեռ, նոր աշխարհաքաղաքական իրականության պայմաններում, թելադրված է բազմաթիվ ներծին ու արտածին գործոնների ազդեցությամբ:

նակները, ամբողջ հասարակության եւ յուրաքանչյուր առանձին իրավասուբյեկտի վարքագիծը: Այս հենքի վրա պետք է գծագրվի նաեւ սահմանադրական զարգացումների փիլիսոփայությունը:

Սահմանադրականության երաշխավորման կարեւոր նախապայմաններից է նաեւ սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրվող «**ժողովրդաիշխանություն**» եւ «**պետական իշխանություն**» հասկացությունների սահմանադրորեն հստակ սահմանումը՝ բացառելով դրանց նույնացումը: Այս հասկացություններից յուրաքանչյուրն ունի որոշակի իրավական բովանդակություն եւ իրավաբանական բնութագրիչներ, որոնց ընկալման, սահմանադրորեն երաշխավորման ու գործնական ապահովման աստիճանով է մեծապես բնութագրվում սահմանադրական մշակույթի մակարդակը տվյալ երկրում:

Ժողովրդաիշխանությունը ենթադրում է, որ գործ ունենք իշխանության միակ տիրոջ, այդ իշխանության աղբյուրի ու ամբողջությամբ կրողի հետ: Սահմանադրական դասական ձեւակերպումը չի սահմանափակվում միայն նշելով, որ «իշխանությունը պատկանում է ժողովրդին ու դրա յուրացումը որեւէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է»: Բազմաթիվ ժողովրդավարական երկրների սահմանադրություններում հատկապես շեշտվում է, որ «իշխանության միակ աղբյուրը ժողովուրդն է», «ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է հանրաքվեների, անմիջական ժողովրդավարության այլ ձեւերի ու իր ներկայացուցիչների միջոցով»: Համեմատական սահմանադրական վերլուծությունը վկայում է, որ սահմանադրական նորմ-սկզբունքների մակարդակում ժողովրդաիշխանությունն ամենից առաջ ենթադրում է, որ.

- ժողովրդին է պատկանում **ամբողջ** իշխանությունը,
- իշխանության **միակ աղբյուրը** ժողովուրդն է,
- ժողովրդի ինքնիշխանությունն **անօտարելի է**,
- ժողովուրդը **կարող է** իր իշխանությունն իրականացնել ինչպես **անմիջականորեն**, այնպես էլ իր **ներկայացուցիչների** միջոցով,
- ոչ ոք ժողովրդից իր իշխանությունը **խլել կամ այն սահմանափակել** չի կարող, դա համարվում է ծանրագույն հանցագործություն,
- պետական իշխանությունը ժողովրդաիշխանության դրսևորման **ձեւերից մեկն է**, որը նույնպես ժողովուրդն իրականացնում է անմիջականորեն կամ իր ներկայացուցիչների միջոցով:

Սահմանադրություններում հստակ սահմանագատելով «ժողովրդի իշխանությունը» «պետական իշխանությունից», հիմնական շեշտադրումն արվում է այն առնչությամբ, որ պետական իշխանությունն ածանցվում է ժողովրդաիշխանությունից եւ այն իրականացվում է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հիման վրա²⁷⁵: Ժողովրդի իշխանությունը պետական իշխանությամբ չի կարող սահմանափակվել²⁷⁶: Պետական իշխանությունը նույնպես պատվիրակվում է ժողովրդի կողմից եւ իրացվում է հասարակական համաձայնության առարկա հանդիսացող սահմանադրական սկզբունքների ու նորմերի հիման վրա: Իր հերթին, անմիջական ժողովրդավարության հիմնական ձեւեր են դիտարկվում հանրաքվեն եւ ընտրությունները: Միաժամանակ, սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան վկայում է, որ հանրաքվեն եւ ընտրություններն անմիջական ժողովրդավարության երկու տարբեր ձեւեր են ու չեն կարող միմյանց հակադրվել: Դրանցից մեկը չի կարող խոչընդոտել մյուսին: **Ժողովուրդն է այդ ձեւերի միջեւ ընտրություն կատարում:** Սակայն, եթե այդ ընտրության արդյունքում խորացող անվստահությունն է գերակայում, այդ ձեւերը միմյանց փոխլրացման ու հիմնավորման հնարավորություն են ընձեռում՝ հատկապես հասարակական հարցումների ու կամընտիր հանրաքվեների միջոցով: Ընդ որում, հանրաքվեն ժողովրդաիշխանության արդյունավետ ձեւից կարող է վերածվել գործիքի, «մահակի», երբ իրականացվում է միայն իշխանության կողմից ու իր նպատակների իրականացման համար, երբ ժողովուրդը գրկվում է այն իրականացնող սուբյեկտի իրավունքից եւ դառնում է միայն հանրաքվեի օբյեկտ, երբ հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը որոշում է բացառապես իշխանու-

275 Չափազանց կարեւոր ենք համարում իրավագիտության դոկտոր Լեոնիդ Մամուտի դիտարկումն այն մասին, որ հաճախ թյուր պատկերացում է ստեղծվում, թե առկա է երկու իշխանություն՝ ժողովրդի իշխանությունը եւ պետական իշխանությունը: Իրականում կա միայն մեկ իշխանություն, եւ դա պետականորեն կազմավորված ժողովրդի հանրային իշխանությունն է, որը նա իրականացնում է պետական մարմինների, այլ ոչ թե պետական իշխանության միջոցով (տե՛ս Լ. Мамут. Публичная власть, государство и разделение властей // Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 262):

276 Чиркин В.Е. Конституционные проблемы власти народа // Государство и право, 2004, N 9, էջ 10:

թյունը: Երկրում սահմանադրականության, հետեւապես նաեւ՝ սահմանադրական մշակույթի մակարդակն ու առկայությունը մեծապես պայմանավորվում են նրանով, թե որքանով է ժողովուրդն իրեն իսկ պատկանող իշխանության իրական կրողը: Անմիջական ժողովրդավարության դերի կարեւորումը հատկապես բնորոշ է շվեյցարական սահմանադրական մշակույթին, որին գնալով ավելի մեծ ուշադրություն է հրավիրվում²⁷⁷:

Ուշագրավ է, որ Հայաստանի Հանրապետությունում 2015թ. սահմանադրական զարգացումները մեծ կարեւորություն տվեցին մեր երկրում անմիջական ժողովրդավարության տեղին ու դերին: Անմիջական ժողովրդավարության հիմնական ինստիտուտը՝ հանրաքվեն Հայաստանի Հանրապետության մինչ այդ գործող Սահմանադրությամբ դիտարկվել է որպես Սահմանադրության ընդունման եւ դրանում փոփոխություններ կատարելու բացառիկ իրավական եղանակ, ինչպես նաև օրենքներ ընդունելու միջոց:

Սակայն հանրաքվեի դերը՝ որպես անմիջական ժողովրդավարության գործուն միջոց, առավել կարևորելու անհրաժեշտություն ուներ: Ընդունելով հանդերձ, որ ներկայացուցչական ժողովրդավարությունը ժամանակակից աշխարհում ժողովրդավարության իրականացման հիմնական ձևն է, սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում անմիջական ժողովրդավարության դերակատարությունը պետք էր առավելապես դիտարկել ներկայացուցչական ժողովրդավարության ինստիտուտներին զսպելու եւ հակակշռելու հարթության վրա: Գերագույն խնդիրն այն էր, որպեսզի առավելագույնս օգտագործվեր անմիջական ժողովրդավարության հակակշռող ներազդեցությունը պետական իշխանությունն իրականացնելիս: Մասնավորապես, այն պետք է միտված լինի ներկայացուցչական իշխանությանը՝ թույլ չտալու իրականացնել չհավասարակշռված, ժողովրդավարական գործընթացների վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող քայլեր: Քաղաքացիական հասարակության զարգացմանը զուգընթաց՝ սա իրավական պետության կայացման համար դառնում է առավել հրատապ, ինչպես նաև խնդիր է առաջադրում՝ բացառել այս հարցում հնարավոր ծայրահեղ մոտեցումներն ու շահարկումները:

²⁷⁷ Մասնավորապես տե՛ս Saunders Ch. A. Constitutional Culture in Tradition // Constitutional Cultures. Ed. by M. Wyrzykowski. Warsaw, ISP, 2000, էջեր 41-42:

Հանրաքվեի ինստիտուտի զարգացման համար սահմանադրական բարեփոխումների շրջանակներում օրակարգային խնդիրներ համարվեցին.

ա/ հանրաքվեի օբյեկտների ու սուբյեկտների բովանդակության ու շրջանակի հստակեցումը,

բ/ հանրաքվեի հարցում պետական իշխանության մարմինների լիազորությունների ու քաղաքացիական նախաձեռնության շրջանակների որոշակիացումը:

Հանրաքվեի ինստիտուտի զարգացման համար հայեցակարգային հիմնական մոտեցումներից կարևորվեցին հետևյալները.

- նախապատվությունը տալ հանրաքվեների շրջանակների որոշակիացման այն տարբերակին, ըստ որի՝ հանրաքվեի են դրվում այն միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը, ինչը հանգեցնում է երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումների,

- սահմանադրորեն ամրագրել այն հարցերի շրջանակը, որոնք չեն կարող հանրաքվեի դրվել,

- նախատեսել քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի ինստիտուտ,

- սահմանադրաիրավական նախադրյալներ ստեղծել քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի դրված հարցի կամ օրինագծի առնչությամբ Ազգային ժողովի կողմից նախապես եզրակացություն տալու համար:

Նշված բոլոր հարցերն իրենց կոնկրետ լուծումները գտան Սահմանադրության 202-208-րդ հոդվածներում:

Իրավական պետության համար ելակետային նշանակություն ունեն Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված բոլոր նորմ-սկզբունքների հետևողական իրացումն ու պաշտպանությունը: Դա անհրաժեշտ է երկրում սահմանադրականության երաշխավորման համար եւ այդ նպատակով մի շարք երկրներում ընդհուպ սահմանադրական փոփոխությունները դառնում են նախնական պարտադիր սահմանադրական վերահսկո-

դության առարկա²⁷⁸: Այս առումով նույնպես ուշադրության արժանի զարգացումներ կատարվեցին Հայաստանի Հանրապետությունում 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Մասնավորապես, Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրվեց, որ Սահմանադրական դատարանը, Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով, «մինչև Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաև հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը»:

278 Մասնավորապես տե՛ս Бутусова Н.В. Основы конституционного строя Российской Федерации как правовой институт и предмет конституционно-правового регулирования // Вестник Московского университета. Серия право, 2003, N 6, էջեր 17-29: Իսկ, օրինակ, 2003թ. դեկտեմբերի 23-ին ստորագրված՝ «Սահմանադրական դատարանի մասին» Ադրբեջանի Հանրապետության օրենքի 61 հոդվածը սահմանում է, որ եթե Սահմանադրության 153 հոդվածի հիման վրա դրա տեքստի փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես են եկել երկրի Նախագահը կամ խորհրդարանը, ապա նախապես պետք է ստանալ սահմանադրական դատարանի եզրակացությունը: Ընդ որում, տվյալ հարցով հանրաքվեի անցկացման ժամանակ քվեաթերթիկում պետք է համառոտ շարադրվի նաև սահմանադրական դատարանի եզրակացությունը:

3.4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԿԱ
ՓՈՒԼԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում 2014-2015 թվականներին 20-ամյա սահմանադրական զարգացումների փորձը վկայեց, որ ոչ միայն չեն հաղթահարվել նախորդ փուլերի բացթողումներն ու կիսալուծումները, այլև ծագել են նոր խնդիրներ, որոնք համակարգային լուծումներ են առաջադրում: Այդ լուծումներն անհրաժեշտ էին.

- երկրի կայուն զարգացումը երաշխավորելու համար,
- մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումն ու պաշտպանությունն էապես բարելավելու ու որակապես նոր մակարդակի բարձրացնելու, իրավունքի գերակայությունը երաշխավորելու, մարդակենտրոն սահմանադրական համակարգ ունենալու համար,
- պետական կառավարման համակարգն առավել արդյունավետ դարձնելու, իշխանության հանրային-իրավական պատասխանատվությունը մեծացնելու, իրավունքով իշխանությունը սահմանափակելու համար,
- երկրում քաղաքական իշխանության գերկենտրոնացվածությունը հաղթահարելու և ժողովրդավարական քաղաքական համակարգ ձևավորելու համար,
- Ազգային ժողովի քաղաքական մեծամասնության և քաղաքական փոքրամասնության միջև քաղաքակիրթ փոխհարաբերություններ հաստատելու համար՝ ի շահ պետության կայուն զարգացման ու երկրում պառլամենտարիզմի հաստատման,
- երկրում առավել արդյունավետ արդարադատության կայացման և դատարանների անկախության ամրապնդման համար,
- առավել վստահելի ընտրական համակարգ ներդնելու համար,
- անմիջական ժողովրդավարության սկզբունքի առավել արդյունավետ իրացման սահմանադրական երաշխիքների ամրապնդման համար,
- համապետական խնդիրների լուծման գործում քաղաքացիական հասարակության դերի էական բարձրացման ու ամրապնդման համար,

- երկրի սահմանադրական դիմամիկ, Էվոլյուցիոն զարգացման խնամարարների ստեղծման համար:

Մասնավորապես, վերջին հարցում Հայաստանում առկա սահմանադրական լուծումները միջազգային պրակտիկայում համարվում էին վատագույններից մեկը եւ հանրային կյանքում առկա շատ խնդիրներ դրանով էին պայմանավորված:

Նշված նպատակները հնարավոր չէր արդյունավետ իրականացնել առանց սահմանադրական բարեփոխումների: Ավելին, երկրում առկա շատ հիմնախնդիրներ պայմանավորված էին սահմանադրական կիսալուծումներով, անկատարություններով, ներքին հակասություններով, որոնք, օրենսդրության մեջ ու իրավակիրառական պրակտիկայում վերարտադրվելով՝ պատճառ էին դառնում սահմանադրական օրինականության պակասի ու հանրային լուրջ դժգոհությունների:

Վերջին ավելի քան քսանամյա սահմանադրաիրավական զարգացումների փորձը վկայեց, որ Հայաստանի Հանրապետությունում չհաջողվեց հասնել իրավունքով իշխանության իրական սահմանափակման: Նախորդ դարավերջին ու 21-րդ դարասկզբին առավել բնորոշ դարձան իշխանության ուժի թելադրանքը, մերկանտիլ շահերի գերակայությունը, իսկ անկախության առաջին տարիների ժողովրդավարական ռոմանտիզմն աստիճանաբար ստորադասվեց սուրբեկտիվ հայեցողությանը: Այս իրավիճակը դարձավ նաեւ միջազգային հանրության մտահոգության առարկան:

Ամբողջ աշխարհում բազմիցս է վերահաստատվել Կոդ Հելվեցիուսի այն կարեւոր պատգամը, որ «Բարքերի բարեփոխումները պետք է սկսել օրենքները բարեփոխելուց»: Առավել եւս դա վերաբերում է երկրի Հիմնական օրենքին:

Հայաստանում մինչեւ 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներն անվերապահ շտկման անհրաժեշտություն ունեցող սահմանադրաիրավական հիմնախնդիրներն էին.

- չէին գտնվել սահմանադրական իրավահարաբերությունների կայուն զարգացում ապահովող երաշխիքներ: Սահմանադրական զարգացումները, որպես անընդհատ ու շարունակական գործընթաց, միջազգային պրակտիկայում տեղի են ունենում հասարակական զարգացումներին զուգընթաց՝ հետեյալ հիմնական ճանապարհներով.

ա/ նոր սահմանադրությունների ընդունում,

բ/ գործող Սահմանադրության մեջ լրացումների եւ/կամ փոփոխությունների կատարում,

գ/ իրավական ակտերի եւ իրավակիրառ պրակտիկայի հետեւողական ու համակարգված սահմանադրականացում,

դ/ օրգանական կամ սահմանադրական օրենքների ընդունում,

ե/ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանում,

զ/ սահմանադրական լիազորությունների հարցով իշխանության մարմինների միջեւ առաջացած վեճերի լուծում:

Թվարկված վեց կետերից Հայաստանի Հանրապետության պարագայում վերջին երեքն առկա չէին, իսկ գ/ կետի գործողության ապահովման սահմանադրաիրավական երաշխիքները թերի էին: Նման վիճակը լուրջ խնդիրներ էր ստեղծում սահմանադրական էվոլյուցիոն, դինամիկ զարգացումների հարցում: Առաջին պլան էր մղվում ա/ եւ բ/ ուղղություններով «վիրահատական ճանապարհով» սահմանադրական զարգացումների երաշխավորումը, ինչն իր հերթին խնդրահարույց էր, եւ սահմանադրաիրավական գործընթացը **վերածում էր բացառապես քաղաքականի:** Միջազգային փորձը եւ ժամանակակից սահմանադրագիտությունը վկայում են, որ իրավական պետության համար հատկապես նշված դ/ եւ գ/ ուղղություններով սահմանադրական զարգացումների երաշխավորումը կենսական անհրաժեշտություն է,

- մեթոդաբանական առումով անհրաժեշտ էր **հետեւողական անցում կատարել իշխանակենտրոն սահմանադրական լուծումների համակարգից մարդակենտրոն համակարգի,** ինչը չհաջողվեց լիարժեք իրականացնել 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում: Գ-ա, իր հերթին, ենթադրում էր իրավունքի գերակայության սկզբունքի իրացման սահմանադրաիրավական անհրաժեշտ ու բավարար նախադրյալների ստեղծում, ինչն անհրաժեշտաբար պահանջում է.

ա/ համակարգային ամբողջականության մեջ հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորում, դրանց ապահովման ու պաշտպանության սահմանադրական հիմքերի ամրապնդում, այս հարցում հանրային իշխանության պոզիտիվ պարտականության եւ հանրային-իրավական պատասխանատվության հստակեցում,

բ/ իշխանության հայեցողության սահմանափակում իրավունքով:

Տվյալ մոտեցման հիմնական սկզբունքն այն է, որ իրավունքների երաշխավորված պաշտպանությունն ապահովում է ժողովրդավարական ազատություններն ու իրավունքների անմիջական գործողությունը, սահմանափակում է հայեցողությունը եւ իշխանության սուբյեկտիվ դրսեւորման շրջանակները,

- պետք էր առավել հստակ սահմանադրական երաշխիքներ ստեղծել սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի հետևողական իրացման եւ հստակ ծրագրանպատակային քաղաքականություն իրականացնելու համար,

- պահանջվում էր սահմանադրական մակարդակում համակարգային ամբողջականության մեջ առավել հետևողական իրացնել իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը, **երաշխավորել «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայի ներդաշնակությունը, իշխանության մարմինների գործառութային, հակակշռող եւ զսպող լիազորությունների հաշվեկշռվածությունը, ամրապնդել իշխանության տարբեր ճյուղերի պատշաճ գործունակությունը եւ գործառութային անկախությունը:** Սահմանադրական անհրաժեշտ նախադրյալներ պետք է ստեղծվեր պետաիշխանական լիազորությունների իրականացման գործում ստվերային հարաբերությունների ու սուբյեկտիվիզմի դրսեւորումների հաղթահարման, պետական իշխանության հանրային-իրավական պատասխանատվության եւ ծրագրանպատակային գործունեության երաշխավորման համար²⁷⁹,

- անհրաժեշտ էր ապահովել Սահմանադրության 2-րդ՝ անփոփոխելի հողվածի պահանջների հետևողական իրացումը, բացառել Սահմանադրությամբ չնախատեսված պետական մարմինների միջոցով պետաիշխանական գործառութների իրականացումը,

- սահմանադրորեն հաղթահարված չէին Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգի գերանձնավորվածությունն ու գերկենտրոնացվածությունը: Ակնհայտ անհամամասնություն կար

279 Վերափոխվող հասարակական համակարգերին բնորոշ է այն իրողությունը, որ ստվերային տնտեսության կողքին ահռելի չափերի է հասնում ստվերային կառավարումը, ինչն իր հերթին կոռուպցիայի հիմնական պատճառներից մեկն է: Մեր գնահատումներով, Արևելյան Եվրոպայի եւ Ճափնի կոմունիստական երկրներից մեծ մասում էապես խաթարված է «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայի ներդաշնակությունը եւ ստվերային կառավարումը 50 եւ ավելի տոկոս է կազմում:

սահմանադրական տարբեր մարմինների լիազորությունների իրական ծավալի եւ նրանց քաղաքական պատասխանատվության միջեւ,

- անկատար էին գործադիր իշխանության համակարգի սահմանադրական հիմքերը, այն չուներ ներքին կուռ արամաբանություն, գործառույթների ու լիազորությունների հստակ սահմանազատում: Օրակարգային հրատապ հարց էր առկա անհստակության եւ երկվության հաղթահարումը գործադիր իշխանության գործառութային դերի, իրավասության եւ պատասխանատվության միջեւ,

- պառլամենտարիզմի ներկա պահանջներին համապատասխան անհրաժեշտ մակարդակի պետք է բարձրացվեր Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի դերը՝ արդյունավետ օրենսդրական գործունեության, վերահսկողական առաքելության, ինչպես նաեւ պետական իշխանության եւ կառավարման մարմինների ձեւավորման գործում՝ միաժամանակ սահմանադրական անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ ստեղծելով խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ գործունեության եւ հակակշռող դերի ամրապնդման հարցերում,

- ընտրական համակարգի եւ հանրաքվեի ինստիտուտի բարեփոխման արդյունքում պետք է երաշխավորվեին իշխանության ընտրովիության, հաշվետվողականության եւ փոփոխելիության ժողովրդավարական գործընթացների անխափանդությունը, քաղաքացիական հասարակության ակտիվ դերակատարությունն իշխանության գործունեության նկատմամբ համարժեք հանրային վերահսկողություն իրականացնելու հարցերում,

- հանրային պատշաճ վստահություն ունեցող արդարադատական համակարգի ձեւավորման հետ մեկտեղ, իրավական պետության չափորոշիչներին համապատասխան սահմանադրորեն պետք է երաշխավորեր դատական իշխանության հակակշռող դերի էական ամրապնդումն իշխանության այլ ճյուղերի առնչությամբ: Սահմանադրական մակարդակում դատական իշխանության մարմինների գործառութային անհստակությունները, կառուցակարգային լուծումների ու դատավարական ընթացակարգերի անկատարությունը բացասական լուրջ ազդեցություն են ունենում հատկապես դատական իշխանության գործառութային անկախությունը երաշխավորելու գործում,

- պետք է սկզբունքորեն հաղթահարվեր Սահմանադրության եւ իրական կյանքի միջեւ առկա անջրպետը, սահմանադրականության ու հասարակական հարաբերությունների սահմանադրականացման ճանապարհով պետք է գտնվեին քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ այլ բնույթի հիմնախնդիրների լուծման իրավական երաշխիքները, հիմք պետք է ընդունվեր այն ճշմարտությունը, որ **սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարումն է կայուն զարգացման երաշխիքը**: Իրավական պետությունում պետք է բացառվի քաղաքական, տնտեսական եւ վարչական ներուժի սերտաճումը, երաշխավորված ու ապահովված պետք է լինի քաղաքական ուժերի նպատակների ու գործունեության սահմանադրականությունը,

- Հայաստանի Հանրապետությունն անհրաժեշտ հետետնություններ պետք է աներ մասն հաշվի առնելով նախկին ԽՍՀՄ երկրների սահմանադրական զարգացումների փորձը: Բացի բալթյան երկրներից /Էստոնիա եւ Լատվիա/ եւ Մոլդովայից, մնացած պետությունները, այդ թվում՝ Հայաստանը, որդեգրեցին եւ հետագայում պահպանեցին կիսանախագահական կամ նախագահական կառավարման համակարգը: Դրանցից չորսում մույն անձինք նախագահում են ավելի քան 20 տարի, երկուսում, ինչպես նշում են վերլուծաբանները, ձեւավորվել է, այսպես կոչված, ժառանգական միապետություն: Միանգամայն համադրելի են այս իրավիճակին Մ. Կրասնովի դատողությունները նախագահական իշխանության միապետականացման մասին²⁸⁰:

Երեք երկրներ /Ուկրաինա, Վրաստան, Դրոզդստան/ առավել հետետնողական գտնվեցին կիսանախագահական կառավարման համակարգի սահմանադրական լուծումների իրացման, դրանց բարեփոխումների հարցում: Սակայն դրանցում, այդուհանդերձ, տեղի ունեցան, այսպես կոչված, «գունավոր հեղափոխություններ», իսկ սահմանադրական զարգացումներն ուղղորդվեցին կառավարման խորհրդարանական համակարգի արմատավորմանը:

Առկա իրավիճակի համակողմանի իրավական գնահատումը դրական կարեւոր արձագանք ստացավ մասն Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից 2014թ. հոկտեմբերի 10-ի լիազումար նիստում՝ արժեւորելով սահմանադրաիրավական մնան վերլուծութ-

²⁸⁰ Ст'и Михаил Краснов, «Монархизация» президентской власти // Сравнительное конституционное обозрение, N5(108) 2015. Ст. 87-103.

յան կարեւորությունը բոլոր վերափոխվող հասարակական համակարգերի համար:

Միջազգային սահմանադրական պրակտիկան անառարկելիորեն վկայում է, որ ներկա փուլում սահմանադրական զարգացումների գերագույն նպատակը երկրում իրավունքի գերակայության հաստատումն է: Սա առավել եւս վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը: ՀՀ Սահմանադրությամբ /2005թ. փոփոխությունները ներառյալ/ անհրաժեշտ նախադրյալներ չէին ապահովված մարդու իրավունքների անմիջական գործողությունը երաշխավորելու համար: Հստակ չէին սահմանազատվել հիմնական եւ այլ իրավունքները, եւ դրանց դատական պաշտպանության համարժեք ընթացակարգեր չէին նախատեսվել: Իրավունքով իշխանության սահմանափակման սահմանադրական կարեւորագույն սկզբունքը, ինչն իրավական պետության առանցքային բնութագրիչն է, մնացել էր լոկ որպես կարգախոս: Այս բոլորը տիպական են նորանկախ երկրների համար, քանի որ սկզբնական փուլում սահմանադրական լուծումների առանցքում դրված է եղել պետական իշխանության ինստիտուտների կայացման խնդիրը: Դրա համար այդ սահմանադրությունները բնութագրվում են որպես «իշխանակենտրոն սահմանադրություններ»: Որպես կանոն, հետագա սահմանադրական զարգացումները հաղթահարում են այս վիճակը եւ սահմանադրական լուծումների առանցքում դրվում է իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը: Այս խնդիրն առավել քան հրատապ էր դարձել նաեւ Հայաստանի Հանրապետությունում: Դրա լուծման համար 2015թ. սահմանադրական բարեփոխումները, մասնավորապես, նպատակ հետապնդեցին.

- ելնելով մարդու եւ քաղաքացու սահմանադրորեն ամրագրված անօտարելի իրավունքների բնույթից, դրանց երաշխավորման, ապահովման ու պաշտպանության առանձնահատկություններից՝ հստակեցնել սահմանադրական իրավունքների դասակարգումը՝ դրանց անմիջական գործողության ու պաշտպանության համարժեք ընթացակարգեր նախատեսելու համար,

- միջազգային սահմանադրական զարգացումների արդի միտումները հաշվի առնելով էապես բարելավել իրավունքների սահմանափակմանն առնչվող սահմանադրական լուծումները՝ հիմքում ունենալով համաչափության եւ որոշակիության սկզբունքները,

- սահմանադրորեն երաշխավորել հիմնական իրավունքների և ազատությունների էության անխախտելիությունը,

- ստեղծել սահմանադրաիրավական բոլոր նախադրյալները, որպեսզի մարդու և քաղաքացու խախտված իրավունքները ներպետական իրավական համակարգում արդյունավետ պաշտպանության երաշխիքներ ունենան:

Առանց այս նպատակների իրացման երկրում մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության ոլորտում էական տեղաշարժեր ակնկալելն իրատեսական չէ:

Սահմանադրական բարեփոխումների կարեւորագույն նպատակներից մեկն էլ երկրի կայուն զարգացման երաշխավորումն է: Դրա համար նախատեսվեց.

- սոցիալական արժեքների ու հարաբերությունների զարգացմանը համընթաց ապահովել Սահմանադրության դիմամիկ, էվոլյուցիոն զարգացումը՝ օրգանական /սահմանադրական/ օրենքների արմատավորման, սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի լուծման իրավական ընթացակարգերի սահմանման, Սահմանադրության, օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի միջև առաջացող անհամապատասխանությունների առավել արդյունավետ հաղթահարման ընթացակարգերի նախատեսման ճանապարհով,

- որակապես նոր մակարդակի բարձրացնել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական լուծումները՝ ապահովելով «գործառույթ-ինստիտուտ-լիազորություն» շղթայում անհրաժեշտ ներդաշնակություն, բարձրացնելով հակակշռող և զսպող լիազորությունների գործունակությունը,

- սահմանադրական երաշխիքներ նախատեսել.

ա/ բացառելու քաղաքական մենիշխանությունը, իշխանության գերկենտրոնացումը, ստվերային հարաբերությունները պետաիշխանական լիազորություններն իրականացնելիս,

բ/ էապես սահմանափակելու սուբյեկտիվ հայեցողության շրջանակները, պետական իշխանության գերանձնավորման հնարավորությունը՝ սուբյեկտիվիզմի տարաբնույթ դրսևորումներով հանդերձ,

գ/ բարձրացնելու իշխանության մարմինների հանրային-իրավական պատասխանատվությունը՝ նախատեսելով պաշտոնական

պարտականությունների կատարման հետ կապված քաղաքական, սահմանադրական, քրեական պատասխանատվության գործուն իրավական ընթացակարգեր,

դ/ բացառելու քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճումը եւ օլիգարխիկ պետաիշխանական համակարգի արմատավորումը, ինչը երկրի ազգային անվտանգության սպառնալիք է դառնում,

ե/ ձեւավորելու սահմանադրական տնտեսական համակարգ՝ ամրապնդելով ազատ ձեռնարկչության սահմանադրական երաշխիքները, առավելագույնս բացառելով մոնոպոլ թելադրանքի եւ կոռումպացված տնտեսական հարաբերությունների ծավալման հնարավորությունները,

- իրավունքի գերակայության սկզբունքը դնել մարդկանց սոցիալական վարքագծի, քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի եւ իշխանությունների հանրային վարքագծի հիմքում՝ ապահովելով դրանց իրացման արդյունավետ մշտադիտարկում:

Այս բոլորը կարելու է երաշխիք են փոխելու նաեւ հանրային մթնոլորտը երկրում, ապահովելու անհատի եւ հանրության շահերի ներդաշնակում, մարդկանց ստեղծագործական ներուժը դարձնելու երկրի առաջընթացի կարելու գործոն:

Մեծ է սահմանադրական զարգացումների դերը երկրում կոռուպցիայի ու հովանավորչության դեմ արդյունավետ պայքար ծավալելու գործում: Այս երեւոյթները մեծագույն չարիք են բազմաթիվ երկրների համար: Իրավունքի գերակայության ինդեքսի որոշման միջազգային հետազոտությունները վկայում են, որ աշխարհի երկրների շուրջ 60 տոկոսում կոռուպցիայի մակարդակը 50 տոկոսից ավելին է: Դա վերաբերում է օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների, բանակին եւ ոստիկանությանը²⁸¹:

Կոռուպցիան եւ հովանավորչությունն առավելապես ծաղկում են այնպիսի համակարգերում, որտեղ, մասնավորապես.

- հստակ չեն իշխանության մարմինների հայեցողության սահմանները եւ մեծ է տուրյեկտիվ գործոնի դերը,

- իշխանությունը սահմանափակված չէ իրավունքով եւ որոշակի չէ նրա հանրային-իրավական պատասխանատվությունը,

281 World Justice Project, Rule of Law Index, E-mail: aponce@worldjusticeproject.org

- մարդկանց հիմնական իրավունքներն անմիջականորեն չեն գործում եւ դրա համար չեն ստեղծվել համարժեք իրավական ու կառուցակարգային երաշխիքներ,

- հստակ ու գործունակ չեն իշխանության մարմինների զսպող ու հակակշռող լիազորությունները,

- անկախ ու արդյունավետ չէ արդարադատական համակարգը,

- անկատար են վերահսկողական խորհրդարանական համակարգերը եւ այլն:

Առանց այս հարցերում որակական շտկումների՝ սոցիալական այդ հիվանդության բուժումն անհնարին է: Իր հերթին այդ բոլորի արմատները թաքնված են սահմանադրական լուծումներում: Բարեփոխումների առաջնահերթ նպատակներից է սահմանադրական երաշխիքների ստեղծումը դրանք արմատախիլ անելու եւ իրական կյանքում դրանց վերարտադրման հնարավորություններն առավելագույնս բացառելու համար:

Երկրում պառլամենտարիզմի կայացումն ու անընդհատ զարգացումը նույնպես սահմանադրական բարեփոխումների առանցքային խնդիրներից են: Սա հիմնական մայրուղին է ժողովրդավարական պետության կայացման համար: Հայաստանում գործող սահմանադրական լուծումների գլխավոր բացն այն է եղել, որ նվազագույնի է հասցվել խորհրդարանական փոքրամասնության դերակատարությունը: Օրգանական /սահմանադրական/ օրենքների ինստիտուտի բացակայությունը փոքրամասնությանը զրկել է ընդհուպ օրենսդրական քաղաքականության վրա որեւէ իրական ներազդեցությունից:

Պառլամենտարիզմի մշակույթը քաղաքակիրթ երկխոսության մշակույթ է, որի արմատավորման իրավական նախադրյալներն առաջին հերթին սահմանադրական ամրագրում պետք է ստանան: Մեզանում արմատավորվել էր քաղաքական առճակատման համակարգը, ինչը բացասաբար էր անդրադառնում օրենսդիր մարմնի դերակատարության վրա եւ երկրի կայուն զարգացման լուրջ ազդելք էր:

Սահմանադրական բարեփոխումները, մասնավորապես, նախատեսեցին.

- ամրապնդել Ազգային ժողովի մարմինների դերն օրենսդրական գործունեության բնագավառում,

- մեծացնել Ազգային ժողովի դերը պետական իշխանության ու կառավարման մարմինների ձևավորման գործում,

- ընդլայնել Ազգային ժողովի վերահսկողական լիազորությունների շրջանակները,

- ամրապնդել խորհրդարանական փոքրամասնության իրավունքների սահմանադրական երաշխիքները,

- լրջորեն բարեփոխել Ազգային ժողովի պատգամավորների ընտրության գործող կարգը:

Այս բոլորի արդյունքում էապես կբարձրանա խորհրդարանի քաղաքական դերը՝ ինչպես օրենսդիր, այնպես էլ վերահսկողական գործառույթների շրջանակներում, էականորեն կուժեղացվի ընդդիմության դերակատարությունը: Դա է իրական պառլամենտարիզմի հաստատման հիմնական ճանապարհը:

Միջազգային համակարգային ներկա ճգնաժամի պայմաններում սահմանադրական բարեփոխումները կոչված են նաև էապես բարձրացնելու տնտեսական հարաբերությունների որակը, նվազագույնի հասցնելու սուբյեկտիվ գործոնի դերը, հաղթահարելու քաղաքական ու տնտեսական հնարավոր մենիշխանությունը, վարչահրամայական միջամտությունները տնտեսական հարաբերություններին:

Դա պահանջում է կառավարության դերի ու պատասխանատվության մեծացում՝ երկրի կայուն զարգացում ապահովելու, ընթացիկ, միջնաժամկետ եւ հեռանկարային առաջնահերթությունները հստակեցնելու եւ դրանց համարժեք ծրագրանպատակային քաղաքականություն իրականացնելու ուղղությամբ:

Առողջ տնտեսական մրցակցության արմատավորմանը մեծապես կարող են նպաստել դատաիրավական համակարգում բարեփոխումները, հատկապես՝ սեփականության իրավունքի պաշտպանության երաշխիքների ամրապնդումը:

Սահմանադրական բարեփոխումների առաջնահերթություններից էր սոցիալական պետության սահմանադրական սկզբունքի երաշխավորման առավել գործուն նախադրյալների ապահովումը:

Սոցիալական պետության սկզբունքից բխում են որոշակի սահմանադրական-իրավական ուղենիշներ, որոնք օրենսդիրը պետք է հաշվի առնի կոնկրետ սոցիալական կարգավորումների, կարիքա-

վորներին սոցիալական օգնություն տրամադրելու, սոցիալական ծառայությունների եւ սոցիալական ապահովության միջոցների զարգացման միջոցով:

Սոցիալական հիմնական իրավունքները եւ պետության նպատակներն անցած տարիներին առանց տարբերակման ամրագրվել էին ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի բազմաթիվ հոդվածներում, ընդ որում, Սահմանադրությունը շատ դեպքերում պետության սոցիալական նպատակները ձևակերպել էր որպես սոցիալական հիմնական իրավունքներ: Նման վիճակը հաղթահարման եւ սոցիալական իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդման անհրաժեշտություն ունեին: Մասնավորապես, կան սոցիալական ոլորտին վերաբերող բազմաթիվ հիմնական իրավունքներ, որոնք անմիջականորեն գործող իրավունքներ են (օրինակ՝ աշխատանքի ընտրության ազատության իրավունքը կամ գործադուլի իրավունքը), եւ որոնք հնարավոր է պաշտպանել սահմանադրական արդարադատության ճանապարհով:

Սահմանադրական բարեփոխումները կարելուրեցին նաեւ այն հանգամանքը, որ ժամանակակից սոցիալական պետության բնորոշ հատկանիշը սոցիալական շուկայական տնտեսությունն է ու դրա բնականոն գործունեությունը: Եվ քանի որ իրավական պետությունում անհատի ազատ զարգացումն անխուսափելիորեն կապված է հնարավոր անհավասարությունների առաջացման հետ, ապա սոցիալական պետությունը կոչված է տարբեր միջոցառումներով մեղմելու այդ անհավասարությունները՝ իրականացնելով սոցիալական ապահովության, սոցիալական ապահովագրության եւ սոցիալական օգնության նպատակային քաղաքականություն՝ թույլ չտալու համար սոցիալական շերտավորման անհամաչափ խորացում: Այս հարցում կարելուր երաշխիք է նաեւ անաշխատ եկամուտների, կոռուպցիոն դրսեւորումների, պաշտոնական դիրքի չարաշահման եւ ոչ իրավաչափ այլ ճանապարհներով սոցիալական շերտավորման հաղթահարման սահմանադրաիրավական երաշխիքների ամրապնդումը:

Սահմանադրական բարեփոխումների կարելուրագույն խնդիրներից համարվեց նաեւ դատարանների նկատմամբ վստահության ամրապնդումը եւ արդարադատության գործունակության ամրապնդումը:

Գատարանների նկատմամբ վստահությունն էապես պայմանավորված է անկախ, անաչառ ու անկողմնակալ դատարանների ու համարժեք դատական իշխանության առկայությամբ: Սահմանադրական բարեփոխումների գերնպատակ դիտվեց դրա ապահովումը: ՀՀ սահմանադրական լուծումները տարիներ շարունակ շեշտը դրել էին դատական իշխանության ինստիտուտների ձեւավորման հարցերի վրա: Բարեփոխումների անհրաժեշտությունը թելադրեց այն սկզբունքային մոտեցումը, որ առաջին պլան մղվեն արդարադատական գործառույթների հստակեցումը եւ դրանց իրացման համարժեք երաշխիքների ապահովումը: Անհրաժեշտ էր ամրապնդել դատական իշխանության գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության երաշխիքները, բարձրացնել դատական իշխանության դերն իշխանության այլ թեւերի հակակշռման գործում: Միայն գործառույթային, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անհրաժեշտ ու բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է երկրում իրավունքի գերակայության, արդյունավետ արդարադատության եւ արդար դատաքննության երաշխավոր հանդիսանալ:

Գատարանների անաչառության ու անկողմնակալության համար էական են դատական ակտերի բողոքարկման, ինչպես նաեւ մարդու իրավունքների դատական պաշտպանության առավել արդյունավետ համակարգերի արմատավորումը, դատական ակտերի համապատասխանությունն իրավական որոշակիության սկզբունքին, Արդարադատության խորհրդի սահմանադրական գործառույթների ու գործունեության արմատական բարելավումը:

Գատական իշխանության նկատմամբ անվստահությունն զգալի չափով պայմանավորված է նաեւ դատական իշխանության գործառույթային անհստակություններով, կառուցակարգային անկայունությամբ, դատավարական ընթացակարգերի թերություններով, սուբյեկտիվ տարաբնույթ ազդեցություններով:

Այս բոլոր խնդիրների լուծումը հնարավոր է միայն սահմանադրական համարժեք փոփոխությունների արդյունքում: Որեւէ այլ ճանապարհով, առավել եւս՝ միայն ցանկությամբ ու քաղաքական կամ վարչական միջամտությամբ խնդիրը լուծում չի ունենա, եւ, դատարաններ ունենալով հանդերձ, չի հաղթահարվի արդարադատության դեֆիցիտը:

Սահմանադրական բարեփոխումները պետք է շարունակաբար երաշխավորեն, որ իշխանությունը սահմանափակված լինի իրավունքով, եւ մարդն ու նրա արժանապատվությունը դառնան սահմանադրական լուծումների առանցքը: Իրավունքով իշխանության սահմանափակումն իրավական պետության անկյունաքարն է: Ցավոք, ՀՀ Սահմանադրության առաջին անփոփոխելի հոդվածի առկայության պայմաններում՝ ժամանակի մարտահրավերների հաշվառմամբ, սահմանադրորեն երաշխավորված ու ապահովված չէին հիմնական իրավունքների անմիջական գործողությունը եւ դրա համարժեք դատական պաշտպանությունը: Նման իրավիճակն անիրական է դարձնում Սահմանադրության գերակայության պատշաճ երաշխավորումը եւ իշխանության սահմանափակման հարցում մարդու բնական ու անօտարելի իրավունքների որոշիչ դերակատարությունը: Նման ճակատագրի է արժանանում նաեւ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անբակտելի հիմք:

Սահմանադրական բարեփոխումները կոչված էին արմատական շտկումներ մտցնելու այս հարցերում: Նպատակն էր իրավունքի գերակայության սկզբունքը դնել անհատի սոցիալական վարքագծի, քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի եւ իշխանության մարմինների հանրային վարքագծի հիմքում:

ԱՄՆ-ի Նախագահ Ռոնալդ Ռեյգանին ժամանակին հարցրել են. «...արդյոք կառավարությունն ի վիճակի է լուծելու առկա խնդիրները»: Նա պատասխանել է. «Ոչ, որովհետեւ կառավարությունն ինքնին խնդիր է»: Եթե սահմանադրական լուծումներն ինքնին անկատար են, արգելափակված է Սահմանադրության եւ սահմանադրական իրավունքի բնականոն էվոլյուցիոն զարգացումը, հասարակական հարաբերությունների հետեւողական սահմանադրականացումը բախվում է սահմանադրական փակուղիների, երբ սահմանադրորեն պատշաճ երաշխավորված չեն մարդու հիմնական իրավունքների անմիջական գործողությունն ու իրավունքի գերակայության երաշխավորումը, բացակայում են իշխանության մարմինների հանրային-իրավական պատասխանատվության հստակ կառուցակարգերը, անհատական ու քաղաքական գերիշխանությունն է տիրապետող դառնում, ապա գործող Սահմանադրության «ավելի լավ» կիրառման ցանկությունը կարող է միայն գնահատվել որպես անձնիշխանական նկրտում

եւ սուբյեկտիվ գործոնի դերի գերազնահատում: Այո, թեկուզ այդ ճանապարհով նույնպես կարող են գտնվել առանձին կիսալուծումներ: Սակայն դրանք միանգամայն անհամարժեք կլինեն իրավական պետության կայացման առկա մարտահրավերներին: Կառավարման համակարգի անկատարությամբ պայմանավորված՝ քաղաքական մենիշխանությունը ծնում է տնտեսական մենիշխանություն, վերջիններս պարարտ հող են ստեղծում կոռուպցիայի, հովանավորչության, կամայականության, խտրականության ու ամենաթողության համար: Մարդը հայտնվում է սուբյեկտիվ նպատակահարմարությամբ թելադրված հարաբերությունների կիզակետում՝ խորթանալով իր սահմանադրական իրավունքներից ու ազատություններից: Երկիրն այս ճանապարհով զարգացման ու արդար իրավակարգի հաստատման հեռանկար չի կարող ունենալ:

Եվս մեկ հարցի կցանկանայինք անդրադառնալ: Որքանո՞վ են սահմանադրական բարեփոխումները դառնում հանրային պահանջ: Այս հարցում քաղաքական շահարկումները հասնում են ընդհուպ ծայրահեղությունների: Բնական է, որ բոլոր մարդիկ, անկախ կրթությունից ու զբաղեցրած դիրքից, չեն կարող սահմանադրագետներ լինել եւ հստակ պատկերացում ունենալ Սահմանադրության տարբեր իրավակարգավորումների բնույթի, ունեցած դերի, համակարգային փոխառնչությունների, վերափոխման անհրաժեշտության մասին: Սակայն սոցիալական հանրության բոլոր անդամներն անվերապահորեն զգում են «արդար» կամ «ոչ արդար» հանրային-պետական հարաբերությունների, այսպես կոչված, լույսն ու մութը: Առավել եւս դա ակնառու է համեմատաբար փոքր հասարակական համակարգերում, ինչպիսին է նաեւ Հայաստանի Հանրապետությունը: Որքան էլ արդարության մասին պատկերացումները տարբեր լինեն, այսուհանդերձ, հանրության բացարձակ մեծամասնությունն իր ապագան կապում է միայն իրավականորեն պաշտպանված ազատ հասարակության հետ: Իսկ նման հասարակություն հնարավոր է բացառապես համարժեք սահմանադրական կարգի պայմաններում: Մենք միանգամայն համամիտ ենք պրոֆեսոր Ա. Սելիվանովի այն եզրահանգման հետ, որ «ժողովրդի վստահությունը Սահմանադրության հանդեպ չափվում է այն բանով, որ իշխանության իրավունքը թույլատրելի է այնքանով,

որքանով այն հանդիսանում է իրավունքի իշխանություն»²⁸²։ Սա Սահմանադրության լեգիտիմության գլխավոր ու օբյեկտիվ չափորոշիչն է։ Երբ ժողովուրդն զգում է, որ իշխանությունն այս կամ այն չափով դադարում է իրավունքի իշխանություն լինելուց եւ սահմանադրական լուծումներն ի գործ չեն դա կանխել կամ ենթադասվում են սուբյեկտիվ գործոնին, ապա այդ լուծումների վերանայման անհրաժեշտությունն է դառնում Սահմանադրության լեգիտիմության ամրապնդման ու անհրաժեշտ բարեփոխումների իրականացման պահանջ։ Միայն այդ պահանջից ելնելով կարելի է դատողություններ անել, թե որքանով է ժողովուրդը ցանկանում բարեփոխել Սահմանադրությունը։

²⁸² Селиванов А.А. Конституционные проблемы в современной теории права. Киев, Логос, 2013. Ст. 38.

ԳԼՈՒԽ 4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ԳԼՈՒԲԱԼ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

4.1. ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Եվրոպական իրավական միտքը ներկայումս փաստում է, որ գլոբալացվող աշխարհում Սահմանադրությունը ոչ այնքան պետության հիմնական օրենքն է, որքան քաղաքացիական հասարակության գերագույն իրավական փաստաթուղթը: Մենք այս հարցին հետագայում նույնպես կանդրադառնանք: Սակայն, եթե փորձենք պատմական զուգահեռներ անցկացնել, ապա սահմանադիր ժողովների ու դրանց ընդունած որոշումների առնչությամբ կարող ենք ընդգծել, որ գործ ունենք այնպիսի իրողության հետ, որ նույնիսկ պետականության կորստի պայմաններում հայ հանրային կյանքը դարեր շարունակ առաջնորդվել է իր կանոնական սահմանադրություններով, որոնք քարացած նախապաշարումների ժողովածու չեն եղել, այլ **մշտապես, ազգային լայն համաձայնությամբ վերանորոգվել են ու դարձել ընդհանուր վարքագծի կանոններ բովանդակող գերակա փաստաթուղթ:**

Արդյո՞ք մնան պայմաններում պետք է խոսել պետականության եւ սահմանադրականության, այսպես կոչված, «անհամատեղելիության» մասին: Կարծում ենք՝ ոչ: Պետականությունը սոցիումի որոշակի համակարգված գոյ է, որը պահանջում է նաեւ համակեցության իր հիմնարար կանոնները: Սակայն պետական կառուցակարգերի բացակայությունը, եթե չի հանգեցնում ինքնության արժեհամակարգի հիմնարար խաթարումների, ապա սոցիումի հանրային համակեցությունը խարսխվում է հենց արժեքային այդ համակարգից թելադրվող վարքագծի կանոնների վրա:

Հատկապես մեր ազգային-քաղաքական ապակենտրոն համակարգի պայմաններում, երբ համեմատաբար թույլ են գտնվել կենտ-

րոնաձիգ ուժերը, իսկ երկպառակությունները մեր պատմության մշտական ուղեկիցն են եղել, առանձնահատուկ կարեւորվել է ազգային-եկեղեցական ժողովների ազգային, քաղաքական, իրավական, ընդհուպ՝ պետականագիտական դերն ու նշանակությունը: Ժողովներ, որոնք ազգային արժեքներն ու ինքնության որակները դարձրին ազգային համակեցության հենքը: Թերեւս, պետականության բացակայության պարագաներում մեր ինքնության որակների պահպանման ու ազգային լինելության հարցում նույնպես զգալի չափով պարտական ենք հենց սահմանադիր ժողովներին ու դրանց կողմից ընդունված կանոններին:

Վերոշարադրյալ պատմաիրավական էքսկուրսը եւ սահմանադրականության զարգացման միջազգային փորձը վկայում են, որ առկա է հայեցակարգային երկու մոտեցում: Առաջինը կյանքի կոչվեց ամերիկյան սահմանադրական դոկտրինայի շրջանակներում՝ Սահմանադրությունը համարելով որպես պետության հիմնական օրենք: Այս մոտեցումն զգալի չափով աղավաղվեց սահմանադրական միապետությունների եւ տոտալիտար քաղաքական ռեժիմների պայմաններում, երբ պետությունը նույնացվեց իշխանության հետ, իսկ Սահմանադրությունը դիտվեց որպես գործիք իշխանության ձեռքին՝ իր կամքն իրացնելու համար: Այս մտայնությունը չի հաղթահարված նոր ժողովրդավարության շատ երկրներում, ուր քաղաքական համակարգի անկատարությունը հանգեցնում է ընդհուպ քաղաքական դիկտատուրայի՝ դրան ծառայեցնելով նաեւ Սահմանադրության ներուժը:

Միջազգային հանրային ինտեգրման նոր զարգացումները, հասարակական հարաբերությունների, արժեհամակարգային, տնտեսական, քաղաքական գլոբալացման նոր միտումներն ու սահմանադրական մերօրյա զարգացումները, մասնավորապես՝ Եվրոպական միության շրջանակներում, Լիսաբոնյան համաձայնագրի կնքումը, ինչպես նշել ենք, ստեղծեցին սահմանադրաիրավական նոր իրողություն: Դրա հիմնական բնորոշ գիծն այն է, որ սահմանադիր բնույթ ունեցող իրավակարգավորումները «չեն կադապարվում» պետական գործառույթների շրջանակում, այլ դիտվում են որպես ինտեգրված սոցիումի, քաղաքացիական հասարակության հիմնարար վարքագծի կանոնակարգում: Սահմանադրությունը՝ սահման դնելով իշխա-

նությանը եւ հստակեցնելով անձի ազատության սահմանները, շատ ավելի լայն գործառույթներ է իրականացնում, քան այն, ինչ վերաբերում է միայն պետախիշխանական հարաբերություններին:

Նեղացնելով Սահմանադրության հանրային-իրավական նշանակությունը՝ աղճատվում է նաեւ սահմանադրականության բնույթը: Վերը նշեցինք, որ «սահմանադրականությունը» հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական վարքագծի հիմնարար կանոնների առկայությունը, դրանց՝ որպէս ապրող իրողության, գոյությունն է հանրային կյանքում, յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պետախիշխանական լիազորությունների իրականացման գործընթացում: Այն սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայությունն է հանրային կյանքում, հանդես է գալիս որպէս հասարակության սոցիալական վարքագծի բնութագրման ընդհանուր իրավական սկզբունք: **Անկախ այն բանից, թե սոցիալական հանրությունը քաղաքական կազմակերպվածության ինչ վիճակում է գտնվում, եթե առկա են փոխհամաձայնությամբ հաստատված վարքագծի հիմնարար կանոններ, եւ դրանք առկա են իրական կյանքում, ապա իրողություն են նաեւ Սահմանադրությունն ու սահմանադրականությունը:**

Անվիճելի է, որ պետականության զարգացման տարբեր փուլերում հասարակական համաձայնության կառուցակարգերը եւ դրանց արժեքանական հիմքերը տարբեր են: Սակայն դա չի նշանակում, որ ժամանակակից պետական համակարգերում Սահմանադրությունը միայն պետախիշխանական գործառույթի կրող է դառնում:

Օրինակ, ազգային-եկեղեցական ժողովների ի հայտ գալը հայ իրականության մեջ, դրանց համամարդկային նշանակությունը սահմանադրականության արմատավորման ու զարգացման գործում զարմանալիորեն ներդաշնակ են եվրոպական սահմանադրական ներկա զարգացումների տրամաբանությանը եւ անառարկելիորեն վկայում են Սահմանադրության՝ որպէս քաղաքացիական հասարակության Հիմնական օրենքի կարեւորությունը:

Ինչպէս արդեն նշել ենք, միայն զարմանալ կարելի է, երբ XXI դարում, նորանկախ Հայաստանի Հանրապետությունում «Հայոց մեծ դարձի 1700-ամյակին» նվիրված հրատարակվում է «Քրիստո-

նյա Հայաստան»²⁸³ ավելի քան հազար էջանոց հանրագիտարան, ու դրանում ոչ մի խոսք չի ասվում ազգային-եկեղեցական ժողովների սահմանադիր դերի ու կանոնական **սահմանադրությունների** մասին: Դա այն դեպքում, երբ դեռևս 1837թ. Վենետիկում հրատարակված «Հայկազեան լեզուի նոր բառգրքում», հղումներ կատարելով քրիստոնեական շրջանի մեր պատմության ակունքներին, տրվում է Սահմանադրության անգերազանցելի բնորոշում: Նույն ձեռագիրն է ու նույն անթույլատրելի մոտեցումը՝ անհրաժեշտ կարելություն չտալով գրաբարյան հասկացությանին ձեռակերպումներին, դրանք պարզ բառային կամայական մեկնաբանման առարկա դարձնելով՝ մի ամբողջ մշակութային երեւոյթ ենք դուրս մղում մեր պատմությունից՝ ի դեմս համամարդկային նշանակության սահմանադրական մշակույթի, երբ այն պատմական անուրանալի իրողություն է եւ խոր արմատներ ունի:

Այսուհանդերձ, չշեղվելով բուն նյութից, կարծում ենք, որ հիմնական հետևությունն այն է, որ թե՛ պատմական առանձին դրսեւորումների մեջ եւ թե՛ առավել եւս գլոբալացվող աշխարհի հանրային զարգացման ներկա հողվույթում սահմանադրական արժեքանության վերպետական դրսեւորումներն օբյեկտիվ իրողություն են: Ներկա զարգացումների հիմնական տրամաբանությունն այն է, որ դրանք իրավական առումով նորմատիվ բնույթ են ստանում բազմակողմ միջազգային պայմանագրերի, ՄԱԿ-ի ու տարածաշրջանային տարբեր կազմակերպությունների կողմից ընդունվող բանաձեւերի, ու, առավել եւս, միասնական արժույթային ու տնտեսական տարածքներ ներառող միությունների կազմավորման հիմնադիր փաստաթղթերի հիման վրա:

Ներկա զարգացումներին բնորոշ է նաեւ այն, որ դեռևս հաղթահարված չեն պետականի ու վերպետականի տարաբնույթ հակադրությունները, ինտեգրման կառուցակարգային համակարգերը գտնվում են ձեռավորման ու զարգացման փուլում, տարբեր շահերի բախումները պահանջում են առավել արդյունավետ լուծման ընթացակարգեր: Այս բոլորն ակնհայտ է, օրինակ, վերջին տասնամյակում նոր որակ ստացած Եվրամիության շրջանակներում: Դրա հետ մեկտեղ, ականատեսն ենք նաեւ նրան, թե նույն Եվրոպական միության

283 Քրիստոնյա Հայաստան. Հանրագիտարան, Երևան, 2002:

շրջանակներում միասնական օրենսդիր գործունեությունը, արդարադատական համակարգերի ինտեգրումը, գործադիր իշխանության ու հումանիտար ոլորտներում փոխհամաձայնեցված քաղաքականությունն ինչպիսի աննախադեպ ընդգրկում ու որակ են ստանում:

Առավել կարելու է, որ Եվրոպայի ինքնիշխան պետությունները գտել կամ գտնում են իրենց ազգային սահմանադրական համակարգերի ու վերազգային սահմանադրական հարաբերությունների ինտեգրման քաղաքակիրթ լուծումներ՝ համատեղելով ուժերը հանուն իրենց ժողովրդների բարօրության, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության հաստատման:

Ուշադրության է արժանի նաեւ այն հանգամանքը, որ նման «սահմանադրական ինտեգրում» հնարավոր է այն պարագայում, **երբ շեշտը դրվում է Սահմանադրության արժեքանական միասնական ընկալումների վրա**, հաստատվում է այն իրողությունը, որ Սահմանադրությունը քաղաքացիական հասարակության, սոցիալական հանրության քաղաքակիրթ համակեցության վկայությունն ու միջոցն է: Այդ ինտեգրումն այսօր այլեւս իրողություն է ու զարգացման նոր որակներ է դրսեւորում:

4.2. ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԻՄԱԳԻԾԸ

Իրավական գլոբալացումը սահմանադրական իրավունքի ոլորտում վերջին տարիներին հանգեցրել է ուշադրության արժանի մի շարք օրինաչափությունների, որոնք գնալով համակարգային բնույթ են ստանում: Դրանց թվում հատկապես անհրաժեշտ է առանձնացնել.

1. լիբերալ իրավամտաժողովրդյան զարգացմանը զուգընթաց ներդաշնակվում են ազգային սահմանադրությունների արժեքանական հիմքերը,
2. նոր որակ է ստացել համագործակցությունը սահմանադրական իրավունքի եւ սահմանադրական արդարադատության բնագավառում, որը հանգեցնում է սահմանադրականության ոլորտում ընդհանուր մոտեցումների, սահմանադրական միջազգային չափորոշիչների ձեւավորմանը,
3. միջազգային իրավունքը, հատկապես մարդու իրավունքների բնագավառում, միջազգային արդարադատական նախադեպը՝ հանձին Ստրասբուրգի, Լյուքսեմբուրգի եւ Հաագայի դատարանների նախադեպային իրավունքի, ազգային արդարադատական համակարգերի համար, ինչպես նաեւ որպես իրավունքի աղբյուր, որակապես նոր դերակատարություն են ձեռք բերում,
4. սահմանադրական իրավունքի ոլորտում ազգային սահմանափակվածության շրջանակները փլուզվում են հատկապես համաեվրոպական համագործակցության խորացմանը զուգընթաց՝ ձեւավորելով սահմանադրական իրավամտաժողովրդյան եվրոպական չափորոշիչներ²⁸⁴,

284 Այս տեսանկյունից հետաքրքիր է նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոմվենցիայի 16-րդ արձանագրության իրավափոխությունները, երբ անդամ պատույնների բարձրագույն դատական ատյանները մինչեւ որոշման կայացումը խորհրդատվական դիմում կարող են ներկայացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վերպետական սահմանադրական զարգացումների համատեքստում ուշադրության են արժանի Գյունտեր Տոյբերի մոտեցումները, հատկապես վերազգային մակարդակում մարդու իրավունքների առնչությամբ/ տե՛ս Пюнтер Тойбер, Контуры конституционной социологии: преодаление исключительности государственного конституционализма// Сравнительное конституционное обозрение. 2016, N1 (110), с. 41-55.

5. կա ընդհանուր գիտակցում այն բանի, որ սահմանադրականության «դեֆիցիտը» եւ ձեռախեղումները հանգեցնում են սոցիալական այնպիսի կատակլիզմների, որոնք ծնում են հեղափոխականություն, ուղեկցվում են այրունահեղությամբ, ստեղծում են համընդգրկուն անկայունություն:

Ակնհայտ է, որ գործ ունենք զուգահեռ, սակայն նաեւ հակադրության մեջ գտնվող երկու երևույթների հետ: Մի կողմից, բացառիկ կարեւորվում են իրավունքի գերակայության դերն ու նշանակությունը վերալետական իրավահարաբերություններում ու սահմանադրական զարգացումներում, մյուս կողմից՝ վերալետական հարաբերություններում թելադրողը մնում են կոնկրետ շահը եւ, թեկուզ ուժի գործադրմամբ՝ այն բավարարելու գործելակերպը:

Չափազանց հետաքրքիր ու իր բովանդակությամբ նոր որակի գործընթաց սկսվեց հատկապես Եվրոպական միության Սահմանադրության մշակման փուլում: Դժվարին, սակայն իրավագիտական առումով հետաքրքիր արդյունքներ արձանագրվեցին վերջնական նախագծում: Սակայն այն ի սկզբանե ենթակա էր ձախողման, քանի որ ընթացիկ շահերով թելադրված քաղաքական համաձայնեցման գործընթացը վճռորոշ դերակատարություն ուներ այս հարցում: Արդյունքում՝ Լիսաբոնյան համաձայնագիրն իր իրավագիտական նշանակությամբ ավելի շատ մոտեցավ միջազգային պայմանագրի, քան սահմանադրական ակտի:

Մի դիտարկում եւս: Սահմանադրական ակտերը վերջին հաշվով օրինաստեղծ գործունեության արդյունք են եւ ծնվում են իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի գործողության դաշտում: Վերալետական իրավական ակտերը գերազանցապես ներկայացուցչական գործադիր մարմնի փոխհամաձայնության արդյունք են՝ անկախ հետագա վավերացման ընթացակարգերից: Նման պայմաններում մեծ վերապահումներով կարելի է խոսել վերալետական Սահմանադրության, որպես միասնական իրավական ակտի հնարավոր ի հայտ գալու մասին: Դասական առումով կարող ենք ակնարկել միայն վերալետական չգրված սահմանադրության առկայության մասին՝ որպես, ինչպես նշեցինք, արժեքաճանաչական համակարգ: Ակնհայտ է, որ Եվրոպայում, ամեն մի առանձին երկրի Հիմնական

օրենքի առկայության պայմաններում, ձեռավորվում է սահմանադրական մշակույթի մի ընդհանրական որակ, ինչը պայմանավորում է սահմանադրականության համարժեք որակի առկայությունը: Հետևաբար, վերագրային սահմանադրականության նոր դիմագիծն օրգանապես շաղկապված է վերագրային սահմանադրական մշակույթի նոր որակների ձեռավորման հետ: Վերջինս, իր հերթին, պայմանավորված է հասարակության մեջ անհատի սոցիալական դերի ու դերակատարության իմաստավորմամբ, նրա անօտարելի իրավունքների երաշխավորման աստիճանով, ոչ միայն պետության ներսում, այլև վերպետական հարաբերություններում իրավունքով իշխանությունը սահմանափակելու իրական հնարավորությամբ:

Մենք չենք կարծում, թե արդարացված են եվրոպական առանձին երկրների ղեկավարների շուրթերից վերջին տարիներին հնչեցրած այն մտահոգությունները, համաձայն որոնց՝ փաստ է դառնում բազմամշակույթ հասարակությունների կրախը: Սա իրականության քաղաքական ու նաև վտանգավոր գնահատական է: Իրական փաստն այն է, որ հաճախ քաղաքականության հիմքում դրվում են երկակի ստանդարտներ եւ այդ դիտանկյունով են ընկալվում ու իրացվում հիմնարար սահմանադրական արժեքներն ու սկզբունքները: Այնտեղ, ուր մարդու իրավունքները ճանաչվում են որպես բարձրագույն արժեք եւ անխտրական իրացվում են, այդ հարթության վրա ինքնության մշակութային այլ որակները սոցիալական համակեցության խոչընդոտներ չեն կարող ստեղծել: Հակառակը, **մարդու եւ մարդկության միջև անջրպետը գնալով վերանում է**, եւ այստեղ քաղաքական դրդապատճառներով թելադրված արհեստական պատմեշներ ստեղծելն անհեռանկար է ու դատապարտված անհաջողության: Սա վերաբերում է նաև ժողովուրդների հավաքական իրավունքի ճանաչմանը, մասնավորապես՝ նրանց ինքնորոշման իրավունքին, ինչը Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին 1966թ. դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագրի 1-ին հոդվածի իրավական բովանդակությունն է կազմում:

4.3. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՏ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇ

Իրավական պետության համար երկետային նշանակություն ունեն Սահմանադրության՝ սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված բոլոր նորմ-սկզբունքների հետետողական իրացումն ու պաշտպանությունը: Դա անհրաժեշտ է երկրում սահմանադրականության երաշխավորման համար եւ այդ նպատակով մի շարք երկրներում ընդհուպ սահմանադրական փոփոխությունները դառնում են նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողության առարկա²⁸⁵:

Սահմանադրության նորմ-սկզբունքների հետետողական իրացման ճանապարհով երկրում սահմանադրականության երաշխավորումն առանձնահատուկ կարեւորություն ունի հատկապես նորանկախ երկրների համար: Ինչպես նշեցինք, առանցքային նշանակություն ունի ամենից առաջ **«իրավական պետություն»** սահմանադրական նորմ-սկզբունքի հստակեցումը եւ երաշխավորումը: Իրավական պետություն դառնալու համար ցանկությունը բավարար չէ, անհրաժեշտ է որոշակի իրավական մշակույթ, որն իր բնական զարգացումը պետք է ապրի:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ ամենաընդհանուր գծերով իրավական պետության հիմնական սկզբունքի պահանջն է, որ պետական իշխանությունը պետք է սահմանափակված լինի, **ճշգրտված լինի այն սահմանը, որից այն կողմ իշխանությունն անցնել չի կարող**²⁸⁶:

285 Մասնավորապես տե՛ս Բутусова Н.В. Основы конституционного строя Российской Федерации как правовой институт и предмет конституционно-правового регулирования // Вестник Московского университета. Серия право, 2003, № 6, էջեր 17-29: Իսկ, օրինակ, 2003թ. դեկտեմբերի 23-ին ստորագրված՝ «Սահմանադրական դատարանի մասին» Ադրբեջանի Հանրապետության օրենքի 61 հոդվածը սահմանում է, որ եթե Սահմանադրության 153 հոդվածի հիման վրա դրա տեքստի փոփոխությունների նախաձեռնությամբ հանդես են եկել երկրի Նախագահը կամ խորհրդարանը, ապա նախապես պետք է ստանալ սահմանադրական դատարանի եզրակացությունը: Ընդ որում, տվյալ հարցով հանրաքվեի անցկացման ժամանակ քվեաթերթիկում պետք է համառոտ շարադրվի նաեւ սահմանադրական դատարանի եզրակացությունը:

286 Տե՛ս Сушинская С.И. Понятие и сущность правового государства и соответствие ФРГ критериям правового государства с точки зрения ее конституционных характеристик // Конституционное право зарубежных стран. 2001, N 1, էջեր 42-48:

Այդ սահմանը, որի պաշտպանությանն է կոչված սահմանադրական վերահսկողության ողջ համակարգը, մարդու անօտարելի իրավունքներն են: **Իրավունքով իշխանության սահմանափակումն իրավական պետության հիմնական բնութագրիչն է:** Սահմանադրությունը կարող է վերածվել գեղեցիկ բառերի ժողովածուի, եթե **սահմանադրական սկզբունք - իրավունք - իշխանություն** շղթայում չկա ներդաշնակ փոխպայմանավորվածություն ու փոխլրացում, որի շնորհիվ իշխանության գործունեության էությունն է դառնում իրավունքի երաշխավորումը: Վերջին հաշվով, սահմանադրությունները կյանքի կոչվեցին երեք հիմնական առաքելություն իրականացնելու համար.

- երաշխավորելու մարդկանց իրավունքներն ու ազատությունները,
- սահման դնելու իշխանությանն ու այն իրականացնողների գործողություններին,
- սահմանելու պետական կարգի հիմունքներն ու կանոնակարգելու իշխանական գործառույթների իրականացումը:

Ելնելով վերոշարադրյալ իրողություններից ու ընդհանրացումներից՝ հետհամայնավարական յուրաքանչյուր երկրում իրավական պետության կայացման պարտադիր ու հիմնական պայմաններ կարող են դիտվել.

- մարդու արժանապատվության ճանաչումը եւ հարգումը, նրա իրավունքների եւ հիմնարար ազատությունների ապահովումը, իրավունքի գերակայության երաշխավորումը,
- իշխանությունների բաժանումը եւ հավասարակշռումը, քաղաքական, տնտեսական եւ վարչական ուժի օպտիմալ ապակենտրոնացումը,
- իշխանությունների ընտրովիությունն ու վերահսկելիությունը,
- անկախ դատական իշխանության առկայությունը²⁸⁷,
- Սահմանադրության գերակայության եւ կայունության երաշխավորումը:

Այս նախադրյալները փոխկապակցված են ու դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը, անտեսումը կամ տարաբնույթ աղճատումը

²⁸⁷ Ինչպես ժամանակին նշել է Թոմաս Ջեֆերսոնը՝ դատավորները պետք է անկախ լինեն գործադիր իշխանությունից, այլ ոչ թե ժողովրդի կամքից: Իսկ իրական ժողովրդավարական երկրում ժողովրդի կամքը մարմնավորվում է Սահմանադրության մեջ ու օրենքներում:

կարող է ի չիք դարձնել մյուսների գոյությունը ու վկայել ոչ ժողովրդավարական քաղաքական ռեժիմի իրողության մասին: Մրանք, թերևս, միջազգային առաջադիմական իրավական մտքի ու հասարակական պրակտիկայի այբբենական ճշմարտություններից են: Այսուհանդերձ, դրանց շարքում առանձնահատուկ կարևորություն ունի իրավական պետության հատկապես այնպիսի առանցքային բնութագրիչների խոր մասնագիտական (դոկտրինալ) մեկնաբանությունը, ինչպիսիք են «իրավունքի գերակայություն» եւ «իշխանությունների բաժանում ու հավասարակշռում» սահմանադրական սկզբունքները:

Նկատի ունենալով, որ իրավունքի գերակայության հարցին որոշ չափով անդրադարձ կատարել ենք²⁸⁸, ստորև ուշադրություն կհրավիրենք միայն որոշ ելակետային հանգամանքների վրա, ինչպես նաեւ քննության կառնենք իշխանությունների բաժանման ու հավասարակշռման **եւ գործառույթային հավասարակշռության ապահովման հիմնահարցը**, որը սահմանադրական ներկա զարգացումների առումով առանցքային նշանակություն ունի:

Նախ՝ ինչ՞ են հուշում պատմության դասերը: Ինչպես դիպուկ բանաձևված է Մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների 1789թ. ֆրանսիական հռչակագրի հոդված 2-ում՝ «**Յուրաքանչյուր քաղաքական միության նպատակը՝ մարդու բնական ու անօտարելի իրավունքների ապահովումն է**»: Վերջինս ցանկացած Սահմանադրության հիմնական բովանդակությունն ու պետական համակարգի գերխնդիրն է: Գործնական կյանքում դրա ապահովման համար անհրաժեշտ է, ամենից առաջ, մեթոդաբանական հստակ մոտեցում «իրավունք» հասկացության, ինչպես նաեւ մարդու բնական իրավունքների առաջնայնության ըմբռնման հարցերում:

Պատմական խոր արմատներ ունի տեսական բանավեճը՝ բերված հարցադրումների առանցքը կազմող՝ «իրավունքի գերակայություն²⁸⁹», թե՞ «օրենքի գերակայություն» հասկացությունների շուրջ, որը, ինքնըստինքյան, ելակետային նշանակություն ունի մեր կողմից առաջադրված հիմնահարցին սպառիչ պատասխան տալու համար:

288 Մասնավորապես տե՛ս նաեւ Հարությունյան Գ., Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Երեւան, 2003:

Առաջին անգամ նախաքրիստոնեական շրջանի հասարակական մտքի խոշորագույն ընդհանրացումներից մեկը Գեմոկրիտի (470-366 մ.թ.ա.) բանաձեւումն էր այն մասին, որ **քաղաքականության, բարոյականության եւ օրենսդրության մեջ արդարության չափանիշը՝ համապատասխանությունն է բնությանը**²⁸⁹: Արդարությունն ու ճշմարտությունը նա տեսնում էր բնականի մեջ, օրենքը համարում էր արհեստական, տարբերակում էր «ճշմարտությունը»՝ «հասարակական կարծիքից», **բնական ճշմարտությունը՝ օրենքից**²⁹⁰:

Եթե հետագայում Սոկրատը ճշմարտության արտացոլանքն օրենքի մեջ կապում էր գիտելիքների հետ, ապա Պլատոնի մոտ «իրերի աշխարհի» ու «գաղափարների աշխարհի» տարանջատմամբ էւ ճշմարտության՝ յուրաքանչյուրն իր գործն անելու առաքելության բնորոշմամբ, **օրենքը ներկայացվեց որպես բանականության ծնունդ**²⁹¹: Ըստ Պլատոնի՝ այնտեղ, որտեղ օրենքն ուժ չունի եւ գտնվում է ինչ-որ մեկի իշխանության ներքո, **այդ պետությունը դատապարտված է կործանման**:

Արիստոտելյան շրջանի փիլիսոփայական միտքը բանաձեւեց, որ քաղաքական արդարությունը հնարավոր է միայն նույն հանրությանը պատկանող ազատ եւ իրավահավասար մարդկանց միջեւ: Քաղաքական արդարությունը բնորոշելով որպես քաղաքական իրավունք՝ Արիստոտելի մոտ քաղաքական իրավունքը տարանջատվեց բնական եւ պայմանական իրավունքի՝ ամրագրելով այն բացառիկ կարևոր ընդհանրացումները, որ, նախ՝ **օրենքը չի կարող բռնությունը դարձնել իրավունք** կամ **ուժը ներկայացնել որպես իրավունքի աղբյուր**, եւ ապա՝ **պայմանական իրավունքը պետք է ներդաշնակ լինի բնական իրավունքին**: Օրենքի հիմքում պետք է ընկած լինի քաղաքական արդարությունը: Չպետք է մոռանանք, որ Արիստոտելի մոտ քաղաքական արդարությունը կամ քաղաքական իրավունքը հանդես էին գալիս որպես արդարություն կամ իրավունք՝ ընդհանրապես: Արիստոտելը շատ հստակ ու միանշանակ ձեւակերպեց, որ **յուրաքանչյուր օրենքի հիմքը պետք է լինի իրավունքը**, եւ այդ **իրավունքն օրենքի միջո-**

289 Материалисты Древней Греции. М., 1955, էջեր 53-178:

290 Нерсисянц В.С. Философия права. М., 1997, էջ 404:

291 Платон. Государство, Законы, Политик. М., 1998, էջ 171:

ցով պետք է պաշտպանված լինի: Արիստոտելի մոտ այսօրվա պատկերացմամբ իրավական կարող էր կոչվել այն պետությունը, **որտեղ իշխում է իրավունքը պաշտպանող օրենքը:** Ժողովրդավարության հիմքերի հիմքն էր համարվում ոչ միայն այն, որ մարդիկ իրավահավասար են (ստրուկներն էլ հավասար են՝ իրենց իրավագրկությամբ), այլև ու առավել ես այն, որ նրանք **իրավունակ են**²⁹²:

Արիստոտելն օրենքի ժողովրդավարական բնույթը տեսնում էր հենց այն բանում, թե այն որքանով է համապատասխանում իր իրավական բովանդակությանը՝ դառնալով բոլորի համար պարտադիր վարքագծի կանոն²⁹³:

Հայտնի է, որ հին հռոմեական իրավունքը ոչ միայն հանդես եկավ որպես ինքնուրույն գիտություն՝ հստակեցնելով հանրային ու մասնավոր իրավունքի սահմանները, այլև **բնական իրավունքը** ներկայացվեց իր բնական նախասկզբի ամբողջականության մեջ²⁹⁴:

Չանդրադառնալով հին հունական ու հռոմեական փիլիսոփայական-իրավական մտքի մեծերի հանճարեղ ընդհանրացումների մանրամասներին, ավելացնենք, որ 17-18-րդ դարերի տեսաբաններից Ջոն Լոկի, Մոնտեսքյոյի, Ժան-ժակ Ռուսոյի, հետագայում նաև՝ Կանտի եւ այլոց մոտ ոչ միայն առավել հստակ զատորոշվեց իշխանությունների բաժանման ու հավասարակշռման գաղափարը, այլև իրավունքի գերակայության, բնական իրավունքի սուբստանցի ըմբռնումն ստացավ նոր որակ՝ պահպանելով այն կարմիր թելը, որ **օրենքն իրավունքի մարմնացումը պետք է լինի:**

Հայ իրավական մտքի պատմության մեջ, ինչպես հիշատակել ենք, ուշադրության են արժանի Մխիթար Գոշի, ինչպես նաև Հակոբ եւ Շահամիր Շահամիրյանների որոշակի դիրքորոշումները բնական (Աստվածային) իրավունքների գերակայության հարցում եւ այդ մոտեցման սահմանադրական՝ ուշադրության արժանի ձեւակերպումը «Որոգայթ փառացում»:

²⁹² Аристотель. Этика, Политика, Риторика, Поэтика, Категории. М., 1998, էջեր 616, 623, 624:

²⁹³ Արիստոտել, Աթենական հասարակարգը, Երեւան, 2003, էջեր 26-27:

²⁹⁴ Гарольд Дж. Берман. Западная традиция права: эпоха формирования. М., 1998, էջեր 28-34:

Ինչպիսի իրավափիլիսոփայական բնութագրում էլ տանք իրավունքի հասկացությանը, այն, իրապես, սոցիալական երեւոյթ է,²⁹⁵ ունի բնական հիմք եւ բանական էակի սոցիալական էութեան ինքնադրսեւորման պայմանն ու միջոցն է:

Ի դեպ, քրիստոնեական մտածողության մեջ (Աստվածաշունչ, Հին կտակարան, Գիրք ծննդոց, 1-ին մաս) մարդն Աստծո պատկերով է ստեղծվել եւ արժանի է հարգանքի: «Ղեւտական» գրքի ներածականում ասվում է. «Սրբութեան Աստվածը, սիրո ու կյանքի Աստվածը ուզում է իր ժողովրդին մասնակից դարձնել իր սրբութեանը, որպեսզի նա էլ իր հերթին դառնա կրողը կյանքի, սիրո եւ սրբութեան»²⁹⁶:

Հենց այդ նպատակով է, որ Աստվածաշունչը հուշում ու սովորեցնում է ճիշտ ապրելու, մարդակերպ ու արժանապատիվ ապրելու կանոնները: Դրա լավագույն դասերից է այն, որ **պետությունը պետք է գոյություն ունենա մարդու համար եւ ոչ թե մարդը՝ պետության:**

Իրավափիլիսոփայական միտքն օրենքի եւ իրավունքի հարաբերակցության հիմնահարցը քննության առարկա է դարձրել նաեւ բարոյագիտական առումով: Բանն այն է, որ իրավական օրենքը «... վեհացնում է իշխանության բարոյական նշանակությունը»²⁹⁷, ներդաշնակում եւ ընդհանուր հայտարարի է բերում անհատների փոխադարձորեն ճանաչելի եւ հասարակականորեն ընդունելի շահերը, դառնում է արդարության չափանիշ եւ արդարադատության իրականացման հիմք:

Ինչպես դիպուկ բանաձեւել է Բ. Չիչերինը՝ իշխանության ողջ բարոյական նշանակությունը հիմնված է այն բանի վրա, որ նա իր ձեռքում ունի արդարադատության սուրը, իսկ արդարադատությունը կայանում է նրանում, որ յուրաքանչյուրին վերապահվի այն, ինչ իրեն է պատկանում:

Իսկ եթե այդ սուրը, կոչված լինելով պաշտպանել իրավունքը, դառնում է իրավունքի ոսնահարման զենք, դրանով իսկ ժողովրդի աչքում ոչնչանում է վերջինիս բարոյական ուժը, իսկ դա ունի կործանարար նշանակություն թե՛ իրավագրվածների եւ թե՛ հենց իշխանության համար ²⁹⁸:

295 Алексеев С.С. Философия права. М., 1999, էջ 2:

296 Աստվածաշունչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994, էջ 117:

297 Чичерин Б. Н. Курс государственной науки. Ч. 3. М., 1898, էջ 401:

298 Նույն տեղում, էջեր 133-134:

Պատմական այս համառոտ ակնարկն այն նպատակն ուներ, որ-
պեսզի կարողանայինք հիմնական դասերը ճանաչելով՝ հստակ ար-
ձանագրել իրավափիլիսոփայական մտքի կողմից ընդհանրացված
հետևյալ անառարկելի ճշմարտությունները.

- մարդը, որպես սոցիալական երեւոյթ, հասարակական հարաբե-
րությունների մեջ է մտնում իր բնական ու անօտարելի իրավունքներով,

- պետությունը պարտավոր է մարդու իրավունքները ճանաչել որ-
պես բարձրագույն եւ անօտարելի արժեք, որպես սահմանադրորեն
ամրագրված անմիջական գործող իրավունք,

- ամեն մի օրենք բխում է այդ իրավունքներից, պաշտպանում է այդ
իրավունքները, դրանք սահմանափակում է միայն ու միայն այն չափով,
որչափով դա անհրաժեշտ է այլոց իրավունքների ճանաչման ու երաշխա-
վորման, հասարակական ներդաշնակ համակեցության համար,

- մարդու բնական իրավունքներն են ընկած ժողովրդի եւ պետության
կողմից իշխանության իրականացման հիմքում: Իրավունքով է իշխա-
նությունը սահմանափակվում, եւ ոչ թե իշխանությամբ՝ իրավունքը²⁹⁹,

- մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործո-
ղությունը երաշխավորվում է Սահմանադրությամբ, օրենքներով եւ
իրավակիրառական պրակտիկայով,

- այդ իրավունքները համընդհանուր են, ունեն պաշտպանության
ոչ միայն ներպետական, այլեւ միջազգային երաշխիքներ:

**Սահմանադրությունն ամրագրելով մարդու իրավունքների
ճանաչման ու պաշտպանության նկատմամբ մեթոդաբանական
որոշակի դիրքորոշում՝ կանխորոշում է օրենսդրորեն դրա նյութա-
կանացման բնույթը, կառուցակարգային ապահովումը եւ համա-
կարգային երաշխավորումը:** Սահմանադրությունն ինքը չպետք է
իրավունքի գերակայության սկզբունքի ամբողջական ու լիարժեք
գործադրման արգելակ դառնա: Ուստի անհրաժեշտ ենք համարում
քննության առարկա դարձնել բուն սահմանադրական դիրքորոշումը
մարդու իրավունքների ու ազատությունների նկատմամբ:

299 Ինչպես նշում է ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը՝ «...օրենքը (այն, ինչը
սահմանվում է որպես պոզիտիվ իրավունք) կարող է թե՛ համապատասխանել
եւ թե՛ հակասել իրավունքին...: **Միայն որպես իրավունքի արտահայտման
ձեւ է օրենքը** (պոզիտիվ իրավունքը) **իրավական երեւոյթ:** ... Ոչ թե իրավունքն
է պաշտոնական-իշխանական համապարտադրականության հետեւանք, այլ
հակառակը...» (Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի եւ պետության տեսություն,
Երեւան, «Նաիրի», 2001, էջեր 41-43):

Ինչպես նշեցինք, իրավահավասարության սկզբունքը միս ու արյուն է ստանում, երբ զուգորդվում է իրավունակության հետ (հավասար են նաև ստրուկները): Ժողովրդավարական ու իրավական համակարգերում խոսքն իրավունակ՝ իրավունքները ճանաչված, հարգված եւ երաշխավորված պաշտպանված, սուբյեկտների իրավահավասարության մասին է: Իսկ օրենքը ոչ միայն իրավունքի ճանաչումն է, այլև դրա բանական սահմանափակումը՝ այլոց իրավունքները չտուճահարելու համար: **Հարցերի հարցը մարդու բնական իրավունքների ճանաչումը, օրենսդրորեն ամրագրումը, գործնական ապահովումը եւ երաշխավորված պաշտպանումն է:**

Լավագույն, հիմնավոր ու ամբողջական սահմանադրական բանաձեւումը, մեր կարծիքով, կարող է լինել. «... **պետությունը ճանաչում է երաշխավորում է իրավունքի գերակայության ու օրենքի իշխանության սկզբունքը**»: Նման ձեւակերպումը երաշխավորում է մեթոդաբանական ճիշտ մոտեցում, բնական իրավունքների առաջնայնության ընդունում, օրենքի սուբստանցի՝ իրավունքի ճանաչում, դրա սահմանափակման հասարակական համաձայնության ընդգծում, իրավունքների ազատության եւ իշխանության սահմանափակման հստակ հայեցակարգի ամրագրում: Օրենքը դառնում է անհատի ազատության, անվտանգության եւ սեփականության պաշտպանը, **նրա իրավունքների իրացման երաշխավորը**³⁰⁰:

Սահմանադրական հիմնական պահանջն այդ իրավունքների գերակայության, առաջնայնության, ելակետային բնույթի, անօտարելիության ճանաչումն ու ամրագրումն է: Եթե չկա այդ ճանաչումը, ապա անխոսափելիորեն առաջին պլան կարող է մղվել իշխանության իրավունքի թելադրող դերը, իսկ Սահմանադրությունը, տվյալ դեպքում, «սահման կղնի» ոչ թե իշխանության իրավունքի, այլ մարդկանց ազատությունների վրա՝ դրանով իսկ ամրագրելով բռնապետության սկզբունքներ:

Նման պարագայում պետությունը նույնպես ակամայից հանդես կգա ոչ թե որպես հասարակության ընդհանրական պահանջներից թելադրված կարգավորիչ միջոց, այլ որպես բնական ինքնավերարտադրվող անհրաժեշտություն, որն սկսում է գործել ինքնապահպանության

300 Четвернин В.А. Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997, էջ 26:

ու ազդեցության անկաշկանդ ուժեղացման տրամաբանությամբ³⁰¹: Դա կհանգեցնի նրան, որ օրենքը, պարզապես, կդառնա իրավունքի բռնադատման գործիք: Իսկ բերված պատմատրամաբանական վերլուծությունը վկայում է, որ **օրենքը պետք է ազատության, այլ ոչ թե դրա սահմանափակման ու բռնադատման երաշխավորը լինի:**

Այս հարցն ավելի հրատապ ու սուր է դրված մայրցամաքային իրավական համակարգերում: Անգլո-սաքսոնական նախադեպային համակարգերում արդարադատական նախադեպն է ընկած իրավունքի նյութականացման հիմքում, մայրցամաքային համակարգերում՝ քաղաքական փոխհամաձայնությամբ ամրագրված պոզիտիվ իրավունքը: Նման պարագայում սահմանադրական սկզբունքների ու նորմերի հստակությունը, ամբողջականությունը, ներքին համակարգվածությունը ձեռք են բերում բացառիկ կարևոր նշանակություն:

Իսկ ի՞նչ է հուշում միջազգային իրավական պրակտիկան: Հարյուրից ավելի երկրների սահմանադրությունների համեմատական վերլուծությունը վկայում է, որ գրեթե բոլոր երկրների սահմանադրություններում կան սահմանադրական նորմերի բնույթ ունեցող՝ մարդու իրավունքների հռչակագրերում ամրագրվում է հայեցակարգային մոտեցումը մարդու իրավունքների նկատմամբ, իսկ 65-ից ավելի երկրների սահմանադրություններում հստակ մոտեցում է դրսևորված նաև անձի արժանապատվության սահմանադրական սկզբունքի նկատմամբ: Վերջինիս նվիրված մեկ կամ մի քանի հոդվածներում շեշտվում է անձի արժանապատվության անձեռնմխելիությունը՝ որպես անքակտելի իրավունք, անօտարելիությունը, հարգման եւ պաշտպանման՝ պետության պարտավորությունը, ինչպես նաև առնչությունները մարդու իրավունքների ու ազատությունների հետ:

Առաջին հերթին կցանկանայինք առանձնացնել այն երկրների օրինակները, որտեղ սահմանադրական հստակ դիրքորոշում գոյություն ունի իրավունքի առաջնայնության ու գերակայության, իրավունքի ու օրենքի ներդաշնակ կապի առումով:

Գերմանիայի Դաշնության Հիմնական օրենքի առաջին հոդվածի 1-ին կետն ամրագրում է, որ մարդու արժանապատվությունն ան-

³⁰¹ Պետությունը չի կարող ստեղծվել մի քանի անհատի երջանիկ դարձնելու համար: Նրա նպատակը հասարակությանը երջանիկ դարձնելն է (Ռևա-տոն. Государство. Собр. соч. Т. 3. М., 1994. էջ 189):

ձեռնմխելի է: Դրա պաշտպանումը եւ հարգումն ամեն մի պետական իշխանության պարտականությունն է: Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ գերմանական ժողովուրդն ընդունում է մարդու **անձեռնմխելի ու անօտարելի** իրավունքները՝ որպէս ամեն մի մարդկային հանրության, խաղաղության եւ աշխարհում արդարության հիմք: 3-րդ կետն ամբողջականացնում է հայեցակարգային մոտեցումը՝ ամրագրելով, որ ներկայացվող հիմնական իրավունքները **պարտադիր են օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար**՝ որպէս **անմիջականորեն գործող իրավունք**:

Նման մոտեցումը, մեր կարծիքով, դասական, ամբողջական, հետետեղական ու օրինակելի մոտեցում է: Նմանօրինակ մոտեցում է արտացոլված նաեւ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 18 եւ 21, Հայաստանի՝ 3, Իսպանիայի՝ 10, Չեխիայի՝ 1-3, Վրաստանի՝ 7, Ուկրաինայի՝ 8, Լեհաստանի՝ 30, Ռումինիայի՝ 1, Սլովենիայի՝ 15, Պորտուգալիայի՝ 1 հոդվածներում: Որպէս հստակ ու ամբողջական ձեւակերպման օրինակ՝ կցանկանայինք ներկայացնել նաեւ Վրաստանի Սահմանադրության 7 հոդվածը, որում ասվում է. «Վրաստանը ճանաչում եւ հետետում է մարդու հանրաճանաչ իրավունքներին ու ազատություններին՝ **որպէս մարդկային բարձրագույն արժեք**: Իշխանությունն իրականացնելիս **ժողովուրդը եւ պետությունը սահմանափակված են այդ իրավունքներով ու ազատություններով՝ որպէս անմիջականորեն գործող իրավունքի**»:

Իսկ Հայաստանի Սահմանադրության 3-րդ հոդվածն ամրագրում է.

«1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունը իր իրավունքներն եւ ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպէս անմիջականորեն գործող իրավունք»:

Կարծես ամեն ինչ ասված է հստակ ու միանշանակ: Առանձնացնենք հետեւյալ պարագաները.

1. սահմանադրորեն մարդը ճանաչվում է որպէս բարձրագույն արժեք,

2. նրա արժանապատվությունն անօտարելի է եւ իր իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմքն է,
3. մարդու իրավունքներն անմիջականորեն գործող իրավունքներ են,
4. այդ իրավունքներն ու ազատությունները հանրային իշխանության իրականացման սահմանափակիչներն են:

Ինչպես տեսնում ենք, սահմանադրական մնան մոտեցման հիմնական փիլիսոփայությունն այն է, որ, ինչպես արդեն նշվել է, **ոչ թե իշխանությամբ իրավունքն է սահմանափակվում, այլ իրավունքով՝ իշխանությունը:** Համոզված ենք, որ այն սահմանադրությունները, որոնք նման որոշակիությամբ մեթոդաբանական այս մոտեցումը չեն որդեգրել, թերի են ու էապես անկատար:

Հիմնական հետեւությունը նաեւ այն է, որ Սահմանադրության իրավական հիմքը հենց իրավունքի գերակայության ճանաչումն ու ամրագրումն է: Այս առումով է, որ նման Սահմանադրության գերակայության երաշխավորումը երաշխիք է իրավունքի գերակայության երաշխավորման համար: Իր հերթին, իրավակիրառական եւ օրինաստեղծ պրակտիկայի համար չափազանց կարեւոր է Սահմանադրության գերակայության չափանիշների հստակեցումը: Պրոֆեսոր Յու. Տիխոմիրովը, օրինակ, առանձնացնում է յոթ նման չափանիշներ. 1. սահմանադրական սկզբունքների ու գաղափարների արտացոլումն իրավական ակտում, 2. սահմանադրական հասկացությունների ու տերմինների ճիշտ օգտագործումը, 3. ակտի ընդունումն իրավասու սուբյեկտի կողմից, 4. իրավական համակարգում ակտի տեղի հաշվի առնելը եւ դրա ձեւին ներկայացվող պահանջները, 5. ակտի նախապատրաստման, ընդունման, ուժի մեջ մտնելու ընթացակարգերի պաշտպանումը, 6. իրավական ակտի նորմի եւ Սահմանադրության համապատասխան նորմի բովանդակային համապատասխանությունը, 7. իրավական նորմերի բովանդակության իրավակիրառական մեկնաբանման ու պարզաբանման կայունությունը³⁰²: Թվարկված չափանիշներն իրենց բովանդակային ամբողջության մեջ, վերջին հաշվով, տալիս են մեկ հիմնահարցի պատասխան՝ որքանով է նորմատիվ ակտն իր ձեւի ու բովանդակության մեջ իրավական, իրավունքի էության ձեւականացում, իրավունքի արտահայտություն: Եթե այդպիսին է, ապա բխում է իրավունքի գերակայության երաշխավոր-

302 Ст'я Тихомиров Ю.А. Коллизионное право. М., 2001, էջ 257:

ման սկզբունքից եւ կարող է համարվել Սահմանադրությանը համապատասխանող: Փաստորեն, Սահմանադրության միջոցով, վերջինիս գերակայության ապահովման ճանապարհով է, որ իրավական ակտերում «միս ու արյուն է ստանում» իրավունքի գերակայության սկզբունքը³⁰³:

Փորձենք դիմել նաեւ միջազգային իրավական փաստաթղթերին: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի նախաբանում ասվում է. «...մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը եւ հավասար ու անօտարելի իրավունքները ազատության, արդարության ու աշխարհի խաղաղության հիմքն են»:
Ավելացվում է նաեւ՝ «...**անհրաժեշտ է օրենքի իշխանությամբ պաշտպանել մարդու իրավունքները**»: Նույն Հռչակագրի մասնավորապես 1, 6, 8 եւ 29-րդ հոդվածները ոչ միայն հստակ ամրագրում են մարդու բնական իրավունքների անօտարելիության, նրանց ազատության ու իրավահավասարության սկզբունքները, այլև՝ հասարակության հանդեպ ունեցած պարտականությունները եւ իրավասուբյեկտի կարգավիճակը: Իսկ հոդված 8-ը միանշանակ սահմանում է մարդու արդարադատության իրավունքը՝ լիազոր դատարանների միջոցով վերականգնելու Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված՝ իր խախտված իրավունքները:

Մեքոդաբանական մույն մոտեցումն արտացոլված է նաեւ ՄԱԿ-ի կանոնադրության մեջ, որի նախաբանում մույնպես փաստվում է հավատարմությունը մարդու հիմնական իրավունքների, նրա արժա-

303 Ի դեպ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 67 հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ. «Սահմանադրական դատարանը դիմումում առաջադրված հարցի առնչությամբ պարզում է դրանում նշված իրավական ակտի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը, հիմք ընդունելով՝ 1) իրավական ակտի պահանջվող տեսակը. 2) իրավական ակտն ընդունելու եւ գործողության մեջ դնելու Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը. 3) մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը. 4) Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովվածությունը. 5) պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները. 6) Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը»:

նապատվության հանդեպ: Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (16.12.1966թ.) նույնպես ամրագրված է, որ **մարդու արժանապատվության ու հավասար եւ անօտարելի իրավունքների ճանաչումն ազատության, արդարության եւ համընդհանուր խաղաղության հիմքն է, որ այդ իրավունքները բխում են մարդկային անհատին բնորոշ արժանապատվությունից:** Նույն Դաշնագրի հոդված 16-ը սահմանում է մարդու իրավասուրբյեկտության սկզբունքը: Դաշնագիրը, ելնելով այն հիմնադրույթից, որ «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին համապատասխան, քաղաքացիական եւ քաղաքական ազատությունից օգտվող եւ վախից ու կարիքից ձերբազատված մարդկային ազատ անհատի իղեալը կարող է իրականանալ, եթե միայն ստեղծվեն այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուրը կարող է օգտվել ինչպես իր քաղաքացիական ու քաղաքական իրավունքներից, այնպես էլ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներից», նախատեսում է նաեւ օրենքով այդ իրավունքների հնարավոր սահմանափակման թույլատրելի սահմանները:

Հայաստանն անդամակցելով Եվրախորհրդին, միացավ այս կազմակերպության՝ 1949թ. մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրությանը, որի հոդված 3-ը միանշանակ սահմանում է. «Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի **իրավունքի գերակայության** սկզբունքը եւ այն սկզբունքը, որի համաձայն յուրաքանչյուր անձ, ով գտնվում է այդ անդամի իրավագործության ներքո, պետք է օգտվի մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից»:

Ցանկանում ենք հատուկ առանձնացնել նաեւ Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան (04.11.1950թ.), որի նախաբանում ոչ միայն ամրագրված են վերոհիշյալ դրույթները, այլև շեշտադրված են այնպիսի հասկացություններ ու ձեւակերպումներ, ինչպիսիք են՝ «մարդու իրավունքների համընդհանուր եւ **արդյունավետ** ճանաչում», «մարդու իրավունքների պաշտպանությունը գլխավորապես պայմանավորված է... համակարգի **իրական ժողովրդավարական** բնույթով», «ազատությունների հարգում եւ **իրավունքի գերակայություն**»³⁰⁴ եւ այլն: Հատկապես

304 Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью. М., 1998, էջ 34:

ուշադրության է արժանի վերջին ձեռակերպումը: Այն օգտագործվում է Կոնվենցիայի նախաբանում՝ որպես եվրոպական երկրների քաղաքական ավանդույթների ու իդեալների, **միասնական արժեքն-կալման արտահայտություն**: Այս Կոնվենցիան առանձնահատուկ է նաև նրանով, որ վերջինիս նորմերն ուղղակի գործողության նորմեր են եւ պաշտպանվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից: Ամրագրելով մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ Կոնվենցիան սահմանում է նաև դրանց սահմանափակման եւ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղման թույլատրելի սահմանները: Ընդ որում, այդ սահմանափակումները պետք է սահմանվեն օրենքով, լինեն համաչափ, չաղավաղեն իրավունքի էությունը: Կոնվենցիայի պահանջն է նաև սահմանազատել հիմնական իրավունքները սոցիալ-տնտեսական ու մշակութային իրավունքներից՝ յուրաքանչյուրի նկատմամբ դրսեւորելով միջազգային իրավունքի նորմերով ու սկզբունքներով սահմանված համապատասխան մոտեցում: Կոնվենցիան ու դրան կից արձանագրությունները բովանդակում են մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ այնպիսի նորմեր, որոնց ուղղակի գործողությունը պետք է երաշխավորված լինի Եվրախորհրդի անդամ յուրաքանչյուր երկրում: Հետևաբար, այդ նորմերը պետք է լիարժեք խորությամբ ու հստակությամբ սահմանադրական ամրագրում ու պաշտպանվածություն ունենան:

Առանձնակի ուշադրության է արժանի նաև «Փարիզի խարտիան նոր Եվրոպայի համար» (21.11.1990թ.): Աշխարհում տեղի ունեցող ժողովրդավարական նոր գործընթացներն անհրաժեշտություն դարձրին Փարիզի խարտիայում միջազգային իրավանորմների մակարդակով ամրագրել, որ «...Մարդու իրավունքներն ու հիմնական ազատությունները ի ծնե պատկանում են բոլոր մարդկանց, դրանք անօտարելի են եւ **երաշխավորվում են օրենքով**», «Դրանք պաշտպանելը եւ դրանց աջակցումը **կառավարությունների առաջնային պարտականությունն է**», «Դրանց հարգումը էական երաշխիք է ի հակակշիռն ենթ իշխանություն ունեցող պետության», «Դրանց պահպանումը եւ **լրիվությամբ իրականացումը ազատության, արդարության եւ խաղաղության հիմքն է**»:

Ավելացնենք նաև, որ Մարդու եւ քաղաքացու իրավունքների 1789թ. ֆրանսիական հռչակագրում շատ դիպուկ է բնորոշված՝ «...մարդու իրավունքները հաշվի չառնելը, դրանց անտեսումը կամ արհամարհումը միակ պատճառն է հասարակական դժբախտությունների եւ կառավարությունների այլասերման»:

Բերված բոլոր օրինակները միարժեքորեն վկայում են, որ Սահմանադրության գերակայության ապահովման հիմնահարցը, վերջին հաշվով, հանգում է մարդու իրավունքների ու ազատությունների երաշխավորված պաշտպանությանը՝ տարանջատված իշխանությունների ներդաշնակ գործակցության ապահովման ճանապարհով: Եվ քանի որ այդ իրավունքները «... անմիջականորեն գործող իրավունքներ» են, դրանց պաշտպանության գլխավոր երաշխիքներն են սահմանադրորեն ամրագրումը եւ կենսունակ արդարադատական համակարգը:

Եվրոպական երկրների վերջին տասնամյակների փորձն անառակելիորեն վկայում է, որ մարդու իրավունքների պաշտպանությունն առավելապես երաշխավորված է, եթե մարդն իր խախտված իրավունքների դատական պաշտպանության սահմանադրական իրավունք ունի: Այսինքն՝ արդարադատության իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության կարեւոր երաշխիքն է դառնում³⁰⁵: Սակայն նման ձեւակերպումն անկատար ու թերի է, եթե խարսխվում է մարդու իրավունքների հայեցական ըմբռնման վրա: Բանն այն է, որ մարդու եւ քաղաքացու իրավունքները, եթե նույնիսկ դրանք ամբողջական արտացոլում չեն գտել Սահմանադրության մեջ (ՀՀ Սահմանադրություն, գլ. 2 եւ 3), **չեն կարող, նրանից օտարվելով, դառնալ պետական կառավարման գործառույթ**: Եթե այդ իրավունքները ճանաչվում եւ ամրագրվում են Սահմանադրության մեջ, եթե Սահմանադրությամբ են որոշարկվում դրանց սահմանափակման շրջանակները, եւ եթե այդ իրավունքները կարող են նաև ոտնահարվել ոչ միայն տարաբնույթ գործողությունների ու անգործության, այլև «քաղաքական համաձայնության արդյունք հանդիսացող» օրենքների կամ այլ նորմատիվ ակտերի միջոցով, ապա այդ իրավունքների

305 Արդարադատությունը՝ իրավունքն է գործողության մեջ, իրականացման գործընթացում: Տե՛ս Алексеев С.С. Право: азбука-теория- философия: Опыт комплексного исследования. М., 1999. էջ 50:

պաշտպանությունը երաշխավորված կլինի միայն ու միայն այն դեպքում, երբ մարդն օժտված է նաեւ սահմանադրական արդարադատության իրավունքով:

Իրավունքի գերակայության երաշխավորման եւ մարդու իրավունքների հնարավոր սահմանափակումների հիմնահարցերը ներկայումս միջազգային սահմանադրական զարգացումների առանցքային հիմնահարցերից են: 2003թ. հոկտեմբերի 3-ին եւ 4-ին Երեսնամյա հրավիրված միջազգային կոնֆերանսին ներկա գտնվող շուրջ երկու տասնյակ երկրներից ու մի շարք միջազգային կազմակերպություններից ժամանած մասնագետները քննության առարկա դարձրին մարդու իրավունքների սահմանափակման չափանիշների հիմնահարցը³⁰⁶: Այս թեման դարձավ նաեւ Եվրոպական սահմանադրական դատարանների 2005թ. մայիսին Նիկոսիայում հրավիրված կոնգրեսի քննարկման նյութը՝ որպես առավել հրատապ թեմա, եւ որի վերաբերյալ բոլոր երկրները ներկայացրել էին իրենց ազգային գեկույցները: Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի եւ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից 2004թ. հոկտեմբերին Երեսնամյա հրավիրված միջազգային կոնֆերանսն անդրադարձավ իրավունքի գերակայության երաշխավորման հիմնահարցին՝ քննարկելով տարբեր երկրներից ներկայացված 20-ից ավելի գեկույցներ³⁰⁷: ՀՀ սահմանադրական բարեփոխումների ուղղությամբ Վենետիկի հանձնաժողովի՝ 7 երկրների ներկայացուցիչներից կազմված փորձագետների խմբի հետ սկզբնական շրջանում շուրջ երկու տարի (2000-2001թթ.) ընթացող քննարկումների ժամանակ նույնպես այդ հարցերն էին առանցքայինն ու ելակետայինը՝ ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում ամրագրված նորմ-սկզբունքների իրացումը երաշխավորելու համար: Հարցին նորովի անդրադարձ կատարվեց նաեւ Վենետիկի հանձնաժողովի անդամների հետ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ 2014թ. փետրվար-հունիս ամիսներին կազմակերպված քննարկումների ընթացքում:

306 Ст'у Конституционное правосудие в новом тысячелетии. Международный Альманах - 2003, Ереван, 2003.

307 Ст'у Конституционное правосудие в новом тысячелетии. Международный Альманах - 2004, Ереван, 2004.

Նշված քննարկումները, միջազգային սահմանադրական զարգացումների միտումներն անառարկելիորեն վկայում են, որ իրավական, ժողովրդավարական պետության կայացման համար առանցքային խնդիրն իրավունքի գերակայության երաշխավորումն է: Վերջինս հնարավոր է, եթե.

ա/ երաշխավորված է մարդու հիմնական իրավունքների անմիջական գործողությունը եւ այդ իրավունքներն ունեն ապահովման ու պաշտպանության համարժեք արդարադատական ընթացակարգեր,

բ/ առկա է նաեւ հստակ հայեցակարգ իրավունքների հնարավոր սահմանափակումների խնդրի առնչությամբ:

Ելակետային մոտեցումն այն է, որ մարդու բնական, աստվածային իրավունքները վերաբերում են սոցիալական հանրության օրգանական մաս կազմող ամեն մի անհատի, եւ դրանք կարող են սահմանափակվել միայն այն չափով, որչափով անհրազործելի են դարձնում այլոց իրավունքներն ու բնականոն համակեցությունը: Այլ խոսքով, **մարդու իրավունքների սահմանափակման գլխավոր եւ միակ չափանիշն այլոց իրավունքների ու բնականոն համակեցության երաշխավորումն է:** Այս մոտեցումն է դրված նաեւ Մարդու իրավունքների հանրնդհանուր հռչակագրի հիմքում, որի հոդված 29-ում սահմանված է, որ «Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով՝ բացառապես ուրիշների իրավունքների եւ ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգանքն ապահովելու եւ ժողովրդավարական հասարակությունում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը եւ ընդհանուր բարեկեցությունը բարելավելու նպատակով»:

Կարծում ենք, որ տարբեր չափանիշների փնտրտուքը միայն հասկացութային լուրջ շփոթ է առաջացնում:

Տարբերակման անհրաժեշտություն ունեն իրավունքի սահմանափակման «չափանիշ», «սկզբունք», «պայման», «հիմք» հասկացությունները:

Ելակետային համարելով վերոնշյալ չափանիշը՝ տարաբնույթ «սկզբունքները», «պայմանները», «հիմքերը» կոչված են նրան, թե ինչպե՞ս ապահովել եւ երաշխավորել, որպեսզի այդ չափանիշից շեղում չլինի: Այս հարցի պատասխանը տալիս է միջազգային սահմա-

նադրական պրակտիկան՝ ելնելով նշված չափանիշից սահմանելով իրավունքների սահմանափակման հետեւյալ սկզբունքները (այսպես կոչված՝ «ոսկյա կանոնները»).

- անհրաժեշտությունը,
- համաչափությունն ստեղծված իրավիճակին,
- անխախտելիությունը,
- արդար եւ իրավաչափ նպատակի հետապնդումը,
- օրինականությունը,
- շահերի հավասարակշռումը,
- հստակությունն ու պարզությունը,
- խելամիտ ժամկետները,
- օպտիմալ սահմանի ընտրությունը,
- փոխհատուցման համարժեքությունը,
- օրենքի հիման վրա իրականացումը:

Առավել ընդհանուր սա նշանակում է, որ սահմանափակումները կարող են կատարվել միայն օրենքով, հանուն Սահմանադրությամբ նախատեսված եւ ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ իրավաչափ նպատակի, ինչպես նաեւ սահմանափակման հետեւանքով իրավունքը չպետք է գրկվի իր բովանդակությունից, չպետք է վտանգվի իրավունքի գոյությունը, աղավաղվի դրա էությունը:

Չափազանց կարեւոր է նաեւ, թե ինչպես են նշված չափանիշը եւ դրա կիրառումն ապահովող սկզբունքներն ընկալվում, մեկնաբանվում եւ գործադրվում սահմանադրական արդարադատության պրակտիկայում:

Ըստ սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայի՝ **պետությունը կարող է սահմանափակել իրավունքը, եթե սահմանափակումն արդարացված է այլ իրավունքների պաշտպանությամբ կամ որեւէ այլ սահմանադրական արժեքի պաշտպանությամբ, կամ սահմանադրական նպատակով, եթե պաշտպանությունը կամ նպատակի ձեռքբերումը չի կարող իրականացվել որեւէ այլ միջոցով՝ ելնելով իրավունքի գերակայության սկզբունքից:**

Սահմանադրական լուծումների մակարդակում սահմանափակման ենթակա իրավունքների համակարգն ունի հետեւյալ կառուցվածքը.

- ա/ իրավունքներ, որոնք կարող են սահմանափակվել օրենքով՝ առանց որեւէ այլ պայմանի: Այս դեպքում օրենսդիրն ունի հայեցողության լայն շրջանակ,

- բ/ իրավունքներ, որոնք կարող են սահմանափակվել օրենքով՝ միայն որոշակի պայմաններով, որոշակի նպատակներով կամ որոշակի միջոցներով,
- գ/ իրավունքներ, որոնց սահմանափակումը չի կարող կատարվել օրենքով: Հաշվի առնելով այս իրավունքների իրականացման եւ երրորդ անձանց իրավունքների միջեւ բախման վտանգը, այս իրավունքները, այնուամենայնիվ, բացարձակ չեն եւ կարող են սահմանափակվել: Քանի որ այս իրավունքները չեն կարող սահմանափակվել օրենքով, դրանց իրականացման սահմանափակումներն ամրագրվում են սահմանադրական մակարդակով,
- դ/ մարդկային արժանապատվության պաշտպանությունը եւ մի շարք իրավունքներ դուրս են սահմանափակումների տարբերակված համակարգից, քանի որ այդ հիմնարար իրավունքները ոչ մի սահմանափակման ենթակա չեն:

Չնայած նրան, որ յուրաքանչյուր կոնկրետ իրավունքի սահմանափակման պայմանները սահմանվում են միայն տվյալ իրավունքի կապակցությամբ, Սահմանադրությամբ գծվում են բոլոր իրավունքների սահմանափակման արտաքին սահմանները: Այն է՝ իրավունքը սահմանափակող օրենքը պետք է վերաբերի ընդհանուրին եւ ոչ թե կոնկրետ դեպքի: Ոչ մի դեպքում չի կարող աղճատվել իրավունքի էությունը:

Տարբեր երկրներում տարբեր են, այսպես կոչված, բացարձակ, չսահմանափակվող իրավունքների շրջանակները: Մասնավորապես, 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրությամբ սահմանվում էր նախ. օրենքով սահմանափակման ենթակա իրավունքների շրջանակը (Հոդված 43. Մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրության 23-25, 27, 28-30, 30.1-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի երրորդ մասով ամրագրված հիմնական իրավունքները եւ ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար:

Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները):

Սահմանվում էր նաեւ չսահմանափակվող իրավունքների շրջանակը (Հոդված 45. Մարդու եւ քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 եւ 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում): Այսինքն, նույնիսկ ռազմական կամ արտակարգ դրության պայմաններում չէին կարող թեկուզ ժամանակավորապես սահմանափակվել կյանքի իրավունքը, խոշտանգումների արգելումը, անձնական եւ ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, անմեղության կանխավարկածի իրավունքը, պատժի համաչափության սկզբունքը եւ այլն:

2015թ. սահմանադրական փոփոխությունները հստակ սահմանեցին յուրաքանչյուր կոնկրետ իրավունքի հնարավոր սահմանափակման շրջանակները, ինչպես նաեւ 76-րդ հոդվածով սահմանվեց, որ «Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքները եւ ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 41-րդ հոդվածի 1-ին մասում, 47-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի առաջին նախադասությունում եւ 8-րդ մասում, 52-րդ, 55-րդ հեղվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում»: Միաժամանակ, Սահմանադրության 77-րդ հոդվածով սահմանվեց, որ

«Արգելվում է հիմնական իրավունքների եւ ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

Սահմանադրական լուծումների մակարդակում եւ իրավակիրառական պրակտիկայում չափազանց հրատապ է իրավունքների սահմանափակման համամասնականության սկզբունքի ճիշտ կիրառման խնդիրը: Արեւմտյան Եվրոպայի երկրների սահմանադրական արդարադատության պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ համամասնության սկզբունքը կիրառելիս՝ սահմանադրական դատարաններն առաջին հերթին պետք է պարզեն, թե արդյո՞ք իրավաչափ նպատակը համապատասխանում է իրավաչափ միջոցին: Ընտրված միջոցը պետք է բավարար լինի տվյալ նպատակին հասնելու համար, այն է՝ տվյալ նպատակը պետք է ձեռք բերվի ընտրված սահմանափակող միջոցի օգնությամբ: Անհրաժեշտությունն առկա է, եթե բոլոր հնարավոր միջոցներից ընտրված է այն միջոցը, որը նվազագույնն է սահմանափակում տվյալ իրավունքը: Այնուհետեւ, դատարանը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք անհատի իրավունքների սահմանափակումը համաչափ է հանրության համար հետապնդվող շահին:

Չափազանց կարեւոր է նաեւ այն հանգամանքը, որ իրավունքներն ու ազատությունները սահմանափակելիս օրենսդիրը չի կարող նախատեսել այնպիսի կարգավորում, որը ոտնձգություն լինի իրավունքի էության դեմ կամ հանգեցնի իրավունքի էության կորստին: Հանրային շահերը կարող են արդարացնել իրավունքի սահմանափակումները, եթե սահմանափակումները համապատասխանում են արդարության պահանջին, համաչափ եւ համամասն են սահմանադրորեն կարեւորվող արժեքներին եւ չունեն հետադարձ ուժ:

Համամասնության սկզբունքն ունի երեք տարր.

- սահմանափակումը պետք է հանդիսանա իրավաչափ նպատակին հասնելու միջոց,
- սահմանափակումն անհրաժեշտ է նպատակին հասնելու համար, քանի որ բացակայում են տվյալ իրավաչափ նպատակին հասնելու սահմանափակող այլ միջոցներ,
- ընտրված սահմանափակող միջոցը պետք է լինի արդարացի միջոց:

Համամասնության սկզբունքի ապահովումը գնահատելիս Սահմանադրական դատարանը պարտավոր է պատասխանել հետևյալ հարցերին.

- եղե՞լ են, արդյոք, իրական պատճառներ իրավունքի սահմանափակման համար,
- առկա՞ է, արդյոք, սահմանափակման որեւէ այլ միջոց, որը կունենար նույն ազդեցությունը,
- արդյո՞ք սահմանափակման ընտրված միջոցն արդյունավետ է տվյալ իրավաչափ նպատակին հասնելու համար,
- արդյո՞ք սահմանափակումներն այն ծավալի են, որ անընդունելի են տվյալ իրավաչափ նպատակի համար:

Անհամաչափ սահմանափակումներից խուսափելու համար սահմանափակող նորմը պետք է լինի իրավական տեխնիկայի պահանջներին համապատասխան ձեւակերպված, կոնկրետ եւ հստակ, լայն մեկնաբանություն եւ կամայական կիրառում թույլ չտվող:

Այս առնչությամբ 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության 79-րդ հոդվածում հստակ սահմանվեց, որ «Հիմնական իրավունքները եւ ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը եւ ծավալը, լինեն բավարարչափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների եւ ազատությունների կրողները եւ հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Իրավունքների սահմանափակումն ունի նաեւ մի շարք վտանգներ: Այն առաջին հերթին վերաբերում է «... եթե դա անհրաժեշտ է պետական եւ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների եւ ազատությունների, պատվի եւ բարի համբավի պաշտպանության համար» դրույթի, ինչպես նաեւ «...սահմանափակումները կարող են կատարվել հանուն Սահմանադրությամբ նախատեսված եւ ժողովրդավարական հասարակության համար անհրաժեշտ իրավաչափ նպատակի» դրույթի մեկնաբանմանը:

Երկու դեպքում էլ վտանգից խուսափելու հիմնական ճանապարհը համամասնության սկզբունքի հետետողական իրացումն է՝ թե՛ օրենսդրի եւ թե՛ արդարադատություն իրականացնող մարմնի կողմից:

Առանձնահատուկ խնդիր է արտակարգ իրավիճակներում իրա-

վունքների սահմանափակման հարցը: Այստեղ որոշակի հստակություն մտցրեց Եվրախորհրդի Նախարարների կոմիտեն՝ 2002թ. հուլիսի 11-ին հաստատելով «Ղեկավար սկզբունքները» մարդու իրավունքների պաշտպանության եւ ահաբեկչության դեմ պայքարի ոլորտում³⁰⁸: Այդ փաստաթղթի 15-րդ կետի 2-րդ ենթակետով հստակ սահմանված է, որ պետությունը ոչ մի դեպքում ու պարագայում, անկախ նրանից, թե ինչ բնույթ են ունեցել ահաբեկչություն կատարած կամ դրանում մեղադրվող անձի գործողությունները, չի կարող նահանջ կատարել կյանքի իրավունքից, խոշտանգումների ու մարդու արժանապատվությունը վիրավորող վերաբերմունքի կամ պատժի արգելումից, պատժի օրինականության ու քրեական օրենքի հետադարձ ուժի բացառման սկզբունքներից:

Երկրի ողջ իրավակարգի համար չափազանց կարեւոր է, որպեսզի Սահմանադրության մեջ հստակ ամրագրվեն.

- այն իրավունքները, որոնք որեւէ սահմանափակման ենթակա չեն,
- այն իրավունքները, որոնց սահմանափակման շրջանակն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ,
- օրենքով սահմանափակվող իրավունքները եւ սահմանափակման պայմանները,
- արտակարգ իրավիճակներում իրավունքների սահմանափակման սահմաններն ու կարգը:

Առանձնապես վերջին պարագայում Սահմանադրության մեջ հատուկ ուշադրություն պետք է դարձվի իրավունքների սահմանափակման գործառնությանին, հակակշռող եւ զսպող լիազորությունների արդյունավետ գործող հաշվեկշռի երաշխավորմանը: Վերջինիս բացակայության եւ սահմանադրական անհստակությունների պայմաններում չափազանց ծանր կացության առջև կարող է հայտնվել սահմանադրական արդարադատության համակարգը՝ բախվելով իրավական սկզբունքների ու քաղաքական իրողությունների խոր հակամարտությանը:

Ինչպիսի՞ն պետք է լինի մոտեցումն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիմնահարցին: Իշխանությունների բա-

308 Руководящие принципы Комитета Министров Совета Европы в области прав человека и борьбы с терроризмом (утверждены на 804-м заседании Комитета Министров 11 июля 2002 г.).

ժամումը եւ հավասարակշռումը յուրաքանչյուր երկրի սահմանադրական լուծումների համար, անտարակոյս, ունի հիմնաքարային նշանակություն³⁰⁹: Այն ավելին է, քան իշխանության մարմինների գործառնությունների միջեւ սահմաններ գծելը: Դա համակարգային լուծում է, գործառնությունների փոխլրացման ու հավասարակշռման համակարգ:

Սահմանադրորեն այս սկզբունքի առաջին ամրագրումից անցել է 200 տարուց ավելի, սակայն կյանքը վկայում է, որ, անկախ տարաբնույթ մեկնաբանություններից, իշխանությունների բաժանումը եւ հավասարակշռումը իրավական պետության համար եղել ու շարունակում է մնալ որպես անկյունաքարային արժեք, ձեռք է բերում նոր իմաստ ու նշանակություն: Խորհրդային իրավունքը 20-25 տարի առաջ իշխանությունների բաժանումը եւ հավասարակշռումը դիտարկում էր որպես «բուրժուական սկզբունք»՝ բնորոշ արտասահմանյան սահմանադրական մոդելներին: Սա է անցյալի իրավամտաձողության ժառանգությունը, որի հաղթահարումը դյուրին գործ չէ: Մինչդեռ, ինչպես իրավագիտրեն նշում է Բեռլինի համալսարանի պրոֆեսոր Ա. Բլանկենագելը, իշխանությունների բաժանումը եւ հավասարակշռումը նոր ու նորագույն ժամանակներում սահմանադրական պետության զարգացման հիմնական ձեռքբերումներից է³¹⁰: Այդ սկզբունքի էությունը, վերջին հաշվով, կայանում է նրանում, որ առաջադրվում է պետական իշխանության սահմանափակման գաղափարը՝ դրա տարանջատված ճյուղերի փոխադարձ զսպման ու հակակշռման միջոցով³¹¹: **Դրա շնորհիվ հաղթահարվում է իշխանության կենտրոնացման վտանգը եւ անհրաժեշտ նախադրյալներ են ստեղծվում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների իրացման ու պաշտպանության համար:**

ԱՄՆ Սահմանադրության հայրերի մեծագույն ներդրումներից է համարվում այն, որ նրանք իշխանությունների տարանջատման տեսությունը լրացրին «հակակշիռների ու զսպումների համակարգի»

309 Այդ մասին մասնավորապես տե՛ս Алебастрова И.А. Основы американского конституционализма. М., 2001, էջեր 83-85:

310 Տե՛ս Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 5:

311 Տե՛ս Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 256:

դոկտրինայով, որը 1787թ. Սահմանադրության համար դարձավ անկյունաքարային արժեք³¹²: Սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ «հակակշիռների ու զսպումների համակարգի» միջոցով իշխանությունների «ստատիկ» տարանջատմանը «դինամիկ» բնույթ է հաղորդվում: Ինչպես ժամանակին իր մտահոգությունն է արտահայտել Հեգելը՝ եթե հաշվի չի առնվում իշխանությունների «կենդանի միասնությունը», ապա դրանց ստատիկ հավասարակշռումը միշտ վտանգված կլինի: Իր հերթին պրոֆեսոր Օ. Վ. Մարտիշինն իրավացիորեն գտնում է, որ «հակակշիռների ու զսպումների համակարգի» ոչ արդյունավետ գործադրումն ու տարանջատված իշխանությունների միայն ստատիկ հավասարակշռության հաստատումն անխուսափելիորեն բերելու է իշխանության կաթվածահարման ու ճգնաժամի³¹³:

Իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը եւ քաղաքական, վարչական, տնտեսական ուժի օպտիմալ ապակենտրոնացումն օրգանապես կապված են եւ ներկայացնում են նույն երեսույթի տարբեր դրսևորումները: Ընդ որում, խնդրին ձեռնարկում մոտեցում դրսևորելու դեպքում եւ տնտեսական, քաղաքական ու վարչական ուժի սերտաճած կենտրոնացման պայմաններում անխուսափելի են անհանդուրժողականությունը, կոռուպցիան, մաֆիան, կլանայնությունը, կրիմինալ անձնիշխանությունը, մի կողմից, մյուս կողմից՝ ոտնահարված մարդկային իրավունքներն ու արժանապատվությունը, սոցիալական բացասական էներգիայի գերկուտակումներն ու պայթյունի վտանգները:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի նախագահ, պրոֆ. Վ. Ջորկինը գտնում է, որ անկախ բազմաբնույթ դրսևորումներից, իշխանությունների բաժանումը եւ հավասարակշռումը առկա է միայն այնտեղ, ուր.

- օրենքն ունի բարձրագույն իրավաբանական ուժ եւ ընդունվում է օրենսդրի (ներկայացուցչական մարմնի) կողմից,
- գործադիր իշխանությունը հիմնականում զբաղված է օրենքների կատարմամբ, սահմանափակված է ենթաօրենսդրական նորմաստեղծմամբ ու ենթակա է խորհրդարանին կամ Նախագահին,

312 Տե՛ս Алебастрова И.А. Основы американского конституционализма, М., 2001, էջ 9:

313 Տե՛ս Мартышин О.В. Конституция Российской Федерации 1993 г. как памятник эпохи // Государство и право, 2004, N 4, էջեր 13-16:

- օրենսդիր ու գործադիր իշխանության թեւերի միջեւ ապահովված է լիազորությունների հաշվեկշիռ,
- դատական մարմիններն անկախ են եւ իրենց իրավասությունների շրջանակում՝ ինքնուրույն,
- նախատեսված են իրավական միջոցներ իշխանության բոլոր թեւերի փոխադարձ հակակշռման համար³¹⁴:

Իշխանությունների տարանջատման եւ հակակշռման խնդիրն առաջին հերթին բնորոշում է երկրում սահմանադրական ժողովրդավարության եւ պառլամենտարիզմի զարգացման աստիճանը: Ներպառլամենտական հարաբերություններում այդ սկզբունքն ստանում է յուրահատուկ դրսեւորում: Խնդիրն այն է, որ լայն իմաստով իշխանությունների հավասարակշռման համար գործառնությանից որոշակի դեր է վերապահվում նաեւ խորհրդարանական փոքրամասնությանը: Վերջինս պետք է կարողունակ լինի ու հնարավորություն ունենա քաղաքական մեծամասնությանը պահել սահմանադրական դաշտում՝ հակակշռելով նրա օրինաստեղծ գործունեությանը, հանդես գալ որպես իրավական ակտերի սահմանադրականության հարցը նաեւ դատական քննության առարկա դարձնող լիիրավ սուբյեկտ: Հակառակ պարագայում գործ կունենանք «դե ֆակտո» միակուսակցական խորհրդարանի հետ՝ դրանից բխող բոլոր բացասական հետեւանքներով:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման խնդիրն առավել դժվար է լուծել կառավարման, այսպես կոչված, կիսանախագահական համակարգերում, ուր սահմանադրական լիազորությունների հարցերով վեճերն առավել հաճախ ու սուր են դրսեւորվում: Կիսանախագահական համակարգը գործնականում դուալիստական բնույթ ունի, այն խորհրդարանական համակարգ է երկու գործադիրով՝ Նախագահ եւ կառավարություն (Ֆրանսիա, Իռլանդիա, Լեհաստան, Լիտվա, Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան եւ այլն)³¹⁵: Այս համակարգի հիմնական բնու-

314 Зоркин В. Реализация конституционного принципа разделения властей в практике Конституционного Суда России. Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 17:

315 Հայաստանը շատ բնութագրիչներով կիսանախագահական կառավարման համակարգ ունենալով հանդերձ, ունի նաեւ էական տարբերություններ ման համակարգին պատկանող այլ երկրների համեմատ: Դա առաջին հերթին վերաբերում է երկրի Նախագահի անորոշ ու չհավասարակշռված տեղին ու դերին սահմանադրական համակարգում, որը լուրջ եւ ինքնուրույն քննարկման նյութ է:

թագրիչն այն է, որ կառավարության եւ խորհրդարանի միջեւ սկզբունքային վեճի դեպքում ոչ միայն խորհրդարանը կարող է անվստահություն հայտնել կառավարությանը, այլեւ Նախագահը կարող է լուծարել խորհրդարանը: Որպես կանոն, կիսանախագահական համակարգերում Նախագահն ընտրվում է ժողովրդի կողմից, ունի հիմնականում հակակշռող լիազորություններ, ինչպես նաեւ որոշ գործառնության լիազորություններ գործադիր իշխանության ոլորտում:

Միջազգային սահմանադրական զարգացումների փորձը վկայում է նաեւ, որ մնան համակարգերում, անկախ դրանց բարդության աստիճանից, նույնպես գտնվել են արդյունավետ ու հասարակական պրակտիկայի քննությունը բռնաժ լուծումներ: Սակայն դրա համար ելակետայինն այն է, որպեսզի նախ՝ **լուծվի գործառույթ - ինստիտուտ - իրավասություն համակարգի ներդաշնակության խնդիրը:** Երկրորդ՝ **ճշգրտվեն ու ներդաշնակվեն իշխանության յուրաքանչյուր թեւի գործառնության, հակակշռող եւ զսպող լիազորությունների շրջանակներն** այն հաշվով, որպեսզի, մի կողմից, ապահովվի իշխանության յուրաքանչյուր թեւի հարաբերականորեն անկախ ու լիարժեք գործունեությունը՝ չխաթարելով «գործառույթ - ինստիտուտ - իրավասություն» համակարգի հավասարակշռությունը, մյուս կողմից՝ անհրաժեշտ ու բավարար հակակշիռների ու զսպումների շնորհիվ պահպանվի այդ ներդաշնակությունը դինամիկայում:

Անկախ կառավարման ձեւից ու իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի ընկալման մակարդակից, **ժողովրդավարական կարգերի ու իրավական պետության համար անխուսափելի անհրաժեշտություն է ոչ միայն բաժանման, այլեւ իշխանությունների հավասարակշռման պարագան:** Ինչպես արդարացիորեն նշում է Լիտվայի Սահմանադրական դատարանի նախագահ Էգիդիյուս Կուրիսը՝ «Իշխանությունների բաժանումը ենթադրում է դրանց հավասարակշռում, իսկ հավասարակշռությունը, հասկանալի է, չի կարող լինել այնպիսի իշխանությունների միջեւ, որոնք տարբեր կշիռ ունեն»³¹⁶: Իսկ Մլովակիայի ՄԳ նախագահ Յան Մազակի կարծիքով՝ իշխանության թեւերի միջեւ անհրաժեշտ է այնպիսի հաշվեկ-

316 Эгидиус Курис. Доктрина разделения властей в практике Конституционного Суда Литвы. Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 106:

շիռ, որն ապահովի դրանց հավասարակշռվածությունը³¹⁷:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ սահմանադրական իրավունքի տեսության մեջ ներկայումս առավել ընդունելի են համարվում իշխանությունների տարանջատման՝ մեր կողմից ձեռակերպված հետևյալ հիմնական չափանիշները³¹⁸. ա) **իշխանության քեների հարաբերական անկախությունը**, բ) **անհրաժեշտ սահմանադրական ինստիտուտների առկայությունը**, դրանց **լիազորությունների ամբողջականությունն ու համարժեքությունը գործառույթներին**, գ) **պետական իշխանության հավասարակշռված գործունեության անընդհատության երաշխավորվածությունը**, որն իր հերթին ենթադրում է ներսահմանադրական այնպիսի երաշխիքների ամրագրում, որոնց օգնությամբ հնարավոր կլինի բացահայտել, գնահատել ու վերականգնել գործառութային խախտված հավասարակշռությունը: Միայն այս պարագայում է հնարավոր ապահովել դինամիկ ու ներդաշնակ զարգացում, խուսափել քաղաքական ու հասարակական «պայթյունային» լուծումներից:

Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքը համարվում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության սահմանադրական կարգի հիմունքների՝ սահմանադրորեն ամրագրված հիմնարար սկզբունքներից մեկը: Այդ սկզբունքը պետք է մեկնաբանել որպես պետական իշխանության իրական գործունեության սահմանափակում, հավասարակշռում, դրանց համագործակցություն եւ փոխկապվածություն: Պատահական չէ, որ երկրների մեծ մասը Սահմանադրությամբ ոչ թե շեշտադրումը կատարում է սկզբունքի, այլ իշխանությունների իրական բաժանման ու հավասարակշռման, դրանց գործակցությունն ապահովելու եւ այդ հայեցակարգային մոտեցումը Հիմնական օրենքում ամրագրելու վրա: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության հոդված 10-ում սահմանված է. «Ռուսաստանի Դաշնությունում պետական իշխանությունն իրականացվում է այն օրենսդրի, գործադիրի եւ դատականի բաժանման

317 Ян Мазак. Разделение властей в решениях Конституционного Суда Словакии. Конституционный Суд как гарант разделения властей: Сборник докладов. М., 2004, էջ 167:

318 St'u G. Harutyunyan, A. Mavčič The Constitutional Review and its Development in the Modern World (a comparative constitutional analysis), Yerevan - Ljubljana, 1999, էջ 382:

հիման վրա: Օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների մարմիններն ինքնուրույն են»: Ավելին, շատ երկրների սահմանադրություններում շեշտադրումը կատարվում է նաեւ իշխանությունների փոխկախվածության (Պորտուգալիա, հոդվ. 111), փոխգործակցության (Մոլդովա - 6), համագործակցության (Բրոզսուան - 3), հավասարակշռության (Լեհաստան - 10), հաշվեկշռվածության (Էստոնիա - 4) վրա եւ այլն: Տարբերույթ նման մոտեցումները պայմանավորված են նաեւ իշխանությունների տարանջատման չափանիշների եւ սահմանադրական այդ կարեւոր սկզբունքի տեսական մեկնաբանման ու գործնական իրացման տարբեր հայեցակարգերով: Առանձնահատուկ կարեւորվում է սահմանադրական հակակշիռների ու զսպումների հատակ սահմանումը եւ իշխանությունների սահմանադրական գործառութային, հակակշռող եւ զսպող լիազորությունների դինամիկ հաշվեկշռի երաշխավորումը: Ցավոք, այս հարցերը տեսական գրականության մեջ խիստ քերի են պարզաբանված: Մեր կարծիքով, **սահմանադրական հակակշիռը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառութային բնույթի լիազորություն է կոչված դինամիկայում պահպանելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը:** Իր հերթին, **սահմանադրական զսպումը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառութային եւ ոչ հակակշռային բնույթի լիազորություն է կոչված կանխելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշռի հնարավոր խախտումը՝ հակակշիռների համակարգի կողմից այն չապահովելու դեպքում:** Սահմանադրական ճարտարապետության առանցքային խնդիրն էլ հենց այն է, որպեսզի երաշխավորվի իշխանության քերի գործառութային հավասարակշռությունը դինամիկայում: Դրա համար սահմանադրական ամեն մի գործառութային լիազորություն պետք է հակակշռված ու զսպված լինի իշխանության այլ քերի համապատասխան լիազորություններով:

Ժամանակակից սահմանադրական իրավունքի շատ տեսաբանների (մասնավորապես, գերմանացի պետականագետ Կ. Հեսսեի) կողմից իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հիմնական բնորոշիչները համարվում են մարդկանց համատեղ գործունեության կարգավորումը եւ կարգապահությունը, իշխանության առանձին ճյուղերի սահմանումը, դրանց իրավագրության որոշումը եւ սահմանափակումը, ընդհանուր աշխատանքի

կարգավորումը, պետական մարմինների իրավագործության հավասարակշռումը եւ, արդյունքում, սահմանափակ պետական իշխանության միասնականությունը³¹⁹: Բանը այն է, որ չի բացարձականացվում իշխանությունների բաժանման պարագան: Տվյալ սկզբունքը ենթադրում է նաեւ գործառության հստակեցված ու անկախաբար իրականացվող իրավասություններով օժտված միասնական իշխանության տարբեր թեւերի փոխգործակցություն ու հավասարակշռվածություն: Այդ առումով միջազգային պրակտիկայում փորձ է արվում սահմանադրորեն սահմանել իշխանության սահմանափակումները, ստեղծել իշխանությունների փոխկապվածության, գործողությունների «պարտադրված» համաձայնեցման համակարգ (խորհրդարանի կողմից կառավարության ծրագրի հաստատում, Նախագահի արգելանքի (վետոյի) իրավունքը, խորհրդարանի կողմից Նախագահի արգելանքի հաղթահարման իրավունքը, խորհրդարանն արձակելու Նախագահի իրավունքը, կառավարությանն անվստահություն հայտնելու խորհրդարանի իրավունքը եւ այլն): Իր հերթին, իշխանության հավասարակշռվածության պահպանման կարելուրագույն պայման է սահմանադրական ընդդատության եղանակով պետական իշխանությունների սահմանադրական լիազորությունների հաշվեկշռի խախտման բացահայտման, գնահատման ու վերականգնման գործուն համակարգի առկայությունը: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ երեք իշխանություններից յուրաքանչյուրը պետք է առնվազն ունենա այնքան լիազորություններ, որ ապահովի նրա էության դրսևորումը³²⁰:

Առավել վտանգավորն իշխանության երեք թեւերից դուրս իշխանությանն ուր ճյուղի, այսպես կոչված, փնտրտուքներն են, որոնք ոչ այլ ինչ են, քան նման հավասարակշռության բացառում, տարաբնույթ գերիշխանության կարոտախտ ու քաղաքական, վարչական եւ տնտեսական ուժի կենտրոնացման միջոցով կորպորատիվ կառավարման համակարգի համար կանաչ ճանապարհ: Նման մոտեցումները չափազանց վտանգավոր են եւ ընդհանուր ոչինչ չունեն իրավական ժողովրդավարության հաստատման սկզբունքների ու քաղաքացիական հասարակության արժեհամակարգային մոտեցումների հետ: Իշխանությունների

³¹⁹ Տե՛ս Хесце К. Основы Конституционного права ФРГ. М., 1981, էջ 237:

³²⁰ Մասնավորապես տե՛ս Լեհաստանի սահմանադրական տրիբունալի 1994թ. նոյեմբերի 21-ի՝ Խ 6/94 գործով որոշումը:

տարանջատման սկզբունքի տեսափիլիսոփայական ընդհանրացումները խարսխվում են ոչ թե առանձին մտածողների (այդ թվում Ջ. Լոկի, Շ. Մոնտեսքյոյի եւ այլոց) սուբյեկտիվ ընկալումների, այլ հասարակական հարաբերությունների հիմքում ընկած օբյեկտիվ օրենքների վրա: Եթե կասկածից վեր է, օրինակ, Օհմի այն ընդհանրացումը, որ նյութի տրամաչափերի ու դիմադրության միջեւ գոյություն ունի որոշակի կախվածություն, սպա նույնքան կասկածից վեր է նաեւ հասարակական գիտությունների կողմից բացահայտված, մշտապես ու անհրաժեշտաբար գործող այն օրինաչափությունը, որ առանց իշխանությունների իրական տարանջատման ու հավասարակշռման անհնարին է իրավական պետության եւ քաղաքացիական հասարակության կայացումը:

Մեկ այլ մոտեցմամբ (օրինակ, ըստ անգլիացի քաղաքագետ Մ. Վայլի)³²¹ խնդիրը չի սահմանափակվում օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների փոխհարաբերությունների ֆորմալ-իրավաբանական հետազոտությամբ, այլ այն դիտարկվում է նաեւ իրավական, սոցիալական եւ քաղաքական ողջ համակարգի փոխգործակցության, պետության եւ հասարակության միջեւ «հավասարակշռության» հաստատման առումով³²¹:

Ամենաընդհանուր գծերով կարելի է փաստել, որ միջազգային սահմանադրական պրակտիկայում ներկայումս ձեւավորվել է դիտարկվող սկզբունքի կիրառման երկու մոդել. իշխանությունների «ճկուն» եւ «կոշտ» բաժանում՝ կախված պետական իշխանության համակարգի բնույթից: Դրանցից առաջինը հիմնվում է օրենսդիր իշխանության գերակայությամբ իշխանությունների գործակցության վերաբերյալ Ջոն Լոկի գաղափարների վրա, իսկ երկրորդը՝ սկիզբ է առնում իշխանությունների հավասարակշռության եւ առավել հստակ տարանջատման մասին Շ-Լ. Մոնտեսքյոյի մեկնություններից: Եվրոպական սահմանադրական եւ քաղաքական պրակտիկան հենվում է թե՛ մեկ, թե՛ մյուս մոդելի վրա, իսկ երկրորդ մոդելի առավել դասական օրինակը կարելի է տեսնել ԱՄՆ-ում:

Նշված մոդելներից յուրաքանչյուրը գործում է որոշակի պայմաններում: Այդ պայմաններն են. հասարակության քաղաքական մշակույթը, քաղաքական ինստիտուտների կայացման աստիճանը, իրավական ավանդույթներն ու մտածելակերպը, հոգեբանությու-

³²¹ St' u Vile M. G. Constitutionalism and Separation of Powers. Oxford, 1967, էջեր 1-10:

նը, իրավագիտակցության մակարդակը եւ իշխանության տարբեր ճյուղերի զարգացման միտվածությունը, դրանց գործառության ին եւ կառուցվածքային զարգացումների դիալեկտիկան եւ այլն:

Առանձին երկրներում վերջին տասնամյակների նկատելի միտումներից է գործադիր իշխանության հարաբերական ուժեղացումը: Այդ գործընթացը Բրիտանիայում բնութագրվում է որպես անցում «կաբինետի կառավարման համակարգից» դեպի «վարչապետի կառավարման համակարգ», մի հանգամանք, որը հատկապես բնորոշ է ժամանակակից Մեծ Բրիտանիայի համար³²²:

Մեծ Բրիտանիայում օրենսդիր եւ գործադիր իշխանությունների միջեւ հավասարակշռության խախտումը նշվում է շատ ուսումնասիրություններում³²³: Միաժամանակ, խորհրդարանի նկատմամբ կառավարության գերակշիռ դերակատարությունը չի վկայում պառլամենտարիզմից հրաժարվելու մասին: Խորհրդարանը պահպանում է կառավարության քաղաքականությունը վերահսկելու, ճշգրտելու եւ վավերացնելու գործառույթները: Պահպանվում է կառավարության քաղաքական պատասխանատվությունը խորհրդարանի առջեւ:

Գործադիր ուղղահայացի ուժեղացման նմանօրինակ գործընթացներ նկատելի են նաեւ ոչ խորհրդարանական կամ միապետական երկրների սահմանադրական պրակտիկայում: ԱՄՆ-ում նախագահական լիազորությունների բնույթի եւ ծավալի աստիճանական ընդարձակումն ամերիկյան սահմանադրական իրավունքի եւ քաղաքական գիտության կողմից դիտվում է որպես ամերիկյան սահմանադրական պրակտիկայի ու բուն Սահմանադրության հիմնական բնորոշիչներից մեկը, երբ առանց սահմանադրական փոփոխությունների կենսագործվում է Նախագահի լիազորությունների ընդլայնման գործընթաց: Մի շարք ամերիկյան գիտնականներ հավաստում են, որ այդ իշխանության ընդարձակումը կարող է վտանգել ազատությունն ու ժողովրդավարությունը³²⁴: ԱՄՆ իրավունքի տեսա-

322 St' u Rush M. Parliamentary government in Britain. N. Y., 1981. Политическая система Великобритании, էջեր 111, 147-153:

323 St' u Beloff M., Peel G. The Government of the United Kingdom. Political authority in a changing society. L., 1980, 1981; Сэммпсон А. Новая анатомия Британии. М., 1975.

324 St' u Cass Sunstein. Changing Constitutional Powers of the American President. EECR, Vd 2, N4. Fall 1993, Vol 3. N1 Winter, 1994, էջ 99:

բաններին շատերը լուրջ քննարկման առարկա են համարում իշխանությունների տարանջատման հարցում իրավական ու քաղաքական մոտեցումների փոխառնչությունների խնդիրը՝ հաճախ ընդհուպ Գերագույն դատարանը համարելով քաղաքական ինստիտուտ³²⁵: Խնդիրն այստեղ հանգում է նրան, թե իշխանության թեւերի գործառութային դերին առնչվող հարցերը քննության առարկա դարձնելիս որքանով են փոխհամաձայնեցվում քաղաքական նպատակահարմարությունն ու սահմանադրական սկզբունքը: Բոլոր պարագաներում, անհնարին է երաշխավորել Սահմանադրության գերակայությունը՝ առանց նպատակահարմարությունն սկզբունքին ենթադասելու: Նույնիսկ փոխհամաձայնեցված նպատակահարմարությունը պետք է բխի սահմանադրական սկզբունքից:

Ուշագրավ են նաեւ այլ միտումներն արեւմտաեվրոպական երկրներում: Օրինակ, Ֆինլանդիան 1992-1995 թվականների սահմանադրական բարեփոխումների արդյունքում կիսանախագահական համակարգից անցավ հանրապետական կառավարման խորհրդարանական ձեւին: Միեւնույն ժամանակ, Իտալիայում երեւան են եկել լուրջ մոտեցումներ հակառակ գործընթացի նկատմամբ՝ խորհրդարանականից անցում կիսանախագահական հանրապետության: Նույնաբնույթ փոփոխություն կատարվեց Սլովակիայում 2000 թվականին: Իսկ Վրաստանը 2004 թվականին գերապատվություն տվեց կիսանախագահական կառավարման համակարգին՝ ի հակակշիռ նախագահականի:

Ակնհայտ է, որ նման միտումները պայմանավորված են ոչ միայն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի տարաբնույթ մեկնաբանությամբ, այլեւ, ու առավել եւս, տվյալ երկրի պետական իշխանության համակարգի առջև ծառայած խնդիրներով: Սակայն, անկախ նրանից, թե պետական համակարգի ինչ մոդել է ընտրվել՝ նախագահական, կիսանախագահական, պառլամենտական կամ մեկ այլ ձեւ, միեւնույն է՝ ընդհանուր հիմնադրույթն այն է, որ իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը եւ դրանց ներդաշնակ գործակցության ապահովումն անխուսափելի

325 Մասնավորապես տե՛ս Zoller E. Splendeurs et mise' res du constitutionnalisme. Les enseignements de l'experience americain // Revue du droit public. 1994. P. 177; Peretti T.J. In Defense of a Political Court. Princeton, N.J.: Princeton Universiti Press, 1997. P. 73.

անհրաժեշտություն են, եւ այն պետք է իրականացվի «գործառույթ - ինստիտուտ - լիազորություն» եռամիասնության համակարգային ներդաշնակության ապահովման, յուրաքանչյուր սահմանադրական ինստիտուտի համար **գործառութային, հակակշռող եւ զսպող** լիազորությունների օպտիմալ հաշվեկշռի ամրագրման, վերջինիս միջոցով՝ դինամիկայում սահմանադրական հավասարակշռության երաշխավորված պաշտպանման, ժողովրդավարության ու իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքների անվերապահորեն պահպանման ու սահմանադրորեն ապահովման շրջանակներում: Իրենց հերթին, իշխանությունների սահմանադրորեն հստակ բաժանումը, դինամիկ հավասարակշռումը եւ վերջինիս երաշխավորված պաշտպանությունը ժողովրդավարության զարգացման ու խորացման կարելուրագույն նախադրյալ են: Յուրաքանչյուր երկրի համար այս լուծումներն անկյունաքարային նշանակություն ունեն նաեւ սահմանադրական օրինականության հաստատման, սահմանադրական լիազորությունների հարցերով վեճերի լուծման ժամանակ:

Բնականաբար, տվյալ հարցում հայեցակարգային մոտեցումները ճշտելու համար չափազանց կարելուրվում է նաեւ տարբեր երկրների սահմանադրական փոփոխությունների միջազգային պրակտիկայի ուսումնասիրությունը: Վերջինս վկայում է, որ քննության առարկա հարցի առնչությամբ առկա են մի շարք կայուն միտումներ.

- առավել հստակեցվում են իշխանության թելերի գործառութային լիազորությունները, դրանք ներդաշնակվում են իշխանության տվյալ ճյուղի գործառութներին ու ամրապնդվում են այդ լիազորությունների ինքնուրույն տնօրինման երաշխիքները,
- հստակեցվում եւ ուժեղացվում են հակակշռող ու զսպող լիազորությունները,
- ամրապնդվում են ներսահմանադրական կայունության երաշխիքները,
- իշխանությունների գործակցությունն առավել մեծ չափով էլսարսխվում համագործակցության սկզբունքի եւ դինամիկ հավասարակշռություն ապահովող լուծումների վրա,
- ամրապնդվում է մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման,

- զնահատման եւ վերականգնման իրավական համակարգը,
- ակնհայտ է իշխանության թեւերի նորմատիվ-իրավարար գործունեության ոլորտում իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա գործակցության ակտիվացումը:

Այս ընդհանուր միտումների հետ մեկտեղ, ինչպես նշել ենք, կարելի է նաեւ իշխանության թեւերի գործառույթներն իրականացնող ինստիտուտների զարգացման, դրանց գործառութային դերի հստակեցման եւ անհրաժեշտ ու բավարար լիազորություններով օժտելու հարցերը:

Ժողովրդավարական զարգացման ուղի բռնած ցանկացած երկրում մերժելի են առավել վտանգավորն այն է, երբ իշխանության տարանջատված թեւերը դիտարկվում են ոչ թե որպէս իրենց գործառութային լիազորություններն անկախաբար իրականացնող իշխանություն կրող ինստիտուտներ, այլ որպէս «գործիքներ» իշխանության «իրական» կրողի ձեռքին, որպիսին, որպէս կանոն, ներկայացվում է պետության գլուխը: Տարածված է նաեւ այն թյուր ըմբռնումը, թե իրական իշխանությունն իրականացնում է գործադիր բուրգը, իսկ պետական մյուս մարմիններն անհրաժեշտ են որպէս միջոց: Անտարակույս է, որ մարդկային հասարակության մեջ նման մոդելներ նույնպէս գոյություն են ունեցել եւ ունեն: Սակայն իրավունքի տեսությունը նման քաղաքական ռեժիմները վաղուց բնութագրել է որպէս ոչ իրավական: Որքան էլ ժողովրդավարացման ցանկությունը մեծ լինի, միեւնույն է, այնտեղ, ուր երաշխավորված չէ իշխանությունների իրական բաժանում եւ հավասարակշռում, դրանց լիազորությունների իրականացման անկախության երաշխավորում եւ հակակշիռների ու զսպումների օգնությամբ հավասարակշռում, անխուսափելի են անձնիշխանության տարաբնույթ դրսևորումները՝ իրենց բացասական լուրջ հետեւանքներով:

Սահմանադրականության երաշխավորման կարելի է նախապայմանն է, որ Սահմանադրության ընդունումից հետո նրա նորմերը պետք է.

- ա) անարգել ու արդյունավետ կյանքի կոչվեն,
- բ) հուսալիորեն պաշտպանված լինեն:

Սահմանադրությունը չպետք է մնա ցանկությունների արձանա-

գրման մակարդակում, այլ պետք է երաշխավորի ու ապահովի դրանում ամրագրված նպատակների ու սկզբունքների իրացումը: Գլխավոր հարցն այն է, թե ինչպե՞ս հասնել դրան, ինչպե՞ս երաշխավորել, որպեսզի Սահմանադրությունը դառնա ապրող իրողություն՝ արտացոլելով նաև հասարակական զարգացումների հիմնական միտումները: Այս հարցերի պատասխանը մեծապես պայմանավորված է սահմանադրական հիմնական սկզբունքների ու կոնկրետ նորմերի պաշտոնական մեկնաբանման եւ Սահմանադրության գերակայության հուսալի պաշտպանության մեխանիզմների առկայությամբ: Միջազգային պրակտիկայում ներկայումս հատուկ կարեւորվում են Սահմանադրության **անմիջական վերացական ուղղակի պաշտոնական մեկնաբանման** եւ **էվոլյուցիոն կոնկրետ մեկնաբանման** սկզբունքները: Դոկտրինալ (գիտական) կամ հայեցական մեկնաբանությունների խնդիրը կարեւորելով հանդերձ, չենք ցանկանում տվյալ պարագայում այն քննարկման առարկա դարձնել՝ նկատի ունենալով, որ այս ոլորտում խորքային տարակարծություններ գրեթե չկան: Ինչ վերաբերում է պաշտոնական մեկնաբանությանը, դրա սկզբունքներին ու ձևերին, սպա վերջիններիս առնչությամբ դեռևս առկա են տարաբնույթ մոտեցումներ եւ պարզաբանման կարոտ մի շարք հիմնահարցեր:

Ամերիկյան սահմանադրական մշակույթի բնորոշ գծերից է այն, որ մեծ դեր է վերապահվում դատական իշխանությանը Սահմանադրության մեկնաբանման հարցում: Օրինակ, Ռոբերտ Ֆ. Նագելի կարծիքով՝ «Իրավաբանների մենաշնորհն է դատարաններին ներկայացնել փաստարկներ եւ մատուցել հեղինակավոր մեկնաբանություններ: Այդպիսով նրանք հավակնում են ոչ միայն ասելու, թե ի՞նչ է Սահմանադրությունը գործնականում, այլև ինչպե՞ս պետք է այն ընկալվի...»³²⁶: Նույն հեղինակը՝ տարանջատելով մեկնաբանվող եւ չմեկնաբանվող սահմանադրությունները, շեշտում է, որ «Արդյունավետ իրավական փաստարկը կարող է ներգործուն լինել, այն բացահայտում է երկիմաստություններ, որովհետև [Սահմանադրության] ուշադիր ընթերցմամբ պարզվում է, որ տեքստը նվազ պարզորոշ է, քան թվում է առաջին հայացքից, եւ այն բովանդակում է անորոշություններ պատմական առումով, որովհետև պատմությունը բարդ եւ

³²⁶ Robert F. Nagel, *Constitutional Cultures, The Mentality and Consequences of Judicial Review*, University of California Press, Berkeley 1993, էջ 7:

բովանդակալից է: Իրականում իմաստաբանությունը գլխավոր դաշնակիցն է նրանց համար, ովքեր Սահմանադրությունը դիտարկում են որպես «կենդանի փաստաթուղթ», ժամանակակից պայմաններում՝ բավարար ճկուն եւ օգտակար [...]: Քանի որ Սահմանադրության էության մասին մեր հիմնադրույթը կառուցված է դրա իմաստի փաստարկման վրա, ուստի դրա մեկնաբանությունը թվում է պարտադիր: Սահմանադրության առավել քաջածանոթ բովանդակությունը՝ պարզապես դատական մեկնաբանությունների շարք է»³²⁷:

Սահմանադրական սկզբունքները կարող են նաեւ երեւան գալ իրավակիրառման բնագավառում, երբ դատական մեկնաբանությունները՝ չապահովելով դրանց առանձնահատուկ նշանակությունը, այնուհանդերձ, պարզապես վավերացնում են կիրառական նախկին պրակտիկայի օրինականությունը: Միաժամանակ, շատ սահմանադրություններ իրենց իմաստն ստանում են կիրառման, այլ ոչ թե մեկնաբանման արդյունքում: Սահմանադրական համակարգում առավել կարեւոր սահմանադրական դրույթները բովանդակություն են ձեռք բերում առավելապես երկարաժամկետ կիրառման ընթացքում՝ դառնալով սահմանադրական մշակույթի կայուն բնութագրիչներ:

Ցանկանում ենք հատուկ շեշտել, որ սահմանադրական մշակույթը՝ թե՛ հայ իրականության մեջ եւ թե՛ միջազգային պրակտիկայում տրամաբանական զարգացում ապրելով հանդերձ, իր հիմքում ունեցել է մի շարք կայուն բնութագրիչներ՝ հասարակական համաձայնություն ու համերաշխություն, իրավունքով իշխանության սահմանափակում, «մարդու բնությանը ներդաշն, ըստ մեր բանական հոգու հաճության» օրենքների առկայություն, դրանց «անշեղ հավատարմություն», տարանջատված ու հակակշռված իշխանությունների առկայություն, մեր կյանքը «օրենքով ու ազատությամբ զսպելու» կարողություն: Այս արժեքներն են դուրս բերում առաջադիմության ու զարգացման մայրուղի: Անհասկացությունները, «հակառակությունները», «շնաբարո» վարքը, «անբարշտությունը», «իշխանավորի կամքը օրենքից վեր դասելը», «տոգիտությամբ չարափառության հաստատումը», «միաբանության մեջ ճեղքվածքը» եւ չարի ու «մարդու բնությանը» անհարիր բազում այլ դրսեւորումներ ուղիղ ճանապարհ են դեպի անխուսափելի կորուստ ու հետադիմություն: Ցավոք, մեր պատմությունը դրա բազում վկայություններ նույնպես թողել է:

327 Նույն տեղում, էջ 7-8:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ սահմանադրությունները հաճախ գրվում եւ փոփոխվում են այնպիսի իրավիճակներում, երբ հասարակության առջեւ ծառայել են բարդ ու հրատապ լուծում պահանջող խնդիրներ: Նման իրավիճակները թելադրում են առավել զգուշավոր ու պատասխանատու մոտեցում սահմանադրական մշակույթի հիմնական որակներին: Ընթացիկ խնդիրներին գերապատվություն տալը, դրանց շուրջ ձեւավորվող քաղաքական փոխհամաձայնությունները հաճախ լուրջ վտանգներ են ստեղծում ապագայի եւ ընդհանրապես երկրի սահմանադրական կարգի կայունության համար: Միանգամայն արդարացի է հայտնի սահմանադրագետ Հերման Եվարցի մտահոգությունն առ այն, որ ընթացիկ խնդիրներին սահմանադրական փոփոխություններով արագ լուծում տալը համարժեք լուծում կարող է չլինել մեծ հեռանկարի համար³²⁸: Քաղաքական իրողություններն իրենց կնիքն են դնում իրավական սկզբունքների բովանդակության ընկալման ու դրսևորման ձեւերի վրա: Հիմնականում քաղաքական իրողություններով են պայմանավորված երկրում կառավարման ձեւի ընտրությունը, իշխանությունների սահմանադրական հաշվեկշիռը, հակակշիռների ու զսպումների գործադրման պրակտիկան, իրավական հարթությունում կոնֆլիկտների հաղթահարման ներսահմանադրական երաշխիքները, քաղաքական եւ իրավական իրողությունների դինամիկ ներդաշնակման հնարավորությունները եւ այլն: Հետհամայնավարական երկրներին բնորոշ էր այն, որ նոր սահմանադրությունների ընդունման փուլերում առկա էին թե՛ ռեսանշի ձգտող ձախ ընդդիմությունը եւ թե՛ հեղափոխական լիբերալիզմը: Գրանց փոխազդեցությունը ձեւավորեց իրավական լուծումների քաղաքական փոխհամաձայնության որոշ միջավայր: Գրեթե բոլոր այդ երկրներում աստիճանաբար ոչ միայն թուլացավ ձախ ծայրահեղականությունը, այլեւ լիբերալ ռոմանտիզմն իր տեղը զիջեց չափավոր իրատեսությանը: Էսպես խախտվեց քաղաքական ներազդեցությունների հաշվեկշիռը: Սահմանադրական լուծումների, նոր փոփոխությունների նկատմամբ աստիճանաբար գերակայեց գործող իշխանության վարչաքաղաքական ներազդեցությունը, որը

328 Герман Шварц - Основные элементы конституции. Вопросы демократии. Электронный журнал Государственного департамента США. Том 9, номер 1, март 2004 г. <http://usinfo.state.gov/journals/journalr.htm>

վտանգավոր է այն չափով, որչափով սահմանադրական լուծումները հարմարեցնում է ընթացիկ քաղաքական խնդիրների լուծմանը՝ այն չդարձնելով ընդհանուր մոտեցումների շուրջ հասարակական համաձայնության արդյունք:

Սահմանադրական բարեփոխումները պետք է դառնան հասարակական համաձայնության կայացման, քաղաքական ճգնաժամների հաղթահարման միջոց, այլ ոչ թե՝ «հակառակությունների» գոհը: Բազմաթիվ երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ նման ճգնաժամների հիմնական բնութագրիչներն են՝ քաղաքական իշխանության նկատմամբ ժողովրդի վստահության անկումը, կոռուպցիայի ծավալումն ու համակարգային ընդգրկումը (այդ թվում՝ քաղաքական կոռուպցիայի առկայությունը), քաղաքական, վարչական ու տնտեսական ուժի կենտրոնացումն ու միատեղումը, կորպորատիվ-կլանային կառավարման արմատավորումը պետական իշխանության համակարգում, հասարակական հարաբերությունների ոլորտում ստվերայնության բարձր մակարդակը եւ այլն: Այս երեւույթների բացասական միտվածության խորացումն ի չիք է դարձնում սահմանադրական ժողովրդավարության հաստատման անընդհատության երաշխավորումը, որն ամենամեծ վտանգն է անցումային երկրների համար:

Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության կողմից կազմակերպված վերջին տարիների քննարկումները վկայում են, որ գնալով ավելի մեծ կարեւորություն է տրվում սահմանադրությունների ընդունման ու փոփոխության կարգին: Հիմնական միտումն այն է, որ այդ գործընթացը հեռու պահվի ընթացիկ քաղաքական ներազդեցություններից ու քաղաքական շահարկումներից: Այդ նպատակով գերապատվությունը տրվում է Սահմանադիր ժողովի ինստիտուտի հիմնադրմանը, որը երկրի կայունության երաշխավորման հարցում կարեւոր գրավական է: Այդ մասին են վկայում բազմաթիվ երկրների փորձը, ինչպես նաեւ սահմանադրական մշակույթի ծեւավորման մեր պատմությունը: Նման ինստիտուտն ավելի է կարեւորվում երկրում քաղաքական համակարգի անկատարության, իրավամտաժողովրդի ու իրավական մշակույթի ցածր մակարդակի, քաղաքական ու հասարակական փոխհամաձայնությամբ ազգային

ու պետական առաջնահերթությունների հստակեցման ու ապահովման անհրաժեշտության պայմաններում: Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում նույնպես Սահմանադիր ժողովի հիմնումը բազում խնդիրների արդյունավետ լուծում կերաշխավորի ու մեծապես կնպաստի երկրի կայուն զարգացմանը:

Սահմանադրական ճարտարապետությունն ունի իր տրամաբանությունը, սկզբունքներն ու սահմանները: Սահմանադրությունների ընդունման կամ դրանցում փոփոխություններ կատարելու **հիմնական խնդիրն** իրավունքի գերակայության երաշխավորումն է: Իր հերթին, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման սահմանադրական հստակ երաշխիքների առկայությունն է Սահմանադրության կենսունակության գնահատման թիվ մեկ չափանիշը: Այս չափանիշը ելակետային է ու մնայուն: Յուրաքանչյուր քայլ, որն ուղղված է սահմանադրական փոփոխությունների ճանապարհով ինչ-ինչ քաղաքական խնդիրների լուծմանը, սակայն չի բխում իրավունքի գերակայության երաշխավորման սկզբունքից, չի կարող սահմանադրական լինել եւ կհակասի իրավական ժողովրդավարության արժեքներին: **Միջազգային հանրային իրավունքի կարելուրագույն սկզբունքներից է այն, որ անթույլատրելի է սահմանադրական ցանկացած փոփոխություն, որը թուլացնում է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ այդ իրավունքների ու ազատությունների իրացման երաշխիքները:** Ինչպես պատկերավոր ընդգծեց Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախագահը՝ Հանձնաժողովի 2004թ. դեկտեմբերի 61-րդ լիազումար նիստում, «առաջադիմության ճանապարհն ընտրողի դրոշին պետք է գրված լինի. **իրավունքի գերակայություն եւ ժողովրդավարություն**»:

Սահմանադրական փոփոխությունների **երկրորդ խնդիրն** իշխանությունների գործունակության ու արդյունավետ աշխատանքի երաշխավորումն է: Դա հնարավոր է բացառապես իշխանությունների տարանջատման սկզբունքի հետեւողական իրացման, դրանց լիազորությունների հավասարակշռման, հակակշիռների ու զսպումների գործուն համակարգի արմատավորման ճանապարհով միայն: Այս ուղղությամբ կատարվող յուրաքանչյուր փոփոխություն պետք է տա հետեւյալ հարցերի հստակ պատասխանը.

1. ի՞նչ փոփոխություն է կատարվում իշխանության թեւերի գործառույթային լիազորություններում եւ դրանք որքանո՞վ կարող են խախտել դիմամիկ հավասարակշռությունն ու վնասել իշխանության այս կամ այն թեւի գործառույթային անկախությանը,
2. ինչպե՞ս ապահովել **գործառույթ - ինստիտուտ - լիազորություն** շրթայի համակարգային ներդաշնակությունը,
3. որքանո՞վ են գործառույթային լիազորությունների փոփոխությունները հավասարակշռված հակակշռող լիազորություններով,
4. որքանո՞վ են զսպող լիազորություններն ամբողջական ու հուսալի՞ գործառույթային ու հակակշռող լիազորությունների նոր հաշվեկշռի պայմաններում:

Այս պատասխաններով են որոշվում իշխանության համակարգի բարեփոխումներին ուղղված սահմանադրական յուրաքանչյուր փոփոխության հիմնավորվածությունն ու արդյունավետությունը: Իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի բուն էությունը դրանց զսպումն ու սահմանափակումն է՝ հոգուտ իրավունքի: Հետեւաբար, նշված հարցերի պատասխանով է որոշվում նաեւ, թե որքանով է երաշխավորվում իրավունքի գերակայությունը: Իր հերթին, առանց սահմանադրական սկզբունքների ու նորմերի հուսալի պաշտպանության սահմանադրական կարգը զրկված կլինի ներքին ինքնապաշտպանության հուսալի համակարգից:

Սահմանադրական բարեփոխումների **երրորդ կարեւոր խնդիրն** այն է, որ երաշխավորվի հասարակական հնարավոր լայն համաձայնություն սահմանադրական լուծումների շուրջ, միաժամանակ նվազագույնի հասցվեն ու բացառվեն ներսահմանադրական բացերն ու անհամապատասխանությունները, հաղթահարվեն փակուղային վիճակները, ամրապնդվի ներսահմանադրական կայունությունը, ստեղծվեն Սահմանադրության գերակայության երաշխավորման ու սահմանադրական ժողովրդավարության հաստատման հիմնարար նախադրյալներ: Մասնագետների կողմից հաճախ է վկայակոչվում ամերիկյան սահմանադրականության հիմնական առանձնահատկությունը, համաձայն որի՝ դրան բնորոշ են կայունությունը՝ սկզբունքային հիմունքների առումով, եւ ճկունությունը՝ դրանց գործնական դրսեւորումների մեջ ու ժամանակի պահանջներին համապատաս-

խան³²⁹: Սա ոչ միայն բնորոշ է ամերիկյան սահմանադրական պրակտիկային, այլև համարվում է սահմանադրական մշակույթի կարեւորագույն որակ միջազգային առումով: Ուստի սահմանադրական փոփոխությունները պետք է ներսահմանադրական կայունության այնպիսի երաշխիքներ ստեղծեն, երբ **սահմանադրական հիմնական սկզբունքների կայուն ու անշեղ պահպանումը զուգորդվում է սահմանադրական ժողովրդավարության դինամիկ զարգացման ու Մահմանադրության գերակայության շարունակական ապահովման հետ**: Այս որակներն արդի սահմանադրական մշակույթի հիմնական բնութագրիչներն են եւ անկյունաքարային նշանակություն ունեն իրավական պետության համար:

Այդ որակների ապահովմանն ուղղված մոտեցումներով են գնահատվում նաև երկրում սահմանադրական մշակույթի իմաստավորված ընկալման բնույթն ու աստիճանը, սահմանադրականության հաստատման գործում դրսեւորվող սկզբունքայնությունը, հասարակական համաձայնության միջավայրի կարեւորումը, պետության ու ժողովրդի ապագայի հանդեպ ունեցած պատասխանատվությունը:

Սահմանադրական յուրաքանչյուր փոփոխության հիմքում հստակ հայեցակարգ պետք է դրված լինի: Առաջին հերթին պատճառաբանված պետք է լինի փոփոխությունը՝ ինչու՞, դրանով ի՞նչ խնդիր է լուծվում: Պատասխան պետք է տրվի այն հարցին, թե որո՞նք են արժեհամակարգային մոտեցումները, որքանով է փոփոխությունը երաշխավորում Մահմանադրության հիմնարար սկզբունքների առավել ամբողջական ու հետևողական իրացումը: Ամեն մի լրացում ու փոփոխություն կատարելուց առաջ պետք է պարզել, թե տվյալ խնդիրն ինչպես է լուծվել միջազգային սահմանադրական պրակտիկայում, ինչպիսի՞ն են միջազգային իրավական մոտեցումները, ինչպիսի՞ն է միջազգային արդարադատական նախադեպը, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումը: Ամեն մի կոնկրետ փոփոխություն, որն առնչվում է իշխանության մարմինների լիազորություններին ու դրանց գործառութային դինամիկ հավասարակշռմանը, պետք է գնահատվի հնարավոր հետևանքների տեսանկյունից, պարզվեն սահմանադրական երեք

329 Մասնավորապես տե՛ս Алебастрова И.А. Основы американского конституционализма. М., 2001, էջ 4:

կարելու սկզբունքների՝ իրավունքի գերակայության, ժողովրդախիշխանության եւ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հետեւողական իրացումն ապահովելու նոր հնարավորությունները:

Սահմանադրությունը պետք է ներառի քաղաքացիական հասարակության խորքային, մնայուն արժեքների ողջ համակարգը եւ երաշխավորի դրանց կայուն ու հուսալի պաշտպանությունը³³⁰: Սահմանադրական փոփոխությունները պետք է լինեն դժվարին ու խստիվ հիմնավորված: Սահմանադրական կայունությունը երկրի կայունության գլխավոր երաշխիքն է: Մյուս կողմից, Սահմանադրությունը չի կարող լինել քարացած, չարձագանքել հասարակական առաջընթացին՝ դրա խթանից վերածվելով այն արգելակողի: Միջազգային պրակտիկան այս խնդրի արդյունավետ լուծումների մեծ գինանոց է առաջադրել: Դրանց շարքում, հատկապես անցյալ դարի ընթացքում, առավել կարելուվեց սահմանադրական մեկնաբանության ինստիտուտը: Հայեցական եւ գիտական (դոկտրինալ) մեկնաբանությունների կողքին առավել կարելուվում է Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ինստիտուտը: Վերջինս հնարավորություն է տալիս Հիմնական օրենքին հաղորդել առավել մեծ ճկունություն, հասարակական դինամիզմ, էապես նվազեցնել դրանում փոփոխություններ կատարելու գայթակհությունը: ԱՄՆ սահմանադրագետների կարծիքով՝ այս երկրի Սահմանադրության կենսունակությունը մեծապես պայմանավորված է նրանով, որ Գերագույն դատարանը մոտ 215 տարիների ընթացքում շուրջ 540 հատոր կազմող իր որոշումներում ներկայացված իրավական դիքթորոշումների ու մեկնաբանությունների միջոցով շարունակաբար թարմ լիցք է հաղորդել Հիմնական օրենքին: Կցանկանայինք ամբողջությամբ մեջբերել պրոֆ. Դիկ Հովարդի եզրահանգումն այն մասին, որ «Տարբեր մեթոդներ են կիրառվել, որպեսզի ապահովվի սահմանադրական դրույթների կատարումը: Դրանց թվում են թե՛ ժողովրդի կամքը, թե՛ իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը, թե՛ օրենսդրությունը:

330 Տեղին է հիշատակել Վ.Ա. Չետվերնինի այն շեշտադրումը, որ «... հարաբերությունների համակարգը, որը բնորոշվում է «քաղաքացիական հասարակություն», ենթադրում է պատմականորեն զարգացած պետաիրավական այնպիսի իրավիճակ, որում ընդունվում է մարդու իրավունքների գերակայությունը» (տե՛ս *Феноменология государства. Сборник статей. Вып. 2. М., 2003, էջ 20*):

Սակայն ներկա աշխարհում սահմանադրություններն ավելի շատ են անդրադառնում դատական հսկողությանը՝ որպես սահմանադրական նորմերի պաշտպանության բացառիկ միջոցի: Գաղափարները՝ շարադրված ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահ Ջոն Մարշալի կողմից «Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» դատական գործի առնչությամբ, դարձան սահմանադրականության տարրեր աշխարհի տարբեր մասերում: **Լիովին կարելի է հաստատել, որ դա հանդիսացավ ամերիկյան ամենամեծ ներդրումը սահմանադրականության մեջ**³³¹ (ընդգծումը մերն է - Գ.Հ.):

Ամերիկյան սահմանադրական միտքը միարժեքորեն հավատում է, որ Սահմանադրության արդարադատական մեկնաբանման հնարավորությունն է Հիմնական օրենքին հաղորդում դինամիկ կայունություն ու չթուլացող գործունակություն: Այս հանգամանքի թերագնահատումը վկայում է սահմանադրական ժողովրդավարության սկզբունքների անտեսման կամ սահմանադրական ոչ բավարար գրագիտության մասին: Տեղին է ընդգծել Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2004թ. դեկտեմբերի 3-4-ի 61-րդ լիազումար նիստում Մապոնիայի եւ Մեքսիկայի ներկայացուցիչների ելույթներից այն ընդհանրականը, որ երկու երկրներն էլ սահմանադրական բարեփոխումների լուրջ գործընթաց են ձեռնարկել՝ գլխավոր նպատակներից մեկը համարելով սահմանադրական դատարանների ստեղծումը (ի դեպ, նման քայլեր են ձեռնարկվում նաև Էստոնիայում): Գլխավոր հիմնավորումներից են լիազորությունների հարցերով սահմանադրական վեճերի լուծման եւ Սահմանադրության մեկնաբանման խնդիրների կարելությունը եւ դրանց համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը:

Վերջին տասնամյակների եվրոպական զարգացումները նույնպես վկայում են, որ սահմանադրությունների մեկնաբանման հարցում բացառիկ կարելություն է սահմանադրական դատարանների դերը, որոնց իրավական դիրքորոշումները մայրցամաքային իրավական համակարգում սահմանադրական իրավունքի կարելության

331 Дик Ховард - К конституционной демократии во всем мире: американский взгляд. Вопросы демократии. Электронный журнал Государственного департамента США. Том 9, N1, 2004 г., <http://usinfo.state.gov/journals/journalr.htm>, // Конституционное правосудие, 2004, N3, էջեր 27-28:

աղբյուր են դառնում: Այս թեմային նվիրված բազմաթիվ միջազգային քննարկումների մեջ կցանկանայինք առանձնացնել 2004թ. փետրվարին Մոսկվայում հրավիրված միջազգային խորհրդաժողովը³³²: Նպատակ ունենալով բացահայտել սահմանադրական դատարանների դերը Սահմանադրության կայունության ու զարգացման գործում, խորհրդաժողովի մասնակիցները հատուկ կարեւորեցին Սահմանադրության վերացական ու կոնկրետ-անուղղակի մեկնաբանությունների բացառիկ դերն իրավական պետության կայացման ու զարգացման գործում: Շեշտվեց նաեւ, որ աշխարհում գործող շուրջ 110 սահմանադրական դատարաններից առավել արդյունավետ սահմանադրական վերահսկողություն են իրականացնում այն ինստիտուտները, որոնք լայն իրավասություններ ունեն Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ճանապարհով երաշխավորելու սահմանադրականության կայունությունը: Ի դեպ, եթե Սահմանադրության անուղղակի մեկնաբանության իրավասություն ունեն, առանց բացառության, բոլոր սահմանադրական դատարանները, ապա վերացական մեկնաբանության իրավասություն է վերապահված շուրջ 30 երկրների սահմանադրական դատարաններին:

Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման հարցը մի շարք նորանկախ երկրներում այնքան է կարեւորվում, որ ընդհուպ ամեն մի առանձին պատգամավորի իրավունք է վերապահվում այդ հարցով դիմել սահմանադրական դատարան: Տիպական է հատկապես Մոլդովայի փորձը: Օրինակ, թեկուզ այս երկրի Սահմանադրական դատարանի 2004թ. ապրիլի 2-ի որոշման ուսումնասիրությունը վկայում է, թե ինչպես մեկ պատգամավորի դիմումի հիման վրա քննության է առնվում Սահմանադրության 116-րդ հոդվածի 3-րդ մասի մեկնաբանման հարցը եւ լուծում է տրվում մի խնդրի, որը կարող էր բազմապիսի շահարկումների առարկա դառնալ: Մենք այստեղ կարեւորում ենք ոչ այնքան կոնկրետ խնդիրը, որքան նման խնդիրների իրավական լուծման հնարավորությունը: Տվյալ պարագայում էական է նաեւ խորհրդարանի հեղինակությունը եւ վերահսկիչ դերը, հասարակության մեջ բացասական հասարակական էներգիայի կուտակումներ թույլ չտալը, սահմանադրական արդարադատության

³³² Խորհրդաժողովի նյութերը հրապարակվել են «Конституционное правосудие» միջազգային հանդեսում (2004թ., N 2):

գործունակությունը եւ այլն: Միանգամայն իրավացի է Բ. Ա. Օսիպյանը՝ նշելով, որ «...նույնիսկ «ամենակոշտ» սահմանադրությունը պետք է ներառի գործնական հնարավորություն պարբերաբար իրականացնելու օրենսդրական բարեփոխումներ՝ խուսափելու համար տարաբնույթ սոցիալական ցնցումներից»³³³:

Իրավական պետության գնահատման կարեւոր չափանիշներից մեկն սովերային կառավարման աստիճանն է: Խնդիրն այն է, թե իրական իշխանությունը որքանով է գտնվում սահմանադրական ինստիտուտների ձեռքին եւ որքանով է դա կրում ձեւական բնույթ, իսկ իրական իշխանությունը հայտնվում է սովերային ինստիտուտների ու անհատների ձեռքին: Այս իրողության ծավալումը կարող է ուղիղ համեմատական կապի մեջ գտնվել դատական իշխանության անկախության ու գործունակության աստիճանի հետ, եւ որի երաշխավորմամբ է միայն հնարավոր դրանք կանխել:

³³³ Осипян Б. А. Идея саморазвивающейся правовой системы // Журнал российского права. 2004, N 4, т2 73:

4.4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ԱՆԳԼՈ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՅԱՄԱԶԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Միջազգային սահմանադրական միտքը վերջին տարիներին ակտիվացրել է ուշադրությունն ամերիկյան եւ եվրոպական սահմանադրականության առանձնահատկությունների բացահայտման հարցերին: Դա պայմանավորված է մի շարք գործոններով, որոնց թվում կարելի է առանձնացնել գլոբալացման ընդհանուր միտումները, միջազգային իրավունքի դերի ու ներազդեցության ակտիվացումը, ներեվրոպական ինտեգրման գործընթացները, մայրցամաքային եւ անգլո-սաքսոնական իրավական համակարգերի մերձեցման նոր դրսևորումները, ազատական իրավական արժեքների, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների, նրա արժանապատվության, իրավունքի գերակայության հիմնարար սկզբունքի նկատմամբ ձեռավորվող միասնական մոտեցումները եւ այլն:

Տարիներ շարունակ ձեռավորվել էր այն մտայնությունը, որ եվրոպական սահմանադրականությունը ներեվրոպական երեսույթ է եւ պայմանավորված է եվրոպական արժեհամակարգային զարգացման օրինաչափություններով³³⁴: Մեր կարծիքով, դա անցած փուլ է, քանի որ մի շարք նոր գործոններ վկայում են նաեւ զուտ եվրոպական համարվող արժեքների համաշխարհայնացման ակտիվ միտումների մասին: Բերենք երկու բնորոշ օրինակ: Առաջինը վերաբերում է սահմանադրական արդարադատության ոլորտին: Վերջին հարյուր տարիների ընթացքում մայրցամաքային իրավական համակարգում ծնված եւ առավելապես դրան բնորոշ սահմանադրական դատարաններ ստեղծվեցին բոլոր մայրցամաքներում՝ ավելի քան աշխարհի 110 երկրներում, դառնալով ժողովրդավարական իրավական համակարգերի էական բաղադրատարրը: Այս երեսույթը նոր որակ արձանագրեց 2009 թվականի հունվարին, երբ Հարավաֆրիկյան Հանրապետության Կեյպտաուն քաղաքում հրավիրվեց սահմանադրական արդարադա-

³³⁴ Collection Science and technique of democracy, N 37. European and US constitutionalism. G. Nolte (Editor). European Commission for Democracy through Law. Concil of Europe Publishing, 2005, p. 5.

տության մարմինների առաջին համաշխարհային կոնգրեսը, որին մասնակցեցին 93 երկրների սահմանադրական արդարադատության մասնագիտացված մարմիններ, իսկ նույն թվականի ապրիլից առաջին պաշտոնական քննարկումներն սկսվեցին սահմանադրական դատարանների համաշխարհային ընկերակցություն ստեղծելու ուղղությամբ, ինչը կյանքի կոչվեց 2011 թվականին, իսկ 2014 թվականի սեպտեմբերին Սեուլում գումարվեց թվով երրորդ կոնգրեսը, որին մասնակցեցին 114 երկրներ ու միջազգային կազմակերպություններ: 2015թ. մարտի 21-ին Վենետիկում տեղի ունեցած համաշխարհային կոնֆերանսի բյուրոյի նիստում արձանագրվեց, որ համաշխարհային այս կազմակերպությանը պաշտոնապես անդամակցում են 95 երկրների սահմանադրական ու համարժեք դատարաններ:

Երկրորդ կարևոր իրողությունը Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի կազմի ու գործունեության էվոլյուցիան է վերջին տարիներին: Ստեղծվելով 1990 թվականին՝ որպես Եվրախորհրդի իրավական-փորձագիտական մարմին, այս հանձնաժողովը զբաղվում էր բացառապես եվրոպական՝ հատկապես նորանկախ, երկրներում ժողովրդավարական զարգացումների հիմնահարցերով: Աստիճանաբար հանձնաժողովի համար առանցքային դարձան սահմանադրականության հիմնախնդիրներն ընդհանրապես: Դրան զուգընթաց հանձնաժողովի անդամներ դարձան Աֆրիկայի, Ասիայի, Լատինական Ամերիկայի մի շարք երկրների սահմանադրական դատարաններ՝ ընդհանուր առմամբ ներառելով 60 երկրներ: Փոխվեց նաև քննարկվող հարցերի ու կազմակերպվող միջազգային խորհրդաժողովների աշխարհագրությունը:

Ակնհայտ է, որ եվրոպական սահմանադրական մշակույթը, սահմանադրական հիմնարար արժեքները, սահմանադրականության ապահովման երաշխիքները դադարել են զուտ ներեվրոպական երևույթ լինելուց ու իրական եւ գործուն ազդեցություն ունեն սահմանադրականության զարգացման միջազգային գործընթացների վրա:

Ամերիկյան եւ եվրոպական սահմանադրականության որոշակի առանձնահատկություններ պայմանավորված են այն պատմական ու սոցիալական միջավայրերի տարբերությամբ, որոնց պայմաններում տեղի ունեցան սահմանադրական զարգացումները: Շատ է

գրվել ԱՄՆ Սահմանադրության մշակման, դրան նախորդող ու հաջորդող իրադարձությունների, ֆեդերալիստների ու նրանց հակառակորդների բանավեճերի, իրավունքների Բիլլի ու սահմանադրական հետագա փոփոխությունների, սահմանադրական զարգացումների գործում Գերագույն դատարանի կատարած դերի եւ այլնի մասին: Շատ բնութագրական է Ջոն Միչմի դատողությունն այն մասին, որ եթե այլ երկրների ժողովուրդների համար հիմնական միավորիչ նշանակությունը կրոնիկն է, ապա ամերիկյան ժողովրդի համար հիմնական միավորիչը Սահմանադրությունն է³³⁵: **Սահմանադրությունն էր, որ ձեւավորեց ամերիկյան ժողովուրդ՝ բազմազգ հիմքի ու պետականության ընդհանուր սկզբունքների շուրջ:**

Եվրոպական երկրներում իրողությունն այլ է: **Այստեղ հասարակություններին միավորող առաջին որակն ազգային ինքնությունն է**, պատմական հիշողությունն ու հոգեւոր արժեքների ընդհանրությունը: **Եթե Եվրոպայում մենք գործ ունենք ազգակենտրոն սոցիալական հանրության հետ, ապա Ամերիկայում այն անձնակենտրոն է, ընդհուպ՝ մեկուսի անհատների մի հանրություն, որոնց միավորողը հանրային-պետական գոյակցությունն է:** Բնականաբար, այս սոցիալական հենքի վրա սահմանադրականության զարգացումները նույնպես համարժեք որակ են ստացել:

Պատմական իրողություններն իրենց կնիքն են դրել նաեւ եվրոպական տարբեր երկրների սահմանադրական զարգացումների վրա: Մենք կփորձենք քննարկման առանցքը դարձնել մի շարք նոր իրողություններ, որոնք առավել հրատապ են գլոբալ իրավական զարգացումների ընդհանուր միտումների շրջանակներում:

ԱՄՆ-ի եւ եվրոպական առանձին երկրների համար Սահմանադրությունը դարձավ հասարակական արժեհամակարգային զարգացումների՝ հոգեւոր, սոցիալական, տնտեսական, քաղաքական, իրավական տեսական էվոլյուցիայի հանրագումարը: Արեւելյան Եվրոպայի ու նախկին համայնավարական տարածքի մեծաթիվ երկրներ ստիպված էին ընտրել մոդելային սահմանադրականության հաստատման ուղին, երբ միջազգային փորձի հաշվառմամբ ընտրվեց Սահմանադրության համապատասխան մոդել, որը, աստիճանաբար

³³⁵ Jon Meacham – The End of Christian America // Newsweek, April, 20, 2009, p. 10-14.

կյանքի կոչվելով՝ պետք է դառնար հանրության իմաստավորված սեփականությունը: Դա իր հերթին պահանջում է առանձնահատուկ մոտեցում ու տեսական ջանքեր սահմանադրականության հաստատման համար:

Եվրոպական սահմանադրականության ձեւավորման ու զարգացման գործում լուրջ ներդրում բերեց Գերմանիայի Դաշնության Հիմնական օրենքը, որն **առաջին հերթին աչքի է ընկնում կուռ արժեքա-նական հենքով ու սահմանադրաիրավական հարաբերությունների համակարգային կանոնակարգման ամբողջականությամբ**: Այն իր բնույթով ոչ թե, այսպես կոչված, «մոդելային» Սահմանադրություն է, ինչը բնորոշ է վերջին տասնամյակներում միջազգային սահմանադրական զարգացումներին եւ կառուցվում է սահմանադրական արժեքների ներմուծման ու փոխապատվաստման /տրանսպլանտացիայի/ վրա, այլ **պատմական զարգացումների տրամաբանական հանրագումար է, հասարակական համաձայնություն է ժամանակի քննությունը բռնած, ապրված, կենսագոյի իմաստավորված կանոն դարձած արժեքների շուրջ**:

Այն նաեւ եվրոպական սահմանադրականության արժեքաճանական առանձնահատկությունների խտացված արտահայտությունն է:

Գերմանական արդի սահմանադրականությունը խարսխված է պետության եւ իրավունքի մասին գերմանական տեսափիլիսոփայական հարուստ ժառանգության վրա: Միաժամանակ, ունենալով նաեւ եվրոպական առաջավոր սահմանադրական մտքի ազդեցությունները, հետմապոլեոնյան շրջանի գերմանական սահմանադրական զարգացումներին (հատկապես 1815թ. հունիսի 8-ի՝ Գերմանական միության ստեղծման մասին ակտի ստորագրումից հետո) բնորոշ են դառնում ազատական-ժողովրդավարական որակները, որոնք հիմք դրեցին սահմանադրականության հետագա զարգացումների համար³³⁶:

Գերմանական սահմանադրականության հիմքը մարդու արժանապատվությունը, նրա իրավունքներն ու ազատություններն են, իրավունքի գերակայության երաշխավորումը եւ ազատական-իրավական հարաբերությունների հենքի վրա իրավական պետության կայացումը: Ազատական սահմանադրականության հիմնական հատկանիշը

³³⁶ Տե՛ս В.Г. Баев, Европейский конституционализм после Наполеона (на примере Германии) // Журнал Российского права, 2005, N7, с. 113-124.

հենց այն է, որ անհատն իր իրավունքներով ու ազատություններով, իր բանական ինքնադրսեւորման նախադրյալներով դառնում է բոլոր սոցիալական ու քաղաքական երեւոյթների չափորոշիչ³³⁷:

Հաճախ գերմանական սահմանադրականությունը բնորոշվում է որպէս ռադիկալ ազատական³³⁸: Հիմնավորումն այն է, որ գերակայությունը տրվում է ոչ թէ պետության դերին, այլ մարդու իրավունքներին ու ազատություններին: Սակայն սա խոր արժեհամակարգային կողմնորոշում է, որը դարձավ ոչ միայն արդի եվրոպական սահմանադրականության զարգացման առանցքը, այլեւ ողջ եվրոպական իրավունքի բնորոշ առանձնահատկությունը:

Այսուհանդերձ, գերմանական սահմանադրականությունը հանդես չեկավ մեկուսի, այլ կարողացավ ներառել Արեւմտուտքի իրավական մտքի առաջադեմ ողջ ընդհանրացումները՝ պահպանելով իր ինքնատիպությունը: Դա վերաբերում է առաջին հերթին սահմանադրական ելակետային սկզբունքներին:

Եթէ շատ երկրներում մարդու իրավունքներն ի սկզբանե սահմանադրական ամրագրման առարկա չդարձան, այլ կանոնակարգվեցին հետագա օրենքների (բիլլերի) միջոցով, ապա Գերմանիայում գործ ունենք բոլորովին այլ որակի հետ՝ մարդու իրավունքներին նվիրվեց Հիմնական օրենքի առաջին իսկ բաժինը: Սա միայն խորհրդանշական ու կառուցվածքային հնարք չէ, այլ արժեհամակարգային լուրջ կողմնորոշում է:

Գերմանիայի Դաշնության Հիմնական օրենքի առաջին հոդվածի 1-ին կետն ամրագրում է, որ մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Դրա պաշտպանումը եւ հարգումն ամեն մի պետական իշխանության պարտականությունն է: Նույն հոդվածի 2-րդ կետով սահմանվում է, որ գերմանական ժողովուրդն ընդունում է մարդու **անձեռնմխելի** ու **անօտարելի** իրավունքները՝ որպէս ամեն մի մարդկային հանրության, խաղաղության եւ աշխարհում արդարության հիմք: 3-րդ կետն ամբողջականացնում է հայեցակարգային մոտեցումը՝ ամրագրելով, որ ներկայացվող հիմնական իրավունքները **պարտադիր են օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար՝** որպէս **անմիջականորեն գործող իրավունք:**

337 Мишел Розенфельд, Андраш Шайо, Распространение либерального конституционализма: изучение развития права на свободу слова в новых демократиях // Сравнительное конституционное обозрение. 2007, N1, с. 103.

338 St'u Теория конституционализма и философия государства в ФРГ // Закон и право, N5, 2001, с. 41.

Առաջին անգամ Գերմանիայի Հիմնական օրենքում ամրագրված՝ **իրավունքով իշխանության սահմանափակման իրավական պետության** հիմնարար սկզբունքը դարձավ եվրոպական սահմանադրականության անկյունաքարը: Վերջին հաշվով, սահմանադրությունները կյանքի են կոչվում երեք հիմնական առաքելություն իրականացնելու համար.

- երաշխավորելու մարդկանց իրավունքներն ու ազատությունները,
- սահման դնելու իշխանությանն ու այն իրականացնողների գործողություններին,
- սահմանելու պետական կարգի հիմունքներն ու կանոնակարգելու իշխանական գործառույթների իրականացումը:
- Գերմանական սահմանադրականության ելակետը դարձան իրավափիլիսոփայական մտքի կողմից ընդհանրացված հետելյալ անառարկելի ճշմարտությունները.
- մարդը, որպես սոցիալական երեւոյթ, հասարակական հարաբերությունների մեջ է մտնում իր բնական ու անօտարելի իրավունքներով,
- պետությունը պարտավոր է մարդու իրավունքները ճանաչել որպես բարձրագույն եւ անօտարելի արժեք, որպես սահմանադրորեն ամրագրված անմիջական գործող իրավունք,
- ամեն մի օրենք բխում է այդ իրավունքներից, պաշտպանում է այդ իրավունքները, դրանք սահմանափակում է միայն ու միայն այն չափով, որչափով դա անհրաժեշտ է այլոց իրավունքների ճանաչման ու երաշխավորման, հասարակական ներդաշնակ համակեցության համար,
- մարդու բնական իրավունքներն են ընկած ժողովրդի եւ պետության կողմից իշխանության իրականացման հիմքում: Իրավունքով է իշխանությունը սահմանափակվում, եւ ոչ թե իշխանությամբ՝ իրավունքը³³⁹,
- մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գոր-

339 Ինչպես նշում է ակադեմիկոս Վ. Ներսեսյանցը՝ «...օրենքը (այն, ինչը սահմանվում է որպես պոզիտիվ իրավունք) կարող է թե՛ համապատասխանել եւ թե՛ հակասել իրավունքին...: **Միայն որպես իրավունքի արտահայտման ձեւ է օրենքը** (պոզիտիվ իրավունքը) **իրավական երեւոյթ**: ... Ոչ թե իրավունքն է պաշտոնական-իշխանական համապարտադրականության հետեւանք, այլ հակառակը...» (Տե՛ս Ներսեսյանց Վ. Ս., Իրավունքի եւ պետության տեսություն, Երեւան, «Նաիրի», 2001, էջեր 41-43):

ժողովրդունը երաշխավորվում է Սահմանադրությամբ, օրենքներով եւ իրավակիրառական պրակտիկայով:

Հիմնական օրենքում այնքան որոշակի ու միանշանակ է շեշտադրումը հիմնական իրավունքներին (ինչպես նշվեց՝ եզակի սահմանադրություններից է, որ առաջին գլուխը ոչ թե նվիրված է սահմանադրական կարգի հիմունքներին, այլ մարդու իրավունքներին), որ որոշ սահմանադրագետներ Գերմանիայի Դաշնության հիմնական օրենքը դիտարկում են «էգոիզմն օրենսդրոեն ամրագրելու» տեսանկյունից³⁴⁰:

Գերմանական սահմանադրականության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ իրավունքները դիտարկվում են դիմամիկայի մեջ, դրանց զարգացման միտումների ու երաշխավորման պատասխանատվության ամբողջականության մեջ: Այս տեսանկյունից ուշադրության է արժանի նաեւ **իրավունքների չարաշահման սահմանադրական անդրադարձը**, որ եզակի է եվրոպական սահմանադրական պրակտիկայում, սակայն կանխարգելիչ մեծ լիցք է պարունակում ու ուշադրության է արժանի: Խոսքը վերաբերում է Հիմնական օրենքի 18-րդ հոդվածին, որը սահմանում է, որ «Յուրաքանչյուրը, ով կօգտագործի կարծիքի արտահայտման ազատությունը, մասնավորապես՝ մամուլի ազատությունը (հոդվ. 5, մաս 1)³⁴¹, դասավանդման ազատությունը (հոդվ. 5, մաս 3), ժողովների ազատությունը (հոդվ. 8), միավորման ազատությունը (հոդվ. 9), նամակագրության, փոստային, հեռահաղորդակցության ու հեռախոսային կապի զաղտնիությունը (հոդվ. 10), սեփականության իրավունքը (հոդվ. 14) կամ ապաստանի իրավունքը (հոդվ. 16.ա) պայքարելու համար ազատ ժողովրդավարական կարգերի հիմքերի դեմ, կորցնում է այդ հիմնական իրավունքները»: Իրավունքների կորուստը եւ դրա սահմանները սահմանվում են դաշնային Սահմանադրական դատարանի որոշմամբ:

Նման մոտեցումը որքան էլ պայմանավորված լիներ պատմական

340 Теория конституционализма и философия государства в ФРГ // Закон и право, N5, 2001, с. 42.

341 Նկատի պետք է ունենալ, որ ամերիկյան սահմանադրականությունն այս հարցում առավել լիբերալ մոտեցում է որդեգրել: Մասնավորապես, ԱՄՆ Սահմանադրության առաջին փոփոխության մեջ ամրագրվեց, որ Կոնգրեսը չպետք է խոսքի կամ մամուլի ազատությունը սահմանափակող օրենքներ ընդունի:

դասերով ու հանրային կյանքի փորձություններով, այսուամենայնիվ, ահագանգ էր այն մասին, որ հասարակական հարաբերություններում նույնպես չափը եւ ներդաշնակությունը փոխապայմանավորված երեւոյթներ են, եւ դրանց շնորհիվ է հնարավոր կանխել բացասական սոցիալական էներգիայի կուտակումները, դրա կրիտիկական զանգվածի ձեւավորումն ու սոցիալական աղետները:

Գերմանիայում առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվեցին նաեւ հիմնական իրավունքների սահմանափակման սահմանադրական սկզբունքները (հոդվ. 19): Այս մտտեցումը հետագայում դարձավ ելակետ իրավունքների սահմանափակման ամբողջական տեսության եւ, այսպես կոչված, երեք ոսկե կանոնների սահմանման համար: Դրանք էին՝ իրավունքների սահմանափակումը միայն օրենքով, համաչափ սահմանափակումը, արգելափակման բացառումը կամ այնպիսի սահմանափակումը, որը չի աղավաղում իրավունքի էությունը:

Մարդու իրավունքները ելակետային նշանակություն ունեցան նաեւ Գերմանիայի Դաշնության Սահմանադրական դատարանի համար: Վերջինիս իրավական դիրքորոշումների առանցքն է կազմում այն հիմնարար սկզբունքը, որ բոլոր իրավական նորմերը պետք է հիմքում ունենան ու բխեն իրավունքի գերակայության սկզբունքից: Հիմնական օրենքը պարտադրում է յուրաքանչյուր պետական ինստիտուտի հարգել ու պաշտպանել մարդու արժանապատվությունը, ճանաչել նրա իրավունքները որպես բարձրագույն ու անօտարելի արժեք, որպես իշխանության սահման, որպես անմիջականորեն գործող իրավունք: Այս վերջին հանգամանքը նույնպես բացառիկ կարեւորություն ունի մեր ժամանակների համար եւ, ցավոք, անհրաժեշտ խորությամբ չի արժեւորված ու ընկալված վերափոխվող իրավական համակարգերում:

Առանց վարանելու կարող ենք ընդհանրացնել, որ **XIX դարի առաջին երրորդում Գերմանիայում ծնվեց ու հետագայում՝ 1949թ. Հիմնական օրենքում սահմանադրորեն ամրագրվեց իրավական պետության ամբողջական, գիտականորեն հիմնավորված ու կյանքի քննությունը բռնած տեսություն, որը քաղաքակրթությունների զարգացման ներկա հոլովություն սոցիալական առաջադիմության այլընտրանք չունեցող մայրուղին է դարձել:**

XX դարի ընթացքում երկու աշխարհամարտեր տեսած, դրանցից որոշակի դասեր քաղած եւ ժողովրդավարությունն ու իրավունքի

գերակայությունն անկյունաքարային արժեք դարձրած Եվրոպայի համար՝ որպես համընդհանուր սկզբունք, **սահմանադրական մշակույթի գլխավոր կարգախոսը դարձավ այն, որ օրենքը եւ պետությունը պետք է լինեն իրավական, երաշխավորեն հավասարությունը, ազատությունը եւ արդարությունը, որոնց արժեհամակարգային հիմքը մարդու արժանապատության, նրա անօտարելի իրավունքների գերակայությունն է**³⁴²: Ընդ որում, իրավական համակարգն ամբողջական ու կենսունակ է, երբ այդ արժեքները դառնում են սահմանադրական արժեքներ, ստանում են ճանաչման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքներ: Իսկ այս հարցում անուրանալի է Գերմանիայի Դաշնության Հիմնական օրենքի դերը:

Մի կարեւոր հանգամանք էս: Ինչպես նշել ենք, հայտնի է, որ 17-18-րդ դարերի տեսաբաններից Ջոն Լոկի, Մոնտեսքյոյի, Ժան-ժակ Ռուսոյի, հետագայում նաեւ՝ Կանտի եւ այլոց մոտ ոչ միայն իրավունքի գերակայության, բնական իրավունքի սուբստանցի ըմբռնումն ստացավ նոր որակ՝ պահպանելով այն կարմիր թելը, որ **օրենքն իրավունքի մարմնացումը պետք է լինի**, այլեւ առավել հստակ գատորոշվեց իշխանությունների բաժանման գաղափարը:

Հետագայում ամերիկյան սահմանադրական միտքը նոր որակ հաղորդեց իշխանությունների բաժանման ու հավասարակշռման տեսության գործնական կիրառմանը: Ամերիկյան սահմանադրականության առանցքը դարձավ զսպումների ու հակակշիռների գործուն համակարգի մշակումը եւ սահմանադրորեն իշխանությունների տարանջատմանը դիմամիկ հավասարակշռություն հաղորդելը: Այս հարուստ ժառանգությունը հաշվի առնելով, ժամանակակից սահմանադրական իրավունքի շատ տեսաբանների (մասնավորապես՝ գերմանացի պետականագետ Կ. Հեսսերի) կողմից իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հիմնական բնորոշիչները համարվում են մարդկանց համատեղ գործունեության կարգավորումը եւ կարգապահությունը, իշխանության առանձին ճյուղերի գործառութային լիազորությունների հստակեցումը, դրանց իրավագործության որոշումը եւ սահմանափակումը, ընդհանուր աշխատանքի կարգավորումը, պետական մարմինների իրավասությունների հավասարակշռումը եւ, արդյունքում, սահմանափակ պետական իշխանու-

342 Այդ մասին տե՛ս Политико-правовые ценности: история и современность / под ред. В.С. Нерсисянца. М., 2000, էջեր 5-29:

քյան միասնականությունը³⁴³: Բանն այն է, որ ազատական իրավական հարաբերությունների պայմաններում չի բացարձականացվում իշխանությունների բաժանման պարագան: Տվյալ սկզբունքը ենթադրում է նաև գործառության հստակեցված ու անկախաբար իրականացվող իրավասություններով օժտված միասնական իշխանության տարբեր թեւերի փոխգործակցություն ու հավասարակշռվածություն: Այդ առումով միջազգային պրակտիկայում փորձ է արվում սահմանադրորեն սահմանել իշխանության սահմանափակումները, ստեղծել իշխանությունների փոխկապվածության, գործողությունների «պարտադրված» համաձայնեցման համակարգ (խորհրդարանի կողմից կառավարության ծրագրի հաստատում, Նախագահի արգելանքի (վետոյի) իրավունքը, խորհրդարանի կողմից Նախագահի արգելանքի հաղթահարման իրավունքը, խորհրդարանն արձակելու Նախագահի իրավունքը, կառավարությանն անվստահություն հայտնելու խորհրդարանի իրավունքը եւ այլն): Իր հերթին, իշխանության հավասարակշռվածության պահպանման կարեւորագույն պայման է սահմանադրական ընդդատության եղանակով պետական իշխանությունների սահմանադրական լիազորությունների հաշվեկշռի խախտման բացահայտման, գնահատման ու վերականգնման գործուն համակարգի առկայությունը: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ երեք իշխանություններից յուրաքանչյուրը պետք է առնվազն ունենա այնքան լիազորություններ, որ ապահովի նրա էության դրսեւորումը:

Ուստի հաջորդ էական հանգամանքն այն է, որ Գերմանիայի Դաշնության Հիմնական օրենքն առաջին առավել ամբողջական սահմանադրական ակտն էր, որը բովանդակեց գործուն համակարգ՝ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու եւ խախտված սահմանադրական հավասարակշռությունը բացահայտելու, գնահատելու եւ վերականգնելու համար: Թերեւս բազմաթիվ ուսումնասիրություններ կարելի է նվիրել Գերմանիայի Դաշնությունում սահմանադրական արդարադատության համակարգային առանձնահատկություններին՝ բացահայտելու համար այդ համակարգի դերն ու նշանակությունը սահմանադրական վերահսկողության միջազգային զարգացումների ներկա հանգրվանում: Այսուհանդերձ, ցանկանում ենք առանձնացնել մեկ հիմնահարց, որը, մեր կարծիքով, բացառիկ կարեւոր է ու մեզանում չընկալված:

³⁴³ St' u Xecce K. Основы Конституционного права ФРГ. М., 1981, էջ 237:

Գերմանիայի Դաշնության Հիմնական օրենքի 93-րդ հոդվածի 1-ին կետի ձեւակերպումն իր խորությամբ եւ հիմնահարցի ընդգրկումն լուծմամբ անգերազանցելի է առայսօր: Այն սահմանում է, որ «Դաշնային Սահմանադրական դատարանը որոշում է ընդունում սույն Հիմնական օրենքի մեկնաբանման վերաբերյալ՝ Դաշնային իշխանության այս կամ այն մարմնի կամ այլ կողմերի իրավունքների եւ պարտականությունների շուրջ ծագած վեճերի առնչությամբ, սույն Հիմնական օրենքով կամ իշխանության բարձրագույն մարմնի կանոնադրությամբ օժտված լինելով իրավունքներով, որոնք նրանք կարող են իրականացնել ինքնուրույնաբար»:

Հիմնական օրենքի նույն 93-րդ հոդվածի 2-4-րդ կետերը ներառեցին բոլոր այլ տիպի սահմանադրական վեճերը, որոնց արդարադատական լուծումը երկրի դիմամիկ ու կայուն զարգացման կարեւորագույն գրավականն է: Դա վերաբերում է հատկապես դաշնային կառուցվածք ունեցող երկրում շահերի ներդաշնակմանն ու կայունության երաշխավորմանը:

Առաջին անգամ սահմանադրորեն ամրագրվեց եւ տասնամյակների ընթացքում ժամանակի քննությունը բռնեց այն կարեւոր սկզբունքը, որ պետության ներսում պետականության հիմնախնդիրներին առնչվող ցանկացած քաղաքական վեճ իր արդարադատական լուծումը պետք է ստանա: **Ոչ թե իրավական վեճերը պետք է լուծվեն քաղաքական հարթությունում, այլ քաղաքական վեճերը՝ իրավական հարթությունում:** Սա իրավական պետության էական հատկանիշներից է, Սահմանադրության գերակայության ապահովման հիմնական նախադրյալներից մեկը: Այն դարձավ գերմանական սահմանադրականության մեկ այլ կարեւոր ներդրումը եվրոպական սահմանադրական զարգացումների գործում:

Գերմանական սահմանադրականության էական առանձնահատկություններից է եւ այն, որ Սահմանադրության գերակայության երաշխավորումը համակարգային ամբողջականության առումով դասական օրինակ հանդիսացավ մյուս երկրների համար: Գործնականում արմատավորվեց այն ոսկյա կանոնը, որ սահմանադրական բոլոր ինստիտուտները, այդ թվում՝ յուրաքանչյուր ոք, դարձան Սահմանադրական դատարան դիմող լիարժեք սուբյեկտ, իսկ սահմանադրական բոլոր ինստիտուտների իրավական ակտերը դարձան սահմանադրական վերահսկողության օբյեկտ: Դրանով հնարավոր դարձավ լուծել

եռմիասնական խնդիր՝ ապահովել իրավական ակտերի սահմանադրականությունը, պաշտպանել մարդու սահմանադրական իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, լուծել սահմանադրական լիազորությունների վերաբերյալ իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը: Այս բոլորը միասին Սահմանադրության գերակայության երաշխավորման էությունն ու բովանդակությունն են կազմում: Առանց չափազանցելու կարելի է արձանագրել, որ այս ոլորտում այն, ինչի հասան Գերմանիայում 1949թ. Հիմնական օրենքի ընդունմամբ ու հետագա փոփոխություններով, մասնավորապես՝ 1969թ. իրականացված, համակարգային առումով անգերազանցելի է ու օրինակելի իրավական պետության կայացման ուղի ընտրած յուրաքանչյուր երկրի համար: Գերմանիայի Դաշնության սահմանադրական լուծումները հիմնավոր ձեռով ապացուցեցին, որ անհրաժեշտ են ներսահմանադրական կայունության այնպիսի նախադրյալներ, որոնք կապահովեն մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ու իշխանությունների լիազորությունների սահմանադրական հաշվեկշռի խախտումների բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական կուռ համակարգի գործունակությունը, սահմանադրական կարգը կօժտեն առավել կենսունակ «**իմունային համակարգով**» մարդու իրավունքների մեջ առանձնահատուկ կարեւորություն տալով նրա սահմանադրական արդարադատության իրավունքին:

Ամփոփելով՝ կարող ենք ընդգծել, որ սահմանադրական նման լուծումների արդյունքում **ներկայիս գերմանական հասարակությունն առանձնանում է սահմանադրականացման անհամեմատ բարձր մակարդակով: Սահմանադրական արժեքներն ինչպես ԱՄՆ-ում, այստեղ նույնպես խոր են արմատավորված հանրային կյանքում, Հիմնական օրենքը ոչ միայն դարձել է ապրող իրողություն, այլև ժողովրդին համախմբող արժեքանական մեծ ուժ է: Դա ուսանելի օրինակ է հատկապես հասարակական վերափոխում ապրող երկրների ու ժողովրդների համար:**

4.5. ՍԱՀՄԱՆՍԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ

Անառարկելի է, որ Սահմանադրությունն իրավաքաղաքական փաստաթուղթ է: Դրա բովանդակությունը եւ սահմանադրական ճարտարապետության բնույթը պայմանավորված են երկրի քաղաքական կողմնորոշումներով, քաղաքական ուժերի մոտեցումների իրական հարաբերակցությամբ, սահմանադրական հիմնարար սկզբունքների վերաբերյալ հանրության իրազեկվածության աստիճանով, քաղաքական ու իրավական մշակույթի ընդհանուր մակարդակով եւ այլն: Սահմանադրական դոկտրինայի ընտրությունը պայմանավորված է առաջին հերթին այն ընթացիկ ու տեսական իրական խնդիրների լուծման հրամայականներով, որոնք ծառայած են տվյալ երկրի ու նրա քաղաքական ուժերի առջեւ: Հետեւաբար, Սահմանադրությունը չի կարող քաղաքական ենթատեքստ չունենալ: **Սակայն դա չպետք է շփոթ առաջացնի եւ սահմանադրական նորմերը մեկնաբանվեն որպես քաղաքական դրույթներ:** Որքանով էլ, որ այդ նորմերն իրենց հիմքում քաղաքական ենթատեքստ ունենան կամ քաղաքական փոխհամաձայնության արդյունք լինեն, միեւնույն է, համապարտադիր վարքագծի կանոն դառնալուց հետո դրանք միայն ու միայն իրավական նորմեր են, ունեն գերակա, սահմանային նշանակություն եւ պայմանավորում են ողջ իրավական համակարգի բնույթն ու բովանդակությունը: Այս հանգամանքը խորությամբ չի գիտակցվում հատկապես վերափոխվող հասարակական համակարգերի պետական ու քաղաքական դերակատարների կողմից, ինչի արդյունքում հաճախ **իրավական անհրաժեշտությամբ թելադրված քայլերը տեղիք են տալիս քաղաքական նպատակահարմարության դրսեւորումների:**

Սահմանադրական նորմերի էական առանձնահատկությունն այն է, որ դրանք չպետք է միտված լինեն ընթացիկ քաղաքական կողմնորոշումներին, հիմքում ունենան ընթացիկ քաղաքական շահերը, այլ միտված լինելով սոցիալական հանրության հեռանկարային կողմնորոշումներին՝ ապահովեն հասարակության կայուն եւ դինամիկ առաջընթացը:

Հասարակական հարաբերությունների սահմանադրականացման հիմնական դժվարություններից մեկն այն է, որ առաջանում է որոշակի հակամարտություն ընթացիկ եւ մնայուն քաղաքական շահերի ու

կողմնորոշումների միջև: Որպես դրա հետեւանք՝ տարակերպ են ընկալվում, մեկնաբանվում եւ իրացվում հիմնարար սահմանադրական արժեքները: Հատկապես, այսպես կոչված, մոդելային սահմանադրական դոկտրինաների, ցածր քաղաքական մշակույթի ու քաղաքական ինստիտուտների կայացման ոչ բավարար մակարդակի պայմաններում, սահմանադրական դրույթների մեկնաբանումը գլխավորապես ընթացիկ քաղաքական առաջնահերթությունների հարթությունում հանգեցնում է նրան, որ անջրպետ է առաջանում սահմանադրական արժեքանության եւ հանրային կյանքում դրա իրական դրսևորման միջև:

Հետևությունն այն է, որ քաղաքականության եւ սահմանադրականության հիմնահարցը պետք է քննարկման առարկա դառնա ոչ թե այդ երկու երեսույթների մեկուսի, մեխանիկական համադրման կամ հակադրման հարթությունում, այլ հստակ պատճառահետեւանքային կապի մեջ:

Իրավական, ժողովրդավարական պետությունում քաղաքականությունն ինքը պետք է լինի սահմանադրական, բխի կենսագոյի այն հիմնարար արժեքներից ու սկզբունքներից, որոնք հասարակական համաձայնությամբ դարձել են վարքագծի հիմնարար կանոն: Քաղաքականությունը միջոց ու հնարավորությունը է հանրությանը կողմնորոշելու արժեհամակարգային ընտրություն կատարելու մեջ: Այն կատարելուց հետո քաղաքականությունն ստանում է իր բնական սահմանափակման սահմանները՝ դրսևորվելու միայն ու միայն սահմանադրական ժողովրդավարության շրջագծում:

Քաղաքականության եւ սահմանադրականության փոխհարաբերության խնդիրն ունի դրսևորման իր էական առանձնահատկությունները մայրցամաքային իրավական համակարգում: Այստեղ, վերջին հաշվով, ամեն մի օրենք քաղաքական փոխհամաձայնության արդյունք է: Հարաբերականորեն թույլ է արդարադատական նախադեպի դերն իրավունքի աղբյուրների համակարգում: Հաճախ կուսակցության քաղաքական կողմնորոշումն է դառնում համապարտադիր վարքագծի կանոն՝ երբ տվյալ կուսակցությունն ունի ակնհայտ պառլամենտական մեծամասնություն: Նման համակարգերում զգալի չափով մեծանում է սահմանադրական վերահսկողության դերը՝ քաղաքականությունը սահմանադրական դաշտում «պահելու»

Եւ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու գործում:

Սակայն դա նույնպես բավարար չէ Սահմանադրության գերակայությունը երաշխավորելու համար: Հատկապես Եվրոպական մայրցամաքում վերջին հարյուրամյակի սահմանադրական զարգացումներն ու ներկա մարտահրավերները վկայում են, որ վճռորոշ նշանակություն են ստանում շարունակական սահմանադրական ախտորոշման ու մշտադիտարկման ինստիտուտների ներդրումը, ինչին առավել մանրամասն կանդիդատներն քննարկելու հետագա շարադրանքում:

Սահմանադրությունն ընթացիկ քաղաքականության գործիք չդարձնելու համար անհրաժեշտ են մի շարք գործոններ: Առաջին հերթին անհրաժեշտ է, որպեսզի երկրի քաղաքական համակարգը լինի ժողովրդավարական: **Բոլոր այն քաղաքական ուժերը, որոնք իրենց ներսում հաստատում են անձնիշխանություն, երկրում ժողովրդավարություն հաստատել չեն կարող:** Քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի հենքը պետք է լինի իրավունքի գերակայության երաշխավորումը: Պատահական չէ, որ ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի քաղաքական կուսակցությունների կառուցվածքը եւ գործունեությունը չհակասի ժողովրդավարական սկզբունքներին: Սահմանադրական այս պահանջը վերացական բնույթ է կրում բոլոր այն դեպքերում, երբ քաղաքական ուժի ձեւավորման ու գործունեության կառուցակարգային լուծումները դրա հստակ իրացումը չեն երաշխավորում, երբ քաղաքական ուժը վերածվում է անփոխարինելի անձնակենտրոն բուրգի: **Նման վիճակն իրավական պետության, իրավունքի գերակայության, ժողովրդավարության, հետեւաբար՝ նաեւ պետության ապագայի հետ որեւէ աղերս չունի:**

Բացառիկ կարեւոր է քաղաքական ինստիտուտների ժողովրդավարական բնույթի երաշխավորումը: Այստեղ առանձնահատուկ դեր ունի խորհրդարանը: Բոլոր այն երկրներում, որտեղ քաղաքական փոքրամասնությունը հնարավորություն չունի օրինաստեղծ գործունեության մեջ քաղաքական մեծամասնությանը պահել սահմանադրական դաշտում, վտանգվում է բուն Սահմանադրությունը: Դա առավել վտանգավոր բնույթ է կրում այն երկրներում, որտեղ Սահմանադրության ընդունումն ու փոփոխությունները կատարվում են խորհրդարանում, իսկ դրանում առկա է որեւէ քաղաքական ուժի սահմանադրական մեծամասնություն:

Հաջորդ էական հանգամանքը պայմանավորված է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի հետետողական իրացման վիճակով: Այնտեղ, որտեղ այս սկզբունքը համակարգային իրացում չի գտնում, Սահմանադրությունը պարզապես դառնում է գործիք քաղաքական մեծամասնության ձեռքին՝ իր ընթացիկ քաղաքական նպատակների իրացման համար: Նման վիճակը նույնպես ժողովրդավարության եւ իրավական պետության հետ որեւէ աղերս չունի: **Որպեսզի Սահմանադրությունը չկաղապարվի քաղաքական նպատակահարմարությամբ, այլ քաղաքականությունն իրականացվի սահմանադրական դաշտում, առաջին հերթին անհրաժեշտ է Սահմանադրության գերակայության իրավական երաշխավորման բոլոր գործոնների արդյունավետ իրացում, ինչին կանդրադառնանք ստորեւ:**

Մենք միանգամայն համամիտ ենք այն տեսակետին, որ հանրային իրավունքի էական առանձնահատկությունն այն է, որ այն առավել մեծ չափով է հենվում նպատակահարմարության արժեքային համակարգի վրա³⁴⁴: Սակայն սահմանադրական իրավունքի առումով դա գլխավորապես վերաբերում է իրավաստեղծման գործընթացներին: Սահմանադրական իրավանորմի գործադրման փուլում **քաղաքական նպատակահարմարությունն անհամատեղելի է իրավական պետության հիմնարար սկզբունքներին** եւ այն պետք է բացառվի իր ցանկացած դրսեւորման ձեւով:

344 St'и Куриц С.Я, Воробьев В.П. Болезни государства: диагностика патологий системы государственного управления и права. М., 2009, С. 51.

4.6. ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

Սահմանադրական զարգացումների պատմատրամաբանական ու համեմատական-իրավական վերլուծությունը բացահայտում է նաև Հիմնական օրենքի այն առանցքային որակը, որ դա քաղաքակիրթ համակեցության նոր մակարդակի բնութագրիչ է: Մարդկային հանրության զարգացման միայն այն փուլում ծնվեցին ժամանակակից սահմանադրությունները, երբ.

ա/ դրա առկայությունը դարձել էր գիտակցված անհրաժեշտություն, բ/ հասարակական հարաբերությունների նման կանոնակարգումը դարձել էր հնարավոր՝ սոցիալական հանրության օբյեկտիվ հարաբերությունների ճանաչողության համարժեք մակարդակի, դրանց իմաստավորման իրավափիլիսոփայական ձեռքբերումների շնորհիվ,

գ/ ձեռավորվել էր հանրային իրավագիտակցության անհրաժեշտ միջավայր:

Նման հասարակությունում հարաբերությունների սահմանադրումը նաև առաջնահերթ նպատակ է հետապնդում փոխհամաձայնությունը դարձնել զարգացման կարելուր առաջնիչ ուժ: Դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ խզում գոյություն չունի սահմանադրական արժեքանության եւ անհատի սոցիալ-մշակութային ինքնադրսեւորման որակների միջեւ: Մենք բազմիցս շեշտել ենք, որ սահմանադրությունն առաջին հերթին հասարակական համաձայնություն է կենսագոյի հիմնարար արժեքների շուրջ: Արժեքներ, որոնք ոչ թե վերացական բնույթ ունեն, այլ ապրվող իրականություն են, անհատի սոցիալական վարքագծի հենքն են կազմում: Այս առումով, Սահմանադրությունը ոչ միայն հանդես է գալիս որպես այդ արժեքների հիման վրա կենսագոյի հիմնարար կանոններին նորմատիվ բնույթ հաղորդելու միջոց, այլև պետք է դրանց իրացման երաշխիքը դառնա:

Հասարակական համաձայնության երաշխավորման տեսանկյունից բացառիկ կարելուր է ոչ միայն սահմանադրորեն իրավունքով իշխանությանը հստակ սահման դնելը, այլև մարդկանց ազատությունների սահմանի հստակեցումը՝ իրավունքների սահմանափակման ու դրանց չարաշահումը բացառելու ճանապարհով:

Մենք արդեն անդրադարձել ենք իրավունքների սահմանափակման հիմնախնդրին, ուստի այստեղ կցանկանայինք ընդգծել այն պարագան, որ փոխհամաձայնություն ու հանդուրժողականություն կարող են լինել միայն այն հասարակությունում, որտեղ մարդու իրավունքների իրացման սահմաններն ընկալելի են հասարակության յուրաքանչյուր անդամի կողմից եւ դրանց պահպանումը գիտակցված անհրաժեշտություն է: Դա է առաջին հերթին քաղաքացիական հասարակության վկայագիրը:

«Հանդուրժողականություն» հասկացությունն իր հերթին սոցիալ-փիլիսոփայական ընկալումներից զատ ունի նաեւ սահմանադրաիրավական բովանդակություն: Մահմանադրորեն ամրագրվող զսպումների ու հակակշիռների ողջ համակարգը կոչված է նրան, որ տարաբնույթ հակադրությունների խորացման փոխարեն հաստատվի փոխգործակցություն: Հանդուրժողականությունը վերաբերում է ոչ միայն միջանձնային հարաբերություններին, այլ նաեւ սահմանադրական ինստիտուտներին: **Իրավական պետությունում դրանց բոլորի գործակցության հիմքում պետք է դրվի այն կարեւոր սկզբունքը, որ գործառույթային վեճերը քաղաքական լուծում չունեն:** Ավելին, դրանց շուրջ քաղաքական փոխհամաձայնությունները կարող են իրավական առումով խնդրահարույց լինել: Նման տիպի վեճերը պետք է լուծվեն իրավական դաշտում: Առավել եւս դա վերաբերում է սահմանադրական լիազորությունների հարցով պետական իշխանության մարմինների միջեւ առաջացած վեճերին:

Միայն փոխհամաձայնության ու հանդուրժողականության վրա խարսխված իրավահարաբերությունների պարագայում է հնարավոր ունենալ ուժեղ պետաիշխանական համակարգ, որն ի գործու է.

- երաշխավորել, ապահովել ու պաշտպանել մարդու իրավունքներն ու ազատությունները,
- կանխել հանցավորությունը,
- հաղթահարել կոռուպցիան ու տարաբնույթ անօրինականությունները,
- ներդաշնակել անհատի շահն ու երկրի ազգային շահը:

Հանդուրժողականությունը սոցիալական վարքագծի անհրաժեշտ քաղադրատարր կարող է դառնալ միայն իրավական պետությունում:

Իրավական միջավայրը պետք է երաշխավորի յուրաքանչյուրի արժանապատվության անխախտելիությունը, դրա ինքնագիտակցության այնպիսի մակարդակ, երբ յուրաքանչյուր անձ իր իրավունքները տեսնում է պարտականությունների հետ ներդաշնակության մեջ: Նման վարքագիծ պետք է դրսևորեն նաև հանրային կամ պետաիշխանական մարմինները, երկրի քաղաքական համակարգի բոլոր տարրերը:

Հատկապես վերափոխվող հասարակական համակարգերում անհանդուրժողականության առավել ցայտուն դրսևորումները նկատելի են քաղաքական ինստիտուտների փոխհարաբերություններում: Ավելին, պառլամենտներն օրենսդիր իշխանության ամբողջական կրողը լինելով հանդերձ, դրանցում իշխանություն է ընկալվում միայն պառլամենտական մեծամասնությունը, անտեսելով, որ պառլամենտական փոքրամասնությունը նույնպես կոչված է պետաիշխանական գործառույթ իրականացնելու: Իսկ դա հնարավոր է միայն պառլամենտարիզմի, քաղաքակիրթ երկխոսության որոշակի մշակույթի, այլ ոչ թե քաղաքական առճակատման պարագայում: Նման երկխոսության հիմքերը նույնպես դրվում են Սահմանադրության, ինչպես նաև ընթացիկ իրավակարգավորումների հիման վրա:

Ակնհայտ է նաև այն իրողությունը, որ անօրինականությունն է առաջին հերթին ծնում անհանդուրժողականություն: Եթե սահմանադրահիրավական համակարգը երաշխավորում է իրավունքի գերակայության սկզբունքի լիարժեք իրացումը, ապա դա ծանրակշիռ երաշխիք կարող է լինել հասարակական համաձայնությունն ու հանդուրժողականությունը կյանքի կոչելու համար: Այս որակները բնորոշ են քաղաքակրթական բարձր մշակույթ ունեցող սոցիումին: Տվյալ հասարակությունում Սահմանադրությունն ինքնին չի մնում որպես արհեստածին կամ փոխառնված արժեքների ժողովածու, այլ արժեքանական ու իրավակարգավորիչ իր դերակատարությունն է ստանձնում իրական կյանքում ու դառնում է ապրող իրողություն: Ու, ինչպես Խորենացին կրճուրագրեր, մարդիկ դրա օգնությամբ ու նման Հիմնական օրենքի շնորհիվ «աշխարհական կարգերի գիտություն ձեռք կբերեն», «քաղաքական կարգեր կսովորեն», հաշտությունն ու համերաշխությունը կդարձնեն գոյության ու զարգացման կենսաէներգիան ու «ողորմածությունը կհաստատեն երկրում»:

4.7. ԱՆՁԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ԵՎ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ
ՎԱՐՔԱԳԾԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Մարդու սոցիալական վարքագիծը ներկայումս գիտական լուրջ քննարկումների առարկա է փիլիսոփաների, սոցիոլոգների, հոգեբանների եւ գիտության մի շարք այլ ոլորտների ներկայացուցիչների կողմից: Սակայն, մեր կարծիքով, մարդու սոցիալական վարքագծի իրավագիտական արժեվորման հիմնախնդրին դրա հրատապությանը համարժեք վերաբերմունք դեռեսւ չի դրսևորվում:

Անձի սոցիալական վարքագիծը նախեառաջ իմաստավորված, բանական վարքագիծ է, ունի արժեքանական հիմք, դրսևորման մոտիվացիա, արտահայտման բնորոշ ձևեր ու եղանակներ, որոնք ուղղորդում են անձի ինքնադրսևորումը սոցիալական բազմաշերտ առնչություններում: Սոցիալական վարքագծի արժեքանական հիմքը՝ մարդու աշխարհընկալման արժեքային համակարգին համապատասխան, նրա տեղի ու դերի արժեվորումը, իմաստավորումն է հանրային կյանքում:

Հայտնի իրողություն է. այսպես կոչված՝ «Լապերի պարադոքսը» դեռեսւ նախորդ դարասկզբին սպացուցեց, որ մարդու սոցիալական վարքագծի համար մնայունն ու առանցքայինը նրա արժեքանական կողմնորոշումն է, արժեքային այն համակարգը, որն ընկած է նրա բանական ինքնաճանաչման ու ինքնադրսևորման հիմքում:

Մարդու հոգևոր ու ֆիզիկական պահանջմունքները, նրա սպասելիքների, շահերի ու նպատակների տարաբնույթ մոտիվացիաները թելադրում են համարժեք գործելակերպ, որն իր բնույթով իմաստավորված արժեքանական դրսևորում ունի: Իրողություն է, որ ինչպիսին արժեքներն են, այնպիսին էլ հասարակությունն է ու անհատը: Շատ դիպուկ է բանաձևված. «Ասա ով է քո ժամանակի հերոսը, ես կրեմադրեմ ժամանակիդ ողբերգությունը»:

Անհատի արժեքանական մոտիվացիան, իր հերթին, ոչ միայն սուրյեկտիվ, այլև հանրային օրյեկտիվ բնույթ ու նշանակություն ունի: Այստեղ առանցքայինն այն է, թե ինչպիսին է անհատի արժեհամակարգային կողմնորոշումը, նրա պահանջմունքների բավա-

րարման դիալեկտիկան, այդ պահանջումներին բավարարման ինչ մոտիկներով է անձը մտնում հասարակական հարաբերությունների դինամիկ գործընթաց՝ ելնելով այն օբյեկտիվ իրողությունից, որ ամեն մի բավարարված պահանջ նոր պահանջումներ է ծնում: Այս հանգամանքը նկատի ունենալով էր, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Ռոբերտ Լուկասը ռացիոնալ սպասելիքների տեսության շրջանակներում նախորդ դարավերջին առաջարկում էր հանրային կառավարման հիմքում դնել մարդկանց սոցիալական սպասելիքների վրա ներազդելու հայեցակարգը:

Հազարամյակների հոգեւոր արժեք է դարձել նաեւ պահանջումների զսպամար բավարարվածության ու երջանկության հասնելու բանաձեւը:

Անհատի սոցիալական փոխառնչությունների, նրա սոցիալական վարքագծի հանրային նշանակությունն ավելի է մեծանում քաղաքացիական հասարակությունում՝ **նրա տեղի ու դերի արժեւորմանը զուգընթաց:** Նման հասարակությունում **անձի սոցիալական վարքագիծը պետք է լինի կայուն, կանխատեսելի, ներդաշնակ նրա իդեալներին, ձգտումներին, սպասելիքներին ու սոցիալական առնչությունների իմաստավորված կողմնորոշիչներին:** Իսկ դա հնարավոր է միայն մարդու բանական գոյի արժեքանական ամուր հենքի առկայության, դրան համարժեք սոցիալական միջավայրի ձեւավորման պայմաններում:

Այս տեսանկյունից պետք է գնահատվեն ու համարժեք լուծումներ գտնվեն այնպիսի հրատապ սոցիալական հիմնախնդիրների առնչությամբ, ինչպիսիք, օրինակ, ժողովրդագրական հիմնախնդիրներն են մեր երկրի պարագայում:

Միաժամանակ, ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ է, որպեսզի անհատի սոցիալական վարքագծի արժեքային կողմնորոշիչները ներդաշնակ լինեն հանրության ընդհանրական ճանաչում գտած արժեքային համակարգին:

Այս համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ անձի սոցիալական վարքագիծը ոչ թե նրա սոցիալական հոգեբանության հախտումն դրսևորում է, այլ **դրա հիմնական բնութագրիչը նորմատիվությունն է:** Վերջինս ձեւավորվում է ինչպես ավանդույթների, սովորույթների, հոգեւոր արժեքների, սոցիալական

միջավայրի տարաբնույթ ազդեցությունների հիման վրա, այլև, ու առաջին հերթին, անձանց ու նրանց խմբերի փոխառնչությունների իրավակարգավորման արդյունքում:

Պատմության դասերը միանշանակ հուշում են, որ իրավակարգավորման անհրաժեշտությունն ու բնույթը նույնպես պայմանավորված են մարդու սոցիալական վարքագծով, դրա դրսևորման արժեքանական կողմնորոշիչներով ու այն սոցիալական միջավայրով, որում մարդը պետք է ինքնադրսևորվի որպես բանական ու արարչական նախասկիզբ ունեցող էակ:

Կարծում ենք, հետևությունը միանշանակ է. սոցիալական հանրությունն առողջ, կենսունակ, բնականոն գոյություն ունեցող ու զարգացող համակարգ է այն դեպքում, **եբբ անհատի սոցիալական սպասելիքները ներդաշնակ են հանրության արժեքանական կողմնորոշիչներին եւ երկուսի հիմքում էլ ընկած են օբյեկտիվ ու նաե՛ւ իմաստավորված ու խորությամբ ճանաչված արժեքներ:** Այս ճշմարտությանը հասու լինելն առավել կարեւոր է դարերով պետականությունը կորցրած եւ պետական կյանքի մնայուն ավանդույթներ չունեցող ժողովուրդների համար:

Սոցիալական հանրության արժեքանական ընդհանրության համար թե՛ հոգեւոր եւ թե՛ աշխարհիկ միտքը հազարամյակների փորձառությամբ այլ բան դեռեւս չի գտել, քան մարդու բարձրագույն ու անօտարելի արժեք ճանաչված իրավունքներն ու հիմնարար ազատություններն են:

Իրավունքի գերակայության սկզբունքի ճանաչումը մարդու ինքնաճանաչման ու նրա հասարակական գոյի իմաստավորված ինքնադրսևորման բարձրակետն է: Ուստի անառարկելի ճշմարտություն է. այն հասարակությունում, որտեղ թե՛ անհատի եւ թե՛ նրա հանրային ինքնադրսևորման հիմնաքարն իրավունքի գերակայության երաշխավորումը չէ, որում գերակայող է դառնում ոչ իրավաչափ միջամտությունն անձի սոցիալական վարքագծին, սոցիալական համերաշխությունն ու զարգացում ակնկալելն անիմաստ է:

Իրավական, ժողովրդավարական պետությունում սահմանադրորեն, քաղաքացիական հասարակության հիմնական օրենքի հիման վրա, պետական համարժեք քաղաքականության արդյունքում պետք

է ձեւավորվի այնպիսի սոցիալական միջավայր, որտեղ իրավունքի գերակայությունը հանդես է գալիս որպես անհատների, նրանց խմբերի, իշխանության ու ողջ հասարակության սոցիալական վարքագծի գեներացման ու դրսևորման միջուկը: Ինչպես 10-րդ դարում իր աստվածային աղոթքներում բարձրաձայնում էր հայ մեծագույն հանճար Նարեկացին, մարդու գործած մեղքերը նրա հանցանքը չեն, այլ նրա դժբախտությունը: **Մարդուն մարդակերպ ու մարդավայել ապրելու համար անհրաժեշտ միջավայր ու հնարավորություն է պետք:** Իսկ պատմության դասերը վկայում են, որ դա կարող է երաշխավորվել միայն իրավական, ժողովրդավարական պետությունում:

Իրավական պետության գերագույն առաքելությունն անհատի, հասարակության ու պետության սոցիալական վարքագծի այնպիսի կանոնակարգումն է, երբ անձի անօտարելի իրավունքներն են դառնում նրա ազատությունների գլխավոր երաշխիքը, երբ ձեւավորվում է այնպիսի սոցիալական միջավայր, որում անհատի սոցիալական վարքագծի ուղղորման բարձրագույն ձեւը դառնում է ոչ թե արտաքին ներազդեցությունը, այլ **իրավունք ի գերակայության վրա խարսխված ինքնաուղղորդումը:** Նման հասարակությունում, որտեղ թե՛ պետության եւ թե՛ անհատի համար ելակետն իրավունքի գերակայությունն է, անձի համար օրինապաշտությունը, ամոթն ու խիղճը նրա վարքագծի վրա անհամեմատ շատ ավելի մեծ ու վճռորոշ ազդեցություն ունեն, քան պատիժն ու դրա կանխարգելիչ նշանակությունը:

Իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների եւ իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը: Միայն այս դեպքում է հնարավոր երաշխավորել անձի օրինական ակնկալիքների իրավունքը:

Իրավունքի գերակայությունն իրողություն պետք է դառնա առա-

ջին հերթին երկրի Հիմնական օրենքում՝ ոչ թե մեխանիկական փոխառմամբ, այլ հասարակական համաձայնության արդյունքում իմաստավորված, համակարգային ամրագրման ու անխտոր ձեռով կյանքի կոչվելու ճանապարհով: Մակայն առավել կարելու է, **մի կողմից**, իրական կյանքում դրա երաշխավորումը, սահմանադրական հիմնարար արժեքները կյանքի կանոն, անհատի, հասարակության ու պետության վարքագծի նորմ դարձնելը, **մյուս կողմից՝** սահմանադրականության երաշխավորման մշտադիտարկման այնպիսի համակարգի ապահովումը, որն ի գորու կգտնվի շարունակականության մեջ բացահայտել, գնահատել ու հաղթահարել տարաբնույթ գործոնների ազդեցության տակ հիմնարար այդ սկզբունքից ամեն մի շեղում՝ հասարակական օրգանիզմին օժտելով ներքին ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար իմունային համակարգով:

Եզրահանգումը մեկն է. երկրի սահմանադրական ճակատագիրը պայմանավորված է մարդու եւ քաղաքացու ներդաշնակ սոցիալական վարքագծի արժեքանական ճիշտ ուղղորդմամբ՝ դրա հիմքում ունենալով իրավունքի գերակայության սկզբունքը: Մակայն դա՛ անհրաժեշտ լինելով հանդերձ, դեռեւս բավարար պայման չէ: Էական է, որպեսզի հետետողականություն դրսետորվի նաեւ իշխանության հանրային վարքագծի սահմանադրականացման հարցում: Վերջինս, մասնավորապես, ենթադրում է, որ.

1. սահմանադրական պետք է լինեն քաղաքական մտածողությունն ու գործելակերպը, բացառապես սահմանադրական նորմերի ու սկզբունքների շրջանակներում պետք է ձեւավորվեն ու գործեն երկրի քաղաքական ինստիտուտները,
2. պետական իշխանության կրողների մտածողությունը պետք է խարսխված լինի սահմանադրական արժեքանության վրա,
3. երկրում պետք է բացառվեն անձնիշխանությունը, քաղաքական մենաշնորհը, քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճումը,
4. պետք է բացառվի նաեւ ներքին հակասականությունը՝ Սահմանադրության, իրավական համակարգի ու իրավակիրառ պրակտիկայի միջեւ:

4.8. ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒՅԹՆ ՈՒ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաճախ է շեշտադրվում այն հանգամանքը, որ Սահմանադրությունը չի կարող ներմուծվող կամ արտահանվող արժեքանական հենք ունենալ³⁴⁵: Այն տվյալ սոցիալական հանրության պատմականորեն ձևավորված ու օբյեկտիվ նախադրյալների առկայությամբ պայմանավորված արժեհամակարգի վրա խարսխված փոխհամաձայնություն է կենսագոյի հիմնարար կանոնների շուրջ: Սակայն գլխավոր խնդիրը շարունակում է մնալ ամեն մի կոնկրետ Սահմանադրության արժեքանության շրջանակներում նախ՝ համընդհանուր արժեքների ու ազգային առանձնահատկությունների խելամիտ ներդաշնակումը, երկրորդ՝ սահմանադրական լուծումներով հասարակական կայուն զարգացումը խթանելը: Այսպիսի մոտեցման լավագույն օրինակներ տվեցին աշխարհին ԱՄՆ-ը եւ Գերմանիան, ինչին մենք արդեն անդրադարձել ենք: Պակաս կարելու չենք համարում նաեւ Ֆրանսիայում ու մի շարք այլ երկրներում սահմանադրական զարգացումների պատմական ընթացքը, ինչը նույնպես ակնհայտ վկայություն է ազգային սահմանադրական մշակույթի ձևավորման օրինակելի գործընթացի:

Կարելի է առաջ քաշված հիմնախնդիրը վերլուծության առարկա դարձնել նշված երկրներից յուրաքանչյուրի օրինակով: Սակայն մենք կվորձենք տարասեռ համակարգերի մակարդակում այս հարցը քննարկել՝ նպատակ ունենալով առավել ընդգծելու ազգային սահմանադրությունների արժեքանական առանձնահատկությունները խելամտորեն հաշվի առնելու կարելուությունը: Այս նպատակով անդրադառնանք Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սահմանադրության արժեքանական հիմնական առանձնահատկություններին, ինչը, մեր կարծիքով, կարելու դեր ունեցավ այս երկրի աննախադեպ տնտեսական զարգացման գործում:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունն այսօր աշխար-

345 Գրականության մեջ կարելուվում է նաեւ բռնի, հարկադրման ճանապարհով տարբեր քաղաքակրթությունների արժեհամակարգի «արտահանումը» /Մասնավորապես տե՛ս. Ե. Ա. Лукашева, Человек, право, цивилизация: нормативно-ценностное измерение. М., 2013. - Ст. 11-38.

հին ներկայանում է ոչ միայն վերջին տասնամյակների տնտեսական հրաշքով, այլև ու առավելապես հազարամյակների արմատներ ունեցող մեծ մշակույթով, ինչը ոչ թե պատմական հուշ, այլ ապրող իրողություն է: Բազմաթիվ հետազոտողներ են անդրադարձել չինական ֆենոմենին ու խոստովանել, որ այս երկիրն ու մարդիկ իրենց համար այնքան էլ հասու, ընկալելի ու մեկնաբանելի չեն: Մեր խորին համոզմամբ, գաղտնիքը նրանում է, որ այս **երկրում յուրովի են միախառնված անցյալն ու ներկան, պատմական հիշողությունն ու ներկայի իմաստավորումը, օրենքի, ավանդույթի ու սովորույթի փոխլրացնող դերը՝ սոցիալական կեցության բոլոր դրսեւորումներում:** Այդ բոլորին ավելանում են նաեւ գերմեծ սոցիալական համակարգերին բնորոշ ներհամակարգային առանձնահատկությունները՝ զգուշավոր պահպանողականությունից սկսած եւ վերջացրած համակարգային կայունության յուրահատուկ կառուցակարգերի անհրաժեշտությունը:

Չինաստանը հանրային նոր որակ ստացավ 1911թ. հեղափոխության արդյունքում, երբ դոկտոր Սուն Յատսենի գլխավորած հեղափոխական շարժումը վերջ դրեց ֆեոդալական միապետությանը եւ երկրում հաստատեց հանրապետական կարգեր: 1949 թվականին Չինաստանը հռչակվեց Ժողովրդական Հանրապետություն:

Յուրաքանչյուր երկրի համար համակարգային զարգացումների կարեւոր գրավականը ժամանակի հոլովությունում առաջնահերթությունների ու արժեհամակարգի հստակեցումն է:

Անցած դարի 80-ական թվականները շրջադարձային էին հատկապես զարգացման սոցիալիստական ուղի ընտրած երկրների համար: Բոլորն էլ կանգնած էին արժեհամակարգային ընտրության առջեւ: Արեւելյան Եվրոպայի երկրները գրեթե առանց բացառության որդեգրեցին եվրոպական արժեհամակարգին ինտեգրումը խորացնելու ուղին, որը հետագայում հանգեցրեց նրանց ընդգրկմանը Եվրամիության կազմում:

Նախկին ԽՍՀՄ-ը փորձեց «զարգացած սոցիալիզմի» իր զաղափարաբանությունը կյանքի կոչել, սակայն պարզվեց, որ այն ի սկզբանե ձախողման դատապարտված փորձ էր: Բանն այն է, որ արժեբանական մակարդակում խորհրդային սահմանադրակարգի հիմքում շարունակվեց պահպանվել պետության, իշխանության ու միակուսակցական քաղաքական ուժի դերի բացարձականացումը:

Սահմանադրությունը, կտրված մնալով հասարակական պրակտիկայից, **կորցնելով իշխանության սահմանափակման իր առաքելությունը՝** չէր կարող հանդես գալ որպես հասարակական համաձայնության միջոց ու արտահայտություն: Ժողովուրդը շարունակեց օտարված մնալ իշխանությունից եւ վերջինիս սուբյեկտ լինելուց վերածվեց իշխանության գործադրման օբյեկտի³⁴⁶: Սեփականության իրական տերը, ինչպես նշել ենք, ոչ թե ժողովուրդը կամ նույնիսկ պետությունն էր, այլ իշխանությունը: Իսկ իրավունքը կոչված էր պաշտպանելու ոչ թե մարդուն, նրա ազատությունն ու սեփականությունը, այլ իշխանությանը³⁴⁷: Շարունակեց տիրապետող մնալ արեխտական աշխարհընկալման վրա կառուցված ու ձեւախեղված դոգմատիկ լեգիտատ-պոզիտիվիստական իրավամտաժողովությունը³⁴⁸: Խորհրդային Միության Սահմանադրության առանցքային ու համակարգ ձեւավորող դրույթներն էին շարունակում մնալ **կոմկուսի ղեկավար եւ ուղղություն տվող ուժը, սեփականության բազմաձեւության ժխտումն ու պետական սեփականության բացառիկությունը:**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը չգնաց այդ ուղիով, այլ 1970-ական թվականների վերջերից որդեգրեց ուրույն ու պատմականորեն արդարացված ճանապարհ: Աստիճանաբար առաջընթացի հիմքում դրվեցին չին ժողովրդի պատմամշակութային

346 Իրավափիլիսոփայական միտքը վաղուց փաստել է, որ եվրոպայում, ինչպես նաեւ Զյուլիսային Ամերիկայում ժողովրդավարության զարգացումն օրգանապես կապված է մասնավոր սեփականության եւ շուկայական հարաբերությունների հաստատման հետ (մասնավորապես՝ Страхун Б. Перспективы демократии и конституционное правосудие // Альманах - Конституционное правосудие в новом тысячелетии. Ереван, 2002, էջ 217):

347 Շատ վերլուծաբաններ իրավացի են այն հարցում, որ տվյալ պարագայում նույնական են դառնում իրավունքը եւ ուժը, իրավունքը մեկնաբանվում է որպես օրինականացված ուժի դրսեւորում (տե՛ս Четвернин В. Российская Конституция: концепция правопонимания // Конституционное право: Восточноевропейское обозрение, вып. 4, 2003, էջ 28):

348 Գործնականում մեկ մարմնի ձեռքում էր կենտրոնացված քաղաքական եւ տնտեսական ոլորտներում կառավարման գործառույթը, որի արդյունքում ձեւավորված գերկենտրոնացած կորպորատիվ համակարգն ինքնավերարտադրվում էր իշխանության շահի թելադրանքով՝ խորացնելով հակասությունն իշխանության եւ հանրության շահերի միջեւ: Պատահական չէ, որ գրականության մեջ այդ համակարգը հաճախ բնորոշվում է նաեւ որպես բռնապետական սոցիալիզմ (մասնավորապես տե՛ս Чиркин В.Е. Общечеловеческие ценности и современное государство // Государство и право, էջեր 5-13):

առանձնահատկություններով պայմանավորված այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են **ժողովրդաիշխանությունը, սոցիալական շուկայական տնտեսությունը, սոցիալիստական իրավական պետությունը, բարեփոխումների շարունակականությունն ու անձնուրաց աշխատանքը, նյութական, քաղաքական ու հոգեւոր մշակույթի ներդաշնակ զարգացումը, ազգային համերաշխությունը, բազմակուսակցական համագործակցությունը, խաղաղությունն ու կայունությունը:** Դրանք դարձան 1982թ. դեկտեմբերին ընդունված Սահմանադրության արժեքանական հենքը:

Սահմանադրության թե՛ նախաբանում եւ թե՛ 1-ին հոդվածում նախ ամրագրվում է «ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայի» սկզբունքը: Վերջինիս էության համեմատական վերլուծությունն առանցքային նշանակություն ունի սահմանադրական արժեքանության բացահայտման տեսանկյունից:

Եվրոպական սահմանադրական պրակտիկայում, ինչպես տեսանք, հստակ ամրագրված է ժողովրդաիշխանության սկզբունքը՝ որպես իրավական պետության առանցքային արժեք:

«Ժողովուրդ» հասկացությունն ամենալայն քաղաքական-իրավական իմաստով ենթադրում է մեկ պետության մեջ միավորված քաղաքացիների: Ժողովրդի կամքով ձեւավորված իշխանության համակարգը պետք է լինի թափանցիկ եւ ժողովրդին հաշվետու: Պետությունն իշխանությունն ստանում է ժողովրդից, իրականացնում է ժողովրդով, հանուն ժողովրդի:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության սահմանադրաիրավական համակարգում «ժողովրդի ժողովրդավարական դիկտատուրայի» սկզբունքն իր էությամբ եւ իրավակիրառական նշանակությամբ էապես տարբերվում է «պրոլետարիատի դիկտատուրա» սկզբունքից եւ համադրելի է դասական ժողովրդաիշխանության սկզբունքի հետ:

Սահմանադրական հիշյալ սկզբունքը մեկուսի չի գործում: Այն արժեքանական ընդհանուր համակարգի կարեւոր տարրերից է: Այդ համակարգում առանձնահատուկ ուշադրության է արժանի **սոցիալիստական իրավական պետության կայացման սահմանադրական սկզբունքը,** ինչն իր արդի իրավակիրառական նշանակությամբ ներ-

դաշնակ է եվրոպական լայն տարածում գտած՝ իրավական պետությունում սոցիալական շուկայական հարաբերությունների հաստատման սկզբունքին: Վերջինս արտացոլված է բազմաթիվ երկրների սահմանադրությունների սահմանադրական կարգի հիմունքներում, ինչպես նաև առանձնահատուկ կարեւորվեց Եվրոպական միության Սահմանադրության մշակման փուլում ու Լիսաբոնյան համաձայնագրի շրջանակներում: Առանցքային խնդիրն այն է, որ թե՛ Եվրամիության երկրներում եւ թե՛ Չինաստանում սոցիալական պետության կայացումը չի հակադրվում, մի կողմից, իրավական պետությանը, մյուս կողմից՝ ազատ շուկայական տնտեսական հարաբերությունների զարգացմանը, ինչը չընկալվեց եւ բացարձակապես չընդունվեց ԽՍՀՄ-ում: Մեր խորին համոզմամբ, չինական տնտեսական հրաշքի համար **Էլակետային նշանակություն ունեցավ տնտեսության ազատականացման խելամիտ ներդաշնակումը սոցիալական պետության սկզբունքներին:** Դա իրականացվեց արդարացված գգուշությամբ՝ ապահովելով տնտեսական աննախադեպ աճ՝ սոցիալական հստակ կողմնորոշումով: Սա այն դեպքն է, երբ արտադրական ու բաշխման հարաբերությունների միջև առկա է ծրագրանպատակային ներդաշնակություն, եւ օբյեկտիվ հակադրությունը չի վերաճում անտագոնիզմի: Հիմնական կարգախոս է դառնում՝ ոչ թե արտադրություն՝ հանուն արտադրության, այլ արտադրություն՝ հանուն սոցիալական նպատակների իրականացման: Խնդիրն այն նուրբ սահմանագծի ճիշտ ընտրությունն է, երբ համակարգի սոցիալական կողմնորոշումը հակադրության մեջ չի մտնում շուկայական տնտեսական օրենքների գործողության տրամաբանության հետ: Պատմական իրողությունները վկայեցին, որ Չինաստանը գտավ այդ սահմանագծի ճիշտ ընտրության բանալին:

Մեկ կարեւոր դիտարկում եւս: 1992 թվականին առաջին պաշտոնական այցով Չինաստանում գտնվելու ժամանակ վարչապետ Լի Պեյնի հետ մեր առանձնագրույցի ժամանակ նա կարեւոր մի դիտարկում կատարեց՝ կապված ազատ տնտեսական գոտիների զարգացման հայեցակարգային մոտեցումների հետ: Ասվածի էությունը հանգում էր նրան, որ Չինաստանը չի կարող բարեփոխումների հարցում հեղափոխական մոտեցում դրսևորել: Մխալի դեպքում անհնարին կլինի

կանգնեցնել գործողության մեջ դրված ու շուրջ 1.5 միլիարդ բնակչությանն առնչվող պետական հսկա թափանիվը՝ սխալը շտկելու եւ նոր մոտեցումներ որդեգրելու համար: Ուստի **որդեգրվել է «ընդլայնվող սպիրալի» մոդելը**՝ տնտեսական նորարարությունը բազմակի անգամ փորձարկվում է մեկ ձեռնարկության, մեկ քաղաքի, մեկ շրջանի, մեկ ռեգիոնի մակարդակով, շտկվում են թերիներն ու բացերը, ապա այն համապետական ընդգրկում է ստանում: Այս հայեցակարգը, բխելով բարեփոխումների շարունակականության երաշխավորման սահմանադրական սկզբունքից, նույնպես լիովին իրեն արդարացրեց՝ երկրի զարգացմանը հաղորդելով կայուն դինամիզմ: Իսկ այդ բարեփոխումների գաղափարաբանական հենքը Սահմանադրության 6-րդ հոդվածում ամրագրված այն կարեւոր սկզբունքն էր, համաձայն որի՝ նախատեսվում էր հանրային սեփականությանը զուգահեռ սեփականության այլ ձևերի զարգացման հնարավորություն:

Հանրահայտ է, որ տնտեսական հարաբերությունների բնույթը պայմանավորված է առկա սեփականության ձեռով: Սեփականության բազմաձևությունն իր հերթին այն օբյեկտիվ նախադրյալն է, որի պայմաններում ի հայտ են գալիս եւ գործում են շուկայական տնտեսական օրենքները, ազատ մրցակցությունը դառնում է տնտեսության զարգացման գլխավոր խթանը: Չինաստանը 1982 թվականին սահմանադրական մակարդակով ստեղծեց նման զարգացման իրավական կայուն երաշխիքներ:

Հատկապես ուշադրության են արժանի Սահմանադրության 15-րդ հոդվածի այն դրույթները, համաձայն որոնց՝ «պետությունը կյանքի է կոչում սոցիալիստական շուկայական տնտեսությունը», ինչպես նաեւ շեշտը դրվում է ոչ թե տնտեսական ողջ համակարգի «կառավարման», այլ «մակրոկարգավորման» կատարելագործման պետական գործառույթի վրա: Մրանց տարբերությունը հսկայական է՝ վարչահրամայական կառավարումից տնտեսական լծակներով մակրոտնտեսական կարգավորման անցնելու առումով: Սահմանադրության 18-րդ հոդվածով իրավական նախադրյալներ ստեղծվեցին նաեւ արտասահմանյան ներդրումների խթանման ու դրանց իրավական պաշտպանության համար:

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունների համառոտ վերլուծությունից հետևում է, որ այս երկրում ժամանակին որդեգրվել է սահմանադրական զարգացումների ինքնուրույն եւ հանրային կյանքի իրողություններից բխող մոդել, որի հիմքում դրվել են ոչ միայն իրատեսական նպատակներ, այլև խորությամբ հաշվի են առնվել սոցիալական տվյալ հանրության պատմականորեն ձեւավորված արժեհամակարգային առանձնահատկությունները: Սահմանադրական լուծումները բխել են իրական կյանքից, զարգացող հասարակական հարաբերությունների տրամաբանությունից ու այդ հարաբերությունների հետագա զարգացման խթան են հանդիսացել: Դրա շնորհիվ է, որ Չինաստանը խուսափել է մոդելային սահմանադրությունների ներդրման բացասական հետեւանքներից³⁴⁹:

Այնհայտ է նաեւ մեկ այլ իրողություն՝ որոշակի անհամատեղելիությունը տնտեսական ազատության եւ քաղաքական բեռնացվածության միջեւ: Արեւմտյան իրավամտաժողովուրդները ենթադրում է, որ ազատ տնտեսական մրցակցությունը, իրավունքի գերակայությունը եւ ժողովրդավարությունը միմյանցից զատ գոյություն ունենալ չեն կարող կամ պարզապես իմաստագրելվում են: Չինաստանում այս հիպոթեզը դասական ընկալմամբ չի գործում: Ավանդույթների ու սովորույթների անհամեմատ մեծ ազդեցությունը հանրային կյանքի վրա՝ ստեղծում է սոցիալ-իրավական նոր որակ եւ պայմանավորում է հասարակական հարաբերությունների կանոնակարգված զարգացման իր տրամաբանությունը: Այն, ինչ առկա է Չինաստանում՝ դժվար է տեղավորել «կապիտալիզմ» կամ «սոցիալիզմ» հասկացութային դաշտում: Այդ հարաբերություններն իրենց բնույթով ու համակարգային առանձնահատկություններով պարզապես պետք է բնորոշել «չի-նիզմ» եւ այն դիտարկել որպես ինքնուրույն ու որոշակիորեն կյանքի բնությունը բռնաձեւ երեւույթ:

Բերված օրինակը նույնպես վկայում է, որ յուրաքանչյուր երկրի սահմանադրական մշակույթը տվյալ ժողովրդի ազգային մշակույթի բաղկացուցիչն է ու ժամանակի մեջ սոցիալական հանրության կազմակերպված գոյի իմաստավորման արգասիքը: Այն իր համարժեք

349 Տե՛ս. Арутюнян Г.Г. Конституционализм: уроки, вызовы, гарантии. Киев, «Логос», 2011. – С. 119-120.

իրացումը պետք է ստանա սահմանադրական լուծումների մակարդակում եւ դառնա ազգային սահմանադրականության, իրավական ողջ համակարգի արժեքանական հենքը:

Թեկուզ այս օրինակը նկատի ունենալով՝ փորձենք առանձնացնել մեզանում համարժեք սահմանադրական մշակույթի ձեւավորման օբյեկտիվ բնույթ ունեցող հիմնական խոչընդոտները: Դրանցից, թերեւս, շեշտադրման արժանի են հետեւյալները.

5. պետականության դարավոր կորուստն իր հետքն է թողել մեր հավաքական ինքնագիտակցության եւ գոյի իմաստավորման վրա: Այդ հետքը խորն է ու դրսևւորվում է բացասական շարունակական ազդեցությամբ,
6. մեր հավաքական մտածողության մեջ հստակեցված չեն նաեւ ինքնության հիմնական որակները, մենք լուրջ ինքնաճանաչման եւ ինքնարժեքավորման խնդիր ունենք,
7. պետական մտածողություն ձեւավորելու համար պետք է ունենալ պետության քաղաքացի: **Մենք ունենք ժողովուրդ՝ ինքնամեծար ու ինքնահավան որակներով, սակայն մեր անհատը չունի քաղաքացու որակներ, քաղաքացիական արժեքների կրող չէ:** Մրա գլխավոր պատճառը դարձյալ դարերից եկող փոշեծածքն է: Սակայն այն մաքրելու քայլերը համարժեք չեն պետականության կայացման մարտահրավերներին,
8. բացակայում է սահմանադրական մտածողություն ունեցող քաղաքական համակարգը, քաղաքականությունն աստիճանաբար վեր է ածվում քաղաքական բիզնեսի՝ քաղաքական, տնտեսական եւ վարչական ներուժի սերտաճմանը համաքայլ,
9. անձի սոցիալական արժեքավորումը համարժեք չէ սահմանադրական արժեքանության պահանջներին, եւ խզումը խորացման միտում ունի,
10. չափազանց մեծ է էկզոզեն գործոնների ազդեցությունը կրող, մեծ արժեքներից խոսող, սակայն մերկանտիլ նպատակներ հետապնդող՝ հինգերորդ շարապում ներկայացնողների թիվը:

Դրանք հանրային հիվանդություններ են, որոնք թեւակոխել են զարգացման վտանգավոր փուլ, եւ դրանց մի մասն ընդհուպ վիրահատական միջամտության անհրաժեշտություն ունի:

4.9. ՍԱՀՄԱՆՏԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՁԵՎԱԽԵԿՂՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱՓՈԽՎՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ

Անցումագիտության տեսափիլիսոփայական հիմնական ընդհանրացումները հանգում են նրան, որ վերափոխվող հասարակական համակարգերում գործ ունենք հասարակական հարաբերությունների բոլորովին այլ որակի հետ, որին բնորոշ են.

- իրավահարաբերությունների օբյեկտիվ նախադրյալների անորոշությունն ու որպես դրա հետևանք՝ հասարակական հարաբերությունների անկայունությունը,
- արժեհամակարգային շփոթն ու անորոշությունը /քաղաքական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական եւ այլն/,
- ֆունկցիոնալ անկառավարելիության վիճակը եւ ճգնաժամային կառավարման սկզբունքների ու գործիքակազմի գերակայությունը,
- վստահության եւ հավատի խոր դեֆիցիտը՝ սոցիալական գրեթե բոլոր առնչություններում, բանականի նկատմամբ թերահավատությունը, էմոցիաներին տուրք տալը, քաղաքական դեմագոգիայի ծավալման համար աննախադեպ հնարավորությունների առկայությունը,
- համընդհանուր անբավարարությունը, սոցիալական տագնապն ու գերլարվածությունը, բացասական հասարակական էներգիայի անխուսափելի կուտակումները, որոնք կարող են կրիտիկական զանգված ձևավորել եւ հանգեցնել պայթյունային հանգուցալուծումների,
- նոր անկախացած երկրների համար համակարգային անցումը կառավարելի դարձնելու անխուսափելի դժվարությունների հաղթահարման անհրաժեշտությունը,
- սոցիալական ու տնտեսական աննախադեպ բեռնացումն ու քաղաքական, տնտեսական եւ վարչական ներուժի սերտաճման իրական վտանգը,
- բացասական էկզոգեն գործոններին ինքնուրույն դիմակայելու անխուսափելիությունը եւ այլն:

Բնականաբար, այս հանգամանքները տարբեր երկրներում տա-

րակերպ դրսևորում են ունենում: Այսուհանդերձ, սահմանադրական զարգացումները յուրաքանչյուր երկրի համար բնական, դինամիկ, շարունակական գործընթաց են: Տարբեր երկրներ պետք է գտնեն սահմանադրականության հաստատման ու դինամիկ համակարգային բարեփոխումների այնպիսի ձևեր ու եղանակներ, որոնք իրենց բնույթով ժողովրդավարական են, բովանդակությամբ՝ իրավական եւ երաշխավորում են տվյալ սոցիալական հանրության առաջընթացն ու զարգացումը:

Անցումային համակարգ ունեցող երկրների համար տրանսֆորմացիայի գերագույն խնդիրը սահմանադրականության հաստատումն է ու սահմանադրական կայուն զարգացումների երաշխավորումը: Վերջինս, ինչպես նշվեց, ենթադրում է՝ ժողովրդավարական ինստիտուտների միջոցով իրավունքի գերակայության երաշխավորում, հասարակական համաձայնության, փոխըմբռնման ու հանդուրժողականության միջավայրի ձեւավորում, համակեցության հիմնարար կանոնների շուրջ փոխհամաձայնության շարունակական ապահովում եւ, դրանց շնորհիվ, հասարակության դրական ներուժի ուղղորդում առաջադիմությանն ու զարգացմանը:

Հստակ է նաեւ, թե քաղաքացիական հասարակության կայացման սկզբունքներից ելնելով ինչն է հակացուցված այս գործընթացին: Սահմանադրական զարգացումները չեն կարող ծառայեցվել ընթացիկ քաղաքական նպատակահարմարությանը: Դրանք չեն կարող խաթարել իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հաշվեկշիռը, առաջ բերել անհավասարակշռվածություն, նպաստել քաղաքական, վարչական, տնտեսական ուժի միատեղմանն ու սերտաճմանը: Սահմանադրական գործընթացները չեն կարող թուլացնել մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները, սահմանափակել նրա ազատությունները, խոչընդոտել ինքնակառավարման զարգացմանը: «Մարդու իրավունքներ», «ժողովրդավարություն» եւ «իրավական պետություն» հասկացությունները հանդես են գալիս որպես օրգանական եռամիասնություն եւ սահմանադրականության հաստատման նպատակը դրա երաշխավորումն է:

Վերափոխվող հասարակական համակարգերում սահմանադրաիրավական հիմնական ձեւախեղումները պայմանականորեն կարելի է դասել երեք խմբի.

1. առաջադիմական իրավական արժեքների մեխանիկական փոխառում կամ պատճենավորում՝ առանց դրանց իրացման անհրաժեշտ նախադրյալների ստեղծման, որն իրական կյանքում հանգեցնում է սահմանադրական հիմնական սկզբունքների տարաբնույթ ձեռախեղումների,
2. սահմանադրաիրավական խեղված լուծումներ կամ թերացումներ,
3. իրավամտաժողոպիան եւ իրավակիրառական պրակտիկայի ինտեգրիա:

Միջազգային վերլուծական կազմակերպությունների հետազոտությունները /Ազատության տուն, Իրավունքի գերակայության ինդեքս եւ այլն/ վկայում են, որ եվրոպական երկրներում եւ նախկին ԽՍՀՄ տարածքում սահմանադրաիրավական արժեքների իրացման առումով կարելի է առանձնացնել երկրների երեք հստակ խմբեր. Եվրոպական միության նոր անդամ դարձած երկրներ, բալկանյան անցումային երկրներ եւ ԱՊՀ երկրներ:

Եթե առաջին երկու խումբ երկրներում ժողովրդավարական զարգացումների ընդհանուր դիմամիկան հիմնականում դրական է, ապա ԱՊՀ անդամ երկրներում ոչ միայն մակարդակն է խիստ ցածր, այլև դիմամիկան է բացասական:

Չնայած այն բանին, որ Հայաստանի Հանրապետությունում շատ ցուցանիշներ այդ խմբի այլ երկրների համեմատությամբ շահեկանորեն տարբերվում են, սակայն էական դրական միտումներ չեն արձանագրվել:

Նման իրավիճակը, բնականաբար, լուրջ մտորումների ու մասնագիտական գնահատման անհրաժեշտություն ունի, որին դեռևս կանդիդատնանք: Չենք ցանկանում վեճի առարկա դարձնել ուսումնասիրման մեթոդիկան եւ սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը: Գտնում ենք, որ մեր կողմից տարիներ առաջ ներկայացված մեթոդիկան գիտական առումով առավել հիմնավոր ու օբյեկտիվ է³⁵⁰: Տարբեր են նաև իրավիճակը պայմանավորող օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները: Այսուամենայնիվ, փաստը մնում է փաստ, որ կատարված

350 Տե՛ս. G. Harutyunyan, A. Mavčič - The Constitutional Review and its Development in the Modern World (a comparative constitutional analysis), Yerevan - Ljubljana, 1999, p.382-392.

վերլուծությունները վկայում են անցումային երկրներում, հատկապես ԱՊՀ անդամ, **սահմանադրականության որոշակի ճգնաժամի եւ սահմանադրական զարգացումների ակնհայտ ձեւախեղումների մասին**: Սա այն իրողությունն է, երբ շեշտվում է, որ Սահմանադրությունն առկա է, սակայն չկա սահմանադրականություն, սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ մակարդակ, սահմանադրական սկզբունքներն ու նորմերը չեն դառնում ապրող իրողություն: Դրա վկայությունը ոչ միայն բացասական հասարակական էներգիայի կուտակումներն են ու, որպես հետեւանք՝ տարաբնույթ գունավոր հեղափոխությունները, այլև այն, որ հիմնական կարգախոս դարձնելով իրավական պետության ու ժողովրդավարության սահմանադրական սկզբունքները, գործնականում դրանցից ակնհայտ շեղման միտումներ են առկա:

Հետհամայնավարական երկրների սահմանադրական զարգացումների փորձի վերլուծությունը վկայում է, որ դրանց բնորոշ է այն, որ նոր սահմանադրությունների ընդունման փուլերում առկա էին թե՛ ռեւանշի ձգտող ձախ ընդդիմությունը եւ թե՛ հեղափոխական լիբերալիզմը: Դրանց փոխազդեցությունը ձեւավորեց իրավական լուծումների քաղաքական փոխհամաձայնության որոշ միջավայր: Գրեթե բոլոր այդ երկրներում աստիճանաբար ոչ միայն թուլացավ ձախ ծայրահեղականությունը, այլև լիբերալ ռոմանտիզմն իր տեղը զիջեց չափավոր իրատեսությանը: Էսպես խախտվեց քաղաքական ներազդեցությունների հաշվեկշիռը: Սահմանադրական լուծումների, նոր փոփոխությունների վրա աստիճանաբար գերակայեց գործող իշխանության վարչաքաղաքական ներազդեցությունը, որը վտանգավոր է այն չափով, որչափով սահմանադրական լուծումները հարմարեցնում է ընթացիկ քաղաքական խնդիրների լուծմանը՝ այն չդարձնելով ընդհանուր ստեղծումների շուրջ հասարակական համաձայնության արդյունք:

Տիպական է նաեւ այն, որ այդ երկրներում, որպես կանոն, կայացած չէ քաղաքական համակարգը: Քաղաքական կուսակցությունների զգալի մասը, ըստ գերմանացի քաղաքագետներից մեկի բնորոշման, «...կամ քաղաքական աղանդներ են կամ առանձին փառամոլ անհատների ինքնահաստատման միջոց»: Բացակայում է ժողովրդ-

դավարական արժեքներին ներդաշնակ քաղաքական մշակույթը: Ժողովրդավարությունն ինչ-որ առումով նենգափոխվում է քաղաքական դիկտատուրայի՝ երբ քաղաքական մեծամասնությունն ունի բոլոր հնարավորություններն իր քաղաքական կամքն իրացնելու համար, իսկ փոքրամասնությունն օժտված չէ նույնիսկ հակակշռող այնպիսի ներուժով, որ ստիպի մեծամասնությանը մնալ սահմանադրական դաշտում՝ թեկուզ նորմատիվ ակտերի սահմանադրականության վիճարկման միջոցով: Տիպական են դառնում անձնիշխանության տարակերպ դրսևորումները, անձը փոխարինում է պետաիշխանական ինստիտուտին, իսկ նրա կամքը ուղղակի կամ անուղղակի օրենք է դառնում: Սա ժողովրդավարության քողի տակ ծածկված կլանային համակարգ է, ինչը Հայաստանում սկսեց արմատներ ձգել 1990-ականների կեսերից: 2000-ական թվականներին այն համակարգային բնույթ ստացավ, դարձավ ընդհուպ օրենսդրական կարգավորումներ ստացած պետական մեքենա եւ դեռես շարունակում է իր ավերիչ ընթացքը:

Նման իրավիճակներում ժողովրդի ու իշխանությունների միջև անջրպետը խորանում է: Իշխանությունների կողմից ձեռնարկվող քայլերը համահունչ ու համարժեք չեն նկատվում ժամանակի նետած մարտահրավերներին: Չի ձեւավորվում քաղաքական լուրջ վերափոխումների անհրաժեշտ ու բավարար ռեսուրս, իսկ եղած հնարավորությունները, հստակ առաջնահերթությունների բացակայության պայմաններում, արդյունավետ չեն իրացվում:

Նման պայմաններում էապես մեծանում է էկզոգեն գործոնի դերը, մասնավորապես՝ եվրոպական կառույցների ակտիվ ներագրեցությունը հետհամայնավարական երկրների ժողովրդավարական զարգացումների վրա: Դրա բնորոշ օրինակ են Հայաստանի սահմանադրական զարգացումների առնչությամբ Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի դրսևորած դիրքորոշումն ու դրա փաստացի արդյունքները:

Գերագույն խնդիրն այն է, որ սահմանադրական զարգացումներն առավելապես պետք է ներքին գիտակցված անհրաժեշտությամբ թելադրված լինեն եւ դառնան հասարակական համաձայնության կայացման, քաղաքական ճգնաժամերի հաղթահարման միջոց:

Եվրոպական ու նախկին ԽՍՀՄ երկրների փորձը վկայում է, որ

սահմանադրական զարգացումների առումով առկա է երեք հիմնական իրավիճակ.

Առաջին.

- իրողություն է Սահմանադրության որոշակի պարբերականությամբ փոփոխման ու լրացման պրակտիկան,
- առկա է օրգանական (սահմանադրական) օրենքների ընդունման ինստիտուտը,
- կա Սահմանադրության պաշտոնական վերացական մեկնաբանման ինստիտուտ,
- սահմանադրաիրավական լուծում են ստանում իշխանության մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հարցերով առաջացած վեճերը,
- դատարանի իրավական դիրքորոշումը դառնում է սահմանադրական իրավունքի աղբյուր,
- գործնականում ազգային սահմանադրական իրավունքի աղբյուր է դառնում նաև միջազգային արդարադատական մախարդեպը:

Երկրորդ. նշված վեց գործոններից մեկը կամ երկուսը գործուն չեն եւ առաջանում է մյուս գործոնների փոխլրացման անհրաժեշտություն:

Երրորդ. բոլոր վեց գործոնները բացակայում են կամ գրեթե բացակայում են եւ առկա է սահմանադրական զարգացումների փակուղի: Նման իրավիճակը կարող է հանգեցնել սահմանադրական ճգնաժամի:

Ներկայացնենք միայն մի քանի համեմատություններ: Հայաստանի Հանրապետությունում 1995-2005թթ. սահմանադրական փոփոխություններ չէին կատարվել, չկար օրգանական օրենքների ինստիտուտ, չկար Սահմանադրության պաշտոնական վերացական մեկնաբանման համակարգ, օրենքների եւ ներպետական նորմատիվ այլ իրավական ակտերի առնչությամբ 10 տարում Սահմանադրական դատարանն ստացել էր ընդամենը 8 դիմում, ընդ որում, գործադիր իշխանության մարմինների (Նախագահ, կառավարություն) կողմից ընդունված նորմատիվ ակտերի գծով ոչ մի դիմում, Սահմանադրական դատարանը սահմանադրական լիազորությունների հարցով առաջացած վեճերի լուծման իրավասություն չունի:

Մինչդեռ, թե՛ երկրի քաղաքական ուժերը եւ թե՛ միջազգային կազ-

մակերպությունները բազմիցս վկայել են, որ երկրի հետագա առաջընթացը մեծապես պայմանավորված է սահմանադրական ժողովրդավարության հաստատմամբ ու իրավունքի գերակայության երաշխավորման ռեալ նախադրյալներով: Այս առումով դրական զգալի նոր հնարավորություններ բացվեցին միայն 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում:

Փաստորեն, այս օրինակը վկայում է, որ բոլոր այն երկրներում, որտեղ ժողովրդավարական գործընթացների բացասական միտումները խորանում են, սահմանադրական զարգացումները ոչ բավարար են ու աններդաշնակ առկա մարտահրավերներին: Մեր խորին համոզմամբ, իրավիճակի շտկման առավել արդյունավետ ուղին սահմանադրական զարգացումների վերոնշյալ բոլոր վեց ուղղությունների առավելագույն իրացումն է, եւ, մասնավորապես, սահմանադրական արդարադատության դերի պատշաճ գիտակցումն ու դրա ներուժի խելամիտ օգտագործումը:

Ընդհանրապես սահմանադրական այս կամ այն դոկտրինայի ընդունումը տվյալ երկրի համար ինքնին սահմանադրաիրավական որոշակի արժեքների համակարգի ընդունում է, որն արտահայտում է պետական մակարդակում, ինչպես նաեւ հանրային գիտակցության մեջ ընկալված եւ իմաստավորված պատկերացումները պետության եւ հասարակության կազմակերպման ու զարգացման մասին: Գլխավոր խնդիրն այն է, թե, մի կողմից, որքանով է դա արժեվորվել պետական քաղաքականության մակարդակում եւ ինչպես է այն երաշխավորվելու հասարակական պրակտիկայում, մյուս կողմից՝ որքանով է քաղաքացիական հասարակությունը պատրաստ ապրել արժեքների այդ համակարգով:

Փորձենք նախ անդրադառնալ սահմանադրական հիմնարար արժեքների պետականագիտական ընկալմանն ու իրացման երաշխիքների ապահովմանը, նկատի ունենալով ոչ թե զուտ դոկտրինալ ընկալումը, այլ պետական քաղաքականության մակարդակում տվյալ հիմնահարցի նկատմամբ մոտեցումների ու պատկերացումների հիմնարար, համակարգային ու բազմագործոն բնույթը:

Սահմանադրության արժեքանական (աքսիոլոգիական) հիմնահարցերի հետազոտումն առաջին հերթին պահանջում է առանձնաց-

նել արժեքային այն հենասյուները, որոնց վրա հենվում է սահմանադրական ողջ համակարգը:

Յավոք, սահմանադրական արժեքանությունը մեր իրականության մեջ որպես ինքնուրույն գիտական ուղղություն դեռևս չի ձևավորվել, եւ այս ոլորտում հետազոտություններ գրեթե չկան: Սակայն հասարակական հարաբերությունների սահմանադրականացման հիմնախնդիրների լուծումն առանց Սահմանադրության արժեքանական խոր վերլուծությունների՝ գրեթե անհնարին է:

«Սահմանադրություն» հասկացությունը, ինչպես նշվեց, ինքնին արժեքանական բովանդակություն ունի: Ուստի Սահմանադրության գերակայության երաշխավորումը ենթադրում է իրավական համակարգում սահմանադրական հիմնարար արժեքների երաշխավորում, դրանց համակարգային կյանքի կոչում: Այդ արժեքներն ունեն այն բնորոշ առանձնահատկությունը, որ սուբյեկտիվ հայեցողական բնույթ չեն կրում, դրանք հասարակական համաձայնությամբ դառնում են կենսագոյի եւ համակեցության գլխավոր ու համապարտադիր բնութագրիչներ:

Հաջորդ հիմնական առանձնահատկությունն այն է, որ այդ արժեքները չեն կարող մեկուսի դրսևորվել, դրանք սահմանադրական մակարդակում համակարգվում են եւ հանդես գալիս փոխաբանում ու փոխապայմանավորվածության մեջ: Ուստի անհնարին է բացառելով սահմանադրական այս կամ այն հիմնարար արժեքը, այն ձևախեղելով հասարակական պրակտիկայում, այլ արժեքների վրա հենվելով՝ էական հաջողություն արձանագրել:

Սահմանադրության արժեքանական հիմնական բնորոշիչները, որպես կանոն, նախ արտացոլվում են Հիմնական օրենքի նախաբանում՝ հիմնականում նորմ-նպատակների ձևով: Դրանք իրենց հետագա համակարգված արտացոլումն են գտնում սահմանադրական նորմ-սկզբունքներում, ինչպես նաեւ հիմնարար իրավահարաբերություններ կարգավորող նորմերում ու դրույթներում:

Մենք փորձել են համեմատական վերլուծության առարկա դարձնել շուրջ 140 երկրների սահմանադրությունների արժեքանական բնութագրիչները:

Առաջին ընդհանրացումն այն է, որ դժվար է գտնել որևէ երկրի

Սահմանադրություն, որում արժեհամակարգային մոտեցումները բացարձակ նույնական լինեն մեկ այլ երկրի հետ: Յուրաքանչյուր երկիր որդեգրում է սահմանադրական արժեքանության իր դոկտրինան: Սա բնական է եւ վկայում է, որ Սահմանադրությունը ոչ թե ներմուծվող կամ արտահանվող ապրանք է, այլ տվյալ սոցիալական հանրության, տվյալ պետության արժեհամակարգային ընդհանրացումների վրա կառուցված փոխհամաձայնություն է համակեցության հիմնարար կանոնների շուրջ:

Երկրորդ՝ երկրների զգալի մասը (ԱՄՆ, Իսպանիա, Հնդկաստան, Արգենտինա, Ռուսաստանի Դաշնություն, Մոլդովա, Հայաստան եւ այլն) առաջին հերթին փորձել են Սահմանադրության նախաբանում ամրագրել Հիմնական օրենքի արժեքանական հիմքերը՝ որպես սահմանադրական նորմ-նպատակ: Ընդ որում, շեշտադրումը կատարվում է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են արդարությունը, ազատությունը, հավասարությունը, եղբայրությունը, հանդուրժողականությունը, քաղաքացիական համերաշխությունը, քաղաքական բազմակարծությունը, երկրի անվտանգությունը, սերունդների բարեկեցությունը, ժողովրդավարությունը, իրավունքի գերակայությունը, մարդու արժանապատվությունը, նրա իրավունքների հարգումն ու պաշտպանությունը, միջազգային համագործակցությունը եւ այլն: Իրողությունն այն է, որ տարբեր երկրների սահմանադրությունների նախաբաններում շեշտադրումը կատարվում է այս արժեքներից մի մասի վրա միայն՝ հիմք ընդունելով հատկապես տվյալ հասարակության համար դրանց առաջնահերթությունը:

Երրորդ՝ բազմաթիվ երկրներում կոնկրետ հոդվածներով Սահմանադրությունն ամրագրում է արժեքների այն համախումբը, որն ընկած է տվյալ սահմանադրաիրավական հարաբերությունների կանոնակարգման հիմքում: Օրինակ, Հարավաֆրիկյան Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածը սահմանում է, որ այս երկիրը ժողովրդավարական պետություն է՝ խարսխված այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են մարդու արժանապատվությունը, իրավահավասարությունը, իրավունքների ու ազատությունների առաջընթացի ապահովումը, ռասիզմի եւ խտրականության բացառումը, Սահմանադրության գերակայությունը, օրենքի իշխանությունը, ինչպես նաեւ

համընդհանուր ընտրական իրավունքը, միասնական ազգային ընդհանուր ընտրական ռեեստրը, բազմակուսակցական համակարգը: Իսկ Խորվաթիայի Սահմանադրության 3-րդ հոդվածը սահմանում է, որ ազատությունը, հավասարությունը, ազգային իրավահավասարությունը, խաղաղասիրությունը, սոցիալական արդարությունը, մարդու իրավունքների հարգումը, սեփականության անձեռնմխելիությունը, բնության եւ շրջակա միջավայրի պաշտպանությունը, իրավունքի տիրապետությունը եւ ժողովրդավարական բազմակուսակցական համակարգը Խորվաթիայի Հանրապետության սահմանադրական կարգի բարձրագույն արժեքներն են:

Ռումինիայի Սահմանադրության 3-րդ հոդվածը նույնպես սահմանում է, որ Ռումինիան իրավական, ժողովրդավարական եւ սոցիալական պետություն է, որում մարդու արժանապատվությունը, նրա իրավունքներն ու ազատությունները, անձի ազատ զարգացումը, արդարությունը եւ քաղաքական բազմակարծությունը հանդիսանում են բարձրագույն արժեքներ եւ երաշխավորվում են:

Ֆրանսիայի Սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանում է, որ Հանրապետության կարգախոսներն են. «Ազատությունը, Հավասարությունը, Եղբայրությունը»: Ֆրանսիական հեղափոխության այս կարգախոսները սահմանադրական մակարդակում արժեվորվել են որպես հասարակական համակեցության գլխավոր որակական բնորոշիչներ: Դրանք ենթադրում են մարդու ներաշխարհը, նրա սոցիալական բոլոր առնչությունները, հասարակական կեցության արժեվորումն ու այդ միջավայրում ինքնաիրացման բոլոր դրսեւորումները պետք է առաջին հերթին իմաստավորված ձեռով խարսխվեն հենց այդ արժեքների վրա: Մա նաեւ լավագույն վկայությունն է այն բանի, որ սահմանադրական հիմնարար արժեքներն են ամենից առաջ Սահմանադրությունը դարձնում ապրող իրողություն: Նշված հասկացությունները սահմանադրական մակարդակում ստանում են ռեալ բովանդակություն՝ որպես սոցիալական հանրության արժեհամակարգային, սոցիալ-մշակութային հիմնարար կողմնորոշիչներ:

Սահմանադրական հիմնարար արժեքների հստակեցման եւ կոնկրետ նորմի ձեռով ամրագրման ճանապարհով գնացին նաեւ Եվրոպական միության Սահմանադրությունը մշակող Կոնվենտի ան-

դամները, որոնք Եվրոպական միության երկրների վավերացմանը ներկայացրած Սահմանադրական համաձայնագրի 2-րդ հոդվածում ամրագրեցին Միության արժեքները, համաձայն որի. **«Միությունը հիմնված է այնպիսի արժեքների վրա, ինչպիսիք են մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների հարգումը: Այս արժեքներն ընդհանուր են Անդամ պետությունների համար, որոնցում հասարակությանը բնորոշ են անխտրականությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, արդարադատությունը եւ համերաշխությունը»:** Չնայած այն հանգամանքին, որ այս փաստաթուղթը կյանքի չկոչվեց եւ Եվրամիության մասին 2007թ. Լիսաբոնյան համաձայնագիրն այլևս նման կոնկրետ հոդված չի բովանդակում, այսուհանդերձ, ակնհայտ է, որ Եվրոպական միության սահմանադրական արժեքանության մակարդակում տրվել է հստակ ու ընդգրկուն ձեւակերպում, որը քաղաքակրթական կողմնորոշման արժեհամակարգային հիմք է հանդիսանում եւ, մեր կարծիքով, նշանակալից քայլ է սահմանադրագիտության բնագավառում:

Չորրորդ՝ մեծ թվով երկրներ առանձին հոդվածով չբանաձեւելով Սահմանադրության արժեքանական հիմնական բնորոշիչները, այսուհանդերձ, տարբեր հոդվածներում անդրադառնում են դրան: Ընդ որում, հիմնական մոտեցումն այն է, որ ընդգծված վերաբերմունք է դրսևորվում մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 2-րդ հոդվածը սահմանում է, որ մարդը, նրա իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեք են: Պետության պարտականությունն է ճանաչել, ապահովել եւ պաշտպանել մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Համաձայն Հայաստանի Սահմանադրության 3-րդ հոդվածի՝

«1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունը իր իրավունքների եւ ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Համարժեք ձեռակերպումների կարող ենք հանդիպել նաև բազմաթիվ այլ երկրների սահմանադրություններում (օրինակ, Գերմանիայի Դաշնություն, հոդվ. 1, Վրաստան, հոդվ. 7, Ուկրաինա, հոդվ. 3 և այլն): Նման նորմերը, հենվելով բնական իրավունքի տեսության վրա, որոշակիացնում են իրավական, ժողովրդավարական պետության արժեքանական մոտեցումները սահմանադրական հիմնարար լուծումների առկայությամբ՝ դրանց հիմքում դնելով իրավունքի գերակայության սկզբունքը: Այս մոտեցումը բնորոշ է նաև միջազգային այնպիսի հիմնարար փաստաթղթերի, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, 1966թ. միջազգային դաշնագրերը և այլն:

Ընդհանուր մոտեցումն այն է, որ սահմանադրական հիմնարար արժեքները կյանքի են կոչվում սահմանադրական իրավունքների, ազատությունների և սահմանադրական այլ ինստիտուտների միջոցով, որոնց միջև առաջացող կոլիզիայի հաղթահարումը Սահմանադրության գերակայության երաշխավորման կարելուրագույն խնդիրներից մեկն է՝ հիմքում ունենալով իրավունքի գերակայության սկզբունքը:

Հինգերորդ՝ իրավական, ժողովրդավարական երկրների սահմանադրական լուծումներում արժեհամակարգային ընդհանրացման առանձնահատուկ կարելուրություն ունեն ժողովրդաիշխանության, իշխանությունների տարանջատման և հավասարակշռման, ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի երաշխավորման, Սահմանադրության գերակայության, քաղաքական բազմակարծության ապահովման, սեփականության իրավունքի ճանաչման և պաշտպանության, անձի իրավագրկության բացառման և մի շարք այլ սկզբունքներ, որոնք, որպես կանոն, տվյալ երկրի սահմանադրական կարգի հիմքն են կազմում: Այս սկզբունքները տարբեր երկրների սահմանադրություններում տարբեր կերպ են կոնկրետանում, սակայն իրենց էության մեջ մույն արժեքանական հենքն ունեն:

Նշված բոլոր դրսևորումների մեջ սահմանադրական հիմնարար արժեքները կազմում են համակարգային ամբողջականությունն էլ Սահմանադրությունը դարձնում են ապրող իրողություն՝ երբ այդ արժեհամակարգային հիմքի վրա են խարսխվում նաև իրավական ողջ համակարգը, իրավակիրառական պրակտիկան, միջանձնային էլ մարդ-այեություն վոխհարաբերությունների ողջ համալիրը, երբ այդ արժեքներն ամեն մի կոնկրետ անհատի համար երաշխավորված ձեռով դառնում են կենսակերպի շարժիչ ուժ:

Փորձենք այժմ անդրադարձ կատարել այս հարցին հասարակական պրակտիկայի տեսանկյունից՝ կատարելով հետևյալ հիմնական շեշտադրումները.

- **առաջին**՝ որքանո՞վ են սահմանադրական հիմնարար արժեքները համարժեք ընկալվում, երաշխավորվում ու հետետողականորեն իրացվում պետական քաղաքականության մակարդակում,

- **երկրորդ**՝ որքանո՞վ են ներդաշնակ Սահմանադրության արժեքանական ընկալումները հանրության էլ իշխանությունների կողմից,

- **երրորդ**՝ ի՞նչ հիմնական միտումներ ու առանձնահատկություններ կան այս ոլորտում անցումային երկրներում էլ որո՞նք են հիմնական մարտահրավերները:

Նշված հարցադրումներին պատասխանելու համար նախ ցանկանում ենք ներկայացնել մի վերլուծություն: Մեր կողմից ուսումնասիրվել են 30 երկրներում վերջին 10 տարիներին տեղի ունեցող գործընթացները: Այդ երկրների հիմնական բնութագրիչն այն է, որ նախկին համայնավարական հասարակական հարաբերությունների կրող են եղել էլ այժմ հայտնվել են որակապես տարբեր երեք համակարգերում: Դրանցից առաջինը Եվրոպական միության նոր անդամ դարձած Արևելյան Եվրոպայի երկրներն են: Երկրորդ խումբը ներկայացնում են Եվրամիության անդամ դեռևս չդարձած Բալկանյան երկրները: Երրորդ խմբում ներառված են ԱՊՀ անդամ էլ նախկին ԽՍՀՄ ոչ բալթյան երկրները: Վերլուծության համար օգտվել ենք նաև ԱՄՆ «Ազատության տուն» կազմակերպության տեղեկատվությունից: Այդ կազմակերպության կողմից հաշվարկվող՝ ժողովրդավարության ինտեգրալ մակարդակի բնութագրիչը 2011թ. երկրների 1-ին խմբում 2.46 անգամ ավելի բարձր է 3-րդ խմբի էլ 1.67 անգամ՝ երկրորդ խմբի համեմատությամբ: Միաժամանակ, եթե 1-ին խմբում վերջին 8 տարում այդ մակարդակը նվազել է 4.3, իսկ 2-րդ խմբում ավելացել է 1 տոկոսով, ապա երրորդ խմբում անկումը կազմել է 7.2 տոկոս:

Քաղաքացիական հասարակության որակական բնութագրիչները 1-ին և 3-րդ խմբերում շեղվում են 2.64 անգամ, 2-րդ և 3-րդ խմբերում՝ 1.7 անգամ: Այդ բնութագրիչների դինամիկան վերջին 8 տարիներին հետեւյալն է. 1-ին խմբում վիճակի վատթարացում մոտ 4 տոկոսով, երկրորդում՝ բարելավում 13 տոկոսով, իսկ երրորդ խմբում նահանջ է գրանցվել 5 տոկոսի չափով:

Ընտրական գործընթացների ժողովրդավարական մակարդակը 3-րդ խմբում 1-ին խմբին զիջում է 3.48 անգամ, 2-ին՝ 1.7 անգամ: Դինամիկան 8 տարում հետեւյալն է. 1-ին խմբում բարելավում 3 տոկոսով, երկրորդում՝ 2.7 տոկոսով, իսկ երրորդում արձանագրվել է վիճակի վատթարացում 7.5 տոկոսով:

Բերենք եւս մեկ համեմատություն: Դատական իշխանության անկախության մակարդակն 1-ին խմբում երրորդի համեմատությամբ բարձր է 2.58 անգամ, երկրորդի համեմատ՝ 1.35 անգամ: Դինամիկան 8 տարում հետեւյալն է. 1-ին խմբում վիճակի վատթարացում մոտ 1 տոկոսով, երկրորդում՝ բարելավում 0.4 տոկոսով, իսկ երրորդում արձանագրվել է վիճակի վատթարացում 9.1 տոկոսով:

Գրեթե համանման միտումներ ենք նկատում նաեւ մամուլի անկախության, կառավարման բնույթի, կոռուպցիայի դեմ պայքարի եւ այլ ոլորտներում: Այս բոլորը վկայում են, որ չնայած ուսումնասիրված 30 երկրներում սահմանադրական մակարդակում արժեքանական տեսանկյունից համարժեք դիրքորոշումներ են արձանագրված, սակայն սահմանադրական պրակտիկան բոլորովին այլ պատկեր ունի:

Մեր կարծիքով, դրա պատճառները մի քանիսն են: **Նախ**, որքանով է սահմանադրական մակարդակում հետետղականություն դրսևորվել՝ ինչպես սահմանադրական հիմնարար արժեքների համակարգային ամբողջականության երաշխավորման, այնպես էլ բուն Սահմանադրության մեջ նորմ-նպատակների ու նորմ-սկզբունքների իրացումը երաշխավորելու, Սահմանադրության ինքնաբավությունն ապահովելու առումով: Դա վերաբերում է թե՛ կոնկրետ իրավահարաբերություններ կանոնակարգող սահմանադրական նորմերին, թե՛ զսպումների ու հակակշիռների համակարգին եւ թե՛ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների սահմանափակումների ինստիտուտին: Մա նշանակում է նաեւ, որ սահմանադրական ախտաբանության ոլորտում առաջին վերլուծությունները պետք է սկսել ներսահմանադրական ինքնապաշտպանության խնդիրների բա-

ցահայտումից: Փաստն այն է, որ այս ոլորտում բացերն ու չլուծված խնդիրներն զգալի են, որոնք, թերևս, կարող են առանձին քննարկման առարկա դառնալ:

Երկրորդ՝ հատկապես անցումային երկրների համար գլխավոր ձեռախեղումները տեղի են ունենում իրավաստեղծ գործընթացում, երբ կարծես «մոռացության տալով» սահմանադրական հիմնարար արժեքները, իրավակարգավորումն ավելի շատ է բխեցվում ընթացիկ նպատակահարմարությունից: Դա է նաև պատճառը, որ շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության մարմինները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մակարդակում սահմանադրականության խնդիրներին անդրադարձ են կատարում գրեթե հարկադրաբար՝ բախվելով սահմանադրական անմիջական արգելքների:

Անցումային հասարակությունների էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ սահմանադրական հիմնարար արժեքները հաստատվում են սահմանադրորեն երաշխավորված քաղաքական ու գաղափարախոսական բազմակարծության պայմաններում, որոնք սակայն, իրենց հերթին, արժեհամակարգային կայացման սաղմնային փուլում են գտնվում: Այս պայմաններում օրենքների ընդունման փուլում քննարկումների եւ հիմնահարցերի համակարգային կանոնակարգման անհրաժեշտ մակարդակ հաճախ չի ապահովվում:

Երրորդ՝ «երկրորդ փուլի ձեռախեղումները» շարունակում են ծավալվել իրավակիրառական պրակտիկայում, երբ, այսպես կոչված, «օրենսդրական նպատակահարմարությունը» կյանքի է կոչվում «սուբյեկտիվ նպատակահարմարության», մերկանտիլ շահերի իրացման տեսանկյունից: Այս մակարդակում սահմանադրական հիմնարար արժեքներն ավելի հաճախ ծխածածկույթի դեր են կատարում՝ օրենքի անունից քաղաքական ու անձնական նպատակահարմարության իրացման համար: Այս օղակում ցածր է նաև Սահմանադրության արժեքանական ընկալումների ու մշակույթի մակարդակը, որը հաճախ հանգեցնում է այդ արժեքների պետական ու հանրային ընկալումների անտազոնիզմի: Վերջինիս արդյունքում մեծանում են բացասական հասարակական էներգիայի կուտակումները, որոնք կրիտիկական զանգված հավաքելով՝ կարող են պայթյունավտանգ իրավիճակներ ստեղծել: Պատահական չէ նաև, որ շատ երկրների սահմանադրական դատարաններ օրենքի նորմը հաճախ հակասահ-

մանադրական են ճանաչում իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան տրված բովանդակությամբ հանդերձ:

Սահմանադրական հիմնարար արժեքները հասարակական պրակտիկայում կարող են երաշխավորված կյանքի կոչվել այնտեղ ու այն չափով, որտեղ եւ որչափով սահմանադրական ժողովրդավարության հաստատումը պետական քաղաքականության առանցքային խնդիրն է, այն չի պայմանավորվում ընթացիկ նպատակահարմարությամբ, ապահովված է իշխանությունների իրական բաժանումն ու հավասարակշռումը, ժողովրդաիշխանությունը կարգախոսից դարձել է ապրող իրողություն, յուրաքանչյուր իրավական լուծում ելնում է իրավունքի գերակայության սկզբունքից՝ նպատակ ունենալով արդար հասարակության կայացումը, որը կայունության եւ զարգացման հիմնական երաշխիքն է:

Ի՞նչն է խանգարում դրան: Մեր կարծիքով, առկա են բազմաթիվ պատճառներ, որոնցից հատկապես կցանկանայինք առանձնացնել.

մտայնության, մենթալիտետի իներցիան եւ սահմանադրական մշակույթի պակասը: Ոչ միայն անհնարին է ցատկել դարերի վրայով, այլև հաճախ ներմուծված ժողովրդավարությունը՝ բախվելով մախրող արժեհամակարգի ելուստներին, էապես ձեւախեղվում է,

ժողովրդավարության, իրավական պետության հիմնարար արժեքների պարզունակ նմանակումը կամ «վերապատվաստման» ճանապարհով «տեղայնացումը»,

- իրավագիտակցության ցածր մակարդակը եւ պետական իշխանության ոչ բավարար քաղաքական կամքն այն բարձրացնելու ուղղությամբ,
- ժողովրդավարական պետական կառույցների գործունակության ոչ բավարար երաշխիքներն ու քաղաքական կառուցակարգերի անկատարությունը,
- սահմանադրական եւ օրենսդրական անկատար լուծումները, սահմանադրական ժողովրդավարության հիմնարար սկզբունքների աղճատված ընկալումն ու իրացումն օրենսդրական քաղաքականության մեջ եւ իրավակիրառական պրակտիկայում,
- քաղաքական, տնտեսական եւ վարչական ուժերի այնպիսի սերտաճումը, որն արգելափակում է սահմանադրական հիմնարար արժեքների՝ առանց ձեւախեղման իրացումը հասա-

- րակական պրակտիկայում³⁵¹,
- հասարակական կարգի իմունային անբավարար վիճակը, սահմանադրական հավասարակշռության խաթարումները ժամանակին չբացահայտելու, գնահատելու ու վերականգնելու պատճառով բացասական սոցիալական միտումների ու իռացիոնալ դրսևորումների խորացումը,
 - կոռուպցիայի, հովանավորչության եւ ստվերային հարաբերությունների բարձր մակարդակը,
 - սահմանադրական զարգացումների աններդաշնակությունն առկա մարտահրավերներին եւ այլն:

Չորրորդ՝ անցումային երկրների համար առավել մեծ վտանգն այն չէ, որ սահմանադրական ժողովրդավարության ոլորտում ձեռքբերումները համեստ են ու ոչ ներդաշնակ իրական մարտահրավերներին: Շատ ավելի վտանգավոր է այն, երբ առկա են հակառակ միտումները, երբ նահանջ է արձանագրվում, երբ սահմանադրական հիմնարար արժեքները հասարակական պրակտիկայում ձեւախեղվելով՝ աստիճանաբար մուտացիայի են ենթարկվում եւ սկսում են վերարտադրվել որպես անտիարժեքներ: Սա արդեն հասարակական մետաստազ է, որը վկայում է նաեւ հասարակության իմունային համակարգի ակնհայտ անբավարարության մասին:

Անցումային երկրների սահմանադրական ախտաբանության գերագույն խնդիրը ժամանակին նման երեսույթների առաջացման բացահայտումն ու կանխումն է: Իսկ դրա համար, որպես պարտադիր պայման, անհրաժեշտ է արմատավորել սահմանադրական մշտադիտարկման եւ վերահսկողության գործուն համակարգ՝ պետական իշխանության բոլոր մարմինների գերագույն խնդիրը համարելով իրենց իրավասության շրջանակներում Սահմանադրության գերակայության երաշխավորմանն իրական նպաստ բերելը: Միայն այս դեպքում է հնարավոր Սահմանադրությունը դարձնել ապրող իրողություն եւ դրական լուրջ արդյունքներ արձանագրել երկրում սահմանադրական ժողովրդավարության հաստատման գործում:

³⁵¹ Տեղին է հիշել Արիստոտելի դատողություններն օլիգարխիայի ձեւավորման եւ իշխանության հետ սերտաճման վերաբերյալ, ինչին կանդորադաճանք ստորեւ:

4.10. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐՆ ԱՐԳԻ ՍԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ԴԻՏԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ

Մեր ժամանակներում սոցիալական իրականության բնորոշ ախտանիշներից են սահմանադրական մշակույթի եւ սահմանադրական բարոյականության ցածր մակարդակը, սահմանադրական արժեքանության աղճատված ընկալումները, սահմանադրականության ձեւախեղումները: Այս բաժնում կփորձենք հիմնախնդրին ոչ թե զգայական ու խրատաբանական անդրադարձ կատարել, այլ համակարգային փոխկապակցության մեջ բացահայտել ոչ միայն իրավիճակի խորքային պատճառները, այլեւ, կայուն զարգացման արդի հրամայականներից ու վերափոխվող հասարակական համակարգերի բնորոշ առանձնահատկություններից ելնելով, առաջադրել երկրում սահմանադրականության ու սահմանադրական բարոյականության հաստատման որոշ հայեցակարգային մոտեցումներ՝ նաեւ հաղթահարելու համար «իմիտացիոն սահմանադրականության» վտանգները³⁵²:

Սահմանադրական արժեքանության հիմնախնդրին մասնագիտական գրականության մեջ շատ անդրադարձեր են եղել: Առաջին հերթին ուշադրություն է դարձվել հասկացության իմացաբանական բնույթի ու բովանդակության բացահայտմանը, սահմանադրական «արժեք» եւ «սկզբունք» եզրույթների փոխառնչություններին, սահմանադրական բարոյականությանը, սոցիալական արժեքների սահմանադրականացման առանձնահատկություններին եւ մի շարք այլ հարցերի: Այդուհանդերձ, մեր կարծիքով, բավարար խորությամբ բացահայտված չեն վերափոխվող հասարակական համակարգերում սահմանադրական արժեքանության դրսևորման ու իրացման խորքային առանձնահատկություններն ու դրանցից բխող մարտահրավերներին դիմակայելու մոտեցումները:

Ընդհանուր առմամբ **Սահմանադրության արժեքանությունն** արժեքների այն համակարգն է, որն ընկած է սահմանադրական իրավակարգավորումների հիմքում: Հասարակական հարաբերություննե-

³⁵² Борис Страшун – Конституционализм: идеал, реальность и возможная перспектива. Сравнительное конституционное обозрение, 2011, N5(84). С. 43-47.

րի սահմանադրականացումը տեղի է ունենում կենսագոյի **հիմնարար** արժեքների իմաստավորման ու դրանց շուրջ հասարակական համաձայնության հենքի վրա³⁵³:

Սոցիալական արժեքները սահմանադրաիրավական նորմերի միջոցով դառնում են գերակա նշանակության համապարտադիր վարքագծի կանոն՝ ճանաչելով եւ հասարակական համաձայնությամբ երաշխավորելով սոցիալական ազատությունները: Սահմանադրական նորմերը հասարակության հիմնարար արժեքների ու իրավական սկզբունքների օրգանական միասնության դրսևորումն են, եւ դրանց արժեքանական սուբստանցը մարդն է, նրա արժանապատվությունը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը փաստում է. «Մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը եւ հավասար ու անօտարելի իրավունքները աշխարհի ազատության, արդարության ու խաղաղության հիմքն են» /ներածություն/: Միաժամանակ շեշտվում է. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով» /հոդվ. 1/: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը բարձրագույն արժեք է ճանաչում մարդուն, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները /հոդվ. 3/: Մարդկային արժանապատվությունը բացարձակ, «վերին Տեսչության»³⁵⁴, ինքնաբավ արժեք է, եւ այն հասարակական բարոյականության ու հումանիզմի դրսևորման համարժեք պահանջներ է առաջադրում: Բարոյական իրավակարգը չի ենթադրում լոկ անձի բարոյականության սուբյեկտիվ որակների առկայություն: Էականը դրանց դրսևորման համարժեք հնարավորության առկայությունն է, բանական էակի բնականոն գոյի արժեքանական այնպիսի միջավայրի ձեւավորումը, երբ անհատը, հասարակությունը եւ իշխանությունն արժեքային նույն կողմնորոշիչներով են առաջնորդվում:

Իրավական մոտեցումները, իրենց հերթին, բարոյական կարող են լինել, եթե սոցիալական հարաբերությունների օբյեկտիվ բնույթից են բխում եւ սոցիումի կողմից իմաստավորված կյանքի կանոն

353 Սանրամասն տե՛ս. Գ. Բարությունյան, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները, Երեւան, 2005թ., Գ. Harutyunyan, Constitutional Culture: the Lessons of History and the Challenges of Time, Yerevan, 2009.

354 Տե՛ս Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. 2, Վեներտիկ, 1837, էջ 688:

են դարձել: Ընդ որում, մարդկային համակեցության իրավական ու բարոյական հիմնարար արժեքներն են կազմում սահմանադրական արժեքանության հենքը: Սահմանադրվում են հասարակական հարաբերությունները, որոնց առանցքն օբյեկտիվորեն գոյություն ունեցող սոցիալական արժեքներն են, եւ որոնք իմաստավորման ու կյանքի կոչվելու **շարունակական ճանապարհ** են անցնում:

Մարդը, որպես **սահմանադրական արժեքանության առանցք**, ինքնաճանաչվում ու արժեվորվում է **ժամանակի հոլովույթում իր գոյի իմաստավորմամբ՝** հստակեցնելով արժեքների այն համակարգը, որը տվյալ ժամանակում իր հավաքական գոյի հիմքն է կազմում: Դրանցում ամենից առաջ առանձնանում են այնպիսի հիմնարար արժեքներ, ինչպիսիք են՝ **հավասարությունը, ազատությունը եւ արդարությունը:**

Սահմանադրությունը պետք է **հասարակական համաձայնության մարմնացումը լինի հենց այն հիմնարար արժեքների շուրջ**, որոնք կոնկրետ սոցիալական իրականության պայմաններում անհատի սոցիալական վարքագծի եւ իշխանությունների հանրային վարքագծի բարոյական հենքն ու բովանդակությունն են կազմում /Կանադի բնորոշմամբ՝ նրանց գոյության ներքին բարոյական օրենքն են դառնում/:

Սահմանադրական զարգացումների պատմությունն ինքնին այլ բան չէ, քան սոցիումի ինքնաճանաչման, ժամանակի մեջ հասարակական գոյի իմաստավորման ու դրա վրա խարսխված համակեցության պատմություն: Վերջինս միշտ չէ, որ ուղղաձիգ վերելք է ապրում: Վայրիվերումներն էլ անխուսափելի չեն: **Էականն այն է, թե կայուն շարունակականություն երաշխավորելու համար պատմությունից ինչ դասեր են քաղվում:**

Այժմեական հնչեղության ինչ եզրակացությունների է, օրինակ, հանգում Արիստոտելը՝ աթենական հասարակության սահմանադրական զարգացումների պատմությունը եւ վիճակը ներկայացնելով³⁵⁵: Դրանցից են.

1. Ժողովուրդը, **պետության հսկողությունն իր ձեռքը վերցնելով**, հաստատեց մի հասարակարգ, ինչն այժմ էլ գոյություն ունի / սա շուրջ 700 տարի տեւած պատմական ճանապարհ է, որի արդյունքը բացարձակ միապետության հաղթահարումն էր ու աթենական Ժողովրդավարության հաստատումը/,

355 Տե՛ս Արիստոտել, Աթենական հասարակարգը, Եր., «Հայաստան», 2000թ.:

2. այդ ճանապարհը դժվարին է ու խութերով լի: Էական է, որ-պեսզի ժողովուրդը դեմագոգներին լսելով՝ սխալ ուղիով չգնա,
3. դեմոկրատիան տեր է դարձել ամեն ինչի ու տնօրինում է ամեն ինչ՝ իր այն քվեներով, որ ունի Հավաքում /որպես բարձրագույն իշխանություն/, եւ դատարաններում, որոնց ձեռքին էլ գերագույն իշխանությունն է: Սակայն կարելի է նաեւ, որ աթենացին քաղաքացիական պարտքի ու պատասխանատվության կրող լինի /աթենական հասարակությունում ընդհուպ քաղաքացիական երկպառակությունների ժամանակ քաղաքացին ձեռնպահ մնալու իրավունք չուներ, պետք է հանդես գար մեկ կամ մյուս կողմում, հակառակ դեպքում կգրկվեր քաղաքացիությունից եւ կվաճառվեր որպես ստրուկ/,
4. հասարակարգն առավել ժողովրդավար դարձնելու համար անհրաժեշտ են համարժեք ռեֆորմներ: Սակայն առանց օրենքների փոփոխության բարքերը փոխել անհնար է,
5. օրենքները պետք է գործող լինեն, գործեն Սահմանադրության համաձայն, չդառնան բռնության գործիք,
6. եթե պետության հսկողությունը ժողովրդի ձեռքին չէ, դժվար է առաջընթաց ակնկալել,
7. ինչպես նշել ենք, դեռեւս աթենական ժողովրդավարության հայրը համարվող Սոլոնից է սկիզբ առել այն թեւավոր խոսքը, որ **Սահմանադրությունը պետք է գրվի նկատի ունենալով ժողովուրդը եւ ժամանակը:** Ժողովուրդը՝ իր հավաքական արժեքանական ընկալումներով, ժամանակը՝ իմաստավորման իր աստիճանով:

Մենք արդեն անդրադարձ կատարել ենք այն իրողությանը, որ 2004 թվականին Սանտյագոյում հրավիրված Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության գագաթնաժողովում քննարկումների առանցքն էր դարձել «Սահմանադրականություն՝ նոր աշխարհ, հին դոկտրինաներ» թեման: Այս թեման մշտապես շարունակելու է հրատապ մնալ, քանի որ հասարակական հարաբերությունների շարունակական զարգացումը նոր խնդիրներ է առաջադրում նաեւ սահմանադրական դոկտրինաներին: Էական այն իրողության գիտակցումն է, որ սահմանադրական մշակույթն ավելի կայուն է, քան սահմանադրական կոնկրետ համակարգերը, սակայն **դրանց գոյաբանական ներքին կապն անխզելի է:**

2014 թվականի նոյեմբերի 24-25-ին Ալժիրում նույնպես հրավիրվեց միջազգային մի խորհրդաժողով, որի թեման էր «Սահմանադրական զարգացումներն Աֆրիկայում»: Մեզ առավել հետաքրքրում էին այս խորհրդաժողովում ծավալված քննարկումներն անցումագիտության կոնկրետ մոտեցումների տեսանկյունից:

Առաջ քաշված սկզբունքային եզրահանգումներից էին.

1. սահմանադրությունները չեն կարող լինել ունիֆիկացված, դրանք սոցիալ-մշակութային ընդգրկում ունեցող երեւոյթ են,
2. անիմաստ է առաջ տանել Աֆրիկայի համար միասնականացված սահմանադրություն ունենալու գաղափարը,
3. առանց սահմանադրական զարգացումների երկրի ապագան մշուշոտ է,
4. բարեփոխումների գերագույն խնդիրը երկրի կայունության ապահովումն է,
5. բարքերի փոփոխությունը պետք է սկսել օրենքների փոփոխությունից,
6. անցումային հասարակարգերում զարգացման երաշխիքը հասարակական համաձայնության ձեռքբերումն է,
7. սահմանադրությունը պետք է կայուն լինի, **բայց ոչ ստատիկ կայուն**,
8. սահմանադրությունն արժեք ունի, եթե իրական կյանքում գոյություն ունի,
9. աֆրիկյան երկրների ամենամեծ խնդիրը ոչ թե սահմանադրությունների բացակայությունն է, այլ սահմանադրականության ճգնաժամը:

Որոշակի առումով բերված երեք օրինակներում էլ արժեքանական մոտեցումներն ընդհանրական շատ եզրեր ունեն՝ կարելիորվում են սահմանադրական դինամիկ, էվոլյուցիոն զարգացումների երաշխավորումը, ժամանակի մեջ գոյի իմաստավորման ու այն կյանքի կանոն դարձնելու անհրաժեշտությունը:

Մենք հանգամանորեն անդրադարձել ենք այն հանգամանքին, որ «սահմանադրություն» երեւոյթը պատմական խոր արմատներ ունի, եւ դրա ի հայտ գալով պայմանավորված՝ ձեւավորվում է նաեւ սահմանադրական որոշակի մշակույթ՝ կրելով ժամանակաշրջանի արժեքային կողմնորոշիչների ու իրավամտաժողովրդային կնիքը:

Աշխարհի շատ երկրների համար երկրորդ հազարամյակի ավարտը եւ նոր հազարամյակի սկիզբը բնորոշվեց որպէս խոր համակարգային վերափոխումների ժամանակաշրջան: Այն դեռեւս երկար ժամանակ կմնա գիտական համակողմանի հետազոտությունների կիզակետում: Սակայն այսօր էլ անցումագիտության տեսափիլիսոփայական հիմնական ընդհանրացումները վկայում են, որ գործ ունենք հասարակական հարաբերությունների եւ սահմանադրական բարոյականության բոլորովին այլ որակի հետ, ինչին արդեն անդրադարձել ենք:

Այդ բոլորի հետ մեկտեղ, լրացուցիչ խնդիրներ են առաջադրում արժեհամակարգային նոր մոտեցումներին ինտեգրման դժվարությունները: Դրանք երկու բնույթի են.

1. արժեհամակարգային նոր կողմնորոշումների անորոշությունները եւ համակարգային մոտեցմամբ նոր ուղիով ընթանալու օբյեկտիվ նախադրյալների բացակայությունը,
2. նոր կողմնորոշում ընտրելու եւ այն իրացնելու կարողության պակասը:

Նման պայմաններում բնորոշ է դառնում կոռուպցիայի բարձր մակարդակը, արդարադատության նկատմամբ ցածր վստահությունը, ընտրական մշակույթի ու իշխանությունների գործունեության քափանցիկության ոչ բավարար մակարդակը, մարդու իրավունքների հուսալի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության համակարգերի գործունակության պակասը, քաղաքական համակարգի անկատարությունը:

Ընդհանուր վիճակից զատ, հայ իրականությանը բնորոշ առանձնահատկություններից կարելի է, մասնավորապէս, առանձնացնել նաեւ հետեյալները.

1. պետականության դարավոր կորուստը, դրա հետեւանքով պետությանը բնորոշ ավանդույթների պակասը, օտարի պետականության /օրենքների, Մահմանադրության/ դեմ շարունակական կռիվն ու նաեւ հարմարվողականության եզրեր փնտրելը՝ ինքնությունը պահպանելու նպատակով,
2. եսակենտրոն որակները՝ իրենց սոցիալական բազմաբնույթ դրսեւորումներով,

3. մեծապատիվ մուրացկանի կամ փրկչի ու առաքյալի բարդույթը,
4. սոցիումի բնականոն զարգացմանը բնորոշ արժեքային համակարգի ձեռախեղումները կամ ձեռախեղված ընկալումները՝ տեսականորեն, դարերով բնականոն զարգացման վիճակից զրկվելու հետեւանքով,
5. ինքնաժխտումն ու օտարամոլությունը, որոնք սոցիալական որակ են դարձել դարձյալ դարեր ձգված ու խեղված սոցիալական միջավայրի ազդեցությամբ, ինչպես նաեւ այն որակները, որոնք, մասնավորապէս, ցավով ընդհանրացրել է Ռաֆայել Պատկանյանը դեռեւս 1860-ականներին գրված «Հիասթափություն» բանաստեղծության մեջ,
6. անցումային շրջանին բնորոշ ու մեզանում առանձնապէս ընդգծված անորոշությունները, բարոյական որակների, արժեքընկալման /լավի, թե վատի, ճիշտ կամ սխալի, հերոսի կամ ստահակի, սիրո, թե ատելության, լույսի, թե խավարի ընկալման ու արժեւորման/ անհատակությունները, անհաշտվելիի հետ հաշտվելու ու անտարբեր հաղորդվելու իրողությունը,
7. ինքնության որակների առկայությամբ հանդերձ, քաղաքացու որակների գրեթե իսպառ բացակայությունը, սեփական պետության հանդէպ կենվորի հոգեբանության դրսևորումը, ամեն ինչում ինքնաարդարացումն ու իրենից դուրս մեղավորներ փնտրելը,
8. բացասական էկզոզեն գործոնների /տարածաշրջանային եւ միջազգային/ ազդեցության ահռելի ծավալը, ինչը չի թողնում խաղաղ միջավայրում ապրածն ու ապրելիքն իմաստավորել եւ կյանքի կանոն դարձնել,
9. թերահավատությունը սեփական ուժերի հանդէպ եւ այլն:
Նոր իրականությունն օբյեկտիվորեն արժեւորելու եւ առաջընթացի անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու հայ ինքնության դրական որակներից, թերեւս, կարելի է առանձնացնել.
 1. ինքնաճանաչման ու ադապտացիայի գենետիկ մեծ պոտենցիալը, ինչը համազգային վտանգի դեպքում ինքնամոբիլիզացման հզոր ուժ է դառնում,
 2. սոցիալական իրականության խոհափիլիսոփայական խորքային ընկալման մեծ կարողությունը,

3. հոգեւոր մնայուն, ինքնատիպ ու շարունակական արժեքների դարավոր կրող լինելը,
4. ինքնության որակների պահպանության գենետիկ հզոր հասկոթյունը, ինչը զուգորդվում է ավանդույթների, սովորույթների, ընտանիքապաշտության, ծնողապաշտության, երեխայապաշտության, հայրենասիրության եզակի որակներով,
5. թեկուզ ենթագիտակցությամբ կարեւորումն այն բանի, որ մեր միակ զարգացման ներուժը բանական որակներն են, որոնց իրացումը պահանջում է իրավականորեն պաշտպանված ազատություն,
6. պատմության հարուստ դասերը եւ հզոր պատմական հիշողությունը, մասնավորապես այն առումով, որ անհնարին է կայուն զարգացում առանց իրավական համարժեք լուծումների: Գասական կարելի է համարել Խորենացու գնահատականը Աշտիշատի Կանոնական սահմանադրությանը /...հաստատվեց ողորմածությունը Հայաստան աշխարհում/, կամ Մաթեոս Ուռհայեցու դատողությունները Վաչագան քազավորի Կանոնական սահմանադրության ընդունման կապակցությամբ³⁵⁶,
7. մեր աշխարհասփյուռ կարգավիճակը, ինչը բացասականից զատ նաեւ հնարավորություն է՝ համաշխարհային քաղաքակրթությանն առավել ակտիվ հաղորդակցվելու եւ համապատասխան դասեր քաղելով՝ համազգային գործոն ձեւավորելու համար:

Սահմանադրությունը, ինչպես նշվեց, կոչված է երաշխավորելու հանրային կյանքի դինամիկ հավասարակշռությունը, **հանդես գալու որպես կենսագոյի հիմնարար ու ժամանակի մեջ իմաստավորված արժեքներից բխող կանոնների շուրջ շարունակաբար նորոգվող հասարակական համաձայնություն:** Սակայն սահմանադրական տեքստային լուծումները, դրանց բովանդակային զարգացումները դեռես բավարար չեն: Էականն այդ լուծումների ու իրական կյանքի միջեւ անջրպետի հաղթահարումն է, որն այսօր դարձել է մեր պետական օրակարգի առանցքային խնդիրներից մեկը:

Պետականության կայացումը տեւական ու դժվարին գործընթաց է: Համակարգային ամեն մի սխալ վերարտադրվող շղթա կարող է

³⁵⁶ Տե՛ս Գ. Հարությունյան, Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը եւ ժամանակի մարտահրավերները, Երեւան, 2005թ., էջեր 53, 70:

դառնալ ու ավերիչ հետեւանքներ ունենալ՝ առավել եւս, եթե դա վերաբերում է արժեքանական կողմնորոշումներին: Հայաստան պետության համար առանցքային խնդիր է իրավական ողջ համակարգը սահմանադրական արժեքանությանը ներդաշնակելը, թե՛ իրավաստեղծ քաղաքականության մեջ եւ թե՛ իրավակիրառ պրակտիկայում սահմանադրական հիմնարար արժեքների ձեւախեղումներից խուսափելը, իրավունքի գերակայության կայուն երաշխիքներ ապահովելը: Անառարկելի ճշմարտություն է, որ այնտեղ, որտեղ իրավունքը հանդես է գալիս առանց ժողովրդավարության, սկիզբ է առնում դիկտատուրան, իսկ ժողովրդավարությունն առանց իրավունքի՝ պարզապէս ֆարս է: Մեր պետության սահմանադրական անձնագրի անփոփոխելի բնութագրիչն է իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության կայացումը: Այս որակներն օրգանական ամբողջություն են եւ թելադրում են համարժեք վարքագիծ թե՛ պետության եւ թե՛ քաղաքացիական հասարակության կողմից: Յուրաքանչյուր շեղում այդ որակներից՝ սպառնալիք է մեր ապագային ու մեր ազգային անվտանգությանը:

Մեր պետական կյանքի սահմանադրական ներկա տարեգրությունը վկայում է, որ որքան էլ մեծ է եղել Սահմանադրության դերը հանրային խոր ճգնաժամներից խուսափելու համար, այսուհանդերձ, շարունակում է գգալի մնալ խզումը Սահմանադրության եւ իրականության միջեւ: Այս երեւոյթը բնորոշ է նոր ժողովրդավարության գրեթե բոլոր երկրներին, որոնք օբյեկտիվ իրողություններից ելնելով ընտրեցին մոդելային սահմանադրությունների արմատավորման ճանապարհը: Սակայն անցումագիտության ներկա ընդհանրացումները վկայում են, որ նման իրավիճակներում ավելի մեծ ջանքեր են անհրաժեշտ հասարակական հարաբերությունների սահմանադրականացման, Սահմանադրության ինքնաբավությունը երաշխավորելու, սահմանադրականության, պառլամենտարիզմի ու արդարադատության նոր որակ ապահովելու համար: Արդի մարտահրավերներին համարժեք արձագանքի հրամայականը պահանջում է պետության եւ քաղաքացիական հասարակության փոխգործակցության որակապէս նոր մակարդակ, առավել ակտիվ համակարգված քայլեր ժողովրդախիշտանության ամրապնդման ու սահմանադրական ժողովրդավարության հաստատման ճանապարհին: Մեր երկրի համար սահմանադրաիրավական լուծումների ու սահմանադրականության արդի վիճակի տեսանկյունից առաջնային ու անհետաձգելի են, մասնավորապէս, հետեւյալ հիմնախնդիրները.

- երաշխավորված ու ապահովված չէ մարդու սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողությունը,
- իրավունքի գերակայության սկզբունքը չի դարձել մարդկացի սոցիալական վարքագծի, քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագծի եւ իշխանությունների հանրային վարքագծի հենքը,
- հսկայական բացեր կան օրենսդրական մակարդակում իրավունքների երաշխավորման ու ապահովման հարցերում: Մարդու իրավունքների երաշխավորման, ապահովման ու արդյունավետ պաշտպանության հարցերում լուրջ խնդիրներ են առաջացնում հատկապես օրենսդրական բացերն ու իրավակարգավորումների անհամապատասխանությունն իրավական որոշակիության սկզբունքին, օրենսդրական լուծումների անկայունությունն ու հստակ հայեցակարգերի բացակայությունը,
- խիստ անհստակ են իշխանությունների հայեցողության սահմանները, արդյունավետ չի գործում իրավունքով իշխանության սահմանափակման սկզբունքը,
- կան իրավական ամբողջ ինստիտուտներ, որոնք, որպես կանոն, չեն գործում, ինչպես, օրինակ, նոր հանգամանքների հիմքով գործի նորոգման արդարադատական ինստիտուտը,
- մեծ խզում է առաջացել սահմանադրական արժեքանության եւ հասարակական պրակտիկայի միջեւ, հստակ ու հանրայնորեն ընկալելի չեն սահմանադրական բարոյականության չափորոշիչները,
- քաղաքական, տնտեսական եւ վարչական ներուժի սերտաճումն ընդհուպ երկրի ազգային անվտանգության սպառնալիք է դարձել՝ դրանով պայմանավորված բոլոր հետեւանքներով հանդերձ³⁵⁷:

Այս ամենն իրավական պետության կայացման ու կայուն առաջընթացի գլխավոր խոչընդոտներից են, չեն կարող ստորադասվել այսրոպեական շահերին եւ առաջնահերթ լուծում են պահանջում:

³⁵⁷ Այդ մասին, մասնավորապես, տե՛ս. Գ. Арутюнян, Угрозы корпоративной демократии //Международный вестник «Конституционное правосудие», 2006, N3, էջեր 38-46. Գ. Harutyunyn, Constitution and Constitutionalism in the Context of Constitutional Culture of the New Millennium /New Millenium Constitutionalism: Paradigms of Reality and Challenges>, Ереван, 2013/, էջեր 29-81:

Ինչ են հուշում պատմության դասերը եւ սահմանադրական զարգացումների միջազգային փորձը՝ հայ սահմանադրականության զարգացման ներկա հիմնախնդիրների հոլովություն: Դրանք, մասնավորապես, թելադրում են, որ.

- մեր ժողովրդի պատմական ճակատագիրը խոսուն վկան է այն բանի, որ մեր իրականության դասերը հաճախ ժամանակին չկարողացանք սերտել ու դրանցից հետեւություն անելով՝ «...աշխարհական կարգերի գիտություն ձեռք բերել» եւ «քաղաքական կարգեր» սովորել³⁵⁸,
- առանց հասարակական համաձայնության, փոխվստահության, հանդուրժողականության ու քաղաքացիական համերաշխության երկրում սահմանադրական բարոյականություն հաստատելն անհնարին է,
- սահմանադրական արժեքներն ապրող իրողություն կարող են դառնալ միայն ու միայն այն ժամանակ, երբ դրանք գիտակցված անհրաժեշտություն են թե՛ պետական իշխանության, թե՛ երկրի քաղաքական ինստիտուտների եւ թե՛ հասարակության յուրաքանչյուր անդամի համար,
- հասարակության անդամների, քաղաքական ու պետական ինստիտուտների սահմանադրական իրավագիտակցության միջեւ եղած աններդաշնակության հաղթահարումը վճռորոշ պայման է երկրում սոցիալական անհամաձայնությունների ու հնարավոր կատակլիզմների հաղթահարման համար,
- սահմանադրական իրավամտաժողության գերագույն խնդիրը պետք է լինի մարդու արժանապատվության, նրա իրավունքների ու ազատությունների երաշխավորումը, ապահովումն ու պաշտպանությունը եւ իրավունքով իշխանության սահմանափակումը,
- առանց սահմանադրական դիմամիկ հավասարակշռության ապահովման երկրում առաջընթաց երաշխավորելն անհնարին է,
- Սահմանադրությունը չի կարող դիտվել որպես իրավական գործիք պետական իշխանության ձեռքում, այն քաղաքացիական հասարակության Հիմնական օրենքն է, առաջին հերթին սահ-

358 Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Եր., «Հայաստան», 1997, էջ 70:

ման է դնում իշխանությանը եւ երաշխավորում է մարդկանց բնական իրավունքներն ու հիմնարար ազատությունները,

- երիցս ճշմարիտ է դարերից եկող պատգամը՝ բարքերի փոփոխությունը պետք է սկսել օրենքների փոփոխությունից:

Սահմանադրության գերակայության երաշխավորումն առաջին հերթին պետական իշխանության գերագույն խնդիրն է: Բազմակարծությունը, հանդուրժողականությունը, համերաշխությունը, մարդու իրավունքների հարգումը մեր պետական օրակարգի հրատապ առաջնահերթություններից են: Դրանք՝ որպես նաեւ սահմանադրականության անկյունաքարային արժեքներ, պահանջում են անհետաձգելի իրացում՝ մեր երկրի յուրաքանչյուր բնակչի համար Սահմանադրությունն օր առաջ դարձնելով ապրող իրողություն:

Մեր պատմական ճակատագրի հրամայականներն են. չվրդովեցնել երկրում ու մեր ներսում խաղաղությունը, խուսափել տգիտությամբ չարափառության հաստատումից, հավատարիմ մնալ մեր առաքելական հավատքին, Սահմանադրությամբ հաստատել ողորմաձությունը Հայաստան երկրում³⁵⁹:

Այլընտրանք՝ պարզապես գոյություն չունի:

³⁵⁹ Տե՛ս Սովսես Խորենացի, Հայոց պատմություն, - Եր.: 1997, էջեր 225, 275-278:

ԳԼՈՒԽ 5. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

5.1. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՐԴԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ժողովրդավարական հասարակության եւ իրավական պետության գոյության եւ գործառնության բարձրագույն սկզբունքը, ինչպես նշվեց, Սահմանադրության գերակայությունն է: Սահմանադրական մշակույթի մասին բոլոր դատողությունները կարծեգրվեն, եթե գործնական կյանքում երաշխավորված չէ Սահմանադրության գերակայությունը:

Գերակայությունը Սահմանադրության մեջ ամրագրված՝ նրա համապարտադրության հատկանիշն է, որը հաստատում է իրավական ակտերի աստիճանակարգություն, Սահմանադրությանը վերապահում է իրավունքի կարելորագույն աղբյուրի դեր եւ պարտավորեցնում է նորմաստեղծին ու իրավակիրառողին որպես բարձրագույն չափանիշ ընդունել Հիմնական օրենքը: Սրա համար հիմք է հանդիսանում Սահմանադրության բնույթը՝ որպես հիմնադիր ուժ ունեցող իրավական ակտի, որի համապարտադրության աստիճանը բարձր է հանրային իշխանության ցանկացած այլ որոշման իրավաբանական ուժից: Իրավական պետության բարձրագույն օրենքը հանդիսանում է հանրային իշխանության պետական կամքի ձեւավորման եւ իրականացման իրավական հիմքը, եւ ենթադրում է պահպանման հատուկ գործառույթ՝ որպես իրավական պետության մեջ հսկողական բնույթ ունեցող բարձրագույն գործառույթ: XX դարի հիմնական ձեռքբերումներից մեկն այն է, որ ձեւավորվեցին հատուկ մասնագիտացված արդարադատական կառույցներ՝ այդ առաքելությունն իրականացնելու համար: Դատական սահմանադրական վերահսկողության մարմինների նման դերն առաջին հերթին կայանում է նրանում, որ դրանք **ապահովում են Սահմանադրության գերակայությունը՝**

երաշխավորելով իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, լուծելով պետական մարմինների համակարգում սահմանադրական իրավասությունների վերաբերյալ վեճերը, ստեղծելով հասարակության մեջ ծագող քաղաքական տարաձայնությունների իրավական կարգավորման երաշխիքներ, ապահովելով մարդու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները: Այլ կերպ՝ դատական սահմանադրական վերահսկողությունը հանդիսանում է հասարակության մեջ կայունության ապահովման միջոց եւ հնարավորություն: Այդ դերն առաջին հերթին իրականացվում է Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտերի ստուգման, անհամապատասխանության բացահայտման, գնահատման եւ վերացման, սահմանադրորեն ամրագրված գործառնությանին հավասարակշռության պահպանման միջոցով:

Դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտների կոչումը կայանում է հենց նրանում, որ սահմանադրական դատարաններն ստեղծվեն եւ գործեն սահմանադրական կարգի հիմքերի, մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների պաշտպանության ու ապահովման, Սահմանադրության գերակայության եւ ուղղակի գործողության երաշխավորման, Սահմանադրության մեջ հռչակված ու երաշխավորվող հիմնական քաղաքական եւ իրավական արժեքների պահպանման նպատակով:

Ներկայումս աշխարհում գործում են 110-ից ավելի սահմանադրական դատարաններ: Բավականին տարբեր են դրանց լիազորությունները, ձեւավորման եւ գործունեության մեխանիզմները: Ամեն դեպքում, նույնն է նրանց գործառնությանին դերը, այն է՝ **դատական սահմանադրական վերահսկողության միջոցով Սահմանադրության գերակայության ապահովումը:**

Սահմանադրական արդարադատության որոշ տարբեր սկիզբ են առնում 1180 թվականից՝ հին գերմանական պետությունում: Այդ ժամանակներում նույնպես համապատասխան իրավական ինստիտուտները կարգավորել են նաեւ իշխանությամբ օժտված մարմինների միջեւ ծագած վեճերը: Պորտուգալիան սահմանադրական վերահսկողությունը ներդրել է 12-րդ դարում՝ Ֆիլիպի օրենսգրքում: Սահմանադրական վերահսկողության նախնական ձեւերը գոյություն

են ունեցել Ֆրանսիայում՝ 13-րդ դարի կեսերին: Գատական սահմանադրական վերահսկողության ավելի լուրջ նախագծեր հայտնվել են Նորվեգիայում, Գանիայում եւ Հունաստանում՝ 19-րդ դարում:

Սահմանադրականության պատմության եւ հատկապես սահմանադրական արդարադատության պատմական զարգացման տեսանկյունից բացառիկ են Հակոբ եւ Շահամիր Շահամիրյանների մոտեցումները «Որոգայթ փառացում»: Բնական իրավունքի տեսության սկզբունքներին համապատասխան շարադրված այս աշխատությունը, ինչպես նշել ենք, ըստ էության հանդիսանում է առաջին Սահմանադրությունը, որը ներառում է հատուկ մասնագիտացված դատարանի՝ «Բարձր դատարանի» գաղափարը, որի առաքելությունը՝ ներկայիս ընկալմամբ, դատական սահմանադրական վերահսկողության իրականացումն է: Նշված աշխատության լոկ անվանումն արդեն սահմանադրական վերահսկողության մի ամբողջ տեսություն է: Դրա էությունը հանգում է նրան, որ հեղինակներն ստեղծում են սահմանադրական «թակարդ» իշխանություն կրողների համար, որպեսզի նրանք մնան եւ գործեն իրենց սահմանադրական լիազորությունների շրջանակներում: Այդ յուրօրինակ փաստաթղթում զարմանալի ներդաշնակության մեջ ներկայացվում են զսպումները, հակակշիռներն ու գործառության բնույթի իրավասությունները:

1867թ. Ավստրիայի Գաշնային դատարանն ստացավ իրավասությունների վերաբերյալ վեճեր լուծելու իրավունք՝ ի պաշտպանություն անհատի քաղաքական իրավունքների՝ ընդդեմ վարչակազմի: Թեեւ սահմանադրական վերահսկողության որոշ նախնական տարրեր ներդրված են եղել Շվեյցարիայի 1848թ. Գաշնային Սահմանադրությունում, այսուհանդերձ, Շվեյցարիայի Գաշնային դատարանը լայն լիազորություններ ստացել է միայն 1874թ. փոփոխված Սահմանադրությամբ: Նորվեգիայում դատական սահմանադրական վերահսկողությունն իրավագիտության մեջ սկզբնավորվել է 1890թ.: Ռումինիան սահմանադրական արդարադատության համակարգ ներդրել է Առաջին համաշխարհային պատերազմից առաջ՝ ամերիկյան մոդելով:

Անգլո-ամերիկյան ժամանակակից իրավաբանական համակարգում բացակայում են դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտները: Այնուամենայնիվ,

Անգլիայի իրավական պատմությունը ներառում է մի քանի տարրեր, մասնավորապես, Սահմանադրության գերակայության սկզբունքը, որն սկիզբ է առնում 1610 թվականից եւ կարելուր նշանակություն ունի Անգլիայի սահմանադրական իրավունքի զարգացման պատմության մեջ: Սահմանադրության գերակայության եւ դատական հսկողության իրավունքի գաղափարներն Անգլիայից տարածվեցին դեպի ԱՄՆ: Այնտեղ արդեն 18-րդ դարում դատարանն առանձին անգլիական օրենքներ ճանաչել էր անվավեր (Հյուսիսային Ամերիկյան Նահանգներում): Սակայն 1787թ. Սահմանադրությամբ Գերագույն դատարանը՝ որպես բարձրագույն դաշնային դատարան, չունի արտահայտված սահմանադրական վերահսկողության իրավասություններ:

Սահմանադրական արդարադատության զարգացման վրա վճռորոշ ազդեցություն է ունեցել «Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» գործը (1803թ.), երբ ԱՄՆ Գերագույն դատարանն իրեն վերապահեց օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը լուծելու գործում սահմանադրական վերահսկողության իրավասություն: Դա հնարավորություն տվեց ամերիկյան Գերագույն դատարանի իշխանությունն օգտագործել օրենքի դատական վերանայման համար: Այս որոշմամբ փաստորեն հակասահմանադրական ճանաչվեց 1789թ. Կոնգրեսի կողմից ընդունված դատավարական օրենքի այն հատվածը, որը վերաբերում էր Գերագույն դատարանի իրավասություններին (կետ 13): Դասական ձեւակերպում է դարձել 1803թ. փետրվարի 24-ի որոշման վերաբերյալ ԱՄՆ-ի Գերագույն դատարանի նախագահ Ջոն Մարշալի հետեւյալ միտքը. «Միայն եւ միայն դատական իշխանության պարտականությունն է ասել, թե ինչ է իրենից ներկայացնում օրենքը... Օրենքը, որն անհամատեղելի է Սահմանադրության հետ, անվավեր է»:

Հաշվի առնելով ԱՄՆ Գերագույն դատարանի կողմից իրավական ակտի սահմանադրականության կապակցությամբ առաջին որոշման ընդունումը եւ այդ հարյուրամյակի ընթացքում նոր մոտեցումները, կարելի է պայմանականորեն առանձնացնել սահմանադրական արդարադատության համակարգերի ձեւավորման եւ զարգացման հետեւյալ փուլերը.

1. 1803-1920թթ.,
2. 1920-1940թթ.,
3. 1945-1990թթ.,
4. 1990 թվականից հետո:

Երկրորդ փուլը համընկնում է դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված առաջին ինստիտուտի ստեղծման հետ: Ավստրիայի 1920թ. Սահմանադրությունը նշանավորվում է Ավստրիայի Սահմանադրական դատարանի ստեղծմամբ՝ օրենքի նկատմամբ սահմանադրական վերահսկողության բացառիկ իրավունքով (սկզբում, ճիշտ է, նախնական բնույթի): Դա տեղի ունեցավ հիմնականում ավստրիացի իրավաբան-տեսաբաններ Ադոլֆ Մերկլի եւ Հանս Բելգենի շնորհիվ: Դրա արդյունքում երկու պատերազմների միջև ընկած ժամանակահատվածն անվանվեց «Ավստրիական ժամանակահատված»:

Ավստրիայի օրինակով մինչեւ Երկրորդ համաշխարհային պատերազմը դատական սահմանադրական վերահսկողություն ներդրվեց Չեխոսլովակիայում (1920թ.), Լիխտենշտեյնում (1925թ.), Հունաստանում (1927թ.), Իսպանիայում (1931թ.), Իռլանդիայում (1937թ.), Եգիպտոսում (1941թ.): Սահմանադրական վերահսկողության ավելի լայնորեն ներդրման միտումն ընդհատվեց Երկրորդ համաշխարհային պատերազմով, եւ արդեն ձեւավորված ինստիտուտները չկարողացան գործունեություն ծավալել (օրինակ, Ավստրիան սահմանադրական վերահսկողություն չի ունեցել 1933-1945թթ., Չեխոսլովակիան՝ 1938 թվականից):

Երրորդ փուլը հետպատերազմյան (1945-1990թթ.) փուլն է, երբ եվրոպական պետություններում գրեթե միաժամանակ ձեւավորվեցին սահմանադրական դատարաններ, որոնց հիմնական խնդիրն օրենքների եւ այլ նորմատիվ ակտերի՝ Հիմնական օրենքին համապատասխանության ապահովումն էր:

Շատ այլ պետություններ նույնպես սահմանադրական վերահսկողության հատուկ համակարգ ներդրեցին անմիջապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո. Բրազիլիան (երկրորդ անգամ՝ 1946թ.), Ճապոնիան (1947թ.), Բիրման (1947թ.), Իտալիան (1948թ.), Թաիլանդը (1949թ.), Գերմանիան (1949թ.), Հնդկաստանը (1949թ.),

Լյուքսեմբուրգը (1950թ.), Սիբիան (1950թ.), Ուրուգվայը (1952թ.), Ֆրանսիան (1958թ.) եւ այլն:

Այս ժամանակահատվածում կոմունիստական վարչակարգ եւ միակուսակցական համակարգ ունեցող պետություններում դատական սահմանադրական վերահսկողության ինստիտուտների ձեւավորումը համարվում էր բուրժուական շքեղություն: Ի հակադրություն դրա, շատ եվրոպական պետություններ (Ավստրիան, Գերմանիան, Իսպանիան, Իտալիան եւ այլն) առաջադրեցին այն հարցը, որ մարդու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը պետք է դառնա սահմանադրական արդարադատության առանցքային խնդիրը: Բնականաբար, հետպատերազմյան շրջանում ոչ միայն այդ երկրների սահմանադրական դատարաններն ստացան նման լիազորություններ, այլ նաեւ քաղաքացիներն ստացան իրենց իրավունքներն ընդհուպ մինչեւ Սահմանադրական դատարանում պաշտպանելու իրավունք:

Սահմանադրական արդարադատության **չորրորդ փուլը** համընկնում է ժողովրդավարացման որակապես նոր գործընթացների, մեծաթիվ նորանկախ պետությունների ձեւավորման ժամանակահատվածի հետ: Հաշվի առնելով եվրոպական պետությունների կուտակած փորձը, երիտասարդ նորանկախ պետություններն իրենց պետական շինարարության եւ ժողովրդավարական ինստիտուտների զարգացման գործում առաջին եւ հիմնական քայլերից մեկը համարեցին նաեւ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի գործնական իրացումը եւ սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգի ստեղծումը: Դա նաեւ պայմանավորված էր Սահմանադրության պաշտպանության անհրաժեշտությամբ, որը գրեթե բոլոր պետություններում մշակվեց եւ ընդունվեց որոշակի դժվարություններով, ինչպես նաեւ այն խնդիրների լուծման անհրաժեշտությամբ, որոնք պայմանավորված էին հասարակական զարգացումը ճգնաժամային կառավարման հարթությունից հասարակական եւ պետական կայունության ու դինամիկ զարգացման հարթություն փոխադրելու հետ:

Վերջին փուլերը նշանավորվում են նաեւ Եվրոպայի որոշ երկրներում քաղաքական փոփոխություններով, որոնք սահմանադրա-

կան վերահսկողություն ներդրել են դիկտատուրայի անկումից հետո. Հունաստան (1968թ.), Իսպանիա (1978թ.), Պորտուգալիա (1976թ.): Այդ ժամանակահատվածում սահմանադրական վերահսկողություն ներդրվում է նաև այլ պետություններում. Կիպրոսում (1960թ.), Թուրքիայում (1961թ.), Ալժիրում (1963թ.), նախկին Հարավսլավիայի Գաշ-նուքյան հանրապետություններում (1963թ.) եւ այլուր:

Միեւնույն ժամանակ, սահմանադրական վերահսկողության գոյություն ունեցող ինստիտուտների շրջանակներում ներդրվել է համակարգային վերահսկողություն (Ավստրիա, Գերմանիա, Շվեդիա, Ֆրանսիա, Բելգիա): 80-ական թվականների քաղաքական եւ սոցիալական փոփոխությունների արդյունքում սահմանադրական վերահսկողությունը սկսել է ներդրվել նաև Կենտրոնական եւ Հարավային Ամերիկայի, ինչպես նաև Աֆրիկայի ու արաբական մի շարք երկրներում:

Արդեն իսկ 21-րդ դարի նախաշեմին աշխարհում ստեղծվեց սահմանադրական իրավակարգավորման որակապես մի նոր իրավիճակ, երբ Սահմանադրության գերակայություն ապահովելու ճանապարհով **փորձ կատարվեց երկրների զարգացմանը հաղորդել դինամիկ կայունություն:**

Ըստ էության տարբերակվում է սահմանադրական արդարադատության երկու մոդել՝ ամերիկյան եւ եվրոպական: Վերջին տասնամյակներում ավելի մեծ թվով պետություններ ընդունում են սահմանադրական արդարադատության եվրոպական մոդելը, ինչը պայմանավորված է հասարակական զարգացման կայունության երաշխիքների հուսալի համակարգի ձեւավորման անհրաժեշտությամբ:

Սահմանադրական արդարադատության ամերիկյան մոդելին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

- համընդգրկուն բնույթ, որը ներառում է ոչ միայն օրենքները, այլ նաև բոլոր մակարդակների ցանկացած նորմատիվ ակտ,
- վերահսկողությունն իրականացվում է ապակենտրոնացած կերպով՝ ցանկացած դատարանի կողմից, ցանկացած կոնկրետ գործ քննության առնելիս, եթե օրենքը կամ նորմատիվ ակտն առնչվում է հայցվորի կոնկրետ շահերին,
- կրում է հարաբերական բնույթ, քանի որ դատարանի որոշումը պարտադիր է միայն կողմերի համար եւ չի տարածվում իրավակիրառման ողջ դաշտի վրա,
- այն ունի կոնկրետ հետագա վերահսկողության բնույթ:

Ինչու՞ Եվրոպան 20-րդ դարում չընդունեց ամերիկյան մոդելը: Այս հարցին շատերն են փորձել պատասխանել: Մի դեպքում փորձել են պատասխանը փնտրել «օրենք» եւ «Սահմանադրություն» հասկացությունների բազմաբնույթ ընկալման հարթության վրա: Մեկ այլ դեպքում շեշտադրումը կատարվում է դատական համակարգի եւ դատավորների գործունեության առանձնահատկության վրա (հատուկ առանձնացնելով դատարանի անկախության աստիճանը եւ օրենքի սահմանադրականության հարցի վերաբերյալ որոշում ընդունելու՝ դատավորների կարողությունը): Երրորդ դեպքում առաջին պլան են մղվում տվյալ հասարակության առջեւ դրված խնդիրները եւ դրանց լուծմանը բնորոշ առանձնահատկությունները: Այսպես, թե այնպես, ավելի քան մեկ դար ողջ աշխարհում դատական սահմանադրական վերահսկողության գործառույթն իրականացրել են ընդհանուր իրավասության դատարանները: Սակայն 20-րդ դարի սկզբներին հասարակական կյանքում տեղի ունեցած բուռն փոփոխությունները, ընդ որում՝ իշխանությունների տարանջատման պայմաններում, մասնագետների առջեւ դրեցին մի շարք հիմնախնդիրներ.

1. հնարավոր դարձավ օրենքի միջոցով հասնել իշխանության մեծ կենտրոնացման, ընդհուպ՝ դրա ուզուրպացման³⁶⁰,
2. հասարակական իրավիճակի եւ դրան համապատասխան օրենսդրական դաշտի արագ փոփոխության պայմաններում կոնկրետ գործերով իրականացվող վերահսկողությունն ակնհայտորեն անբավարար էր Սահմանադրության գերակայությունն արդյունավետորեն ապահովելու համար,
3. իշխանությունների բաժանման պայմաններում հասարակության ապակայունացման գլխավոր դետոնատորը դարձավ իշխանության տարբեր ճյուղերի պայքարը լիազորությունների համար:

Նշվածներից բացի, այլ էր նաեւ մոտեցման մեթոդաբանությունը: Առաջին պլան մղվեց ոչ միայն կոնկրետ անձի շահերին առնչվող հարցի լուծումը, այլ նաեւ ողջ օրենսդրական համակարգի սահմա-

³⁶⁰ Կարելոր է նաեւ այն հանգամանքը, որ մայրցամաքային իրավական համակարգում օրենքը բացառապես քաղաքական փոխհամաձայնության արդյունք է եւ արդարադատական նախադեպը որպես իրավունքի աղբյուր վճռական դերակատարություն չունի:

նադրականության ապահովման միջոցով հասարակական կայունության եւ դինամիկ զարգացման հիմնախնդիրը:

Եվրոպական մայրցամաքային իրավական համակարգում առաջ-նահերթ են համարվում հետեւյալ երեք խնդիրները.

ա/ նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովումը եւ դրա միջոցով իշխանության տարբեր ճյուղերի միջեւ սահմանադրականորեն ամրագրված գործառութային հավասարակշռության պահպանումը,

բ/ իշխանության տարբեր մարմինների միջեւ իրավասությունների կապակցությամբ վիճելի հարցերի լուծման հստակ կանոնակարգումը,

գ/ մարդու սահմանադրական իրավունքների պաշտպանության առավել ամբողջական եւ հուսալի համակարգի ստեղծումը:

Եվրոպական համակարգի բնորոշ առանձնահատկությունը կա-յանում է ոչ միայն նրանում, որ վերահսկողությունն իրականացվում է մասնագիտացված մարմինների միջոցով եւ ներդրված են դատա-կան սահմանադրական վերահսկողության վերացական, կոնկրետ, ֆակուլտատիվ, պարտադիր, նախնական, հետագա, ըստ ձեւի ու ըստ բովանդակության վերահսկողության համակարգեր: Հատուկ նշանակություն ունի եւ այն հանգամանքը, որ Էականորեն փոխվում է նաեւ սահմանադրական արդարադատության դերը պետական իշ-խանության համակարգում:

Դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտաց-ված համակարգի գործունեության միջազգային փորձը ցույց է տա-լիս, որ սահմանադրական արդարադատության գլխավոր խնդիրն է պետական իշխանության այնպիսի համակարգի ձևավորմանն աջակցելը, որում երաշխավորված են Սահմանադրության գերակա-յությունը, մարդու անօտարելի իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը, ստեղծված են անհրաժեշտ նախադրյալներ՝ իրավունքի գերակայության, իշխանությունների բաժանման ու հա-վասարակշռման, ընտրովիության եւ հաշվետվության սկզբունքների հիման վրա հասարակության կայուն եւ դինամիկ զարգացման հա-մար, **որտեղ հաղթահարված է բացասական հասարակական էներ-գիայի առաջանցիկ կուտակման գործընթացը:**

Այս խնդիրը ներկայումս ձեռք է բերում հսկայական արդիականություն, հաշվի առնելով, որ մարդկությունը թևակոխել է զարգացման նոր փուլ, երբ գերակայող է դառնում, մի կողմից՝ արժեքային համակարգի վերահիմաստավորման անհրաժեշտությունը, մյուս կողմից՝ նոր որակ են ձեռք բերում փոխադարձ կապերը եւ փոխազդեցությունները: Մասնավորապես, իրավական գլոբալացման պայմաններում յուրաքանչյուր երկրի սահմանադրական վերահսկողության համակարգը պետք է դառնա սահմանադրական կայունության ամուր երաշխիք եւ համապատասխանի որոշակի ընդհանուր չափանիշների եւ պահանջների: **Վերջիններիս հստակ բնորոշումը, գիտական վերլուծությունը եւ անընդհատ գործառնությամբ սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգի ձեւավորումը** դարձել են անհետաձգելի անհրաժեշտություն:

Սահմանադրական ժողովրդավարության եւ կայունության հաստատման գործում Սահմանադրական դատարանի դերի ու նշանակության վերհանման համար, մեր կարծիքով, սկզբունքային նշանակություն ունի սահմանադրական վերահսկողության գործառնության համակարգային բնույթի բացահայտման խնդրի նկատմամբ մեթոդաբանական ճիշտ մոտեցումը: Գտնում ենք, որ գիտական գրականության մեջ այս հարցին պատշաճ ուշադրություն չի դարձվում: Անհրաժեշտ է առանձնացնել երկու սկզբունքային հանգամանք:

Առաջին՝ սահմանադրական վերահսկողությունը՝ որպես ամբողջական համակարգ, կարող է լինել գործունակ միայն անհրաժեշտ եւ բավարար գործառնությանին հավասարակշռվածության պայմաններում: Նկատի է առնվում ոչ միայն դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված հաստատությունների տեղն ու դերը, այլ նաև օրենսդիր եւ գործադիր իշխանությունների, ինչպես նաեւ այլ սահմանադրական սուբյեկտների գործառնությանին դերը սահմանադրական վերահսկողության ոլորտում, բարոյական, ազգային եւ հոգևոր արժեքների պահպանության կարգը եւ ավանդույթները: Վերջիններս բազում դարերի ընթացքում ունեցել են բացառիկ կարևոր նշանակություն բանական արժեքների հիման վրա հասարակական զարգացման համակարգային կայունության ապահովման գործում, բայց, ցավոք, նոր իրականության մեջ էականորեն կորցնում են նախկին ազդեցության թափը:

Երկրորդ դրսեւորումը կայանում է նրանում, որ սահմանադրական վերահսկողությունը, որպէս համակարգ, որպէս տարբեր իրավագործություններ ունեցող բարդ եւ ներդաշնակ գործունեություն պահանջող մարմինների ամբողջություն³⁶¹, կարող է գոյություն ունենալ եւ արդյունավետ գործել միայն որոշակի նախադրյալների առկայության դեպքում: Դրանցից անհրաժեշտ է առանձնացնել հետևյալները՝ հասարակական հարաբերությունների սահմանադրական կանոնակարգման խորությունը և համակարգային բնույթը, հասարակության զարգացման ժողովրդավարական սկզբունքներին հավատարմությունը, սահմանադրական ժողովրդավարության որոշակի միջավայրի առկայությունը, սահմանադրական վերահսկողության անկախությունը, դրա համընդգրկուն բնույթը, մատչելիությունը հասարակության անդամների համար եւ այլն:

Անկյունաքարային նշանակություն ունի համակարգի ամբողջականության, դրա հիմնական օղակների միջև հստակ գործառութային փոխկապվածության ապահովումը, դիմամիկայում համակարգի հավասարակշռվածության ապահովման ընթացքում ռացիոնալ փոխգործակցությունը, ինչպէս նաև սահմանադրական վերահսկողության համակարգի կառուցակարգային ներդաշնակությունը:

XX դարում սահմանադրական վերահսկողության համակարգի ձևավորման եւ գործունեության միջազգային փորձի, ինչպէս նաև երիտասարդ ժողովրդավարության երկրներում ստեղծված իրավիճակի ուսումնասիրությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ, ցավոք, սահմանադրական վերահսկողության շատ խնդիրներ դիտարկվում եւ լուծվում են մակերեսային, իշխանությունների տարանջատման սկզբունքի իրացման ժամանակ չի ապահովվում հետևողականությունը, ինչը չի հանգեցնում ցանկալի արդյունքների՝ **հասարակական օրգանիզմի ինքնապաշտպանության գործունակ համակարգի հաստատման համար**: Դա առավել եւս խնդրահարույց է դառնում, երբ սահմանադրա-

³⁶¹ Գարկ Ենք համարում շեշտել, որ սահմանադրական վերահսկողության մարմինների շարքում հատկապէս նկատի պետք է ունենալ, մի կողմից, երկրի Նախագահին, պառլամենտին, կառավարությանը, սահմանադրական այլ ինստիտուտներին (որպէս ոչ մասնագիտացված մարմիններ), մյուս կողմից՝ դատական իշխանության մարմիններին եւ, հատկապէս, սահմանադրական դատարաններին (որպէս մասնագիտացված մարմիններ):

կան վերահսկողության համակարգում թերագնահատվում են դատական սահմանադրական վերահսկողության տեղն ու դերը:

Հաճախ է անհրաժեշտություն առաջանում շեշտել Ավստրիայի Սահմանադրական դատարանի նախկին նախագահ՝ պրոֆեսոր Լ. Ադամովիչի խոսքերն այն մասին, որ «...սահմանադրական ժողովրդավարությունը հանդիսանում է անհրաժեշտ եւ հիմնական միջավայր սահմանադրական դատարանների նորմալ գործառնության համար»: Կարելի է ավելացնել նաև, որ առանց սահմանադրական արդարադատության գործունակ համակարգի ներդրման հնարավոր չէ երաշխավորել սահմանադրական ժողովրդավարությունը եւ հասարակական համակարգի կայունությունը: Իսկ սահմանադրականության երաշխավորման հարցում վերջին խոսքի իրավունքը Սահմանադրական դատարանինն է: **Եթե որեւէ երկրում դա ապահովված չէ, ուրեմն չկա իրավական պետություն:** Այս եզրահանգումն արձանագրվել է բազմաթիվ միջազգային խորհրդաժողովներում /մասնավորապես՝ Կեյպտաուն-2009թ., Վիեննա-2013թ., Սեուլ-2014թ. եւ այլն/:

Այս մոտեցումը փորձենք զարգացնել հետևյալ, մեր կարծիքով, մտորումների համար բավարար նյութ տվող համեմատության օգնությամբ:

Վերջին տասնամյակներում գիտական միտքը մանրէակենսաբանության եւ բժշկագիտության ոլորտում կատարել է մի շարք լուրջ ընդհանրացումներ, որոնք բացառիկորեն կարևոր են նաև հասարակական օրգանիզմի ներքին ինքնապաշտպանության հիմնական սկզբունքների եւ մեխանիզմների համակարգային ուսումնասիրության, սահմանադրորեն ամրագրված գործառության ինքնապաշտպանության կայունության ապահովման տեսանկյունից: Գրեթե արքիոմատիկ սկզբունքների թվին են դասվում, որ.

- առավել կատարյալ ներքին ինքնապաշտպանակ համակարգով օժտված է մարդը, որի իմունային համակարգը ձեւավորվել է շուրջ երկու հարյուր միլիոն տարիների ընթացքում,
- մարդու, ինչպես նաև այլ բարդ կենսաբանական համակարգերի իմունային համակարգի գործողությունն ընդգրկում է ամբողջ օրգանիզմը, ունի հիերարխիկ եւ ինքնակառավարվող բնույթ,
- օրգանիզմի յուրաքանչյուր բջիջ օժտված է ինքնապաշտպանության որոշակի ռեսուրսներով, որոնց սպառման դեպքում

միանում են օրգանիզմի այլ՝ փոխկապակցված կառուցվածքային տարրերի պաշտպանիչ համակարգերը,

- ինունային համակարգի **գլխավոր առաքելությունն է բնական հավասարակշռվածության եւ կայունության պահպանումն ամբողջ օրգանիզմում, քանի որ խախտված հավասարակշռության չվերականգնումը բացասական ներուժի կուտակման եւ իռացիոնալ վերարտադրության պատճառ են դառնում,**
 - ֆիզիոլոգիական հավասարակշռվածությունը, օրգանիզմի ինունային և նյարդային համակարգը գտնվում են կայուն ներդաշնակության վիճակում,
 - ցանկացած պաթոլոգիա ակտիվացնում է գործողության մեջ է դնում ինքնապաշտպանության ողջ համակարգը,
 - միշտ որոշակի քանակությամբ գոյություն ունեցող ինունոհորմոնների թիվը պաշտպանական ռեակցիայի դեպքում աճում է մինչև պաշտպանիչ գործառույթի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ քանակի: Սակայն, եթե պաշտպանիչ ունակությունն անբավարար է գործառութային հավասարակշռվածության վերականգնման համար, առաջանում է էկզոգեն միջամտություն պահանջող ախտորոշիչ վիճակ,
 - զարգացած ինունային համակարգերին բնորոշ են՝ ինքնապաշտպանության հստակ տարբերակումը եւ ռացիոնալությունը, բջջային համակարգի եւ օրգանիզմի գործառութային հավասարակշռության ամբողջականության եւ ներդաշնակության ապահովման համար նպատակալաց, ծրագրավորված գործողությունների հստակ հերթականությունը,
 - ցանկացած դինամիկորեն զարգացող համակարգ պետք է ունենա ներքին գործառութային հավասարակշռության եւ ինքնապաշտպանության ապահովման համարժեք ենթահամակարգ,
 - ինունային համակարգի գործողության տրամաբանությունը կայանում է հետեւյալում՝
- ա/ խախտված հավասարակշռության բացահայտում,
- բ/ խախտման բնույթի որոշում եւ դիսբալանսի հաղթահարման համար մարտավարության եւ «գործիքների» ընտրություն,
- գ/ հավասարակշռության վերականգնման ժամանակ նոր խախտում թույլ չտալու երաշխավորում:

Այս սկզբունքները, որոնք մենք երկար ամիսներ ուսումնասիրել ենք բժիշկների, կենսաբանների, համակարգային կառավարման մասնագետների հետ, ձևավորվել են, ինչպես նշվեց, միլիոնավոր տարիների ընթացքում՝ կենդանի օրգանիզմի զարգացմանը զուգընթաց: Մարդկային հասարակությունը գոյություն ունի ընդամենը մի քանի հազար տարի, եւ որպես միասնական օրգանիզմ, որպես բարդ համակարգ դեռ չի հասել համակարգային կատարելության եւ ներդաշնակության մակարդակի: Միայն XX դարի օրինակը, որը տարել է ավելի քան 130 միլիոն մարդկային կյանք՝ հասարակական համադետների հետևանքով, միջազգային ահաբեկչության այսօրվա ալիքը, հանդիսանում են հասարակական իմունային անբավարարության առկայության վառ վկայություն: Պատահական չէ նաև, որ դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտների ձևավորման գաղափարի առաջացումը համընկնում է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի հետ, իսկ նրա համակարգային զարգացումը դարձավ իրականություն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

Մենք գտնում ենք, որ որոշ չափով «ենթագիտակցորեն» **մարդկությունը մոտենում է հասարակական օրգանիզմի որակապես նոր իմունային համակարգի ձևավորմանը:** Ողջ 20-րդ դարը համոզիչ կերպով ապացուցել է, որ **կրոնը, ավանդույթները, բարոյական նորմերը, հասարակական վարքագծի ողջ արժեքային համակարգը, համակարգային ինքնապաշտպանության այլ մեխանիզմները ոչ լիարժեք են ապահովել հասարակության զարգացման դինամիկ հավասարակշռությունն ու կայունությունը նոր իրողությունների պայմաններում:**

Փաստորեն, սահմանադրական վերահսկողությունը դառնում է քաղաքացիական հասարակության եւ իրավական պետության առանցքային տարրերից մեկը: Սահմանադրական վերահսկողությունը հանդես է գալիս «գալուսմների եւ հակակշիռների» ոլորտում, իսկ դրա գլխավոր խնդիրը հանդիսանում է խախտված սահմանադրական հավասարակշռության մշտական, անընդհատ եւ համակարգային հայտնաբերումը, գնահատումը եւ վերականգնումը: **Սահմանադրական վերահսկողությունը չի թույլատրում գործառութային խախտումների իռացիոնալ վերարտադրություն կամ բացասական հասարակական էներգիայի կուտակում,** որը կրիտիկական զանգվածին հասնելուն պես կարող է պայթյունի միջոցով հանգեցնել նոր

որակի: **Գործնականում սա ընտրություն է դիմամիկ, էվոլյուցիոն կամ հեղափոխական զարգացման միջև:**

Սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգի գործողությունը կոչված է երաշխավորելու սահմանադրական կայունությունը եւ բացառել հասարակական համադեմոնները՝ հենվելով, առաջին հերթին, այնպիսի սահմանադրական սկզբունքների վրա, ինչպիսիք են ժողովրդաիշխանությունը, իրավունքի գերակայությունը, իշխանությունների բաժանումն ու հավասարակշռումը, պետական ինքնիշխանությունը, Սահմանադրության գերակայությունը եւ այլն:

Ժողովրդավարական պետության սահմանադրական համակարգն անխուսափելիորեն պետք է լինի բաց ու ինքնազարգացման ներքին կարողունակությամբ օժտված: Դրա կարելուր նախապայմաններն են, որ սահմանադրական օրինականության ու սահմանադրական հավասարակշռության ամեն խախտում անմիջական արձագանք ստանա, մասնագիտորեն գնահատվի ու հաղթահարվի:

Սահմանադրության գերակայությունն ապահովելով՝ սահմանադրական վերահսկողությունը դառնում է ժողովրդավարական հասարակության կայունության ապահովման միջոց, որը հիմնարար սահմանադրական արժեքների հիման վրա ապահովում է նման հասարակության դիմամիկ զարգացման հետեւողականությունն ու անընդհատությունը: Դա էլ հենց հանդիսանում է ընդհանրապես սահմանադրական վերահսկողության եւ, մասնավորապես, սահմանադրական արդարադատության գործունակության հիմնական չափանիշը, որն ունի բացառիկ կարևոր նշանակություն ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած ժողովրդավարական համակարգերի համար:

Նորանկախ երկրներում իրավագիտակցության աղճատումները հաճախ հասնում են զավեշտական այնպիսի դրսեւորումների, որ սահմանադրական վերահսկողության, եւ, մասնավորապես, Սահմանադրական դատարանի գործառութային դերի իրականացման տարաբնույթ կաշկանդումները կամ պարզապես սահմանադրական գործընթացներից «հեռու պահելը» համարվում է իշխանության ուժի դրսեւորման ձեւ: Ցավոք, Հայաստանի Հանրապետությունը գերծչմնաց նման դրսեւորումներից:

Օրենսդիր ու, առավել եւս, գործադիր իշխանություններում նման հոգեբանության ու մտածելակերպի առկայությունը ոչ միայն ցավա-

լի է ու անհարիր ժողովրդավարության, իրավական պետության հիմնարար սկզբունքներին, այլև խիստ վտանգավոր, քանի որ կես քայլ է դեպի անձնիշխանության հաստատումը:

Նման իրավիճակների հիմնական պատճառներից մեկն այն է, որ դատաիրավական մարմինների համակարգում միայն սահմանադրական դատարաններն են նոր իրականության ծնունդ էլ չեն կրում տոտալիտար համակարգերի կնիքն ու իներցիոն գործընթացների ազդեցությունը: Սահմանադրական դատարանների ծնունդն անքակտելիորեն կապված է իրավական ժողովրդավարության ճանապարհի ընտրության հետ: Դրանց ինքնահաստատումն ընթանում է հնի ու նորի պայքարի ճանապարհով: Որքան հասարակությունը հակված է հին մտայնությանն ու արժեքներին, այնքան դժվարին է կենսունակ սահմանադրական արդարադատության կայացման ու հասարակական ընկալման ուղին: Դա առավել էս դժվարին է այն համակարգերում, **ուր ժողովրդավարությունը հասարակական անհրաժեշտությունից վերածվում է միջոցի՝ իրավունքն իշխանության կամքին ծառայեցնելու համար:**

Գատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված հաստատությունների նշանակությունը, ինչպես նշվեց, կայանում է հենց նրանում, որ դատարանն ստեղծվում է գործում է սահմանադրական կարգի հիմունքների, մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության, Սահմանադրության գերակայության և ուղղակի գործողության ապահովման, այսինքն՝ քաղաքացիական հասարակության չիմնական օրենքով ամրագրված և երաշխավորվող հիմնարար քաղաքական և իրավական արժեքների պահպանման և ապահովման համար: Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, սահմանադրական նորմերի և դրույթների ուղղակի կամ անուղղակի մեկնաբանությունը, որը հենվում է բազային սահմանադրական սկզբունքների իրավական բովանդակության բացահայտման վրա, ոչ միայն ապահովում է սահմանադրական հավասարակշռության ամրությունը, այլ նաև որոշում է երկրում սահմանադրական զարգացման բնույթն ու ուղղվածությունը: **Ժողովրդավարական զարգացման ճանապարհ ընտրած երկրի բոլոր ինստիտուտների, ինչպես նաև քաղաքացիների համար այս իրողությունը պետք է ընկալվի որպես կենսական անհրաժեշտություն:** Հատկապես եվրոպական իրավական զարգացումների ներկա

միտումներն ակնհայտորեն վկայում են, որ այդ ընկալման աստիճանով է նաև չափվում երկրում սահմանադրական մշակույթի զարգացման աստիճանը:

Կարելի է սահմանել, որ Սահմանադրական դատարանը հանդիսանում է պետական իշխանության հիմնական մարմինը, որը բազային սահմանադրական արժեքների և սկզբունքների հիման վրա ապահովում է հենց պետական իշխանության սահմանափակումը հոգուտ իրավունքի սկզբունքների, և դրանով իսկ ապահովելով հաջորդականություն և կայունություն՝ սահմանադրական նորմերը և սկզբունքներն իրագործելիս: **Այս դերի գիտակցումն ու բանական իրագործումը՝ հաշվի առնելով միջազգային սահմանադրականության զարգացման միտումները, նոր հազարամյակում հանդիսանում է իրավական զարգացումների հիմնական ուղղություններից մեկը:**

Ընդամիս, ինչպես նշվեց, սահմանադրական արդարադատության համակարգը կարող է լիարժեքորեն, արդյունավետ և անկախ գործել որոշակի **անհրաժեշտ և բավարար նախադրյալների** առկայության դեպքում: Դրանց թվին կարելի է դասել.

- դատական սահմանադրական վերահսկողության գործառնության, կառուցակարգային, նյութական և սոցիալական անկախությունը³⁶²,
- հետևողականությունն իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի սահմանադրական իրագործման ընթացքում,
- հիմնարար սահմանադրական սկզբունքների և պետական իշխանության իրականացման համապատասխան սահմանադրական մեխանիզմների համարժեքությունը և համադրելիությունը,

³⁶² Խոսելով դատական իշխանության անկախության նախադրյալների մասին՝ ԱՄՆ Գերագույն դատարանի անդամ Սանդրի Օ'Կոննորն առանձնապես կարեւորում է այն հանգամանքը, որ անկախությունն ունի ինչպես անհատական, այնպես էլ կառուցակարգային բաղադրիչներ: Անհատականներից, բացի ցմահ նշանակումից, առանձնապես կարեւոր է համարվում, որպեսզի դատավորը պաշտպանված լինի ցանկացած բնույթի ռեպրեսիաներից, բացառվի նրա վրա բարոյական ու այլ բնույթի ցանկացած ճնշում ու դրա սպառնալիք, որպեսզի դատավորը որոշում կայացնելիս վախի, ահաբեկման զգացողություն չունենա (Сандры О' Коннор - Важное значение принципа независимости судебной власти. Вопросы демократии. Электронный журнал Государственного департамента США. Том 9, номер 1, март 2004 г.

- սահմանադրական վերահսկողության օբյեկտների ճիշտ եւ հիմնավորված ընտրությունը,
- Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների օպտիմալ շրջանակի որոշումը,
- համակարգային մոտեցումը դատական իշխանության գործառության լիարժեքության ապահովման ընթացքում,
- հստակ օրենսդրական քաղաքականության առկայությունը եւ իրականացումը երկրում,
- ժողովրդավարական արժեքների ընկալման մակարդակը հասարակության մեջ:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան վկայում է, որ Սահմանադրության գերակայության հուսալի երաշխավորման համար անհրաժեշտ է, որպեսզի Սահմանադրական դատարանն օժտված լինի իրավասությամբ.

ա) որոշելու սահմանադրականությունը՝

- սահմանադրական փոփոխությունների,
- միջազգային պայմանագրերի,
- օրենքների,
- այլ նորմատիվ ակտերի.

բ) իրականացնելու կոնկրետ վերահսկողություն՝

անհատական դիմումների հիման վրա,
դատարանների դիմումների հիման վրա.

գ) պաշտոնապես մեկնաբանելու՝

- Սահմանադրությունը,
- օրենքները.

դ) լուծելու իրավական վեճերը՝

- իշխանության կենտրոնական մարմինների միջեւ,
- կենտրոնական եւ ռեզիդնալ ինստիտուցիաների միջեւ,
- ռեզիդնալ ինստիտուցիաների միջեւ,
- դատարանների ու այլ մարմինների միջեւ.

ե) ապահովելու ժողովրդավարական գործընթացների սահմանադրականությունը՝

- կուսակցությունների գործունեության սահմանադրականության վերահսկում,
- հանրաքվեների սահմանադրականության վերահսկում,

- ընտրությունների սահմանադրականության եւ օրինականության վերահսկում,
- պաշտոնանկության սահմանադրականության որոշում (Նախագահ, այլ պաշտոնատար անձինք),
- դատարանների, տեղական ինքնակառավարման մարմինների անկախության երաշխիքների ապահովում:

Ոչ միայն եվրոպական երկրներից շատերում սահմանադրական դատարաններն օժտված են նման լիազորություններով, այլև միտումն այն է, որ լիազորությունների ամբողջականացումը հետետողական բնույթ ունի **եւ համահունչ է երկրի ժողովրդավարացման ուղղվածությանն ու աստիճանին**: Սահմանադրական արդարատությունը ձեռական բնույթ ունի եւ ոչ լիարժեք է այն իրավական համակարգերում, որտեղ ձեռական ու անհետետողական վերաբերմունք կա ժողովրդավարության հանդեպ ընդհանրապես:

Զննված գործերի ու դատարան ներկայացված դիմումների կառուցվածքային վերլուծությունը վկայում է, որ երկրների գերակշիռ մեծամասնությունում սահմանադրական կամ օրենսդրական փակուղիներ չկան Սահմանադրական դատարանի գործառույթների իրականացման համար: Դրա վկայությունն է այն, որ ապահովվում է թե՛ օրենքների ու այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության գնահատման անընդհատությունը, թե՛ իրավասությունների հարցերով վեճերի լուծման հնարավորությունը եւ թե՛ մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանությունը: Մեր երկրում ստեղծված իրավիճակն իր նախադեպը չուներ, երբ մինչեւ սահմանադրական փոփոխությունները Սահմանադրական դատարանի թեկուզ սահմանափակ լիազորությունները չէին իրացվում՝ սահմանադրական ու օրենսդրական անկատար լուծումների պատճառով: Սա նաեւ այն բանի ակնհայտ վկայությունն էր, որ Սահմանադրության գոյության փաստը դեռեւս չի վկայում երկրում սահմանադրականության գոյության մասին:

Միջազգային միտումներից էական է եւ այն, որ դիմող սուբյեկտների ցանկը գործառույթների իրականացման համար կաշկանդող հանգամանք չի հանդիսանում: Մեզանում ճիշտ հակառակ պատկերը գոյություն ունի:

Հարկ է մեկ անգամ եւս ընդգծել այն հանգամանքի սկզբունքային նշանակությունը, որ սահմանադրական վերահսկողության համակարգի կենսունակությունն ուղղակի կախվածության մեջ է հենց սահմանադրական լուծումներից: Բերենք միայն մեկ օրինակ: Ցանկացած Սահմանադրական դատարանի համար սկզբունքային նշանակություն ունի, նախ եւ առաջ, իրավունքի գերակայության սկզբունքի հետևողական իրացումը սահմանադրական արդարադատության պրակտիկայում: Գերմանիայի 1949թ. Հիմնական օրենքում, ինչպես նշել ենք, առաջին անգամ հստակորեն ձևակերպվեց (հոդված 1, կետ 3), որ «...ներքոհիշյալ հիմնական իրավունքները պարտադիր են օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության համար որպես անմիջական գործող իրավունք»: Այդ սկզբունքային հարցադրումն իր հետագա զարգացումը եւ համակարգային կիրառումը գտավ միջազգային իրավունքի բազմաթիվ փաստաթղթերում: Սակայն, մեր կարծիքով, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 2 եւ 18-րդ հոդվածների ձևակերպումներին: 2-րդ հոդվածում սահմանված է. «Մարդը, նրա իրավունքները եւ ազատությունները հանդիսանում են բարձրագույն արժեքներ: Մարդու եւ քաղաքացու իրավունքների եւ ազատությունների ճանաչումը, պահպանումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է»: Իսկ հոդված 18-ն այս սկզբունքային մոտեցումը զարգացնում է հետևյալ կերպ. «Մարդու եւ քաղաքացու իրավունքները եւ ազատությունները հանդիսանում են անմիջականորեն գործող: Նրանք որոշում են օրենքների իմաստը, բովանդակությունը եւ կիրառումը, օրենսդիր եւ գործադիր իշխանությունների, տեղական ինքնակառավարման գործունեությունը եւ ապահովվում են արդարադատությամբ»: Կարծում ենք, որ հենց այսպիսի հարցադրումը հանդիսանում է սահմանադրականության զարգացման կարևոր արդյունք, որտեղ ոչ միայն հստակորեն որոշված է իրավունքի գերակայության ապահովման իրավական բովանդակությունը, այլ նաև ճշգրտված է այդ սկզբունքի իրացման մեջ սահմանադրական ինստիտուտների գործառնության դերը: Իսկ դա սահմանադրական արդարադատության պրակտիկայի համար ունի կարևոր նշանակություն:

Մյուս կողմից, սահմանադրական սկզբունքների և մեթոդաբանական հիմքերի ձևախեղումները, սահմանադրությունների ներքին հակասությունները, դրանցում առկա «նեղ տեղերը» և բացերը համապատասխանաբար ազդում են սահմանադրական արդարադատության գործունակության վրա:

Մենք համամիտ ենք պրոֆեսոր Գեորգի Բոյչևի հետ, երբ նա շեշտում է, որ Սահմանադրական դատարանի գործունակությունը և աշխատանքի որակը մեծապես պայմանավորված են Սահմանադրության որակով³⁶³: Հիմնական խնդիրն այն է, որ հաճախ Սահմանադրությունը ներկայացվում է որպես պետական-քաղաքական համակարգի, այլ ոչ թե քաղաքացիական հասարակության Հիմնական օրենք³⁶⁴: Նման հարցադրումն ունի սկզբունքային նշանակություն և բնորոշում է սահմանադրականության զարգացման հիմնական ուղղվածությունը նոր հազարամյակում:

Սահմանադրականության ներկա զարգացումների առանցքային հարցերից է Սահմանադրության սոցիալական բնույթի ամրապնդումը, **շեշտադրումը պետության Հիմնական օրենքից քաղաքացիական հասարակության Հիմնական օրենքի վրա տեղափոխելը**: Միջազգային ներկա զարգացումները, իրավական գրքալացման միտումները, պետության տեղի ու դերի վերաիմաստավորման փորձերը հանգեցնում են այն հետևությանը, որ աստիճանաբար միջազգային հարաբերությունների առանցքային սուբյեկտ է դառնում մարդը: Պետությունը՝ որպես այդպիսին, մղվում է երկրորդ պլան՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Իսկ այդ հետևանքներից գլխավորն այն է, որ պետության դերը քաղաքացիական հասարակության մեջ անխուսափելիորեն վերաբժեվորվում է³⁶⁵: Նման պարագաներում «Սահմանադրություն» հասկացությունն իրական կյանքում ավելի ամբողջական

³⁶³ Մենք գտնում ենք, որ իր ելույթում Սահմանադրությունն ինքնաբավ է: Անկատարությունն ու ներքին հակասությունները վերաբերում են տեսառային ձեւակերպումներին, որոնք պետք է հաղթահարվեն նաեւ սահմանադրական արդարադատության պրակտիկայում:

³⁶⁴ Дайджест - Конституционное правосудие в странах СНГ и Балтии. 2004, N 12, էջ 103:

³⁶⁵ Մասնավորապես տե՛ս Гаврилов В.В. Развитие концепции правовой системы в зарубежной правовой доктрине второй половины XX - начала XXI века // Московский журнал международного права, 2004, N4, էջեր 19-35:

է դրսեւորվում որպէս կենսագոյի հիմնարար վարքագծի կանոնների շուրջ հասարակական համաձայնություն, ինչին մենք հանդիպում ենք մեր ողջ պատմության քառուղիներում: Հետեւաբար, յուրաքանչյուր երկրում **Սահմանադրությունն առաջին հերթին պետք է հասարակական կայուն համաձայնության հաստատման հնարավորություններ երաշխավորի ու ցանկացած բնույթի հասարակական դիմակայության հաղթահարման լուծումներ բովանդակի:** Սահմանադրությունը չի կարող սահմանադրական փակուղիների հանգեցնել, այն քաղաքացիական հասարակության զարգացման ամենագործուն խթանը պետք է լինի: Ձեւախեղված քաղաքացիական հասարակության առկայությունը պայմանավորվում է նաեւ նրանով, որ սահմանադրական ոչ լիարժէք լուծումները դրա համար պարարտ հող են ստեղծում:

Սահմանադրության գերակայության երաշխավորումն առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել հենց Սահմանադրությամբ: **Սահմանադրությունը պետք է ունենա ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար համակարգ:** Յավոք, հետհամայնավարական տարածաշրջանի բազմաթիվ երկրների սահմանադրություններն այդպիսի անհրաժեշտ ներուժ չունեն:

Այդ հարցադրման բովանդակության բացահայտման համար անհրաժեշտ է նաև պատասխանել այն հարցին, թե ինչպիսի՞ն են տվյալ սկզբունքի իրացման գնահատման չափանիշները: Դրանք պետք է տեսնել **իրավունքի գերակայության երաշխավորվածության, բաժանված ու հավասարակշռված իշխանության իրականացման լիարժեքության եւ անկախության, գործառույթների ու իրավասությունների ներդաշնակ համակարգվածության ապահովման, ինչպէս նաեւ պետական իշխանության անընդհատության ու հավասարակշռվածության մեջ:**

Եթե բերված չափանիշները սույն բաժնում կատարվող հարցադրումների տեսանկյունից կիրառվեին Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրության նկատմամբ՝ մինչեւ 2005թ. փոփոխությունները, ապա հետազոտվող հիմնախնդիրների տեսակետից, մասնավորապէս, կարելի էր հավաստել, որ.

1. իրավունքի գերակայության ապահովման սահմանադրական երաշխիքները բավարար չէին: Մարդը, նրա արժանապատվությունը, իրավունքները եւ ազատությունները սահմանադրորեն չէին ճանաչվում որպես բարձրագույն եւ անօտարելի արժեքներ: Բացակայում էր սահմանադրական առանցքային դրույթն այն մասին, որ մարդու եւ քաղաքացու իրավունքները եւ ազատությունները հանդիսանում են անմիջականորեն գործող եւ որոշում են օրենքների իմաստը, բովանդակությունը եւ կիրառումը, օրենսդիր եւ գործադիր իշխանությունների գործունեությունը եւ ապահովվում են արդարադատությամբ: Սույն մեթոդաբանական մոտեցումը համակարգված չէր իրացվում նաև Սահմանադրության մյուս դրույթներում:

2. Հիմնական սահմանադրական սկզբունքների եւ դրանց իրացման սահմանադրական կոնկրետ մեխանիզմների միջև գոյություն ունեին որոշակի անհամապատասխանություններ:

3 Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքն անհետևողականորեն էր իրացված, ապահովված չէր պետական իշխանության ինստիտուտների անհրաժեշտ եւ բավարար գործառության հաշվեկշիռը: Մասնավորապես, ապահովված չէին օրենսդիր եւ դատական իշխանությունների գործառության անկախության անհրաժեշտ նախադրյալները, հակակշիռների ու զսպումների համակարգն անկատար էր:

Պետական իշխանության գրեթե բոլոր սահմանադրական ինստիտուտների նկատմամբ «ինստիտուտ-լիազորություն-գործառույթ» համակարգում գոյություն ուներ որոշակի անհաշվեկշռվածություն: Նույնը վերաբերում էր նաև «գործառության-հակակշռող-զսպող» լիազորությունների համակարգին: Առանց չափազանցման կարելի է ասել, որ պետական իշխանության համակարգված հաշվեկշռվածության հիմնախնդիրը ՀՀ Սահմանադրությունում արդյունավետ լուծված չէր:

4. Սահմանադրությունը չէր նախատեսել սահմանադրական վերահսկողության ամբողջական եւ գործունակ համակարգ: Սահմանադրական լուծումներն այդ առումով թերի էին, չէին արտացոլում ներսահմանադրական ինքնապաշտպանության համակարգի արմատավորման առաջատար միտումներն աշխարհում: Չէր ճանաչվում

ու երաշխավորվում նաև մարդու եւ քաղաքացու սահմանադրական արդարադատության իրավունքը:

5. Սահմանադրական դատարանի եւ ընդհանուր իրավասության դատարանների միջև գործառութային փոխհարաբերություններ ընդհանրապես չկային: Սահմանադրական վերահսկողության համակարգում տեղական ինքնակառավարումն ընդգրկված չէր, սահմանադրական դատավարության կարգի եւ սկզբունքների սահմանման մեջ թույլ էին տրված որոշակի բացթողումներ եւ այլն:

Այդ բոլոր դրսեւորումները, ինչպես նաև սահմանադրական պրակտիկան, այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի գործունեության օրվանից ի վեր Նախագահի հրամանագրերի կամ կառավարության որոշումների սահմանադրականության վերաբերյալ մինչեւ 2005թ. սահմանադրական փոփոխությունները ոչ մի դիմում չէր ստացվել, իսկ 8 տարում քննության էր առնվել ընդամենը 6 դիմում՝ օրենքի սահմանադրականության վերաբերյալ, մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների երաշխավորման հարցից գործնականում Սահմանադրական դատարանն օտարված էր՝ **վկայում են այդ շրջանում Հայաստանում սահմանադրական համակարգի էական ինուոյաին անբավարարության մասին:**

Ժամանակին ընդօրինակելով ֆրանսիական սահմանադրաիրավական համակարգը, գիտակցորեն, թե անգիտակցաբար դրանից դուրս էին թողնվել թեկուզ այդ համակարգին բնորոշ հատկապես այն մեխանիզմները՝ ի դեմս Պետական խորհրդի, Արդարադատության բարձրագույն պալատի, օրենքների նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողության, մարդու իրավունքների ազգային հանձնաժողովի ինստիտուտի, Հանրապետության դատարանի, Սահմանադրության 10-րդ գլխում նախատեսված դատական վերահսկողության մեխանիզմների եւ այլն, որոնք համակարգի կայունության ու կենսունակության գլխավոր երաշխիքներից են: Ներկայումս նույն Ֆրանսիան, հաշվի առնելով միջազգային զարգացումների փորձն ու միտումները, ինչպես նաև նոր հազարամյակի մարտահրավերները, լուրջ քայլեր նախաձեռնեց հանրային կառավարման համակարգային բարեփոխումների ուղղությամբ, մասնավորապես՝ ներդնելով անհատական սահմանադրական զանգատի համակարգը:

Հետագա սահմանադրական զարգացման տրամաբանությունը, մեր կողմից քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից, պետք է կայանար հենց սահմանադրական արդարադատության **ամբողջականության, համակարգվածության, անկախության, գործունակության ապահովման մեջ:**

Մինչև սահմանադրական բարեփոխումներն ստեղծված իրավիճակը Սահմանադրական դատարանին պարտադրում էր հիմնական սահմանադրական արժեքների պաշտպանության եւ սահմանադրական կայունության ապահովման նպատակով դիմել **սահմանադրական դրույթների ավելի լայն մեկնաբանման պրակտիկային՝** հիմք ընդունելով հիմնական սահմանադրական սկզբունքները եւ 1995թ. ՀՀ Սահմանադրության 4 հոդվածի դրույթները (որում, մասնավորապես, սահմանված էր, որ պետությունն ապահովում է մարդու իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության եւ օրենքների հիման վրա՝ **միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան**): Բնորոշ օրինակ կարող է ծառայել Հայաստանի Սահմանադրական դատարանում Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի սահմանադրականության մասին գործի քննությունը՝ մինչ դրա վավերացումը, որի վերաբերյալ դատարանի իրավական դիրքորոշումները բացահայտում են նաև մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդման հետագա սահմանադրական զարգացման հիմնական ուղղությունները երկրում: Սահմանադրական դատարանը, ի մասնավորի, ընդգծեց, որ չնայած պետությունները միջազգային հանրային իրավունքի նորմերով միմյանց հանդեպ կրում են պարտավորություններ, սակայն միջազգային հանրային իրավունքի համակարգում մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ այսօր ձևավորված մոտեցումը թույլ է տալիս եզրակացնել, որ բազմակողմ կոնվենցիաների համակարգի վրա հիմնված մարդու իրավունքները եւ հիմնական ազատություններն ավելի շուտ պետությունների վարքագծի օբյեկտիվ չափանիշներ են հանդիսանում, քան նրանց փոխադարձ իրավունքներ եւ պարտավորություններ: Այդ կոնվենցիաներով նախատեսվող՝ պետությունների պարտավորություններն ավելի շուտ

ուղղված են իրենց իրավագործության ներքո գտնվող անձանց, քան մյուս մասնակից պետություններին: Այդ տեսակետից 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիան կոչված է պաշտպանելու անձանց եւ հասարակական կազմակերպություններին պետական իշխանության մարմիններից, որը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդվածով ամրապնդված իրավական պետության կարևոր հատկանիշներից մեկն է: Ընդամին, Կոնվենցիան եւ դրա արձանագրությունները հիմնված են այնպիսի իրավունքների եւ չափորոշիչների վրա, որոնք համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ եւ ՀՀ միջազգային պայմանագրերով երաշխավորված մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների ոգուն եւ տառին:

Ավաձն ամփոփելով, ցանկանում ենք մաև ընդգծել, որ սահմանադրական արդարադատության գործունյա եւ անկախ համակարգի ձևավորման համար հիմք են հանդիսանում. սահմանադրական վերահսկողության համակարգվածությունը, համակարգի ռացիոնալությունը եւ դրա գործողության անընդհատությունը, վերահսկողության կանխարգելիչ բնույթը, համակարգի գործունեության ինքնասահմանափակումը, սահմանադրական դատարանների գործունեության լիարժեքությունը, սահմանադրական արդարադատության իրականացման ժամանակ գործառությանին, կառուցակարգային, կազմակերպչական եւ դատավարական սկզբունքների օրգանական զուգակցումը, հասարակական պրակտիկայի հետ բազմապլանային հետադարձ կապի ապահովումը եւ խախտված հաշվեկշռի վերականգնման ժամանակ սահմանադրական հավասարակշռության մոր խախտման բացառումը:

Նշված խնդիրները մասնակիորեն լուծվեցին 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում, ինչպես մաեւ 2006թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ նոր օրենքով: Խնդիրը վերաբերում է ոչ միայն Սահմանադրական դատարանի լիազորություններին, դատավարության օբյեկտներին, դատարան դիմող սուբյեկտներին, Սահմանադրական դատարանում գործերի քննության հիմնական սկզբունքներին, այլեւ տարբեր գործերով դատավարական կոնկրետ առանձնահատկություններին:

Կցանկանայինք առանձնացնել համակարգային բնույթ ունեցող մի շարք մոտեցումներ:

1. ՀՀ Սահմանադրական դատարանն Ավստրիայի, Գանիայի, ԱՄՆ-ի, Արգենտինայի, Բելգիայի, Ֆինլանդիայի, Իռլանդիայի, Շվեդիայի, Ռուսաստանի Դաշնության, Նորվեգիայի, Մալթայի, Թուրքիայի եւ մի շարք այլ երկրների՝ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների օրինակով օժտված է անկախության այնպիսի կարելուք երաշխիքով, ինչպիսին անդամների մինչեւ յոթանասուն (սահմանադրական փոփոխություններով՝ 65) տարին լրանալն անփոփոխելիության սկզբունքով նշանակումն է³⁶⁶: Նման դրույթը զնալով ավելի ու ավելի է կարելուքում սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայում: Այդ համակարգին են կրկին վերադարձել Ռուսաստանի Դաշնությունում՝ ՄԳ մասին դաշնային օրենքում նախատեսելով ՄԳ դատավորների անժամկետ պաշտոնավարում՝ մինչեւ 70 տարին լրանալը:

Անհրաժեշտ է, որպեսզի բավարար կենսունակությամբ օժտված լինեն նաեւ դատարանի անկախության մյուս բաղադրիչները: Ընդհանուր սկզբունքն այն է, որ դատարանների համար անկախությունը ենթադրում է ցանկացած բնույթի ազդեցության բացառում եւ ազդեցությունից պաշտպանվածություն: Այն չպետք է մեխանիկական ընկալում ունենա: **Դա գոյավիճակ է, էություն, ներքին բովանդակություն, արժեքային համակարգ, որակ:** Իսկ դատավորի անկախության կարելուք երաշխիքը նրա մասնագիտական մակարդակն է, գիտելիքների մակարդակը, պատրաստվածության աստիճանը: Այն ենթադրում է նաեւ պատրաստվածության աստիճանի ստուգման ու դրա բարձրացման համակարգի առկայություն: Ընդհանրապես դատավորի անկախության կարելուք երաշխիք է ապագայի հանդեպ հստակությունը՝ թե սոցիալական պաշտպանվածության եւ թե ծառայողական կարիերայի առումով (նրա գիտելիքների եւ փորձի իրացման հնարավորությունը): Անկախության մշակույթը, իր հերթին, պայմանավորված է երկրում ժողովրդավարության, պառլամենտարիզմի, սահմանադրական մշակույթով: **Օրինականության մշակույթ-**

³⁶⁶ Առանձին երկրներում, օր., ԱՄՆ-ում, նշանակումը կատարվում է ցմահ:

թով է պայմանավորված անկախության մշակույթը: Անկախությունը հասարակական պահանջ լինելուց զատ, պետք է դառնա հասարակական մտածողության մշակույթի բաղկացուցիչ մաս:

Սահմանադրական դատարանների իրավասությունների եւ դրանց իրացման կարգին առնչվող հարցերը վերջին շրջանում ակտիվ քննության առարկա են եղել Վենետիկի հանձնաժողովում՝ կապված հատկապես Լատվիայի, Ադրբեջանի, Մոլդովայի, Ռումինիայի, Խորվաթիայի, Հայաստանի եւ մի շարք այլ երկրների սահմանադրական դատարանների վերաբերյալ օրենքների քննարկման հետ: Այս հարցում սկզբունքային նշանակություն ունեցավ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելու վերաբերյալ 2010թ. դեկտեմբերի 18-ին Վենետիկի հանձնաժողովի լիազումար նիստի կողմից ընդունված գեկույցը:³⁶⁷ Այս հետազոտությունը ներառեց համաշխարհային ամբողջ փորձը, բացահայտեց եվրոպական զարգացումների հիմնական միտումները, առաջադրեց համաեվրոպական հիմնական չափորոշիչները՝ սահմանադրական դատարանների կողմից մարդու իրավունքների պաշտպանության եւ իրավունքի գերակայության երաշխավորման ոլորտներում:

Հաշվի առնելով սահմանադրական արդարադատության ոլորտում միջազգային զարգացումների հիմնական միտումները, կարելի է եզրակացնել, որ **արդյունավետ սահմանադրական արդարադատություն կարող է իրականացվել, երբ բոլոր սահմանադրական սուբյեկտներն իրավասու են դիմելու Սահմանադրական դատարան եւ սահմանադրական բոլոր սուբյեկտների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը կարող են դառնալ սահմանադրական արդարադատության օբյեկտ:** Բացի դրանից, քանի որ սահմանադրական արդարադատության հիմնական բովանդակությունը Սահմանադրության գերակայության ապահովումն է, ապա այդ խնդիրը կմնա անլուծելի, եթե Սահմանադրական դատարանը չերաշխավորի **մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի** արդյունավետ իրականացման ճանապարհով նրա սահմանադրական

367 On Individual Access to Constitutional Justice, Adopted by Venice Commission at its 85th Plenary Session (Venice, 17-18 december 2010). On the basis of comment by Mr. Gagik Harutyunyan (Member, Armenia), Ms Angelika Nussberger (Substitute Member, Germany), Mr Peter Paczoly (Member, Hungary).

իրավունքների երաշխավորված պաշտպանությունն ու ապահովումը, ինչպես նաև չլուծի սահմանադրական լիազորությունների հարցով իշխանության մարմինների միջև առաջացած վեճերը:

Պետական իշխանության մարմինների սահմանադրական լիազորությունների հետ կապված վեճերի լուծման իրավասություն ունեն սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգ ունեցող ավելի քան հիսուն երկրների սահմանադրական դատարաններ: Մասնավորապես, տես. Ադրբեջանի Սահմանադրություն, հոդվ. 130, Բուլղարիա՝ 149, Վրաստան՝ 89, Գերմանիա՝ 93, Իտալիա՝ 134, Լեհաստան՝ 189, Ռուսաստան՝ 125, Սլովակիա՝ 126, Սլովենիա՝ 160, Իսպանիա՝ 161, Տաջիկստան՝ 89 եւ այլն: Բացի դրանից, Սահմանադրության վերացական կամ, այսպես կոչված, բացարձակ մեկնաբանման իրավասություն ունեն 29 երկրների սահմանադրական դատարաններ, այդ թվում՝ Ադրբեջանում, Բուլղարիայում, Գաբոնում, Գերմանիայում, Հունգարիայում, Ղազախստանում, Ղրղզստանում, Մոլդովայում, Ռուսաստանում, Նամիբիայում, Սլովակիայում, Ուզբեկստանում եւ այլն: Բազմաթիվ երկրներում (Լեհաստան, Սլովակիա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Լիտվա, Սլովենիա, Ադրբեջան եւ այլն) այլ նորմատիվ ակտերի ոչ միայն Սահմանադրությանը, այլև օրենքներին (հաճախ նաև՝ միջազգային պայմանագրերին) համապատասխանության հարցը նույնպես լուծում է Սահմանադրական դատարանը եւ արդյունավետ չի համարվում այդ նպատակով նոր մարմիններ ստեղծելը (մման տեսակետը պաշտպանվում է նաև Վենետիկի հանձնաժողովի փորձագետների կողմից):

Քաղաքացիների անհատական դիմումների հիման վրա նորմատիվ ակտի սահմանադրական վերահսկողություն է իրականացվում 53 երկրում, այդ թվում սահմանադրական դատարաններ ունեցող Արեւմտյան ու Արեւելյան Եվրոպայի բոլոր երկրներում: Նախկին խորհրդային երկրներից Հայաստանն այդ հարցը մասնակիորեն լուծեց 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում՝ Եվրախորհրդին անդամակցելու պարտավորությունների շրջանակներում: Վենետիկի հանձնաժողովի վերոնշյալ զեկույցում հստակ հետևություն է արվում, որ հետագա զարգացումները պետք է ընթանան լիարժեք եւ ամբողջական սահմանադրական զանգատի ինստիտու-

տի ներդրման ճանապարհով: Իսկ վերջինս ենթադրում է, որ սահմանադրական զանգատի օբյեկտ պետք է դառնան ոչ միայն նրանց նկատմամբ կիրառված իրավական ակտերը, այլև հիմնական իրավունքների անմիջական պաշտպանությունը: Առանց դրա անհնարին է ապահովել սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների անմիջականորեն գործողությունը: Վերջինս չի կարող սահմանափակվել միայն դատական պրակտիկայում այդ իրավունքների վկայակոչմամբ: Մարդու անմիջականորեն գործող հիմնական իրավունքները դատական պաշտպանության համարժեք ընթացակարգեր պետք է ունենան: Միջազգային պրակտիկան վկայում է, որ դրա ամենաարդյունավետ ճանապարհը սահմանադրական զանգատն է, ինչը դառնում է նաև մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման կարելու միջոց:

2. Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների հարցում միջազգային պրակտիկայում ընդունված է այն սկզբունքային մոտեցումը, որ դրանք պետք է ապահովեն դատարանի սահմանադրական վերահսկողության լիազորությունների ամբողջական եւ արդյունավետ կատարումը: Հայաստանը եզակի բացառություն էր, երբ Սահմանադրական դատարանն աշխարհում գործող 100-ից ավելի սահմանադրական դատարանների համեմատությամբ ամենասեղմ դիմող սուբյեկտների շրջանակն ուներ եւ դրանց թվով ու ընդգրկումով **գտնվում էր վերջին տեղում: Այդ խնդիրն արմատապես հաղթահարվեց 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում:**

Այդ փոփոխությունների արդյունքում, համաձայն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի՝ Սահմանադրությամբ եւ Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան կարող էին դիմել՝

1. Հանրապետության Նախագահը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 2, 3, 7-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.
2. Ազգային ժողովը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3, 5, 7-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.
3. պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4. կառավարությունը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1, 6, 8-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված դեպքերում.
5. տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող պետական մարմինների՝ նորմատիվ ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով.
6. յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը.
7. դատարանները եւ գլխավոր դատախազը՝ իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով.
8. մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.
9. Հանրապետության Նախագահի եւ պատգամավորության թեկնածուները՝ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ եւ 4-րդ կետերի շրջանակներում իրենց առնչվող հարցերով:

Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

3. ՀՀ 1995թ. Սահմանադրությամբ սահմանվել էին սահմանադրական դատավարության այնպիսի նորմեր, որոնք բացակայում էին աշխարհի մնացած բոլոր սահմանադրական դատարաններում: Մասնավորապես, ամրագրված էր, որ Սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ ու եզրակացություններ՝ դիմումն ստանալուց ոչ ոչ, քան երեսուն օր հետո: Նման նորմ գոյություն ուներ միայն նախնական նորմատիվ վերահսկողություն իրականացնող ֆրանսիական սահմանադրական խորհրդի գործունեության առնչությամբ: Որեւէ Սահմանադրական դատարան, որն իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի հետագա վերացական վերահսկողություն, կաշկանդված չէ նման սահմանադրական սահմանափակմամբ:

2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 102-րդ հոդվածով սահմանվեց.

«Սահմանադրական դատարանն ընդունում է որոշումներ եւ եզրակացություններ՝ Սահմանադրությամբ եւ Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով:

Սահմանադրական դատարանի որոշումները եւ եզրակացությունները վերջնական են եւ ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ կարող է սահմանել Սահմանադրությանը չհամապատասխանող նորմատիվ ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ:

Սահմանադրական դատարանը Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-4-րդ եւ 9-րդ կետերով նախատեսված հարցերի վերաբերյալ ընդունում է որոշումներ, իսկ 5-8-րդ կետերով նախատեսված հարցերով՝ եզրակացություններ: Եզրակացությունները եւ 9-րդ կետով նախատեսված հարցերով որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, մնացած որոշումները՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Եթե Սահմանադրական դատարանի եզրակացությունը բացասական է, ապա հարցը դուրս է գալիս իրավասու մարմնի քննությունից»:

Իր հերթին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով հստակեցվեցին առանձին բնույթի գործերով Սահմանադրական դատարանի որոշումների ընդունման ժամկետները՝ հաշվի առնելով նաեւ այս ոլորտում միջազգային փորձը:

4. Ներկայումս միջազգային տարբեր ատյաններում լուրջ քննարկման առարկա են դարձել նաեւ սահմանադրական դատարանների որոշումների բնույթին, դրանց կենսագործման հիմնախնդիրներին, որոշումների սահմանադրական հետեւանքներին առնչվող հարցերը: Նկատի ունենալով, որ դատական սահմանադրական վերահսկողության լուրջ փորձ ունեն Լեհաստանը, որտեղ դեռեւս 1972 թվականից բանավեճեր էին գնում այս համակարգի բարեփոխումների ուղղությամբ, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ Լեհաստանը Արեւելյան Եվրոպայի երկրներից համեմատաբար ավելի ուշ ընդունեց նոր Սահմանադրությունը /1997թ./՝ հաշվի առնելով սահմանադրա-

կան զարգացումների հարուստ փորձը, ուշադրության են արժանի հենց այս երկրում զտնված լուծումները՝ նաև հիշյալ հարցի առումով, մասնավորապես, Սահմանադրական դատարանին վերապահված իրավասության առնչությամբ՝ ժամանակ սահմանելու իր որոշման ուժի մեջ մտնելու համար:

Սահմանադրական դատարանի կողմից իր որոշումներն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանելու քայլին գնաց նաև Ռուսաստանի Սահմանադրական դատարանը, քանի որ մի շարք գործերով որոշումների անմիջական ուժի մեջ մտնելը կարող էր առաջ բերել ածանցյալ լուրջ ոչ սահմանադրական հետեւանքներ: Դ-ա, մասնավորապես, վերաբերում է կառավարության թիվ 197 որոշման առնչությամբ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի ընդունած 18.02.1997թ. որոշմանը:

Նման իրավասություն ունի նաև Գերմանիայի Սահմանադրական դատարանը, որը կոնկրետացված է դատարանի մասին սահմանադրական օրենքի 31 եւ 79-րդ պարագրաֆներում:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ նոր օրենքի 68-րդ հոդվածի 12-րդ եւ 13-րդ մասերը սահմանեցին. « 12. Սույն հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետում նշված որոշումը Սահմանադրական դատարանն իրավասու է տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետեւանքներ:

Սույն մասի առաջին պարբերությունում նշված որոշմամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմատիվ ակտի, ինչպես նաև այդ ակտի կատարումն ապահովված այլ նորմատիվ ակտերի վրա հիմնված՝ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող երեք տարիների ընթացքում ընդունված եւ կատարված վարչական կամ դատական ակտերը ենթակա են վերանայման վարչական կամ դատական ակտն ընդունած մարմնի կողմից՝ օրենքով սահմանված կարգով:

Քրեական օրենսգրքի կամ վարչական պատասխանատվության վերաբերյալ օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այդ դրույթն իրավաբանական ուժը կորցնում է իր ուժի մեջ մտնելու պահից:

Այդ դրույթի կիրառման վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական եւ վարչական ակտերը օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման»:

Միաժամանակ, օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանվեց. «Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, եթե Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կամ դրա որեւէ դրույթի՝ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետեւանքներ հանրության եւ պետության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ ակտի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սպա Սահմանադրական դատարանը կարող է, տվյալ ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, իր որոշման մեջ հետաձգել այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը:

Այդ դեպքում մինչեւ ակտի իրավաբանական ուժը կորցնելը ակտը համարվում է Սահմանադրությանը համապատասխանող»:

5. Այսուհանդերձ, առավել կարելու է Սահմանադրական դատարանի որոշումների իրավական բնույթի, բովանդակության եւ կատարման ապահովման խնդիրը: Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկայի եւ սահմանադրագիտության կողմից վավերացված իրողություն է, որ Սահմանադրական դատարանի որոշումները **նախադեպային բնույթ ունեն եւ հանդիսանում են իրավունքի կարելու արդյուր**³⁶⁸: Միջազգային պրակտիկան վկայում է նաեւ, որ Սահմանադրական դատարանի որոշումները չեն կարող դառնալ **պետական պաշտոնյաների** քննարկման ու մեկնաբանությունների առարկա: Նման փաստերը վկայում են սահմանադրական մշակույթի ցածր մակարդակի, իշխանությունների տարանջատման սկզբունքի անհետեւողական իրացման իրողության մասին:

Բացառիկ կարելու է նաեւ Սահմանադրական դատարանի եզրա-

368 Տե՛ս Зоркин В.Д. Прецедентный характер решений Конституционного Суда Российской Федерации // Журнал российского права, 2004, № 12, էջեր 3-9:

կացությունների իրավական բնույթի հարցը: Դա ոչ թե օրենքի, այն էլ՝ ոչ սահմանադրական կամ օրգանական, այլ սահմանադրական մակարդակում լուծվելիք խնդիր է: Եթե Սահմանադրական դատարանում նրա անդամների ձայների կեսով ընդունված որոշումները վերջնական են եւ վերանայման ենթակա չեն, ապա երկու երրորդով ընդունված եզրակացությունները չեն կարող պարտադիր իրավական հետեւանքներ չունենալ: Հակառակ պարագայում իրավական գործընթացը ոչ թե ծառայում է քաղաքական վեճերն իրավական դաշտում լուծելուն, այլ ճիշտ հակառակը՝ իրավական խնդիրը տեղափոխվում է քաղաքական դաշտ, որն անհարիր է իրավական պետության եւ իրավունքի գերակայության սկզբունքներին: Հայաստանի Հանրապետության իրավական պրակտիկայում ճիշտ մոտեցում է ձեռավորվել, մասնավորապես, Ազգային ժողովի կանոնակարգի 81-րդ հոդվածի հիմքով, ըստ որի՝ եթե Սահմանադրական դատարանի եզրակացությամբ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հիմքերը բացակայում են, ապա հարցը հանվում է քննարկումից: Նույն մոտեցումն ամրագրված է նաեւ 83-րդ հոդվածում: Սակայն սովորական օրենքներով նման սկզբունքային հարցի լուծումը ոչ միայն կարող էր թուլացնել քաղաքական վեճերի իրավական հաղթահարման սկզբունքների հետետողական գործադրումը, այլեւ կարող էր քաղաքական շահարկումների պատճառ դառնալ՝ դրանում ներքաշելով նաեւ դատական համակարգը: Այդ նկատառումներով խնդրին նաեւ սահմանադրական լուծում տրվեց: Միջազգային փորձը նույնպես վկայում է, որ Սահմանադրական դատարանի ակտերի իրավական բնույթը պետք է հստակ ամրագրվի Սահմանադրության մեջ:

6. Ինչպես նշվեց, Սահմանադրության գերակայության երաշխավորումն ամենաընդհանուր ձեւով ենթադրում է իրավական ակտերի սահմանադրականության ապահովում, մարդու սահմանադրական իրավունքների ու ազատությունների երաշխավորում, սահմանադրական լիազորությունների հարցերով պետական իշխանության մարմինների միջեւ առաջացած վեճերի լուծում: Առանց այդ գործառույթների ամբողջական իրականացման երկրում անհնարին է լիարժեք սահմանադրական արդարադատության երաշխավորումը:

Ի դեպ, եթե նախորդ դարասկզբին ու 50-ական թվականներից հետո Արեւմտյան Եվրոպայի երկրների համար առավել կարեւոր էր հատկապես նորմատիվ ակտերի սահմանադրականության խնդիրը, ապա նոր հազարամյակում առաջին պլան են մղվել սահմանադրական դատարանների կողմից սահմանադրական իրավունքների անմիջական երաշխավորման եւ լիազորությունների հարցով վեճերի լուծման խնդիրները: Արեւելյան Եվրոպայի շատ երկրներ որդեգրեցին Գերմանիայի, Ավստրիայի, Իսպանիայի ու մի շարք այլ երկրների մեծ փորձը ու անհրաժեշտ փոփոխություններ կատարեցին իրենց իրավական համակարգերում՝ նպատակ ունենալով, հիշյալ միտումների հաշվառմամբ, հուսալի նախադրյալներ ստեղծել Սահմանադրության գերակայության երաշխավորման համար: Վերջին շրջանում այդ օրինակին հետեւեցին մասն Արեւելյան Եվրոպայի ու նախկին ԽՍՀՄ մի շարք երկրներ՝ սահմանադրական արդարադատության պրակտիկայում լայնորեն ներդնելով անհատական դիմումների համակարգը, ստեղծելով Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման եւ իրավասությունների հարցերով վեճերի լուծման հստակ մեխանիզմներ: Մեր երկրում այս ուղղությամբ քաղաքական ուժերի մտածումները, սահմանադրական ու օրենսդրական բարեփոխումների նախաձեռնությունները դեռեւս ներդաշնակ չեն իրավական մտքի ընդհանրացումներին: 2005թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ներդրվեց անհատական դիմումների ընդունման եւ քննության, այսպես կոչված, ամենագոյաշավոր եւ սահմանափակ տարբերակը, իսկ իրավասությունների հարցերով սահմանադրական վեճերի լուծման եւ դրանց շրջանակում Սահմանադրության վերացական մեկնաբանման խնդիրները մնացին անլուծելի՝ լիարժեք երաշխիքներ չստեղծելով Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման համար:

Նշված խնդիրների համակարգված լուծումն ունի անմիջական նշանակություն դատական սահմանադրական վերահսկողության **ամբողջական, արդյունավետ եւ անկախ** մեխանիզմի ձևավորման համար: Այդ երեք դրսևորումներն օրգանապես կապված են եւ հենց դրանց եռամիասնության մեջ կարելի է դատել սահմանադրական արդարադատության լիարժեքության եւ գործունակության, ինչպես մաս երկրում սահմանադրական կայունության երաշխավորվածության մասին:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ սահմանադրական արդարադատությունը ոչ միայն քաղաքացիական հասարակության իմունային համակարգի կարեւորագույն ու անբախտելի բաղադրատարր է, այլև սահմանադրական արդարադատության իրական վիճակը երկրում սահմանադրականության գնահատման, սահմանադրական մշակույթի զարգացման հիմնական չափանիշներից մեկն է: Գիտական միտքը, օրինակ, Գերմանիայում վաղուց է հանգել այն հետեւությանը, որ Հիմնական օրենքը պրակտիկայում կիրառվում է այնպես, ինչպես Դաշնային Սահմանադրական դատարանն է այն մեկնաբանում³⁶⁹:

Սահմանադրությունից մինչև իրական սահմանադրականություն հաստատելու ճանապարհը խելամիտ անցնելու համար բավարար չեն միայն արժեհամակարգային նոր կողմնորոշումները եւ հին մտայնության հաղթահարումը: Որպես պարտադիր նախադրյալներ անհրաժեշտ են, որպեսզի.

1. երաշխավորված լինի իրավունքի գերակայությունը,
2. ապահովվի իշխանությունների հստակ բաժանումն ու հավասարակշռումը,
3. ժողովրդաիշխանությունը սահմանադրական սկզբունքից դառնա գործուն իրողություն, ապահովվի իշխանության ինստիտուտների լեգիտիմությունը³⁷⁰,
4. Սահմանադրության գերակայության երաշխավորման համակարգը լինի ամբողջական ու կենսունակ,
5. երաշխավորվեն դատական համակարգի գործունակությունն ու անկախությունը:

Այս նախադրյալներից յուրաքանչյուրի բացակայության պարագայում անլիարժեք են դառնում նաեւ մյուս նախադրյալները, Սահմանադրությունն ապրող իրողություն լինելուց վեր է ածվում ձեւական երեւույթի եւ դրա գոյությունը չի փաստում երկրում սահմանադրականության ու իրավական պետության սկզբունքներին համապատասխանող՝ սահմանադրական մշակույթի առկայության մասին:

³⁶⁹ Robert Alexy, A Theory of Constitutional Rights. Oxford university Press, 2010, p. 373.

³⁷⁰ Իշխանությունների լեգիտիմության հասկացությունը հաճախ գրականության մեջ թերի ու ոչ լիարժեք է մեկնաբանվում: Այն ենթադրում է ոչ միայն իշխանության մարմնի ձեւավորման օրինականությունը, այլև հասարակական անհրաժեշտ ու բավարար վստահությունն այդ գործընթացի ու տվյալ իշխանության նկատմամբ (Конституционное право: Словарь / Отв. ред. В.В. Маклаков. М., 2001, էջ 248):

5.2. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Սահմանադրական արդարադատության միջազգային փորձի համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս.

նախ՝ բացահայտել այն ընդհանուրն ու անհրաժեշտը, առանց որի այս համակարգերը կդադարեն որպես այդպիսին գոյություն ունենալուց,

երկրորդ՝ վեր հանել կոնկրետ երկրների սահմանադրական արդարադատության առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, որոնք կարող են ուսանելի ու օգտակար լինել մյուս երկրների համար,

երրորդ՝ անհրաժեշտություն է առաջանում ի մի բերել սահմանադրական արդարադատության համակարգերի պատմական զարգացման դասերը՝ որպես հասարակության կայուն առաջընթացի ապահովման կարեւոր պայման:

Ուստի, սահմանադրական արդարադատության համակարգերի հետագա զարգացման միտումներն ամփոփ ներկայացնելուց առաջ, փորձենք անել մի շարք ընդհանրացումներ:

Միջազգային փորձը, օրենքի սահմանադրականության ապահովման երկու համակարգերի /ամերիկյան եւ եվրոպական/ զարգացման դիպլեկտիկան, անցումային փուլի առանձնահատկություններից բխող նոր խնդիրներն ու դրանց լուծման տրամաբանությունը վկայում են, որ, պայմանականորեն, պատմական էվոլյուցիայի հիմնական դասերը հանգում են հետեւյալներին.

1. 20-րդ դարի սկզբին ստեղծվեցին օբյեկտիվ նախադրյալներ սահմանադրական արդարադատության որակապես նոր համակարգի անցնելու համար: Դրանք առաջին հերթին վերաբերում էին հասարակական հարաբերությունների որակական ակտիվ վերափոխումներին՝ ընդհուպ համակարգային փոփոխություններին, ինչպես նաեւ միաժամանակ մի շարք երկրներում հասարակական կառավարման էքստրենալ իրավիճակների առաջացմանը,

2. օրենքի եւ այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովման խնդիրը դադարեց միայն կամ առավելապես մարդու իրավունքների պաշտպանության խնդիր լինելուց: Առաջին պլան

մղվեց հասարակական կայունության ապահովմանն ու զարգացմանը կայուն դիմամիզմ հաղորդելու եւ այդ գործում պետական իշխանության բոլոր մարմիններին, ինչպես նաեւ քաղաքացիներին ակտիվ ու փոխհամաձայնեցված մասնակից դարձնելու խնդիրը,

3. որակապես նոր բնույթ ստացավ մարդու իրավունքների պաշտպանության ներպետական մեխանիզմների ձեւավորման խնդիրը, որտեղ առանձնահատուկ տեղ հատկացվեց դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ինստիտուտներին: Ելակետ ընդունվեց մեթոդաբանական այն մոտեցումը, որ մարդու անօտարելի արժանապատվությունը նրա իրավունքների ու ազատությունների ակունքն է: Իսկ մարդու բնական իրավունքները սահմանադրորեն ճանաչվում են որպես բարձրագույն արժեք, անմիջական գործող իրավունք, պայմանավորում են ժողովրդի ու պետության կողմից իշխանության իրականացման բնույթն ու բովանդակությունը, ենթակա են հարգման ու պաշտպանության: **Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքը դառնում է նրա իրավունքների պաշտպանության կարեւոր երաշխիք,**

4. առավել եւս անցումային ու էքստրեմալ իրավիճակներում կարելի էր ավելի ոչ այնքան հետեւանքների հաղթահարումը, որքան բացասական երեւույթների կանխակայումը եւ հնարավոր վնասը նվազագույնի հասցնելը: Այս առումով չափազանց կարեւոր էր նախնական վերահսկողության համակարգի արմատավորումը, որն անհամատեղելի է սահմանադրական վերահսկողության ամերիկյան մոդելի հետ,

5. հատկապես անցումային փուլում գտնվող երկրների համար դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված համակարգն ստեղծում է առավելագույն հնարավորություններ՝ գտնելու քաղաքական անհամաձայնությունների իրավական լուծումներ: Փաստորեն, ստեղծվում է իրական հնարավորություն փակուղային բոլոր իրավիճակներից իրավական, սահմանադրական ելք գտնելու համար: Սահմանադրական արդարադատության արդյունավետությունն իր հերթին պայմանավորված չէ դատարանի կողմից քննության առնված գործերի կամ մուտքագրված դիմումների թվով: **Սահմանադրական դատարանների գործունակության գնահատման հիմնական չափանիշը հասարակական գործընթացների վրա**

նրանց իրական ազդեցությունն է, որն ուղղված է սահմանադրական հավասարակշռության պահպանմանն ու հասարակության կայուն և դինամիկ առաջընթացին,

6. նոր համակարգերի կողմից Սահմանադրության գերակայության երաշխավորումը և օրենքի ու այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության շարունակական վերահսկումը փոխեց նաև մոտեցման մեթոդաբանությունը՝ խնդիրն իրավակիրառական հարթությունից տեղափոխվեց հասարակական կառավարման հարթություն,

7. մասնագիտացված համակարգերի ձեւավորումը հնարավորություն տվեց համալիր մոտեցում դրսևորել օրենքի ու այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության ապահովման խնդրին՝ ոչ միայն սահմանադրականության հարցը քննության առարկա դարձնելով դրանց մշակման, ընդունման և կիրառման բոլոր փուլերում, այլև հաստատելով լայն ժողովրդավարություն, էապես ընդլայնելով սահմանադրական վերահսկողության սուբյեկտների և այդ նպատակով Սահմանադրական դատարանի դիմողների ցանկը,

8. սահմանադրական դատարանների մասնագիտացված համակարգն էապես մեծացրեց սահմանադրական արդարադատության ներազդեցությունն օրենսդրական համակարգի բարելավման, ընդհուպ՝ սահմանադրական լուծումների հետագա կատարելագործման գործում, **Սահմանադրական դատարանի որոշումները և իրավական դիրքորոշումը դարձան իրավունքի կարելուր աղբյուր,**

9. ստեղծվեց ավելի մեծ հնարավորություն պահպանելու իշխանությունների բաժանման և հավասարակշռման հաշվեկշիռը, արդյունավետ գործադրելու զսպումների ու հակակշիռների մեխանիզմը: Այս խնդրի լուծմանն էապես նպաստող հանգամանքներից կցանկանալինք առանձնացնել հատկապես պաշտամենտի պալատների կանոնակարգերի նկատմամբ սահմանադրական նախնական վերահսկողության պրակտիկան, սահմանադրական վերահսկողության հարցում պաշտամենտական փոքրամասնությանն ընձեռվող հնարավորությունը, սահմանադրական դատարանների վերահսկիչ գործառույթն նախագահական ընտրությունների և կուսակցությունների գործունեության սահմանադրականության նկատմամբ, ինչպես նաև դատական

սահմանադրական վերահսկողության մարմինների միջոցով պետական իշխանության տարբեր մարմինների միջև առաջացած անհամաձայնությունների լուծման հնարավորությունը եւ այլն,

10. մի շարք երկրներում սահմանադրական արդարադատության մարմիններն սկսեցին ծանրաբեռնվել իրենց գործառնության ղերին ոչ բնորոշ լիազորություններով, ինչը հաճախ բացասաբար է անդրադառնում դրանց գործունեության արդյունավետության վրա,

11. որպես կարեւոր հետեւություն՝ կցանկանայինք առանձնացնել նաեւ այն, որ սահմանադրական վերահսկողության մարմինների հետեւողական ու արդյունավետ աշխատանք կարելի է ակնկալել այնտեղ եւ այն դեպքում, որտեղ եւ երբ այդ համակարգի ձեւավորմանը ցուցաբերվում է համալիր մոտեցում, նախապես հստակ **որոշվում ու Սահմանադրության մեջ ամրագրվում են լիազորությունների ամբողջությունն ու դրանց իրականացման իրական նախադրյալները**: Տվյալ դեպքում մոտեցումը չպետք է թելադրված լինի այդ պահին բնորոշ այս կամ այն քաղաքական նկատառումով, այլ իր հիմքում պետք է ունենա համակարգային կառավարման մեթոդաբանությամբ առաջադրվող պահանջները, ինչը Հայաստանի Հանրապետությունում չերաշխավորվեց 1995թ. սահմանադրական լուծումներով: Անկախ քաղաքական իրավիճակի փոփոխությունից, պետք է երաշխավորված լինի սահմանադրական արդարադատության մարմնի անձեռնմխելիությունն ու անկախ գործունեությունը: Դա հատկապես կարեւորվում է անցման շրջանում: Այս խնդիրը թելադրում է նաեւ սահմանադրական դատարանների միջազգային համագործակցության էական բարելավման պահանջ,

12. բացառիկ կարեւոր նշանակություն ունի այն իրողության գիտակցումը, որ **ցանկացած հասարակություն, այդ թվում՝ նախասահմանադրական շրջանում, ունեցել է հասարակության կենսագոյի գրված ու չգրված կանոններ, ինչպես նաեւ դրանց պահպանության ու իշխանությունների նկատմամբ վերահսկողության (կամ արգելակների) ամբողջական համակարգ**: Դրա կարեւոր բաղադրիչներն են եղել հավատը (եկեղեցին), բարոյական վարքագծի նորմերը, ավանդույթները (հասարակական, ընտանեկան), մեծ կամ փոքր համակարգի առանձնահատկություններով պայմանա-

վորված վարքի կանոնները, սովորութային իրավունքը, իրավական նորմերը եւ այլն: Խնդիրն այն է, որ սահմանադրական վերահսկողությունը ոչ թե հակադրվի, այլ ներդաշնակվի այս ամենին: Իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուր երկրում, իր բազում առանձնահատկությունների հիման վրա, պետք է վեր հանվեն ու ներդաշնակվեն բոլոր բաղադրամասերը: Հետևությունը նաեւ այն է, որ անձնակենտրոն համակարգերում երբեք նույն կանոնները չեն կարող գործել, ինչ՝ ազգակենտրոն համակարգերում,

13. հիմնական չափանիշները, որոնք պետք է դրվեն կենսունակ սահմանադրական արդարադատության համակարգերի ձևավորման հիմքում, հետևյալներն են.

- սահմանադրական դատարանների գործառութային լիարժեքությունը եւ լիազորությունների ու դրանց իրացման նախադրյալների ներդաշնակությունը,
- սահմանադրական վերահսկողության համակարգի ամբողջականությունն ու այն իրականացնող մարմինների գործառութային հստակ փոխհարաբերությունների առկայությունը,
- համակարգի ռաջիոնալ աշխատանքի ու գործունեության անընդհատության ապահովումը,
- սահմանադրական արդարադատության գործառութային, կառուցակարգային, կազմակերպական եւ դատավարական նախադրյալների ներդաշնակ ամբողջականության ապահովումը,
- հասարակական պրակտիկայի հետ հաստատուն հետադարձ կապի ապահովումը,
- սահմանադրական խախտված հավասարակշռության վերականգնման ընթացքում հակասահմանադրական նոր իրավիճակներ ստեղծելու բացառումը,

14. սահմանադրական արդարադատությունը պետք է հենվի իրավունքի գերակայության սկզբունքի վրա, եւ այդ սկզբունքը պետք է Սահմանադրության հենքը լինի: Անառարկելիորեն պետք է ընդունվի, որ Սահմանադրությունն իրավական օրենք է, հենվում է իրավունքի վրա եւ պաշտպանում է մարդու անօտարելի բնական իրավունքները, որոնք Սահմանադրության ուժով ճանաչվում են որպես անմիջապես գործող իրավունք: Միաժամանակ, Սահմանադրությունը պետք է

օժտված լինի ներսահմանադրական ինքնապաշտպանության անհրաժեշտ ու բավարար երաշխիքներով՝ հնարավորինս բացառելով ներքին հակասություններն ու «նեղ տեղերը»: Այլ կերպ, **յուրաքանչյուր օրգանիզմ, այդ թվում՝ հասարակական (որի դինամիկ ընդհանրական մոդելն է Սահմանադրությունը), պետք է օժտված լինի կայունության պահպանման ներքին իմունային համակարգով, որն ի գործու կլինի բացահայտել, գնահատել, վերականգնել խախտված ֆունկցիոնալ հավասարակշռությունը,**

15. սահմանադրական արդարադատության համակարգը կարող է արդյունավետ գործել միայն անհրաժեշտ ու բավարար նախադրյալների առկայության պայմաններում: Դրանցից հատկապես կարելի է բնութագրել հետևյալները.

- դատական սահմանադրական վերահսկողության գործառնություն, կառուցակարգային, նյութական եւ սոցիալական անկախությունը,
- սահմանադրորեն իշխանությունների հստակ բաժանումն ու հավասարակշռումը եւ գործակցական նախադրյալների ապահովումը,
- սահմանադրական հիմնական սկզբունքների եւ կոնկրետ նորմերի ներդաշնակության ապահովումը,
- դատական սահմանադրական վերահսկողության օբյեկտների ամբողջական ու հիմնավոր ընտրությունը,
- սահմանադրական արդարադատության սուբյեկտների օպտիմալ շրջանակի որոշումը,
- դատական իշխանության ձեւավորմանը համակարգային մոտեցման դրսեւորումը եւ գործառնություն ամբողջականության երաշխավորումը,
- օրենսդրական հստակ ու ծրագրված քաղաքականության առկայությունը,
- ժողովրդավարական արժեքների ճանաչման անհրաժեշտ մակարդակն ու հասարակության իրավագիտակցության բավարար աստիճանը,
- Սահմանադրական դատարանի որոշումների եւ իրավական դիրքորոշումների իրացման նորմատիվ հստակ կարգավորման ու երաշխավորման առկայությունը եւ այլն,

16. Հայաստանում սահմանադրական արդարադատության արդյունավետ համակարգ ստեղծելու հնարավորություններն զգալի չափով բարելավվեցին 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում, երբ էապես ընդլայնվեց դատարան դիմող սուբյեկտների ցանկը եւ մտցվեց անհատական դիմումների համակարգը: Մինչույն ժամանակ, հիշյալ բարեփոխումների արդյունքում Սահմանադրական դատարանի կարգավիճակը սահմանափակվեց միայն հետեւյալ ձեւակերպմամբ. «Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը» (ՀՀ Սահմանադրության հոդված 93): Մինչդեռ, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի առաքելությունը եւ գործունեության յուրահատուկ ուղղվածությունը, սահմանադրական մակարդակում պետք է հստակ ամրագրվի նաեւ սահմանադրական վերահսկողություն իրականացնող դատական այս մարմնի հիմնական գործառույթը՝ Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովումը, դրա իրականացման համար նախատեսելով անհրաժեշտ ու բավարար սահմանադրաիրավական երաշխիքներ:

Սահմանադրական արդարադատության համակարգային զարգացումներին առավել ամբողջական ու հետեւողական մոտեցումներ դրսևորվեցին 2015թ. դեկտեմբերի 6-ին ընդունված սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Մասնավորապես, դրանք իրենց հստակ արտացոլումը գտան վերափոխված Սահմանադրության 167-170-րդ հոդվածներում: Դրանցում ոչ միայն հստակեցվեց սահմանադրական արդարադատության հիմնական գործառույթը, այլև ամրագրվեցին Սահմանադրության գերակայության երաշխավորման համար լիազորությունների առավել ամբողջական համակարգ, Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ամբողջական ցանկ, դատավարական առանձնահատկությունից բխող հստակ մոտեցումներ:

Մասնավորապես, Սահմանադրության 168-րդ հոդվածով նախատեսվեց, որ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով՝

1) որոշում է օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրա-

պետության նախագահի հրամանագրերի եւ կարգադրությունների, Կառավարության եւ վարչապետի որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը.

2) մինչեւ Սահմանադրության փոփոխությունների նախագծի, ինչպես նաեւ հանրաքվեի դրվող իրավական ակտերի նախագծերի ընդունումը որոշում է դրանց համապատասխանությունը Սահմանադրությանը.

3) մինչեւ միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը.

4) լուծում է սահմանադրական մարմինների միջեւ նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը.

5) լուծում է հանրաքվեի, Ազգային ժողովի եւ Հանրապետության նախագահի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը.

6) որոշում է կայացնում պատգամավորի լիազորությունները դադարեցնելու հարցի վերաբերյալ.

7) եզրակացություն է տալիս Հանրապետության նախագահին պաշտոնանկ անելու հիմքերի առկայության մասին.

8) որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունների կատարման անհնարինության մասին.

9) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

10) լուծում է Սահմանադրական դատարանի դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցը.

11) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

12) օրենքով սահմանված դեպքերում որոշում է կայացնում կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու վերաբերյալ:

Լիազորությունների այս ամբողջությունը որակական նոր մակարդակի է բարձրացնում սահմանադրական արդարադատության գործունակությունը, համակարգային ամբողջականությունը եւ լրջագույն

երաշխիքներ է ապահովում Սահմանադրության գերակայության ապահովման համար: Հատկապես ուշադրության են արժանի հիշյալ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 9-րդ եւ 10-րդ կետերով նախատեսված լիազորությունները, որոնք իրենց բնույթով կամ նոր են կամ էապես ընդլայնում են դատական սահմանադրական վերահսկողության շրջանակները:

Կարելի է առաջընթաց գրանցվեց նաեւ Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկի հստակեցման ու ընդլայնման, Սահմանադրական դատարան դիմելու հարցում հայեցողության սահմանների որոշակիացման, քաղաքացիներին Սահմանադրական դատարան դիմելու ավելի լայն հնարավորությունների ընձեռման ուղղությամբ: Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվեց, որ Սահմանադրական դատարան **կարող են** դիմել.

1) Ազգային ժողովը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 12-րդ կետով սահմանված դեպքերում, Սահմանադրության 168-րդ հոդվածի 7-րդ կետով սահմանված դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, իսկ Սահմանադրության 168-րդ հոդվածի 10-րդ կետով սահմանված դեպքում՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով ընդունված որոշմամբ.

2) պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին, 4-րդ եւ 6-րդ կետերով սահմանված դեպքերում.

3) Ազգային ժողովի խմբակցությունը՝ հանրաքվեի եւ Հանրապետության նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

4) Հանրապետության նախագահը՝ Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մասով, 139-րդ հոդվածի 2-րդ մասով, 150-րդ հոդվածով, ինչպես նաեւ 168-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ կետերով սահմանված դեպքերում.

5) Կառավարությունը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 8-րդ եւ 12-րդ կետերով սահմանված դեպքերում.

6) Բարձրագույն դատական խորհուրդը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում.

7) տեղական ինքնակառավարման մարմինները՝ Սահմանա-

դրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված՝ իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով, ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում.

8) յուրաքանչյուր ուր՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների եւ ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը.

9) գլխավոր դատախազը՝ դատախազության կողմից իրականացվող կոնկրետ վարույթին առնչվող նորմատիվ իրավական ակտերի դրույթների սահմանադրականության հարցերով, ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված դեպքում.

10) Մարդու իրավունքների պաշտպանը՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում թվարկված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով.

11) Ազգային ժողովի ընտրությանը մասնակցած կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները՝ Ազգային ժողովի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

12) Հանրապետության նախագահի թեկնածուները՝ Հանրապետության նախագահի ընտրության արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերով.

13) Սահմանադրական դատարանի առնվազն երեք դատավոր՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 9-րդ կետով սահմանված դեպքում:

Նույն հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսվեց ոչ թե դիմելու իրավունքը, այլ պարտականությունը: Ամրագրվեցին հետևյալ դրույթները.

2. Սահմանադրության 168-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան **դիմում է** Ազգային ժողովը՝ Սահմանադրության փոփոխությանը, վերալետական միջազգային կազմակերպություններին անդամակցությանը կամ տարածքի փոփոխությանը վերաբերող հարցերով: Քաղաքացիական նախաձեռնության կարգով հանրաքվեի դրվող օրենքի նախագծի հարցով Սահմանադրական դատարան է դիմում քաղաքացիական նախաձեռնության լիազոր ներկայացուցիչը:

3. Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան **դիմում է** Կառավարությունը:

4. Դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով **դիմում են** Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ եւ գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

5. Սահմանադրության 168-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարան **դիմում է** Ազգային ժողովի խորհուրդը:

Սահմանադրաիրավական նման լուծումները, դրանց իրացման օրենսդրական հստակ նախադրյալների ստեղծումը բացառիկ կարևոր են Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրության եւ իրավունքի գերակայության երաշխավորման համար:

Որո՞նք են միջազգային պրակտիկայում սահմանադրական արդարադատության գործող համակարգերի հետագա զարգացման հիմնական միտումները եւ դրանք ի՞նչ նոր խնդիրներ ու մոտեցումներ են թելադրում նորանկախ երկրներին:

Այս առումով կցանկանայինք կատարել հետևյալ շեշտադրումները.

1. սահմանադրական արդարադատության հատուկ կամ մասնագիտացված մարմինները դառնում են պետական իշխանության համակարգի կարևոր, հավասարակշռություն, կայունություն, իրավունքի գերակայություն ապահովող, ժողովրդավարության հաս-

տատմանն ու խորացմանը նպաստող բացառիկ կարեւորության ինստիտուտներից մեկը,

2. գործող համակարգերի զարգացումն ընթանում է կազմակերպման ձևերի կատարելագործման, լիազորությունների հստակեցման ու ամբողջականացման, վերահսկողության սկզբունքների, ձևերի ու մեթոդների բարելավման, դիմող սուբյեկտների ցանկի ընդլայնման, վերահսկողության օբյեկտների որոշարկման, նախնական վերահսկողության դերի բարձրացման, դատավարական ընթացակարգերի կատարելագործման եւ մի շարք այլ ուղղություններով: Մեծ կարեւորություն է տրվում նախնական ու հետագա վերահսկողության ճիշտ հաշվեկշռի հաստատմանը, ինչպես նաեւ պարտադիր ու ֆակուլտատիվ /կամընտիր/ վերահսկողության խելամիտ ներդաշնակմանը, եւ այս ուղղությամբ տարբեր երկրներ շարունակում են փնտրել ռացիոնալ լուծումներ,

3. օրենքի ու այլ նորմատիվ ակտերի սահմանադրականության սպառնալից գործում բացառիկ կարեւորություն է ներկայացնում սահմանադրական արդարադատության մարմինների կողմից ընդունվող որոշումների եւ իրավական դիրքորոշումների իրացման խնդիրը: Մեր կարծիքով, այս հարցին պետք է ցուցաբերել տարբերակված մոտեցում՝ ըստ իրավական ակտի տեսակի եւ ըստ վերահսկողության ձևի նորմատիվ կանոնակարգման սահմանելով որոշման իրավական հետեւանքների ու դրա իրացման ամբողջական մեխանիզմ,

4. գնալով ավելի եւ կարեւորվում լիազորությունների հարցով իշխանությունների միջեւ առաջացած վեճերի լուծման եւ այդ ուղղությամբ սահմանադրական դատարանների կողմից իրականացվող կանխարգելիչ քայլերի դերն ու նշանակությունը,

5. սահմանադրական արդարադատության համակարգը կլինի անկատար ու թերի այնքան ժամանակ, քանի դեռ մարդու իրավունքների պաշտպանության վերահսկողությունը չի դարձել այդ համակարգի անքակտելի մասը: Բոլոր այն երկրները, որոնք ձգտում են հասարակական զարգացմանը կայունություն եւ թափ հաղորդել, որտեղ գիտակցվել է քաղաքացիական հասարակության ձեւավորման

անհրաժեշտությունը եւ կարելորվում է հասարակության ստեղծագործական ներուժի խելամիտ օգտագործման խնդիրը, ձգտում են ամրապնդել մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքները՝ նաեւ հարցը սահմանադրական արդարադատության առարկա դարձնելու ճանապարհով:

Նորանկախ երկրների համար կարելոր է նկատի ունենալ, որ ժողովրդավարական հաստատուն ավանդույթներ ունեցող եվրոպական զարգացած երկրներում նույնպես սահմանադրական արդարադատության ինստիտուտները կազմավորվել են վերջին տասնամյակների ընթացքում, հետեւաբար, կարելի է առավել ակտիվ ձեռով հաշվի առնել նրանց փորձը՝ խուսափել սեփական սխալներն անընդհատ շտկելու ճանապարհով առաջ գնալուց:

Սահմանադրական արդարադատության դերը, ինչպես նշեցինք, առանձնապես կարելոր է հասարակության դիմամիկ ու ներդաշնակ զարգացումն ապահովելու համար: Դա նոր հազարամյակի կարելոր բնութագրիչներից է: Հասարակական ներկա գործընթացները վկայում են համակարգային սահմանադրականացման եւ սահմանադրական կայունության բացառիկ կարելոր դերի մասին: Դրա ապահովումը պահանջում է նաեւ հասարակական պրակտիկայի շարունակական ներազդեցության գնահատում եւ կուտակվող բացասական հասարակական էներգիայի շարունակական պարպում՝ պայթյունային լուծումներից խուսափելու համար: Այստեղ էական դեր կարող է կատարել նաեւ իրավական կիրառման հնարավորությունների խելամիտ օգտագործումը³⁷¹: Մասնավորապես ուսումնասիրվող նյութի տեսանկյունից չափազանց կարելոր է հասարակական համակարգի իրավական, սոցիալական եւ ժողովրդավարական բնութագրիչների շարունակական վերահսկումը եւ այդ չափորոշիչների համեմատական վերլուծությունը: Վերջինս հնարավորություն է

371 Այդ մասին մասնավորապես տե՛ս Основы применения кибернетики в правоведении, М., Юридическая литература, 1977г., Правовая кибернетика. Учебное пособие под ред. Н. С. Полевого, М., Юридическая литература, 1987г.

տալիս նաև առաջադրել եւ լուծել հասարակական համակարգի այդ որակների օպտիմալ բարեփոխման խնդիր:

Առավել կարելություն է ստանում նման մոտեցման կիրառումը կայուն զարգացման գործընթացի օպտիմալ կառավարման խնդիր առաջադրելու տեսանկյունից: Չարմանալի չէ, որ նույնիսկ մասնագետների շրջանում, օրինակ, այն կարծիքն է արտահայտվում, որ ՀՀ Սահմանադրության առաջին հոդվածում ամրագրված իրավական, սոցիալական եւ ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքները լոկ վերացական բնույթ ունեն եւ լավագույն դեպքում կարող են դիտվել որպես բաղձալի նպատակ: Իրականում դա հայեցական եւ ոչ ճիշտ մոտեցում է: Աշխարհի ցանկացած պետություն այդ բնութագրիչների վերջնագծին չի հասել եւ չի էլ կարող հասնել, որովհետեւ դա զարգացման անընդհատությունն է խորհրդանշում: Այլ հարց է, թե առաջընթացն այդ ուղղությամբ է, թե՛ ոչ, կամ այդ ուղղությամբ ինչ մակարդակ է ապահովվել: Ահա այս հարցի պատասխանն ստանալու համար ոչ միայն նման ամփոփ գնահատում է անհրաժեշտ, այլև կարելու է, թե առկա հնարավորությունների ինչպիսի՞ գործադրմամբ կարելի է տվյալ սահմանադրական սկզբունքների իրացման առավելագույն արդյունք արձանագրել: Այս տեսանկյունից առավել քան հրատապ է դառնում սահմանադրական մշտադիտարկման ամբողջական համակարգի ներդրման խնդիրը, ինչին կանդիդատառնանք ստորել:

5.3. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Սահմանադրական դատարանի կարելուորագույն առաքելություններից մեկը Սահմանադրության մեկնաբանությունն է, որի միջոցով երաշխավորվում է Հիմնական օրենքի կայունությունն ու զարգացումը: Ընդ որում՝ հիշյալ համատեքստում խոսքը պաշտոնական մեկնաբանության մասին է, քանզի վերջինս, ի տարբերություն ոչ պաշտոնականի, ունի համապարտադիր բնույթ եւ տրվում է դրա համար լիազորված հատուկ մարմնի կողմից ու օրենքով սահմանված ընթացակարգով:

Հատկանշական է, որ քննարկվող ինստիտուտի ներկայացված տարբերակիչ հատկանիշները հիմք ընդունելով՝ հեղինակների մի մասը հանգում է այն եզրակացությանը, որ ՀՀ Սահմանադրական դատարանը (ինչպես նաեւ սահմանադրական արդարադատության համանման մարմինները) օժտված չէ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության իրավասությամբ, քանզի ՀՀ Սահմանադրությունն ուղղակիորեն չի ամրագրում Հիմնական օրենքի պաշտոնական վերացական մեկնաբանման ինստիտուտ: Նույնիսկ 2003 թվականին պետական բարձր պաշտոնական մակարդակով հայտարարվեց, թե Սահմանադրական դատարանն ընդհանրապես իրավասու չէ մեկնաբանել Սահմանադրությունն ու դրա դրույթները, իսկ իրենց «սահմանադրագետներ» մատուցող առանձին իրավաբաններ ձայնակցեցին նման զավեշտին:

Պատմական տվյալ ժամանակին բնորոշ այս փաստը վկայում է, որ սահմանադրական արդարադատության իմաստի ու բովանդակության ընկալման առումով առկա է իրավական պետության չափորոշիչներին ոչ համարժեք մակարդակ եւ նկատելի է շփոթ՝ կոնկրետ ու վերացական վերահսկողության առանձնահատկությունների ըմբռնման հարցում:

Իրավունքի իրացումը, ինչպես ցանկացած նպատակաուղղված գործունեություն, օբյեկտիվորեն պահանջում է վերջինիս բովանդակության ըմբռնում, ինչն իր հերթին ենթադրում է համապատասխան իրավական, այդ թվում՝ նաեւ սահմանադրական նորմերի մեկնա-

բանություն, առանց որի հնարավոր չէ բացահայտել տվյալ նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը, եւ այն համադրելով սահմանադրական իրավակարգավորումների հետ՝ հանգել որեւէ հետետեության, այսինքն՝ իրականացնել դատական սահմանադրական վերահսկողություն: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված այն տեսակետը, որ տեքստը կարող է ընդգրկել բազմաթիվ իմաստային կառուցվածքներ, եւ, հետեւաբար, բազմաթիվ իրավական նորմեր, որոնցից իրավակիրառ մարմինը պետք է ընտրի այն, որն ինքը կիրառելու է: Մինչ այդ ընտրությունը կիրառվող նորմը գոյություն չունի, գոյություն ունի միայն տեքստը: Որոշ առումով հենց մեկնաբանությունն է տեքստը հարստացնում կոնկրետ նորմով³⁷²: Հատկանշական է ԱՄՆ-ում ձեւավորված պրակտիկան: Ամերիկյան եւ միջազգային սահմանադրագետները համակարծիք են այն հարցում, որ այս երկրի Սահմանադրությունը գոյություն չունի առանց Գերագույն դատարանի կողմից դրան տրված ավելի քան 550 հատոր մեկնաբանությունների: Այդ մեկնաբանություններն են ԱՄՆ Սահմանադրությունը դարձրել ապրող իրողություն, իսկ Գերագույն դատարանին ճանաչել որպես սահմանադրական արդարադատություն իրականացնող հիմնական մարմին: Այս երկրում առկա է նաեւ այն հիմնական առանձնահատկությունը, որ առկա չէ Սահմանադրության վերացական պաշտոնական մեկնաբանման ինստիտուտ: Բոլոր մեկնաբանություններն արվում են կոնկրետ գործերի քննության ընթացքում, երբ ի հայտ է գալիս սահմանադրական նորմի մեկնաբանման կամ օրենքի նորմի

372 Տե՛ս Тропег М. Проблема толкования и теория верховенства Конституции // Сравнительное конституционное обозрение, N 4(53)2005, էջ 175: Այդ առումով հիշատակման է արժանի իրավաբանական գրականության մեջ արտահայտված եւ այն տեսակետը, որ սահմանադրությունները կարելի է համարել «անավարտ պայմանագրեր»: Նրանք նախատեսում են կանոնների, իրավունքների եւ սկզբունքների ընդհանուր համակարգը, որոնց կոնկրետ բովանդակությունը, սակայն, կախված է քաղաքական գործիչների համաձայնությունից կամ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինների մեկնաբանությունից (տե՛ս Raadt de J. Contested Constitutions: Constitutional Design, Conflict, and Change in Post-Communist East Central Europe. Enschede: Ipskamp Drukkers, 2009, <http://dare.ubvu.vu.nl/bitstream/1871/18202/5/8594.pdf>, էջ 91):

սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտություն:

Հետևաբար, Սահմանադրությունը մեկնաբանող դատարանն իրականացնում է սահմանադիր իշխանություն, ինչի արդյունքում որոշ հեղինակներ հանգում են այն եզրակացությանը, որ Սահմանադրական դատարանի որոշումներն ու դրանցում ընդգրկված պաշտոնական սահմանադրական դոկտրինան է այն նյութը, որը ձեռավորում է ամբողջ սահմանադրական իրավունքը, պատկերավոր ասած՝ սահմանադրական իրավունքը գոյություն ունի այնքանով, թե որքան սահմանադրական դրույթներ են մեկնաբանվել Սահմանադրական դատարանի կողմից³⁷³:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ հիշյալ համատեքստում կանդիդատուհանք այն հիմնախնդրին, թե որ մարմինն է Հայաստանի Հանրապետությունում լիազորված տալու Սահմանադրության պաշտոնական մեկնաբանություն: Առաջին հերթին նշենք, որ ինչպես տեսության մեջ, այնպես էլ երկրների մեծամասնության արդարադատական պրակտիկայում գերակշռում է այն տեսակետը, որ Սահմանադրությունը մեկնաբանելու իրավասությամբ օժտված է սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, եւ դժվար թե կարելի է հանդիպել հիշյալ մոտեցումը ժխտող տեսակետի: Ընդ որում՝ կարելի է այն, որ վերը շարադրված եզրահանգումը կախված չէ կոնկրետ պետության օրենսդրությամբ, մասնավորապես՝ Սահմանադրությամբ, հիշյալ իրավասության ուղղակի ամրագրման առկայությունից: Ավելին՝ Գերմանիայում, օրինակ, իրավաբանական գրականության մեջ տարածված է այն տեսակետը, որ բացի ակտիվ «պոզիտիվ օրենսդիր» լինելուց, Սահմանադրական դատարանը ժամանակի ընթացքում զարգացրել է մի ամբողջ սահմանադրական համակարգ՝ մեկնաբանելով եւ փոփոխելով Հիմնական օրենքը³⁷⁴:

ՀՀ Սահմանադրության /2005թ. խմբագրությամբ/ 93-րդ հոդվածի

373 St'u Kuris Э. О стабильности конституции, источниках права и мнимом всемогуществе конституционных судов // Сравнительное конституционное обозрение, 2004, N 3(48), էջ 94:

374 St'u Fundamental Rights and Principles. Liber Amicorum Pieter van Dijk, 2013, Cambridge – Antwerp – Portland, էջ 532:

համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածին համապատասխան՝ Սահմանադրական դատարանը սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմինն է, որն ապահովում է Հայաստանի Հանրապետության իրավակարգում Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունը: Ակնհայտ է, որ հիշատակված խնդիրների իրականացումը հնարավոր է սոսկ սահմանադրական նորմերի ընկալման ու կիրառման շրջանակներում միասնականության, այլ կերպ ասած՝ որոշակի միասնական սահմանադրական դոկտրինայի առկայության պայմաններում, որպիսի հանգամանքն ապահովվում է սահմանադրական նորմերի սահմանադրաիրավական բովանդակության առնչությամբ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման միջոցով: Այդ առումով հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ ինչպես վերը նշված խնդիրներն ու նպատակները, այնպես էլ Սահմանադրության մեկնաբանությունն իրենց բնույթով սահմանադրաիրավական հարցեր են, որոնց լուծման բնագավառում մասնագիտացված է սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը: Հետևաբար, Հիմնական օրենքի մեկնաբանությունը ՀՀ Սահմանադրական դատարանի այն կարեւորագույն գործառույթն է, առանց որի վերջինիս առաքելության իրականացումը դժվար է պատկերացնել, ինչն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ սահմանադրական արդարադատության իրականացումն ինքնին անհնարին է առանց Սահմանադրության մեկնաբանության: Ասվածից չի հետեւում, որ դա վերաբերում է Սահմանադրության նորմերի վերացական մեկնաբանմանը: Դա բոլորովին այլ ինստիտուտ է եւ պահանջում է հաշվի առնել դատավարական որոշակի առանձնահատկություններ ու ենթադրում է սահմանադրական մակարդակում այդ հարցով Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների շրջանակի հստակ ամրագրում: Բերված դատողությունները վերաբերում էին կոնկրետ գործերով սահմանադրական արդարադատության իրականացմանը եւ իրավական ակտերի սահմանադրականության գնահատմա-

նը: Ընդ որում, հաշվի առնելով հիշատակված հանգամանքներն ու ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածով ամրագրված այն կարգավորումը /2015թ. փոփոխություններով՝ 167-րդ հոդված/, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը, հետևաբար, որևէ այլ դատական մարմին իրավասու չէ լուծելու սահմանադրաիրավական հարցեր, եւ հենց Սահմանադրական դատարանն է այն հատուկ մարմինը, որը յուրաքանչյուր գործի քննության շրջանակներում լիազորված է մեկնաբանելու ՀՀ Սահմանադրությունը: Բացի դրանից, ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, հանդիսանալով նրա որոշումների կարեւորագույն բաղկացուցիչ մասը, պարտադիր են բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաեւ ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, ուստի դրանք օժտված են համապարտադիր լինելու հատկանիշով:

Հաշվի առնելով վերը շարադրվածը եւ այն հանգամանքը, որ պաշտոնական մեկնաբանության հիմնական տարբերակիչ հատկանիշներն են պարտադիր բնույթն այն սուբյեկտների համար, ում հասցեագրված է, ու այն, որ վերջինս տրվում է դրա համար լիազորված հատուկ մարմնի կողմից, ուստի Սահմանադրական դատարանի կողմից ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունն ունի պաշտոնական բնույթ: Ավելին, վերը շարադրված վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացությանը, որ այդ մեկնաբանության պաշտոնական բնույթը պայմանավորված չէ նրանով, թե արդյոք սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինն ունի Սահմանադրության վերացական մեկնաբանության ինքնուրույն լիազորություն, թե սահմանադրական նորմերի բովանդակությունը բացահայտում ու պարզաբանում է այլ լիազորությունների իրականացման շրջանակներում:

Արդեն նշեցինք, որ մի շարք երկրներում սահմանադրական դատարաններն օժտված են նաեւ Սահմանադրության պաշտոնական վերացական մեկնաբանության ինքնուրույն լիազորությամբ (օրինակ՝ Ալբանիա, Ադրբեջան, Բուլղարիա, Գերմանիա, Ռուսաստան,

Մլովակիա, Ուզբեկստան եւ այլն): Կարծում ենք, որ հիշյալ ինքնուրույն լիազորության առկայությունը կարող է արդյունավետ լինել այն դեպքում, երբ Հիմնական օրենքի մեկնաբանումը պայմանավորված է լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջեւ ծագած վեճերի լուծման հետ: Այսինքն, այն նույնպես տեղափոխվում է կոնկրետ սահմանադրաիրավական վեճի լուծման հարթություն: Մեր կարծիքով, Սահմանադրության բացարձակ վերացական մեկնաբանման ինստիտուտն ունի այն վտանգը, որ սահմանադրական դատարանները կարող են ներքաշվել քաղաքական հարաբերությունների դաշտ, ինչը կվտանգի նրանց իրավական դեռակատարությունը:

Նկատի պետք է ունենալ նաեւ, որ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրության մեկնաբանությունն ու վերջինիս շրջանակներում «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանումը ենթադրում են սահմանադրական նորմի բովանդակության բացահայտումն ու առաջացած սահմանադրական հիմնախնդրի լուծումը գոյություն ունեցող սահմանադրական իրավակարգավորումների բովանդակությունից ու սահմանադրական հիմնարար սկզբունքներից ելնելով: Ընդ որում՝ պարտադիր չէ, որպեսզի Սահմանադրության մեկնաբանությունը լինի տառացի: Այն կարող է լինել նաեւ տարածական կամ սահմանափակ: Սակայն բոլոր դեպքերում այդ մեկնաբանությունը պետք է լինի այնպիսին, որպեսզի վերջինիս շրջանակներում ապահովվի ՀՀ Սահմանադրության կայունությունը, զարգացումը, գերակայությունն ու անմիջական գործողությունը՝ որպես ելակետ ունենալով այն հանգամանքը, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները բարձրագույն արժեքներ են, եւ հիմք ընդունելով իրավունքի գերակայության եւ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի ապահովման անհրաժեշտությունը: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է, որ իրավական ակտերի սահմանադրականության հարցերին առնչվող գործերով որոշում ընդունելիս Սահմանադրական դատարանը պարզում է վիճարկվող ակ-

տի կամ վերջինիս առանձին դրույթների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ մասնավորապես հաշվի առնելով.

1. իրավական ակտի պահանջվող տեսակը.
2. իրավական ակտն ընդունելու եւ գործողության մեջ դնելու՝ Սահմանադրությամբ նախատեսված կարգի պահպանվածությունը.
3. մարդու եւ քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների ու ազատությունների ապահովման եւ պաշտպանության, ազատ իրականացման անհրաժեշտությունը, դրանց սահմանափակումների թույլատրելիությունը.
4. Սահմանադրությամբ նախատեսված՝ իշխանությունների բաժանման եւ հավասարակշռման ապահովվածությունը.
5. պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների եւ դրանց պաշտոնատար անձանց լիազորությունների թույլատրելի սահմանները.
6. Սահմանադրության անմիջական գործողության ապահովման անհրաժեշտությունը:

5.4. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՅՈՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով կատարված փոփոխությունները, ինչպես նշեցինք, չէր նախատեսում սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման հնարավորություն: Միջազգային փորձում մնան վեճերի լուծման լիազորությունն իրականացվում է սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինների կողմից: Առաջին երկրներից էր Գերմանիան, որը 1949թ. Հիմնական օրենքի 93-րդ հոդվածի առաջին մասում նախատեսեց, որ պետական իշխանության մարմինների լիազորությունների հարցով վեճերը լուծում է Գաշնային Սահմանադրական դատարանը՝ մեկնաբանելով Հիմնական օրենքը: Հետագայում շատ երկրներ փորձեցին գնալ այդ ճանապարհով՝ ընդհուպ առանձնացնելով Սահմանադրության վերացական մեկնաբանման եւ լիազորությունների հարցով վեճերի լուծման գործառույթները:

Շատ կարելու է մնան լիազորության դեպքում հստակեցնել Սահմանադրական դատարան դիմելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը: **Գերմանիայում** հիշյալ հարցով Սահմանադրական դատարան կարող են դիմել **Գաշնային նախագահը, Բունդեսպագը, Բունդեսաթը, Գաշնային կառավարությունը, հիշյալ մարմինների այն ստորաբաժանումները, որոնք լիազորված են Հիմնական օրենքով կամ Բունդեսպագի կամ Բունդեսաթի կանոնակարգերով, Հոդերի կառավարությունը, Հողերի բարձրագույն մարմինները եւ այդ մարմինների այն ստորաբաժանումները, որոնք լիազորված են Հոդերի Սահմանադրությամբ կամ Հողերի բարձրագույն մարմինների կանոնակարգով** («Գաշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 63, 68, 71-րդ հոդվածներ):

Նկատի ունենալով, որ Սահմանադրության գերակայության երաշխավորման համար բացառիկ կարելու այս լիազորությունը ՀՀ Սահմանադրական դատարանին վերապահվեց 2015թ. սահմանա-

դրական փոփոխություններով եւ նոր պետք է ձեւավորվի համարժեք դատական պրակտիկա, անհրաժեշտ ենք գտնում ներկայացնել մի շարք երկրների փորձը, որտեղ նախատեսվում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի լուծման հնարավորություն:

Այսպես.

Ռումինիայի Հանրապետության Սահմանադրության³⁷⁵ 146-րդ հոդվածը վերաբերում է Սահմանադրական դատարանի լիազորություններին: Նշված հոդվածի e) կետը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է պետական մարմինների միջև սահմանադրական բնույթի վեճերը, **Հանրապետության Նախագահի, Պառլամենտի երկու պալատների նախագահներից մեկի, Վարչապետի կամ Մագիստրատուրայի գերագույն խորհրդի նախագահի (նշված մարմինը նման է ՀՀ արդարադատության խորհրդին)** դիմումի հիման վրա: Ռումինիայի Սահմանադրական դատարանի վերաբերյալ օրենքի³⁷⁶ 34-րդ հոդվածը նույնությամբ արտացոլում է Սահմանադրության 146-րդ հոդվածի e) կետով սահմանված նորմը:

Սլովենիայի Հանրապետության Սահմանադրության³⁷⁷ 160-րդ հոդվածը վերաբերում է Սահմանադրական դատարանի լիազորություններին: Նշված հոդվածի 7,8 եւ 9-րդ ենթակետերը սահմանում են, որ Սահմանադրական դատարանը լուծում է՝

- պետական կառավարման մարմնի եւ տեղական ինքնակառավարման համայնքների, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման համայնքների միջեւ լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերը,
- դատարանների եւ պետական մարմինների միջեւ լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերը,
- Ազգային ժողովի, Նախագահի եւ Կառավարության միջեւ լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերը:

Սլովենիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին օրենքի³⁷⁸ 61-րդ հոդվածը սահմանում է, որ դատարանների եւ

375 http://www.cdep.ro/pls/dic/site.page?den=act2_2&par1=5#t5c0s0sba142

376 <http://www.ccr.ro/Legea-nr-471992>

377 <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/UNTC/UN-PAN014895.pdf>

378 <http://www.us-rs.si/en/about-the-court/legal-basis/constitutional-court-act/>

պետական մարմինների, ինչպես նաև Ազգային ժողովի, Նախագահի եւ Կառավարության միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի դեպքում, **այն պետական մարմինը որը գտնում է, որ առաջացել է լիազորությունների վերաբերյալ վեճ, կարող է դիմել Սահմանադրական դատարան:** Նշյալ կարգավորումներն ըստ էության (*mutatis mutandis*) կիրառվում են նաև Պետական կառավարման մարմնի եւ տեղական ինքնակառավարման համայնքների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման համայնքների միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի դեպքում:

Վրաստանի Հանրապետության Սահմանադրության³⁷⁹ 89-րդ հոդվածը վերաբերում է Սահմանադրական դատարանի լիազորություններին: Նշված հոդվածի 1-ին մասի b) ենթակետը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է պետական մարմինների միջև առաջացած լիազորությունների վերաբերյալ վեճերը: Վրաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին օրգանական օրենքի³⁸⁰ 34-րդ հոդվածը սահմանում է, որ լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի հարցով Սահմանադրական դատարան կարող են դիմել **Հանրապետության նախագահը, Խորհրդարանի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը, ինչպես նաև Սահմանադրության 89-րդ հոդվածով այլ պետական մարմինները, այսինքն՝ Կառավարությունը, Հանրային պաշտպանը (օմբուդսմեն), Աջարիայի եւ Աբխազիայի բարձրագույն ներկայացուցչական մարմինների ներկայացուցիչները:**

Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության³⁸¹ 130-րդ հոդվածը սահմանում է սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի լիազորությունները: Նույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետը Սահմանադրական դատարանի լիազորությունների թվին է դասում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի լուծումը: Սահմանադրական դատարանի մասին Ադրբեջանի Հանրապետության օրենքի³⁸² 32-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրության

379 http://www.parliament.ge/files/68_1944_951190_CONSTIT_27_12.06.pdf

380 <http://www.legislationline.org/documents/action/popup/id/5491>

381 http://azerbaijan.az/portal/General/Constitution/doc/constitution_e.pdf

382 [http://codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/laws/eng/eur/aze?fn=document-frame.htm\\$f=templates\\$3.0](http://codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/laws/eng/eur/aze?fn=document-frame.htm$f=templates$3.0)

130-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված գործերով (դրանց թվին են դասվում նաև լիազորությունների վերաբերյալ վեճերը) Սահմանադրական դատարան կարող են դիմել **Հանրապետության նախագահը, Միլի Մեջլիսը (Խորհրդարան), Նախարարների կաբինետը, Գերագույն դատարանը, Գատախազությունը, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Ալի Մեջլիսը (Խորհրդարան):**

Բուլղարիայի Հանրապետության Սահմանադրության³⁸³ 149-րդ հոդվածը վերաբերում է Սահմանադրական դատարանի լիազորություններին: Նշված հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է պետական մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև առաջացած լիազորությունների վերաբերյալ վեճերը: Բուլղարիայի Սահմանադրության 150-րդ հոդվածը սահմանում է Սահմանադրական դատարանի դիմող սուբյեկտների ցանկը: Նշված սուբյեկտներն են՝ **Խորհրդարանի պատգամավորների առնվազն մեկ հինգերորդը, Հանրապետության նախագահը, Նախարարների խորհուրդը, Գերագույն վճռաբեկ դատարանը, Գերագույն վարչական դատարանը, Գլխավոր դատախազը, Տեղական ինքնակառավարման մարմինների խորհուրդը (մունիցիպալ խորհուրդ):**

Ալբանիայի Հանրապետության Սահմանադրության 131-րդ հոդվածը վերաբերում է Սահմանադրական դատարանի լիազորություններին: Նշված հոդվածի 4-րդ կետը (ջ) սահմանում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է պետական մարմինների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև առաջացած լիազորությունների վերաբերյալ վեճերը: Սահմանադրական դատարանի կազմավորմանը եւ գործունեությանը վերաբերող օրենքի³⁸⁴ 54-րդ հոդվածը սահմանում է, որ նշյալ հարցով դատարան կարող է դիմել **այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որը վեճի կողմ է հանդիսանում, կամ ուղղակիորեն առնչվում է նշված վեճին:**

383 <http://www.parliament.bg/en/const>

384 [http://codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/laws/eng/eur/alb?fn=document-frame.htm\\$f=templates\\$3.0](http://codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/laws/eng/eur/alb?fn=document-frame.htm$f=templates$3.0)

Չեխիայի Հանրապետության Սահմանադրության³⁸⁵ 87-րդ հոդվածը սահմանում է սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի լիազորությունները: Նույն հոդվածի կ) կետն այդ լիազորությունների թվին է դասում պետական մարմինների և տարածքային ինքնակառավարման մարմինների միջև առաջացած իրավասությունների շրջանակի վերաբերյալ վեճերի լուծումը, բացառությամբ այն դեպքերը, երբ այդ վեճը գտնվում է այլ մարմնի իրավասության ներքո: Չեխիայի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին օրենքի³⁸⁶ 120-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է դիմող սուբյեկտների ցանկը: Դիմող սուբյեկտներն են՝

- **պետական մարմինը՝** պետական կառավարման մարմնի և տեղական ինքնակառավարման ռեզիդնի միջև լիազորությունների վերաբերյալ վեճերի կամ պետական մարմինների միջև լիազորությունների վերաբերյալ վեճերի դեպքում,

- **տեղական ինքնակառավարման ռեզիդնը ներկայացնող մարմինը՝** պետական կառավարման մարմնի և տեղական ինքնակառավարման ռեզիդնի միջև իրավասության վերաբերյալ վեճերի կամ տեղական ինքնակառավարման ռեզիդնների միջև իրավասության վերաբերյալ վեճերի դեպքերում:

Իտալիայի Հանրապետության Սահմանադրության³⁸⁷ 134-րդ հոդվածը սահմանում է սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի լիազորությունները: Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է պետական իշխանության մարմինների, վերջիններիս և ռեզիդնների, ինչպես նաև ռեզիդնների միջև առաջացած լիազորությունների վերաբերյալ վեճերը: Սահմանադրական դատարանի կազմավորմանը և գործունեությանը վերաբերող՝ Իտալիայի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը (Law No. 87 of 11 March 1953)³⁸⁸ ըստ էության սահմանում է, որ **պետական իշխանության ճյուղերի ներկայացուցիչները** կարող են դիմել Սահմանադրական դատարան լիազորությունների

385 <http://www.psp.cz/cgi-bin/eng/docs/laws/1993/1.html>

386 <http://www.usoud.cz/en/constitutional-court-act/>

387 https://www.senato.it/documenti/repository/istituzione/costituzione_inglese.pdf

388 [http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/laws/eng/eur/ita?fn=document-frame.htm\\$f=templates\\$3.0](http://www.codices.coe.int/NXT/gateway.dll/CODICES/laws/eng/eur/ita?fn=document-frame.htm$f=templates$3.0)

վերաբերյալ առաջացած վեճերի վերաբերյալ: Ինչ վերաբերում է պետական իշխանության մարմինների եւ ռեզիդենտների միջեւ, ինչպես նաեւ ռեզիդենտների միջև առաջացած լիազորությունների վերաբերյալ վեճերին, նշյալ օրենքի 39-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրական դատարան կարող է դիմել **այն մարմինը, որը գտնում է, որ առկա է համապատասխան վեճը:**

Խորվաթիայի Հանրապետության Սահմանադրության³⁸⁹ 129-րդ հոդվածը սահմանում է սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի լիազորությունները: Նույն հոդվածի 6-րդ կետը Սահմանադրական դատարանի լիազորությունների թվին է դասում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների մարմինների միջեւ լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի լուծումը: Սահմանադրական դատարանի մասին Խորվաթիայի Հանրապետության օրենքի³⁹⁰ 81-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների մարմինների միջեւ լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի դեպքում նշված մարմիններից ցանկացածը կարող է դիմել Սահմանադրական դատարան:

Նմանատիպ լիազորություն է նախատեսված նաեւ **Ռուսաստանի Գաշնության** Սահմանադրությամբ, որն իր մանրամասն կարգավորումն է ստացել նաեւ «Գաշնային Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ դաշնային օրենքում: Մասնավորապես, հիշյալ իրավակարգավորումների համաձայն՝ լիազորությունների հարցով վեճի լուծման միջնորդությամբ Սահմանադրական դատարան կարող են դիմել **վեճի մասնակից հանդիսացող պետական իշխանության դաշնային մարմինները, ՌԴ պետական իշխանության մարմինները, ՌԴ սուբյեկտների պետական իշխանության մարմինները** (ՌԴ Սահմանադրության 125-րդ հոդված, «Գաշնային Սահմանադրական դատարանի մասին» ՌԴ դաշնային օրենքի 92-րդ հոդված):

Հունգարիայում նույնպես նախատեսված է Սահմանադրական դատարանի կողմից լիազորությունների հարցով վեճերի լուծման հնարավորություն: Հունգարիայի «Սահմանադրական դատարանի

389 <http://www.sabor.hr/Default.aspx?art=2405>

390 http://www.usud.hr/default.aspx?Show=ustavni_zakon_o_ustavnom_sudu&m1=27&m2=49&Lang=en

մասին» օրենքի 36 (1) հոդվածի համաձայն՝ հիշյալ հարցով Սահմանադրական դատարան կարող են դիմել **վեճի մասնակից պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ դատարանների եւ հանրային կառավարման մարմինների:**

Չեռնոգորիայի Հանրապետության Սահմանադրության³⁹¹ 149-րդ հոդվածը սահմանում է սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմնի լիազորությունները: Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է դատարանների եւ այլ պետական մարմինների, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների եւ պետական մարմինների, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման ղեկավար մարմինների լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերը: Սահմանադրական դատարանի մասին Մոնտենեգրոյի Հանրապետության օրենքի 66-րդ հոդվածը սահմանում է, որ լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճով Սահմանադրական դատարան կարող են դիմում ներկայացնել համապատասխան վեճի կողմերը, ինչպես նաեւ այն անձը, ով այդ վեճի հետեւանքով զրկվել է իր իրավունքների իրացման հնարավորությունից:

Լեհաստանի Սահմանադրության³⁹² 189-րդ հոդվածը սահմանում է, որ Սահմանադրական տրիբունալը լուծում է սահմանադրական կենտրոնական մարմինների լիազորությունների վերաբերյալ վեճերը: Սահմանադրության 192-րդ հոդվածը հստակ սահմանում է, թե նշյալ գործերով որ մարմինները կարող են դիմել Սահմանադրական դատարան: Դիմող սուբյեկտներն են՝ Հանրապետության Նախագահը, Սեյմի Մարշալը, Սենատի Մարշալը, Վարչապետը, Գերագույն դատարանի առաջին նախագահը, Վարչական գերագույն դատարանի նախագահը եւ Գերագույն վերահսկիչ պալատի նախագահը:

Տաջիկստանի Հանրապետության Սահմանադրության³⁹³ **89-րդ հոդվածը** սահմանում է սահմանադրական վերահսկողության մաս-

³⁹¹ <http://www.skupstina.me/images/documents/constitution-of-montenegro.pdf>

³⁹² <http://trybunal.gov.pl/en/about-the-tribunal/legal-basis/the-constitution-of-the-republic-of-poland/>

³⁹³ http://www.constcourt.tj/rus/index.php?option=com_content & view = article&id=2:2009-06-24-11-12-07&catid=2:2009-07-13-05-22-34&Itemid=13

նագլխատացված մարմնի լիազորությունները: Նույն հոդվածի 3-րդ պարբերության 2-րդ կետը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը լուծում է պետական իշխանության մարմինների լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերը: Սահմանադրական դատարանի մասին Տաջիկիստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 40-րդ հոդվածը³⁹⁴ նախատեսում է, որ լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի դեպքում Սահմանադրական դատարան կարող են դիմել՝ Կառավարությունը, նախարարությունները, այլ պետական մարմինները, ինքնավար մարզի, մարզերի, քաղաքների եւ այլ տարածքների մեջլիսները եւ ղեկավարները:

Չիլիի Հանրապետության Սահմանադրության 93-րդ հոդվածը սահմանում է սահմանադրական վերահսկողության մասնագլխացված մարմնի լիազորությունները: Նույն հոդվածի 12-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական տրիբունալը լուծում է քաղաքական եւ վարչական մարմինների, ինչպես նաեւ արդարադատության դատարանների միջեւ լիազորությունների վերաբերյալ այն վեճերը, որոնց լուծումը դուրս է Սենատի իրավասությունից: Սահմանադրության 93-րդ հոդվածը սահմանում է նաեւ, որ նշյալ վեճի դեպքում Սահմանադրական տրիբունալ կարող են դիմել վեճի կողմերը կամ դատարանները:

Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետության Սահմանադրության³⁹⁵ 110-րդ հոդվածը սահմանում է սահմանադրական վերահսկողության մասնագլխացված մարմնի լիազորությունները: Նույն հոդվածի 4-րդ եւ 5-րդ պարբերությունները Սահմանադրական դատարանի լիազորությունների թվին են դասում օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների, ինչպես նաեւ հանրապետական մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի լուծումը: Սահմանադրական դատարանի գործունեությանը վերաբերող օրենքի³⁹⁶ 62-րդ հոդվածը սահմանում է, որ օրենսդիր, գործադիր

394 http://www.constcourt.tj/rus/index.php?option=com_content & view = article&id=3:-l-r-&catid=2:2009-07-13-05-22-34&Itemid=14

395 <http://www.ustavensud.mk/domino/WEBSUD.nsf>

396 <http://www.ustavensud.mk/domino/WEBSUD.nsf/Strani/Legal%20Acts%20-%20Rules%20of%20Procedure?OpenDocument>

եւ դատական իշխանությունների, ինչպես նաեւ հանրապետական մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների միջեւ լիազորությունների վերաբերյալ առաջացած վեճերի դեպքում Սահմանադրական դատարան կարող են դիմել վեճի կողմերը, ինչպես նաեւ ցանկացած անձ, ով այդ վեճի հետեւանքով գրկվել է իր իրավունքների իրացման հնարավորությունից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 169-րդ հոդվածով նախատեսվեց, որ սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացած վեճերի հարցով Սահմանադրական դատարան կարող են դիմել ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը, տեղական ինքնակառավարման մարմինները:

Աշխարհի տարբեր երկրների փորձի համառոտ ներկայացումը վկայում է, որ.

նախ՝ սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի լուծումը վաղուց դարձել է Սահմանադրության գերակայության երաշխավորման կարեւոր գրավականներից մեկը,

երկրորդ՝ առանց նման լիազորության հստակ իրականացման սահմանադրաիրավական վեճերը տեղափոխվում են քաղաքական դաշտ եւ հասարակական անկայունության լուրջ սպառնալիք են դառնում,

երրորդ՝ նման լիազորության առկայությունը հասարակական հարաբերությունների սահմանադրականացման մեծ ներուժ է պարունակում,

չորրորդ՝ նման լիազորությունը հնարավոր է կյանքի կոչել ինչպես վերացական սահմանադրական վերահսկողության ընդհանուր կարգով, այնպես էլ Գերմանիայի Հիմնական օրենքով նախատեսված կարգով անմիջականորեն կապել Սահմանադրության մեկնաբանման իրավասության հետ: Մեր կարծիքով, վերջին մտտեցումն առավել հիմնավոր երաշխիքներ է ստեղծում հասարակական հարաբերությունների սահմանադրականացման եւ Սահմանադրության նորմերի հետեւողական իրացումը երաշխավորելու համար:

5.5. ՍԱՀՄԱՆՆԱԳՐԱԿԱՆ ԴԱՏԱԲԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Սահմանադրագիտության զարգացման արդի փուլում Սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սոսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում են վերջիններիս նախադեպային բնույթը, միասնական սահմանադրական դոկտրինայի ձևավորման ու Սահմանադրության եւ օրենսդրության զարգացման կարելուրագույն աղբյուր հանդիսանալու հանգամանքը:

Հարկ է նկատել, որ քննարկվող իրավական հասկացության բնույթի, հատկանիշների ու առանձնահատկությունների վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ չկա միանշանակ տեսակետ³⁹⁷:

Որոշ հեղինակների կարծիքով, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն արտահայտում են դատարանի վերաբերմունքը սահմանադրական նորմի նկատմամբ՝ դրա մեկնաբանման արդյունքում³⁹⁸: Ոմանք նշված հասկացությունը դիտարկում են որպես այդ մարմնի որոշման՝ պարտադիր կատարման ենթակա մաս, որն արտահայտում է դատավորների դիրքորոշումը Սահմանադրության այս կամ այն նորմի կիրառման առնչությամբ³⁹⁹: Առանձին հեղինակներ էլ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները ներկայացնում են որպես հիշյալ մարմնի վերաբերմունքը նշանակալի սահմանադրաիրավական երեւույթների նկատմամբ, որով վերջինս ղեկավարվում է համապատասխան գործերի քննության ընթացքում⁴⁰⁰: Իրավաբանական գրականության մեջ արտահայտվել է եւ այն տեսակետը, որ իրավական դիրքորոշումները Սահմանա-

397 Տե՛ս նաեւ Գ.Գ. Հարությունյան, Ա.Ա. Մանասյան, Սահմանադրական վերահսկողություն, Երևան, 2015, էջեր 179-192:

398 Տե՛ս Витрук Н. Конституционное правосудие в России (1991-2000гг.): Очерки теории и практики. М., 2001, էջեր 104-124:

399 Տե՛ս Бастен И. Правовые позиции Конституционного Суда РФ. Понятие, виды, юридическая сила // Вестник Челябинского университета. Серия 9. Право. 2003. №2, էջ 15:

400 Տե՛ս Кряжков В. А., Лазарев Л. В. Конституционная юстиция в РФ. М., 1998, էջ 246:

դրական դատարանի ընդհանուր բնույթի իրավական եզրահանգումների ամբողջություն են, որոնք հանդես են գալիս որպես դատարանի կողմից իր լիազորությունների շրջանակներում Սահմանադրության մեկնաբանման եւ օրենքների ու այլ նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրական իմաստի վերհանման արդյունք, վերացնում են սահմանադրաիրավական անորոշությունը եւ հանդիսանում են Սահմանադրական դատարանի վերջնական որոշումների իրավական հիմք⁴⁰¹:

«Իրավական դիրքորոշումներ» եզրույթի բովանդակությունը հստակեցված չէ նաեւ ՀՀ օրենսդրությամբ: Միեւնույն ժամանակ, սահմանադրական արդարադատության պրակտիկայի շրջանակներում իրականացվել է քննարկվող իրավական հասկացության առանձնահատկությունների իրավավերլուծությունը, ինչին հարկ է անդրադառնալ հիշյալ համատեքստում: ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ 18 հոկտեմբերի 2006թ. ՄԳՈ-652 որոշմամբ արձանագրել է, որ «Սահմանադրական դատարանին է Սահմանադրությամբ եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով իրավասություն վերապահված Սահմանադրության դրույթների վերաբերյալ վերջնական իրավական դիրքորոշում ներկայացնել՝ նորմատիվ ակտերի սահմանադրականությունը գնահատելիս: **Այդ իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանությունն է**»⁴⁰² (ընդգծումը մերն է): Այնհայտ է, որ ներկայացված որոշմամբ սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինն իրավական դիրքորոշումների բովանդակությունը սահմանափակել է սահմանադրական նորմի պաշտոնական մեկնաբանության շրջանակներով, որպիսի եզրահանգումը տեղ է գտել նաեւ Սահմանադրական դատարանի՝ իր որոշումների կատարման վիճակի վերաբերյալ տարեկան հաղորդումներում: Սակայն դրանց շրջանակներում արձանագրվել է նաեւ, որ Սահմանադրական դատարանն իր որոշման մեջ **Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման կամ օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացա-**

401 Տե՛ս Витрук Н., նշված աշխատությունը, էջ 111:

402 Տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2006/sdv-652.htm>:

հայտման միջոցով ձեռակերպում է իր իրավական դիրքորոշումը, որը պարտադիր բնույթ ունի ինչպես իրավակիրառողների, այնպես էլ օրինաստեղծ մարմինների համար⁴⁰³: Հետևաբար, ընդգծելով, որ իրավական դիրքորոշումներն իրենց բնույթով հանդիսանում են **սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն**, Սահմանադրական դատարանը միեւնույն ժամանակ արձանագրել է, որ դրանք ձեռակերպվում են ոչ միայն Սահմանադրության նորմի իրավական բովանդակության բացահայտման, այլ նաև **օրենքի նորմի սահմանադրական բովանդակության բացահայտման միջոցով**:

Անվիճելի է, որ Սահմանադրության պաշտոնական մեկնաբանությունն է ընկած ՀՀ Սահմանադրական դատարանի գործունեության էության հիմքում: Սակայն ակնհայտ է նաև, որ սահմանադրական արդարադատությունը ենթադրում է վիճարկվող իրավական ակտի սահմանադրականության առնչությամբ գնահատականի ձեւավորում, ինչը պահանջում է սահմանադրական ու վիճարկվող իրավական ակտի դրույթների բովանդակությունների համադրում: Իսկ դա, իր հերթին, հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների բովանդակությունը չի կարող սահմանափակվել սոսկ սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանության շրջանակներով:

Քննարկվող հիմնախնդրի վերլուծության տեսանկյունից հետաքրքիր է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՍԳ-Ռ-943 որոշումը, որը բեկումնային նշանակություն ունեցավ «իրավական դիրքորոշումներ» հասկացության բովանդակության, բնույթի ու առանձնահատկությունների իրավավերլուծության, ինչպես նաև դրանց իրավաբանական ուժի, իրավահամակարգում ունեցած դերի եւ նորմաստեղծ նշանակության խնդիրների լիարժեք կարգավորմանն ուղղված լուծումներ ամրագրելու տեսանկյունից: Հիշյալ որոշումը նույնպես քննարկվող հասկացության առանձնահատկություններից մեկը դիտարկեց այն, որ դրանք ՀՀ Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ են, սակայն միեւնույն ժամանակ իրավական դիրքորոշումների բովանդակության առնչու-

403 Վերը նշված հանգամանքն արձանագրվել է ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2006-2010թթ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ բոլոր հաղորդումներում (տե՛ս <http://concourt.am/armenian/report/index.htm>):

թյամբ արձանագրեց, որ «Դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները, որպես կանոն, բովանդակում են տվյալ գործի լուծման հիմքում դրված իրավական այնպիսի չափորոշիչներ, որոնք վերաբերում են.

- ՀՀ Սահմանադրության նորմերի, միջազգային պայմանագրերում ամրագրված պարտավորությունների, օրենքների, ինչպես նաև օրենսդրության այլ ակտերի (ՀՀ Սահմ. 100-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր) սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը, դրանց սահմանադրական արժեքանությունից բխող ընկալմանն ու կիրառմանը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողության երաշխավորմանը, այդ ամենի արդյունքում՝ վիճարկվող նորմի (իրավական ակտի) սահմանադրականությունը գնահատելուն,

- իրավակիրառական (այդ թվում՝ արդարադատական) պրակտիկան գնահատելուն եւ այդ պրակտիկայում ՀՀ Սահմանադրության նորմերը, օրենքները եւ իրավական այլ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան կիրառելու անհրաժեշտությանը,

- սահմանադրաիրավական նշանակություն ունեցող խնդիրների լուծմանն ու փաստերին գնահատական տալուն»:

Ակնհայտ է, որ, ի տարբերություն մինչ այդ ընդունված ու մեր կողմից հիշատակված ակտերի, նշված որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն առավել ամբողջական ներկայացրեց «իրավական դիրքորոշում» հասկացության բովանդակությունը՝ վերջինիս շրջանակներում, բացի սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանությունից, ընդգրկելով նաև հիշյալ իրավական չափորոշիչները:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ հարկ է նկատել, որ, մեր կարծիքով, անհնար է սպառնիչ կերպով թվարկել այն բոլոր իրավական չափորոշիչները, որոնք տեղ են գտնում Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներում: Միեւնույն ժամանակ, ակնհայտ է, որ դրանք չեն սահմանափակվում Սահմանադրության դրույթների պաշտոնական մեկնաբանության շրջանակներով: Հետևաբար, Սահմանադրական դատարանի «իրավական դիրքորոշումներ»

հասկացությունը սահմանելիս պետք է խուսափել վերջինիս բովանդակության տարրերի սպառիչ թվարկումից՝ հիշյալ համատեքստում ներկայացնելով քննարկվող հասկացության ընդհանուր բնորոշումը:

Հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը եւ այն, որ մտավոր գործունեության մեջ «դիրքորոշումը» հանդես է գալիս որպես որեւէ հարցի կամ որեւէ մեկի նկատմամբ վերաբերմունքի կապակցությամբ դատողությունների համակարգ⁴⁰⁴, կարծում ենք, որ Սահմանադրական դատարանի «իրավական դիրքորոշումներ» հասկացությունը բնորոշում է վերջինիս վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հարցերի, հիմնախնդիրների առնչությամբ, որն իր արտահայտությունն է գտնում նշված մարմնի ակտերում:

Հաջորդ հիմնախնդիրը, որին անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում, այն է, թե Սահմանադրական դատարանի որոշման որ մասում են ընդգրկվում վերջինիս իրավական դիրքորոշումները, ինչի առնչությամբ տեսության մեջ եւ պրակտիկայում չկա միանշանակ տեսակետ: Հեղինակների մի մասը գտնում է, որ իրավական դիրքորոշումներն արտահայտվում են որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում⁴⁰⁵: Մյուսների կարծիքով, իրավական դիրքորոշումն օրենքի՝ Սահմանադրությանը չհամապատասխանելու վերաբերյալ եզրահանգումը չէ, որն ամրագրվում է եզրափակիչ մասում, այլ պատճառաբանական մասում սահմանադրական նորմի մեկնաբանությունը՝ հիշյալ եզրահանգման

404 St'u Grineva A. Понятие и виды судебных правовых позиций: Вопросы теории (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). М., 2008, <http://law.edu.ru/book/book.asp?bookID=1294170>:

405 St'u, օրինակ, Хабриева Т. Я., Волкова Н. С. Особенности казуального толкования Конституции Российской Федерации // Теоретические проблемы Российского конституционализма. М., 2000, էջ 42-43, Кампо В. Правовые позиции Конституционного суда Украины как необходимый элемент обеспечения судебно-правовой реформы // Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии, 1(47)2010, էջ 27:

նը նախորդող տրամաբանական գործողություն⁴⁰⁶։ Կարծում ենք, որ «իրավական դիրքորոշում» հասկացության առնչությամբ մեր կողմից ներկայացված բնորոշումը հիմք է տալիս եզրակացնելու, որ վերջիններս կարող են ընդգրկված լինել Սահմանադրական դատարանի որոշման ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում։ Այդ հանգամանքը համահունչ է սահմանադրագիտության զարգացման ժամանակակից միտումներին, որոնց պայմաններում Սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սուսկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինայի ձեւավորման ու Սահմանադրության զարգացման կարելուրագույն աղբյուր հանդիսանալու հանգամանքը։ Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական նորմի մեկնաբանության ու իրավական ակտերի դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման առաքելությունը պարզապես ակտի սահմանադրականության կամ հակասահմանադրականության առնչությամբ եզրահանգում ձեւավորելու հանգամանքը չէ։ Դրանք ինքնին հանդիսանում են Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարելուրագույն միջոց եւ այդ առումով պակաս կարելուր չեն վերը նշված եզրահանգումներից, իսկ իրավական հետեւանքների տեսանկյունից համարժեք են վերջիններիս։ Ավելին, սահմանադրական արդարադատության ժամանակակից պրակտիկան վկայում է, որ Սահմանադրական դատարանի որոշումների եզրափակիչ մասում հաճախ արձանագրվում է ոչ միայն իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու հանգամանքը, այլև ամրագրվում են դատարանի այլ եզրահանգումներ։ Ակնհայտ է, որ դրանք ինքնին ներկայացնում են հիշյալ մարմ-

406 Այդ մասին տե՛ս Лазарев Л. В. Правовые позиции Конституционного суда России. М. 2003, էջ 72, Чернышев И. Правовые позиции Конституционного Суда России и Европейского суда по правам человека: генезис и взаимовлияние (Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук). СПб., 2010, http://elibrary.finec.ru/materials_files/349371422.pdf։

նի վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդիրների առնչությամբ՝ այդպիսով հանդես գալով որպես իրավական դիրքորոշումներ⁴⁰⁷: Քննարկվող հանգամանքն առավել ընդգծվում է ՀՀ Սահմանադրական դատարանի այն որոշումների պայմաններում, որոնց շրջանակներում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը, վիճարկվող ակտը ճանաչելով Սահմանադրությանը հակասող, հետաձգում է այդ ակտի իրավաբանական ուժը կորցնելը⁴⁰⁸: Տվյալ պարագայում դատարանն արտահայտում է իր վերաբերմունքը կոնկրետ սահմանադրաիրավական հիմնախնդրի առնչությամբ, ընդ որում՝ այդ հանգամանքն իր արտահայտությունն է գտնում որոշման տակ եզրափակիչ մասում: Քննարկվող հիմնախնդրի տեսանկյունից հատկանշական է եւ այն, որ 26 հոկտեմբերի 2011թ.

407 Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 հուլիսի 2011թ. ՍԴՈ-984 որոշումը, որի եզրափակիչ մասում արձանագրվեց ոչ միայն համապատասխան դրույթների սահմանադրականության վերաբերյալ եզրահանգումը, այլև՝ ամրագրվեց այն սահմանադրաիրավական բովանդակությունը, որի շրջանակներում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը, նշվեց իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 244.33-րդ հոդվածի 1-ին մասին տրված այն բովանդակությունը, որի մասով է այդ դրույթը ճանաչվում ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ, 13րդ, 18-րդ, 19-րդ, 93-րդ հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր, ինչպես նաեւ մատնանշվեց, որ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 1-ին մասը եւ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.38-րդ հոդվածը չեն կարող մեկնաբանվել ու կիրառվել այլ կերպ, որը կհակասի դրանց՝ հիշյալ որոշման մեջ արտահայտված սահմանադրաիրավական բովանդակությանը (տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-984.pdf>):

408 Այդ առումով կարելի է հիշատակել, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի՝ 15 հուլիսի 2011թ. ՍԴՈ-984 որոշումը, որի եզրափակիչ մասում արձանագրվեց. «Հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետում ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչված նորմի՝ որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչումն անխուսափելիորեն կառաջացնի անբարենպաստ հետևանքներ անձանց իրավունքների պաշտպանության հարցի լուծման ու անհրաժեշտ իրավական անվտանգության երաշխավորման առումով, ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիմքերով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.33-րդ հոդվածի 1-ին մասի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2011թ. նոյեմբերի 1-ը» (տե՛ս <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-984.pdf>):

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասը լրացվեց 9.2-րդ կետով, համաձայն որի՝ հիշյալ օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասի 1.1-ին կետով սահմանված որոշումն ընդունելու դեպքում որոշման եզրափակիչ մասում պետք է ներկայացվի վիճարկվող ակտի կամ դրա վիճարկվող դրույթի համառոտ **սահմանադրաիրավական բովանդակությունը**:

Հիշյալ համատեքստում ուշադրության է արժանի եւ այն հանգամանքը, որ թեև ՀՀ Սահմանադրական դատարանի՝ ներկայացված որոշումների ու տարեկան հաղորդումների ձեւակերպումները⁴⁰⁹ կարող են տպավորություն ստեղծել, որ սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինը որպես իրավական դիրքորոշումներ է դիտարկում սոսկ որոշման պատճառաբանական մասում շարադրված եզրահանգումները, սակայն իրականում հիշյալ ձեւակերպումների նպատակն է ոչ թե ընդգծել այն հանգամանքը, որ իրավական դիրքորոշումներն ընդգրկվում են որոշման միայն պատճառաբանական մասում, այլ վերացնել այն արատավոր պրակտիկան, երբ կատարվում են Սահմանադրական դատարանի որոշումների միայն եզրափակիչ մասում ամրագրված եզրահանգումները՝ պատշաճ ուշադրություն չցուցաբերելով պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումներին: Հիշյալ տեսակետը հիմնավորվում է նաև նրանով, որ 2011թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդմամբ ՀՀ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով քննարկվող հիմնախնդրին, արձանագրեց, որ անհրաժեշտ է, որպեսզի պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն՝ հատկապես հաշվի առնելով դա-

409 Օրինակ՝ 2006թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդմամբ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրեց, որ «... պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ, հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ մասը, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները», իսկ 2008թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդմամբ նշվեց, որ «Պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք դեռևս բավարար չափով հաշվի չեն առնում սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները...» (տես <http://concourt.am/armenian/report/index.htm>):

տարանի **իրավական դիրքորոշումները, որոնք արտահայտված են Սահմանադրական դատարանի որոշումների ոչ միայն եզրափակիչ, այլ նաև պատճառաբանական մասերում**⁴¹⁰:

Հիշյալ համատեքստում առաջանում է եւս մի կարեւոր հանգամանքի, այն է՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների պարտադիրությանն առնչվող հիմնախնդիրների վերլուծության անհրաժեշտություն: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Չնայած այն հանգամանքին, որ օրենսդրական հիշյալ դրույթն ինքնին ենթադրում է, որ այն վերաբերում է Սահմանադրական դատարանի ամբողջ որոշմանը, հետեւաբար, ինչպես պատճառաբանական, այնպես էլ եզրափակիչ մասերում արտահայտված իրավական դիրքորոշումներին, սակայն քննարկվող բնագավառին առնչվող հիմնական խնդիրն է տեսության մեջ եւ պրակտիկայում այն մտայնության ու արատավոր պրակտիկայի հաղթահարումը, երբ պարտադիր է դիտարկվում Սահմանադրական դատարանի որոշման սույլ եզրափակիչ մասը, եւ որոշումների կատարումը չի երաշխավորվում դրանց ամբողջության մեջ՝ հաշվի առնելով նաև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները: Այդ է պատճառը, որ ՀՀ Սահմանադրական դատարանը որոշումների կատարման վիճակի վերաբերյալ իր բոլոր հաղորդումներում անդրադարձել է հիշյալ հիմնախնդրին՝ նշելով, որ Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարումը երաշխավորելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն ապահովել, որպեսզի **պետական մարմինները եւ պաշտոնատար անձինք Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը երաշխավորեն դրանց ամբողջության մեջ, հաշվի առնելով ոչ միայն որոշման եզրափակիչ մասը, այլև պատճառաբանական մասում շարադրված իրավական դիրքորոշումները, որոնք սահմանադրական իրավունքի**

410 Տե՛ս Գաղղորում ԶԶ սահմանադրական դատարանի 2011թ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2012, էջ 46:

աղբյուր են եւ իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն⁴¹¹:

Արդեն նշվեց, որ սահմանադրագիտության զարգացման ժամանակակից փուլում Սահմանադրական դատարանի որոշումներն այլևս չեն ընկալվում որպես սուկ իրավական ակտերի սահմանադրականությունը կամ հակասահմանադրականությունն արձանագրող փաստաթուղթ, այլ առավել շեշտադրվում է վերջիններիս՝ միասնական սահմանադրական դոկտրինայի ձեւավորման ու Սահմանադրության զարգացման կարեւորագույն աղբյուր հանդիսանալու հանգամանքը: Հետեւաբար, հիշյալ առաքելության իրականացումը պահանջում է պատշաճ ուշադրություն ոչ միայն իրավական ակտի սահմանադրականության հարցի վերաբերյալ եզրահանգման, այլ նաեւ Սահմանադրական դատարանի մյուս իրավական դիրքորոշումների նկատմամբ: Վերջիններս հանդիսանում են Սահմանադրության կայունությունն ու զարգացումն ապահովելու կարեւորագույն միջոց եւ այդ առումով պակաս կարեւոր չեն վերը նշված եզրահանգումներից, իսկ իրավական հետեւանքների տեսանկյունից համարժեք են դրանց:

Քննարկվող համատեքստում կարելի է հիշատակել նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 25 փետրվարի 2011թ. ՄԳՈ-943 որոշումը, որով արձանագրվեց, որ դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները կոչված են իրավակիրառական պրակտիկայում ապահովելու ՀՀ Սահմանադրության առավել ամբողջական եւ միակերպ ընկալումն ու սահմանադրական օրինականությունը, իրավակիրառական պրակտիկան նպատակամղելու նորմատիվ ակտերն իրենց սահմանադրաիրավական բովանդակությանը համապատասխան ընկալելու եւ կիրառելու ուղղությամբ: Միեւնույն ժամանակ ընդգծվեց, որ վիճարկվող ակտը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելիս Սահմանադրական դատարանը հաճախ մեկնաբանելով վիճարկվող իրավանորմները՝ տալիս է դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը՝ որոշման եզրափակիչ մասում ճանաչելով այդ նորմերի համապատասխանությունը Սահմանադրությանը կամ համապատասխանությունը

⁴¹¹ Տե՛ս ԳԳ սահմանադրական դատարանի՝ 2006-2014 թթ. ընդունած որոշումների կատարման վիճակի վերաբերյալ հաղորդումները (տե՛ս <http://concourt.am/armenian/report/index.htm>):

Սահմանադրությանը՝ իրավական որոշակի դիրքորոշումների շրջանակում, կամ մասամբ՝ որոշակի իրավակարգավորման շրջանակում, դրանցով իսկ մատնանշելով.

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներում պետք է ընկալվի եւ կիրառվի տվյալ նորմը,

- իրավական այն սահմանները, որոնց շրջանակներից դուրս կիրառվող կամ մեկնաբանվող տվյալ նորմը կհանգեցնի հակասահմանադրական հետեւանքների,

- սահմանադրաիրավական այն չափորոշիչները, որոնց հիման վրա հանրային իշխանության իրավասու մարմինը պարտավոր է ապահովել տվյալ նորմի լիարժեք կիրառման լրացուցիչ իրավակարգավորումներ:

Հետեւաբար, Սահմանադրական դատարանի որոշումն անհնար է լիարժեք կատարել առանց վերը նշված իրավական դիրքորոշումները հաշվի առնելու, ինչն իր հերթին ենթադրում է, որ պարտադիր կատարման են ենթակա Սահմանադրական դատարանի որոշման ոչ միայն եզրափակիչ, այլ նաեւ պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումները⁴¹²:

Ի կատարումն ՀՀ Սահմանադրական դատարանի ՍԳՌ-943 որոշման՝ 26 հոկտեմբերի 2011թ. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 8-րդ մասում կատարվեց լրացում, որը նախատեսեց, որ Սահմանադրական դատարանը կարող է ընդունել ոչ միայն վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու եւ վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչելու մասին որոշումներ, այլ նաեւ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը՝ **սահմանադրական դատարանի որոշմամբ բացահայտված սահմանադրաիրավական**

412 Ներկայացված վերլուծության համատեքստում բացառիկ կարեւորություն է ձեռք բերում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 2.1-րդ մասում ամրագրված այն կարգավորումը, համաձայն որի՝ սահմանադրական դատարանի որոշումները եւ եզրակացությունները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին: Կարծում ենք, որ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների իրացման պատշաճ համակարգի ձեւավորման համար հիշյալ դրույթը պետք է արժանանա անհրաժեշտ ուշադրության:

բովանդակությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում: Ավելին, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասը սահմանեց, որ հիշյալ հոդվածում նշված գործերով՝ դիմողի նկատմամբ կիրառված օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող է և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ **սահմանադրական դատարանը, որոշման եզրափակիչ մասում բացահայտելով օրենքի դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը, այն ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ գտել է, որ այդ դրույթը նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ,** դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով:

Օրենքի՝ քննարկվող հիմնախնդրին առնչվող կարգավորումների համակարգային վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ դրանք նպատակաուղղված են Սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման լիարժեք համակարգի ձևավորմանը և վկայում են վերջիններիս՝ պարտադիր լինելու հանգամանքի մասին⁴¹³:

Նշենք, որ վիճարկվող նորմը Սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու պրակտիկան տարածված է մի շարք այլ պետությունների, այդ թվում, օրինակ, Գերմանիայի, Լիտվայի, ՌԴ-ի, Սլովենիայի, Իսպանիայի, Հունգարիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի Սահմանադրական դատարանների գործունեության շրջանակներում: Չնայած դրանցից

⁴¹³ Պետությունների մեծամասնությունում նույնպես, ինչպես վկայում են աշխատանքի շրջանակներում ներկայացված օրինակները, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներն ունեն պարտադիր բնույթ: Ավելին, տարածում է գտնում այն պրակտիկան, երբ այդ հանգամանքին տրվում է օրենսդրական կարգավորում (տե՛ս, օրինակ, «ՌԴ Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքի 79-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» Լատվիայի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի կազմավորման, դատավորների կարգավիճակի և սահմանադրական դատավարության մասին» Սլովակիայի Հանրապետության օրենքի 41a հոդվածը, Լիտվայի Հանրապետության Սեյմի կանոնակարգի 182² հոդվածը):

յութաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, միաժամանակ հիշյալ բոլոր դատարանների համար ընդհանուր է այն, որ որոշման մեջ ներկայացված մեկնաբանությունը պարտադիր է դառնում բոլոր այլ պետական մարմինների համար: Այդ առումով ուշադրության է արժանի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) հիմնախնդրին առնչվող դիրքորոշումը, համաձայն որի՝ «Հստակ օրենսդրական, իսկ լավագույն դեպքում սահմանադրական կարգավորումը, որը կպարտավորեցնի այլ պետական մարմիններին, այդ թվում՝ դատարաններին, հետեւելու Սահմանադրական դատարանի կողմից տրված սահմանադրական մեկնաբանությանը, հստակություն կմտցնի սահմանադրական եւ ընդհանուր դատարանների հարաբերություններում եւ կարող է հիմք հանդիսանալ անհատների համար՝ պահանջելու իրենց իրավունքների դատական պաշտպանություն»⁴¹⁴:

Իրավունքի գերակայության վիճակի հստակ գնահատման նոր հեռանկարներ է բացում Վենետիկի հանձնաժողովի 106-րդ լիագումար նիստում 2016թ. փետրվարի 12-ին ընդունված՝ «Իրավունքի գերակայության հիմնական բնութագրիչների ցանկը» (Rule of law Checklist) ցեկույցը, որն այս հարցում համաեվրոպական չափորոշիչների հստակեցման կարևոր նախադրյալներ է ստեղծում: Այն, ինչպես նշել ենք, առանձնահատուկ նշանակություն կունենա մատչործնականում սահմանադրական մշտադիտարկում իրականացնելու համար:

414 St'u CDL-AD(2010)039rev, Study on Individual Access to Constitutional Justice, Adopted by the Venice Commission at its 85th Plenary Session (Venice, 17-18 December 2010), » 165, <http://www.venice.coe.int/docs/2010/CDL-AD%282010%29039rev-e.pdf>:

5.6. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ

Սահմանադրական արդարադատության միջազգային համագործակցությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի մի շարք պատճառներով.

1. այս համակարգերը, որպես նոր երևույթ, գտնվում են ակտիվ զարգացման փուլում եւ ունեն բազմաթիվ տեսական ու գործնական խնդիրներ, որոնք համատեղ ջանքերով ու տարբեր երկրների փորձի համադրմամբ լուծում պետք է ստանան:

2. Իրավական գլոբալացման ներկա միտումները խնդիր են առաջադրում գտնել Սահմանադրության գերակայության երաշխավորման այնպիսի լուծումներ, որոնք համահունչ կլինեն նաեւ միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին:

3. Հասարակական համակարգերի սահմանադրականացման ներկա ընթացքը եւ համակարգային վերափոխումների գործընթացներն առաջին պլան են մղում հասարակական անվտանգության երաշխավորման ու զարգացմանը կայուն դիմամիզմ հաղորդելու խնդիրների համագործակցաբար լուծման անհրաժեշտությունը:

Սահմանադրական արդարադատության մարմինների ակտիվ համագործակցության առաջին անկախ կառույցը «Եվրոպական երկրների սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության հիմնադրումն էր 1972թ. նախկին Հարավսլավիայի Դուբրովնիկ քաղաքում: Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն այդ կազմակերպության դիտորդ անդամ է դարձել 1997 թվականին, իսկ հիմնական անդամ՝ 2000թ. մայիսին: Այս կազմակերպության հիմնական անդամների թիվը ներկայումս անցնում է 40-ից: Կոնֆերանսի հիմնական նիստերը հրավիրվում են տվյալ ժամանակահատվածում նախագահող երկրում՝ երկու տարին մեկ անգամ:

Սահմանադրական դատարանների միջազգային համագործակցության գործում առանձնահատուկ կարևոր դեր ունի Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), որը հիմնադրվել է

1990 թվականին՝ Արեւելյան Եվրոպայի եւ նախկին ԽՍՀՄ երկրների ժողովրդավարական վերափոխումներին աջակցելու նպատակով: Հանձնաժողովը կազմված է անկախ մասնագետ-փորձագետներից եւ տալիս է իրավական եզրակացություններ սահմանադրությունների, օրենսդրական դաշտի մշակումների ու փոփոխությունների, ժողովրդավարական ինստիտուտների ձեւավորման եւ բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Սահմանադրական դատարանների համար կազմակերպվում են նաեւ միջազգային սեմինարներ, տարբեր հիմնահարցերի համատեղ քննարկումներ: Սկսած 1996 թվականից, Վեներտիկի հանձնաժողովի եւ ՀՀ Սահմանադրական դատարանի նախաձեռնությամբ Երեւանում համատեղ հրավիրվում են ամենամյա միջազգային խորհրդաժողովներ՝ սահմանադրական արդարադատության ամենահրատապ թեմաներով: Վեներտիկի հանձնաժողովը հրատարակում է սահմանադրական դատարանների որոշումների համառոտագրերի միջազգային եռամսյակային ժողովածու եւ կազմում է տեղեկատվական CODICES էլեկտրոնային համակարգը: 1999 թվականից Վեներտիկի հանձնաժողովի անդամ, իսկ 2014թ. բյուրոյի անդամ է ընտրվել ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահը:

Նորանկախ երկրների համար մեծ դեր ունեցավ 1997թ. հոկտեմբերին Երեւանում Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանների նախաձեռնությամբ «Երիտասարդ ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանս» միջազգային կազմակերպության հիմնումը: Ներկայումս այդ կազմակերպության անդամ են ԱՊՀ բոլոր երկրների սահմանադրական վերահսկողության մասնագիտացված մարմինները: Երեւանում է հրատարակվում Կոնֆերանսի տեղեկագիրը՝ «Конституционное правосудие» միջազգային հանդեսը, որն ուղարկվում է աշխարհի 38 երկրներ եւ 8 միջազգային կազմակերպություններ: Կազմավորման օրվանից Կոնֆերանսի աշխատանքների համակարգումը վստահվել է ՀՀ Սահմանադրական դատարանին:

Այս ոլորտում միջազգային ակտիվ համագործակցության ինստիտուտներից է նաեւ «Ֆրանսալեզու երկրների սահմանադրական արդարադատության մարմինների կոնֆերանս» միջազգային կազմակերպությունը, որն ստեղծվել է 1997 թվականին: Այս կազմակերպության անդամ են նաեւ աֆրիկյան շատ երկրների նորաստեղծ սահմանադրական դատարաններ:

1992 թվականին հիմնադրվել է նաև «Հարավամերիկյան սահմանադրական վերահսկողության մարմինների խումբ» կազմակերպությունը, որին անդամակցում է 10 երկիր: 2004 թվականից այն վերածել է «Իբերոամերիկյան սահմանադրական դատարանների կոնֆերանս» միջազգային կազմակերպության, որին անդամակցում են երկու տասնյակից ավելի երկրներ: 2009թ. ապրիլի 15-17-ը Մերիդիայում (Մեքսիկա) տեղի ունեցավ այս կազմակերպության VII կոնֆերանսը՝ նվիրված սահմանադրական նորմերի մեկնաբանման հիմնահարցերին:

Ներկայումս ձեռավորվել են նաև արաբական, ասիական, պորտուգալախոս երկրների սահմանադրական դատարանների միություններ:

Առանձնահատուկ կարևոր դեր է կատարում այս ոլորտում նաև Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցությունը, որի հիմնական անդամ է նաև ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոնը:

2009 թվականը նշանավորվեց նոր իրողությամբ: Հարավաֆրիկյան Հանրապետության Կեյպտաուն քաղաքում հունվարին հրավիրվեց սահմանադրական արդարադատության մարմինների համաշխարհային առաջին խորհրդաժողովը: 93 երկրների սահմանադրական արդարադատության մարմինների մասնակցությունն այդ խորհրդաժողովին վկայեց այս ոլորտում միջազգային համագործակցության որակապես նոր փուլի ձեռավորման մասին: Ներկայումս այս կազմակերպությանն են անդամակցում աշխարհի 95 երկրների սահմանադրական եւ համարժեք դատարաններ: 2011 եւ 2014 թվականներին Բրազիլիայում եւ Հարավային Կորեայում հրավիրվել են համաշխարհային այս կազմակերպության 2-րդ եւ 3-րդ կոնգրեսները: Կոնգրեսների միջեւ ընկած ժամանակահատվածում միջազգային կազմակերպության գործունեությունը ղեկավարում է Բյուրոն, որի նախագահությունը 2014-2015 թվականներին վստահվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահին:

Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի ակտիվ նախաձեռնությամբ ու գործակցությամբ ստեղծված միջազգային այս կառույցը բացառիկ կարևոր դերակատարություն է ստանձնել սահմանադրական արդարադատության ամենահրատապ հիմնախնդիրների քննարկման եւ համարժեք լուծումներ առաջադրելու ուղղությամբ:

ԳԼՈՒԽ 6. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՈՐԱԿ

**6.1.«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ», «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹ», «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»,
«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ»
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԿԱՊԸ
ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Իրավաբանական գրականության մեջ գերակայող կարծիք է, որ «սահմանադրել» /այսինքն՝ հիմնել, հիմնադրել, սահմանել/ բայի բովանդակությունը կապված չէ ոչ քաղաքական իշխանության սահմանափակման հետ՝ հանուն անհատական իրավունքների, եւ ոչ էլ ընդհանուր բարոյական նորմերին հետեւելու հարցում կառավարություններին պարտադրելու հետ⁴¹⁵: «Սահմանադրել» առաջին հերթին

415 Տե՛ս Սթիվեն Հոլմս, *Конституции и конституционализм // Сравнительное конституционное обозрение*, 2012, N3(88), - էջ 61(ԱՄՆ-ում հրապարակվել են ժամանակակից սահմանադրականությանը նվիրված բազմաթիվ արժեքավոր աշխատանքներ, որոնցում սահմանադրականության հիմնահարցն առավելապես քննության է առնվում իշխանության իրական սահմանափակման տեսանկյունից: Տե՛ս. Holmes S. *Constitutions and Constitutionalism // The Oxford Handbook of Comparative Constitutional Law /Ed. by M. Rosenfeld, A. Sajo/*. Oxford University Press, 2012; Michel Rosenfeld, *Comparative Constitutionalism: Cases and Materials*, (2d. Ed., West 2010) (with Baer, Dorsen, and Sajo); *American Constitutionalism: From Theory to Politics*. Book by Stephen M. Griffin. Princeton University Press, 1996; *Constitutional Revolutions: Pragmatism and the Role of Judicial Review in American Constitutionalism*. Book by Robert Justin Lipkin. Duke University Press, 2000; *The Supreme Court and American Constitutionalism*. Edited by Bradford P. Wilson and Ken Masugi. The Ashbrook Series on Constitutional Politics Rowman & Littlefield. 1997 Softcover; *Progressive Constitutionalism*. Book by Robin West. Duke University Press, 1994; *Constitutionalism: The Philosophical Dimension*. Book by Alan S. Rosenbaum. Greenwood Press, 1988; *Liberalism, Constitutionalism and Democracy*. Book by Russell Hardin. Oxford University Press, 1999; *American Constitutionalism Abroad: Selected Essays in Comparative Constitutional History*. Book by George Athan Billias. Greenwood Press, 1990; *Progressive and Conservative Constitutionalism*. Journal article by Robin West, M. Tushnet, R. Epstein, Raoul Berger, Robert Bork. *Michigan Law Review*, Vol. 88, 1990; *American Constitutionalism: From Theory to Politics*. Stephen M. Griffin. One of Choice's Outstanding Academic Books of 1997; *The Paradox of Constitutionalism. Constituent Power and Constitutional Form*. Edited by Martin Loughlin and Neil Walker. Oxford University Press, 2008 եւ այլն.)

նշանակում է «հիմնել», «կարգել»: Իսկ ըստ Մակիլվեյնի՝ Կիկերոնի /Ցիցերոնի/ խոսքերը՝ «սրանք սահմանադրում են» (haec constitutio), կառավարման ձևի առնչությամբ «սահմանադրություն» հասկացության առաջին վկայակոչումն են⁴¹⁶: Որոշակի պատմական էքսկուրսի արդյունքում Ս. Հոլմսը գալիս է հետետության, որ «հնագույն սահմանադրությունների առաջնային գործառույթը եղել է ոչ թե գոյություն ունեցող իշխանության սահմանափակումը, այլ իշխանության ստեղծումն անիշխանությունից»⁴¹⁷:

Ներկայացված մոտեցման ծագումնաբանական տրամաբանությունից ելնելով, ինչպես արդեն նշել ենք, «սահմանադրություն» («constitutio» – սահմանել, կարգել, հիմնել) հասկացությունն ավանդաբար բնորոշվում է որպես պետության «Հիմնական օրենք»՝ օժտված բարձրագույն իրավաբանական ուժով, որի հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են.

- պետական կարգի հիմունքները,
- մարդու եւ քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության երաշխիքները,
- պետական իշխանության համակարգը, դրա գործառույթները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,
- քաղաքական իշխանության իրականացման եւ անհատի քաղաքական, տնտեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները:

Դրա հետ մեկտեղ, միջազգային ֆորումներում, ինչպես նաև գիտական գրականության մեջ հրատապ են մնում այնպիսի հիմնախնդիրների քննարկումները, ինչպիսիք են «Սահմանադրությունների զարգացման արժեքանական ասպեկտները», «Սահմանադրականության քաղաքական հիմունքները», «Լիբերալ սահմանադրականության զարգացման միտումները», «Սահմանադրությունը սահմանադրական մշակույթի դրսևորման ենթատեքստում», «Եվրոպական սահմանադրականության եւ սահմանադրական մշակույթի բնորոշ գծերը», «Վերպետական սահմանադրականության դրսևորման օրինաչափությունները» եւ

⁴¹⁶ Mcilwain Ch.H. Constitutionalism Ancient and Modern. Ithaca, NY: Cornell University Press, 1947, P. 25.

⁴¹⁷ Տե՛ս նշված հոդվածը, էջ 62:

այլն⁴¹⁸: Մենք նույնպես նպատակ ունենք տվյալ հիմնախնդրին անդրադառնալ հատկապես այնպիսի հիմնարար հասկացությունների արժեքանական բնույթի ու փոխկապվածության բացահայտման տեսանկյունից, ինչպիսիք են «սահմանադրություն», «սահմանադրական մշակույթ», «սահմանադրականություն» եւ «սահմանադրական մշտադիտարկում» հասկացությունները, իմաստավորելով դրանք՝ ելնելով սահմանադրական զարգացումների հիմնական միտումներից⁴¹⁹:

Մենք սույն աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել ենք «սահմանադրություն» հասկացության էությանը, ինչպես նաեւ այն պարագային, որ իրավական արժեքանության տեսանկյունից սահմանադրական մշակույթի առաջացումը պայմանավորված է նրանով, թե որքանով են **«հիմնադիր հարաբերությունները» իրավական առումով արժեվորվել, դարձել վարկեցողության համընդունելի կանոններ**, անկախ այն բանից՝ դրանք հանդիսանում են սովորույթներ, թե հանդես են գալիս որպես համապարտադիր վար-

418 Տե՛ս Стивен Холмс, Конституции и конституционализм // Сравнительное конституционное обозрение, 2012, N3(88), - էջեր 56-84; Кутафин О.Е. Российский конституционализм. - М., 2008; Бондарь Н.С. Российский судебный конституционализм: введение в методологию исследования. М.:2012. Танчев Е. Возникающий наднациональный конституционализм и современные системы конституционного контроля // Сравнительное конституционное обозрение, 2007, N4, с. 78-94; Розенфельд М., Шайо А. Распространение либерального конституционализма: изучение развития прав на свободу слова в новых демократиях // Сравнительное конституционное обозрение, 2007, N1. - С. 102-120; Современный конституционализм и государство Израиль // Современный конституционализм, 2006, N2. - С. 50-54; Теория конституционализма и философия государства в ФРГ // Закон и право, 2001, N5. - с. 39-47; The Twilight of Constitutionalism?. Series Editors: Martin Loughlin, John P. McCormick, and Neil Walker. Oxford University Press, 2010; The Constitution in 2020. Edited by Jack M. Balkin, Reva B. Siegel. Oxford University Press, 2009; Constitutional Cultures. Ed. by M. Myrzykowski. Warsaw, ISP, 2000; Constitutional Cultures: The Mentality and Consequences of Judicial Review. Robert F. Nagel. University of California Press, 1993; Collection Science and technique of democracy, N 37; European and US constitutionalism. G. Nolte (Editor). European Commission for Democracy through Law. Concil of Europe Publishing, 2005.

419 Տե՛ս Арутюнян Г.Г. Аксиологическая природа конституционализма в контексте исторической эволюции конституционной культуры. В сборнике «Философия права Пятикнижия» (под ред. А.А. Гусейнова и Е.Б. Рашковско). – М., 2012. – с. 70-82.

վեցողության սահմանված կանոններ⁴²⁰: Շեշտել ենք նաև, որ գրականության մեջ հաճախ Սահմանադրությունն ինքնին համարվում է մշակութային երեսույթ միայն այն դեպքում, երբ այն իրացվում է, հանդիսանում է ապրող իրողություն, ընդունելի է ու ընկալելի, այլ ոչ թե ընդունված ձեռագրերի եւ խելացի մտքերի ժողովածու է⁴²¹:

Պատմահամեմատական համառոտ վերլուծությունը, ինչպես տեսանք, անառարկելիորեն վկայում է, որ հայ սահմանադրականության ակունքներում «սահմանադրություն» հասկացությունն առաջին հերթին ունեցել է համակարգային-արժեքային նշանակություն⁴²²: Իր հերթին, հասարակական հարաբերությունների «սահմանադրականացումը», **համընդհանուր համաձայնությամբ համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումն առաջին հերթին բխում են տվյալ հասարակության սոցիալ-մշակութային արժեքներից, սոցիումի սոցիալ-բարոյական նախասկզբից եւ ձեւավորում են սահմանադրական մշակույթի համարժեք մակարդակ:**

Անկախ ժամանակային չափելիությունից, ինչպես նշել ենք, **յուրաքանչյուր ազգի մշակույթը նրա իմաստավորված գոյությունն է, արժեվորված ներկայությունը ժամանակի մեջ:** Հատկապես այդ իմաստավորված գոյությունն է **գարգացման որոշակի աստիճանում** հանգեցնում անհատի ու իշխանությունների սոցիալական վարքագծի սահմանադրականացմանը: Հաշվի առնելով սահմանադրական իրավակարգավորումների արժեհամակարգային բնույթը՝ պրոֆեսոր Միշել Ռոզենֆելդը եւ Անդրաշ Շայոն բարձրացնում են ազատական սահմանադրականության տարածման ու ամրապնդման վրա վերագրվող ազատական սահմանադրական նորմերի ազդեցության հրատապության հիմնախնդիրը⁴²³: Նման պարագայում առավել հրատապ է դառնում Սահմանադրության եւ հանրային կյանքում

420 Տե՛ս Политико-правовые ценности: история и современность /под ред. В.С. Нерсесянца. - М., 2000. էջեր 5-30:

421 Տե՛ս Book Review – Höberle and the World of the Constitutional State, <http://www.germanlawjournal.com/print.php?id=227>.

422 Տե՛ս G. Harutyunyan - Constitutional culture: the lessons of history and the challenges of time. Yerevan, 2009.

423 Տե՛ս Мишель Розенфельд, Андраш Шайо. Распространение либерального конституционализма: изучение развития прав на свободу слова в новых демократиях// Сравнительное конституционное обозрение. 2007. N1, էջ 102:

դրա ունեցած տարաբնույթ դերի բոլոր դրսետորումների համակարգված ընկալումը, ազգային ու վերագգային մակարդակներում կայուն զարգացում ապահովելու գործում սահմանադրական մշակույթի ու սահմանադրականության ունեցած բացառիկ նշանակությանը համարժեք՝ դրանց երաշխավորման համապատասխան քայլերի իրականացումը, ինչն իր հերթին հանրային կառավարման նոր մշակույթ է պահանջում:

Վերոշարադրյալ վերլուծականի կարևոր ընդհանրացումներից ենք համարում նաև այն, որ սահմանադրական մշակույթը վերացական հասկացություն չէ, այն դրսետրվում է սոցիալական հանրության կենսակերպի բոլոր ոլորտներում, դրսետրվում է դարերով ապրված, դժվարությամբ հաղթահարված, վերստուգված հոգեւոր ու նյութական արժեքների ու գաղափարների ամուր հենքի վրա՝ գրավոր սահմանադրության առկայությունից ու իշխողների կամքից անկախ⁴²⁴: Գրա համար Սահմանադրությունը չի կարող դառնալ ներմուծվող կամ արտահանվող ապրանք: Իսկ ցանկացած վերապատվաստման տարր պետք է համարժեք լինի վերապատվաստվող օրգանիզմին: Մյուս կողմից, ինչպես պրագմատիկ տեսանկյունից ընդգծում է Լեհ Գառլիցկին, յուրաքանչյուր ազգային Սահմանադրության մեջ ներկայացվում է արժեքների որոշակի խմբաքանակ, որոնք պայմանավորում են դրա դրույթների բնույթը: Զանի որ «արժեքների», «սկզբունքների» եւ «նորմերի» միջեւ հստակ սահման գոյություն չունի, բոլոր սահմանադրությունները բովանդակում են այս կամ այն բնույթի չափազանց ընդհանուր դրույթներ, որոնք հիմք կարող են հանդիսանալ Սահմանադրության եւ դրա դրույթների մեկնաբանման համար⁴²⁵:

Սահմանադրականության երաշխավորման ու ժողովրդավարական զարգացումների կայունության ապահովման տեսանկյունից հիմնաքարային նշանակություն ունի նաև այն իրողությունը, որ քաղաքակրթությունների ներկա զարգացումների հոլովություն սահմա-

424 Более подробно см. Harutyunyan G. Constitutional Culture: the Lessons of History and The Challenges of Time. Yerevan, 2009.

425 Лех Гарлицкий. «Конституционные ценности» и Страсбургский суд. Сборник докладов «Конституционные ценности в теории и судебной практике». – М., 2009. – с.221.

նադրական մշակույթի հիմնական բնութագրիչներից առաջին պլան է մղվում այն պահանջը, որ **երկրի «Հիմնական օրենքը» պետք է ներառի քաղաքացիական հասարակության բոլոր հիմնարար արժեքները, երաշխավորի դրանց կայուն եւ հուսալի պաշտպանությունն ու վերարտադրությունը:** Բուն Սահմանադրությունը պետք է ներառի արժեքների այդ համակարգը, դառնա իր զարգացման կոնկրետ պատմական ժամանակահատվածում տվյալ հասարակության իմաստավորված գոյի արդյունքը, **լինի քաղաքացու եւ պետության սոցիալական վարքագծի հիմնարար արժեքների շուրջ հասարակական համաձայնության արդյունք:** Դա իդեալ է, որին պետք է ձգտել: Սակայն, ինչպես նշում է պրոֆեսոր Ստիվեն Հոլմսը՝ «մինչեւ այժմ ոչ մի սահմանադրություն չի հետեւել ժողովրդավարական սահմանադրականության խոստումներին եւ չի համապատասխանեցրել կառավարողների շահերը կառավարվողների շահերին»⁴²⁶: Դրա պատճառները տարբեր են, միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ նման հետեւության համար հայեցակարգային նշանակություն ունի մեթոդաբանական մոտեցումը բուն Սահմանադրությանը՝ որպես **պետության Հիմնական օրենքի** կամ որպես տվյալ **սոցիումի Հիմնական օրենքի:**

Ժամանակակից աշխարհում իրական հանրային կյանքի եւ Սահմանադրության միջեւ դիալեկտիկական կապը դրսևորվում է այդ հասարակությունում սահմանադրականության համապատասխան հատկանիշների ընկալման ու իրացման աստիճանի, համարժեք սահմանադրական մշակույթի առկայության միջոցով: Մեզ թվում է ակնհայտ, որ Սահմանադրության առկայությունը չի որոշում հասարակությունում սահմանադրականության մակարդակն ու էությունը: Չի կարելի չհամաձայնել Պ.Ա. Բարենբոյմի հետ, երբ նա ընդգծում է, որ «պատճառական կապը եւ փոխկապվածությունը իրականացված եւ գրքային ուտոպիստական գաղափարների միջեւ հանդիսանում է ուտոպիզմը հասկանալու կարեւորագույն հարցերից մեկը՝ որպես վերջին երեք հազարամյակներում սահմանադրական եւ հանրային-քաղաքական մտքի կարեւորագույն առաջընթաց»⁴²⁷:

426 Стивен Холмс. Конституции и конституционализм //Сравнительное конституционное обозрение, 2012, N3(88). - с. 59.

427 Баренбойм П.А. 3000 лет доктрины разделения властей. Суд Сьюте-ра. - М., 2003. - с. 75.

Սակայն «սահմանադրականությունը» հասարակական հարաբերությունների սահմանադրական կանոնակարգման անհրաժեշտության գաղափարի ուսույցիական ընկալումը չէ: «Սահմանադրականությունը» ներկայանում է որպես իրական հանրային կյանքում սահմանադրական արժեքների համակարգային ու իմաստավորված առկայություն, ինչի վրա խարսխվում է ողջ իրավական համակարգը: Այդ սկզբունքի նորմատիվ բնութագրիչները ենթադրում են իրավունքի ամբողջ համակարգում եւ հանրային կյանքում իրավունքների ու ազատությունների գիտակցված իրացման համար անհրաժեշտ ու բավարար իրավական երաշխիքների առկայություն: Իրավական պետությունում ամեն մի իրավանորմ պետք է դրսևորվի որպես անձի ու պետության իրավական ու բարոյական վարքագծի սահմանադրորեն փոխհամաձայնեցված համակարգի տարր:

Դրա հետ մեկտեղ, մենք համաձայն ենք պրոֆեսոր Ն.Ս. Բոնդարի այն կարծիքին, որ «...հասարակությունում եւ պետությունում հասարակական գիտակցության մեջ Սահմանադրության, սահմանադրական մշակույթի մակարդակի, սահմանադրականության գաղափարի գործունության տիրապետող գնահատականն ըստ էության որոշվում է ոչ թե պետության մեջ ինքնին իրավական Սահմանադրության /Հիմնական օրենքի/ առկայության կամ բացակայության փաստով, ընդհուպ ոչ էլ դրա «տարիքով», այլ առկա են սահմանադրականության ինչ-որ առավել կարևոր, խորքային-սոցիալ-մշակութային ակունքներ»⁴²⁸: «Միաժամանակ սահմանադրականությունը՝ եթե այն իրական է, այլ ոչ թե ձեռական-կարգախոսային, ոչ միայն հանրային-իրավական, այլ նաև բարոյա-էթիկական հասկացություն է»⁴²⁹:

«Սահմանադրականություն» հասկացության վերաբերյալ տարբեր հեղինակների մոտեցումների համադրմամբ կատարված վերոշարադրյալ վերլուծության մեջ մեր հիմնական ընդհանրացումն այն էր, որ գործ ունենք **որոշակի սահմանադրական մշակույթի դրսևորման հետ, ինչը համարժեք է ավյալ սոցիումի իմաստավորված գոյին, որ այն իրական հանրային կյանքում սահմանադրական ար-**

428 Бондарь Н.С. Судебный конституционализм в России в свете конституционного правосудия. – М.: Норма; ИНФРА. 2011. – с. 24.

429 Бондарь Н.С. Судебный конституционализм: доктрина и практика. – М.: Норма; ИНФРА-М. 2015. – с 19.

Ժեքների համակարգային ու գիտակցված գոյությունն է, ինչի վրա խարսխվում է ողջ իրավական համակարգը, այն ժամանակակից իրավունքի հիմնարար սկզբունք է:

Հասարակական հարաբերությունների սահմանադրականության երաշխավորման ու սահմանադրական հավասարակշռության շարունակական պահպանման հիմնախնդրի տեսանկյունից նույնպես ելակետային է այն իրողության խորությամբ ընկալումը, որ իրավունքի հիմնարար հասկացությունների համակարգն ինքը, սոցիալ-մշակութային էվոլյուցիային զուգահեռ, ձեռք է բերում նոր պատկեր ու բնույթ: Այդ համակարգում **սկզբունքային նշանակություն է ձեռք բերում «սահմանադրականություն» հասկացությունը՝ որպես հանրության սոցիալական վարքագծի համաիրավական սկզբունք:** Այս հասկացությունն անխզելիորեն կապված է հասարակական հարաբերությունների սահմանադրականացման եւ **սահմանադրական մշակույթի որակապես նոր դրսևորումների ու դրանց երաշխավորման նոր մարտահրավերների հետ:**

Այս առումով նույնպես հարկ ենք համարում ընդգծել, որ իրական սահմանադրականությունը, որպես իրավական մատերիայի կերպ, բնորոշ է այնպիսի սոցիալական համակարգերին, որոնք սոցիալ-մշակութային արժեքների համապատասխան համակարգի հենքի վրա հասել են սոցիալական ազատությունների եւ հասարակական համաձայնության ճանաչման ու երաշխավորման որոշակի էվոլյուցիայի: Նորմերի համակարգերի իրավական իրողությունները հանգում են նրան, որ նորմերը, որոնք դրան վերաբերում են, ընդհանրապես եւ ամբողջությամբ համարվում են սոցիալապես գործուն, այսինքն՝ դրանք սոցիալական իրողություն են⁴³⁰: Եվ ինչպես իրավացիորեն նշում է հանրային իրավունքի ու փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր Ռոբերտ Ալեքսին՝ զարգացած համակարգերի նորմերի իրավական իրողությունը հիմնվում է գրված կամ չգրված սահմանադրությունների վրա, ինչը որոշում է, թե ինչ երաշխիքների առկայության պարագայում որոշակի նորմն իրավական համակարգի մաս

⁴³⁰ Stü. Kelsen H. Reine Rechtslehre. 2. Aufl. Wien, 1960.S.219 (русское издание: Чистое учение о праве Ганса Кельзена / Сборник переводов. Вып. 2. М., 1988. - с. 91).

է կազմում եւ դրանով համարվում է իրավաբանորեն իրական⁴³¹:

Միայն Սահմանադրությունը կյանքի կոչելը, սահմանադրամատիվ բնույթի արժեքները որպէս իրական կյանքի կանոն դարձնելը թույլ կտա երաշխավորել իրավունքի գերակայությունը եւ համակարգային կայունությունը: **Գերխնդիրը եղել էւ մնում է իրական հանրային կյանքի ներդաշնակումն իրավունքի գերակայության ապահովման վրա խարսխված սահմանադրական լուծումներին:**

Իրավական պետությունում իրավունքի գոյությունը որպէս մարդկանց հանրային կյանքում ազատության, հավասարության եւ արդարության անհրաժեշտ ձեւ, որպէս դիմամիկ սոցիալական միջավայրում նրանց համակեցության հիմք՝ մարդու կյանքում ձեռք է բերում նոր դեր:

Միանգամայն կյանքի քննություն է բռնել ակադեմիկոս Վ.Ս. Ներսեսյանցի կողմից իրավունքի էության բնորոշումը որպէս ձեւական հավասարություն, ինչը մարդկանց սոցիալական կյանքում մեկնաբանվում եւ դրսեւորվում է որպէս ազատության ու արդարության համընդհանուր ու հավասար իրական չափ⁴³²: Պատմական էվոլյուցիան բերեց իրավընկալման ազատական-իրավական տեսության ձեւավորմանը, ըստ որի՝ իրավունքը մարդկանց ազատության համընդհանուր եւ անհրաժեշտ ձեւն է, իսկ սոցիալական կյանքում ազատությունը հնարավոր է ու իրական միայն որպէս իրավունք, միայն իրավունքի ձեւով⁴³³: Ակադեմիկոս Ս.Ս. Ալեքսեւեն իր հերթին հաստատում է, որ **«...մարդկությունը չունի այլ ճանապարհ եւ այլ եղանակ լուծելու դժվարություններն ու գլոբալ հիմնախնդիրները, որոնք սպառնում են մարդկային ցեղի համար ունենալ ծանրագույն հետեւանքներ, քան մարդկանց կյանքի ամենակենտրոնում դնելու ժամանակակից իրավունքը»**⁴³⁴:

Բնականաբար, իրավական պետության էությունը հանգում է հենց իրավունքի գերակայության ճանաչմանը եւ ազատությունների երաշխավորմանը՝ իրավունքով իշխանությունը սահմանափակելու

431 Роберт Алекси. Понятие и действительность права (ответ юридическому позитивизму). Перевод с немецкого. - М., 2011. - С. 109-110.

432 Нерсесянц В.С. Философия права. -М.: НОРМА, 2008. - С. 3.

433 Նույն տեղում, էջ 30:

434 Алексеев С.С. Восхождение к праву. Поиски и решения. – М.: НОРМА, 2001. – С. 710.

միջոցով: Տվյալ տեսական մոտեցումն իրական բովանդակություն է ստանում, երբ սոցիալական հանրությունը գիտակցված ու հասարակական համաձայնությամբ նպատակադրված է ապրել ու արարել այդ սկզբունքի հիման վրա եւ դրանից բխող արժեհամակարգային չափորոշիչներով: Դրանց ընդհանրությունը հանդիսանում է յուրաքանչյուր կոնկրետ հասարակության սահմանադրական կարգի հիմքը: **Իրավական պետությունում իրավունքի դրսևորումը որպես բովանդակություն եւ որպես երեւոյթ՝ բնորոշվում է հենց սահմանադրականության համապատասխան մակարդակով:** Դրանով է պայմանավորված նաեւ իրավունքի եւ օրենքի դիալեկտիկան՝ որպես տվյալ հասարակության Հիմնական օրենք հանդիսացող Սահմանադրության եւ սահմանադրականության հարաբերակցություն:

Սահմանադրականությունը՝ որպես իրավունքի հիմնաքարային սկզբունք, հասարակության զարգացման որոշակի փուլում **ձեռք է բերում իրավակարգավորման կառուցակարգ ձեւավորող ու համապարփակ բնույթ**, արտահայտում եւ կոնկրետացնում է իրավունքի գերակայության երաշխավորման ու ապահովման, մարդու իրավունքների անմիջական գործողության իրավական բովանդակությունը, հանդես է գալիս որպես իրավասուբյեկտների վարքագծի իրավաչափության չափորոշիչ, հանդիսանում է իրավաստեղծ եւ իրավակիրառ գործունեության համար ելակետ, տվյալ հասարակության պատմական զարգացման արդյունք է:

Սահմանադրականությունը սոցիումի փոխհամաձայնեցված եւ ցիվիլ համակեցության դրսևորումն է՝ հիմնված սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների վրա: Իրական սահմանադրականության մակարդակն ու բնույթը կախված են հասարակության մեջ սահմանադրորեն սահմանված ֆունկցիոնալ հավասարակշռության պահպանման աստիճանից: Հասարակական օրգանիզմը չի կարող դինամիկ զարգանալ, եթե չունի խախտված սահմանադրական հավասարակշռության բացահայտման, զնահատման եւ վերականգնման անհրաժեշտ մեխանիզմներ: Հենց այս գործառույթը՝ հասարակական իմունային համակարգի գործառույթը պետք է իրականացնի համակարգային սահմանադրական մշտադիտարկումը: Նման համակարգի առկայությունը բարձր սահմանադրական մշակույթի եւ հասարակության մեջ իրական սահմանադրականության երաշխավորման դրսևորում է: Դա հաշվի առնելով՝ կարելի է փաս-

տել, որ «սահմանադրական մշտադիտարկում» հասկացությունը ներառում է սահմանադրական հավասարակշռության բոլոր հնարավոր խախտումների համակարգային բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական կարգավորման գործառութային ու կառուցակարգային հիմունքները՝ հասարակության մեջ կայուն սահմանադրականության դրսևորումը երաշխավորելու համար:

Վերոշարադրյալ վերլուծությունն ամբողջականացնելով՝ կարող ենք արձանագրել, որ հիմնական հետետությունները եւ հայեցակարգային կանխադրույթները, որոնք հիմնաքարային նշանակություն ունեն սահմանադրական մշտադիտարկման գործուն համակարգի տեսամեթոդաբանական հիմունքների մշակման եւ գործառութային ու կառուցակարգային համարժեք լուծումների առաջադրման համար, հանգում են հետևյալներին.

1. Յուրաքանչյուր արգի մշակույթը նրա իմաստավորված գոյությունն է, արժեվորված ներկայությունը ժամանակի մեջ: Իսկ սահմանադրական մշակույթը հանդիսանում է որպես պատմականորեն ձևավորված, կայուն, սերունդների եւ ամբողջ մարդկության կենսափորձով հարստացած որոշակի արժեքային համակարգ, որն ընկած է հանրային կեցության հիմքում, նպաստում է բարոյական ու հոգեւոր իմաստավորմամբ վարվեցողության հիմնարար կանոնների սահմանմանն ու իրացմանը դրանց բանական, բարոյական ու հոգեւոր արժեվորման հենքի վրա:

Սահմանադրական մշակույթը համակարգային ձեւով դրսևորվում է քաղաքակրթության որոշակի փուլում, երբ **իմաստավորված պահանջ** է առաջանում հասարակական համաձայնությամբ վարքագծի հիմնական սկզբունքների ու կանոնների սահմանման՝ որպես համապարտադիր իրավական նորմեր: Իրավական առումով այդ պահանջը հանգեցրեց սահմանադրությունների եւ հանրային կյանքի սահմանադրականացման ի հայտ գալուն:

Սահմանադրական մշակույթը նոր որակ է ձեռք բերում այն հասարակական-պետական համակարգերում, որտեղ **Սահմանադրության հետ մեկտեղ գոյություն ունի սահմանադրականություն**, որտեղ Սահմանադրությունը ոչ թե պետական իշխանության ձեռքին գործիք է, այլ **քաղաքացիական հասարակության Հիմնական օրենքն է**, միջոց է տվյալ հասարակության ներդաշնակ ու դինամիկ զարգացումը

երաշխավորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլև սահման դնելով իշխանությանը, այն սահմանափակելով իրավունքով: Նման դեպքում խոսքը վերաբերում է **«Ժողովրդավարական սահմանադրական մշակույթ»** հասկացությանը, ինչը բնորոշ է ժողովրդավարական հասարակական համակարգերին, որոնցում համադրվում են նաև ազգային և համամարդկային մշակութային որակները:

Իրավական պետությունում «սահմանադրական մշակույթ» հասկացությունը կարող է ներկայացվել որպես **պատմականորեն ձևավորված, կայուն, սերունդների ու ողջ մարդկության կենսափորձով հարստացած համոզմունքների, պատկերացումների, իրավընկալման, իրավագիտակցության հանրային ճանաչողության միջուկ դարձած որոշակի արժեքային համակարգ, ինչը հիմք է հանդիսանում սոցիալական հանրության համար սահմանելու և հասարակական համաձայնությամբ երաշխավորելու նրա վարքագծի ժողովրդավարական ու իրավական կանոնները:**

2. Ներկայացված ենթատեքստում **ժամանակակից սահմանադրականությունը հանդիսանում է հասարակական համաձայնությամբ սահմանված ժողովրդավարական ու իրավական հիմնարար կանոնների առկայությունը, որպես օբյեկտիվ ու կենդանի իրողություն դրանց գոյությունը հասարակական կյանքում, յուրաքանչյուր անհատի քաղաքացիական վարքագծում, պետաիշխանական լիազորությունների կատարման ընթացքում:**

«Սահմանադրականությունը»՝ տվյալ սոցիումի իմաստավորված գոյին համարժեք որոշակի սահմանադրական մշակույթի դրսեւորում է, այն իրական հանրային կյանքում սահմանադրական արժեքների համակարգային ու գիտակցված գոյությունն է, ինչի վրա խարսխվում է ողջ իրավական համակարգը:

3. Սահմանադրականության նորմատիվ բնութագրիչները ենթադրում են իրավունքի ամբողջ համակարգում և հանրային կյանքում իրավունքների ու ազատությունների գիտակցված իրացման համար անհրաժեշտ ու բավարար իրավական երաշխիքների առկայություն:

Իրավական պետությունում ամեն մի իրավանորմ պետք է դրսևորվի որպես անձի ու պետության իրավական ու բարոյական վարքագծի սահմանադրորեն փոխհամաձայնեցված համակարգի տարր:

4. Սահմանադրականության հասկացությունը պետք է ընկալել ոչ թե որպես սահմանադրական իրավունքի հիմնական սկզբունքներից մեկը, այլ ամբողջությամբ որպես ժամանակակից իրավունքի հիմնարար սկզբունք: Կարելի է հռոմեական «Որտեղ հասարակություն, այնտեղ էլ իրավունք» հանրաճանաչ բանաձևումը վերաձևակերպել հետևյալ կերպ. «**Որտեղ սահմանադրականություն, այնտեղ էլ իրավական պետություն**»։ Սահմանադրականությունը բնորոշում է սոցիումի փոխհամաձայնեցված վարքագծի էությունը, ժամանակի մեջ նրա իմաստավորված գոյի բնույթը, հասարակական հարաբերությունների եւ դրանց իրավակարգավորման հասունության մակարդակը: Դա, առաջին հերթին, քաղաքակիրթ ինքնակարգավորման իդեալն է, ինչին պետք է ձգտի հասարակությունը:

5. Իրավական պետությունում իրավունքի գոյությունը՝ որպես մարդկանց հանրային կյանքում ազատության, հավասարության եւ արդարության անհրաժեշտ ձև, որպես դիմամիկ սոցիալական միջավայրում նրանց համակեցության հիմք, մարդու կյանքում ձեռք է բերում նոր դեր: Բնականաբար, իրավական պետության էությունը հանգում է հենց իրավունքի գերակայության ճանաչմանը եւ ազատությունների երաշխավորմանը՝ իրավունքով իշխանությունը սահմանափակելու միջոցով: Տվյալ տեսական մոտեցումն իրական բովանդակություն է ստանում, երբ սոցիալական հանրությունը գիտակցված ու հասարակական համաձայնությամբ նպատակադրված է ապրել ու արարել այդ սկզբունքի հիման վրա եւ դրանից բխող արժեհամակարգային չափորոշիչներով: Դրանց ընդհանրությունը հանդիսանում է յուրաքանչյուր կոնկրետ հասարակության սահմանադրական կարգի հիմքը: Իրավական պետությունում իրավունքի դրսևորումը որպես բովանդակություն եւ որպես երեւույթ՝ բնորոշվում է հենց սահմանադրականության համապատասխան մակարդակով: **Դրանով է պայմանավորված նաեւ իրավունքի եւ օրենքի դիալեկտիկան, Սահմանադրության եւ սահմանադրականության հարաբերակցությունը:**

6. Սահմանադրականությունը, ինչպես էլ իրավունքն օբյեկտիվ սոցիալական իրողություն են, դինամիկ էլ կայուն զարգացման անհրաժեշտ ներքին կարողունակություն ունեցող քաղաքակիրթ համակեցության էության դրսևորումը: Սահմանադրականությունը՝ որպես իրավունքի հիմնաքարային սկզբունք, հասարակության զարգացման որոշակի փուլում **ձեռք է բերում իրավակարգավորման կառուցակարգ ձևավորող ու համապարփակ բնույթ**, արտահայտում էլ կոնկրետացնում է իրավունքի գերակայության երաշխավորման ու սպահովման, մարդու իրավունքների անմիջական գործողության իրավական բովանդակությունը, հանդես է գալիս որպես իրավասուրբյեկտների վարքագծի իրավաչափության չափորոշիչ, հանդիսանում է իրավաստեղծ էլ իրավակիրառ գործունեության համար էլակետ, սվյալ հասարակության սոցիալ-մշակութային զարգացման հիմնաքար բնութագրիչն է:

7. Սահմանադրականությունը, որպես իրավական մատերիայի կերպ, բնորոշ էլ այնպիսի սոցիալական համակարգերին, որոնք սոցիալ-մշակութային արժեքների համապատասխան համակարգի հենքի վրա հասել են սոցիալական ազատությունների էլ հասարակական համաձայնության ճանաչման ու երաշխավորման որոշակի էվոլյուցիայի: Սահմանադրականության ցանկացած ձևախեղում հասարակության մեջ սահմանադրական հիմնաքար արժեքների ու սկզբունքների աղճատում է, նահանջ էլ հասարակության սոցիալ-մշակութային արժեքների շուրջ ձեռք բերված համընդհանուր համաձայնությունից:

8. Նոր հազարամյակում սահմանադրականության հիմնական առաքելությունը հանգում էլ հատկապես հասարակական զարգացման կայունության էլ դինամիկ բնույթի սպահովմանը, սոցիալական փոխհարաբերություններում բարոյականության ամրապնդմանը, ներպետական ու միջպետական հարաբերությունների կոնֆլիկտագեներության հաղթահարմանը:

Սահմանադրականության դեֆիցիտի հաղթահարումը հիմնական ճանապարհն էլ թույլ չտալու հասարակական բացասական էներգիայի կուտակումների մինչէլ այնպիսի կրիտիկական զանգվածի ձևավորմանը, որի դեպքում սոցիալական կատակլիզմներն անխուսափելի կլինեն:

9. Ժամանակակից աշխարհում, այսպես կոչված, ռեգրեսիվ իրողություններն առաջին հերթին արդյունք են հասարակական պրակտիկայում սահմանադրական հավասարակշռության շարունակական խաթարումների, ինչը ժամանակին չի բացահայտվում եւ չի վերականգնվում: Ակնհայտ է **սահմանադրականության համակարգային դեֆիցիտի առկայությունը** կամ դրա ձեւախեղված դրսևորումը: Իսկ դա նշանակում է, որ գործնականում չի ապահովվում երկրի Հիմնական օրենքի գերակայությունը: Այն, ինչ այսօր արվում է սահմանադրական դատարանների կողմից, չնայած այդ առաքելության բացառիկ կարեւորությանը, այնուամենայնիվ, **կրում է ֆրագմենտալ, դիսկրետ բնույթ**, չի ապահովում անհրաժեշտ հետետողականություն եւ համակարգային անընդհատություն հասարակության մեջ խախտված սահմանադրական հավասարակշռության բացահայտման, գնահատման ու վերականգնման, նոր հազարամյակում սահմանադրական մշակույթին համարժեք սահմանադրականություն ապահովելու համար:

10. Հասարակական օրգանիզմը չի կարող դիմամիկ զարգանալ, եթե չունի խախտված սահմանադրական հավասարակշռության բացահայտման, գնահատման եւ վերականգնման անհրաժեշտ մեխանիզմներ: **Հենց այդ գործառույթը, հասարակության իմունային համակարգի գործառույթը պետք է իրականացնի սահմանադրական մշտադիտարկումը:** Նման համակարգի առկայությունը բարձրագույն սահմանադրական մշակույթի առկայության դրսևորում է եւ հասարակության մեջ իրական սահմանադրականության ապահովման երաշխիքը: **«Սահմանադրական մշտադիտարկում» հասկացությունը ներառում է սահմանադրական հավասարակշռության բոլոր հնարավոր խախտումների համակարգային բացահայտման, գնահատման եւ վերականգնման իրավական կարգավորման գործառույթային ու կառուցակարգային հիմունքները՝** հասարակության մեջ կայուն սահմանադրականության դրսևորումը երաշխավորելու համար:

6.2. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇՏԱԳԻՏԱՐԿՄԱՆ ՆԵՐԳՐՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Ինչպես իրավացիորեն նշում է պրոֆեսոր Ե. Տանչևը՝ «սահմանադրական նորմերի իրացումն ունի նվազագույնը երկու ասպեկտ: Մի կողմից, խոսքը վերաբերում է սահմանադրական դրույթների իրականացման հնարավորությանը՝ կախված հիմնական օրենքի տեքստում դրանց ունեցած տեղից ու իրավունքի այլ նորմերի բովանդակությունից: Մյուս կողմից՝ մեծ նշանակություն ունի այն հարցը, թե արդյոք սոցիալական իրականությունը թույլ է տալիս կատարել Սահմանադրության բոլոր պահանջները»⁴³⁵: Խնդիրը Սահմանադրության, դրա մշակութաբանական էության ներդաշնակությունն է հանրային կյանքի իրական հարաբերություններին, դրանց իմաստավորման աստիճանին, սահմանադրորեն ապրելու հանրային կարողունակությանը:

Իր հերթին պրոֆեսոր Ա. Ե. Գիկ Հովարդն առանձնացնում է սահմանադրականության հետևյալ հիմնական արժեքները⁴³⁶.

1. ժողովրդի համաձայնությունը, ինչն ապահովվում է ներկայացուցչական ինստիտուտներով, քաղաքական կուսակցությունների ազատ կազմավորմամբ, քվեարկությանն ազատ մուտք ունենալով եւ քաղաքական քննարկումներին ազատ մասնակցությամբ,
2. իշխանությունների բաժանումով իշխանության մարմինների իրավասությունների սահմանափակումը,
3. բաց հասարակությունը,
4. անձի անձեռնմխելիությունը,
5. հավասարությունը եւ անկողմնակալությունը,
6. հաջորդականությունը՝ զուգորդված նոր պայմաններին Սահմանադրության հարմարվելու հետ՝ ինչպես դրա տեքստի փոփոխության, այնպես էլ դատական մեկնաբանման միջոցով:

⁴³⁵ Евгений Танчев. Социальное государство (всеобщего благосостояния) в современном конституционализме // Сравнительное конституционное обозрение. 2007, N4. – С. 63.

⁴³⁶ Дик Ховард А.Е. Конституционализм // Верховенство права: Сборник: пер. с англ. - М.: Прогресс-Универс, 1992. – С. 53-65.

Հաշվի առնելով նշված եւ տարբեր այլ հեղինակների կողմից սահմանադրական արժեքների բացահայտման շեշտադրումները՝ մեր կողմից վերլուծվել ու վերհանվել են հիմնարար սահմանադրական արժեքների ու սկզբունքների ձեւախեղումների հիմնական բնութագրիչները ռեալ սոցիալական իրականության մեջ՝ բուն Սահմանադրության մակարդակում /ինչը ներառում է համակարգային ձեւախեղումները պետական կառավարման համակարգի ընտրության ու շարունակ փոփոխման պարագայում/, ձեւախեղումներն ընդհանուր իրավական համակարգում, իրավակիրառական պրակտիկայում սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների ձեւախեղված ընկալումներն ու իրացումը⁴³⁷:

Մենք հանգել ենք այն հետեւությանը, որ հատկապես հասարակական վերափոխումների պայմաններում սահմանադրականության ձեւախեղումները դառնում են անկայունության եւ սոցիալական կատակլիզմների հիմնական պատճառը: Դրանց հաղթահարումը պահանջում է նպատակաուղղված եւ շարունակական սահմանադրական ախտորոշման հիման վրա գործուն եւ համակարգային սահմանադրական մշտադիտարկման առկայություն: Դա թե՛ պատմության դասն է եւ թե՛ ժամանակի մարտահրավերը, ինչը պահանջում է անհետաձգելի ուշադրություն եւ համարժեք գործողություն: Հանդգնված ենք, որ սոցիալական հանրությունն անկատար ու խոցելի կլինի այնքան ժամանակ, քանի դեռ իմունային համակարգի ամրապնդման անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ չի ստեղծել: Գուցե դարերի ընթացքում դա ձեւավորվի՝ ինչպես կենդանի օրգանիզմների գենետիկան է վկայում: Սակայն դրան կարելի է հասնել նաեւ բանական գործելակերպի արդյունքում՝ դիմամիկ հասարակական հարաբերությունների սահմանադրական հավասարակշռության յուրաքանչյուր խախտման բացահայտման, զնահատման եւ վերականգնման գործուն համակարգի արմատավորման ճանապարհով:

437 St'u Международный альманах “Конституционное правосудие в новом тысячелетии”. – Ереван: “Нжар”, 2005. - С. 137-155; 2008. – С. 27-36; 2009. – С. 40-47; Журнал Конституционное правосудие, КС РФ и ООО Издательство «Юрист». М., “Юрист”, 2010, N3 (15). - С. 34-36; Евразийский юридический журнал, N 7 (26), М., 2010. - С. 5-9; Harutyunyan G.G. Modern Challenges to Systemic Development of Constitutional Control (Armenia) // Constitutional law review, April 2012, N5, - p. 173-179.

Մեր հիմնական հայեցակարգային եզրահանգումներն են.


1. աշխարհում գործող սահմանադրական վերահսկողության եւ հսկողության մոդելները լիարժեք չեն ապահովում հասարակական պրակտիկայում խախտված սահմանադրական հավասարակշռության ժամանակին բացահայտման գնահատման եւ հաղթահարման համակարգային ու անընդհատ բնույթը եւ ոչ լիարժեք են համապատասխանում ժամանակի մարտահրավերներին:
2. Խախտված սահմանադրական հավասարակշռության ժամանակին չվերականգնումը բերում է բացասական հասարակական էներգիայի կուտակումների, ինչը, հավաքելով կրիտիկական զանգված, հանգեցնում է սոցիալական պայթյունի եւ անկայունության:
3. Իշխանության ինստիտուտների մոտ Սահմանադրության գերակայության երաշխավորման հարցում առկա չէ գործառույթների իրականացման համակարգային ու օրգանական փոխկապվածություն:
4. Քանի դեռ պետությունը չի ճանաչել ու չի երաշխավորել մարդու սահմանադրական արդարադատության իրավունքը, անհնարին է իրականում ապահովել իրավունքի գերակայությունը:
5. Սահմանադրական վերահսկողության համակարգվածությունն ու անընդհատությունը հնարավոր է միայն սահմանադրական ախտորոշման եւ մշտադիտարկման շարունակական գործող ու ամբողջական համակարգի ներդրման պարագայում:

Վերջին դրույթը ենթադրում է, որ նախորդ դրույթների առումով պետք է գտնվեն համարժեք իրավական լուծումներ, որպեսզի ներդրվի այդ համակարգը: Այստեղ ելակետային նշանակություն ունի համակարգային ու անընդհատ գործող սահմանադրական մշտադիտարկման կառուցակարգային ու գործառութային ապահովման բովանդակության բացահայտումը:

Մխենատիկ ձեռով նման մշտադիտարկման համակարգը մենք պատկերացնում ենք հետևյալ կերպ⁴³⁸.

438 Арутюнян Г.Г. Конституционализм: уроки, вызовы, гарантии. – Киев: «Логос», 2011. – С. 53.

ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՄՇՏԱԳԻՏԱՐԿՈՒՄ



Բերված սխեմայից բխում է, որ համակարգային սահմանադրական մշտադիտարկում իրականացնելու համար ոչ միայն պետական իշխանության համապատասխան ինստիտուտները համարժեք գործառույթներ պետք է իրականացնեն, այլև դրա հետ մեկտեղ որոշակի կառուցակարգային ու գործառութային դեր պետք է վերապահվի քաղաքացիական հասարակությանը՝ որպես հանրային օրգանիզմի «նյարդային համակարգ»: Առանց վերջինիս՝ իմունային համակարգը կենսունակ լինել չի կարող:

6.3. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԳԻՏԱՐԿՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սահմանադրական մշտադիտարկման **հիմնական խնդիրները**, հատկապես հասարակական վերափոխումների պայմաններում, մասնավորապես, հանդիսանում են.

- սոցիումի քաղաքական վարքագծում սահմանադրականության ղեֆիցիտի բացահայտումը եւ գնահատումը,
- ներսահմանադրական ձեռախեղումների գնահատումը, դրանց պատճառների բացահայտումը եւ այդ ձեռախեղումների հաղթահարման մեխանիզմների մշակումը,
- հասարակության մեջ սահմանադրական հիմնարար արժեքների ձեռախեղված ընկալումների հաղթահարումը, սահմանադրական իրավագիտակցության մակարդակի բարձրացումը,
- իշխանության մարմինների քաղաքական վարքագծի եւ մարդկանց սոցիալական վարքագծի սահմանադրականացման անհրաժեշտ մակարդակի ապահովումը,
- օրենսդրության ոլորտում եւ իրավաստեղծ գործունեության այլ ձեւերում սահմանադրականության ղեֆիցիտի հաղթահարումը,
- սահմանադրական արժեքների ու սկզբունքների ձեռախեղումների բացառումը իրավակիրառական պրակտիկայում,
- պետական կառավարման սահմանադրականության համակարգային ապահովումը,
- իշխանության եւ անհատի սոցիալական վարքագծի գնահատման վերագրային չափորոշիչների բացահայտումը եւ հաշի առնելը:

Ոչ միայն նոր, այլեւ, այսպես կոչված, հին ժողովրդավարության երկրներում սահմանադրական օրինականության համեմատական վերլուծությունը վկայում է, որ առկա չէ որոշակի համակարգվածություն նշված խնդիրների լուծման հարցում: Դրանք ավելի շատ քաղաքական ինտրիգների առարկա են դառնում, քան՝ իրավակարգավորման:

Այդ հիմնախնդիրների վերլուծությունը մեզ հանգեցրել է այն հետեւությանը, որ սահմանադրական մշտադիտարկման լիարժեքության

Եւ համակարգվածության ապահովումը հնարավոր է միայն հետեւյալ հանգամանքները խորությամբ հաշվի առնելու պայմաններում.

1. սոցիալական համակարգի գործելը որպէս ամբողջական օրգանիզմ, որն ունի բազմապլան հիերարխիսի բնույթ, որի հիմքն են հանդիսանում իրավունքի գերակայության երաշխավորումն ու ապահովումը:
2. Հասարակական օրգանիզմի իմունային համակարգի գլխավոր առաքելությունն է՝ սահմանադրական ֆունկցիոնալ հավասարակշռության ու կայունության պահպանումը, քանի որ խախտված հավասարակշռության չվերականգնումը պատճառ է դառնում բացասական հասարակական էներգիայի կուտակումների, ինչը, հավաքելով կրիտիկական զանգված, կարող է հանգեցնել հասարակական կատակլիզմների:
3. Համակարգային սահմանադրական ախտորոշումն ու մշտադիտարկումը՝ որպէս վերահսկող համակարգ, պետք է գործի իրեն բնորոշ անընդհատությամբ եւ հարաբերականորեն անկախ ձեւով՝ հստակ նորմատիվ կարգավորման հենքի վրա:
4. Հանրային ցանկացած պաթոլոգիա պետք է ակտիվացնի եւ գործողության մեջ դնի սահմանադրական ինքնապաշտպանության ողջ համակարգը:

Մենք համոզված ենք, որ սա կենդանի Սահմանադրության գերակայության երաշխավորման նոր մակարդակ է, երբ ամբողջ համակարգը խարսխված է ոչ թե վերացական սահմանադրական նորմերի վրա, այլ հասարակության մեջ դրանց իրական դրսեւորման վրա՝ **ապահովելով սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների իմաստավորված գոյությունն իրական հանրային կյանքում:**

6.4. «ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ»
ԵՎ «ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇՏԱԳԻՏԱՐԿՈՒՄ»:
ՓՈՒՆԿԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷՈՒԹՅԱՆ
ԳՐՄԵՎՈՐՈՒՄԸ

Ինչով են տարբերվում «սահմանադրական վերահսկողություն» եւ «սահմանադրական մշտադիտարկում» հասկացությունները: Կարծում ենք, որ սահմանադրական վերահսկողության համակարգը, որի հիմնական օղակներից է դատական սահմանադրական վերահսկողությունը, միայն համակարգային ու անընդհատ գործողության որոշակի մակարդակում կարող է դիտվել որպէս սահմանադրական մշտադիտարկման ամբողջական համակարգ: Իր էութայնը **վերահսկողությունը ներկայումս իրականացվում է օբյեկտի՝ Սահմանադրության հետ դիսկրետ համադրման եղանակով, իսկ մշտադիտարկումը ենթադրում է հասարակության մեջ սահմանադրականության անընդհատ ու համակարգված քացահայտում:**

Այս համակարգը, իր հերթին, պահանջում է իշխանության ինստիտուտների սահմանադրական վիճակագրությունների էական վերանայում՝ սահմանելով համակարգային ու անընդհատ գործող սահմանադրական մշտադիտարկման գործողության կառուցակարգային ու գործառնության իմունքները:

Առաջարկվող դոկտրինայում, առաջին հերթին, այս համակարգում շեշտադրումը կատարվում է **պետության գլխի դերակատարության վրա:** Նախագահը հանդիսանում է Սահմանադրության գերակայության ապահովման քաղաքական երաշխավորը: Գրա համար անհրաժեշտ է, մասնավորապէս, իրական սահմանադրաիրավական բովանդակություն հաղորդել այնպիսի սահմանադրական դրույթների, ինչպիսիք են. «Նախագահը հետեւում է Սահմանադրության պահպանմանը» (տե՛ս՝ Ֆրանսիա (հոդվ. 5), Լեհաստան (հոդվ. 126, կետ 2), Հայաստան (հոդվ. 49), «Նախագահը հանդիսանում է Սահմանադրության երաշխավորը» (տե՛ս՝ Ռուսաստանի Դաշնություն, հոդվ. 80, մաս 2), «Նախագահն ապահովում է ...ժողովրդավարական ինստիտուտների նորմալ գործողությունը...» (Պորտուգալիա, հոդվ. 120), «...Նախագահն ապահովում է պետական մարմինների նորմալ գործունեությունը» (Սլովակիա, հոդվ. 101, մաս 1) եւ այլն:

Իրավական պետությունում երկրի Նախագահի հիմնական գործառույթը հատկապես հանգում է երկրում սահմանադրականության հետեւողական զարգացումը երաշխավորելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ խնդրի լուծումը պահանջում է նաեւ համակարգված վեր հանել, գնահատել եւ իրավական կառուցակարգերի միջոցով վերականգնել խախտված սահմանադրական հավասարակշռությունը, Նախագահը դառնում է հասարակության իմունային համակարգի սկզբունքային օղակը: Մենք կարծում ենք, որ դրանից ելնելով՝ սահմանադրորեն պետք է նախատեսել Նախագահի լիազորությունը մշտական սահմանադրական ախտորոշում իրականացնելու առումով՝ հաշվի առնելով նաեւ իշխանության այլ ինստիտուտների գործառութային լիազորությունները⁴³⁹: Պետության գլխի՝ ներկայում ընդունված գործառութային, զսպող եւ հակակշռող լիազորությունները, այդ թվում՝ Նախագահ-պառլամենտ հարաբերություններն օրենսդրական քաղաքականության ոլորտում, ինչպես նաեւ որպես սահմանադրական բարեփոխումների նախաձեռնող կամ որպես Սահմանադրական դատարան դիմող սուբյեկտ, բավարար չեն սահմանադրական մշտադիտարկման ամբողջ գործընթացին Նախագահի լիարժեք մասնակցությունն ապահովելու համար: Հատկապես մոր ժողովրդավարության երկրներում ներկայում գործադրվում են սահմանադրական դիագնոստիկայի ոչ ֆորմալ, սովերային մեխանիզմներ, ինչը շատ վտանգավոր է եւ հարիր չէ իրավական պետության սկզբունքներին: **Սահմանադրությունը պետք է պարտավորեցնի Նախագահին ապահովելու մշտական սահմանադրական ախտորոշման իրականացումը՝ հաշվի առնելով սահմանադրական բոլոր սուբյեկտների գործառութային դերը: Գ-ն նաեւ կհանգեցնի նրան, որ պետության Գ-լուխն ակտիվ դերակատարություն կստանձնի նաեւ վերացական դատական սահմանադրական վերահսկողության հարցում:**

Ցանկանում ենք նաեւ ընդգծել իշխանության այլ ինստիտուտների դերը շարունակական սահմանադրական մշտադիտարկման համակարգի գործողության առնչությամբ:

439 Տե՛ս // Конституционное правосудие, 2010, N4. - с. 28-42.

Առաջին հերթին **խորհրդարանը եւ կառավարությունը**, իրենց դասական գործառույթներով հանդերձ, ոչ միայն պետք է իրավաստեղծ գործունեության մեջ մշտապես հաշվի առնեն սահմանադրական ախտորոշման արդյունքները եւ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, այլեւ, ելնելով իրենց լիազորություններից, անհրաժեշտ վերահսկողություն սահմանեն հասարակական հարաբերությունների սահմանադրականացման գործընթացների նկատմամբ: Նրանք սահմանադրական վերահսկողության պասիվ ինստիտուտներից պետք է դառնան սահմանադրական մշտադիտարկման առավել ակտիվ ինստիտուտներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդու իրավունքներն ու հիմնական ազատություններն են որոշում օրենքների եւ այլ իրավական ակտերի իմաստը, բովանդակությունն ու կիրառումը, օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեության բնույթը:

Այս բոլորը պահանջում են սահմանադրական դրույթների մակարդակով սահմանել օրենսդրի ու գործադիրի կոնկրետ գործառութային լիազորությունները համակարգային սահմանադրական մշտադիտարկում իրականացնելու հարցում:

Այս հայեցակարգում առանձնահատուկ դեր է վերապահվում ընդհանուր դատարաններին ու Սահմանադրական դատարանին:

Ընդհանուր իրավասության եւ մասնագիտացված դատարանները կոչված են ապահովելու սահմանադրական իրավունքները, երաշխավորելու դատարանների մատչելիությունը, դատավարության արդյունավետությունը եւ օրենքի միատեսակ կիրառումը: Հատկապես դասական պրակտիկան պետք է բացահայտի գործող ողջ իրավական համակարգի եւ Սահմանադրության միջեւ եղած անհամապատասխանությունը: Իսկ դա նշանակում է, որ, **առաջին՝** դատարանները պետք է ավելի ակտիվ դեր կատարեն սահմանադրական վերահսկողության ամբողջ համակարգում, **երկրորդ՝ դատական պրակտիկան պետք է դառնա սահմանադրական ախտորոշման կարենոր օբյեկտ:**

Սահմանադրական դատարանները, իրենց հերթին, կարող են լիարժեք իրականացնել իրենց բացառիկ առաքելությունը երկրում սահմանադրականության ապահովման գործում՝ հետեւյալ հանգամանքների պարագայում.

1. սահմանադրական մակարդակում պետք է երաշխավորվի Սահմանադրական դատարանի գործառույթների եւ լիազորությունների համակարգային ներդաշնակությունը: Սահմանադրական դատարանի հիմնական գործառույթը Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության երաշխավորումն է: Իսկ դա իրողություն կարող է դառնալ, եթե երաշխավորված են Սահմանադրության ինքնաբավությունը, մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների անմիջական գործողությունը, իրավական ակտերի սահմանադրականությունը, իսկ քաղաքական վեճերը եւ սահմանադրական լիազորությունների հարցերով վեճերը լուծվում են իրավական դաշտում:

Այսօր աշխարհում գործում են միայն մի քանի սահմանադրական դատարաններ (ինչպես Գերմանիայում, Ավստրիայում եւ մի շարք այլ երկրներում), որտեղ դրանց գործառույթների, լիազորությունների ու գործունեության դատավարական հիմունքների հաշվեկշռվածությունը համապատասխանում է սահմանադրական մշտադիտարկման ներկա մարտահրավերներին:

2. Դատական սահմանադրական վերահսկողության գործունակությունը մեծապես պայմանավորված է ողջ սահմանադրական վերահսկողության ու հսկողության համակարգի համակարգային լիարժեքությամբ ու գործողության արդյունավետությամբ:

3. Պետության գլուխը, որպես սահմանադրական մշտադիտարկման ողջ համակարգի արդյունավետ գործողության երաշխավոր, պետք է նաեւ Սահմանադրական դատարանի որոշումների իրացման երաշխավորը լինի: Դասական օրինակ կարող է հանդիսանալ Ավստրիայի Սահմանադրության 146-րդ հոդվածը, որում սահմանված է, որ «Սահմանադրական դատարանի որոշման կատարումը, 137-րդ հոդվածով նախատեսված պահանջների առնչությամբ, իրականացվում է սովորական դատարանների կողմից: Սահմանադրական դատարանի մնացած որոշումների կատարումը դրվում է դաշնային Նախագահի վրա...»:

4. Սահմանադրության գերակայությունը եւ անմիջական գործողությունն ապահովելիս դատական սահմանադրական վերահսկողության դատավարական ընթացակարգերը պետք է լիարժեքորեն համապատասխանեն Սահմանադրական դատարանի գործառույթային դերին ու լիազորություններին:

Տվյալ հայեցակարգը, ինչպես նշվեց, ենթադրում է նաև, որ քաղաքացիական հասարակությունն սկզբունքային դեր է կատարում երկրում սահմանադրականության զարգացման գործում: Դա, առաջին հերթին, նշանակում է, որ ժողովուրդը՝ որպես իշխանության հիմնական աղբյուր եւ կրող, հանդիսանում է սահմանադրական արժեքների ու սկզբունքների պահպանման հիմնական երաշխավորը: Այս արժեքների ու սկզբունքների ձեռնարկումների վերաբերյալ քաղաքացիական հասարակությունից եկող ցանկացած ահազանգ պետք է դառնա սահմանադրական մշտադիտարկման օբյեկտ: Այդ խնդիրների իրացման հիմնական ձեռքից մեկը մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի ճանաչումն ու երաշխավորումն է:

6.5. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ ՈՐՊԵՍ
ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԵԽԱՆԻԶՄ

Համակարգային սահմանադրական մշտադիտարկում իրականացնելու համար, կարծում ենք, որ պետք է սահմանադրական պրակտիկայում ներդնել մշտական սահմանադրական ախտորոշման համարժեք համակարգ:

«Ախտորոշում» (diagnostikos) հասկացությունն ունի հունական ծագում եւ բնութագրվում է որպես ուսումնասիրվող օբյեկտի համակարգային ամբողջականությունը եւ ֆունկցիոնալ գործունակությունը բացահայտելուն ուղղված որոշակի գործընթաց՝ հաշվի առնելով տվյալ օբյեկտի գործողության հիմնական պարամետրերի համապատասխանելիությունը դրա բնական եւ ծրագրային չափորոշիչներին:

Բժշկության մեջ «ախտորոշում» հասկացությունը ենթադրում է գործընթաց, որով եզրակացություն է արվում սահմանված նորմերից շեղման մասին, բացահայտվում են հիվանդության բնույթը եւ հիվանդի վիճակը, ինչն արտահայտվում է բժշկական եզրութաբանությամբ:

Տեխնիկա-տեխնոլոգիական առումով այս հասկացությունը ներկայացնում է գիտելիքների ոլորտ, ինչը տեղեկատվություն է ներառում մեքենաների, մեխանիզմների, սարքավորումների եւ այլ տեխնոլոգիական օբյեկտների տեխնոլոգիական վիճակի գնահատման միջոցների ու մեթոդների վերաբերյալ:

Տնտեսության մեջ ախտորոշումը նույնպես ենթադրում է հիմնախնդրի ճանաչման գործընթաց եւ ընդունված եզրութաբանությունը կիրառելով՝ դրա բնորոշում, այսինքն՝ ուսումնասիրվող օբյեկտի կամ գործընթացի բնականոն վիճակից շեղման բացահայտում:

«Սահմանադրական ախտորոշում» հասկացությունը ներառում է հասարակության մեջ սահմանադրականության գնահատման ողջ գործընթացը, սահմանադրորեն ամրագրված նորմերին ու սկզբունքներին իրական հասարակական հարաբերությունների համապատասխանության բացահայտումը: Սահմանադրական ախտորոշումը միջոց ու հնարավորություն է ամբողջության մեջ բացահայտել հասարակական օրգանիզմի սահմանադրական-գործառության

գործունակության աստիճանը: Դա անհրաժեշտ է առաջին հերթին հասարակության մեջ սահմանադրականության **իրական վիճակի ու զարգացման միտումների բացահայտման համար:**

Սահմանադրական ախտորոշման օբյեկտ է հանդիսանում հասարակական կյանքն ամբողջությամբ, սահմանադրորեն սահմանված ֆունկցիոնալ հավասարակշռության վիճակը, եւ, մասնավորապես, իշխանության մարմինների գործունեությունը⁴⁴⁰:

Սահմանադրական ախտորոշման սուբյեկտներ են հանդիսանում. ժողովուրդը՝ որպես իշխանության կրող եւ աղբյուր, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինները, քաղաքացիական հասարակության բոլոր ինստիտուտները, յուրաքանչյուր անձ:

Հատկապես հասարակական վերափոխումների ժամանակաշրջանում կամ սահմանադրական անկայուն հավասարակշռության պայմաններում **սահմանադրական ախտորոշման հիմնական խնդիրներն են, մասնավորապես.**

- խախտված սահմանադրական հավասարակշռության բացահայտումը,
- տվյալ խախտման բնույթի եւ դրսևորման ձևերի գնահատումը՝ իրավիճակի բազմագործոն գնահատման հիման վրա,
- այդ խախտումների պատճառի բացահայտումը եւ գործիքակազմի առաջադրումը՝ խախտված սահմանադրական հավասարակշռությունը վերականգնելու համար:

Սահմանադրական ախտորոշումը պետք է հենվի հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- սահմանադրական հավասարակշռության ցանկացած խախտման բացահայտում անընդհատ գործողության ռեժիմում,
- խախտման բնույթի բացահայտում,
- սահմանադրականության վերականգնման միջոցների եւ եղանակների առաջադրում,

440 Սահմանադրական ախտորոշման օբյեկտի վերաբերյալ մեր մոտեցումները մասնագիտական գրականության մեջ լայն արձագանք են գտել: Մասնավորապես, պրոֆեսոր Ն.Ս. Բոնդարը գրում է՝ «ինչպես արդարացիորեն իրելություններից մեկում ունի է պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյանը, երկրում սոցիալ-տնտեսական եւ քաղաքական գործընթացների սահմանադրական ախտորոշումը պետք է սկսել հենց սահմանադրականության համակարգից» /տես Բондарь Н.С. Конституционная модернизация российской государственности: в свете практики конституционного правосудия. М., 2014. –с. 14/:

- ֆունկցիոնալ հավասարակշռությունը վերականգնելիս նոր խախտում չթույլատրելու երաշխավորվածություն:

Հետեւողական սահմանադրական ախտորոշում իրականացնելու համար անհրաժեշտ է առանձնացնել **ինդիկատորների այնպիսի համակարգ**, ինչն ի վիճակի կլինի համակողմանիորեն եւ ամբողջական բնութագրել ուսումնասիրվող հասարակական հարաբերությունների սահմանադրականությունը: Նման ինդիկատորների համակարգեր հաճախ են օգտագործվում շատ միջազգային կազմակերպությունների կողմից: Լավ օրինակ կարող է ծառայել ամերիկյան «Ազատության տուն» (Freedom House) կազմակերպության ամենամյա հետազոտություններն աշխարհի երկրներում սահմանադրական ժողովրդավարության զարգացումների միտումների վերաբերյալ⁴⁴¹, ինչպես նաեւ Միջազգային արդարադատական ծրագիրը՝ իրավունքի գերակայության ինդեքսի որոշման առնչությամբ⁴⁴²:

Մեր կողմից նույնպես փորձ է արվել ներկայացնել նման հետազոտության գիտական մեթոդիկա, որի էությունն առաջին հերթին հանգում է հետեւյալին. **նախ**՝ գնահատող պարամետրերի ընտրություն, երկրորդ՝ մոդելային մոտեցման եղանակով այդ պարամետրերը համադրվում են նորմատիվ պարամետրերի (էտալոնային ցուցանիշների) հետ եւ ելնելով շեղումից՝ տրվում է համակարգի հիմնավորված ախտորոշում⁴⁴³:

Ինչպես ասվեց, մարդկային զարգացման կայունության ամփոփ գնահատման տարբեր մոտեցումներ գոյություն ունեն⁴⁴⁴: Հիմնական գաղափարը նրանում է, որ կայուն զարգացման ինդիկատորների համակարգի միջոցով հասարակության մեջ որոշվում է սահմանադրական զարգացումների ընդհանուր բնութագիրը: Գժվարությունը հանգում է կայուն զարգացման համեմատական գնահատման ին-

441 Տե՛ս <http://www.freedomhouse.org>

442 Տե՛ս The World Justice Project /worldjusticeproject.org/, Rule of Law index, 2010-2015.

443 Подробнее о данном методологическом подходе см. G. Harutyunyan, A. Mavčič - The Constitutional Review and its Development in the Modern World (a comparative constitutional analysis), Yerevan - Ljubljana, 1999, - p. 385-392.

444 Տե՛ս նաեւ Indicators of Sustainable Development. The Wuppertal Workshop, 15-17 Nov. 1996.

տեգրալ ցուցանիշի որոշմանը՝ ոչ միայն իրավական քաղաքականների օգնությամբ, այլև ամփոփելով տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, հասարակական-քաղաքական եւ այլ ինդիկատորները:

Կայունության համալիր գնահատման եւ հասարակական համակարգի սահմանադրական հավասարակշռության փաստացի մակարդակի բացահայտման համար, կարծում ենք, որ անհրաժեշտ են համապատասխան ինդիկատորներ՝ հետեւյալ մակարդակներում.

- հասարակության սոցիալական բնութագրիչներ,
- հասարակության մեջ ժողովրդավարական արժեքների իրացման բնութագրիչներ,
- Սահմանադրության, մարդու իրավունքների ու ազատությունների իրավական պաշտպանության բնութագրիչներ:

Երկրում սահմանադրականության վիճակի արդյունավետ վերահսկման համար, մեր կարծիքով, յուրաքանչյուր տարվա ավարտին ներքոնշյալ ինդիկատորների միջոցով պետք է բացահայտել հանրային կյանքում սահմանադրական հիմնարար արժեքների եւ սկզբունքների իրացման իրական պատկերը, դա անել հանրության համար թափանցիկ, դարձնել բազմագործոն վերլուծության առարկա, հիմք դարձնել իրավիճակի շտկման ծրագրանպատակային քաղաքականություն իրականացնելու համար:

Օգտագործելով, օրինակ, ամերիկյան Ազատության տան կողմից կիրառվող մեթոդիկան⁴⁴⁵, ամեն մի ինդիկատորի համար կարող է ընդունվել 7 բալանոց գնահատման կարգ, որտեղ 0-ն լավագույն վիճակն է, 7-ը՝ վատագույն:

Մեր կողմից իրականացված հետազոտությունը վկայում է, որ հետխորհրդային երկրներում սահմանադրականության միջին մակարդակը վերջին տարիներին վատանալու միտում է դրսևորում: Դա վկայում է մաեւ իրավական, քաղաքական, տնտեսական եւ սոցիալական ճգնաժամային երեւույթների դրսևորման ու բացասական սոցիալական էներգիայի պայթյունավտանգ կուտակումների մասին:

Խնդիր չունենալով սույն աշխատանքի շրջանակներում ներկայացնել վերլուծության մանրամասները, ցանկանում ենք միայն նշել, որ երկրում սահմանադրականության վիճակի իրական գնահատու-

445 Տե՛ս <http://www.freedomhouse.org/>

մը պետք է իրականացվի ոչ միայն պետական մակարդակով, այլև քաղաքացիական հասարակության կողմից՝ հիմք ընդունելով, օրինակ, ինդիկատորների հետևյալ համակարգը.

1. Իրավական պետության բնութագրիչներ.

- իրավունքի գերակայության երաշխավորման անհրաժեշտ եւ քավարար նախադրյալների առկայությունը,
- Սահմանադրության գերակայության ապահովման երաշխիքները,
- իշխանությունների իրական տարանջատման բնութագրիչը,
- դատական իշխանության իրական անկախության աստիճանը,
- քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման աստիճանը,
- օրենքի առջեւ բոլորի իրական հավասարության աստիճանը,
- կոռուպցիայի մակարդակը,
- ստվերային տնտեսության մակարդակը,
- ժողովրդի իրավագիտակցության մակարդակը,
- կրիմինալ իրավիճակը:

2. Ժողովրդավարական զարգացումների բնութագրիչներ.

- պառլամենտարիզմի զարգացման մակարդակը,
- ընտրական համակարգի հանդեպ վստահության աստիճանը,
- քաղաքական կուսակցությունների կայացման աստիճանը,
- մամուլի ազատությունը,
- ինտերնետի ազատությունը,
- հավաքների ազատությունը,
- միավորումների ազատությունը,
- քաղաքացիական ակտիվության եւ քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացման մակարդակը,
- իշխանության ինստիտուտների գործունեության թափանցիկությունը,
- պետական ժողովրդավարական ինստիտուտների գործունակության մակարդակը,
- կրոնական ազատությունները,
- ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանվածության աստիճանը,

- բազմակարծության մակարդակը,
- հանդուրժողականության մակարդակը,
- անխտրականության մակարդակը:

3. Սոցիալական բնութագրիչներ.

- գործազրկության մակարդակը,
- միգրացիայի մակարդակը,
- գների կայունության մակարդակը (արժեզրկումը),
- բնակչության մեկ շնչի հաշվով ներքին համախառն արդյունքի միջին տարեկան աճը,
- կենսամիևինումի եւ նվազագույն աշխատավարձի հարաբերակցությունը,
- կենսաթոշակի եւ միջին աշխատավարձի հարաբերակցությունը,
- մտավոր ստեղծագործական աշխատանքի սոցիալական պաշտպանվածության մակարդակը,
- նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից ցածր եկամուտ ունեցող բնակչության բաժինը 100 հազար բնակչի հաշվով,
- բնակչության 10 տոկոս ամենահարուստների տարեկան եկամուտների հարաբերակցությունը մնացած 90 տոկոսի տարեկան եկամուտների հետ,
- երկրում տարեկան սոցիալական ոլորտին հատկացվող բյուջետային միջոցների հետ 10 տոկոս ամենահարուստ անձանց եկամուտների հարաբերակցությունը,
- տվյալ տարում հայտարարագրված ընդհանուր եկամուտների հետ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության ոլորտների պաշտոնատար անձանց աշխատավարձի հարաբերակցությունը,
- երկրում միջին աշխատավարձի հետ քաղաքականլիդերների հայտարարագրված տարեկան եկամուտների հարաբերակցությունը,
- բարձր ղեկավար պաշտոններ զբաղեցնողների ու քաղաքական էլիտայի ունեցվածքի դիմամիկան իրենց կողմից պետական պաշտոններ զբաղեցնելու տարիներին:

Վերջին ցուցանիշները բնութագրում են իշխանության օլիգար-

խացման մակարդակը, ինչն իր հերթին արտացոլում է իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի իրացման իրական վիճակը: Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ, օրինակ, երբ օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության բարձրագույն պաշտոնատար անձանց տարեկան եկամուտների մեջ աշխատավարձի բաժինը բարձր է 80-90 տոկոսից, ապա քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի սերտաճման վտանգը հասնում է նվազագույնի եւ առկա են իրական երաշխիքներ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համար: Կարելի է այն, որ նման պայմաններում իշխանության կրողի իրական մոտիվացիան իր գործառույթի արդյունավետ իրականացումն է: Սակայն, երբ իշխանության կրողի գործառույթի իրականացման դիմաց ստացած վարձատրությունը փոքր է նրա տարեկան եկամտի 50 տոկոսից, ակնհայտ է, որ գործառույթը ծխածածկույթ է դառնում այնպիսի գործունեություն իրականացնելու համար, ինչն ապահովում է նրա հիմնական եկամուտը: Առանձին երկրներում առկա է այնպիսի պատկեր, երբ դատական իշխանության ոլորտում այդ ցուցանիշը 55-60 տոկոս է, գործադիրում՝ 35-40, իսկ օրենսդիր մարմնում՝ ընդհուպ 2-3 տոկոս: Նման պատկերը, որպես լակմուս, մետաստազային երեւույթների ու սահմանադրական հիմնարար արժեքների ու սկզբունքների վտանգավոր խեղաթյուրումների վկայությունն է:

Գաղտնիք չէ նաեւ, որ հետխորհրդային տարածքի շատ նորանկախ երկրներում զանգվածաբար սեփականաշնորհման գործընթացներն ուղեկցվեցին կոռուպցիայի բազմաթիվ դրսևորումներով, ինչը հետագայում ունեցավ նաեւ այլ վերարտադրվող բացասական հետեւանքներ: Հետեւաբար, այդ երկրներում սահմանադրական ձեւախեղումների իրական պատկերը բացահայտելու համար անհրաժեշտ է հաշվարկել քաղաքական ղեկավարների, օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության ոլորտների պաշտոնատար անձանց (նրանց ընտանիքի անդամների հետ մեկտեղ) վերջին 20 տարիների եկամուտների հարաբերակցությունը պետական բյուջեի եկամուտների միջին տարեկան աճի համեմատ: Դա նաեւ որպես յուրօրինակ ցուցանիշ կհանդիսանա սովերային սեկտորի մակարդակը գնահատելու համար: Մեր գնահատականներով, նույնիսկ այն երկրներում,

որտեղ ստվերային տնտեսության մակարդակը գնահատվում է 40-50 տոկոս, նշված հարաբերակցությունը 2.5-3 անգամից ավելին է: Իրականում դա վկայում է ստվերային տնտեսության ավելի բարձր մակարդակի ու համակարգի կոռուստացվածության մասին:

Համալիր գիտական հետազոտության եւ սահմանադրականության իրական վիճակի բազմագործոն գնահատման համար կարելի է վերոնշյալ բոլոր բնութագրիչների համադրումը, ինչպես նաև դրանց հիման վրա ամփոփ /ինտեգրալ/ ցուցանիշի որոշումը: Նման ցուցանիշի քանակական որոշակիությունը հնարավորություն կտա բացահայտել սահմանադրականության ձեռնարկներին ներդրելը եւ իրականացնել դրանց հաղթահարման ծրագրանպատակային քաղաքականություն⁴⁴⁶:

Ինտեգրալ ցուցանիշը հաշվարկվում է ինդիկատորների բերված համակարգի հիման վրա՝ հաշվի առնելով նաև առանձին ցուցանիշների միջև առկա կոռելյացիոն կապերը, եւ ունի հետևյալ պատկերը.

$$U_i = \sum_{j=1}^m \left[\frac{(x_{ij} - x_j^{(9)})}{\sigma(x_j)} \prod_{\substack{\beta=1 \\ \beta \neq j}}^m (1 - \gamma_{\beta j}) \right],$$

որտեղ՝ U_i - սահմանադրականության ինտեգրալ մակարդակն է,
 x_{ij} - j -րդ ինդիկատորի բնութագրիչն է i -րդ երկրում (խմբում),
 $x_j^{(9)}$ - էտալոնային ինդիկատորի բնութագրիչն է,
 $\gamma_{\beta j}$ - բազմակի կոռելյացիայի գործակիցն է:

Առաջարկվող մեթոդիկան հնարավորություն է տալիս նաև գործընթացի կառավարման խնդիր լուծել, որոշել յուրաքանչյուր ինդիկատորի ներագոյեցությունը սահմանադրականության ընդհանուր մակարդակի վրա:

⁴⁴⁶ Այդ մասին տե՛ս Арутюнян Г.Г. Конституционализм: уроки, вызовы, гарантии. – Киев: «Логос», 2011. - С. 99-100:

6.6. ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ

Սահմանադրական իրավունքը եւ միջազգային սահմանադրական պրակտիկան հատուկ կարեւորություն են տալիս մարդու իրավունքների անմիջական գործողության երաշխավորմանը: Միայն այս ճանապարհով է հնարավոր երաշխավորել իրավունքի գերակայությունը, վերջինից բխեցնել անձի սոցիալական վարքագիծը, պետության քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագիծը եւ իշխանությունների հանրային վարքագիծը: Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները եւ ազատությունները պետության կողմից ճանաչվելով որպես բարձրագույն արժեք՝ **պետք է պայմանավորեն իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ իրացումը եւ երաշխավորեն իրավունքով իշխանության սահմանափակումը:**

Մարդու իրավունքների անմիջական գործողության հիմնախնդիրը պահանջում է, մասնավորապես, գիտական հստակ դիրքորոշում հետեւյալ հարցերում.

Ուսի՝ ինչու՞մն են կայանում «անմիջական գործողություն» հասկացության սահմանադրաիրավական բնույթն ու բովանդակությունը,

Երկրորդ՝ որո՞նք են մարդու իրավունքների անմիջական գործողության երաշխիքները,

Երրորդ՝ ինչպիսի՞ դերակատարություն ունեն սահմանադրական դատարանները մարդու իրավունքների անմիջական գործողությունն ապահովելու հարցում:

Փորձենք առաջին հերթին համառոտ անդրադարձ կատարել միջազգային սահմանադրական պրակտիկային: Տարբեր երկրների սահմանադրություններում, որպես հիմնարար սահմանադրական դրույթ, մասնավորապես, ամրագրվում է.

- «Ներկայացվող հիմնական իրավունքները պարտադիր են օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանությունների համար՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» /**Գերմանիայի Պաշտպանության Հիմնական օրենք**, հոդված 1-ին, երրորդ մաս/,

- «Հիմնական իրավունքների, ազատությունների եւ երաշխիքների վերաբերյալ սահմանադրական սկզբունքներն անմիջականորեն գործող եւ պարտադիր են բոլոր պետական եւ մասնավոր մարմինների համար» /**Անգոլայի Սահմանադրության** 28-րդ հոդվածի առաջին մաս/,
- «Սահմանադրությամբ ճանաչված բոլոր իրավունքներն անմիջականորեն գործող են եւ օգտվում են դրանց պաշտպանության հավասար երաշխիքներից» /**Բոլիվիայի Սահմանադրության** 109-րդ հոդվածի առաջին մաս/,
- «Իշխանություն իրականացնելիս ժողովուրդը եւ Պետությունը սահմանափակված են հետեւյալ իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» /**Վրաստանի Սահմանադրության** 7-րդ հոդված/,
- «Հիմնական իրավունքների, ազատությունների եւ երաշխիքների վերաբերյալ Սահմանադրության դրույթներն անմիջականորեն գործող եւ պարտադիր են բոլոր պետական եւ մասնավոր անձանց եւ մարմինների համար» /**Պորտուգալիայի Սահմանադրության** 18-րդ հոդվածի առաջին մաս/,
- «Մարդու եւ քաղաքացու իրավունքները եւ ազատություններն անմիջականորեն գործող են» /**Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության** 18-րդ հոդված/,
- «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքներով եւ ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» /**ՀՀ Սահմանադրության** 3-րդ հոդված/ եւ այլն:

Հիշյալ եւ սահմանադրական համանման այլ դրույթները ենթադրում են.

Ոստիկանական մոտեցման բացակայություն՝ ինչպես անմիջականորեն գործող իրավունքների բնույթի, այնպես էլ բովանդակության վերաբերյալ: Եթե երկրների մի մասում անմիջական գործող են համարվում մարդու եւ քաղաքացու **հիմնական իրավունքները** /Գերմանիա, Անգոլա, Պորտուգալիա, Հայաստան/, ապա մյուս մասում այդպիսին են համարվում բոլոր իրավունքները /օրինակ, Բոլիվիա, Ռուսաստանի Դաշնություն եւ այլն/:

Երկրորդ՝ եթե մի դեպքում հատկապես շեշտադրվում է իրավունքների անմիջական գործողության հանգամանքը եւ դրա ապահովման հիմնախնդիրը /օրինակ, Բոլիվիա, Ռուսաստանի Դաշնություն/, ապա մյուս դեպքում հիմնական շեշտադրումը վերաբերում է այդ իրավունքներով իշխանության սահմանափակվածության հիմնախնդրին /օր., Գերմանիայի Դաշնություն, Անգոլա, Վրաստան, Հայաստան եւ այլն/:

Երկու դեպքում էլ գործ ունենք օրգանապես փոխկապակցված այնպիսի իրավական իրողության հետ, որտեղ սահմանադրորեն փորձ է արվում հստակեցնել նպատակն ու դրա իրացման հիմնական երաշխիքը: Նպատակը մարդու իրավունքների անմիջական գործողության ապահովումն է: **Ռա հիմնական երաշխիքն իշխանությունների համար այդ իրավունքների պարտադիր, սահմանափակիչ բնույթի ամրագրումն է:** Սա ժամանակակից սահմանադրագիտության կարեւոր ձեռքբերումներից է: Ժողովրդավարական, իրավական պետության սահմանադրական համակարգերի հիմնական բնութագրիչներից մեկն էլ այն է, որ նույնիսկ ժողովուրդը, ով իշխանության կրողն ու աղբյուրն է, չի կարող ընդունել այնպիսի Սահմանադրություն, որում իրավունքի գերակայությունը երաշխավորված չէ: Այլ կերպ, **մարդու իրավունքների անմիջական գործողությունը սահմանափակիչ գործոն է նաեւ ժողովրդի համար իրեն պատկանող իշխանությունն իրացնելիս:**

Այս հանգամանքը մեթոդաբանական նշանակություն ունի իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից:

Սահմանադրական նորմերը ոչ միայն պետք է հռչակեն մարդու սահմանադրական իրավունքը, այլեւ **առավելագույնս հստակ սահմանեն դրանց իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները:** Մարդու իրավունքները պետք է դիտարկվեն որպես իրագործելի իրավունքներ, իսկ դրանց սահմանափակումները պետք է բխեն միջազգային իրավունքի նորմերից, լինեն համաչափ, չաղավաղեն իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով, գուգակցվեն հանրային իշխանության համարժեք պարտականություններով:

Անկախ սահմանադրական ձեռնարկումների առանձնահատկություններից, մարդու իրավունքների անմիջական գործողությունն առնվազն ենթադրում է.

1. մարդը կարող է դատարանում վկայակոչելով իր իրավունքների անմիջական գործողությունը՝ ակնկալել դրանց համարժեք պաշտպանություն,

2. սահմանադրական մակարդակում պետք է գործառութային ու կառուցակարգային երաշխիքներ ստեղծվեն մարդու անմիջականորեն գործող իրավունքների դատական պաշտպանության համար: Այս նպատակի իրացման առավել արդյունավետ ձևերից է ներկայումս համարվում ամբողջական սահմանադրական զանգատի ինստիտուտի արմատավորումը⁴⁴⁷:

Ինչպիսի՞ն է վիճակը միջազգային իրավակարգավորումների տեսանկյունից:

Մարդու իրավունքներին առնչվող առանձին միջազգային իրավական փաստաթղթերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

ա/ որոնք պահանջում են անդամ պետություններից ձեռնպահ մնալ այդ իրավունքներին միջամտելուց (նեգատիվ պարտականություն),

բ/ որոնք պահանջում են անդամ պետություններից ակտիվ գործողություններ ձեռնարկել այդ իրավունքներն իրականացնելու ուղղությամբ (պոզիտիվ պարտականություն):

Անհրաժեշտ է նշել, սակայն, որ, որպես կանոն, այդ փաստաթղթերում արտացոլված իրավունքներին հենց այդ փաստաթղթերի միջոցով անմիջականորեն գործող իրավունքի ուժ տրված չէ: Միջազգային իրավունքի տեսությունում ընդունված է այն մոտեցումը, որ միջազգային իրավական փաստաթղթերում ամրագրված իրավունքների անմիջական գործողության հիմնահարցը որոշվում է ելնելով դրանց վերաբերյալ համապատասխան պետությունների ստանձնած պարտավորությունների ձևից:

447 St'u Study on Individual Access to Constitutional Justice. Adopted by the Venice Commission at its 85th Plenary Session (Venice, 17-18 December 2010). On the basis of comments by Mr Gagik Harutyunyan (Member, Armenia), Ms Angelika Nussberger (Substitute Member, Germany), Mr Peter Paczolay (Member, Hungary). Published by the Center of the Constitutional Law RA, 2012, p. 268.

Այսպես, **1966 թվականին ընդունված Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի** մեջ ներկայացված են մարդկանց դասական հիմնական իրավունքները, սակայն դաշնագրի 53 հոդվածներից որևէ մեկը չի կարգավորում դրանց անմիջական գործողության հիմնահարցը: Ավելին, դաշնագրում մարդու իրավունքների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորությունները նշելիս օգտագործվում են «պարտավորվում է հարգել», «պարտավորվում է ապահովել», «պարտավորվում է խրախուսել» եզրույթները:

Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի մեջ ներկայացված են մարդկանց սոցիալական իրավունքները, և դաշնագրի 31 հոդվածներից որևէ մեկը նույնպես ուղղակիորեն չի ամրագրում դրանց անմիջականորեն գործելը: Դաշնագրում անդամ պետությունների՝ մարդկանց իրավունքների վերաբերյալ պարտավորությունները նշելիս օգտագործվում են «պարտավորվում է իր ունեցած ռեսուրսների առավելագույն սահմաններում ձեռնարկել միջոցներ» և «պարտավորվում է ապահովել» եզրույթները:

Համանման կարգավորումներ են նախատեսված նաև **Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայում, Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայում և այլ հանրահայտ միջազգային փաստաթղթերում:**

Մարդու իրավունքներին վերաբերող նշյալ փաստաթղթերի շարքից անդամ պետությունների համար պարտավորությունների սահմանման տեսանկյունից տարբերվում է **1950 թվականի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան:** Առաջին հայացքից նշյալ միջազգային փաստաթուղթը ևս ուղղակիորեն չի նախատեսում դրանում ամրագրված իրավունքների անմիջականորեն գործելու վերաբերյալ դրույթ, սակայն Կոնվենցիայի առաջին հոդվածը սահմանում է. «**Բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի I**

բաժնում»: Հատկանշական է, որ անդամ պետությունների պարտավորությունները սահմանելիս օգտագործվում են ոչ թե «պարտավորվում է ապահովել» կամ «պարտավորվում է հարգել» եզրույթները, այլ **«ապահովում են»** եզրույթը: Մարդու իրավունքներին առնչվող միջազգային փաստաթղթերի իրացման վերաբերյալ միջազգային իրավունքի տեսության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ երբ պետության պարտավորությունը սահմանելիս օգտագործվում է «պարտավորվում է ապահովել» կամ «պարտավորվում է հարգել» եզրույթը, նշվածն իրենից ենթադրում է ներպետական օրենսդրական մակարդակում համապատասխան իրավունքների ամրագրում, որից հետո դրանք լիարժեքորեն սկսում են գործել, իսկ «ապահովում են», «երաշխավորում են» եզրույթները ենթադրում են համապատասխան նորմերի անմիջական գործողություն: Այսինքն՝ պայմանագիրը վավերացնելուն պես դրա նորմերն անմիջականորեն գործում են՝ առանց դրանք ներպետական օրենսդրության մեջ ամրագրելու:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում ուղղակի անդրադարձ չի կատարել մարդու իրավունքների անմիջականորեն գործելուն, սակայն անդրադարձել է **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայում** ամրագրված իրավունքների անմիջականորեն գործելու հարցին: Օրինակ, ***Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության (Ireland v. the United Kingdom) 1978թ. հունվարի 18-ի վճռի մեջ*** դատարանը հստակ սահմանել է, որ «պարտավորվում են ապահովել» եզրույթը փոխարինելով «ապահովում են» եզրույթով՝ **Կոնվենցիան մշակողները նպատակ են ունեցել հստակեցնել, որ Կոնվենցիայի I բաժնում սահմանված իրավունքներն ու ազատություններն անմիջականորեն ապահովվելու (գործելու) են պայմանավորվող կողմերի իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար (տես՝ *Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության, գանգադ թիվ. 5310/71, 1978թ. հունվարի 18-ի վճիռ, պարբ. 239*):** Դատարանի որոշումից կարող ենք եզրակացնել, որ Կոնվենցիայի **I բաժնում սահմանված իրավունքները և ազատությունները Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում անմիջականորեն գործող իրավունքներ են:**

Ուշադրության են արժանի նաև Եվրոպական միության պայմանագրերը և համապատասխան փաստաթղթերը: Այսպես, Լյուքսեմբուրգի Արդարադատության դատարանը դեռևս **1963 թվականին Վան Գենդ և Լուսի գործով կայացրած որոշմամբ սահմանել է, որ «Եվրոպական տնտեսական համայնքը հիմնադրելու մասին» պայմանագրի 12-րդ հոդվածն օժտված է անմիջականորեն գործելու ուժով:** Նշված որոշումը հետագայում բազմիցս վերահաստատվել է Արդարադատության դատարանի կողմից, ուստի այն հիմք է համարվում Եվրոպական միության համապատասխան պայմանագրերն անմիջականորեն գործող դիտարկելու համար: Հետևաբար, դրանց թվին է դասվում նաև **Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիան:** Պետք է նկատել նաև, որ 2007 թվականին ընդունված Եվրոպական միության գործունեության մասին պայմանագրի 288-րդ հոդվածը հստակ սահմանում է, որ Եվրոպական միության կանոնակարգումները պարտադիր են և **անմիջականորեն գործում են բոլոր անդամ պետություններում:** Այսինքն՝ Եվրոպական միության պայմանագրերում, ինչպես նաև ընդունված կանոնակարգումներում ամրագրված իրավունքներն անմիջականորեն գործող իրավունքներ են անդամ պետությունների համար:

Ընդհանուր հետևությունն այն է, որ թե՛ ներպետական իրավունքում եւ թե՛ միջազգային իրավունքում մարդու իրավունքների անմիջական գործողության երաշխավորումն է դիտարկվում որպես իրավունքի գերակայության երաշխավորման կարեւորագույն պայման: Խնդիրն այն է, թե ինչպես դա ապահովել:

Այս հիմնախնդիրը հատուկ կարեւորվեց Հայաստանում սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը մշակելիս: Բանն այն է, որ բոլոր այն երկրներում, որտեղ սահմանադրական մակարդակում հստակ ձեռով միմյանցից չեն սահմանազատված դասական հիմնական իրավունքները և սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային ոլորտի իրավունքները, հարցականի տակ է դրվում հիմնական իրավունքների անմիջական գործողության պահանջի իրացումը: Որպես կանոն, սոցիալական և ազատության հիմնական իրավունքները կառուցվածքային առումով միմյանցից արմատապես տարբերվում են: Եթե ազատությունը երաշխավորող դասական հիմ-

նական իրավունքները պետությունից առաջին հերթին պահանջում են ձեռնպահ մնալ այդ իրավունքներին միջամտությունից, ապա սոցիալական հիմնական իրավունքների մեծ մասը, ընդհակառակը, պահանջում է հանրային իշխանության պոզիտիվ գործողություններ այդ իրավունքներն իրականացնելու նպատակով:

Սահմանադրական հիմնարար լուծումները պահանջում են տարանջատել սոցիալական հիմնական իրավունքները և պետության նպատակները՝ ելնելով իրավական որոշակիության և հստակության պահանջներից: Սոցիալական ոլորտին վերաբերող բոլոր այն դրույթները, որոնք պարտավորեցնում են միայն օրենսդիրն և գործադիրին, պետք է ձևակերպվեն որպես պետության քաղաքականության նպատակներ, քանի որ դրանք անհատի անմիջական իրավական պահանջներ չեն, այլ պարունակում են միայն նպատակներ, որոնք պետությունը պետք է իրագործի «հնարավորության շրջանակներում»: Ի տարբերություն հիմնական իրավունքների, պետության նպատակները միայն օբյեկտիվ-իրավական դրույթներ են և չեն առաջացնում սուբյեկտիվ իրավունքներ:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կան սոցիալական ոլորտին վերաբերող բազմաթիվ հիմնական իրավունքներ, որոնք անմիջականորեն գործող իրավունքներ են (օրինակ՝ աշխատանքի ընտրության ազատության իրավունքը կամ գործադուլի իրավունքը), և որոնք հնարավոր է պաշտպանել նաև սահմանադրական արդարադատության ճանապարհով:

«Դասական» և սոցիալական հիմնական իրավունքների առանց տարբերակման ամրագրման վտանգները, մի կողմից, կայանում են նրանում, որ «դասական» հիմնական իրավունքների խստիվ պարտադիրությունը կարող է անիրականալի սպասելիքներ առաջացնել նաև սոցիալական հիմնական իրավունքների դեպքում, մյուս կողմից՝ ընդհակառակը, ավելի ցածր աստիճանի պարտադիրությունը, որն ունեն սոցիալական հիմնական իրավունքները, կարող է մեղմել այն խիստ պահանջները, որոնք առաջադրվում են «դասական» հիմնական իրավունքներին:

Տվյալ խնդրի կարևորագույն լուծումներից մեկը, մի կողմից, «դասական» հիմնական իրավունքների, իսկ մյուս կողմից՝ սոցիալական

ողորտում օրենսդրական երաշխիքների և պետության նպատակների սահմանազատումն է: Նման սահմանազատումը հնարավորություն է տալիս առանձնացնել բոլոր այն հիմնական իրավունքները, որոնց վրա անմիջականորեն հենվելով՝ անձը կկարողանա պաշտպանել իր սահմանադրական իրավունքները՝ ներառյալ անհատական սահմանադրական զանգատի միջոցով:

Վերոնշյալ հստակեցումները կարելու են նաև մարդու իրավունքների սահմանափակումների հիմնահարցի տեսանկյունից: Նկատի ունենալով այն լեգիտիմ շահերի բազմազանությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել հիմնական իրավունքների սահմանափակումների համար, այդ պահանջների ցանկը չի կարող սպառիչ լինել, սակայն Սահմանադրությունը, առնվազն, պետք է ամրագրի այն պահանջները, որոնք համընդհանուր ճանաչում են գտել ժամանակակից սահմանադրական իրավունքում, ինչպես նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 52-րդ հոդվածի 1-ին մասում: Խոսքը, մասնավորապես, համաչափության, որոշակիության և իրավունքի էության անխախտելիության սկզբունքների հստակ ամրագրման մասին է: Միաժամանակ, Սահմանադրությունը հատուկ պահանջներ պետք է սահմանի հիմնական իրավունքները կարգավորող օրենքների նկատմամբ, որոնց նպատակը հիմնական իրավունքների արդյունավետ գործողության ընթացակարգային նախադրյալների ստեղծումն է:

Իրավունքի գերակայությունը, հանդիսանալով իրավական պետության էությունը, ենթադրում է, որ.

- մարդու իրավունքները սահմանադրորեն ամրագրված, օրենսդրորեն երաշխավորված, համարժեք կառուցակարգային լուծումներով ապահովված ու պաշտպանված պետք է լինեն,
- պետք է հարգվի ու երաշխավորվի իրավական օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,
- օրենքները և այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, լինեն կանխատեսելի, հստակ, գերձ՝ բացերից ու երկիմաստություններից,
- իշխանության իրականացումը պետք է խարսխված լինի գործառնության և լիազորությունների ներդաշնակումը երաշխավորելու վրա,

- հանրային իշխանության իրականացման հիմքում պետք է ընկած լինի օրինականության սկզբունքը,
- պետք է երաշխավորվի կամայականության արգելքի սկզբունքը և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները,
- պետությունը պետք է պոզիտիվ պարտականություն կրի իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հարցում և ստանձնի համարժեք հանրային-իրավական պատասխանատվություն,
- հիմնական իրավունքներին ցանկացած միջամտություն և իշխանության ցանկացած գործողություն պետք է բխեն համաչափության սկզբունքից,
- իրավական վեճերը պետք է ունենան բացառապես իրավական ճանապարհով արդյունավետ լուծման անհրաժեշտ կառուցակարգեր,
- արդարադատությունը պետք է լինի անկախ ու անկողմնակալ: Իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը ենթադրում է փոխապայմանավորված ու փոխլրացնող այս բոլոր իրավապայմանների միաժամանակյա առկայություն, **դրանց համար անհրաժեշտ սահմանադրական երաշխիքների ապահովում:**

Վերոնշյալ մոտեցումները բխում են նաև իրավունքի գերակայության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1594(2007) բանաձևի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2008թ. նոյեմբերի 21-ի ՑՄ(2008)170 հանձնարարականի, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2011թ. ապրիլի 4-ի CDL-AD(2011)003rev. եւ 2016թ. մարտի 18-ի CDL-AD(2016)007 գեկույցներում ներկայացված դիրքորոշումների, ինչպես նաև ՄԱԿ-ի՝ 2012թ. սեպտեմբերի 24-ին ընդունած «Իրավունքի գերակայության մասին» բանաձևի դրույթներից: Հաշվի են առնվում նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում Միացյալ Թագավորության նախագահության շրջանակներում անցկացված՝ «Իրավունքի գերակայությունը որպես գործնական հայեցակարգ» /Լոնդոն, 2012թ. մարտի 2/ և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում անցկացված՝

«Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և ազգային իշխանությունների հայեցողության սահմանները»/Երևան, 2013թ. հուլիսի 3-4/ խորհրդաժողովներում քննարկումների արդյունքները:

Գործնական առումով իրավունքի գերակայությունն առկա է այնքանով, որքանով վտանգված չէ իրավունքի վրա խարսխված իշխանության լեգիտիմությունը, օրենքներն իրավական են և բխում են օրյեկտիվ նախադրյալներից, իսկ դատական իշխանությունն անկախ է ու անաչառ:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը փաստում է. «մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվությունը եւ հավասար ու անօտարելի իրավունքները աշխարհի ազատության, արդարության ու խաղաղության հիմքն են»: Ընդգծվում է նաեւ, որ «բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ ու իրավունքներով»: Մարդկային արժանապատվությունը բարձրագույն, ինքնաբավ արժեք է եւ համաչափ պահանջներ է առաջադրում հանրային համապատասխան հումանիզմի ու բարոյականության դրսեւորման հարցում: Մարդասիրական իրավական համակարգը չի ենթադրում միայն հասարակության առանձին անդամների մոտ անհրաժեշտ սուբյեկտիվ բարոյական որակների առկայություն: Գլխավորը դրանց դրսեւորման համարժեք հասարակական միջավայրի առկայությունն է, այնպիսի նախադրյալների ձեւավորումը, երբ յուրաքանչյուր անձ, իշխանությունը եւ ողջ հասարակությունը կունենան իրավունքի գերակայության սկզբունքի վրա խարսխված արժեքանական նույնաբնույթ կողմնորոշիչներ:

Սահմանադրությունն իրական կյանքում պետք է դառնա հասկապես այն հիմնարար արժեքների շուրջ հասարակական համաձայնության մարմնացում, որոնք կոնկրետ սոցիալական իրականության պայմաններում հանդիսանում են անձի սոցիալական վարքագծի դրսեւորման բարոյական հիմքն ու բովանդակությունը, ինչպես նաեւ իշխանությունների հանրային վարքագծի հիմնական բնութագրիչը /Կանոնի բնութագրմամբ՝ դրանց գոյության ներքին բարոյական օրենքը/:

Սահմանադրական զարգացումների պատմությունն ինքնին հանդիսանում է սոցիումի ինքնաճանաչման պատմություն, **գիտակցված գոյի, ժամանակի մեջ իմաստավորված գոյակցության պատմություն:**

Ինչպես նշել ենք, հազարավոր տարվա պատմություն ունի եւ քրեական ժողովրդավարության հայր Սողոմին է պատկանում այն թեւավոր խոսքը, որ սահմանադրությունները պետք է շարադրվեն հաշվի առնելով, թե ինչ ժողովրդի եւ ինչ ժամանակի համար են դրանք նախատեսված: Ժողովուրդը՝ իր արժեքային ընկալումներով, ժամանակը՝ դրա իմաստավորման մակարդակից ելնելով:

Ինչպիսին են այս առումով սահմանադրական իրողությունները մեր երկրներում ներկայումս: Վերլուծությունը վկայում է, որ շատ երկրներում առկա է սահմանադրականության ընդգծված ճգնաժամ, սահմանադրական ու քաղաքական էթիկայի ցածր մակարդակ, սահմանադրական զարգացումների գործընթացի ձեւախեղումներ:

Սոցիալական իրականության հիմնական բնութագրիչներն են դարձել.

- կոռուպցիայի բարձր մակարդակը,
- ընդհանուր հիասթափությունն ու անբավարարվածությունը,
- քաղաքական եւ ընտրական իրավունքի ցածր մակարդակը,
- իշխանությունների թափանցիկության անբավարար մակարդակը,
- իրավունքների ապահովման ու պաշտպանության հարցում համակարգվածության ու երաշխավորվածության բացակայությունը,
- մարդկանց կողմից դատական համակարգի նկատմամբ անվստահությունը եւ այլն:

Այդ բոլորը, որոնք հիմնականում բնորոշ են նաեւ Հայաստանի Հանրապետությանը, հանգեցնում են բացասական հանրային էներգիայի կուտակումների, ինչը, ինչպես նշվեց, հավաքելով կրիտիկական զանգված՝ կարող է հանգեցնել սոցիալական պայթյունի:

Նման իրավիճակներից, սոցիալական կատակլիզմներից ու տարաբնույթ գունավոր հեղափոխություններից խուսափելու համար անհրաժեշտ է իրավիճակի օբյեկտիվ գնահատում եւ համարժեք կանխարգելիչ քայլեր՝ սահմանադրականության դեֆիցիտը հաղթահարելու համար:

Իրավունքի գերակայության ապահովման ոլորտում իրական վիճակի վերլուծության համար կարող է օրինակ ծառայել Միջազգային արդարադատական ծրագրի շրջանակներում իրավունքի գերակա-

յության ինդեքսի որոշումը՝ թեկուզ 2015թ. համար⁴⁴⁸:

Բերենք միայն մի քանի ամփոփ արդյունքներ:

Նախ՝ հետազոտությունը ներառում է 102 երկիր:

Երկրորդ՝ իրավունքի գերակայության ինդեքսի ամփոփ գնահատման համար հաշվի է առնվել 535 ցուցանիշ:

Երրորդ՝ բոլոր այդ ցուցանիշները դասակարգվել են հետևյալ ութ խմբերում.

- իշխանությունների տարանջատման մակարդակը,
- կոռուպցիայի մակարդակը,
- հիմնական իրավունքների պաշտպանությունը,
- կառավարման թափանցիկությունը,
- անվտանգության մակարդակը,
- իրավակիրառ պրակտիկան,
- քրեական արդարադատությունը,
- քաղաքացիական արդարադատությունը:

Ներկայացնենք բերված մի քանի պարամետրերի սեղմ համեմատական վերլուծություն:

2015 թվականի ուսումնասիրությունների հիման վրա իրավունքի գերակայության ինդեքսն ամենից բարձր ամփոփ մակարդակ ունեցել է սկանդինավյան երկրներում՝ 85-87%:

ԱՄՆ-ում այն կազմում է 73 տոկոս եւ երկիրն զբաղեցնում է 19+-րդ տեղը: 102 երկրներից 62-ում այս ցուցանիշը 50 տոկոսից ցածր է: Պետք է նկատի առնել, որ նման ցուցանիշը համարվում է անբավարար արդյունք եւ վկայում է սահմանադրականության վտանգավոր դեֆիցիտի մասին:

Բերենք նաև որոշ այլ ամփոփումներ:

Օրինակ, մարդու իրավունքների պաշտպանության մակարդակով ամենաբարենպաստ վիճակն առկա է Ֆինլանդիայում, Դանիայում, Նորվեգիայում, Շվեդիայում եւ Ավստրիայում՝ 87-91 տոկոս:

ԱՄՆ-ը 102 երկրների մեջ զբաղեցնում է 26-րդ տեղը, իսկ մարդու իրավունքների պաշտպանության մակարդակը գնահատվում է 73 տոկոս: Նոր ժողովրդավարության երկրներում այդ ցուցանիշը 50 տոկոսից ցածր է:

448 St'u World Justice Project, Rule of Law Index 2015. The Index's conceptual framework and methodology were developed by Mark D. Agrast, Juan Carlos Botero, and Alejandro Ponce. E-mail: aponce@worldjusticeproject.org

Միջազգային առումով հանրային հարաբերությունների սոցիալական ախտորոշումը վկայում է, որ առավել տագնապալի վիճակ է ստեղծվել պետական իշխանության մակարդակում կոռուպցիայի ծավալման առումով: Փորձենք այս խնդրին քիչ ավելի հանգամանորեն անդրադառնալ:

Այստեղ նույնպես կցանկանայինք առանձնացնել ԱՄՆ «Ազատության տուն» կազմակերպության կողմից ներկայացվող տարեկան ամփոփումները⁴⁴⁹ եւ Միջազգային արդարադատական ծրագրի շրջանակներում իրավունքի գերակայության ինդեքսի վերաբերյալ հրապարակումները⁴⁵⁰:

Դրանց քաջատեղյակ լինելով՝ նախ կարելի է անել երկու կարևոր ընդհանուր բնույթի հետեւություն.

1. իրավունքի գերակայության երաշխավորման հիմնախնդիրն աննախադեպ հրատապություն է ստանում,

2. դրա ապահովման ուղղությամբ ձեռնարկվող քայլերը համարժեք չեն ներկա մարտահրավերներին, եւ աշխարհի շատ ու շատ երկրներում սահմանադրականության դեֆիցիտը դառնում է սոցիալական աղետների հիմնապատճառ, իսկ դրա հաղթահարումը՝ գերխնդիր⁴⁵¹:

Իրավունքի գերակայության վիճակի գնահատման հարցում նշված հետազոտություններում առանձնակի ուշադրություն է դարձվում հատկապես կոռուպցիային՝ որպես ժամանակակից սոցիալական ահագնացող հիվանդության:

Մասնավորապես, իրավունքի գերակայության ինդեքսի գնահատման վերոնշյալ ծրագրի շրջանակներում հինք են ընդունվում 535 տարբեր ցուցանիշներ, որոնք խմբավորվում են 8 տարբեր որակական խմբերում, եւ դրանցից մեկը կոռուպցիան է: Այս ծրագրի շրջանակներում կոռուպցիայի մակարդակը գնահատվում է 68 տարբեր ինդիկատորների օգնությամբ՝ հետեւյալ ենթախմբերի կտրվածքով.

1. որքանով պետական պաշտոնյաները գործադիր իշխանությունում իրենց լիազորությունները չեն օգտագործում անձնական շահի համար,

449 Տե՛ս <http://www.freedomhouse.org>

450 Տե՛ս The World Justice Project /worldjusticeproject.org/, Rule of Law index, 2010-2015.

451 Մասնավորապես տե՛ս Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական մշտադիտարկում, Երեւան, 2016:

2. որքանով պետական պաշտոնյաները դատական իշխանությունում իրենց լիազորությունները չեն օգտագործում անձնական շահի համար,

3. որքանով պետական պաշտոնյաները բանակում եւ ոստիկանությունում իրենց լիազորությունները չեն օգտագործում անձնական շահի համար,

4. որքանով պետական պաշտոնյաներն օրենսդիր մարմնում իրենց լիազորությունները չեն օգտագործում անձնական շահի համար:

Նպատակ չունենալով քննարկման առարկա դարձնել ուսումնասիրության մեթոդիկան եւ ցուցանիշների ընտրության կարգը, ցանկանում ենք արձանագրել, որ հիշյալ երկու կազմակերպությունների կողմից ներկայացվող փաստական նյութը՝ հատկապես կոռուպցիոն երեւույթների գնահատման ու հատկապես միտումների բացահայտման առումով, մեր ուսումնասիրությունների արդյունքներից հիմնականում չի շեղվում, դրա համար **համառոտ վերլուծությունը կներկայացնենք բացառապես այդ կազմակերպությունների՝ բոլորին մատչելի տեղեկատվության հիման վրա:**

Ի՞նչ են վկայում «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի եւ ԱՄՆ «Ազատության տուն» կազմակերպության հետազոտությունների հիման վրա կատարված դիտարկումները:

Նախ՝ ուշագրավ է, որ «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի շրջանակներում ուսումնասիրման առարկա դարձած 102 երկրից միայն 17-ում է, որ պետական իշխանության կոռուպցիայի մակարդակը 20 տոկոսից ցածր է, եւ միջին թիվը 13.5 տոկոս է: Ամենացածր կոռումպացված երկրների առաջին հնգյակում են Դանիան, Նորվեգիան, Սինգապուրը, Շվեդիան եւ Ֆինլանդիան:

Երկրորդ՝ թվով 14 երկրներում կոռուպցիայի միջին մակարդակը կազմում է 30.14 տոկոս: Այս խմբում է նաեւ ԱՄՆ-ը, որտեղ պետական իշխանության կոռուպցիայի մակարդակը գնահատվում է 25 տոկոս: Ֆրանսիայում այն նույնպես 25 տոկոս է, Էստոնիայում՝ 22, Վրաստանում՝ 27, Պորտուգալիայում՝ 28, Իսպանիայում՝ 31, Չեխիայում՝ 34, Լեհաստանում՝ 35, Սլովենիայում՝ 40 տոկոս եւ այլն:

Երրորդ՝ երրորդ խումբ երկրներում, որոնք թվով 11 են, կոռուպցիայի միջին մակարդակը 46.37 տոկոս է: Այս խմբում են նաեւ Իտալիան /41տոկոս/, Հունաստանը /46 տոկոս/, Խորվաթիան /46 տոկոս/, Ռումինիան /48 տոկոս/, Չինաստանը /49 տոկոս/ եւ այլն:

Չնայած այս ծրագրում Հայաստանը եւ մի շարք այլ երկրներ ներառված չեն, այսուամենայնիվ, «Ազատության տուն» կազմակերպության եւ «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի շրջանակներում Վրաստանի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Չեխիայի եւ Հայաստանի վերաբերելի տվյալների համադրմամբ կատարված հաշվարկները վկայում են, որ Հայաստանը նույնպես կարող էր ընդգրկվել այս խմբում՝ մոտավորապես 46 տոկոս կոռուպցիայի մակարդակով, որը նույնպես մտահոգիչ թիվ է եւ համարժեք ներազդման քայլեր է պահանջում:

Չորրորդ՝ «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի շրջանակներում ընդգրկված 102 երկրներից 2015 թվականին 60-ում պետական իշխանության մարմինների կոռումպացվածության աստիճանը հասել է 50 եւ ավելի տոկոսի: Ծրագրում ընդգրկված Արեւելյան Եվրոպայի ու մեր տարածաշրջանի երկրներից դրանց թվում են Հունգարիան, Թուրքիան, Ռուսաստանի Դաշնությունը, Ղազախստանը, Իրանը, Սերբիան, Բուլղարիան, Ալբանիան, Ուզբեկստանը, Ուկրաինան, Ղրղզստանը, Մոլդովան եւ այլն:

Այն փաստը, որ ուսումնասիրված երկրների 58 տոկոսից ավելիում կոռուպցիայի մակարդակը 50 եւ ավելի տոկոս է, վկայում է ահագնացող չափերի ու ընդգրկման հասնող մետաստազի մասին, որի հաղթահարման ուղղությամբ իրականացվող քայլերը համարժեք չեն վտանգի աստիճանին: Նման ցուցանիշը նաեւ սահմանադրականության լրջագույն դեֆիցիտի վկայություն է ու սոցիալական կատակլիզմների պատճառ:

Հինգերորդ՝ եթե փորձում ենք այդ ծրագրի տեղեկատվության շրջանակներում գնահատել վերջին երեք տարիների դինամիկան, ապա մի շարք երկրների համար այն ունի հետեւյալ պատկերը. ԱՄՆ-ում վերջին երեք տարում կոռուպցիայի մակարդակը բարձրացել է 3 տոկոսային կետով՝ 22-ից հասնելով 25 տոկոսի, Հունգարիայում այն բարձրացել է 22 տոկոսային կետով՝ 28-ից հասնելով 50 տոկոսի, Լեհաստանում բարձրացել է 17 տոկոսային կետով, Թուրքիայում՝ 6, Բուլղարիայում՝ 7, Մոլդովայում՝ 5 տոկոսային կետով եւ այլն:

Վեցերորդ՝ վիճակն ավելի վատթար է հասարակական տրանսֆորմացիա ապրող շատ երկրներում՝ հատկապես վերջին տասնամյակի տվյալներով: Նման պատկերի բացահայտման համար առավել

լայն հնարավորություն է ընձեռում «Ազատության տուն» կազմակերպության կողմից հրապարակվող տեղեկատվությունը 2006-2015 թվականներին /տե՛ս Nations in Transit 2015, էջ 24/: Ըստ այդ տվյալների՝ նշված տարիներին վերափոխվող հասարակական համակարգերում կոռուպցիայի գործակիցը, հետեւաբար՝ նաեւ դրա փաստացի մակարդակը, մասնավորապէս.

ա/ **աճ է գրանցել.**

Բուլղարիայում՝ 13.3 տոկոսով, Հունգարիայում՝ 25.0, Լեհաստանում՝ 7.7, Սլովակիայում՝ 25.0, Սլովենիայում՝ 11.1, Ադրբեջանում՝ 8.0, Ռուսաստանի Դաշնությունում՝ 12.5, Ուկրաինայում՝ 4.3, Ուզբեկստանում՝ 3.8 տոկոսով,

բ/ **իջել է.**

Վրաստանում՝ 18.2 տոկոսով, Լատվիայում՝ 7.7, Լիտվայում՝ 12.5, Խորվաթիայում՝ 15.8, Մակեդոնիայում՝ 10.5, Չեռնոգորիայում՝ 4.8, Սերբիայում՝ 10.5, Հայաստանում՝ 8.7 տոկոսով:

Յոթերորդ՝ ըստ «Իրավունքի գերակայության ինդեքս» ծրագրի՝ նախկին ԽՍՀՄ պետություններից կոռուպցիայի առումով առավել վտանգավոր վիճակ է արձանագրվել Մոլդովայում, որտեղ այն գնահատվում է 72 տոկոս, Գրդգաստանում՝ 70 տոկոս, Ուկրաինայում եւ Ուզբեկստանում՝ 64 տոկոս, Ռուսաստանի Դաշնությունում եւ Ադրբեջանում՝ 56 տոկոս, Ղազախստանում՝ 55 տոկոս:

Երկրում սահմանադրականության վիճակի գնահատման տեսանկյունից բերված ընդհանուր պատկերը **հասարակական օրգանիզմի իմունային անբավարարության վիճակի արտացոլանքն է** եւ հաղթահարման համարժեք մոտեցումներ է պահանջում:

Չենք բացառում, որ շատերը թերահավատորեն կվերաբերեն հիշյալ կազմակերպությունների կողմից ներկայացվող ուսումնասիրությունների արդյունքներին: Մենք կարծում ենք, որ ընդհանրական պատկերն առկա իրավիճակին համարժեք է, իսկ խնդրի լուծումը պետք է փնտրել ոչ թե «ծուռ հայելում» մեղադրելու տրամաբանությամբ, այլ յուրաքանչյուր երկրում իրավիճակի օբյեկտիվ ու բազմագործոն ախտորոշման ու համարժեք լուծումներ գտնելու ճանապարհով:

Կոռուպցիայի դեմ պայքարող ցանկացած հանձնաժողովի գործունեությունը կշարունակի անպտուղ մնալ այնքան ժամանակ, քանի դեռ նման համակողմանի ու բազմագործոն ախտորոշում արված

չէ ու դրանից բխող ծրագրանպատակային համարժեք քայլեր ձեռնարկված չեն:

Այս հարցում ձեւական մոտեցումը ոչինչ չանելուց առավել վտանգավոր է:

Ոչ միայն բերված թվերը, այլև այլ հետազոտությունների արդյունքները նույնպես համոզիչ կերպով վկայում են, որ Սահմանադրության գերակայության երաշխավորման եւ մեր երկրներում իրական սահմանադրականության հաստատման ժամանակակից մարտահրավերները պայմանավորված են հատկապես իրավունքի գերակայության սկզբունքի իրացման ցածր մակարդակով, ինչն իր հերթին պայմանավորում է անհետաձգելի սահմանադրաիրավական եւ կառուցակարգային քայլերի բնույթը, որպեսզի՝

1. իրավունքի գերակայության սկզբունքը դառնա յուրաքանչյուր անհատի սոցիալական վարքագծի հենքը,
2. քաղաքական ինստիտուտների քաղաքական վարքագիծը խարսխվի իրավունքի գերակայության սկզբունքի վրա,
3. իրավունքի գերակայության սկզբունքը որոշի իշխանությունների հանրային վարքագծի բնույթն ու բովանդակությունը:

Միայն այս ճանապարհով է հնարավոր իրականության մեջ ապահովել Սահմանադրության գերակայությունը եւ մեր երկրներում հաստատել իրական սահմանադրականություն:

Ինչպես նշել ենք, իրավունքի գերակայության վիճակի հստակ գնահատման նոր հեռանկարներ է բացում Վեներտիկի հանձնաժողովի 106-րդ լիազումար նիստում 2016թ. փետրվարի 12-ին ընդունված՝ «Իրավունքի գերակայության հիմնական բնութագրիչների ցանկը» ցեկույցը, որն այս հարցում համաեվրոպական չափորոշիչների հստակեցման կարելուր նախադրյալներ է ստեղծում: Այն առանձնահատուկ նշանակություն կունենա նաեւ գործնականում սահմանադրական մշտադիտարկում իրականացնելու համար:

6.7. ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇՏԱԳԻՏԱՐԿՈՒՄԸ

Հիմնահարցը մեթոդաբանական եւ մեթոդական առումով ներկայացնելով հանդերձ, կարելի էր համարում քննարկել նաեւ սահմանադրական մշտադիտարկում իրականացնելուն առնչվող մի շարք հանգամանքներ, որոնք վերաբերում են դինամիկայում **իշխանությունների ֆունկցիոնալ հավասարակշռության ապահովմանը:**

Իրական կյանքում սահմանադրական ֆունկցիոնալ հավասարակշռության ապահովումը մեծապես պայմանավորված է իշխանությունների գործառնության, հակակշռող եւ զսպող լիազորություններով, ինչպես նաեւ իշխանությունների զսպման ու սահմանափակման համասոցիալական ներուժի իրացման հարցում քաղաքացիական հասարակության իրական դերով: Սահմանադրական հավասարակշռության գործառնությի շատ տպավորիչ է նկարագրել պրոֆեսոր Ս. Հոլմսը, նշելով, որ «... XVIII դարում ընդունված ԱՄՆ Սահմանադրությունը հենվում է երեք սկզբունքների վրա, որոնք գործում են նաեւ մեր ժամանակներում. 1) բոլոր մարդիկ, ներառյալ քաղաքական էլիտան, հակված են սխալվելու, 2) բոլոր մարդիկ, հատկապես քաղաքական էլիտան, չեն սիրում ընդունել իրենց սխալները, 3) բոլոր մարդիկ, հատկապես քաղաքական էլիտան, ներկայումս գտնվելով օպոզիցիայում, հաճույք են ստանում քաղաքական կամ բյուրոկրատական շրջանակների իրենց հակառակորդների բացթողումների եւ կեղծ քայլերի բացահայտումից: Սահմանադրությունը փորձում է ստիպել այդ սկզբունքներին ծառայել իրենց նպատակին, կոպիտ ասած, իշխանության մի թեւին գերապատվություն տալ սխալ գործել, իսկ մյուս երկուսին իրավունք՝ այն շտկելու (գումարած հասարակությունը եւ մամուլը)»⁴⁵²:

Առաջին սահմանադրությունների ի հայտ գալու հետ միաժամանակ սահմանադրական ճարտարապետության հիմնարար խնդիրը

⁴⁵² St'u Стивен Холмс. Конституции и конституционализм //Сравнительное конституционное обозрение, 2012, N3(88). - С. 68.

եղել ու մնում է պետական իշխանության գործառույթային բաժանման ու հաշվեկշռվածության ապահովումը: Ինչպես նշվեց, Մարդու և քաղաքացու իրավունքների 1789թ. ֆրանսիական հռչակագրի 16-րդ հոդվածում ասվում է. «**Այն հասարակությունը, որում ապահովված չեն իրավունքի երաշխիքները և չկա իշխանությունների բաժանում, չունի Սահմանադրություն:**»:

Ներկա ազատական ժողովրդավարությունը նույնպես «հենված է երեք հիմնական կետերի վրա»՝ իրավունքի գերակայություն, իշխանությունների բաժանման սկզբունք, ժողովրդական ինքնիշխանություն: Սոցիալական պրակտիկայում դրանց հավասարակշռված դրսևորումը պայմանավորում է սահմանադրականության բնույթը ավյալ հասարակությունում:

Անհրաժեշտ է նաև փաստել, որ իշխանությունների բաժանման տասնյակ տարբեր դոկտրինալ մոտեցումներում ընդհանրականը, միանշանակ ու անվիճելի համարվող միայն իշխանությունների բաժանման և հավասարակշռման անհրաժեշտության տեսական փաստարկումն է: Կոնկրետ մոտեցումները, ձևերը և եղանակները, առավել ևս՝ պրակտիկ լուծումներն էապես տարբերվում են յուրաքանչյուր սահմանադրական համակարգում:

Պետք է ընդունենք, որ ամերիկյան սահմանադրագիտության մեծագույն նվաճումներից մեկը հանդիսանում է հենց այն, որ ԱՄՆ Սահմանադրության մեջ իշխանությունների բաժանման դոկտրինան ձեռք բերեց համակարգային ամբողջականություն և զսպումների ու հակակշիռների համակարգի ներդրումով Սահմանադրությանը հաղորդվեց հասարակական հարաբերությունների դինամիկ կարգավորման բնույթ, սահմանադրական համակարգը տեղափոխվեց զարգացող հավասարակշռության ռելսերի վրա:

Ինչպե՞ս է լուծվում իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիմնախնդիրը մեր ժամանակներում՝ հաշվի առնելով այն օբյեկտիվ իրողությունը, որ աշխարհում ի հայտ եկան հատուկ մասնագիտացված պետական ինստիտուտներ, որոնք պարտավոր են անկախաբար ապահովել Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը:

Համոզված ենք, որ մեծ հաշվով էական ոչինչ չփոխվեց, իսկ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման ամերիկյան դոկտրինան ամբողջապես կենսունակ է նաև մեր օրերի համար: Այս համակարգի արդյունավետ գործունեության հիմնական պահանջները, մեր կարծիքով, հանգում են հետևյալ նախադրյալներին.

առաջին՝ իշխանությունների բաժանումն առաջին հերթին գործառույթային է եւ ոչ թե կառուցակարգային, ինչը հաճախ շփոթվում է նույնիսկ սահմանադրական լուծումների մակարդակում: Որոշակի առանձին սահմանադրաիրավական գործառույթներ կարող են իրականացնել տարբեր սահմանադրական ինստիտուտներ:


Երկրորդ՝ սահմանադրական ճարտարապետության գլխավոր խնդիրն առաջին հերթին **գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայում հավասարակշռության ապահովումն է:**

Երրորդ՝ սկզբունքային է սահմանադրական ինստիտուտների գործառույթային, հակակշռող եւ զսպող լիազորությունների հստակ բաժանումը եւ այդ լիազորությունների օպտիմալ հավասարակշռումը:

Չորրորդ՝ արդի սահմանադրագիտության անհետաձգելի խնդիրներից է ներսահմանադրական ինքնապաշտպանության կենսունակ եւ արդյունավետ համակարգի ներդրումը, որպեսզի երաշխավորվի դինամիկայում սահմանադրական ֆունկցիոնալ հավասարակշռության խախտումների ժամանակին բացահայտումը, գնահատումը եւ վերականգնումը: Դա ըստ էության հանդիսանում է սահմանադրական ախտորոշման հիմնական նպատակը եւ ամբողջության մեջ՝ սահմանադրական վերահսկողության հիմնական խնդիրը:

Մխենատիկ ձեռով նման համակարգի ունի հետևյալ պատկերը.

ՍԱՀՄԱՐԱԳԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐԸ



Վերոթվարկյալ նախադրյալների ապահովման հիմնական չափորոշչային բնութագրերն են հանդիսանում.

1. իշխանության ճյուղերի գործառությանն անկախության ապահովումը,

2. սահմանադրական ինստիտուտների լիազորությունների լրիվության եւ ֆունկցիոնալ համապատասխանության երաշխավորումը,

3. դիմամիկայում, իրական կյանքում ֆունկցիոնալ սահմանադրական հաշվեկշռի անխախտության եւ անընդհատության ապահովումը, ինչն իր հերթին ենթադրում է իրական կյանքից Սահմանադրության, այսպես կոչված, խորթացման անթույլատրելիությունը:

Նոր ժողովրդավարության տարբեր երկրների սահմանադրությունների ուսումնասիրությունից հետեւում է, որ այդ մակարդակի վրա ձեւականորեն իրավական պետությունը, ժողովրդաիշխանությունը, իրավունքի գերակայությունը, մարդու արժանապատվությունը, ազատությունը, սահմանադրական ժողովրդավարությունը, իշխանությունների բաժանումը, հասարակական համաձայնությունը, հավասարությունը, բազմակարծությունը, հանդուրժողականությունը, փոխհամաձայնությունը եւ այլ հանրաճանաչ սահմանադրական արժեքներ դարձել են սահմանադրական լուծումների հիմքը: Սակայն, դրա հետ մեկտեղ, ռեալ իրականությունն այդ երկրներում այլ է, այն հայտնվել է ուրիշ չափելիությունում: Այս երկրներից մեծ մասում լիարժեք չի ապահովվում Սահմանադրության ինքնաբավությունը, եւ **հիմնարար սահմանադրական արժեքներն ու սկզբունքներն էապես կտրված են սոցիալական իրականությունից:** Վերջինիս բնորոշ գծերն են, ինչպես նշվել է, սահմանադրական մշակույթի ցածր մակարդակը, իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման մեխանիզմների համակարգային անլիարժեքությունը, խեղված, ներքին հակասականությամբ իրավական համակարգի առկայությունը, հասարակական զարգացումների սոցիալական կողմնորոշումների արժեհամակարգային միասնական ընկալումների բացակայությունը:

Կարելի է շատ օրինակներ բերել: Դրանցից օրինակ կարող է ծառայել բուն Սահմանադրության կառուցվածքային վերլուծությունը: Օրինակ, ՀՀ 2005թ. փոփոխություններով Սահմանադրության կառուցվածքը, գործառությանն հավասարակշռության տեսանկյունից, անտրամաբանական էր ու անհետեւողական: Սահմանադրական

կարգի հիմունքների ու մարդու իրավունքների գլուխներից հետո ներկայացվում էին Նախագահի, պառլամենտի եւ կառավարության ինստիտուտները եւ դրանց կողքին, որպես առանձին գլուխ, առանձնացվում է դատական **իշխանությունը**: Ոչ միայն խաթարված էր բուն Սահմանադրության կառուցվածքային տրամաբանությունը, այլեւ դատական իշխանության ֆունկցիոնալ համակարգում ներառված են ինստիտուտներ, որոնք արդարադատություն չեն իրականացնում: Կառուցվածքային նման անհետեւողականություն է առկա նաեւ Բոլիվիայի, Հունաստանի⁴⁵³, Բուլղարիայի, Խորվաթիայի, Վրաստանի, Ուզբեկստանի, Ռուսաստանի Դաշնության, Ճապոնիայի եւ մի շարք այլ երկրների սահմանադրություններում: Դրա հետ մեկտեղ, կան երկրներ, որոնք ոչ միայն սահմանադրորեն ամրագրել են իշխանությունների բաժանման հստակ ֆունկցիոնալ կառուցվածք, այլեւ Սահմանադրության առանձին հոդվածով կամ գլխով բացահայտել են իշխանությունների բաժանման բնույթը: Օրինակ կարող է ծառայել Մեքսիկայի Սահմանադրության 3-րդ բաժնի 1-ին գլուխը, որի 49-րդ հոդվածն ասում է, որ Դաշնության բարձրագույն իշխանությունն իրականացնելու համար այն բաժանվում է օրենսդրի, գործադիրի ու դատականի: Երկու կամ բոլոր երեք իշխանությունները երեք չեն կարող միավորվել մեկ մարդու կամ մեկ կորպորացիայի ձեռքում, իսկ օրենսդիր իշխանությունը չի կարող վերապահվել մեկ անձի, բացի Դաշնության գործադիր իշխանությանն արտակարգ լիազորությունների տրամադրման դեպքերից՝ 29-րդ հոդվածի դրույթներին համապատասխան: Ոչ մի այլ դեպքում, բացառությամբ 131-րդ հոդվածի երկրորդ պարբերության, գործադիր իշխանությանը չի կարող օրենքների հրապարակման արտակարգ լիազորություն տրվել:

Իշխանությունների բաժանման էության հստակ սահմանադրական բանաձեռումն էապես բարձրացնում է այդ դոկտրինայի պրակտիկ իրացման երաշխիքները: Կարծում ենք, որ անկախ կառավարման ձեռի ընտրությունից ու սահմանադրականության զարգացման

⁴⁵³ Անհրաժեշտ է նաեւ նկատի ունենալ, որ Հունաստանի Սահմանադրության 26-րդ հոդվածը սահմանում է, որ օրենսդիր գործառույթն իրականացվում է պառլամենտի եւ երկրի Նախագահի կողմից, գործադիր գործառույթն իրականացվում է երկրի Նախագահի ու կառավարության կողմից, իսկ դատական գործառույթն իրականացվում է դատարանների կողմից, որոնց որոշումները կատարվում են Հունաստանի ժողովրդի անունից:

մակարդակից, առավել ճիշտ ընտրություն են կատարել այն երկրները, որոնք սահմանադրական կառուցվածքային լուծումների հիմքում դրել են կամ կառուցակարգային մոտեցումը (Իտալիա, Պորտուգալիա, Բելգիա, Լեհաստան եւ այլն), կամ ֆունկցիոնալ մոտեցումը (Ավստրիա, Բրազիլիա, Սլովակիա եւ այլն):

Սակայն շատ երկրների համար հիմնական խնդիրը հանգում է Սահմանադրության եւ ընդհանուր առմամբ իրավական իրողությունների միջեւ եղած անտագոնիզմին:

Անցումային երկրներում համակարգային վերափոխումների ընդհանուր բացասական բնութագրիչները, մեր կարծիքով, հանգում են հետեւյալներին.

- հասարակական զարգացման անկայունությունն ու անորոշությունը եւ վստահության ճգնաժամի խորացումը,
- արժեհամակարգային վերափոխումներում լուրջ բացթողումներն ու թերացումները,
- քաղաքացիական հասարակության ձեւավորման անլիարժեքությունը,
- հասարակության սոցիալական կողմնորոշումների անհամապատասխանությունը սահմանադրորեն հռչակված ժողովրդավարական-իրավական արժեքներին, այսինքն՝ սահմանադրականության էական դեֆիցիտի առկայությունը,
- իշխանության ինստիտուտների ֆունկցիոնալ ու կառուցակարգային գործունակության ցածր մակարդակը,
- ընդունվող որոշումների սահմանադրականության ու գործնական քաղաքականության միջեւ առկա անտագոնիզմը,
- որպես այդ բոլորի հետեւանք՝ որոշակի բացասական հասարակական էներգիայի կուտակումը, ինչը հաճախ հանգեցնում է տարագույն սոցիալ-քաղաքական պայթյունների՝ անխուսափելի ողբերգական հետեւանքներով հանդերձ:

Սահմանադրականությունը՝ որպես քաղաքացիական հասարակության հենք, չի կարող առաջընթաց զարգացում ունենալ պետական ժողովրդավարական կառույցների թույլ գործունակության եւ բուն քաղաքական ինստիտուտների ձեւախեղումների պայմաններում: Ինչպես արդարացիորեն շեշտում է Դ-անիել Մաիլովը՝ հասա-

րակական վերափոխումների պայմաններում տիրապետող են դառնում կեղծ սահմանադրականությունը եւ քաղաքական պոպուլիզմի ինտենսիվ տարածումը⁴⁵⁴:

Նոր ժողովրդավարության երկրներում սահմանադրական ձեւախելումների բնորոշ գծերից մեկը դատական իշխանության ոչ բավարար անկախությունն է: Ինչպես նշում է Ս. Հոլմսը վերոնշյալ հոդվածում, իր ժամանակին Մոնտեսքյուն պնդում էր, որ թագավորը, որը գործում էր որպես դատավոր եւ դրանով խաթարում էր գործադիր ու դատական իշխանությունների սահմանադրական բաժանումը, հեշտությամբ կարող էր անբարեխիղճ վկաների եւ գործընթացի մյուս մասնակիցների խաղալիքը դառնալ, որոնք ձգտում են հանրային իշխանությանը պարտադրել ծառայել անօրինական անձնական կամ խմբային շահերին: «Օրենքը՝ դա արքայի աչքն է, որի օգնությամբ նա տեսնում է այն, ինչն առանց դրա տեսնել չէր կարող: Իրեն դատավորի պարտականություն վերապահելով, նա գործում է ոչ իր օգտին, այլ իրեն հրապուրողների օգտին՝ ի վնաս իրեն»⁴⁵⁵:

Հաջորդ ծայրահեղ վտանգն իշխանության համատարած օլիգարխացումն է: 2006 թվականի հոդվածներիցս մեկը վերնագրել էի՝ «Կորպորատիվ ժողովրդավարության վտանգները»⁴⁵⁶: Այդ հոդվածում նշել էի, որ «կորպորատիվ ժողովրդավարությունը» (իշխանության բոլոր թեւերի օլիգարխացումը) հասարակական համակարգի համար առավել վտանգավոր է, քան տոտալիտար համակարգը, որն ունի իր որոշակի կանոնները, անկախ այն բանից, որ իր էությանը այն նույնպես իռացիոնալ բնույթ ունի: Սակայն վերջինս կառուցված չէ հասարակական պրակտիկայում ձեւախելված սահմանադրական արժեքների վրա: Կորպորատիվ ժողովրդավարության հիմնական վտանգը հատկապես նրանում է կայանում, որ ժողովրդավարական արժեքներ-

454 Ст'у Даниель Смилов. Конфликт конституционализма и демократии в Восточной Европе: за пределами парадигмы переходного периода // Сравнительное конституционное обозрение, N4(89). 2012. – с. 29-44.

455 Montesquieu. Spirit of the Laws / Trans. by Th. Nugent. New York: Hafner Press, 1975. Vol. I. Bk. 6. Ch. 4. - P. 73.

456 Ст'у Международный вестник “Конституционное правосудие”, 2006г., N3. - С. 38-46/Սույն հոդվածին արձագանքները նույնպես արժանի են ուշադրության: Մասնավորապես տե՛ս Бондарь Н.С. Конституционная модернизация российской государственности: в свете практики конституционно-го правосудия. М., 2014. –էջեր 107 եւ 130/:

ըը հետևողականորեն ձեռախեղվում են եւ արդյունքում՝ մոտացվում, կորցնում են իրենց արժեքը, հասարակության համար դառնում են ոչ միայն անընդունելի, այլեւ՝ վտանգավոր: Դրան նպաստում են նաեւ հանրության իրավագիտակցության ցածր մակարդակը, ծանր սոցիալական կացությունը, գործազրկության բարձր մակարդակը եւ այլն:

Ստվերային տնտեսական հարաբերությունների պայմաններում անհատն իր բնական իրավունքներով հանդես է գալիս ոչ թե որպէս լիարժեք պայմանագրային սուբյեկտ, այլ որպէս գործատուի կամքից ու ողորմածությունից կախված արտադրության միջոց: Ավատատիրական հասարակական հարաբերություններին բնորոշ այս որակը նոր ձեւ ու զուգակորում է ստանում կեղծ սահմանադրականության պայմաններում՝ ժողովրդավարական փաթեթավորմամբ:

Կորպորատիվ ժողովրդավարության առավել մեծ վտանգներից մեկը նաեւ այն է, որ արժեքները, որոնք մոտացիայի են ենթարկվել, հասարակական իմունային համակարգի խաթարման պայմաններում դառնում են վերարտադրվող: Սա առավել վտանգավոր փուլ է, երբ իռացիոնալ զարգացումներն առաջընթաց բնույթ են ստանում եւ բացառում են համակարգի կենսունակության վերականգնումն էվոլյուցիոն ճանապարհով, իսկ իրական արժեքները դառնում են չապասկած: Նման վիճակն այս կամ այն չափով առկա է այն երկրներում, որտեղ քաղաքական ինստիտուտները նույնպէս ձեւավորվում են կորպորատիվ ժողովրդավարության սկզբունքներով, որտեղ ստվերային տնտեսության հետ զուգահեռաբար ստվերային են դառնում նաեւ քաղաքական ինստիտուտները, որտեղ դատական համակարգը ոչ թե ինքնուրույն իշխանություն է, այլ իշխանության գործիք, որտեղ մամուլը խոսքի ազատությունից դառնում է քաղաքական ահաբեկչության միջոց:

Իշխանության համատարած օլիգարխացումը բերում է սոցիալական համակարգի համատարած քրեականացման՝ հատկապէս այն դեպքերում, երբ պետության մեջ ամենահարուստ մարդիկ դառնում են բարձրագույն պետական պաշտոնյաները եւ քաղաքական էլիտան:

Նման վտանգներից խուսափելու հիմնական ճանապարհն իշխանությունների իրական բաժանման ու հավասարակշռման ապահովումն է եւ քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի

սերտաճման բացառումը, հասարակության քաղաքական ու քաղաքացիական կառույցների բնականոն կայացման համար պայմանների ստեղծումը: Դեռևս իր ժամանակին Ջ. Մեդիսոնն է ընդգծել, որ մրցակցող ու հակադիր շահերի սահմանադրական հաշվեկշռումը կարող է զսպել իշխանությանը եւ երաշխավորել ազատությունը⁴⁵⁷:

Միջազգային եւ եվրոպական սահմանադրական զարգացումների ներկա միտումները թույլ են տալիս անել մի շարք սկզբունքային ընդհանրացումներ, որոնցից հատուկ ուշադրության են արժանի.

1. Ժողովրդավարությունը՝ որպես սոցիալական հանրության այլընտրանք չունեցող արժեք, թելադրում է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման իր չափանիշներն ու մոտեցումները,
2. սահմանադրական ժողովրդավարությունն առկա է այնտեղ ու այն չափով, որտեղ եւ որքանով գոյություն ունի իշխանությունների իրական բաժանում ու հավասարակշռում, քաղաքական, տնտեսական ու վարչական ներուժի օպտիմալ ապակենտրոնացում, անկախ դատական համակարգ, ազատ մամուլ, երաշխավորված, ազատ ու արդար ընտրական գործընթաց, քաղաքացիական հասարակության կողմից վերահսկվող իշխանություն,
3. սահմանադրականության հաստատումն առանց Սահմանադրության գերակայության հուսալի երաշխավորման՝ կմնա լոկ որպես բարի ցանկություն,
4. իրավունքի գերակայության հաստատումը պահանջում է հաշվի առնել նաեւ ազգային անվտանգության հիմնախնդիրները եւ անհրաժեշտ ներդաշնակության ապահովումն անհատական ու հասարակական շահերի միջեւ,
5. սահմանադրական զարգացումների գործընթացը չի կարող դիտարկվել առանց միջազգային գլոբալ ու տարածաշրջանային իրավական համակարգերի աճող դերի պատշաճ համակարգային գնահատման ու հաշվառման,
6. առանց սահմանադրական ժողովրդավարության որոշակի արժեքային միջավայրի եւ անհրաժեշտ ու բավարար նախադրյալ-

⁴⁵⁷ Տե՛ս Րասսել Դ. Конституционализм: опыт Америки и других стран – <http://www.infousa.ru/government/dmpaper2.htm> (09.03.2009).

ների ստեղծման, անցումային համակարգերի առանձնահատկությունների խոր ու համակողմանի գնահատման անհնարին է հաղթահարել համակարգային ձեռախեղումների ինտեգրացիան եւ երաշխավորել իրական սահմանադրական զարգացում, այսպես կոչված, «ժողովրդավարության ներմուծման» ճանապարհով:

Ներկայում անցումագիտության առանցքային խնդիրներից մեկն էլ այն է, թե ինչպես հաշվի առնել նշված միտումները վերափոխվող հասարակական համակարգերում, որպեսզի սահմանադրական զարգացումները դառնան հասարակության առաջընթացի հիմքը եւ չդառնան ընթացիկ քաղաքական շահերի գոհը: Բանն այն է, որ նոր ժողովրդավարություններում սահմանադրական պրակտիկայում իռացիոնալ գործընթացների հիմնական դրսեւորումներն են դառնում.

- աղավաղված պատկերացումները ժողովրդավարության ու իրավական պետության արժեքային համակարգի վերաբերյալ⁴⁵⁸,
- իշխանության կամքն իրականացնելու համար այդ արժեքները որպես ծխածածկույթ ընդունելը,
- ջանքերի գործադրումն իշխանության տարբեր ինստիտուտները, մամուլը եւ զանգվածային լրատվության միջոցները կառավարման գործիք դարձնելու համար,
- քաղաքականության, իշխանության եւ սովերային տնտեսության սերտաճումը եւ այդ հենքի վրա, մի կողմից, կոռուպցիայի վերաճելն իշխանության հիմնական կապիտալի, մյուս կողմից՝ սովերային տնտեսության քաղաքականացումը,
- մարդու եւ քաղաքացու հիմնական իրավունքների եւ ազատությունների սահմանափակման նոր եւ առավել վտանգավոր միջավայրի ձեւավորումը՝ վախի, անվստահության, անելանելիության, անպատժելիության ինչ-որ միջավայրի ի հայտ գալու, քաղաքական ու բյուրոկրատական ցինիզմի արմատավորման արդյունքում, ինչը հաճախ մատուցվում է ժողովրդավարական փաթեթավորմամբ:

458 Այդ մասին են վկայում նաեւ վերջին շրջանում որոշ քաղաքական գործիչների ու առանձին հետազոտողների կողմից այնպիսի խեղաթյուրված հասկացությունների օգտագործումը, ինչպիսիք են՝ «անցումային ժողովրդավարություն», «ազգային ժողովրդավարություն», «մասնակի ժողովրդավարություն» եւ այլն:

Այս բոլորը չեն սահմանափակվում կոնկրետ գործողությունների շրջանակներով, այլ ներթափանցում են իշխանության բոլոր օղակները, ձեռք են բերում օրենսդրական ու կառուցակարգային որակներ եւ ներառում են ողջ պետական մեքենան:

Պետական իշխանության օլիգարխացման վտանգների մասին դեռեւս իր ժամանակին համոզիչ ու պատկերավոր է խոսել Արիստոտելը՝ ներկայացնելով օլիգարխիայի ձեւերը⁴⁵⁹:

«Առաջին ձեւը՝ երբ սեփականությունը, ոչ շատ մեծ չէ, այլ չսփառվոր, գտնվում է մեծամասնության ձեռքին: Սեփականատերերը դրա ուժով հնարավորություն են ունենում մասնակցություն ունենալ պետական կառավարմանը: Իսկ քանի որ այդպիսի մարդկանց թիվը մեծ է, ուստի բարձրագույն իշխանությունն անխուսափելիորեն գտնվում է ոչ թե մարդկանց ձեռքին, այլ՝ օրենքի:

Օլիգարխիայի երկրորդ ձեւը՝ սեփականությունը տնօրինող մարդկանց թիվը փոքր է օլիգարխիայի առաջին ձեւում առկա մարդկանց թվից, սակայն սեփականության մեծությունն ավելին է: Ունենալով մեծ ուժ՝ այդ սեփականատերերն առաջադրում են նաև մեծ պահանջներ: Այդ պատճառով նրանք իրենք են այլ քաղաքացիներից ընտրում նրանց, ովքեր կառավարմանը մուտք ունեն: Բայց այն քանի հեղեանքով, որ նրանք դեռեւս այնքան ուժեղ չեն, որպեսզի կառավարեն առանց օրենքի, իրենք են սահմանում իրենց համար ձեռնարու օրենք:

Երրորդ ձեւը՝ երբ իրավիճակն ավելի լարված է դառնում այն առումով, որ սեփականատերերի թիվը փոքրանում է, իսկ սեփականությունը՝ մեծանում, ապա սրացվում է օլիգարխիայի երրորդ ձեւը՝ բոլոր պաշտոնները կենտրոնանում են սեփականատերերի ձեռքում: Ընդ որում, օրենքը թելադրում է, որ նրանց մահից հետո որդիները ժառանգեն նրանց պաշտոնները:

Չորրորդ ձեւը՝ երբ նրանց սեփականությունն աճում է մինչևեւ հսկայական չափերի եւ նրանք ձեռք են բերում բազմաթիվ կողմնակիցներ, ապա սրացվում է դինասարիա՝ մութ մենիշխանությանը, եւ այդ ժամանակ իշխողներ են դառնում մարդիկ եւ ոչ թե օրենքը: Սա հենց օլիգարխիայի չորրորդ ձեւն է»:

⁴⁵⁹ Аристотель. Этика. Политика. Риторика. Поэтика. Категории. — Мн.: Литература, 1998. — С. 561 (в разделе «Политика», книга четвертая).

Հագարավոր տարիներ հետո հետխորհրդային տարածքի շատ երկրներում այդ գործընթացները կրկնվում են սահմանադրական ժողովրդավարության կարգախոսներով քողարկված: Առանձին երկրներում բարձրագույն իշխանությունն արդեն գտնվում է ոչ թե օրենքի, այլ մարդկանց ձեռքում: Իշխողներ են դառնում կամ դրան ձգտում են անհատներ, որոնց ձեռքում կենտրոնացվել է հիմնական տնտեսական, քաղաքական ու վարչական ներուժը: Նման իրավիճակի հանրային վտանգավորությունը հանգում է նրան, որ, **առաջին՝** այդպիսի սերտաճման համար օգտագործվում է ժողովրդավարական վերափոխումների ներուժը: **Երկրորդ՝** այդպիսի գործընթացը տեղի է ունենում Սահմանադրության առկայության պայմաններում, որում հռչակված են հավատարմությունը ժողովրդավարությանը, իրավունքի գերակայությանը, ժողովրդահիշխանությանը եւ այլ հիմնարար արժեքների, որոնք իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի ձեռախեղման ու, այսպես կոչված, «կորպորատիվ ժողովրդավարության» հաստատման պայմաններում իրական կյանքում հիմնովին դեգրադացվում են:

Նման սերտաճում թույլ չտալն ավելի հեշտ է, քան դրա հաղթահարումը: Վերջինս հսկայական ջանքեր, ժամանակ ու դեգրադացված իրականության համակարգային ռեստավրացիա է պահանջում: Դրա մասին են վկայում նաեւ Հայաստանում նոր հագարամյակի առաջին տասնամյակում արմատացած իրողությունները: Նման իրավիճակ թույլ չտալու համար հասարակական վերափոխումների հաջողությամբ իրականացման գլխավոր խնդիրը հասարակական հարաբերությունների հետեւողական սահմանադրականացումն է՝ ամբողջությամբ հաղթահարելով կոնֆլիկտը Սահմանադրության, իրավական համակարգի եւ իրավակիրառական պրակտիկայի միջեւ: Միայն այս ճանապարհով է հնարավոր ապահովել իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգի անհրաժեշտ գործունակությունը, երաշխավորել հասարակական զարգացման ցանկալի կայունությունն ու դինամիզմը: **Իսկ դրան, մեր կարծիքով, կարելի է հասնել սահմանադրական ախտորոշման ու մշտադիտարկման անընդհատ գործող համակարգի ներդրման միջոցով:**

6.8. ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՄՇՏԱԳԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրական մշտադիտարկման համակարգի գործողության արդյունավետությունը մեծապես կախված է սահմանադրական պատասխանատվության գործուն համակարգի առկայությունից: Սահմանադրական պատասխանատվությունը սահմանադրական մշտադիտարկման հետեւանքներից մեկն է, որն ունի թե՛ կանխարգելիչ նշանակություն եւ թե՛ սահմանադրական հավասարակշռության վերականգնման ու ապահովման առաքելություն:

Սահմանադրական պատասխանատվությունը պատասխանատվության այլ ձեւերից տարբերվում է այն հիմնական հատկանիշներով, որ.

1. չի ենթադրում անմիջական քրեաիրավական պատժիչ հետեւանքներ,
2. վերաբերում է հանրային իրավունքի ոլորտին՝ դրանից բխող առանձնահատկություններով,
3. իր բնույթով այն դասակարգվում է. սահմանադրական, վարչական, քրեական պատասխանատվության /առանձին երկրներում, օրինակ՝ Պորտուգալիայում, ներառում է նաեւ քաղաքացիական պատասխանատվությունը/,
4. սահմանադրական պատասխանատվությունը չի կարող իրական լինել առանց Սահմանադրությանը ամրագրված հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորման, **իսկ վերջինս սահմանադրական մշակույթի գոյության /կամ բացակայության/ գլխավոր չափորոշիչներից է**⁴⁶⁰,
5. սահմանադրական պատասխանատվությունն առնչվում է ոչ միայն Սահմանադրության կոնկրետ իրավահարաբերություններ կարգավորող նորմերին, այլեւ Սահմանադրության հիմնարար սկզբունքներին ու արժեքանությանը: Պետաիշխանական գործառույթ իրականացնողի քաղաքական ու հանրային վարքագիծը նույնպես պետք է համարժեք լինի Սահմանադրության արժեքանությանն ու հիմնարար սկզբունքներին,
6. սահմանադրական պատասխանատվությունը ենթադրում է

⁴⁶⁰ Гаджиев Г.А. Конституционные основы юридической ответственности и конституционно-правовая ответственность. // Журнал российского права N 1, 2014, Ст. 10.

պետության պատասխանատվություն իր պոզիտիվ պարտավորությունների կատարման համար եւ պետաիշխանական գործառույթ իրականացնողի /ինստիտուտ կամ անհատ/ պատասխանատվություն իր գործառույթի կատարման արդյունքների համար,

7. սահմանադրական պատասխանատվության հիմնական չափանիշը համաչափության սահմանադրական սկզբունքի երաշխավորումն է, որով պետք է երաշխավորվի արարքի ու պատասխանատվության համաչափությունը:

Հանրային իշխանության սահմանադրական պատասխանատվության հարցը միջազգային սահմանադրական պրակտիկայում վերջին տասնամյակներում առավել հրատապ է դարձել: Դրա մասին են վկայում Ֆրանսիայի Սահմանադրության մեջ 1993թ. կատարված լրացումը եւ 10-րդ գլխի /68-1, 68-2 եւ 68-3 հոդվածներ/ ամրագրումը, ինչպես նաեւ 1997թ. ապրիլի 2-ին ընդունված Լեհաստանի նոր Սահմանադրության 198-201-րդ հոդվածները, Պորտուգալիայի Սահմանադրության 22 եւ 117-րդ հոդվածները, Հունաստանի Սահմանադրության 85 եւ 86-րդ հոդվածները, Ֆինլանդիայի Սահմանադրության 101-րդ պարագրաֆը, Ռումինիայի Սահմանադրության 108-րդ հոդվածը, Խորվաթիայի Սահմանադրության 111-րդ հոդվածը եւ այլն:

Միջազգային սահմանադրական պրակտիկան վկայում է, որ հանրային իշխանության մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց՝ պաշտոնական պարտականությունների կատարմանն առնչվող պատասխանատվության նյութական չափորոշիչները վերաբերում են քաղաքական, սահմանադրական եւ քրեական պատասխանատվությանը: Իր հերթին, պատասխանատվությունը կարող է լինել կոլեկտիվ կամ անհատական: Եթե անհատական պատասխանատվությունը կարող է լինել քաղաքական, սահմանադրական եւ քրեական, ապա կոլեկտիվ պատասխանատվությունը միայն քաղաքական է:

Միջազգային փորձը նաեւ վկայում է, որ սահմանադրական պատասխանատվության իրավակարգավորում անհրաժեշտ է իրականացնել Հիմնական օրենքի մակարդակում, հստակեցնելով՝

ա/ նման պատասխանատվության սուբյեկտ հանդիսացող անձանց շրջանակը,

բ/ նման պատասխանատվության հարցը բարձրացնող սուբյեկտների շրջանակը,

զ/ սահմանադրական ինստիտուտը, որն իրավասու է նման հարց քննության առնել եւ որոշում կայացնել:

Առավել հանգամանորեն այս հարցերը կանոնակարգված են, մասնավորապես, Լեհաստանի Սահմանադրությամբ: Նախ՝ Սահմանադրության 199-201-րդ հոդվածներով նախատեսվում է **Պետական տրիբունալի** ձեւավորման եւ գործունեության կարգը: Իսկ 198-րդ հոդվածը հստակեցնում է այդ տրիբունալի առջեւ սահմանադրական պատասխանատվություն կրող սուբյեկտների շրջանակը: Վերջիններիս թվում են՝ երկրի **Նախագահը, վարչապետը, կառավարության անդամները, Ազգային բանկի նախագահը, Վերահսկիչ բարձրագույն պալատի նախագահը, Հեռուստատեսության եւ ռադիոհաղորդումների համալեհական խորհրդի անդամները, անձինք, որոնց վարչապետը հանձնարարել է ղեկավարել նախարարություններ, ինչպես նաեւ զինված ուժերի գլխավոր հրամանատարը:**

Պետական տրիբունալի առջեւ սահմանադրական պատասխանատվություն են կրում նաեւ **պատգամավորները՝** այն դեպքում, երբ խախտում են Սահմանադրության 107-րդ հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջը:

Երկրի Նախագահի սահմանադրական պատասխանատվությունը վերաբերում է այն հիմքերին, երբ Սահմանադրության կամ օրենքի խախտման, հանցագործության կատարման դեպքերում Ազգային ժողովը ոչ պակաս 140 անդամների /1/4-ի/ առաջարկով եւ ձայների 2/3-ով կարող է մեղադրանք առաջադրել Պետական տրիբունալի առջեւ /հոդվ. 145/: Պետական տրիբունալը կարող է որոշում կայացնել Նախագահին պաշտոնանկ անելու մասին:

Վարչապետը, կառավարության անդամները եւ այլ պաշտոնատար անձինք Պետական տրիբունալի առջեւ պատասխանատվություն են կրում Սահմանադրության կամ օրենքների խախտման, ինչպես նաեւ զբաղեցրած պաշտոնի հետ կապված հանցանք կատարելու համար /հոդվ. 156/: Պետական տրիբունալին դիմելու հարցով երկրի Նախագահի կամ իր 115 անդամների դիմումի հիման վրա Սեյմը որոշում է կայացնում ձայների 3/5-ով:

Պետական տրիբունալին դիմելու մանրամասները եւ դատավարական ընթացակարգերը սահմանվում են օրենքով: Օրենքը նախատեսում է նաեւ, որ դիմումը նախապես ներկայացվում է Սեյ-

մի Սահմանադրական պատասխանատվության հանձնաժողովի ուսումնասիրմանը:

Բոլոր այն դեպքերում, երբ պատասխանատվությունը պայմանավորված է անհամատեղելիության սահմանադրական պահանջի խախտմամբ, Պետական տրիբունալի որոշմամբ անձը կարող է պաշտոնանկ արվել կամ զրկվել մանդատից:

Երբ պաշտոնատար անձի՝ ի պաշտոնե գործողության կամ անգործության հետեւանքով հանցանք կամ զանցանք է կատարվել, ապա կարող է բարձրացվել նաեւ քրեական պատասխանատվության հարցը:

Սահմանադրությունը հստակ սահմանում է Պետական տրիբունալի կազմավորման կարգը /հոդվ. 199/, համաձայն որի՝ տրիբունալը կազմված է նախագահից, 2 տեղակալներից եւ 16 անդամներից: Վերջիններիս ընտրում է Սեյմը՝ իր իրավասությունների ժամկետով: Տրիբունալի անդամները չեն կարող լինել պատգամավորներ կամ սենատորներ: Տրիբունալի նախագահի տեղակալները եւ անդամների կեսից ոչ պակասը պետք է ունենան դատավորի պաշտոնում նշանակվելու համար պահանջվող որակավորում:

Տրիբունալի նախագահին ի պաշտոնե Գերագույն դատարանի նախագահին է:

Ի տարբերություն լեհական մոդելի, **Ֆրանսիայում Հանրապետության դատարանը**, որը նույն առաքելությունն է կատարում, կազմավորվում է այլ սկզբունքով: Այն ունի 15 դատավոր, որից 12-ը պատգամավորներ են, որոնք հավասարապես ընտրվում են Ազգային ժողովի եւ Սենատի կողմից: Երեք անդամները վճռաբեկ դատարանից են, որոնցից մեկը նախագահում է Հանրապետության դատարանում:

Ցանկացած անձ, ով գտնում է, որ կառավարության անդամների գործողություններում հանցանք կամ զանցանք կա, կարող է դիմել բողոքների հարցով հանձնաժողով: Վերջինս դիմումի ուսումնասիրության արդյունքում որոշում է կայացնում մերժել դիմումը կամ դիմել Գլխավոր դատախազին՝ Հանրապետության դատարան գործ հարուցելու համար: Մանրամասները կանոնակարգվում են օրգանական օրենքով:

Պորտուգալիայի Սահմանադրությամբ նախատեսված է /հոդվ. 117/, որ քաղաքական պաշտոն զբաղեցնողները՝ **պաշտոնական**

պարտականությունների կատարման բերումով թույլ տրված հանցավոր գործունեության կամ անգործության համար կրում են քաղաքական, քաղաքացիական եւ քրեական պատասխանատվություն: Այդպիսին է համարվում նաեւ անհամատեղելիության պահանջը չկատարելը:

Հունաստանում օրենքով նախատեսված կարգով սահմանադրական պատասխանատվության գործը քննում է այդ նպատակով ստեղծված դատարանը, որի 12 անդամներին դատավորների կազմից ընտրում է պառլամենտը, իսկ նախագահը՝ ի պաշտոնե Աերոպագի /Գերագույն դատարանի/ նախագահն է:

Ֆինլանդիայում, համաձայն Սահմանադրության 101-րդ եւ 113-րդ պարագրաֆների, Պետական դատարանի առջեւ իրենց պաշտոնեական պարտականությունների կատարման հետ կապված իրավախախտումների համար պատասխանատվություն են կրում երկրի Նախագահը, Պետական խորհրդի/կառավարության/ անդամները, Արդարադատության կանցլերը, գերագույն դատարանի եւ գերագույն վարչական դատարանի անդամները:

Պետական դատարանի նախագահն ի պաշտոնե Գերագույն դատարանի նախագահն է: Կազմում ներգրավվում են Գերագույն վարչական դատարանի նախագահը, Ժողովրդական դատարանների երեք նախագահներ, ինչպես նաեւ պառլամենտի կողմից չորս տարով ընտրված հինգ անդամներ:

Միջազգային փորձի համառոտ վերլուծությունը վկայում է, որ նաեւ մյուս բոլոր երկրներում հանրային իշխանության մարմինների սահմանադրական պատասխանատվության հարցի լուծումը նույնպես ենթադրում է հստակ սահմանադրական կանոնակարգում:

Սահմանադրական մակարդակում պետք է հստակ սահմանել սահմանադրական տարբեր ինստիտուտների ու պաշտոնատար անձանց պաշտոնական պարտականությունների հետ կապված պատասխանատվության հիմքերը, ինչպես նաեւ համարժեք դատական ատյանի լիազորություններն ու կազմավորման կարգը:

Պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվության սահմանադրական լուծումները կարող են սահմանափակվել **սահմանադրական պատասխանատվության** ներքոհիշյալ ընթացակարգի սահմանման շրջանակներում:

Իրենց պաշտոնական պարտականությունների հետ կապված հարցերով Սահմանադրությամբ եւ օրենքով սահմանված հիմքերով ու կարգով սահմանադրական պատասխանատվություն կարող են կրել.

1) Հանրապետության Նախագահը, երբ Սահմանադրության կամ օրենքի դիտավորյալ խախտման կամ ծանր հանցագործության կատարման դեպքերում պառլամենտի պատգամավորների մեկ քառորդի առաջարկով եւ ձայների ընդհանուր թվի 2/3-ով մեղադրանք է առաջադրվել **սահմանադրական պատասխանատվության հարցեր քննող դատարան**: Տվյալ դատարանը կարող է որոշում կայացնել Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու մասին,

2) պատգամավորները, երբ խախտում են Սահմանադրությամբ նախատեսված անհամատեղելիության պահանջը, ինչպես նաեւ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների առնվազն կեսից անհարգելի բացակայելու դեպքում,

3) վարչապետը, կառավարության անդամները, Կենտրոնական բանկի նախագահը, Վերահսկիչ պալատի նախագահը, ինքնավար մասնագիտական հանձնաժողովների անդամները՝ Հանրապետության Նախագահի կամ պատգամավորների 1/5-ի առաջարկությամբ՝ պառլամենտի պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելի ձայներով ընդունված որոշման հիման վրա:

Բոլոր այն դեպքերում, երբ պատասխանատվությունը պայմանավորված է անհամատեղելիության սահմանադրական պահանջի խախտմամբ, անձը կարող է պաշտոնանկ արվել կամ զրկվել մանդատից:

Անկախ նրանից, թե կազմակերպակառուցվածքային ինչ տարբերակով կստեղծվի սահմանադրական պատասխանատվության մարմինը, այն պետք է ունենա սահմանադրական կարգավիճակ եւ այնպիսի լիազորություններ, որպեսզի սահմանադրական մշտադիտարկման արդյունքում անխուսափելի լինի սահմանադրական պատասխանատվությունը:

Նման պատասխանատվության առկայությունն է նաեւ պետական իշխանության **շարունակական նորոգվող լեգիտիմության երաշխիքը**: Ընդ որում, «լեգիտիմության» եւ իշխանության «լեգալության» ջրբաժանը նրանում է, որ եթե երկրորդ դեպքում իշխանության իրավական լինելու հանգամանքն է առաջին պլանում, ապա երկրորդ դեպքում՝ իրավական լինելով հանդերձ, իշխանությունը պետք է

անհրաժեշտ ու բավարար հանրային վստահություն ունենա:

Միջազգային պրակտիկան վկայում է, որ հանրային կյանքի արագ փոփոխություններն էականորեն ազդում են նաև իշխանության կրողների նկատմամբ հանրային կարծիքի փոփոխության վրա: Տիպական օրինակներ կարող են ծառայել ԱՄՆ եւ Ֆրանսիայի նախագահների նկատմամբ այս երկրների բնակչության վստահության վիճակը 2014-15 թվականներին: Ֆրանսիայում հանրային վստահության աստիճանը 2014 թվականին իջավ ընդհուպ 12 տոկոսի մակարդակի:

Որո՞նք են նման վիճակի պատճառները եւ սահմանադրաիրավական ինչ հետետություններ կարող են արվել:

Նման վիճակները հիմնականում պայմանավորված են հասարակական հարաբերություններում տեղի ունեցող ակտիվ փոփոխություններին իշխանության ինստիտուտների անհամարժեք արձագանքով: Հանրային բնույթի ցանկացած խնդիր պայմանավորված է որոշակի գործոններով, դրա ծագման ու ներազդեցության բնույթով, անխուսափելի հետեւանքներով, դրանք բացառելու կամ մեղմացնելու հրամայականներով: Հարցն այն է, թե իշխանության կրողն իր գործառույթների շրջանակներում որքանով է ի գորու եղել համարժեք քայլեր իրականացնել՝ չթողնելով բացասական սոցիալական էներգիայի կուտակումների առաջացում: Սոցիալական կատակլիզմներն ունեն իրենց էվոլյուցիան: Առաջանում է հիմնախնդիր, եւ այն ժամանակին ու պատշաճ լուծում չի ստանում: Անխուսափելիորեն դրան հետեւում է ճգնաժամը: Վերջինս, ինչպես նշվեց, սոցիալական բացասական էներգիայի որոշակի կուտակումների պարագայում կարող է հավաքել կրիտիկական զանգված, երբ անխուսափելի են պայթյունն ու ավերածությունները: **Պետության գերագույն կոչումը հիմնախնդիրների ժամանակին բացահայտումն ու պատշաճ լուծումն է եւ հնարավոր ճգնաժամերի կանխումը:** Դրա լավագույն միջոցը համակարգային սահմանադրական մշտադիտարկման արմատավորումն է, ինչը, իր հերթին, կոնկրետ իրավահարաբերությունների սահմանադրականացման հիմնարար երաշխիք է:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ց

«ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ
ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ԷԶԵՐՈՒՄ

Հավելվածը կազմվել է «Հայ դասական մատենագրություն» www.digilib.am, version 1.0 նյութերի հիման վրա: Այն ներառում է ոչ թե ամբողջական ու ավարտուն մատենագրություն, այլ նպատակ ենք ունեցել, վերոշարադրյալ վերլուծությունից զատ, ներկայացնել նաև հիշատակությունների առանձին բնորոշ օրինակներ՝ ընդգծելու համար, որ այդ հասկացությունը ժամանակին օգտագործվել է ոչ թե որպես փոխառված արժեք, այլ, տարաբնույթ իմաստներ ներառելով հանդերձ, հայ իրականության մեջ այն ընկալվել է «սահմանելու», եզրագծային «սահման դնելու», «սահմանադրելու» ենթատեքստում: Բնականաբար, առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում այն հիշատակումները, որոնք առնչվում են իրավական կանոնակարգմանը եւ հարաբերությունների «սահմանադրմանը»: Այս առումով կցանկանայինք հատկապես առանձնացնել Մովսես Խորենացու հիշատակությունը, որում նա «Արշակի թագավորության երրորդ տարում Հայոց եպիսկոպոսապետ դարձած...» Ներսես Մեծին (Սուրբ Ներսես, Հայոց կաթողիկոս 353-373թթ.) է վերագրում «կանոնական սահմանադրությամբ» երկրում «ողորմածության հաստատումը» եւ «անգթության արմատախիլ անելը»: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է 365թ. հրավիրված Աշտիշատի ժողովին: Այս ժողովի արդյունքները լավագույնս է բնորոշել Փավստոս Բուզանդը՝ «**Կարգեցին, կազմեցին, կանոնեցին, օրինեցին**» («Ի ժողով հաւանութիւնս եկեալ ամենեցուն, եւ խորհուրդ բարեաց ի մէջ արկանեին, կատարել անդ զաշխարհական կարգս եկեղեցւոյն եւ ժողովն հաւատոցն հաւասարութեան: Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին յարինեցին, եւ արարին զամենայն ժողովորդս երկրին Հայոց իբրեւ կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի...» - Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, գլ. Դ): Նշված բոլոր հասկացությունները հայ միջնադարյան հուշամատյաններում բնորոշել են իրավաստեղծ գործունեության տեսակներ, հարաբերությունների կանոնակարգում, վարքագծի կանոնների սահմանում: Սակայն առանձնահատուկ դեր են ունեցել ազգային-եկեղեցական ժողովները, որոնց կողմից ընդունված կանոնները համընդգրկուն բնույթ ու գերակայող իրավական ուժ են ունեցել: Ուստի պատահական չէ, որ «Հայկազեան լեզուի նոր բառգրքում» (Վենետիկ, 1837թ.) «սահմանադրություն» հասկացությունը բնորոշելիս հղումներ են արվում կանոնական սահմանադրություններին:

Մեր ժամանակների համար այդ օրինակները ոչ թե պետք է ընկալվեն լոկ որպես գեղեցիկ պատմական փաստեր, այլ վերաիմաստավորվեն որպես հանրային կյանքի խորքային ճանաչողության մեծարժեք ժառանգություն ու նաև դրանցից քաղված դասերի հիման վրա մեր պետական կյանքի ամրակուռ հիմքերը դրվեն:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ - «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» - **V դար**

«Յաղագս սրբոյն Ներսիսի եւ բարեկարգութեանն որ ի նմանէ:

Յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց մեծն Ներսէհ, որդի Աթանազիւնեայ, որդւոյ Յունկան, որդւոյ Վրթանայ, որդւոյ սրբոյն Գրիգորի: Եւ ի Բիւզանդիոյ դարձեալ ի Կեսարիայ, եւ եկեալ ի Հայս՝ զամենայն կարգս ուղղութեան հարցն իւրոց նորոգեաց, այլ եւ առաւել եւս. քանզի զբարեկարգութիւնն զոր ետես ի Յունաց աշխարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքին, ի սմա նկարագրէ: Ժողով արարեալ եպիսկոպոսաց եւ համարլէն աշխարհականաք, **կանոնական սահմանադրութեամբ** հաստատեաց զողորմածութիւն, խլելով եւ զանգթութեանն արմատ, որ բնաբար սովորութեամբ էր յերկրիս մերում»:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ - «ՎԱՐՔ ԵՎ ՊԱՏՄՈՒԹԻՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ» - **V դար**

«Եւ յետ այսորիկ քրիստոսագունդ առաքելոցն, շնորհակարգութեամբ Հոգւոյն սրբոյ գումարելոցն ընդ ամենայն կողմանս որ ի ներքոյ երկնից՝ ամենայն նշանաք եւ արուեստիք եւ շնորհագործ զարութեամբ ազդ արարեալ ըստ իւրաքանչիւր մասին, եւ զբանն կենաց հնչեցուցեալ, եւ միանգամայն քրիստոսածանալթս եւ յարութիւնական յուսովն ծաղկեցուցեալ. քանզի ի նոցուն իսկ ի շնորհագարդ բանիցն եւ ի գործոց յայտնի է իւրաքանչիւր **սահմանադրութիւն** հրամանաւ Հոգւոյն սրբոյ վիճակեալ»:

«Զի արար ի միոջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան՝ բնակել ի վերայ երեսաց երկրի. եւ հաստատեաց կարգեալ ժամանակս եւ **սահմանադրութիւնս** բնակութեան նոցա՝ խնդրել զԱստուած, զի թերես զնհիցեն զնա եւ զտանհիցեն. զի աներեւոյթք նորա ի սկզբանէ աշխարհի՝ յարարածոցս իմացեալ տեսանին. զի Տէր արժանաւորաց իւրոց մերձաւոր է»:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅԻ - «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՂԵՎՈՎՆ ՄԵԾ» - VII դար

«...Ձորոյ ձախողակի յորդորումն գիտեցեալ Բնդիդոս հայրապետն Հռովմայ, հրամայէ նմայ առնել ժողով, հաստատել զհայիոյութիւն Քաղկեդովնի ժողովոյն, եւ զուրացութիւն տումարին Ղեւոնի: Իսկ նորա հրամայեալ լինել ժողով ի Կոստանդնուպա[ւ]ղիս, որ ասի հինգերորդ ժողով. եւ ետ հրաման, թե եպիսկոպոս կամ հայրապետ՝ որ ոչ քարոզիցէ զժողովն Քաղկեդովնի՝ ընդ սուրբ ժողովս, ելցէ ի պատուոյ իւրմէ: Յայնժամ տէրն Անթիմոս՝ Կոստանդնուպալոսի եպիսկոպոս՝ բազում եպիսկոպոսաւք յանձն առնոյր լինել հալածական վասն ճշմարտութեանն. ընդ որս էր եւ Յուդիանէ եպիսկոպոս Ադիկատնասու Կիւպրացոց քաղաքի, որ ոչ հնազանդեցաւ պիղծ սահմանադրութեան ժողովոյն Քաղկեդովնի, [...] Եւ որք ոչն հնազանդեցան հրամանի թագաւորին՝ ընդունել զաղմկեալ ժողովոյն սահմանադրութիւնս, եւ հաւանեալ նորողածեութեանն տաւնից եկեղեցական կարգաց, զոր հաստատեաց անաւրէնն Յուստիանոս՝ ժողովեցելովքն ի Կոստանդնուպալոսի, ի հինգերորդ ժողովին. զար առաքեալ՝ հեղմունս արեանց արար ի տեղիս տեղիս»:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱԻՉՆԵՑԻ - «Ատենաբանութիւն» (ԵՐԱՆԵ-ԼԻՈՅ ՏԵԱՌՆ ՅՈՎԱՆԻՍԻ ՓԻՂՈՍՈՓԱՅԻ ՀԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԱՌԱՋԻՆ ԿԵՆՑԱՂՆ ԻՒՐ ԵՒ Ի ԳԱԼՆ ՅԱԹՈՌ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՍՏԱՏԵԼ ԲԱԶՄԱՊԱՏԻԿ ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ԿԱՐԳՍ ԵՒ ԿՐՕՆՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ) - VIII դար

«Վասն զի եւ չէ իսկ առաջիկայս մեզ գտնեղծեալն հակաճառութեամբ տարօրէն սովորութիւն, այլ **կանոնական սահմանադրութեամբ** ըստ իւրաքանչիւր գլխոց՝ զհիմնացեալ զանկարգութիւնն քակել եւ ՚ի բաց հանել յեկեղեցոյ Աստուծոյ, եւ փոխանակ նոցա զբարեվայելոյսն եւ զօգտակարագոյնսն ՚ի տեղւոջն արձանացուցանել»:

ՄՈՎՍԷՍ ԳԱՍԽՈՒՐԱՆՅԻ - «ՊԱՏՄՈՒԹԵԱՆՍ ԱՂՈՒԱՆԻՑ»

- IX դար

«Արդ՝ որք երկիրդին Աստուծոյ մերոյ **սահմանադրութեանս** կատարիչք լինին, ի Սրբոյ երրորդութենէ օրհնեալք լիցին եւ յամենայն ծառայից Աստուծոյ ուղղափառաց. իսկ եթէ ոք ընդդիմացեալ թիրեացի ի ճշմարտութենէ աստի, ինքն տացէ Աստուծոյ պատասխանի՝ ոյք եւ իցեն»:

«Որոյ զայն ահա տեսեալ Սրբոյն՝ հմտաւորեալ թէ ի վերուստ է ազդեցութիւնն, յայտնէ նմա զխորհուրդն, եւ զնոյն ինքն զկենսատու խաչն ցուցանէ եւ երդմնապատիժ **սահմանադրությամբ** պատուէր տայր նմա մի՛ ումէք պատմէք»:

ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ - «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՅ»

- X դար

«Բայց Աշոտ զնացեալ տալ պատերազմ ընդ ծովեզրեցիսն որք Ուրմանիկ կոչին, որք անբանային ի յԱմիսկ անկասկածելի քարանձախն. վասն զի ըստ Պտղոմեայ եւ Աղէքսանդրի **սահմանադրութեանն**, կամ թէ մեր Արտաշէսի որդւոյ Սանատրկոյ՝ ի Վասպուրական գաւառացն համար թուեալ է գաւառն այն, զոր ճ ամոյ յառաջ հանեալ էր բռնակալութեանն Տաճկաց ի Վասպուրական պետութեն է»:

«Բայց զի՞նչ աստանօր ինձ ասելի է, զի թէպէտ դառնալով դարձան յայտնապէս յերկրպագութիւնն Զրիստոսի Աստուծոյ մերոյ՝ այլ զկանոնական **սահմանադրութիւնսն** ոչ բերելով ուղղակի, ոչ միայն Աշոտ, այլ եւ ամենայն իշխանքն Հայոց, որք գերադարձքն եղեն. զուրացութեանն ի բաց դնելով զվատթարութիւն, սակայն **կանոնական սահմանադրութեանն** արտաքոյ մնացեալ, զայթ ի զայթս զքրիստոնէութեանն վարս բերելով անառակութեամբք եւ արբեցութեամբ, խառն անկողնօք եւ պղծութեամբք, աղտապիղծ սարսափելի եւ գարշելի խառնակութեամբ արուսպղծութեամբք, որ անցուցանէ զանցանէ զանասնական խառնակութեամբքն երիբովեան եւ սողոմական լրբութեամբ, անամօթաբար այր զարամբք բորբոքեալ, դեզադէզ զհրացանն բերելով յերկնուստ զանգրաւ կիզումնն, անցուցեալ զանցուցեալ զսատակչական կործանմանն ջրհեղեղին»:

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ - «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻՈՅ ՎԱՐԳԱՊԵՏԻ ՎԱՄՆ ԱՆՑԻՑՆ ԱՆՑԵԼՈՑ Ի ՅԱՅԼԱՍԵՈՆ ԱԶԳԱՅ ՈՐՔ ՇՈՒՐՋ ԶՄԵՒՔ ԵՆ» - **XI դար**

«...Զանգի յոյժ հաւանեալ էր քաղկեդոնական **սահմանադրութեանն՝** ասելի գոյով ամենայն ուղղափառ հաւատոց»:

ՈՒԽՏԱՆԷՍ - «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» (ՈՒԽՏԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ, ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱՅ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱՅ ՀԱՅՈՑ) - **XI դար**

«...Յետ Տակիստոսի թագաւորէ Յռորոս. եւ բաժանեն զաշխարհս ընդ միմեանս Յռորոս եւ Արտաշիր **սահմանադրութեամբ** խաղաղութիւն ընդ միմեանս առնելով»:

«...Վասնզի զայս այսպէս ասեն յաւանդութենէ ծերոց, եթէ ի ժամանակս Աբրահամու Հայոց Կաթողիկոսի իբրեւ եկաց նա յաթոռ Հայրապետութեան իւրոյ, եկին առ նա Կաթողիկոսն Վրաց եւ Ադրւանից. քանզի յայնժամ էին ի պատիւ Արք Եպիսկոպոսութեան աթոռոյ սրբոյն Գրիգորի, եւ ըստ առաջնոց Հարցն **սահմանադրութեան** եւ սովորութեան եկին առ Աբրահամ յառաջին ամին Հայրապետութեան իւրոյ ի սէր եւ ի հնազանդութիւն»:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ - ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ, ԲԱՆԼԴ, **XI դար**

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻՑ ԽԱԽՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա

«Արդ, առ այսոքիկ թշուառացեալ շնչոյս իմոյ իղձք եւ առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես բանիւ զամենայն, Աստուած, զոր ի նախնին ճառեալ՝ եւ յերկրորդումս ցուցից: Իսկ յան-

դիմանութիւնս գրաբանականս՝ ի կոյտս բազմութեան ազգաց եւ քարզմանութիւնս ժողովրդոց, զայս արգահատութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք»:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ - «ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ» - XII դար

«Ապա եթէ գիւղ դիպի, որ իրիցուն ի ժառանգութիւն բարձեալ իցէ, ժառանգութիւն սրբոյ աթոռոյն է, զոր վարդապետն կամի՝ ժառանգեցուցէ, իշխանութիւն է նմա: Եւ այս **սահմանադրութիւն** Հերակղայ եւ Խոսրովայ ժամանակաւք եւ այսր լիցի: Բայց յառաջ քան զնոցա ժամանակն որ ինչ լեալ է, մի՛ շարժեցի, զի չգիտէ ինչ հաստատութեամբ, որպէս կալեալ է՝ կալցին: Բայց նոցա ժամանակացն եւ յայսմ հետէ եւ յաւիտեան այս գիր հաստատուն կացցէ եւ մի՛ ոք անցցէ ըստ այսմ սահմանաւ» (Մխիթար Գոշ. Գիրք դատաստանի, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, Երեւան, 1975, էջ 119):

«Զի թէ աստուածային բերանն անիծանէ զմարդիկ, որ փոխեն զընկերի եղեալ սահմանս, իսկ զԱրարչին բոլորեցուն **զսահմանադրութիւն** եւ զպատուէր առ ոտն հարու եւ արհամարհողք լեալք, մեծի բարկութեան ճանաչելի է, այլ վասն նոցա եւ այլք» (նոյն տեղում, էջ 122):

ՎԱՐԳԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ - «ՀԱԻԱԲՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» - XIII դար - (ՎԱՐԳԱՆԱՅ ՎԱՐԳԱՊԵՏԻ ՀԱԻԱԲՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ)

«...Գիտեա դու կանխագոյն, զի եկեալ եմ յօրինել զեկեղեցիդ ըստ իմում օրինացս՝ Քաղկեդոնի ժողովոյն **սահմանադրութեամբ...**»:

ՎԱՐԳԱՆ ԱՐԵՒԵԼՅԻ - «Ճառք, ներբողեանք» - XIII դար.
«...Նոյնպէս եւ զսոսկալի խորհուրդ պատարագին անխմոր եւ անջուր հաստատեր ըստ **առաքելական սահմանադրութեան**, եւ պաշտելոյն սրբոյն Գրիգորի եւ որդոց իւրոց, մինչեւ ի պղտորումն Եգրայ անմտութեան...»:

ՀԵԹՈՒՄ ՊԱՏՄԻՉ - ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ /123ա/- **XIII դար**
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԽՐՈՆՈՒԿՈՆԻՆ ԶՈՐ ՆԸԻԱՍՏ ԾԱՌԱՅՍ
ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵԹՈՒՄՍ ՏԵՐԿՈՒՌԻԿԱԲԱՍՈՅ ՓՈՆԵՏՅԻ Ի ՓՈՒՆԳ
ԳՐՈՅ Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՅ ՉԽԵ (=1296)

«ՌճԻԹ (1129) Եղև պապ ի Հռոմ Ինասանք Երկրորդ: Սա արար ընթանրական ժողով յեկեղեցի սուրբ փրկչին եւ պատժեաց զՓէռ Լէամն եւ զիր սահմանադրութիւնն, կացեալ ամս ԺԳ (13), ամիսս Ը (8) եւ ատուքս Ը (8)»:

ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ - ԴԱՏԱՍՏԱՆԱԳԻՐՔ, ԻԴ- **XIII դար**

«Եւ տեսէք՝ թէ քանի՞ պնդանք կայ հայրապետացն եւ այլ դատաւորաց եկեղեցոյն, որ վասն կաշատոյ չփոխեն զԱստուծոյ իրավունքն ի ծուռն: Եւ ոչ ամենեւին ի սահմանադրութեանց եկեղեցոյ՝ եւ ոչ ի սահմանաց թեմերոց իշխել որ փոփոխել բնաւ առանց կաթողիկոսի՝ որ մեծ ժողովի տեսով այնէ»:

ՆԵՐՍԷՍ ՊԱԼԻԱՆԵՆՑ - ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ /131ա/ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՔ ԵՒ ԹԱԳԱԻՈՐՔ ՀԱՅՈՅ- **XIV դար**

«Վաղարշակս այս էր այր քաչ եւ խոհեմ. եւ սահմանեաց կարգս եւ դասապետութիւնս կենցաղականս որ եւ նախարարս եւ նահապետութիւնս ի պալատն արքունի. այլ եւ յաշխարհին Հայոց կարգեաց նայել այլ բազում իրս բարեճեութիւնս յօրինուածս տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաս[տ]ակերտաց, զօրաց, կողմնակալաց եւ այլոց այսպիսի պիտոյից յօրինուածոց եւ սահմանադրութեանց, ընդ որս սակաւութ անցցութ բացայ յայտմամբ»:

ՅԱԿՈԲ ՂՐԻՄԵՅԻ - ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻ - **XV դար**

«...Նախ զիտել պարտ է, զի ի չորրորդ ատուր ընդ արշալոյսն ստեղծագործեցաւ Արեգակն եւ եղաւ յառաջին շափղն ստեղծման՝ ի նոյն կէտն եւ ի նոյն բուլէն, որ մինչև ցայսօր ծագել ըստ **սահմանադրութեան** արարչին»:

ՅԱԿՈԲ ՂՐԻՄԵՅԻ - ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻ, ԵԹԷ ԿԱՄԻՅԻՍ ԳԻՏԵԼ, ԹԷ ԱՐԵԳԱԿՆ ՅՈՐՈՒՄ ԿԻՏԻ Է- XV դար

«Գիտելի է, զի կէտ՝ ձայնս հոմանունն է, քանզի ի վերայ բազմաց բերի: Նախ առաջին՝ կէտ ամենայն արարածոցս Աստուած է, որ ի նմանէ առին զսկիզբն լինելութեան, զի ոչ որ յառաջ քան զնա: Ըստ այնմ՝ «ես եմ առաջին եւ ես եմ վերջին»: Երկրորդ՝ կէտ առնու եւ ի վերայ յախտենից, զի յիրաքանչիւր յախտեան ունի կէտ զսկիզբն եւ զվախճանն իւր: Երրորդ՝ ասի կէտ եւ վախճան մարդոյն, որպէս ասեմք եթէ ժամանեաց ի կէտ կոչմանն իւրոյ: Չորրորդ՝ կոչի կէտ վայրկեան եւ սուղ ժամանակն, որպէս ասէ Յոր վասն հեշտասիրացն՝ «կատարեն ի բարութեան» զկեանս իւրեանց եւ ի նոյն կէտն իջանեն ի դժոխս: Հինգերորդ՝ կէտ է եւ դրութիւն օրինացն, որպէս Ադամայ հրամայեաց չուտել ի պտղոյն մինչեւ ի կէտ սահմանադրութեան իւրոյ, որչափ որ ինքն կամենայր [...]:»

ԱՌԱՔԵԼ ԳԱՒՐԻԺԵՅԻ - ԳԻՐԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ - XVII դար

ԳԼՈՒԽ ԻԵ

«Եւ ի վաղնջուց խափանեալ վանօրայք լցան արեղայիւք, եւ գիւղք, եւ քաղաքք երիցամբք, եւ դեռ եւս օր յաւուր աճէ նորին սահմանադրութեամբն»:

«Եւ այնուհետեւ ջերմագոյն սիրելիք եւ վշտակից եղբարք լեալ՝ կան ի սահմանադրութիւնս հայրապետին Փիլիպպոսի, գեղեցիկ սիրով եւ միաբանութեամբ, շնորհօքն Քրիստոսի Աստուծոյ օրհնելոյն»:

ԳԼՈՒԽ ԻԳ

«Իսկ վարդապետն բնաւ ոչինչ առնէր փոյթ զայնմանէ, վասն զի յոյս նորա հաստատուն էր ի Տէր, այլ հանապազ շրջէր, եւ քարոզէր, եւ շինէր զեկեղեցիս, եւ յարդարէր զամենեսեան ուղիղ կարգօք եւ սահմանադրութեամբք»:

ԳԼՈՒԽ ԻԴ

«Իսկ քրիստոնեայք վերին աշխարհիս տեսնելով զճճարիտ քարոզութիւն նոցա, զի վկայէին բանից եւ քարոզութեան նոցա եւ գործք նոցա, ամենեքեան դարձան ի թիւր ճանապարհաց իւրեանց՝ եւ հնազանդեցան կարգաց եւ սահմանադրութեան նոցա, իշխանք եւ եպիսկոպոսունք, եւ երիցունք, եւ արք նշանաւորք ռամկօք ամենիւք»:

ԳՐԻԳՈՐ ԳԱՐԱՆԱԳՆԻ - «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ» (ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿԱՄԱԽԱՅԻՈՅ ԿԱՄ ԳԱՐԱՆԱԳՆԻՈՅ) - XVII դար

«Յետ ժամանակի գնացեալ ապա Մօսէս վարդապետն, որ յետ ժամանակի կաթողիկոս եղև, եւ կացին ի միասին բազում ամս եւ եղևն լուսաւորիչք Վերին Աշխարհացն Հայոց եւ զարդք եւ զարդարիչք անապատաւորաց՝ արանց եւ կանանց եւ ուղղիչք ամենայն **սահմանադրութեանց**»:

«Եւ յետ այս ջանիցս վերայ, սատանայ առեալ զիւր արբանեակսն՝ զսուտ անուն կաթողիկոսն՝ զՄելքին եւ ոչ Սեդեկն յարոյց ի վերայ սրբոցն Աստուծոյ, որ բազում փորձութիւնս անցոյց ընդ նոսա, որպէս զուղխաջուրս՝ վասն չար թուելոյ նոցա վարուցն եւ առաքինութեանցն եւ **սահմանադրութեանցն**, զի խեթիւ հայէին ընդ արդարքն՝ սպանանել զնոսա. այլ Տէր ոչ ետ թոյլ ի ձեռս նոցա, որ ոչ իսպառ դատապարտեցին զնոսա»:

